Modus Vivendi

Մոդուս վիվենդի կենտրոնի հնավանդ գրքերի և վավերագրերի մատենաշար

ՀԱՏՈՐ III

ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

# ԿԱՐՍԻ ՄԱՐԶԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒՄ

(ապրիլ 1919թ. - հոկտեմբեր 1920թ.)

**Նյութեր և փաստաթղթեր**

աշխատասիրությամբ՝
*Վլադիմիր Հարությունյանի*

**Документы по политической истории Республики Армения**

**Карсский марз (область) в составе
Первой Республики Армения
(апрель 1919г. - октябрь 1920г.).**

**Материалы и документы**

Составил:
*Владимир Арутюнян*

**Documents on the Political History of the Republic of Armenia**

**Kars marz (province) within the
First Republic of Armenia
(April 1919 - October 1920)**

**Materials and Documents**

Compiled by:
*Vladimir Harutyunyan*

Modus Vivendi

ՓԱՍՏԱԹՂԹԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

# ԿԱՐՍԻ ՄԱՐԶԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒՄ

(ապրիլ 1919թ. - հոկտեմբեր 1920թ.)

**Նյութեր և փաստաթղթեր**

*Մոդուս վիվենդի կենտրոնի հնավանդ գրքերի և վավերագրերի մատենաշար*
**հատոր Գ**

աշխատասիրությամբ՝
*Վլադիմիր Հարությունյանի*

Modus Vivendi

Երևան - 2016

ՀՏԴ ???????
ԳՄԴ ???????
Հ XXX

*Գրքի տպագրությունը հովանավորել է ՀԻՔՍՈՍ հիմնադրամը՝
ի հիշատակ ազգային հերոս գեներալ Անդրանիկի:*

ՀXXX Կարսի մարզը Հայաստանի առաջին Հանրապետության կազմում (ապրիլ 1919թ. - հոկտեմբեր 1920թ.): Նյութեր և փաստաթղթեր / Կազմ.՝ Վ. Հարությունյան. – Եր.: Ասողիկ, 2016. – 4?? էջ. - (Մոդուս վիվենդի կենտրոնի հնավանդ գրքերի և վավերագրերի մատենաշար: Հ. 3):

Փաստաթղթերի սույն ժողովածուն *Մոդուս վիվենդի կենտրոնի հնավանդ գրքերի և վավերագրերի մատենաշարի* **երրորդ (Գ)** հատորն է: Նախորդ հատորներն են.

**Հատոր Ա** - The National Geographic Magazine on Armenia and Armenians, 1915-1919 / Yerevan, Asoghik, 2014, 114 pages.

**Հատոր Բ** - Հայ բոլշևիկների հակապետական գործունեությունը, 1919-1920թթ. / կազմ.՝ Վ. Հարությունյան, Եր.: Ասողիկ, 2014, 420 էջ:

Ուզում ենք հավատալ, որ ներկայացված ժողովածուներն իսկապես կարևոր ու օգտակար են ճշմարիտ պատմությունը բացահայտելու գործում: Որպես մեր շարունակական հանձնառության մաս, այս մատենաշարի միջոցով մենք լայն հասարակությանը հասու ենք դարձնում Հայոց հարցին և ընդհանրապես Հայաստանին ու հայերին վերաբերող հայոց և օտար գրավոր վկայությունները:

Մատենաշարի սույն հատորը լույս է սփռում 1919թ. ապրիլից մինչև 1920թ. հոկտեմբեր ընկած կարճատև, բայց ճակատագրական ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության մաս հանդիսացող Կարսի մարզի վիճակին, ինչպես նաև Կարս քաղաքի անկման պատճառներին: Ժողովածուում բնագրի լեզվով (հայերեն, ռուսերեն) ի մի են բերված արխիվային բազմազան փաստաթղթեր:

ՀՏԴ ???????
ԳՄԴ ???????

ISBN ???-????-??-???-?

**Ծրագրի ղեկավար՝** Արա Պապյան

**Շարվածքը՝** Լիլիթ Միքայելյանի
Լուսինե Կտիկյանի

**Էջադրումը՝** Դավիթ Աբրահամյանի

**Տպագրությունը՝** Ասողիկ հրատարակչության, Երևան, Հայաստան

**Կարսի մարզը Հայաստանի առաջին Հանրապետության կազմում (ապրիլ 1919թ. - հոկտեմբեր 1920թ.):** Նյութեր և փաստաթղթեր / Կազմ.՝ Վ. Հարությունյան: *Մոդուս վիվենդի կենտրոնի հնավանդ գրքերի և վավերագրերի մատենաշար.* **հատոր Գ:**

**Карсский марз (область) в составе Первой Республики Армения (апрель 1919г. - октябрь 1920г.).** Материалы и документы / Сост.: В. Арутюнян. *Серия переизданий и публикаций архивных документов Центра Модус Вивенди*: **том III.**

**Kars marz (province) within the First Republic of Armenia (April 1919 - October 1920).** Materials and Documents / comp.: V. Harutyunyan. *The Modus Vivendi Center Legacy Reprint and Archival Publication Series*: **Volume III.**

Modus Vivendi

**www.wilsonforarmenia.org, www.modusvivendicenter.org**

**ՆՎԻՐՎՈՒՄ Է**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐՈՔ
ԿԱՐՍԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ
*ՍՏԵՓԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ՂՈՐՂԱՆՅԱՆԻ (1865-1925թթ.)*
**150-ԱՄՅԱԿԻՆ**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**ԱՅՍ ԳՐՔԻ ՄԱՍԻՆ** **7**

**ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ** **9**

**ԲԱԺԻՆ I. ԿԱՐՍԻ ՄԱՐԶԸ ՊԱՏՄԱԿԱՆ ՏԱՐԲԵՐ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՆԵՐՈՒՄ** **25**

I.1. Կարսի մարզը մինչև XIXդ. ռուս-թուրքական պատերազմները 25

I.2. Կարսի մարզը Ռուսական կայսրության կազմում 26

I.3. Ռուսական տիրապետության վերջը: Մարզը Անդրկովկասյան երկրամասի կազմում 30

I.4. Կարսի մարզի բնակչության թվաքանակն ու էթնիկ կազմը մինչև 1918թ. 41

I.5. Կարսի մարզի թուրքական օկուպացիան և «բրեստ-լիտովսկյան հանրաքվեն» 50

I.6. Բաթումից մինչև Մուդրոս 57

I.7. Մուդրոսի զինադադար. հայոց հույզեր և հույսեր 67

I.8. Հետմուդրոսյան հողահավաքի ջանքեր տեղում. անհաջողություններ և որոշ ձեռքբերումներ 72

I.9. Հետմուդրոսյան հավակնությունները Կարսի նկատմամբ 78

I.9.1. Ռուսական հավակնությունները 79

I.9.2. Վրաստանի հավակնությունները 83

I.9.3. Թուրք-ադրբեջանական (մահմեդական) հավակնությունները 84

I.10. Կարսի մարզը՝ իբրև «մահմեդական հանրապետություն» 89

| | | | |
|---|---|---|---|
| | I.11. | Կարսի մարզի միացումը Հայաստանի առաջին Հանրապետությանը | 94 |
| | I.12. | Կարսի մարզը՝ քեմալական շարժման առաջնային թիրախ | 103 |
| | I.13. | Քեմալաբոլշևիկյան ձեռքսեղմումները | 113 |
| | I.14. | Հայ բոլշևիկները քեմալաբոլշևիկյան դաշինքում | 120 |
| | I.15. | Կեցցե՛ Խորհրդային Ադրբեջանը | 127 |
| | I.16. | Մուրճի ու սալի արանքում | 137 |
| **ԲԱԺԻՆ II.** | **ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ** | | **149** |
| | II.1. | Մարզի ներքին կյանքը | 149 |
| | II.2. | Բանակային միջավայր | 314 |
| **ՀԱՎԵԼՎԱԾ 1.** | Մահմեդական «Հարավ-Արևմտյան Կովկասի Հանրապետության» տարածքների քարտեզը ըստ նրա հեղինակների: | | **426** |
| **ՀԱՎԵԼՎԱԾ 2.** | Խորհրդային Ռուսաստանից քեմալական շարժմանը ցուցաբերած օգնությունը | | **427** |
| | Հ.2.1. | Խորհրդային աղբյուրներ | 427 |
| | Հ.2.2. | Թուրքական աղբյուրներ | 429 |
| **ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ** | | | **435** |

# ԱՅՍ ԳՐՔԻ ՄԱՍԻՆ

Ընթերցողին ներկայացվող սույն գիրքը կազմվել է մի նպատակով. հնարավորություն ընձեռնել հասարակության հնարավորինս լայն շրջանակներին ծանոթանալ մի շարք փաստաթղթերի հետ, որոնք առնչվում են մեր պատմության այն ժամանակահատվածին (1919թ. գարուն – 1920թ. աշուն), երբ Կարսի մարզը հանդիսանում էր անկախ հայկական պետության՝ Հայաստանի առաջին Հանրապետության (ՀաՀ) նահանգներից մեկը: Գրքում առկա են նաև որոշ փաստաթղթեր, որոնք նշված ժամանակահատվածից դուրս են, կամ էլ ուղղակիորեն չեն առնչվում Կարսի մարզում ընթացող իրադարձություններին: Սակայն դրանց ներկայացնելը նույնպես անհրաժեշտ էր, քանի որ այդպիսով ամբողջացվում են մարզում ընթացող իրադարձությունների բովանդակային և ժամանակագրական կապերն այդ օրերին ամբողջ երկրում ծավալվող գործընթացների հետ:

Գիրքը կազմված է առաջաբանից, ներածական ակնարկից և բուն փաստաթղթերի ժողովածուից:

*Առաջաբանն* իրենից ներկայացնում է, պատկերավոր ասած, «խոհական էսսե», որտեղ շոշափվում են պատմության դերն ու նշանակությունը մեր կյանքում՝ ընդհանուր առմամբ և մեր նախորդ անկախ պետականության դեպքում՝ մասնավորապես:

*Ներածական ակնարկում* շարադրված փաստագրական նյութը լուսաբանում է, թե պատմական տարբեր ժամանակահատվածներում որ պետության կազմի մեջ է եղել, կամ ինչ ռազմաքաղաքական միավորման վերահսկողության տակ է գտնվել Կարսի մարզը մինչև 1919թ. ապրիլը, երբ այն միացվեց ՀաՀ-ին: Ներածականի շարադրանքն ընդհատում ենք 1920թ. մայիսի սկզբներով: Դա արել ենք միտումնավոր, քանզի մեր առջև ամենևին նպատակ չենք դրել վերլուծումներ կատարել և սեփական տեսակետներ ու եզրակացություններ ներկայացնել ընթերցողին ՀաՀ-ի կործանման և Կարսի անկման պատճառների վերաբերյալ: Փոխարենը, ինչպես նշվեց, ընթերցողին ենք ներկայացնում այդ ժամանակաշրջանին և դեպքերին վերաբերող փաստագրական նյութ՝ եզրակացություններ ու հետևություններ անելու ցանկությունն ու իրավունքը թողնելով իրեն՝ ընթերցողին:

Առանձնակի ուզում ենք շեշտել, որ ներկայացված *արխիվային փաստաթղթերում* առկա են նաև հատվածներ ՀաՀ-ի օրոք Կարսի նահանգապետ Ստեփան Ալեքսանդրի Ղորղանյանի՝ 1922թ. գրված հուշերից: Մեր ընկալմամբ դրանք չափազանց հետաքրքիր են, արժեքավոր ու կարևոր, քանզի արտահայտում են այն տեսակ հայ պետական բարձրաստիճան պաշտոնյայի ընդհանուր աշխարհայացքը,

տեսակետներն ու մոտեցումները, որը վեր է կանգնած անձնական, խմբակային-կլանային ու կուսակցական շահերից և առաջնորդվել է միմիայն պետական ու ազգային շահերով:

Բերենք նաև որոշ պարզաբանումներ շարադրանքում օգտագործված տարեթվերի և չափման միավորների վերաբերյալ.

- Նոր տոմարը հնից առաջ է 13 օրով: Համապատասխանաբար, մինչև Ռուսաստանում նոր տոմարին անցնելը (26 հունվարի, 1918թ.) Ռուսաստանին և Հայաստանին վերաբերող բոլոր տարեթվերը տրված են հին տոմարով, դրանից հետո՝ նորով:
- 1 ճանապարհային վերստը կազմում է 1,067 կմ, 1 քառ. վերստը՝ 1,138 քկմ:
- Վարչատարածքային բաժանման որոշ միավորների անվանումներ (գուբերնիա, ույեզդ, օկրուգ) նշվում են առանց թարգմանության՝ այն տեսքով, ինչպես որ օգտագործվել են հայկական շրջանակներում Ռուսական կայսրության օրոք և նաև հետագա տարիներին:

Փաստաթղթերը ներկայացված են բնագրի լեզվով և տեղակայված են ժամանակագրական սկզբունքով: Որոշ փաստաթղթերում առկա են վնասված կամ անընթեռնելի հատվածներ, բայց քանի որ դրանք չեն ազդում փաստաթղթի ամբողջական բովանդակային ընկալման վրա, ձեռնպահ ենք մնացել այդ խոտանններն այս կամ այն ձևով վերացնելու կամ էլ տեքստը լրացնելու քայլերից՝ համարելով, որ դա խիստ նեղ մասնագիտական խնդիր է, իսկ տվյալ դեպքում՝ այնքան էլ էական չէ:

Հեղինակն իր շնորհակալությունն է հայտնում դեսպան *Արա Պապյանին* և իր ղեկավարած *Մոդուս վիվենդի կենտրոնի* աշխատակիցներին, հուշարձանագետ *Սամվել Կարապետյանին* և նրա ղեկավարած *Հայկական ճարտարապետության ուսումնասիրության հիմնադրամի* աշխատակիցներին, փիլիսոփայական գիտությունների թեկնածու *Լևոն Խաչատրյանին* և առանձնակի ջերմությամբ՝ վաստակաշատ մանկավարժ *Թամար Մարտիրոսյանին*՝ գիրքը կազմելու և հրատարակման ներկայացնելու ընթացքում ցուցաբերած բազմակողմանի օգնության և աջակցության համար:

*Վլադիմիր Հարությունյան*

# ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

*Historia magistra vitae*
Marcus Tullius Cicero

Ֆրանսիայի թագավոր Հենրի IV-ի հետ են կապում այսպիսի մի պատմություն. 1592թ. փետրվարի 5-ին Օմալի մոտ տեղի է ունենում այդ ժամանակաշրջանի Ֆրանսիայի համար բնորոշ բազմաթիվ զինված ընդհարումներից մեկը հուգենոտների և կաթոլիկների միջև: Հենրի IV-ն անձամբ մասնակցում է այդ ճակատամարտին և նույնիսկ վիրավորվում է: Բայց հետագայում, երբ նա ծանոթանում է այդ մարտի ընթացքում ծավալված ռազմական գործողությունների վերաբերյալ իր զորավարների զեկույցներին, նկատում է, որ դրանք, նախ, պարզապես հակասում են մեկը մյուսին, իսկ երկրորդը՝ լիովին հակասում են նաև այն ամենին, ինչը Հենրի IV-ն անձամբ էր տեսել ռազմի դաշտում իր սեփական աչքերով: Պատկերացնելով, թե ինչպես են նկարագրելու կատարվածը ապագայի պատմաբանները՝ հիմք ընդունելով այդ «հավաստի» զեկույցներն ու գրությունները, Ֆրանսիայի թագավորը բացականչում է. *«Ահա՜ թե ինչ բան է պատմությունը»:*

Ասում են նաև, որ այս պատմությունն իմանալուց հետո է, որ Վոլտերն արտաբերել է իր հայտնի մտքերից մեկը. *«Ահա թե ինչպես է գրվում պատմությունը»:*

Չանդրադառնալով պատմության վերաբերյալ հնչեցված բազմաթիվ և բազմապիսի տեսակետներին՝ կցանկանայինք ներկայացնել, համենայնդեպս, երկու կարծիք, երկու տեսակետ, որոնց հեղինակները, ինչպես ասում են, պատմական գիտության հենց «ներքին խոհանոցից» են և պատմություն առարկայի հետ շփվել են, ինչպես ասում են, առանց միջնորդների:

Մեկը (*Լև Կրասնոպևցև*) ԽՍՀՄ պատմության բնագավառի խորհրդային պատմաբան է, մյուսը *(Լև Գումիլյով)*՝ ազգերի, էթնոսների պատմության ասպարեզում համաշխարհային ճանաչում ունեցող հետազոտող է: Խոսքը տանք իրենց:

***Լև Կրասնոպևցև*** (ծնվ. 1930թ., ԽՍՀՄ պատմության որոշ դրվագներ «ոչ ճիշտ» ընկալելու ու մեկնաբանելու և *Նիկիտա Խրուշչովի* կառավարման համակարգի վերաբերյալ պատմագիտական հենքով գրված թռուցիկների միջոցով անհամաձայնու-

թյուն հայտնելու համար 1957-ին ձերբակալվել է և 10 տարի իր պատիժը կրել մորդովական գաղութներում). *«Ընդհանուր առմամբ, պատմությունը ամենավտանգավոր գիտությունն է: Որովհետև, երբ Դուք ձեր ձեռքն եք վերցնում կոնկրետ պատմական նյութը, ապա Ձեր բոլոր դոգմաները հօդս են ցնդում: Երբ Դուք լսում եք Ձեր կողմից ուսումնասիրվող դարաշրջանի մարդկանց ձայները, Դուք այլևս նրանց ոչինչ չեք կարող անել:»*[1]

***Լև Գումիլյով*** (1912–1992թթ., երկու անգամ ձերբակալվել և դատապարտվել է պատիժը կրելու Սիբիրի և Ղազախստանի կալանավայրերում: Առաջին անգամ 1938-1943թթ.՝ որպես գնդակահարված սպիտակգվարդիական սպայի, ռուս հայտնի բանաստեղծ *Նիկոլայ Գումիլյովի* որդի, երկրորդ անգամ 1949-1956թթ՝. որպես ոչ սովետահաճո համաշխարհային հռչակ ունեցող բանաստեղծուհի *Աննա Ախմատովայի* որդի). *«Կա այսպիսի մի ասացվածք. "Ով տիրապետում է ներկային, նա տիրապետում է անցյալին, ով տիրապետում է անցյալին՝ նա տիրապետում է ապագային": Եթե սա ամբողջ խորությամբ ընկալում ենք, ապա սարսափելի միտք է: Առավել սարսափելի է, երբ այն կիրառվում է գործնականում: Պատճառը և հետևանքը տեղերով փոխվում են, և պատմությունը վեր է ածվում հասարակաց մի պոռնիկի, օրինակների մի հանրագումարի, որով հնարավոր է հիմնավորել ինչ կամենաս: Հենց այդ ժամանակ են սկսում հնչել ձայներ, որ պատմությունը որպես գիտություն պիտանի չէ, որ կարելի է բավարարվել ընդամենը ներկայի լավ գիտակցմամբ: Եվ իրոք, շատ հաճախ պատմության մեջ միտումնավոր ներմուծվում է այս կամ այն առասպելը: Բայց չէ՞ որ առասպելը հորինվածք է և ավելի վտանգավոր է, քան սուտը: Եվ մեզ սկսում են ստիպել ուսումնասիրել ոչ թե փաստացի պատմությունը, ոչ թե բուն փաստը, այլ նրա առասպելաբանական իմաստավորումը: Պատմությունը որպես Գիտություն, դառնում է ապատեղեկատվության կրող: Բայց չէ՞ որ պատմությունը մեզ պետք է, թեև մենք չենք կարող այն լավացնել ու շեղել մեզ համար ձեռնտու ուղղությամբ: Պատմությունը կարելի է սովորել, կամ էլ չսովորել: Բայց միևնույն է, այն պետք է: Պետք է նույնքան, որքան որ պետք է օդերևութաբանությունը, որի միջոցով կանխատեսվում է, թե ինչպիսին է լինելու եղանակը՝ սաստիկ ցրտեր, թե ձնհալ, փոթորիկ, թե ամռան անձրև: Նա պետք է նույնքան, որքան որ պետք է սեյսմոգրաֆիան, որն զգուշացնում է բնակչությանը երկրաշարժերի և, Աստված մի արասցե, ցունամիների մասին: Պատմությունը մի գի-*

[1] http://www.svoboda.org/content/article/24920097.html, 05.03.2013.

*տություն է, որն, ուսումնասիրելով առարկան, անդրադարձ չի տալիս ուղղակի արդյունքի տեսքով, սակայն զերծ է պահում հսկայածավալ սխալներից: Բայց որքան էլ տարօրինակ է, երբեմն պատմությունից պահանջում են անհապաղ անդրադարձ ուղղակի արդյունքի տեսքով, ձգտելով այդպիսով ստանալ բարոյական շահ, և այդժամ էլ պատմության միջոցով սկսում են հիմնավորվել նաև նյութական պահանջներն ու ազգային հավակնությունները: Նման նպատակներն իրականացնելու ձգտման պարագայում է, որ մեր կենդանի գիտությունը վերածվում է մի մեռյալ սխեմայի: Ո՛չ, պատմությունն անհրաժեշտ է մարդկանց որպես պահպանիչ գիտություն: Իսկ որպեսզի այն դառնա այդպիսին, նրանից անհրաժեշտ է դեն նետել բոլոր առասպելաբանական անհեթեթությունները, կողմնակալությունն ու որակական գնահատականները... Հակառակ դեպքում պատմական գիտությունը վարկաբեկվում է և վերածվում խաբեության, քանզի հետագա հետազոտությունները սկսում են խարսխվել իրականում գոյություն չունեցող փաստերի վրա... Օրինակ, երբ մենք սկսում ենք առասպել հյուսել առ այն, որ մենք ինչ-որ ազգի հանդեպ միշտ եղել ենք թշնամի, իսկ մեկ այլի հանդեպ էլ՝ մշտապես բարեկամ, ապա երկուսն էլ հիմարություն են... Նման դեպքում մենք սկսում ենք ապրել ինչ-որ հորինված, մտացածին մի աշխարհում և, բնականաբար, չենք կարողանում նրանում կողմնորոշվել: Իսկ այդ դեպքում արդեն իրական աշխարհում, ելնելով մեր կեղծ, առասպելաբանական պատկերացումներից, սկսում ենք գործել սոսկալի արարքներ՝ ի չարս թե՛ մեզ, թե՛ այլոց...»:*[2]

Իսկ XXդ. փիլիսոփայության սյուներից մեկը՝ էքզիստենցիալիստ ***Կառլ Յասպերսը*** չափազանց պատկերավոր ձևակերպել է, թե ինչ դերակատարում և ազդեցություն ունի մեր ներկայի (և ապագայի) ձևավորման հարցում մեր անցյալը, որը պատմության տեսքով մշտապես հառնում է մեր առջև. *«... Պատմական իրականությունը չեզոք չէ: Պատմությունն անմիջականորեն առնչվում է մեզ հետ... Իսկ այն ամենը, ինչը նրանում վերաբերում է մեզ, մարդու համար կազմում է իր ներկայի խնդիրը...»:*[3]

Այս կապակցությամբ հարց է ծագում, թե ինչպես առնչվեց մեզ հետ և մեզանում ինչ խնդիրներ առաջ բերեց մեր անցյալը՝ մեր պատմության տեսքով ուղղակի մասնակիցը լինելով մեր ներկային:

---

[2] История – наука естественная, или визит к профессору Гумилеву, "Сельская молодежь", 1988, №2, с. 44-49, http://gumilevica.kulichki.net/articles/Article66.htm.
[3] К.Ясперс, Смысл и назначение истории, М., 1991, с. 274.

Երբ 1988-90թթ. պարզ դարձավ, որ ԽՄ փլուզումն արդեն, ըստ էության, անշրջելի իրականություն է, և Հայաստանը ԽՍՀՄ մյուս հանրապետությունների հետ միասին նույնպես ստանալու է պետական անկախություն, հայ հասարակության մեջ ոգևորության կողքին առկա էր նաև որոշակի, եթե չասենք տագնապ, ապա մտահոգություն: Իսկ մտահոգությունը հետևյալն էր՝ կարողանալո՞ւ ենք արդյոք մենք՝ հայերս, գոնե այս անգամ պահպանել այդ անկախությունը, թե՞ ժամանակաշրջանի պատմական իրադարձությունների բարենպաստ ընթացքի շնորհիվ հերթական անգամ ձեռք բերված անկախությունը նախորդների նման կրելու է ընդամենը ժամանակավոր, էպիզոդիկ բնույթ և նախորդների նման հերթական անգամ էլ կորսվելու է: Ընդ որում՝ մտահոգության առարկան ոչ միայն տնտեսական, ռազմական, մարդկային ռեսուրսների կամ նյութական և այլ միջոցների սակավությունն էր՝ վտանգավոր հարևանների հետ համեմատած, այլ առաջին հերթին անկախություն ստացած երկրում ձևավորվելիք համապատասխան քաղաքական էլիտայի հարցը: Այսինքն՝ մտահոգությունը վերաբերում էր այն մարդկանց էությանը, համապատասխան որակներին և հնարավորություններին, որոնք վաղը ստանձնելու էին անկախ երկրի կառավարման պատասխանատվությունը, մշակելու և իրականացնելու էին անկախ Հայաստանի քաղաքական կուրսը:

Դեպքերի ընթացքը բոլորիս հայտնի է. երբ հարկ եղավ զենք վերցնել և սեփական կյանքի գնով պաշտպանել Հայրենիքը, այդ օրերին հայության մեջ գտնվեցին դրա համար անհրաժեշտ բարոյական, մարդկային և նյութական ռեսուրսներ, ու թեև բավականին թանկ գնով, կորզվեց ռազմական հաղթանակ: Բայց երբ եկավ այդ Հայրենիքն արդեն երկիր-պետության տրանսֆորմացնելու հրամայականի պահը, օրվա պահանջներին համահունչ պետական-քաղաքական համակարգ ստեղծելու, ամուր պետականություն կառուցելու հերթը, ակնհայտ դարձավ, որ այդ ամենի համար իրականում համապատասխան մարդկային ռեսուրսներ այդօրվա Հայաստանում չկային: Անկախության Հռչակագիրն ընդունելուց (23 օգոստոսի, 1990թ.) քառորդ դար անց մենք ընդամենը կրկին հայտնվեցինք վերոնշյալ պատմական կեղծ և մեռյալ սխեմայի շրջանակներում, ըստ որի՝ մի ազգ (թուրքը) մեր հավերժ թշնամին է, իսկ մեկ այլ ազգ էլ (ռուսը)՝ մեր հավերժ և միակ բարեկամն ու փրկիչը: Եթե այսօր հայությունը կրկին հայտնվել է այդ նույն սխեմայի կապանքների գերության մեջ, դա միարժեքորեն նշանակում է, որ անկախություն ստացած սերունդն իր ներսում պարզապես չուներ այն ներուժը, որ կարո-

ղանար իր միջից ձևավորեր այսօրվա պահանջներին բավարարող, երկրի հանդեպ առկա մարտահրավերներն ադեկվատ ընկալող ու արձագանքող քաղաքական էլիտա: Իսկ դրա հիմնական պատճառներից մեկն այն էր, որ սեփական պատմության ընկալման առումով՝ խոսքը հատկապես վերաբերում է մեր նախորդ անկախ պետականության քաղաքական պատմության դասերին, XXդ. վերջին տասնամյակում անկախություն ստացած սերունդը ապրել և գոյատևել էր կեղծված և նենգափոխված պատմական իրականության մեջ: Ուստիև նախորդ անկախ պետականության ընթացքը լուսաբանող պատմագիտությունը տվյալ դեպքում որևէ կերպ չդրսևորեց իր պաշտպանիչ հնարավորությունները՝ հօգուտ և ի սպաս ներկայիս անկախ պետականության: Նման բան, նման «պաշտպանիչ դերակատարում», չէր էլ կարող ինչ-որ կերպ իրականացվել, որովհետև չկար այդ նախորդ պետականության ընթացքը հնարավորինս օբյեկտիվորեն լուսաբանած պատմագիտական նյութը, և չկար դրանից բխող ու լայն հանրությանն ուղղված և դրան հասու համապատասխան *տեքստը*: Եվ այսօր էլ, չնչին բացառությամբ, մենք համառորեն չենք ցանկանում ընդունել, որ «*պատմությունը պարզապես գիտելիքների հավաքածու չէ անցյալի մասին, առանց պատմության անհնարին է պատկերացնել պետու-թյան, հասարակության և ազգի ապագան*»[4], ինչի պատճառով էլ ի վիճակի չենք տեսնել ու հասկանալ աշխարհում տիրող իրականու-թյունը, այլ փոխարենը «*ցուցաբերելով արմատական պատմական տգիտություն*»[5]՝ իներցիայով շարունակում ենք կառչել ոչ թե մաշված ու իրեն սպառած, այլ ի սկզբանե սխալ, փորձություններով և վտանգներով լի, հորինված առասպելների վրա կառուցված մտացածին «*մեր աշխարհի*», «*մեր անցյալի*» խրտվիլակից: Եվ դրա պատճառով ու դրա արդյունքում է, որ սեփական պետության և պետականության լինել-չլինելու խնդրի հարցում այսօր ունենք այն, ինչ որ ունենք:

Ի վերջո, երբ ասվում է, թե « …*ելնելով մեր կեղծ, առասպելաբա-նական պատկերացումներից, մենք սկսում ենք գործել սոսկալի արարքներ…*», և այդ միտքը պրոյեկտվում է կոնկրետ պատմական ժամանակահատվածների և կոնկրետ իրադարձությունների վրա, ապա, ամենևին չժխտելով արտաքին գործոնների կարևորագույն

---

[4] А.Дождиков, История, как наука для будущего, “Власть”, №11, 2013, с.130.

[5] А.Дождиков, նույն տեղում:

դերն ու նշանակությունը, այդ պարագայում որպես առաջնային գործոն սկսում է ասպարեզ գալ ու դիտարկվել արդեն այն հանգամանքը, թե տվյալ ազգը, տվյալ ժողովուրդը և նրա ձևավորած էլիտան ինչպես են իրենց դրսևորել (ու դրսևորում) նման էքստրեմալ պայմաններում՝ իր պետության, իր երկրի ու պետականության համար բախտորոշ իրավիճակներում:

Հայերի պարագայում, որոնք ակնհայտորեն տառապում են պետականության ու տարածքների կորստյան յուրատեսակ պարբերական քրոնիկ հիվանդությամբ, այդ հարցը, ըստ էության, հավերժական է և արդիական է նաև հենց այսօր: Եվ միանգամայն բնական է, որ, նկատի ունենալով հարցի օրակարգային լինելը, առաջին հերթին հետադարձ հայացքն ուղղվում է մեր կողմից պետականության կորստյան «ամենաթարմ» նախադեպին, այն է՝ ՀաՀ-ի գոյության 2.5 տարվան, իսկ հատկապես՝ դրա գոյության վերջին մի քանի ամիսներին: Այն ամիսներին, որոնց ընթացքում Մեծ Եղեռնի հետևանքով հսկայական մարդկային կորուստներ կրած ու հայրենազուրկ դարձած ազգը դարձյալ ենթարկվեց կոտորածների ու հայրենազրկման:

Ահա թե ինչպես է իր հուշերում անդրադառնում պատմական այդ ժամանակահատվածում հայկական անկախ պետության ստեղծմանն ու դրա անհետացմանը XXդ. աշխարհակարգի կանոններն ու պայմանները մշակողներից և թելադրողներից մեկը՝ ***Ուինսթոն Չերչիլը***.[6] *« … Կարծիքները հայերի վերաբերյալ փարբեր էին. ոմանք ընդգծում էին հայ ժողովրդի փառապանքները, իսկ այլոք մատնանշում էին նրա թերությունները… Թվում էր, թե այժմ եկել է այն պահը, երբ հայերի հանդեպ ապահովվելու է արդարացի մոտեցում, և նրանք իրավունք կստանան խաղաղ ապրել իրենց հայրենիքում… Մեծ ազգերը, հանդիսանալով հաղթանակած կողմ, հայերի բարեկամներ էին և պետք է որ հոգ տանեին հայկական հարցի հաղթանակի համար: Անհավանական էր թվում, որ հինգ դաշնակից մեծ տերություններ չկարողանան իրականացնել իրենց կամքը: Սակայն սույն գրքի հետ ծանոթացած ընթերցողը այդ առումով որևիցե պատրանք ունենալ չի կարող: Այն ժամանակ, երբ հաղթողները բարեհաճեցին փարիզյան վեհաժողովում անցնել հայկական հարցի քննարկմանը, միասնություն դաշնակիցների միջև արդեն չկար, նրանց բանակները նույնպես այլևս գոյություն չունեին, և իրենց որոշումներն ընդամենը դատարկ խոսքեր էին: Ոչ մի*

---

[6] Новое исчезновение Армении с исторической сцены, У.Черчилль, Мемуары, http://militera.lib.ru/memo/english/churchill2/18.html

*տերություն չէր ցանկանում վերցնել Հայաստանի մանդատը: Բրիտանիան, Իտալիան, Ամերիկան, Ֆրանսիան նայում էին այդ մանդատին և միայն գլուխներն էին տարուբերում: 1920թ. մարտի 12-ին Գերագույն խորհուրդը այդ մանդատն առաջարկեց Ազգերի Լիգային: Սակայն Լիգան, իր տրամադրության տակ չունենալով ոչ միջոցներ, ոչ էլ մարդիկ, շրջահայաց ու վճռական կերպով մերժեց այն: Հույսը մնում էր Սևրի դաշնագիրը: Օգոստոսի 10-ին տերությունները ստիպեցին Կոստանդնուպոլսի կառավարությանը ճանաչել Հայաստանը որպես ազատ ու անկախ պետություն, որի սահմանները, սակայն, դեռևս որոշված չէին: Դաշնագրի 89-րդ հոդվածը նախանշում էր, որ Թուրքիան պարտավոր է «Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահի քննարկմանը փոխանցել Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթներում Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանների հարցը և համաձայնվել իր կայացրած որոշման հետ, ինչպես նաև համաձայնվել նրա կողմից ներկայացված ցանկացած պայմանին, որով կերաշխավորվի Հայաստանի ելքը դեպի ծով...»: Միայն 1920թ. դեկտեմբերին նախագահ Վիլսոնը կատարեց այդ բարձր հանձնարարականը:[7] Համաձայն նրա կողմից որոշած սահմանագծի, Հայաստանին էր անցնում, ըստ էության, այն ամբողջ թուրքական տարածքը, որը զբաղեցնում էին ռուսական ռազմաջոկատները մինչև հեղափոխության պատճառով իրենց ցաքուցրիվ լինելը: Այդ տարածքները Էրիվանյան հանրապետությանը միացնելուց հետո հայկական պետական տարածքը պետք է զբաղեցներ մոտ 50.000 քառ. մղոն: Հայկական պահանջները բավարարված եղան այն աստիճան, որ այդ նոր պետության մեջ մահմեդականներն ավելի շատ էին, քան հայերն ու հույները: Տվյալ դեպքում հանուն արդարության հաղթանակի չափը նույնիսկ անցկացրել էին: Սակայն հայկական պետությունը գոյություն ուներ ընդամենը թղթի վրա: Մոտ մեկ տարի առաջ, 1920-ի հունվարին, թուրքերը գրոհել էին ֆրանսիացիներին Կիլիկիայում, դուրս էին մղել նրանց Մարաշի շրջանից և սրի էին քաշել մոտ 50 հազար հայ: Մայիսին բոլշևիկյան ջոկատները գրավեցին և վերջնականորեն ստրկացրին Էրիվանյան հանրապետությունը: Սեպտեմբերին, թուրքերի և բոլշևիկների միջև կայացրած համաձայնությամբ, Էրիվանը հանձնվեց թուրք*

[7] Նախագահ Վուդրո Վիլսոնն իր իրավարար վճիռը կայացրել է 1920թ. նոյեմբերի 22-ին, իսկ դեկտեմբերին այդ փաստաթուղթը հասել է Ազգերի լիգա:

*ազգայնականներին:*[8] *Ինչպես և Կիլիկիայում, այդ գործընթացը զուգակցվում էր հայերի սոսկալի կոտորածներով… Լոզանի պայմանագրում, որտեղ ամրագրվեց վերջնական խաղաղությունը Թուրքիայի և մեծ տերությունների միջև, պատմությունը ապարդյուն կերպով պետք է փնտրի «Հայաստան» բառը…»*:

Ամենևին չանտեսելով հիշատակվող պատմական ժամանակաշրջանում մեզանից օբյեկտիվորեն չկախված մի շարք արտաքին ռազմաքաղաքական խիստ անբարենպաստ գործոնների առկայությունը՝ հնարավոր չէ շրջանցել նաև զուտ մեզ առնչվող հարցը. *«Ինչպե՞ս ենք կողմնորոշվել ու մեզ դրսևորել մենք ինքներս այդ ծանր պայմաններում, այդ բարդագույն, օրհասական իրավիճակում»*:

Խոսքը տանք հիմա էլ մեր մեծերին: Ահա թե ինչ է գրում ***Հովհաննես Թումանյանը*** 1921թ. դեկտեմբերի 9-ին ***Ավետիք Իսահակյանին*** ուղղած իր նամակում. «…*Ես չեմ ուզում և չեմ կարող երկար ու բարակ գրել մեր երկրից, թեև դու հարցնում ես: Կարճ ասեմ. մենք թե՛ դրսից, և թե՛ ներսից քանդեցինք մեր երկիրը: Գլխավորապես մենք: Մենք եմ ասում, և սրա մեջն է ճշմարտությունը: Մի մասը խաչագող սրիկաներ, մի մասը գողեր ու ավազակներ, մի մասը ապիկար թշվառականներ, և չերևաց մի բազմություն, գոնե մի խմբակ, որ վերածնվող երկրի շունչը ու բարոյական կարողությունը հայտնաբերեր: Էսքան աղետների ու պարտությունների մեջ ո՛չ մի մեղավոր չերևաց, ո՛չ ոք ոչ պատասխանի կանչվեց, ոչ պատասխան տվեց: Եվ շարունակվում է. այժմ էլ նույն մարդիկը, նույն ճանապարհներով… Եվ ոչ մեկը գոնե անձնասպան չեղավ, որ ապացուցաներ, թե գոնե ամոթ ու խղճմտանք կա էս մարդկանց մեջ կամ էս ժողովրդի մեջ: Բայց ես ինչ եմ ասում. չկարողացան գոնե վշտանալ կամ վշտացած երևալ: Բայց ավելի լավ է թողնենք: Կտեսնվենք, կխոսենք…»*[9]*:*

Թումանյանի այս նամակը փաստում է, որ այն օրերին հայրենիքի և պետության կորստյան վտանգի առաջ կանգնած ժողովրդի մոտ՝ անկախ աստիճանից ու մակարդակից, գերակշռողն են եղել *հայրենաժխտումն* ու *հայրենամերժումը*, որոնք էլ, «ներդաշնակվե-

---

[8] Հուշերի հեղինակը, հավանաբար *«Էրիվանը»* ասելով, ենթադրում է *«Էրիվանյան հանրապետությունը»*:

[9] Հ.Թումանյան, Երկերի լիակատար ժ-ծու, հ.10, Երևան, 1999, էջ 408: Ինչ վերաբերում է նրան, որ «…*ոչ մեկը գոնե անձնասպան չեղավ…*», ապա հայտնի է, որ Կարսի անկման ժամանակ ինքնասպան են եղել հայկական բանակի սպաներ Մազմանյանը, Չիլինգարյանը և Բագրատունին: Տե՛ս Գ.Յազըճեան, Կարսի 1920թ. անկման խորքային պատճառները, Երևան, Ա.հ., 2007, 112 էջ (հետայսու՝ Գ.Յազըճեան, Կարսի 1920թ….): Հավելենք, որ Խաչիկ Դաշտենցն իր «Ռանչպարների կանչ»-ում խոսում է նաև բերդապետ, գնդապետ Մելիք-Հովսեփյանի ինքնասպանության մասին:

լով» արտաքին ճնշումների հետ, հանգեցրին ոչ թե պարզապես հայկական պետականության հերթական կորստյանը, այլ հայրենիքի քաղաքական ու ֆիզիկական ավերման ու ոչնչացմանը, ազգի ֆիզիկական ու բարոյական նսեմացմանն ու կործանմանն:

Իսկ ինչպե՞ս էր այդ ամենը գործնականում արտահայտվել ու դրսևորվել սովորական մարդկանց և նրանցից կազմված, ինչպես ասում են, հասարակ ժողովրդական զանգվածի նկատմամբ:

1920-ին հայրս եղել է 12 տարեկան, տեսել ու վերապրել է այն ամենը, ինչ կատարվել է այդ տարվա վերջին ամիսներին Շիրակի երկրամասում: Թեև ցավով, բայց կիսվում եմ ընթերցողի հետ իմ անձնական տպավորություններով:

«Աշնանը հայրս միշտ հիվանդանում էր: Կենսաբանական յուրահատուկ մի օրացույցով՝ միշտ նոյեմբերի առաջին կեսին նա վատանում էր: Այդ օրերին, որպես կանոն՝ միշտ ցեխ, անձրև, թաց ձյուն, խոնավ, տխուր ու ճնշող մի եղանակ: Ու այդ ամենի հետ էլ՝ տանը հիվանդ հայրդ: Մայրս ասում էր, որ ընդհանուր առմամբ, նա 1941-45թթ. պատերազմից շատ հյուծված ու վատառողջ էր վերադարձել: Մի քանի անգամ վիրավորվել էր: Վիրավորումներն այնպիսին են եղել, որ երկու անգամ հորս տեղափոխել են թիկունք՝ հոսպիտալում բուժվելու համար: Հիվանդացել է տիֆով, թոքաբորբ է տարել: Առհասարակ, հայրս հաճախակի էր հիվանդանում: Բայց աշնանային՝ նոյեմբերյան այդ հինգ-յոթ օրվա տենդը, հիվանդանալու մյուս դեպքերի հետ ոչ մի կապ ու առնչություն չուներ: Դա յուրատեսակ պարտադիր-պլանային բնույթ էր կրում, իսկ բժշկական որևիցե միջամտությունն էլ բացարձակապես անօգուտ էր եվ անիմաստ: Տենդը ոնց որ «իրեն-իրեն» սկսվում էր, այնպես էլ «իրեն-իրեն» աստճանաբար հետ նստում ու անցնում էր:

Արդեն հոկտեմբերի վերջերից սկսած մայրս իրար էր խառնվում՝ «էս է, ուր որ է, էլի շոչելու է»: Մեզ՝ երեխեքիս, մայրս բացատրել էր, որ հորս այդ «նոյեմբերյան» տենդը գալիս է նրա մանկական տարիներից: Իսկ ավելի ստույգ՝ 1920 թվականի աշնանից: Այդ մասին հարս գնալուց հետո իրեն տեղեկացրել էր սկեսուրը՝ հորս մայրը: 1920 թվականի աշնան վերջին ամսվա ցեխոտ, անձրևա-ձնախառը խոնավ մի առավոտ հորս գյուղի «ժամի հայաթը» թուրքերը բերել-հավաքել էին Թուրքիա քշվող Շիրակի գավառից գերեվարված հայ տղամարդկանց հերթական խմբաքանակը: Երեկվա զինվորներին, մաճկալներին ու արհեստավորներին սպանդի քշելուց առաջ հնարավորություն էր տրվել վերջին հրաժեշտը տալ իրենց ընտանիքներին ու հարազատներին: Գերի հայ տղամարդիկ բոլորը ծնկաչոք են եղել,

ձեռքերը մեջքների հետեվում, գլուխները կախ, հայացքները գետնին: Առանց գլուխը բարձրացնելու, կողքերը նայելու, ձայն հանելու իրավունքի: Ձեռքերն էլ՝ միայն մեջքի հետևում պահած: Այդ գլուխը կախ չոքած հայ տղամարդկանցից մեկը եղել է իմ հորական պապը՝ հորս հայրը: Սեփական Աստծո Տան դիմաց, նոյեմբերյան ցրտին, միայն ներքնազգեստով՝ «շապիկ-վարտիքով» ու բոբիկ, ցեխի մեջ չոքած, նսեմացված ու տրորված, ոչնչացման ենթակա, ու նման գալիքի հետ անմռունչ համակերպված, հնազանդ ու պատրաստ, ֆիզիկապես միանգամայն առողջ հայ տղամարդկանց այդ խմբի մեջ, որոնց կախած գլխներին տեղում էին աշնան թաց ձյունն ու անձրևը, հայրս ճանաչում է իր հորը: Ու ձայն է տալիս: Ճչում է, գոռում: Պապս չոքած տեղում ցնցվում է, բայց ձեռքերը մեջքի ետևից չի շարժում, գլուխը վեր չի բարձրացնում, որևէ ձայն չի հանում: Հորս ճչոցն արագացնում է դեպքերի ընթացքը: Հայ գերիներին հրահանգում են ոտքի կանգնել և «չորս-հինգ ասկյարով» մի քանի հարյուր հայ տղամարդու քշում են դեպի երկաթգիծը՝ Թուրքիա տանելու համար: Հայրս հիվանդանում է, մի շաբաթ-տասը օր ընկնում է տենդի մեջ: Ու դրանից հետո ամեն աշնան այդ օրերին նա հիվանդանում էր...

Հորս պատմածներից, իրենց համագյուղացի տարիքով մարդկանց զրույցներից պարզվում էր, որ Հովհաննես պապս իր կազմվածքով եղել է «երկու մետրանոց», անհավանական ֆիզիկական ուժի տեր մի տղամարդ: Նրան բոլորը հարգել են, իսկ առաջին հերթին՝ նրանից վախեցել են: Եղել է «Նիկոլայի սալդատ», զորակոչվել է առաջին աշխարհամարտի առաջին իսկ օրերից: Հայրս պատմում էր, որ երբ 1918-ի գարնանը՝ «թուրքի առաջին գալուց առաջ», հայրը տուն է եկել, նրա կրծքին խաչի տեսքով երկու հատ մեդալ է տեսել: Թե ի՞նչ մեդալ էին դրանք՝ չգիտեր: Բայց հաստատ գիտեր, որ հայրը կռվել էր հենց Կովկասյան ռազմաճակատում և մասնակիցն էր եղել Սարիղամիշի տակի ձմեռային հայտնի այն կռիվներին, որոնցում ջախջախվել էր Էնվերի զորախումբը: Հետո... Հետո՝ մեկ տուն ու ընտանիք, մեկ՝ հայկական բանակ, մեկ՝ վար ու ցանք, մեկ՝ կռիվ, մեկ՝ նահանջ, հետո՝ փախուստ, և ի վերջո՝ կիսամերկ ու ծնկաչոք, անգամ կենդանական մակարդակով ընդվզմանն անընդունակ վիճակում հայտնված աշնանային այն «շլոփա-չալփաշունքի» մեջ, ձեռքերը ետևում, գլուխը կախ, հայացքը գետնին հառած: Հետո՝ ըստ թուրքի գերությունից հրաշքով մի քանի փախած-փրկվածների պատմածների՝ տաժանակիր աշխատանք Կողբի հանքերում, սոսկալի, անմարդկային, անասելի դաժան պայմաններ և ընդամենը մի քանի շաբաթ անց՝ հիվանդություն ու տանջալի մահ...

Ընդ որում, հորս պատմածով, պապս փրկվելու, գերությունից ազատվելու, Թուրքիա չքշվելու շատ ռեալ հնարավորություն է ունեցել: Գերի վերցրած հայ տղամարդկանց սահմանափակ որոշ մի «գլխաքանակ» թուրքերը ոսկու դիմաց համաձայնվել են զիջել մի հայ մեծահարուստ մարդու: Հորս ասելով՝ Հաջիխալիլցի (այսօր՝ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ գյուղ) Փիլոսը ամեն մի հայ գերու դիմաց վճարելիս է եղել մեկ ոսկի: Պապս այդ փրկագնով ազատվելու ենթակա բախտը բերած թեկնածուներից մեկն է եղել: Բայց քանի որ «քվոթաները» խիստ սահմանափակ են եղել, նա գերադասել է, որ իր փոխարեն ազատ արձակեն իր եղբորը, որը վիրավոր է եղել՝ ոտքի լուրջ վնասվածքով: Պապս ասել է, թե «Ախպեր, էս հալիդ դու երկար չես ձգե, քեզ շատ շուտ կսպանեն: Իսկ ես առողջ մարդ եմ, ոնց էլ ընի, մի բան կանեմ, կփախնեմ կգամ»: Հետո հայրս մեծացել էր իր այդ փրկված հորեղբոր տանը: Ու ամեն անգամ, երբ խոսքը հասնում էր այդ «փրկվել-չփրկվելուն», չէիր կարող կողմնորոշվել, թե ինչն է գերակշռում հորս մոտ՝ ափսոսանքը, որ հայրը ինքը չի փրկվել ու ողջ մնացել, թե ակնածանքը, որ իր հայրը ընդունակ է եղել այդտեսակ ինքնազոհ քայլի գնալ: Մեկ-մեկ էլ թվում էր, թե մի տեսակ թաքնված ու շա՜տ խորքից ոնց որ ասեր-ակնարկեր, թե «բայց նման ձևով փրկվելն էլ մի մեծ նվաճում չէր…»: Թե միայն թվացել է…

Նշվում էր նաև այդ ամենի պատճառն ու «չարիքի բույնը», ինչը դեպքերի ընթացքում ձևավորվել էր որպես համոզմունք՝ «ՂԱՐՍ»… Էդ ամենը «ՂԱՐՍ»-ի ք…րն էին: Եթե Ղարսը հենց էնպես չտային շան բերանը, էդ զուլումն էլ էստեղ մեր գլխուն չէր գա…

Թե՛ փոքր տարիքիս, թե՛ հետո, այդ ամբողջ պատմության մեջ ամենից շատ խղճում էի հորս: Իրավաբանական կոշտ լեզվով ասած՝ նրան ես ընդունում ու ընկալում էի ոչ թե որպես «տուժողի իրավահաջորդ», այլ հենց որպես «տուժող կողմ»: Կողմ, որը տուժող է թե՛ թշնամու, ագրեսորի գործողություններից, թե՛ թշնամուն դիմադրություն չցուցաբերած եվ նրան անձնատուր եղած հսկայակազմ իր հոր կողմից: Թե՛ այն տարիներին, թե՛ այսօր, պարզապես հնարավոր չէ ընդունել մի միտք, համակերպվել նրա հետ, որ միանգամայն առողջ, այն էլ ֆիզիկապես հզոր 30-35 տարեկան տղամարդը այն աստիճան կամազրկվի, որ հայտնվի վերը նկարագրված վիճակում: Այն էլ՝ իր երկրի, իր ընտանիքի ու անձի լինել-չլինելու համար մղվող գոյամարտի պարագայում: Իսկ չէ՞ որ իրականում խոսքը գնում է հազարավոր, տասնյակ հազարավոր, զանգվածաբար «չոքածների», գրեթե ամբողջ բանակի ու երկրի մի հսկա հատվածի բնակչության մասին: Բայց չէ՞ որ թշնամու առաջ նրանք «բահ ու եղանի» հույսին

մնացած չեն եղել: Թշնամուն արժանի դիմադրություն ցուցաբերելու համար, նրանց, պաշտոնական լեզվով ասած, «տրամադրված են եղել համապատասխան ռազմատեխնիկական և նյութական հնարավորություններն ու միջոցներ»,[10] սակայն նրանցից ամեն մեկն իր համար գտել ու ստեղծել էր «հիմնավոր պատճառներ» արշավող թշնամուն որևիցե դիմադրություն չցուցաբերելու համար…»:[11]

Այսինքն, *« …ելնելով մեր կեղծ, առասպելաբանական պատկերացումներից, մենք սկսում ենք գործել սոսկալի արարքներ…»*: Իսկ այդ ամենի կուտակումը, գերխտացումն ու կիզակետումը իրենց որակական ամբողջ էությամբ դրսևորվեցին մարդկային բանականության համար անպատկերացնելի մի աղետի տեսքով, որի անունն է «ԿԱՐՍ»: «ԿԱՐՍ»-ը պարտություն չէ, քանզի ոչ թե ճակատամարտ, այլ նույնիսկ աննշան զինված ընդհարում չի եղել: «ԿԱՐՍ»-ը բերդի անկում չէ, քանզի չի եղել նույնիսկ որևէ գրոհ բերդի վրա: «ԿԱՐՍ»-ը բերդի հանձնում չէ, քանզի չի եղել բերդի նույնիսկ կարճատև պաշարում: «ԿԱՐՍ»-ը… «ԿԱՐՍ» է: Դա երևույթ է, ազգի մեջ ընթացած ու հասունացած այնպիսի պրոցեսների հետևանք, որոնց արդյունքը լինում է այն, որ ազգն այլևս բացարձակապես հրաժարվում է իր ունեցած բոլոր իրավունքներից ու պատասխանատվությունից, պարտավորություններից ու պարտականություններից իր հողի, հայրենիքի, պետության, նույնիսկ իր ընտանիքի և ի վերջո՝ անգամ իր սեփական անձի նկատմամբ: Դա է «ԿԱՐՍ» ասածը՝ իր էությամբ ու դրսևորմամբ համազգային անասելի մի խայտառակություն, իր հետևանքներով՝ համազգային անասելի մի աղետ: Այն օրերին մեզանում դրսևորված կամազրկման մասշտաբների վերաբերյալ իր գնահատականն է տվել նաև մյուս մեծ լոռեցին՝ մեր ժամանակակից ***Հրանտ Մաթևոսյանը***, ով, մատնանշելով հողի իրական տեր հանդիսացող իր հերոսին, շեշտում է. *«Իրա նման փասը փղա լիներ, Ղարսը մերն էր»*:[12]

Առաջին Հանրապետության կործանման գործընթացում «ԿԱՐՍ»-ը հանդիսացավ այն «ստուգիչ կրակոցը», որն հնչեց Հայաստանի քունքին 1920թ. հոկտեմբերի 30-ին: «ԿԱՐՍ»-ից հետո մինչև Խորհրդային Ադրբեջանում ձևավորված Հայհեղկոմի՝ Բաքվից Իջևանի վրայով Երևան ժամանելն ընկած մեկ ամիսը հանդիսացավ, փաստորեն, այն ժամանակահատվածը, որն անհրաժեշտ էր, որպեսզի կազմակերպվեին և իրականացվեին

---

[10] Հանրահայտ փաստ է, որ ՀաՀ-ի կառավարությունը բանակին էր տրամադրում պետբյուջեի մոտ 85%-ը:

[11] Վ.Հարությունյան, Վերջին հայ սամուրայը, 30.10.2012, http://www.lragir.am/index/arm/0/society/view/73737

[12] Հ.Մաթևոսյան, Տերը, Երևան, Սովետական գրող, 1983, էջ 436:

ռուս-թուրքական պայմանավորվածության շրջանակներում նախատեսված հայկական պետության հուղարկավորության հետ առնչվող անհրաժեշտ բոլոր արարողությունները, որոնք էլ ավարտվեցին նրան «հողին հանձնելով», այն է՝ Ռուսաստանի, Թուրքիայի և Ադրբեջանի միջև Հայաստանը կես-կես անելով:

«ԿԱՐՍ»-ը մի կողմից մշտական մի խարան է մեր ազգի ճակատին, մյուս կողմից՝ զարհուրելի մի վկայություն և ահեղ հիշեցում հաջորդ սերունդներին, թե ինչ է տեղի ունենում, երբ ազգը ինքն իրեն տանում խցկում է կեղծ, մտացածին և արդյունքում աղետաբեր դոգմաների կոշտ սխեմաների մեջ: Ինչի հետևանքով էլ, իրոք, «չկարողանալով կողմնորոշվել իրական աշխահում», անտեսվում ու զրոյացվում են սեփական շահերը, նսեմացվում ու քայքայվում են դրանք պաշտպանելու համար կոչված սեփական ուժերը: Փոխարենը՝ ընդամենը փրկություն ես աղերսում «յոթ ծովի հետևից»[13], կամ էլ՝ նույն չկողմնորոշվելու պատճառով, այդ օրը թիկունքից քեզ հարվածողին նույն կարծրատիպերի թելադրանքով կրկին ու անվերապահորեն, հերթական անգամ դիտում ես որպես փրկիչ, իսկ ընդամենը երեկ քեզ կոտորողին էլ ընդունում ու դիմավորում ես արդեն որպես քո ազատարարի: Որպես ազատարարի, բայց ումի՞ց…

Խորհրդային տարիներին գործում էր *«Խորհրդային Միության Կոմունիստական Կուսակցության Կենտրոնական Կոմիտեին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտ»* անվամբ մի հաստատություն: Դրա հայաստանյան մասնաճյուղում առկա է եղել և մեր օրերին է հասել ազգությամբ հայ մարդկանց ձեռքով գրված և տարածված այսպիսի մի փաստաթուղթ.[14]

*« "Հույժ գաղտնի"*

*Հայաստանի կոմունիստների /բոլշևիկների/ կենտրոնական կոմիտեն հրահանգում է կուսակցության բոլոր կազմակերպություններին, թե՛ թիկունքում, թե՛ ռազմական գոտիներում և հատկապես Կարսի Գարնիզոն մեկնող բոլշևիկներին, անհատ զինվորների շրջանում և առանձին հավաքույթներում, եթե հնարավոր է, ինչպես նաև թռուցիկների միջոցով ծավալել լայն պրոպագանդա ընդդեմ պատերազմի, հիմնական խնդիր դարձնելով՝*

[13] Անդրկովկասում Մեծ Բրիտանիայի կոմիսար գնդապետ Ստոկսը զեկուցում էր իր կառավարությանը հայ հասարակության մեջ այդ օրերին տիրող տրամադրությունների մասին. *«… ժողովրդի մոտ կռվելու կամքի բացակայությունը բացատրվում է նրանով, որ հենց սկզբից համոզված էին, թե պայքարը իրենց ուժերից վեր է:»*, տե՛ս Գ.Յազըճեան, Կարսի 1920թ…., էջ 19:

[14] Հայաստանի Ազգային Արխիվ (ՀԱԱ), Ֆոնդ (Ֆ.) 1022, ցուցակ (ց.) 3, գործ (գ.) 275, թերթ (թ.) 1:

1. *Թուրքիան այլևս նախկին Թուրքիան չէ և Հայաստանի նկատմամբ ագրեսիվ նպատակներ չունի:*
2. *Քեմալական Թուրքիան Խորհրդային Ռուսաստանի դաշնակիցն է և պայքարում է իր ազգային ազատության համար ընդեմ իմպերիալիզմի /Անգլիայի, Ֆրանսիայի, Հունաստանի/:*
3. *Հանրապետական Հայաստանի հաղթանակը Թուրքիայի վրա՝ կնշանակի իմպերիալիզմի ուժեղացումը Մերձավոր Արևելքում և դրանով իսկ կվտանգվի հեղափոխության հաղթանակը Անդրկովկասում, ապա նաև Արևելքի խորհրդայնացումը:*
4. *Հայ բոլշևիկ կոմունիստների խնդիրը պետք է լինի՝ արագացնել հանրապետական Հայաստանի պարտությունը, որով և կարագացվի հայաստանի խորհրդայնացումը. Այս նպատակի համար պետք է.*
   1. *Կազմալուծել հայկական կովող բանակը բոլոր միջոցներով, այն է.*
      *ա/ կազմակերպել դասալքություն և ամեն կերպ խանգարել զորահավաքին:*
      *բ/ Ռազմաճակատներում հասկացնել զինվորներին, որպեսզի նրանք չկրակեն առաջացող թուրքական զինվորների վրա, այլ լքելով դիրքերը վերադառնան թիկունք:*
      *գ/ Չենթարկվել սպաների հրամաններին և հարկ եղած դեպքում ոչնչացնել նրանց:*
   2. *Այս ամենի հետ ամենաէականն է հասկացնել հանրապետական Հայաստանի զինվորներին, որ հաղթող թուրքական ասքյարը հեղափոխական ասքյար է, որը ոչ միայն իրեն թույլ չի տա որևէ գործողություն պարտված երկրի վերաբերյալ, այլ կօժանդակի աշխատավոր հայ ժողովրդին ազատվելու իմպերիալիստական գործակալ դաշնակցությունից:*
   3. *Նորից ու նորից բացատրել, որ դաշնակցականների տիրապետությունից ազատվելով ՝Հայաստանը ընդմիշտ կկապվի Ռուսաստանի հետ ընդմիշտ վերջ կտրվի պատերազմին և սովին ու մշտական ընդհարումներից քայքայված երկիրը կլիանա Ռուսաստանի հացով և մասնակիցը կդառնա համաշխարհային հեղափոխության մեծ գործին:*

*Ծանոթություն – Գրությունը կարդալ սահմանափակ ժողովում և կարդալուց հետո անմիջապես այրել: Հայաստանի կոմ.կուս.կենտրոնական կոմիտեի անդամներ՝ Ս.Կասյան, Ա.Մռավյան, Ա.Նուրիջանյան, Շ.Ամիրխանյան, Ի.Դովլաթյան, Ա.Հովհաննիսյան*

*Նո. 218 Բաքու 1920 ՍԵՊ 20 »*[15]

[15] Այս փաստաթղթի տակ ստորագրածներից չորսը՝ Սարգիս Կասյանը,Ասքանազ Մռավյանը, Ավիս Նուրիջանյանը, Իսահակ Դովլաթյանը՝ Սահակ Տեր-Գաբրիելյանի

Ընդունենք անվերապահորեն, որ այս թռուցիկի հեղինակները չափազանց, ծայրահեղ վատ մարդիկ են: Բայց չէ՞ որ այս թռուցիկը հասցեագրված է այն զանգվածին, որը կոչվում է ժողովուրդ: Բոլշևիկներն էլ, ինչպես հայտնի է, այդ առումով «թաց տեղ պառկողը» չէին: Եթե նրանք համոզված չլինեին, որ նման կոչի տարածման ու «ճիշտ» ընկալման համար իրոք գոյություն ունի պարարտ միջավայր, որ այդ միջավայրը նման բանը «կընդունի և կուլ կտա», նրանք նման կոչ շրջանառության մեջ չէին դնի: Սույն թռուցիկն այդ օրերին համապատասխան տրամադրություններով համակված հայ «մասսաների» բոլշևիկների կողմից հնչեցված միանգամայն ադեկվատ արձագանքն էր: Այն տրամադրությունների, որոնց մասին ռուս հեղինակ ***Ալեքսանդր Տոնկոնոժենկոն*** գրում է. « ... *Քաջ գիտակցելով Կարսի նշանակությունը հայկական պետականության և հայ ժողովրդի պահպանման հարցում, Կարսի անկումից մեկ ամիս առաջ այնտեղ է ժամանում եպիսկոպոս Գարեգին Հովսեփյանը: Նրա առջև ներկայա-*

և Ալեքսանդր Բեկզադյանի հետ միասին ներկայացնում էին Բաքվում ձևավորված այն Հայհեղկոմի կազմը, որը 11-րդ Կարմիր բանակի ուղեկցությամբ 1920թ. նոյեմբերի վերջին-դեկտեմբերի սկբին ժամանեց Հայաստան: Այդ հեղկոմի կառավարման օրոք էր, որ մի քանի հարյուր հայ գեներալներ և սպաներ 1920թ. դեկտեմբեր – 1921թ. հունվար ամիսներին ձերբակալվեցին և ուղարկվեցին Բաքվի և Ռուսաստանի կալանավայրերը, իսկ 1921թ. փետրվարի 10-ի գիշերը 21 հայ սպաներ Երևանի բանտում գնդակահարվեցին ու կացնահարվեցին: Խորհրդայնացված Հայաստանի ներքին գործերի նախարարն ու արտակարգ հանձնաժողովի (ՉԿ-ի) նախագահը այդ օրերին «ներքստորագրյալներից», համապատասխանաբար, Իսահակ Դովլաթյանն ու Շավարշ Ամիրխանյանն էին, որոնց գլխավոր խորհրդատուն էր 1920թ. հունվարի 14-ին Երևան հատուկ գործուղված հայտնի չեկիստ Գևորգ Աթարբեկյանը: Աշոտ Հովհաննիսյանը 1920թ. Հայաստանում Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչ Բորիս Լեգրանի աշխատակիցներից էր և Հայաստանի խորհրդայնացման առաջամարտիկներից մեկը: Թռուցիկի հեղինակներից միայն Մռավյանն ու Ամիրխանյանն են մահացել իրենց բնական մահով: Կասյանի, Նուրիջանյանի, Դովլաթյանի (ինչպես նաև Բեկզադյանի և Տեր-Գաբրիելյանի) կյանքի ավարտը թվագրվում է 1937-1939 տարեթվերով՝ գնդակահարություն, կամ «ինքնասպանություն»: Ինչ վերաբերում է հետագայում խորհրդահայ պատմաբան դարձած Աշոտ Հովհաննիսյանին, ապա նա ձերբակալվել է 1937-ին և ազատ է արձակվել 1943-ին: Նշենք, որ այսօրվա անկախ ՀՀ-ի մայր ԲՈՒՀ-ի՝ Երևանի պետական համալսարանի գլխավոր մուտքի տարածքում, ուր տեղադրված են ազգի մի շարք նվիրյալների կիսանդրիները, Մանուկ Աբեղյանի, Հրաչյա Աճառյանի, Հակոբ Մանանդյանի, Լեոյի և Նիկոլ Աղբալյանի կիսանդրիների կողքին վերջերս հայտնվել է նաև 1906 թվականից բոլշևիկ, այդ թռուցիկի համահեղինակ Աշոտ Հովհաննիսյանի կիսանդրին: Հատկանշական է նաև, որ իր հակահայկական գործունեությամբ հայտնի թուրք պատմաբան և հրապարակախոս Մեհմետ Փերինչեքը մի շարք այլ փաստաթղթերի հետ միասին, նշված թռուցիկը ներկայացնում է որպես հայ-թուրքական «ճիշտ և օրինակելի» հարաբերություններ կառուցելու խոսուն և ուսուցանելի մի փորձ և օրինակ; տե՛ս Мехмет Перинчек, Армянский вопрос в 120 документах из российских государственных архивов, М.,2011, с. 215.

*ցավ ճնշող պատկերը ոգով ընկճված հայ ժողովրդի, որը պատրաստ էր հնազանդվել և ողորմություն աղերսել թշնամուց…*[16]»: Իշխող այն տրամադրությունների, որոնց արդյունքն էլ ի վերջո եղավ «ԿԱՐՍ»-ը:

Եթե նույնիսկ տասն անգամ էլ հայերս կարողանանք հետ գրավել Կարսը, միևնույնն է, «ԿԱՐՍ»-ի խարանը չի սրբվի մեր ճակատից, չի անցնի, կմնա: Նա կանհետանա միայն այն դեպքում և այն ժամանակ, երբ մենք ինքներս մեզ և աշխարհին կարողանանք ներկայանալ որպես ազգ՝ այնպիսի որակներով ու կերպով, որոնց պարագայում նորանոր «ԿԱՐՍ»-երի կրկնվելը այդ ազգի համար բացառված կլինեն թե′ ըստ էության և թե′ սկզբունքորեն: Առավել ևս, որ այսօր էլ մենք ապրում ենք այնպիսի մի տարածաշրջանում, որտեղ բնակվող մարդու համար ամենևին ավելորդ չէ պարբերաբար վերհիշել մոտ դար ու կես առաջ Գերմանիայի կանցլեր Օտտո ֆոն Բիսմարկի կողմից արտահայտած միտքը. «*Ժամանակակից պատերազմում հաղթում են պատմության ուսուցիչները*»…

*Վլադիմիր Հարությունյան*

---

[16] А.Тонконоженко, Карсъ: проклятая память. М., 2010. 452 с.

# ԲԱԺԻՆ I

## ԿԱՐՍԻ ՄԱՐԶԸ ՊԱՏՄԱԿԱՆ ՏԱՐԲԵՐ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՆԵՐՈՒՄ

*Ինչպես հայտնի է, Կարս քաղաքը և Կարսի մարզը Հայաստանի առաջին Հանրապետության կազմի մեջ են ընդգրկվել Մուդրոսի զինադադարի (30 հոկտեմբերի, 1918թ.) ստորագրումից հետո՝ ի կատարումն այդ փաստաթղթի որոշակի պահանջների: Սույն բաժնում ներկայացված են պատմական տարբեր ժամանակահատվածներում Կարսի մարզի՝ այս կամ այն տերությանը պատկանելու վերաբերյալ որոշ տվյալներ՝ սկսած X-XI դարերից մինչև 1919թ. ապրիլի 24-ը, երբ ՀաՀ-ի բանակի միավորումները մտան Կարս:*

### I.1. Կարսի մարզը մինչև XIXդ. ռուս-թուրքական պատերազմները

Հնում Կարսը հանդիսացել է Մեծ Հայքի Այրարատ նահանգի Վանանդ գավառի կարևոր բնակավայրերից մեկը և մինչև XIդ. երկրորդ կեսը պատկանել է հայ իշխանական տներին: X-XIդդ. Կարսը որոշ ժամանակ եղել է նույնիսկ թագավորանիստ մայրաքաղաք (928-961թթ.՝ Բագրատունյաց թագավորության, 963-1065թթ.՝ Կարսի թագավորության): Թե՛ համապատասխան պետական-քաղաքական միավորների մաս կազմելու, թե՛ բնակչության ազգային պատկանելության, թե՛ այդ բնակչության տեղաբնիկ (ավտոխտոն) լինելու առումներով Կարսի հայկական պատկանելությունը մինչև XIդ. ներառյալ որևէ տարընթերցումների առարկա չի կարող լինել:[17] Սակայն XIդ. 7-րդ տասնամյակում Կարսի ճակատագրում տեղի ունեցավ կտրուկ շրջադարձ: Վանանդի «սեփականատեր» Գագիկ Աբասյանը, վախենալով սելջուկների հարձակումներից, 1065թ. փոխանակման գործարք սկսեց Բյուզանդիայի հետ: Քաղաքական-տարածքային այդ «բարտերի» արդյունքում Վանանդը՝ Կարսով հանդերձ, հանձնվեց Բյուզանդիային. փոխարենը հայ իշխանը կալվածքներ ստացավ

---

[17] Ցարական իշխանությունների Կարսի մարզի տարեկան պաշտոնական պարբերականը շեշտում է. «Որպես Կարսի և Կաղզվանի շրջանների հնագույն բնակիչներ անվիճելիորեն պետք է ճանաչվեն հայերը, որոնք բնակվել են այդ վայրերում վաղնջական ժամանակներից: Թուրքերը եկել են իրենցից ավելի ուշ: Ավելի ուշ մարզում հայտնվել և տեղավորվել են քրդերն ու կարապապախները...»; տե՛ս Памятная книжка и адрес-календарь Карсской области (ПКАККО) на 1902-й год, Сведения о Карсской области, Тифлис, 1901, с. 15:

Կապադովկիայում (հավանաբար «բարտերային» այդ ժամանակներում պետք է փնտրել *«որտեղ հաց՝ էնտեղ կաց», «խելքը հաց է փնտրում, հիմարը՝ հայրենիք»* և զուտ հայկական նման այլ «իմաստությունների» ծագման ու ձևավորման արմատները):

Այդ ժամանակվանից սկսվում է, փաստորեն, հայկական Կարս քաղաքի և մարզի արդեն ոչ հայապատկան, այլ օտարապատկան լինելու դարաշրջանը: 1071թ. Մանազկերտի ճակատամարտում բյուզանդական բանակը ծանր պարտություն է կրում Ալփ-Արսլանի զորքերից, և Կարսը անցնում է սելջուկների տիրապետության տակ՝ դառնալով ամիրայության կենտրոն: 1206թ. հայազգի վրաց զորավարներ՝ եղբայրներ Իվանե և Զաքարե Զաքարյանների գլխավորած բանակը մի շարք հայկական այլ տարածքների հետ միասին սելջուկներից վերցնում է նաև Կարսը, որը միացվում է վրացական թագավորությանը: 1236թ. Կարսը գրավում են մոնղոլները, իսկ 1394թ. այն գրավում և ավերում է Լենկթեմուրը: Նրա մահից հետո Կարսը, ինչպես և ամբողջ Հայաստանի տարածքը տասնամյակներով դառնում է ավերիչ պատերազմների թատերաբեմ Լենկթեմուրի հետնորդների և թուրքմենական ակկոյունլու և կարա-կոյունլու ցեղերի միջև: XVI-XVIIդդ. անցնում են գրեթե չդադարող թուրք-պարսկական պատերազմների մեջ, որոնց ընթացքում Կարսը քանիցս ձեռքից-ձեռք է անցնում: 1639թ. թուրք-պարսկական պայմանագրով Կարսն անցնում է Թուրքիային և մնում է նրա տիրապետության տակ մինչև XIXդ. ռուս-թուրքական պատերազմները:[18]

## I.2. Կարսի մարզը Ռուսական կայսրության կազմում

XVIIIդ. վերջերին – XIXդ. սկզբներին Կովկասյան թատերաբեմում հայտնվեց նոր հզոր ու համառ դերակատար՝ Ռուսաստանը, որն այդ ժամանակաշրջանից մինչ օրս ոչ շատ մեծ ընդմիջումներով Կովկասում վարում է տարբեր ծավալի նվաճողական պատերազմներ: XIXդ. ռուս-թուրքական բոլոր պատերազմների ժամանակ Ռուսաստանի համար Կարսը եղել է կարևորագույն ստրատեգիական ուղղություններից և նպատակներից մեկը: 1807թ. ռուսները փորձ են արել գրավել Կարսը, սակայն անհաջողության են մատնվել: 1828-ին և 1855-ին ռուսական զորքերը գրավել են Կարսը, սակայն հետպատերազմյան բանակցությունների արդյունքում ստիպված են եղել վերադարձնել այն սուլթանական Թուրքիային: Եվ միայն 1877-1878թթ. ռուս-թուր-

[18] В.Гиппіусъ, Осада и штурм крепости Карса въ 1877г. Исторический очерк, С. -Пб, 1885, 585 с. ; ՀՍՀ, հ.5, Երևան, 1979, էջ 342-343; Армянский Вопрос, Энциклопедия, Ереван, 1991, с. 193; А.М.Погосян, Карсская область в составе России, Ереван, 1983, с. 14-31 (հետայսու՝ А.М.Погосян, Карсская область…).

քական պատերազմի արդյունքում Կարսն անցավ Ռուսական կայսրության տիրապետության տակ:[19]

«Կարսի մարզ» անվանումը, այն իմաստով, ինչպես որ այն օգտագործվում է, շրջանառության մեջ է դրվել 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո, որի արդյունքում, համաձայն Սան-Ստեֆանոյի պայմանագրի (19 փետրվարի, 1878թ.) կովկասյան տարածաշրջանում Բաթումի, Արդահանի և մի շարք այլ շրջանների հետ միասին Թուրքիայից Ռուսաստանին էր անցնում նաև Կարս բերդաքաղաքը իր շրջակա տարածքներով:[20]

Կարսի մարզը՝ որպես Ռուսական Կայսրության վարչատարածքային միավոր, ստեղծվել է 1877թ. նոյեմբերին:[21] 1877-1881թթ. ընթացքում իրականացված մի քանի վարչատարածքային բաժանումներից հետո, ի վերջո, հաստատվում է հետևյալ կառուցվածքը՝ մարզը բաղկացած էր 4 օկրուգներից (Կարսի, Արդահանի, Օլթիի և Կաղզվանի) և զբաղեցնում էր 16.385 քառ. վերստ (18.646 քկմ.) տարածք:[22] Հանդիպում են նաև դրանից աննշան տարբերվող այլ տվյալներ, օրինակ՝ 16.869 քառ.վերստ (19.197 քկմ)[23] ևն: Այդ չորս օկրուգներն իրենց հերթին բաժանված էին 14 տեղամասերի (ուչաստոկների), որոնցում ընդգրկված էին 148 գյուղական համայնքներ (օբշչինաներ):[24] Հետագայում գյուղական համայնքների թիվը մարզում աճեց՝ 1904թ. հասնելով 196-ի[25], իսկ 1913-ին՝ 238-ի:[26]

Մարզի կառավարումը իրականացվում էր, այսպես կոչված, «ռազմաժողովրդական կառավարման» եղանակով,[27] որը հատուկ մշակվել էր կովկասյան և անդրկասպյան երկրամասերում ռուսական կայսրության կողմից նվաճած նոր տարածքների վարչական կառավարման համար: Կառավարման այդ համակարգի դրույթներն այնպիսին էին, որ նրանց միջոցով մի կողմից ապահովվում էր ուժեղ և խիստ իշխանության առկայություն նոր նվաճված տարածքներում,

---

[19] В.Гиппіусъ, նույն տեղում; ՀՍՀ, հ.5, Երևան, 1979, էջ 342-343; Армянский Вопрос, Энциклопедия, с. 193.

[20] Армянский Вопрос, Энциклопедия, Ереван, с. 288-289; А.М.Погосян, Карсская область…, էջ 35-55:

[21] А.М.Погосян, Карсская область…, էջ 13; ՀՍՀ, հ.5, Երևան, 1979, էջ 346.

[22] А.М.Погосян, նույն տեղում; Российские универсальные энциклопедии: Брокгауз-Ефрон (БрЕ) и Большая Советская Энциклопедия (БСЭ), http://gatchina3000.ru/big/049/49279_brockhaus-efron.htm.

[23] ՀՍՀ, Նույն տեղում:

[24] Армянский Вопрос, Энциклопедия, Ереван, 1991, с. 194.

[25] Кавказский календарь (հետայսու՝КК) на 1904 г; А.М.Погосян, Карсская область…, էջ 65, 66:

[26] КК на 1913 г.; А.М.Погосян, Карсская область…, էջ 66, 67:

[27] Д.С.Завриев, К новейшей истории северо-восточных вилайетов Турции, Тбилиси, 1947, с. 15.

մյուս կողմից՝ հնարավորինս նվազագույնի էին հասցվում տեղի բնակչության՝ հատկապես մահմեդական տարրի նոր իշխանություններից դժգոհելու առիթները: Մարզը կառավարում էր զինվորական գեներալ-նահանգապետը, որը ենթարկվում էր Կովկասի փոխարքային: Գեներալ-նահանգապետն իր հերթին նշանակում էր օկրուգների և տեղամասերի զինվորական կառավարիչներին: Յանկացած վարչական միավորի զինվորական կառավարիչ միաժամանակ հանդիսանում էր իրեն ենթակայության տակ գտնվող տարածքում տեղակայված զինվորական միավորումների հրամանատարը: Տեղի բնակչության համար մշակված իրավակարգն այնպիսին էր, որ բազմաթիվ հարցերում (բնական է՝ պետության շահերին չհակադրվող) տեղաբնիկները կարող էին առաջնորդվել ու ղեկավարվել ոչ թե Ռուսական կայսրության բավականին բարդ ու խճճված օրենքներով, այլ իրենց տեղական սովորույթներով ու «ադաթներով» (մահմեդականների պարագայում՝ նաև շարիաթով):[28]

Կարսի մարզն ուներ նաև իր զինանշանը (գերբը), որը հաստատվել էր 1881թ. հունիսի 17-ին (Օրենք թիվ 274a):[29]

Ռուսների կողմից Թուրքիայից գրաված այդ պատմական հայկական տարածքը Ռոմանովների տան տիրապետության տակ մնաց մինչև Ռուսաստանում 1917-ին տեղի ունեցած փետրվարյան հեղափոխությունը, որի արդյունքում 1917թ. փետրվարի 27-ին Նիկոլայ II-ը հրաժարվեց գահից, և միապետությունը Ռուսաստանում տապալվեց:

Յարական միապետության տապալմանը, բնականաբար, հետևեց այդ համակարգի իշխանական կառույցների փլուզումը: Կովկասում դա արտահայտվեց նախևառաջ փոխարքայության վերացումով: Նոր իրավիճակում տարածաշրջանը կառավարելու համար լուծարված փոխարքայության փոխարեն Ռուսաստանի Ժամանակավոր կառավարությունը 1917թ. մարտի 9-ին Թիֆլիսում Ռուսաստանի 4-րդ Պետական Դումայի Կովկասի ներկայացուցիչներից ստեղծեց Անդրկովկասյան Հատուկ Կոմիտե (ОЗАКОМ, նախագահ՝ կադետ Ա.Խառլամով, որը հետագայում հրաժարվեց ժամանել Թիֆլիս, և նրան այդ պաշտոնում փոխարինեց մենշևիկ Ա.Չխենկելին, անդամներ՝ Մ.Պապաջանով (կադետ), Մ.Ջաֆարով (կադետ, այլ տեղեկություններով՝ այդ պահին անկախ պատգամավոր), Կ.Աբաշիձե (սոցիալ-ֆեդերալիստ) և կադետների քվոտայով Ա.Խառլամովին փոխարինած Պ.Պերևերզև): Ի դեպ, Ակակի

[28] Энциклопедический словарь Брокгауза и Ефрона, в 86 т., СПб, 1890-1907, т.VIa, с.851; Утверждение русского владычества на Кавказе (под.ред. генерал – майора В.А.Потто), Тифлис, 1901, т.XII, с.437.
[29] Герб Карсской области, http://www.heraldicum.ru/armenia/gubernia.htm

Չխենկելու կողմից վերոնշյալ պաշտոնն ստանձնելը ձևականորեն սկիզբը դրեց մի ավանդույթի, ըստ որի առաջատար դիրքերն անդրկովկասյան իշխանության մարմիններում պատկանելու էին վրաց մենշևիկներին:[30]

Երկրամասի իշխանության այդ նոր մարմնի իրավասության տակ էին գտնվելու ոչ թե նախկին կովկասյան փոխարքայության ամբողջ տարածքը, այլ միայն բուն Անդրկովկասը և պատերազմի կովկասյան թատերաբեմում ռուսական զորքերի կողմից գրաված տարածքները:[31] Կովկասյան փոխարքայությանը փոխարինելու եկած ОЗАКОМ-ն իր հերթին փոխեց երկրամասում տեղական կառավարման համակարգի կառուցվածքը (1917թ. ապրիլի 27-ի հրամանագիր): Կոնկրետ Կարսի մարզում վերացվեց ռազմաժողովրդական կառավարման ձևը, և մարզի վարչական միավորները (գյուղ, տեղամաս, օկրուգ, քաղաք, մարզ) այսուհետ կառավարվելու էին ընտրովի մարմինների՝ համապատասխան գործադիր կոմիտեների կողմից:[32]

Ռուսաստանի փետրվարյան հեղափոխությունը, փոխելով երկրի կառավարման համակարգը, համենայն դեպս, ուղղակիորեն չհանգեցրեց բազմազգ կայսրության տարածքային քայքայմանը: Ուստիև, ցարիզմի տապալումից հետո էլ մի որոշ ժամանակահատված՝ Ժամանակավոր կառավարության գոյության և Անդրկովկասում նրա օղակը հանդիսացող ОЗАКОМ-ի գործունեության ընթացքում (1917թ. մարտ-նոյեմբեր), Կարսի մարզը, ինչպես և ամբողջ անդրկովկասյան երկրամասն ու Արևմտյան Հայաստանի պատերազմի ընթացքում գրաված շրջանները (այն ժամանակ գործող միջազգային իրավունքի նորմերով՝ պատերազմի իրավունքով գրաված տարածքներ), թե՛ պաշտոնապես, թե՛ փաստացի դեռևս շարունակում էին հանդիսանալ ռուսական պետության իրավասության տակ գտնվող տարածքներ:

---

[30] ՀՍՀ, հ.1, Երևան, 1974, էջ 399-400; Армянский Вопрос, Энциклопедия, с. 251-252; А.М.Погосян, Карсская область…, էջ 173; Б.А.Борьян, Армения. Международная дипломатия и СССР (հետայսու՝ Б.А.Борьян, Армения…).. Ч. I. М.-Л., 1927. с. 39; Г.Х Хачапуридзе, Борьба грузинского народа за установление Советской власти. М., 1955. с. 47;

[31] Հետագայում, Ժամանակավոր կառավարության որոշմամբ (25.04.1917թ.), պատերազմի ընթացքում գրաված տարածքների քաղաքացիական կառավարումը վերցվեց ОЗАКОМ-ի, ինչպես նաև Կովկասյան ռազմաճակատի հրամանատարության իրավասությունից և անմիջականորեն դրվեց Ժամանակավոր կառավարության տնօրինության տակ: Թուրքիայից գրաված հայկական այդ տարածքների (Էրզրումի, Խնուսի, Վանի վարչական շրջաններ) կառավարման համար ստեղծվեց առանձին գեներալ-կոմիսարություն (գեներալ-կոմիսար Պ.Ավերյանով, քաղաքացիական մասով տեղակալ Հ. Զավրիյան); տե՛ս Վ.Հ.Մելիքյան, Ռուսաստանի Ժամանակավոր կառավարությունը և Հայկական հարցը 1917թ., Պատմա-բանասիրական հանդես, 1994, № 1-2, էջ 115-131.

[32] А.М.Погосян, Карсская область…, էջ 178-179:

## I.3. Ռուսական տիրապետության վերջը: Մարզը Անդրկովկասյան երկրամասի կազմում

Անդրկովկասյան Հատուկ Կոմիտեն՝ ՕЗАКОМ-ը գոյատևեց մինչև 1917-ի նոյեմբերի կեսերը: Հարցը կայանում էր նրանում, որ Փետրվարյան հեղափոխությունից հետո ձևավորված համառուսաստանյան իշխանության մարմինը՝ Ժամանակավոր կառավարությունը, իրոք որ ժամանակավոր էր: Այդ կառավարությունը, ինչպես և նրա երկրամասային օղակ հանդիսացող ՕЗАКОМ-ը, պետք է կառավարեին, համապատասխանաբար, երկիրն ու երկրամասը մինչև Համառուսաստանյան Սահմանադիր Ժողովի հրավիրումը, ինչից հետո նոր պետք է ձևավորվեր երկրի օրինական իշխանությունը: Սակայն բոլշևիկյան կուսակցությունը ցուցաբերեց, մեղմ ասած, որոշ անհամբերություն և շտապողականություն: 1917թ. հոկտեմբերի 25-ին բոլշևիկները իրականացրեցին զինված հեղաշրջում, որն իրենք անվանեցին Հոկտեմբերյան Մեծ Սոցիալիստական Հեղափոխություն: Նրանք տապալեցին Ժամանակավոր կառավարությունը, բառացիորեն ցրեցին Սահմանադիր Ժողովը և իրենք իրենց հայտարարեցին որպես Ռուսաստանի միակ օրինական իշխանություն: Հասկանալի է, որ որպես տապալված իշխանության տարածաշրջանային մարմին, հոկտեմբերյան հեղաշրջումից հետո ՕЗАКОМ-ը վերանում էր ինքնըստինքյան: Դեպքերի ընթացքից կարծես թե պետք է սպասվեր, որ Կովկասյան երկրամասում ՕЗАКОМ-ին փոխարինելու էր գալու նրան համարժեք բոլշևիկյան իշխանության որևէ մի կառույց: Սակայն երկրամասում իշխանությունը վերցնել և իշխանական կառույցներ ձևավորել բոլշևիկներն ի վիճակի չեղան: Երկրամասում իրենց իշխանությունը հաստատելու համար բոլշևիկներն այդ պահին չունեին ո՛չ անհրաժեշտ ուժեր, ո՛չ էլ որոշակի ռեսուրսներ: Դա նրանց հաջողվեց իրականացնել միայն Բաքվում, որտեղ տեղի քաղաքային Խորհրդի նախագահ ընտրվեց բոլշևիկ Ստեփան Շահումյանը (1917թ. հոկտեմբերի 31), որի առաջարկով էլ Խորհուրդն օր առաջ արդեն ճանաչել էր Պետրոգրադի բոլշևիկյան իշխանությունը և ինքն էլ իր հերթին իրեն հայտարարել էր տեղի լիիրավ ու միակ իշխանության մարմին:[33] Թեև 1917թ. դեկտեմբերի 16-ին Խորհրդային Ռուսաստանի կառավարության կողմից Ստեփան Շահումյանը նշանակվել էր Կովկասի գործերով արտակարգ կոմիսար (փոխարքայի բոլշևիկյան տարբերակը), միևնույնն է, բացառությամբ Բաքվի քաղաքային Խորհրդի, բոլշևիկյան իշխանու-

[33] Վ.Ա.Ավետիսյան, Բաքվի կոմունան և նրա պատմական նշանակությունը (Բաքվի 26 կոմիսարների սպանության 50-ամյակի առթիվ). Պատմա-բանասիրական հանդես, 1968, № 3, էջ 63-75.

թյան իրավասությունն այդ օրերին չէր տարածվում Անդրկովկասի ոչ մի այլ շրջանի վրա՝ ներառյալ նաև Կարսի մարզը:

Պետրոգրադում տեղի ունեցած բոլշևիկյան հեղաշրջումից հետո՝ ընդամենն օրեր անց՝ 1917թ. նոյեմբերի 15-ին, կազմավորվեց Անդրկովկասյան Կոմիսարիատը, որն էլ, որպես երկրամասի իշխանության մարմին, փոխարինելու եկավ իր գործունեությունը դադարեցրած փետրվարյան հեղափոխության «ծնունդ» ОЗАКОМ-ին[34]: Կոմիսարիատում ներկայացված էին երկրամասում բնակվող ամենամեծ քանակ կազմող երեք ազգությունները՝ վրացիները, հայերը, կովկասյան թաթարները, ինչպես նաև ռուսները: Որպես հիմնական քաղաքական ուժեր ներկայացված էին երկրամասում առավել ազդեցիկ Մուսավաթը, Դաշնակցությունը և վրաց մենշևիկները:[35] Ռուսներին ներկայացնում էին էսէռները: Կոմիսարիատի կազմը հետևյալն էր՝ Ե.Գեգեչկորի (նախագահ, մենշևիկ), Ա.Չխենկելի (մենշևիկ, ներքին գործերի կոմիսար), Դ.Դոնսկոյ (ռազմական և ռազմածովային, էսէռ), Ա.Ներուչև (հողագործության, էսէռ), Մ.Ջաֆարով (առևտրի և արդյունաբերության, մուսավաթական), Հ.Օհանջանյան (հանրային խնամատարության, դաշնակցական), Խ.Կարճիկյան (ֆինանսների, դաշնակցական):

Միայն նայելով Կոմիսարիատի քաղաքական պնակը կազմող ուժերին՝ հասկանալի է դառնում, որ մի շարք հանգուցային հարցերի վերաբերյալ այդ ուժերի միջև ոչ միայն չէր կարող լինել միասնական կարծիք, այլ անխուսափելի էին խորը հակասություններն ու շահերի բախումը: Ակնհայտ է, որ այդ քաղաքական ուժերին բերել ու ստիպել էին միասին Կոմիսարիատի «կտուրի տակ հավաքվել» պահի և իրավիճակի լրջության գիտակցումը և դրանից բխող պատասխանատվության զգացողությունը սեփական ազգի հետագա ճակատագրի համար:

---

[34] ՀՍՀ, հ.1,Երևան, 1974, էջ.399; Армянский Вопрос, Энциклопедия, с. 177; А.М.Погосян, Карсская область…, էջ 190.

[35] Ահա թե ինչ է գրում Կոմիսարիատի քաղաքական կազմի մասին ՀաՀ-ի առաջին վարչապետ Հովհաննես Քաջազնունին (Իգիթխանյան). *«Կոմիսարիատը, ինչպես հետագայում նաև Սեյմն ու Անդրկովկասյան կառավարությունը, կոալիցիոն կազմ ունեին: Կոալիցիոնը ըստ ձևի և անվան միջկուսակցական էր, ըստ էության՝ միջազգայնական: Գլխավոր կուսակցություններն էին. սոցիալ-դեմոկրատականի մենշևիկ հատվածը, Մուսավաթը և Հ.Յ.Դաշնակցությունը: Փաստորեն, սրանք ներկայացնում էին երկրի երեք գլխավոր ազգությունները. վրացի, ադրբեջանական թաթար, հայ: Կոմիսարիատում, ինչպես հետագայում նաև Սեյմի ու կառավարության մեջ, գերիշխող դիրք բռնեցին ու ղեկավարող դեր ունեցան վրացի մենշևիկները»*; տե՛ս Հատված Հովհաննես Քաջազնունու՝ 1923թ. ապրիլին Հ. Յ.Դաշնակցության արտասահմանյան մարմինների խորհրդաժողովին ներկայացրած զեկուցագրից, http://www.aniarc.am/2015/08/18/kajaznuni-georgia/

Թե հետագայում կողմերից ամեն մեկն այդ ուղղությամբ ինչ արդյունք կարողացավ արձանագրել, դա արդեն այլ հարց է: Երկրամասի կառավարման այդ մարմինն արդեն ոչ միայն չէր ներկայացնում Ռուսաստանի կենտրոնական իշխանությունը՝ ի դեմս Լենինի կողմից գլխավորած բոլշևիկյան կառավարության, չէր ենթարկվում նրան, այլ պարզապես չէր ճանաչում բոլշևիկյան իշխանությունը, պայքարում էր բոլշևիզմի դեմ և վարում էր երկրամասը Խորհրդային Ռուսաստանից անջատելուն միտված քաղաքական կուրս:[36] Անդրկովկասյան Կոմիսարիատը գոյատևեց մինչև 1918թ. մարտի 26-ը: 1918թ. փետրվարի 23-ին Կոմիսարիատը գումարեց Անդկովկասյան Սեյմը (նախագահ Ն.Չխեիձե, մենշևիկ), որն օժտված էր օրենսդրական լիազորություններով և պետք է օրինականացներ երկրամասի անջատումը Խորհրդային Ռուսաստանից: Սեյմի կազմում ընդգրկված էին Անդրկովկասից ընտրված Համառուսաստանյան Սահմանադիր Ժողովի պատգամավորները և երկրամասի առավել ազդեցիկ քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչները՝ համամասնական սկզբունքով:[37] Բոլշևիկները հրաժարվեցին մտնել Սեյմի կազմի մեջ և անխնա քննադատում էին նրա գործունեությունը: Բայց բոլշևիկները դեռ կվեդառնան երկրամաս ու կվերադառնան, ինչպես ասում են, իրենց ուզած ու միայն իրենց բնորրոշ ձևով…

1918թ. մարտի 26-ին Սեյմը լուծարեց Անդրկովկասյան Կոմիսարիատը, իսկ ապրիլի 22-ին հայտարարեց Անդրկովկասյան Դեմոկրատական Ֆեդերատիվ Հանրապետության ստեղծման մասին, որով միաժամանակ տրվեց Անդրկովկասի՝ Ռուսաստանի կազմից դուրս գալու վերաբերյալ իրավաբանական ձևակերպումը: Կազմվեց նոր կառավարություն՝ վրաց մենշևիկ Ա.Չխենկելու գլխավորությամբ:[38]

Անդրկովկասում իշխանության հարցի հետ առնչվող այս գործընթացներն ուղղակի արձագանքն ու հետևանքն էին տարածաշրջանում ցարիզմի կողմից վարած քաղաքականության

---

[36] Մելիքյան Վ.Հ., Անդրկովկասյան Կոմիսարիատի սոցիալ-տնտեսական և կրթական-լուսավորական գործունեությունը, Լրաբեր Հասարակական Գիտությունների, 2010, № 3, էջ 23-39; ՀՍՀ, նույն տեղում; Армянский Вопрос, Энциклопедия, նույն տեղում; А.М.Погосян, նույն տեղում:

[37] ՀՍՀ, h.1, Երևան, 1974, էջ 399-400; Армянский Вопрос, Энциклопедия, с. 178:

[38] Վ.Մելիքյան, Անդրկովկասյան Սեյմի քաղաքական կողմնորոշման փոփոխման հիմնահարցը և երկրամասի անկախության հռչակումը, Հայագիտական հարցեր, հանդես 3, Երևան, 2014, էջ 105-125; ՀՍՀ, նույն տեղում; Армянский Вопрос, Энциклопедия, նույն տեղում:

և 1917թ. ռուսաստանյան երկու հեղափոխությունների: Եվ այդ ամենը Անդրկովկասում ծավալվում էր դեռևս չավարտված առաջին աշխարհամարտի պայմաններում: Հասկանալի է, որ ռուսաստանյան երկու հեղափոխությունները իրենց մեծագույն և ամենավճռական ազդեցությունը պետք է ունենային նաև Կովկասյան ռազմաճակատում դեպքերի ընթացքի վրա: Ինչն էլ իր հերթին, ստիպելու և թելադրելու էր երկրամասի իշխանությանը, ելնելով այնտեղի ռազմական իրադրության իրողություններից, կայացնելու այս կամ այն որոշումները: Փետրվարյան հեղափոխությունից հետո Ժամանակավոր կառավարությունը հայտարարեց, որ ինքը հավատարիմ է մնում Ռուսաստանի կողմից ստանձնած բոլոր դաշնակցային պարտավորություններին և վարելու է պատերազմը մինչև «հաղթական ավարտ»: Սակայն հեղափոխական, այդ թվում նաև բոլշևիկյան, «հովերը» շատ արագ թափանցեցին և տարածվեցին գործող բանակի շարքերի մեջ: Կովկասյան ռազմաճակատում, այդ թվում նաև Կարսի մարզում, տեղի ունեցան զինվորների հեղափոխական հավաքներ և ելույթներ, արձանագրվեցին մի շարք դեպքեր, երբ զինվորների կողմից ձերբակալվում կամ պաշտոնազրկվում էին սպաներ և մարզային իշխանության ներկայացուցիչներ, որոնց փոխարեն հայտնվում էին տարբեր ժողովների կողմից ընտրված հրամանատարներ: Նման և բազմաթիվ այլ դեպքեր վկայում էին, որ գործող բանակը ներքաշվում էր քաղաքականության մեջ: Հասկանալի է, որ այդ ամենը խիստ բացասաբար էր անդրադառնում զորքի կարգապահության ու մարտունակության վրա: Զորքում սկիզբ էր առել ու ծավալվում էր դասալքությունը:[39] Բայց այդ ամենով հանդերձ, մինչև բոլշևիկյան հեղաշրջումը, Կովկասյան բանակի զորամիավորումները դեռևս կանգնած էին ռազմաճակատում և պահում էին այն: Ռազմաճակատի իրական քայքայումն սկսվեց բոլշևիկյան հեղաշրջումից հետո:

1917թ. հոկտեմբերի 26-ին, բոլշևիկյան հեղաշրջումից հետո բառացիորեն ժամեր անց, Խորհուրդների 2-րդ Համառուսաստանյան համագումարն ընդունում է «Հողի մասին» լենինյան դեկրետը:[40] Սակայն դրանից առաջ համագումարն ընդունել էր «Դեկրետ խաղաղության մասին» կոչվող մի փաստաթուղթ, որով պատերազմող բոլոր կողմերին կոչ էր արվում միմյանց հետ հաշտվել և կնքել կողմերի հա-

[39] А.М.Погосян, Карсская область…, էջ 174-186.

[40] Ի.Թ.Մանուկյան, «Հողի մասին» լենինյան դեկրետի արձագանքները Անդրկովկասում 1917թ. վերջին և 1918թ. սկզբին, Լրաբեր Հասարակական Գիտությունների, 1966, № 5. էջ 17-27.

մար իրավահավասար համընդհանուր խաղաղության պայմանագրեր:[41] Բոլշևիկների կողմից նման ծայրահեղ խաղաղասիրության դրսևորման շարժառիթը միակն էր. ամեն գնով, կանգ չառնելով նույնիսկ հնարավոր տարածքային կորուստների առջև, պահպանել զինված հեղաշրջման միջոցով ձեռք գցած իշխանությունը: Անտանտի երկրների կողմից այդ խաղաղասիրական առաջարկությանը որևիցե արձագանք չեղավ և բոլշևիկյան Ռուսաստանը, ըստ էության, միակողմանի դուրս եկավ պատերազմից և 1917թ. դեկտեմբերի 2-ին Բրեստ-Լիտովսկում սեպարատ զինադադար կնքեց Գերմանա-Ավստրո-Հունգարական բլոկի պատվիրակության հետ, որի կազմում ընդգրկված էին նաև Բուլղարիայի և Թուրքիայի ներկայացուցիչները:[42] Այդ զինադադարին համապատասխան՝ 1917թ. դեկտեմբերի 5-ին, երկրամասում ռուսաստանյան իշխանության փաստացի չգոյության պայմաններում՝ Անդրկովկասյան Կոմիսարիատի «բարձր հովանու ներքո», Երզնկայում զինադադար կնքվեց նաև ռուսական Կովկասյան բանակի և թուրքական 3-րդ բանակի հրամանատարությունների միջև: Այստեղ նախաձեռնողը թուրքական կողմն էր, իսկ բանակի ռուսական հրամանատարությունն էլ համաձայնվեց ստորագրել զինադադարը միայն Անդրկովկասյան Կոմիսարիատի կողմից հարցի վերաբերյալ հավանություն ստանալուց հետո:[43]

Միանգամայն բնական է, որ բոլշևիկների կողմից հռչակած խաղաղությունն ու հողաբաժանումը Կովկասյան բանակի ռուս զինվորին պետք է դրդեին հնարավորինս շուտ հասնել տուն: Իրոք, ի՞նչ էր կորցրել ռուս զինվորը Ռուսաստանից անջատվող մի երկրամասում, երբ իր երկրում տեղի էին ունենում իր համար բախտորոշ պատմական իրադարձություններ: Եվ միանգամայն բնական է, որ հատկապես զինադադարի կնքումից հետո ռուսական բանակի զինվորները բռնեին տունդարձի ճամփան, իսկ ռազմաճակատն էլ սկսեր արագորեն քայքայվել: 1918թ. սկզբներին Կովկասյան ռազմաճակատը՝ իբրև ռուս-թուրքական ռազմաճակատ, որպես այդպիսին, ըստ էության այլևս գոյություն չուներ, քանզի այդ պահին այն լրիվ պարպված էր ռուսական զորքերի կողմից:[44] Ռազմաճակատը փրկելու համար

---

[41] Документы внешней политики (ДВП) СССР, т.1, М., 1959, с. 11-14; Ա.Մ.Ռսկանյան, Ռ.Գ.Նավասարդյան, Մեծ Հոկտեմբերի հիսուն տարին, Պատմա-բանասիրական հանդես,1967, № 2-3. էջ 3-16.

[42] Документы внешней политики (ДВП) СССР, т.1, М., 1959, с. 47-52,; Армянский Вопрос, Энциклопедия, с. 173:

[43] ДВП СССР, т.1, М., 1957, с. 53-57; Д.С.Завриев, նշվ. աշխ., էջ 40; Армянский Вопрос, Энциклопедия, նույն տեղում; А.М.Погосян, Карсская область…, էջ 199.

[44] Г.Корганов, Участие армян в мировой войне на кавказском фронте (194-1918) с 19-ю схемами (перевод с французского), М., 2011, с. 74, 80.

ռուսական զորքին փոխարինելու պետք է գային ազգային զինված ուժերը, որոնց այդ պահին այդպես անվանել կարելի էր բավականին պայմանականորեն: Հայկական զինուժը պահելու էր Բայբուրտ (Բաբերդ)-Երզնկա-Խնուս-Վան գծով 400կմ երկարությամբ ճակատային գիծը: Վրացիները պահելու էին Բայբուրտից դեպի հյուսիս՝ մինչև Սև Ծովն ընկած ռազմաճակատի հատվածը:[45] Այսինքն՝ ամեն մի ազգային զինամիավորում պաշտպանելու էր այդ պահին իր ազգին հասանելիք համարվող տարածք-հողակտորը: Ռազմաճակատի բարձրագույն հրամանատարությունն այդ ժամանակ դեռևս մնում էր ռուսական, որն էլ ստանձնեց ազգային զորամասերի ընդհանուր ղեկավարումը:[46] Ռուսական բարձրագույն զինվորականության կողմից ռազմաճակատն այդ օրերին չթողնելը, բնականաբար, ամենևին էլ պայմանավորված չէր նրանց խիստ հայասիրությամբ, կամ էլ վրացասիրությամբ: Հավանաբար, դա պայմանավորված էր այդ օրերին շատերի մոտ տիրող այն կարծիքով, թե բոլշևիզմը խիստ ժամանակավոր բնույթ ունի, Ռուսաստանում դա էպիզոդիկ մի արկածախնդրություն է, որը շուտով կվերանա և «լավ ժամանակները» կվերադառնան: Ուստիև, այդ պահին, թեկուզև ազգային զինուժի միջոցով, պետք էր պահել Ռուսաստանի համար այդքան դժվարությամբ նվաճած տարածքները:

Ինչ վերաբերում է հայկական զինուժին, ապա նախ հիշենք, որ Կովկասյան ռազմաճակատում կռվում էին 7 հայկական կամավորական ջոկատներ, որոնցում մարտիկների թիվը հասնում էր մոտ 10 հազարի:[47] Փետրվարյան հեղափոխությունից հետո Ռուսաստանում ի հայտ եկան որոշակի ժողովրդավարական միտումներ, այդ թվում նաև ազգային հարցի լուծման ուղղությամբ, բայց միաժամանակ Կովկասյան ռազմաճակատում նույնպես ռուսական զորքում սկսեցին նկատվել դասալքության և դիրքերը թողնելու միտումներ: Հաշվի առնելով այդ հանգամանքները՝ հայ քաղաքական շրջանակները այդ օրերին քանիցս դիմել էին Ռուսաստանի քաղաքական և ռազմական ղեկավարությանը՝ առաջարկելով Կովկասյան ռազմաճակատ տեղափոխել մյուս ռազմաճակատներում գտնվող հայ զինվորներին և, միավորելով դրանք կամավորական ջոկատների հետ, ստեղծել կանոնավոր հայկական ճակատային զորամիավորում: Այդ առաջարկը որոշ ձգձգումներից հետո, ի վերջո (երբ ռազմաճակատի փլուզումը դարձավ ակնհայտ), արժանացավ դրական արձագանքի, և Կովկասյան ռազմաճակատի գլխավոր հրամանատարի՝ 1917թ. դեկտեմբերի 13-ի

---

[45] Նույն տեղում, էջ 77, 80.

[46] Г.Корганов, նշվ. աշխ., էջ 79.

[47] ՀԱՀ, Հ.5, էջ 197:

թիվ 136 հրամանի հիման վրա վերջապես ձևավորվում էր հայկական ազգային զորամիավորում՝ Հայկական բանակային կորպուսը,[48] որի հրամանատար նշանակվեց հմուտ զորահրամանատար, ռուսական ցարական բանակի հայազգի գեներալ Թոմա Նազարբեկովը (Թովմաս Նազարբեկյան): Թուրքերը քաջատեղյակ էին թե՛ ռազմաճակատի փաստացի քայքայումից, թե՛ ազգային զորամիավորումներ ստեղծելու ուղղությամբ Անդրկովկասի քաղաքական ղեկավարության ու ռազմաճակատի հրամանատարության քայլերից: Այդ գործընթացը (տվյալ դեպքում խոսքը գնում է հայկական զինուժի կազմավորման մասին) խափանելու և վիժեցնելու ուղղությամբ թուրքական կողմի համարժեք քայլերը հետևեցին անմիջապես: Իրենց գործակալական ցանցի միջոցով, որը հիմնվել էր դեռևս XIXդ. վերջերին և անընդհատ ընդլայնվում ու խորանում էր,[49] ամբողջ Կովկասյան երկրամասով մեկ նրանք սկսեցին սաբոտաժի ենթարկել և խափանել հայկական զորամիավորման համալրումն ու մատակարարումը. դիվերսիաներ և հարձակումներ էին իրականացվում երկաթուղու (Ջուլֆայից մինչև Գրոզնի), պահեստների, կոմունիկացիոն այլ կառույցների վրա, հայ և մահմեդական խառը բնակչությամբ վայրերում՝ մերձճակատային բնակավայրերից մինչև անգամ խորը թիկունք ընկած Թիֆլիսի, Ելիզավետպոլի և Բաքվի գուբերնիաներում հայկական բնակչությունը ենթարկվում էր մահմեդական հրոսակախմբերի հարձակումներին[50]: Ընթացող պատերազմի մասշտաբներով առանց այն էլ փոքրաթիվ ու թերի կազմավորված հայկական զորամիավորումը ստիպված էր նշված պատճառներով նախ սահմանափակել երկրամասի հայկական բնակավայրերից հայ տղամարդկանց զորակոչը, որպեսզի հայկական բնակավայրերը չմնան բացարձակապես անպաշտպան, մյուս կողմից՝ զգալի ուժեր անհրաժեշտ էր տրամադրել տարբեր կոմունիկացիաների պաշտպանության ու վերահսկողության համար: Եվ ահա այսպիսի պայմաններում՝ 1917թ. դեկտեմբերի 5-ին կնքած Երզնկայի զինադադարից հետո, դեռևս թերի կազմավորված Հայկական բանակային կորպուսը պետք է պահեր ռազմաճակատի 400 կիլոմետրանոց հատվածը, որը նախկինում պահում էր ցարական Կովկասյան բանակը: Այսինքն՝ հայությունը դեռևս չունենալով պետականություն՝ ռազմաճակատի այդ հատվածը լքած ռուսական զինուժին փոխարինած իր զինուժի միջոցով ու նրա անմիջական մասնակցությամբ ներկայանում էր արդեն որպես ընթացող պատերազմի ուղղակի մասնակից:

[48] Г.Корганов, նշվ. աշխ., էջ 71.
[49] Е.В.Клюкин, Юго-Западная Кавказская Республика (1918-1919гг.) и возрождение государственности на Южном Кавказе, Канд. диссертация, Санкт-Петербург, 2004, с. 31-46, 57, 58.
[50] Г.Корганов, նշվ. աշխ., էջ 78-79.

Թեև հայկական զորամիավորումներն այդ օրերից սկսած անընդհատ նահանջել են և կարողացել են հակահարված հասցնել հակառակորդին միայն 1918թ. մայիսի վերջերին, սակայն այդ 5 ամիսների ընթացքում իրենց վարած մարտական գործողություններով նրանք ստիպել են Թուրքիային ուժերի զգալի մի քանակ մշտապես պահել ռազմաճակատի կովկասյան հատվածում: Իսկ դա փաստացի և որոշակի դեր է խաղացել պատերազմի ասիական ռազմաճակատի մյուս հատվածներում դաշնակիցների կողմից հաջողություններ արձանագրելու համար: Մեծ Բրիտանիայում կազմված «Հայերի համար արդարության Խարտիայի» ստեղծման հիմնավորումներից մեկն այն էր, օրինակ, որ «*Ռուսների դասալքությունից հետո հենց հայկական զինուժի կողմից է իրականացվել ռազմաճակատի պաշտպանությունը, և հինգ ամիսների ընթացքում թուրքերին ցուցաբերած համառ դիմադրությունը զգալիորեն թուլացրել է ճնշումը բրիտանական բանակի վրա Միջագետքում»:*[51] Թե այդ ամենը հետագայում ինչպես փոխհատուցվեց հայկական կողմին, արդեն այլ խոսակցության թեմա է:

Չմոռանանք նշել, որ իբր հայերս այդ օրերին մի «լավ հալի» էինք, հայ բոլշևիկներն էլ՝ ի դեմս, օրինակ, բոցաշունչ հեղափոխական Անաստաս Միկոյանի, Բաքվից կոչ էին անում անհապաղ լուծարել ու ցրել բոլոր ազգային զորամիավորումները, որոնք իր պնդմամբ ու համոզմամբ, հանդիսանում էին հակահեղափոխական կազմավորումներ:[52]

Իսկ բանակցությունները բոլշևիկյան Ռուսաստանի և գերմանական բլոկի միջև խաղաղության պայմանագիր կնքելու վերաբերյալ շարունակվում էին որոշ ընդհատումներով (9-15 դեկտեմբերի, 1917թ., 27 դեկտեմբերի 1917թ. – 28 հունվարի (10 փետրվարի) 1918թ., 1 մարտի 1918թ.):[53] Գերմանիան իրար հետևից մերժում էր Սովետների երկրի արած առաջարկները և ներկայացնում նոր առաջարկներ՝ ամեն անգամ նորը նախորդից ավելի կոշտ և ստորացուցիչ: Որպես կանոն՝ առավել ողբերգական ու կործանարար էին հայերին վերաբերող թղթապանակները:

Եվ ահա, որպեսզի ռուս-բոլշևիկյան կողմը հարցի նկատմամբ ավելի «ողջամիտ» մոտեցում ցուցաբերի, փետրվարի կեսերին Գերմանիան անցնում է նոր հարձակման,[54] որի զարգացման դեպքում սպառնալիք էր առաջ գալիս արդեն անմիջականորեն Պետրոգրադի

---

[51] Р.Г.Ованнисян, Международные отношения Республики Армения 1918-1920 гг., Ереван, 2007, с. 4, 5.

[52] А.М.Погосян, Карсская область…, էջ 204..

[53] Армянский Вопрос, Энциклопедия, с. 85.

[54] Армянский Вопрос, Энциклопедия, նույն տեղում:

ուղղությամբ: Բոլշևիկները չափազանց արագ կողմնորոշվեցին, հասկացան իրենց անելիքները հոկտեմբերյան հեղաշրջման իրենց «գրանտատուի» հանդեպ և 1917թ. մարտի 3-ին ստորագրեցին Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը:[55] Պայմանագրի 4-րդ հոդվածը վերաբերում էր Կովկասին և մասնավորապես հայերին. «...*Россия сделает все от нее зависящее, чтобы обеспечить скорейшее очищение провинций Восточной Анатолии и их упорядоченное возвращение Турции. Округа Ардагана, Карса и Батума также незамедлительно очищаются от русских войск. Россия не будет вмешиваться в новую организацию государственно-правовых и международно-правовых отношений этих округов, а предоставит населению этих округов установить новый строй в согласии с соседними государствами, в особенности с Турцией*»: Ինչպես տեսնում ենք, այն չափազանց լակոնիկ է և պարզ, ուստիև թարգմանության հետ կապված որևիցե խութեր չի պարունակում. «...*Ռուսաստանը կանի իրենից կախված այն ամենը, որպեսզի ապահովի Արևելյան Անատոլիայի նահանգների մաքրումը և դրանց կանոնավոր վերադարձը Թուրքիային: Ռուսական զորքերը պետք է անհապաղ դուրս բերվեն նաև Արդահանի, Կարսի և Բաթումի օկրուգներից: Ռուսաստանը չի միջամտի այդ մարզերի պետա-իրավական և միջազգային-իրավական նոր կազմակերպման գործին, այլ այդ մարզերի բնակչությանը հնարավորություն կտա դրացի պետությունների, մանավանդ Թուրքիայի համաձայնությամբ հաստատել նոր կարգ:*»

Սա բոլշևիկյան Ռուսաստանի կողմից հայերին մատուցած դեռևս առաջին մեծ «անակնկալն» էր:[56]

Անդրկովկասյան Կոմիսարիատը, հետո էլ՝ Սեյմը ռուս-գերմանական բանակցություններին չմասնակցեցին և Բրեստի պայմանագիրն էլ չճանաչեցին: Ճիշտ է՝ Բրեստից հետո նրանց կողմից ձեռնարկվեցին որոշակի քայլեր՝ Թուրքիայի հետ առանձին բանակցելու միջոցով (Տրապիզոն, Բաթում), ինչ-ինչ զիջումների գնալով, երկրամասը զերծ պահել թուրքական ինտերվենցիայից և օկուպացման վտանգից: Սակայն թուրքական կողմը, գնահատելով ուժերի իրական հարաբերակցությունը և չափազանց լավ տեղեկացված լինելով թե՛ ռազմաճակատային իրադրությանը, թե՛ ամբողջ երկրամասում տիրող իրավիճակին, թե՛ անգամ Կոմիսարիատի, հետո էլ՝ Սեյմի ներսում առկա հակասություններից և վարպետորեն խաղարկելով

---

[55] ДВП СССР, т.1, М., 1957, с. 119-124.

[56] Г.Махмурян, Брестский мир 1918 г. в оценке современников и армянской историографии, Պատմա-բանասիրական հանդես, №2, 2012, էջ 46-62; Н.Е.Шутова, Армянский вопрос в российско-турецких отношениях (1911-1921 гг.). Канд. Диссертация, Владимир, 2006, с. 96.

երկրամասում առկա ռազմաքաղաքական իրադրությունը, «անողոք» գտնվեց և դիմացինին ոչ մի մանևրելու տեղ, առիթ ու հնարավորություն չտվեց:[57] Միանգամայն բնական է, որ ռուսական զորքերի հեռանալուց հետո ստեղծված իրավիճակում Թուրքիան պետք է ձգտեր տիրանալ ամբողջ Կովկասին:

Ի կատարումն այդ մտադրության, Կովկասյան ռազմաճակատի քայքայման պայմաններում թուրքական զորքը, ունենալով զգալի առավելություն հակառակորդի նկատմամբ, 1918թ. փետրվարի կեսերին անցավ հարձակման և իր նոր արշավանքի «հայկական բաղադրիչով» կարճ ժամանակում վերագրավեց Արևմտյան Հայաստանն ու հասավ 1914թ. ռուս-թուրքական սահմանին: Հետո, ձեռքին ունենալով Բրեստ-Լիտովսկում իրեն տրված «անցաթուղթը», վերագրավեց չորս տասնամյակ առաջ ռուսների կողմից իրենցից վերցրած Կարսի մարզը և հասավ 1877թ. ռուս-թուրքական սահմանագծին: Հիմա էլ, մի կողմից խաղարկելով Անդրկովկասի անկախացումը Ռուսաստանից, մյուս կողմից՝ Անդրկովկասի իշխանության՝ ոչ մի ձևով միջազգայնորեն ճանաչված չլինելը, հատեց-անցավ 1877թ. ռուս-թուրքական սահմանը և ներխուժեց արդեն բուն Անդրկովկասի տարածք:[58]

Անդրկովկասի երեք հիմնական ազգերը՝ վրացիները, կովկասյան թաթարներն ու հայերը, ի վերջո եկան այն անխուսափելի հանգրվանին, որ նրանցից ամեն մեկն ինքը պետք է «տեսներ իր գլխի ճարը»: Անդրկովկասի մահմեդականների համար Թուրքիայի հայտնվելը Անդրկովկասում, այդ թվում նաև Բաքվում, այնքան էլ մեծ նեղություն չէր: Վրացիները «լեզու գտան» Գերմանիայի հետ, և Թուրքիայի անդրկովկասյան ինտերվենցիան Վրաստանի համար անցնում էր համեմատաբար «խնայողական ռեժիմով»: Մեծապես տուժում էին Թիֆլիսի գուբերնիայի հատկապես հայկական տարածքները, մասնավորապես՝ Ջավախքը: Ընդ որում՝ պաշտոնապես Գերմանիան համաձայնվել էր այդ իրավիճակում հովանավոր կանգնել Վրաստանին՝ իբր հաշվի առնելով, որ Կովկասում այդ պահին վրացին միակ ազգն էր, որն իր հետ բերել ու մինչ այդ օրն էր հասցրել ոչ հեռավոր անցյալում պետականություն ունենալու փաստը, ինչի վկայակոչն էր

---

[57] Օրինակ, տրապիզոնյան բանակցությունների բացման ժամանակ թուրքական պատվիրակության ղեկավար, արքայազն Ռաուֆ-բեյի ելույթից պարզորոշ երևում է, որ նա Անդրկովկասի պատվիրակությանը դիմում է ոչ թե որպես իր անկախությունն հռչակած պետական սուբյեկտի ներկայացուցիչների, այլ որպես Օսմանյան կայսրության ծոցը վերադարձող մի քանի ազգերի բանագնաց-պատվիրակների; տե՛ս Д.С.Завриев, նշվ. աշխ., էջ 48:

[58] Ա.Հ.Հարությունյան, Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918թ. և ինքնապաշտպանական կռիվները (հետայսու՝ Ա.Հ.Հարությունյան, Թուրքական ինտերվենցիան…), Երևան, 1984, 356 էջ; А.М.Погосян, Карсская область…, էջ 205-215; Г.Корганов, նշվ. աշխ., էջ 82-142:

Ռուսաստանի հետ 1783թ. Գեորգիևսկում կնքված տրակտատը (ահա թե ինչպիսի վճռական պահին կարող է «հանկարծ» պետք գալ անկախ պետականությունը):[59] Հայերն էլ էին գերմանացիների հետ բանակցել, որպեսզի վերջիններս հայերի համար նույնպես «ազդեն թուրքերի վրա», բայց ստացել էին մերժում:[60] Հետաքրքիր է, որ երբ պարզ է դարձել, որ Գերմանիան փաստորեն ստանձնում է Վրաստանի անվտանգության ապահովման պարտավորությունը, մի քանի հայ գործիչներ հանդիպել են Նոյ Ժորդանիայի՝ն և վարել մոտավորապես այսպիսի «տնական» մի խոսակցություն», թե «մենք միասին ռազմաճակատ էինք պահում թուրքերի դեմ, հիմա ո՞նց եղավ, որ պայքարից հրաժարվեցիք ու գնացիք Գերմանիայի թևի տակ մտաք»: Ժորդանիան չափազանց անկեղծ պատասխան է տվել. *«Հայ ժողովուրդը սովոր է ջարդի և կոտորածների, իսկ մենք պետք է փրկենք մեր ազգին, որը նման բաների սովոր չէ…»*:[61] Եվ ամփոփել է այն մտքով, որ իրենք չեն ցանկանում հայերի հետ միասին խորտակվել: Իսկ թուրքական զորքն առաջ էր շարժվում և 1918թ. ապրիլի կեսերին արդեն Կարսի մատույցներում էր:

Դիտարկված ժամանակաշրջանում՝ ՕԶԱԿՕՄ-ի «վախճանից» մինչև 1918թ. ապրիլի վերջերին թուրքերի կողմից վերագրավվելը, Կարսի մարզը փաստացի այլևս Ռուսաստանի մաս չէր հանդիսանում: *De facto* այդ օրերին այն իրենից ներկայացնում էր Ռուսաստանի իշխանությունը չճանաչող և Ռուսաստանից անջատված անդրկովկասյան երկրամասի մի տարածք, որի հայկական պատկանելությունը «անդրկովկասյան ընտանիքի» անդամների որևէ մեկի կողմից այդ օրերին կասկածի տակ չի դրվել: Այդ մասին վկայում է նույնիսկ այն տխուր, սակայն խոսուն փաստը, որ անդրկովկասյան բարձրագույն իշխանությունը, որտեղ առավել ազդեցիկ էին վրաց գործիչները, ձգտելով հնարավորինս ապահով պահել սեփական՝ վրացական տարածքները՝ Անդրկովկաս արշավող թուրքերին առաջին հերթին մատուցում էին հենց այն տարածքները՝ այդ թվում և Կարսը, որոնք հանդիսանում և համարվում էին հայկական:[62]

---

[59] ՀՍՀ, h.3, Երևան 1977, էջ 16; С. Тарасов, Будущее Закавказья сквозь призму истории, http://www.regnum.ru/news/polit/1883943.html

[60] Ա.Հայրունի, Հայկական հարցը 1918թ. հայ-գերմանական և գերմանա-թուրքական հարաբերությունների համատեքստում, Պատմա-բանասիրական հանդես, 2007, № 1, էջ 18-35:

[61] Б.Борьян, Армения. Международная дипломатия и СССР, т.2, М.-Л., 1929, с. 58.

[62] Д.С.Завриев, նշվ. աշխ., էջ 51; Ա.Հ.Հարությունյան, Թուրքական ինտերվենցիան…, էջ 147-168; А.М.Погосян, նույն տեղում; Г.Корганов, նույն տեղում; Е.В.Клюкин, նշվ. աշխ., էջ 92; Վ.Մելիքյան, նույն տեղում:

## I.4. Կարսի մարզի բնակչության թվաքանակն ու էթնիկ կազմը մինչև 1918թ.

Մինչև թուրքերի՝ Կարս մտնելը եկեք ադրադարձ կատարենք մարզի բնակչության քանակի և էթնիկ կազմի փոփոխություններին: Դա նախ հնարավորություն կտա որոշակի պատկերացում կազմել Կարսի մարզում ընթացած ժողովրդագրական գործընթացների մասին, իսկ մյուս կողմից՝ պարզել, թե ինչպիսին էր մարզի ժողովրդագրական պատկերը նախքան 1918թ. թուրքական ինտերվենցիան: Ի վերջո ամենի հետ մեկտեղ, նախևառաջ ժողովրդագրական ցուցանիշներն են վճռորոշ դեր ունենում այս կամ այն տարածքի ճակատագիրը որոշելիս:

Կարսի մարզի նման տարածքներում, որոնք սահմանամերձ են և ունեն ոչ միայն տեղային, այլ տարածաշրջանային ռազմամարտավարական նշանակություն, բնակչության թե՛ թվաքանակի, թե՛ էթնիկ կազմի «կանոնակարգումը» տեղի է ունենում ոչ թե իր բնական ընթացքով, այլ ավելի շատ պետական շահերից բխող, իշխանությունների կողմից կիրառվող մեխանիկական եղանակների կիրառմամբ և իրագործմամբ: Այնպես որ, տարածաշրջանում տեղի ունեցող ռազմաքաղաքական գործընթացները, բնականաբար, իրենց ուղղակի ազդեցությունն էին թողնում նաև Կարսի մարզի բնակչության տեղաշարժի, թվաքանակի և ազգային ու կրոնական կազմերի վրա:

Մարզի ժողովրդագրական պատկերն հետազոտողների վկայությամբ «… Կարսի նահանգի ժողովրդագրական պատկերը մեծ փոփոխություններ է կրել դեռ XVIդ. և XVIIդ. առաջին կեսին տեղի ունեցած թուրք-պարսկական տևական պատերազմների պատճառով… Կարսի ժողովրդագրական պատկերի համար հատկապես ծանր են անդրադառնում 1806-1812թթ., 1828-1829թթ., 1853-1856թթ., ռուս-թուրքական, 1820-1823թթ. թուրք-պարսակական պատերազմները և նրանց հաջորդած արտագաղթերն և բռնագաղթերը…»:[63] Տարածաշրջանում ծավալված պատմական իրադարձությունների ընթացքը հանգեցրել էր նրան, որ Կարսի մարզում տեղաբնիկ հայերի կողքին տարբեր ժամանակներում բնակություն էին հաստատել նաև տարբեր եկվոր-մահմեդականներ՝ թուրքեր, կարափափախներ, թուրքմեններ, կովկասյան թաթարներ, քրդեր, կովկասյան լեռնականններ և այլն: Ընդ որում՝ տվյալ դեպքում էական չէ՝ այդ ազգություններից որը իսլամի ինչ ուղղություն էր

[63] Հ.Մուրադյան, Կարսի նահանգի ժողովրդագրական պատկերը XVI-XIX դարի առաջին կեսին, Հայոց պատմության հարցեր, Գիտական հոդվածների ժ-ծու, հ.5, Երևան 2005, էջ 61-76:

դավանում՝ սունի, շիա, թե այլ հոսանք: Թուրքական իշխանությունների կողմից դրանք բոլորը միասին դիտվում էին որպես վճռական հակակշիռ հայ տարրի նկատմամբ, որոնք մշտական բռնարարքներով, ահաբեկումով պետք է ճնշեին, թուլացնեին և ի վերջո դուրս մղեին հայկական տարրը մարզի տարածքից: Մահմեդական տարրի գերակայության ապահովումը թուրքական իշխանության կողմից դիտվում էր որպես սահմանամերձ այդ շրջանների ապահովության և հուսալիության գործոններից մեկը:

Ժողովրդագրական ցնցումների առումով բացառություն չէր նաև 1877-8 թթ. ռուս-թուրքական պատերազմը: Հասկանալի է, որ ցարական իշխանությունները պետք է ձգտեին հնարավորինս արագ «իրենցով անել» Թուրքիայից գրաված տարածքները, ամրանալ դրանցում: Իսկ այդ ամենը, բնականաբար, ենթադրում էր նրա կողմից նաև համապատասխան ժողովրդագրական քաղաքականության մշակում և իրագործում: Ամբողջապես վերցրած Կարսի մարզի բնակչությունը ռուսական տիրապետության 40 տարիների ընթացքում 1878թ. ամենաշատը 120-150 հազարից 1914 -1916 թթ. հասել էր արդեն մոտ 400 հազարի:[64]

Ստորև կներկայացնենք որոշ պաշտոնական վիճակագրական տվյալներ, որոնք ավելի մանրամասնորեն են ցույց տալիս, թե ինչպիսին է եղել ժողովրդագրական գործընթացների դինամիկան Կարսի մարզում 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո մինչև I համաշխարհային պատերազմն ընկած ժամանակահատվածում: Իսկ այդ դինամիկան, իր հերթին, բնութագրում է նաև մարզի բնակչության թվաքանակն ու կազմը կառավարելի ձևով փոփոխելու՝ ցարական կառավարության կողմից որդեգրած համապատասխան քաղաքականության ուղղվածությունն ու նպատակները: Տվյալները բերվում են՝ սկսած 1892 թվականից:

1892թ. մարզի բնակչության վերաբերյալ բնութագրական տվյալները բերված են Աղյուսակներ 1, 2, 3-ում:

*1892թ. առկա բնակչության թիվը մարզում կազմել է 200.868 մարդ, բնակչության միջին խտությունը մարզում՝ 12 մարդ/քառ. վերստ (13,7 մարդ/քկմ):*[65]

---

[64] Ա.Մ.Հակոբյան, *Կարսի մարզի ազգաբնակչությունը (1897-1914 թթ.)*, Պատմաբանասիրական հանդես, 1976, № 4, էջ 147-154:

[65] Карсская область, Энциклопедия Брокгауза и Ефрона, http://mydic.ru/dic/enciklopediya-brokgauza-i-efrona/268976-karsskaya-oblast; Карсская область, Российские универсальные энциклопедии, БрЕ и БСЭ, объединенный словник, http://gatchina3000.ru/brockhaus-and-efron-encyclopedic-dictionary/049/49279.htm

**Աղյուսակ 1.** *Կարսի մարզի բնակչության բաշխումն ըստ ազգային պատկանելության 01.01.1892թ. դրությամբ*[66]

| Ազգությունը | Ռուսներ (վելիկոռուսներ, մալոռուսներ, բելոռուսներ) | Հույներ | Հայեր | Թուրքեր | Կարափափախներ | Թուրքմեններ | Քրդեր |
|---|---|---|---|---|---|---|---|
| Քանակը | 14.061 | 27.118 | 43.467 | 48.209 | 28.122 | 10.044 | 30.131 |
| Տոկոսը բնակչության ընդհանուր քանակից | 7% | 13,5% | 21,5% | 24% | 14% | 5% | 15% |

**Աղյուսակ 2.** *Կարսի մարզի բնակչության բաշխումն ըստ կրոնական պատկանելության 01.01.1892թ. դրությամբ*[67]

| Կրոնը | Ուղղափառ եկեղեցի | Աղանդ (մոլոկան, պրիգուն, դուխոբոր) | Հայ Առաքելական եկեղեցի | Այլ քրիստոնյա ուղղություն | Մահմեդական | Եզդի |
|---|---|---|---|---|---|---|
| Քանակը | 28.122 | 10.044 | 42.183 | 1.507 | 116.504 | 2.511 |
| Տոկոսը բնակչության ընդհանուր քանակից | 14% | 5% | 21% | 0,75% | 58% | 1,25% |

**Աղյուսակ 3.** *Քանակական որոշ հարաբերակցություններ Կարսի մարզի բնակչության տարբեր հատվածների միջև 01.01. 1892թ. դրությամբ:*

| | |
|---|---|
| Ոչ մահմեդական բնակչության տոկոսը բնակչության ընդհանուր թվից | 42% |
| Քրիստոնյա բնակչության տոկոսը բնակչության ընդհանուր թվից | 40,75% |
| Ոչ մահմեդական բնակչության տոկոսը մահմեդականների թվի համեմատ | 72,4% (քիչ՝ 1,38 անգամ) |
| Քրիստոնյա բնակչության տոկոսը մահմեդականների թվի համեմատ | 70,3% (քիչ՝ 1,42 անգամ) |
| Հայերի տոկոսը ոչ մահմեդական բնակչության ընդհանուր թվից | 52% |
| Հայերի տոկոսը մահմեդական բնակչության ընդհանուր թվի համեմատ | 37% (քիչ՝ 2,7 անգամ) |

[66] Նույն տեղում:
[67] Նույն տեղում:

Ինչպես տեսնում ենք բերված տվյալներից, տեղաբնիկ հայերի և հետագայում մարզում բնակություն հաստատած թուրքերի, քրդերի, կարափափախների և թուրքմենների կողքին մարզում այդ ժամանակ արդեն բնակվելիս են եղել նաև զգալի թվով ռուսներ և հույներ: Մարզում այդ պահի համար մատնանշվում են այդ 7 հիմնական ազգությունները՝ թուրքեր, քրդեր, կարափափախներ, թուրքմեններ, հայեր, հույներ, ռուսներ (եզդիները, որոնք ցարական կառավարության թույլտվությամբ ներգաղթել էին Կարսի մարզ 1879-1882թթ. Բայազետի շրջանից, համարվում էին ոչ մահմեդական քրդեր[68]): Կրոնական պատկանելության առումով, համապատասխանաբար, շոշափելի թիվ են սկսել կազմել ուղղափառներն ու ռուս աղանդավորները: Մահմեդական տարրը գերակշռել է մարզի բնակչության մյուս բոլոր հատվածներին միասին վերցրած: Ամենամեծաքանակը եղել է թուրքական համայնքը, հետո՝ հայերը, քրդերը, հույները և այլն:

1897թ. Ռուսաստանում անցկացվել է կայսրության բնակչության համընդհանուր մարդահամարը: Կարսի մարզին վերաբերող տվյալներն ամփոփվել են երկու ծավալուն «տետրերում»,[69] որտեղից վերցված են ստորև բերվող տվյալները 1897թ.-ի համար մարզի բնակչության վերաբերյալ:

Ըստ այդ մարդահամարի տվյալների՝ Կարսի մարզի առկա բնակչության թիվը 1897թ. կազմել է 290.654 մարդ, մարզում մշտական բնակվողների թիվը՝ 296.911, իսկ 6.277-ը բնակվել են ժամանակավոր: Բնակչության միջին խտությունը եղել է 17,48 մարդ/քառ. վերստ (19,89 մարդ/քկմ): Առկա բնակչության 7,78%-ը (22.619 մարդ) հանդիսացել են թվով 15 օտար երկրների հպատակներ, իսկ 30%-ի (87.638 մարդ) համար Կարսի մարզը չի հանդիսացել ծննդավայր: Մարզում գրանցվել է 981 բնակատեղի, որից 23-ն ունեցել է 1000-ից ավել բնակիչ, 95-ը՝ 501-ից 1000, 863-ը՝ 500-ից պակաս բնակիչ: Վերջին ցուցանիշը վերաբերում է հատկապես մահմեդականներին, որոնց բնակության շրջաններում հաճախակի հանդիպում են երկնիշ և նույնիսկ միանիշ թվերով բնակատեղեր: Հիմնական դասը մարզում կազմել են գեղջուկները (крестьяне)՝ 1000 բնակչից 839-ը: Մարզում ամեն 1000 տղամարդուն միջին հաշվով բաժին է ընկել 810 կին:

1897թ. մարզի բնակչության վերաբերյալ բնութագրական տվյալները բերված են Աղյուսակներ 4, 5, 6-ում:

---

[68] Е.В.Клюкин, նշվ. աշխ., էջ 21-22:

[69] Первая всеобщая перепись населенія Россійской имперіи (ПВПНРИ), 1897, LXIV, Карсская область, Тетрадь I, С. -Пб., 1900; Первая всеобщая перепись населенія Россійской имперіи (ПВПНРИ), 1987, LXIV, Карсская область, Тетрадь II, (последняя), С. - Пб., 1904.

*1897թ. առկա բնակչության թիվը մարզում կազմել է 290.654 մարդ, բնակչության միջին խտությունը մարզում՝ 17,48 մարդ/քառ. վերստ (19,89 մարդ/քկմ):*[70]

**Աղյուսակ 4.** *Կարսի մարզի բնակչության բաշխումն ըստ ազգային պատկանելության (1897թ.)*[71]

| Ազգությունը | Ռուսներ (վելիկոռուս., մալոռուսներ, բելոռուսներ) | Հույներ | Հայեր | Թուրքեր | Կարափափա-խներ | Թուրքմեններ | Քրդեր | Լեհեր | Այլ ազգեր |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Քանակը | 27.856 | 32.593 | 73.406 | 63.547 | 28.879 | 8.442 | 42.968 | 3.243 | 8.720 |
| Տոկոսը բնակչ. ընդ. քանակից | 9,58% | 11,21% | 25,26% | 21,86% | 10,28% | 2,9% | 14,78% | 2,9% | 3% |

**Աղյուսակ 5.** *Կարսի մարզի բնակչության բաշխումն ըստ կրոնական պատկանելության (1897թ.)*[72]

| Կրոնը | Ուղղափառ եկեղեցի | Աղանդներ (մոլոկան, պրիգուն, դուխոբոր) | Հայ Առաքելական եկեղեցի | Կաթոլիկներ | Այլ քրիստոնյա դավանություն | Մահմեդական | Հուդայական | Այլ կրոններ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Քանակը | 49.295 | 12.420 | 71.123 | 6.217 | 1.217 | 145.852 | 1.204 | 3.326 |
| Տոկոսը բնակչ. ընդ. քանակից | 16,96% | 4,27% | 24,46% | 2,14% | 0,42% | 50,18% | 0,414% | 1,14% |

**Աղյուսակ 6.** *Քանակական որոշ հարաբերակցություններ Կարսի մարզի բնակչության տարբեր հատվածների միջև (1897թ.)*

| | |
|---|---|
| Ոչ մահմեդական բնակչության տոկոսը բնակչության ընդհանուր թվից | 49,82% |
| Քրիստոնյա բնակչության տոկոսը բնակչության ընդհանուր թվից | 48,26% |
| Ոչ մահմեդական բնակչության տոկոսը մահմեդականների թվի համեմատ | 99,3% (քիչ՝ 1,01×) |
| Քրիստոնյա բնակչության տոկոսը մահմեդականների թվի համեմատ | 96,2% (քիչ՝ 1,04×) |
| Հայերի տոկոսը ոչ մահմեդական բնակչության ընդհանուր թվից | 50,7% |
| Հայերի տոկոսը մահմեդական բնակչության ընդհանուր թվի համեմատ | 50,3% (քիչ՝ 1,99×) |

[70] ПВПНРИ, 1897г., LXIV, Карсская область, Тетрадь I, С.-Пб., 1900, с. 1-3; ПВПНРИ, 1897г., LXIV, Карсская область, Тетрадь I I,, С.-Пб., 1904, с. I- VIII, 1-3.

[71] Նույն տեղում:

[72] Նույն տեղում:

Ըստ այդ մարդահամարի՝ 1897թ. մարզի ազգագրական պատկերը 1892թ. համեմատ ավելի բազմազան է եղել: Մարզում բնակվել են արդեն 19 տարբեր ազգությունների ներկայացուցիչներ. 1892թ.-ի նշված 7 ազգերի կողքին թվարկվում են նաև պարսիկները, լեհերը, օսերը, կովկասյան թաթարները, լեզգիները, հրեաները, էստոնացիները, վրացիները, լիտվացիները և լատիշները, ասորիներն ու գերմանացիները:[73] Աղյուսակներ 1, 2, 3 և 4, 5, 6 համեմատելիս պարզ երևում է, որ անցած 5 տարիների ընթացքում բացարձակ թվաքանակի առումով բոլոր ազգերի մոտ առկա է քանակական աճ, սակայն հարաբերական առումով, մահմեդականների հարաբերական քանակը նվազել է թե՛ բնակչության ընդհանուր քանակի, և թե՛ քրիստոնյաների ու հայերի թվաքանակների համեմատ:

Հաջորդ տարիներին այս միտումները հիմնականում եղել են շարունակական: Մենք կբերենք նաև տվյալներ հետագա 2 կարևոր՝ նախապատերազմյան (1913թ.) և նախահեղափոխական (1916թ.) տարիների վերաբերյալ:

1913թ. դրությամբ մարզի բնակչության պատկերը եղել է հետևյալը (տե՛ս Աղյուսակներ 7, 8, 9).

*1913թ. հունվարի 1-ի դրությամբ առկա բնակչության թիվը մարզում կազմել է 333.917 մարդ, բնակչության միջին խտությունը՝ 20 մարդ/քառ. վերստ (22,36 մարդ/քկմ):*[74]

**Աղյուսակ 7.** *Կարսի մարզի բնակչության բաշխումն ըստ ազգային պատկանելության 01.01.1913թ. դրությամբ*[75]

| **Ազգությունը** | **Ռուսներ (մեծ., մալ., բելոռ.)** | **Հույներ** | **Հայեր** | **Թուրքեր** | **Կարափափախներ** | **Թուրքմեններ** | **Քրդեր** | **Եվրոպ. ազգեր** | **Անհայտ ծագմ.** |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Քանակը | 16.628 | 48.610 | 85.194 | 68.155 | 43.272 | 16.557 | 52.201 | 811 | 1.508 |
| Տոկոսը բնակչ. ընդ. քանակից | 4,98% | 14,56% | 25,51% | 20,41% | 12,96% | 4,96% | 15,63% | 0,24% | 0,45% |

[73] ПВПНРИ, 1897г., LXIV, Карсская область, Тетрадь 2, С.-Пб., 1904, с.VII.
[74] ПКАККО на 1914 г., Карс, 1914, с. I-XXXVIII, Ведомость №1, 2, 3.
[75] Նույն տեղում:

**Աղյուսակ 8**. *Կարսի մարզի բնակչության բաշխումն ըստ կրոնական պատկանելության 01.01.1913թ. դրությամբ*[76]

| Կրոնը | Ուղղափառ եկեղեցի | Աղանդ (մոլոկան, պրիգուն, դուխոբոր) | Հայ Առաքելական եկեղեցի | Հայ կաթոլիկներ | Հայ բողոքական | Այլ քրիստոնյա ուղղություն | Մահմեդական | Այլ կրոններ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Քանակը | 52.920 | 12.895 | 81.859 | 2.794 | 541 | 1.959 | 175.733 | 4.939 |
| Տոկոսը բնակչ. ընդ. քանակից | 15,85% | 3,86% | 24,51% | 0,84% | 0,16% | 0,59% | 52,63% | 1,48% |

**Աղյուսակ 9**. *Քանակական որոշ հարաբերակցություններ Կարսի մարզի բնակչության փարբեր հատվածների միջև 01.01.1913թ. դրությամբ*

| | |
|---|---|
| Ոչ մահմեդական բնակչության տոկոսը բնակչության ընդհանուր թվից | 47,37% |
| Քրիստոնյա բնակչության տոկոսը բնակչության ընդհանուր թվից | 45,81% |
| Ոչ մահմեդական բնակչության տոկոսը մահմեդականների թվի համեմատ | 99,3% (քիչ՝ 1,01×) |
| Քրիստոնյա բնակչության տոկոսը մահմեդականների թվի համեմատ | 90% (քիչ՝ 1,11×) |
| Հայերի տոկոսը ոչ մահմեդական բնակչության ընդհանուր թվից | 53,85% |
| Հայերի տոկոսը մահմեդական բնակչության ընդհանուր թվի համեմատ | 48,47% (քիչ՝ 2,06×) |

Վերջին պաշտոնական և հավաստի տվյալները Կարսի մարզի բնակչության վերաբերյալ վերաբերում են 1916թ.-ին:

*1916թ. հունվարի 1-ի դրությամբ առկա բնակչության թիվը մարզում կազմել է 404.305 մարդ, բնակչության միջին խտությունը՝ 24,8 մարդ/քառ. վերստ (28,22 մարդ/քկմ): Մահմեդականների թիվը եղել է 170.310 (ընդհանուր բնակչության 42,12%), այլ կրոններ դավանողների թիվը՝ 233.995 (ընդհանուր բնակչության 57,88%): Հայերի թիվը կազմել է 123.028 մարդ (ընդհանուր բնակչության 30,43%): Հայերը կազմել են մահմեդական բնակչության 72%-ը (քիչ՝ 1,38 անգամ):*[77]

Վերը բերված տվյալները նախևառաջ վկայում են, որ մարզի յուրացման ուղղությամբ և այդ խնդրից բխող՝ մարզի տարածքը համապատասխան համամասնությամբ բնակեցնելու հարցերում ցարական իշխանությունները իրոք որ արձանագրել էին շոշափելի հաջողություններ: Բնական է՝ իրենց պետական ու ազգային շահերին

[76] Նույն տեղում:

[77] Д.С.Завриев, նշվ. աշխ., էջ 17; КК на 1917г., Тифлис, 1916, Отдел статистический, с. 236-237; Ա.Խատիսեան, Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Բ տպագրութիւն, Բէյրութ, 1968, էջ 155:

համապատասխան: Առաջին համաշխարհային պատերազմից առաջ Կարսի մարզում առկա էր բնակչության՝ որոշակիորեն միմյանց հավասարակշռող ինտերնացիոնալ մի կազմ. այդ ժամանակ մարզում բնակվում էին մոտ 20 ազգեր և ազգություններ:

Հատկապես մեզ հուզող մասով անհրաժեշտ է հատուկ նշել, որ ցարական իշխանությունը հայերի հանդեպ որդեգրեց այնպիսի մոտեցումներ և դրանց պահպանման ու իրագործման հարցերում եղավ այնքան ուշադիր և հետևողական, որ հայկական այդ տարածքը մի օր էլ հանկարծ իրականում հայկական մարզ չդառնար:[78] Ռուսական կայսրության կողմից նվաճված այդ տարածքի իրացմանն ուղղված քաղաքականության ծիրի մեջ հայերը հայտարարված էին որպես *«հոգևոր առումով խորթ, իսկ քաղաքականապես ոչ այնքան հուսալի»* տարրեր: Ուստիև անհրաժեշտ էր *«չկրկնել 1829թ. սխալները»*[79] և ամեն գնով խոչընդոտել հայերի զանգվածային բնակեցմանը Կարսի մարզում, որովհետև հակառակ դեպքում ցարական իշխանությունը մի օր հանկարծ «...*իր սեփական փարածքի վրա կհայփնվի խորթ փարրերի շրջապափման մեջ»*:[80] Ավելորդ չէ հիշեցնել, որ Առաջին համաշխարհային պատերազմի օրերին, երբ ռուսական զորքը Թուրքիայում Արևմտյան Հայաստանի նորանոր տարածքներ էր գրավում, ցարական իշխանությունն արդեն այնպիսի պլաններ էր կազմում այդ տարածքների ապագայի վերաբերյալ, որպեսզի այս անգամ արդեն բացառվեն 1829 և 1878թթ.-ին հաջորդած տարիների ընթացքում նրա գործած «սխալները»:[81]

---

[78] Д.С.Завриев, նշվ. աշխ., էջ 16; А.М.Погосян, Карсская область..., էջ 123-129:

[79] Խոսքը 1829թ. ցարական իշխանությունների կողմից արևմտահայերին Ախալքալակի և Ախալցխայի շրջաններում վերաբնակվելու թույլտվություն տալու մասին է, տե՛ս А.М.Погосян, Карсская область..., էջ 129:

[80] А.М.Погосян, Карсская область..., էջ 129, 130:

[81] Այս անգամ արդեն ոչ միայն չէր խրախուսվում հայերի վերաբնակեցումը ռուսական զորքի կողմից գրաված տարածքներում, այլ արգելվում էր նույնիսկ կոտորածներից մազապուրծ եղած փախստական հայերին վերադառնալ իրենց տները: Հայը կարող էր գալ և իր թողած տանը նորից բնակվել միայն այն դեպքում, եթե ներկայացնում էր տան ու տարածքի վերաբերյալ իր սեփականության իրավունքը հաստատող համապատասխան փաստաթղթեր (պետք է ենթադրել, որ ամենայն հավանականությամբ, կոտորածներն սկսելուց առաջ թուրքերը հայերին բաժանել էին թուրքական կադաստրի կողմից հաստատված սեփականության վկայականներ և ռուսական կողմը հիմա դրանք պահանջում էր, որպեսզի բացառեր հայերի կողմից ուրիշի գույքի ապօրինի զավթումը): Իսկ Կովկասյան ռազմաճակատի հրամանատար, «եփրատյան կազակության» ստեղծման նախագծի հեղինակ Ն.Յուդենիչը, միանգամայն անընդունելի համարելով գրաված տարածքներում հայերի վերաբնակեցումը, ռուսների կողմից գրաված Ալաշկերտի և Բայազետի շրջանների ապագայի կապակցությամբ գրում էր Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովին. «...Ես շատ ցանկալի եմ համարում սահմանամերձ շրջանները բնակեցնել ռուսական տարրով..., այն է՝ վերաբնակիչներով Կուբանից ու Դոնից և այդ միջոցով սահմանի երկայնքով ձևավորել կազակական տարա-

Մյուս կողմից, ինչպես երևում է բերված տվյալներից, Ռուսաստանի տիրապետության տարիներին մահմեդական տարրը Կարսի մարզում միշտ էլ թվապես զգալիորեն գերակշռել է հայկական տարրին (չնայած նրան, որ 1877-1878թթ. պատերազմից անմիջապես հետո մարզի տարածքից հեռացավ մոտ 80.000-100.000 մահմեդական[82]): Միաժամանակ մարզի տարածքում բնակչության բաշխվածության վիճակագրության ուսումնասիրումը ցույց է տալիս, որ հայերը մահմեդականների համեմատ Կարսի մարզում բնակվել են չափազանց կոմպակտ ձևով՝ հիմնականում Կարս ու Կաղըզման քաղաքներում և այդ օկրուգների ոչ մեծ թվով բազմամարդ գյուղերում: Օրինակ, համաձայն 1897թ. մարդահամարի տվյալների, մարզի ամեն 1.000 բնակիչներից հայերի և մահմեդականների քանակները մարզի 4 օկրուգներում հետևյալն են եղել.

| Օկրուգ | Քանակն ամեն 1000 բնակչին | |
|---|---|---|
| | *Հայ* | *Մահմեդական* |
| Կարս | 348 | 311 |
| Կաղըզման | 349 | 402 |
| Արդահան | 29 | 737 |
| Օլթի | 99 | 737 |

1913թ.-ին առավել հայաբնակ 2 օկրուգներում Կարսի օկրուգի 263 գյուղերից հայկական էին 54-ը, Կաղըզմանի օկրուգի 143 գյուղերից հայերը բնակվում էին ընդամենը 21-ում: Ինչպես տեսնում ենք, ի տարբերություն (ըստ էության՝ հակառակ) հայերի, մահմեդական բնակչությունը բաշխված էր ամբողջ մարզով մեկ և ասես մի յուրատեսակ հսկողության տակ էր պահում մարզի հայությանը: Հետագա տարիներին պատկերն էապես չի փոխվել:

Հասկանալի է, որ հայ բնակչության՝ այս տեսակ կոմպակտ բնակեցված «կղզիներով» բաշխված լինելը արտակարգ իրավիճակներում նրան դարձնում էր չափազանց խոցելի մի թիրախ՝ սովորական առօրյայում դյուրին դարձնելով թալանի և այլ բռնարարքների իրագործումը, իսկ պատերազմական իրավիճակում՝ բնակչության տեղահանումը և ուղղակի ֆիզիկական ոչնչացումը:

ծաշրջան”; տե՛ս Р.Г. Ованнисян, նշվ. աշխ., էջ 17, 23; Ռուբեն, հայ յեղափոխականի մը յիշատակները, հատոր Է ( 7), Թեհրան, 1982, էջ 128; Н.Е.Шутова, նշվ. աշխ., էջ 8:

[82] А.М.Погосян, Карсская область…, էջ 123; ПКАККО на 1902-й год, Сведения о Карсской области, Тифлис, 1901, с. 15.

## I.5. Կարսի մարզի թուրքական օկուպացիան և «բրեստ-լիտովսկյան հանրաքվեն»

1918թ. գարնանը Թուրքիան անշեղորեն իրագործեց Բրեստ-Լիտովսկի պայմանագրի 4-րդ կետով իրեն տված հնարավորությունները և, անցնելով ոչ միայն 1914թ., այլ նաև 1877թ. ռուս-թուրքական սահմանները, ներխուժեց բուն Անդրկովկաս: Ի դեպ, չնայած նրան, որ Բաթումի պաշտպանությունը ղեկավարում էր անձամբ պաշտպանության նախարար Գեորգաձեն, իսկ Նոյ Ժորդանիան էլ մի ամբողջ օր անցկացրել էր դիրքերում՝ վրաց զինվորների կողքին, թուրքական զորքերը 1918թ. ապրիլի 13-15-ին հեշտությամբ գրավեցին Բաթումը:[83]

Ինչ վերաբերում է 1918թ. ապրիլի 25-ին թուրքերի կողմից Կարսի գրավմանը, ապա այդ առնչությամբ մինչ օրս էլ մեր ժողովրդի մոտ կարծիք է տիրում, որ այդ հարցում մեզ «վրացիք քաշեցին»: Ճշմարտության բաժին իհարկե այդ կարծիքի մեջ կա: Սակայն խոսքը, բնականաբար, ոչ թե առհասարակ վրացիների մասին է, այլ Անդրկովկասյան իշխանության այդ օրերի ղեկավար Ա.Չխենկելու մասին է,[84] որի հրամանին ենթարկվելով էր հայկական զորքն այդ օրերին թողել Կարսը, մինչդեռ առնվազն 20-30 օր դիմադրելու միջոցներն ու հնարավորություններն առկա էին: Առավել ևս, որ նույնիսկ ոչ հայազգի զորապետերն այդ օրերին նշում էին, որ Էրզրումը հանձնելուց հետո հայկական զորախումբը մի տեսակ սթափվել ու վերակազմակերպվել էր և այդ պահին իրենից ներկայացնում էր բավականին մարտունակ զորամիավորում:[85]

Դեպքերը զարգանում էին սրընթաց և շատ արագ պատմության գիրկն անցան նաև Անդրկովկասյան Սեյմն ու Կոմիսարիատը, և 1918թ. մայիսի վերջին՝ բառացիորեն «թուրքական քայլերգի հնչյունների ներքո» հայտարարվեց, որ Անդրկովկասյան Դեմոկրատական Ֆեդերատիվ Հանրապետության փոխարեն աշխարհին են ներկայանում 3 նոր պետական կազմավորումներ՝ Վրաստան, Ադրբեջան և Հայաստան: Մի քանի օր անց՝ 1918թ. հունիսի 4-ին, Թուրքիան երեքի հետ էլ կնքեց «խաղաղության և բարեկամության» պայմանագրեր և, իր կողմից գրաված տարածքներում թուրքական թնդերանգ օկուպացիոն ռեժիմ հաստատելով, շարժվեց դեպի Բաքու, որը գրավեց 1918թ. սեպտեմբերի 15-ին:[86]

---

[83] С. Я.Хейфец, Закавказье в первой половине 1918 года и Закавказский Сейм. Былое №21. 1923. с.308; Д.С.Завриев, նշվ. աշխ., էջ 53:

[84] Ա.Հ.Հարությունյան, Թուրքական ինտերվենցիան…, էջ 166:

[85] А.М.Погосян, Карсская область…, էջ 211-216; Г.Корганов, նշվ. աշխ., էջ 122-137; Ю.Фельштинский, Крушение мировой революции. Брестский мир: Октябрь 1917 – Ноябрь 1918. М.,. с. 325, 336; Д.С.Завриев, նշվ. աշխ., էջ 55:

[86] Д.С.Завриев, նշվ. աշխ., էջ 69-70; Ա.Հ.Հարությունյան, Թուրքական ինտերվենցիան…, էջ 166:

Թողնենք, սակայն, թուրքական զորքերը գրավված Բաքվում և վերադառնանք «Կարսի այգին», ուր իր խրախճանքն էր վայելում թուրքական զորքը: Կարս-Արդահան-Բաթում շրջանների զուտ ֆիզիկական գրավումը Թուրքիայի կողմից դեռևս չէր նշանակում, որ Բրեստ-Լիտոսկի պայմանագրի 4-րդ կետը կարող է համարվել ամբողջապես իրականացված: Դեռ քամելու շատ բան կար: Հիշենք, որ համաձայն այդ նույն 4-րդ կետի՝ «...*Ռուսաստանը չի միջամտի այդ մարզերի պետական իրավական և միջազգային իրավական նոր կազմակերպման գործին, այլ այդ մարզերի բնակչությանը հնարավորություն կտա դրացի պետությունների, մանավանդ Թուրքիայի համաձայնությամբ հաստատել նոր կարգ*»: Այնպես որ, այդ տարածքները դեռ մի մեծ պարտականություն ունեին իրենց նվաճած Թուրքիայի հանդեպ: Նվաճվելուց հետո հիմա էլ աիրաժեշտ էր իրականացնել պայմանագրով նախատեսված ժողովրդավարական դեկորացիայի խաղարկումը: Այն է՝ «ազատ կամարտահայտման միջոցով» պետք էր բազմաթիվ հնարավորներից ընտրել քաղաքական ապագայի այն միակ տարբերակը, որին Թուրքիան կտար իր համաձայնությունն ու հավանությունը:

Թուրքիան էլ, բնականաբար, պատրաստակամ ու մեծահոգաբար օժանդակեց նվաճված տարածքներում թուրք-բոլշևիկյան առաջին պայմանագրի տառին ու ոգուն համապատասխանող այդ կարևորագույն և խիստ «դեմոկրատական» քաղաքական միջոցառման իրականացմանը: Եվ իրոք, թուրքական իշխանությունները, հաշվի առնելով պահի ռազմաքաղաքական յուրահատկությունը և կատարելով վաղվա օրվա համար որոշակի հաշվարկներ, իրենց կողմից բռնազավթված այդ տարածքներում բավականին արագ կազմակերպեցին հանրաքվե: Ինչ փույթ, թե իրականում դա հանրաքվե կոչվածի ընդամենը մի կոպիտ իմիտացիա էր:

Իսկ պահի յուրահատկությունը, որն էլ գրեթե հրամայական էր դարձնում հանրաքվեի անցկացումը, այն էր, որ նույն Թուրքիան, պարտություններ կրելով պատերազմի բոլոր ռազմաճակատներում, իսկ հատկապես՝ Կովկասյան ռազմաճակատում, այդ նույն ուղղությամբ հանկարծ դարձավ դրության տերը և ոչ միայն վերադարձրեց կորցրածը, այլ ձեռք գցեց նորանոր տարածքներ և նույնիսկ հասավ Բաքու: Դժվար է ենթադրել, որ Թուրքիան, իր ետևում ունենալով կեսհազարամյա կայսրության գոյության փորձը, 1917-1918թթ. անսպասելի «նվերներից» հանկարծ կարող էր հայտնվեր «գլխապտույտ հաջողություններից» իրավիճակում: Եվ հաշվի չնստեր այն հանգամանքի հետ, որ պատերազմը մոտենում է իր հակառակորդների համար հաղթական ավարտին և, ինչպես միշտ, այդ հաղթողներն են ի վերջ որոշելու, թե պարտվածներից

որի ձեռքում ինչ է մնալու: Եվ մնալո՞ւ է ինչ-որ բան, առհասարակ, թե՝ ոչ: Իսկ նման պարագայում, ինչպես հայտնի է, «ժողովրդի ազատ կամարտահայտման դրսևորումը» հմուտ և ճարպիկ խաղացողի ձեռքում դառնում է բավականին հզոր փաստարկ: Առաջ անցնելով նշենք, օրինակ, որ 1921թ. սկզբներին՝ թե՛ արդեն խորհրդայնացված Հայաստանի ղեկավարության հետ վարվող նամակագրության մեջ, թե՛ Մոսկվայի պայմանագրի կնքելուն նախորդած թուրք-բոլշևիկյան բանակցություններում (ուր հայ բոլշևիկների համար մուտքն արգելված էր), թուրքական կողմը հատկապես հենց այս՝ 1918թ. հանրաքվեի անցկացումով ու դրա արդյունքներով էր հիմնավորում իր տարածքային պահանջները Կարսի ու Արդահանի շրջանների նկատմամբ:[87] Քաջ հայտնի է նաև, որ տարիներ անց, Երկրորդ Համաշխարհայինից հետո ԽՄ ղեկավարությունը հանկարծ հիշողության կորուստ ապրեց և, մոռանալով տարածաշրջանում իր շահերից բխող 1918-1921թթ. վարած քաղաքականությունը, հիմա էլ, կրկին իր շահերից ելնելով, հանկարծ սկսեց Թուրքիային տարածքային պահանջներ ներկայացնել հայկական մարզերի վերաբերյալ: Չարձանագրելով այդ հարցի վերաբերյալ որևիցե արդյունք մեծ տերությունների հետ շփման դիվանագիտական և բանակցային ասպարեզներում՝ Կրեմլը սկսեց արդեն հայերի բերանով բարձրաձայնել և Թուրքիային ներկայացնել այդ պահանջները: Այդ իրավիճակում Թուրքիայի վարչապետ Սարաջօղլուն 1946թ. հունվարի 6-ի իր ելույթում հայտարարել էր, որ «...*Ղարսի և Արդահանի օկրուգները չեն զավթվել Թուրքիայի կողմից, այլ նրանք են միացվել Բրեստ-Լիտովսկի պայմանագրի 4-րդ հոդվածի հիման վրա կատարված հարաքվեի ժամանակ, այդ տարածքներում ապրող բնակչության ազատ կամքով*...»:[88]

---

[87] ДВП СССР, Т.3, Москва, 1959, с. 452-4; Зограбян Э.А., Территориально-разграничительные вопросы на второй Московской русско-турецкой конференции (февраль-март 1921г.), Կովկասյան Աղվանքի և Հայաստանի Արևելյան կողմանց պատմության ու մշակույթի խնդիրների լուսաբանման շուրջ, Հատոր Ա, Երևան, 1991, էջ 62:

[88] Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Գ.Հարությունյանի ելույթը Միության Սովետի Երևանի ընտրական օկրուգի ընտրողների 1946թ. փետրվարի 1-ի ընդհանուր ժողովում, «Սովետական Հայաստան» օրաթերթ (ՍՀ), №29 (7565), 3-ը փետրվարի, 1946թ.: Անհրաժեշտ է նշել, որ ելույթում դեպքերի ընթացքը ներկայացվում է այնպես, ասես գոյություն չունեն Մոսկվայի և Կարսի պայմանագրեր, առհասարակ գոյություն չի ունեցել Հայաստանի առաջին Հանրապետությունը, այլ հայերի համար ամեն ինչ ավարտվել է 1918թ. Թուրքիայի կողմից հայկական հողերի բռնազավթումով, որոնք էլ այժմ հայությունը ետ է պահանջում՝ իր թիկունքում ունենալով միանգամայն «անշահախնդիր» ռուս «մեծ եղբորը»: Տե՛ս նաև՝ Մ.Ս.Կարապետյան, *Արժեքավոր փաստաթուղթ հայկական տարածքները Հայաստանին վերադարձնելու շուրջ*, Լրաբեր Հասարակական Գիտությունների, № 2, 2009, էջ 232-247:

Տեսնենք, թե ինչ է իրենից ներկայացրել այդ հանրաքվե կոչվածը:

Բնական է, որ հանրաքվեն «պատշաճ» մակարդակով անցկացնելու և համապատասխան արդյունքներ ապահովելու համար թուրքական կողմը գրաված տարածքներում պետք է իրականացներ որոշակի նախապատրաստական աշխատանքներ: Թե ինչ մասշտաբի են եղել և ինչ բնույթ են կրել այդ «աշխատանքները», երևի թե ոչ մի հայի համար էլ գաղտնիք չէ: Բայց բերենք, համենայնդեպս, այդ «աշխատանք-միջոցառումների» վերաբերյալ պաշտոնապես հնչեցրած գնահատականներ. «*...Խաղաղության պայմանագրի ստորագրումից հետո այդ մարզերը գրավեցին թուրքական զորքերը, և այդտեղ հաստատվեց ռազմական օկուպացիայի ռեժիմ, որի ընթացքում իրականացվեցին թալան, անթույլատրելի չարաշահումներ և բռնություններ խաղաղ բնակչության նկատմամբ: Թուրքական վարչակազմի հաստատման հետ մեկտեղ իրականացվեց 19 տարեկանից բարձր տղամարդկանց զորակոչ: Բնակչությունն ահաբեկված էր և հայտնվել էր այնպիսի պայմաններում, որ հանրաքվեի անցկացման ժամանակ նա չկարողացավ օգտագործել ազատ կամարտահայտման իր իրավունքը: Քվեարկությունից առաջ այն քաղաքացիները, որոնց ազդեցությունը կարող էր լինել ոչ հօգուտ Թուրքիայի, կա՛մ արտաքսվել, կա՛մ ձերբակալվել, իսկ շատ դեպքերում՝ պարզապես գնդակահարվել էին... Նման պայմաններում հանրաքվեի քվեարկության արդյունքներն ի սկզբանե արդեն կանխորոշված էին...»*[89],

«*...Թյուրքերը թալանեցին և կողոպտեցին հայ բնակչությանը, ռազմական օկուպացիոն ռեժիմ մտցնելով այդ օկրուգներում... Նրանք... հալածանքների և ֆիզիկական ոչնչացման ենթարկեցին Ղարսի և Արդահանի օկրուգների սահմաններում մնացած հայերին: Թյուրքական զորքերը հրի ու սրի մատնեցին այն բոլորը, ինչ որ կապված էր հայի անվան հետ: Այդպիսով, թյուրքերը Ղարսի և Արդահանի օկրուգներում լիկվիդացնելով բնակչության հիմնական մասին՝ հայերին, անցկացրին, այսպես կոչված, «հանրաքվեն», որի հետևանքով այդպիսի պայմաններում հարցը չէր կարող չկանխորոշվել Թյուրքիայի օգտին...»*:[90]

Հաջողությամբ «գլուխ բերելով» նախնական փուլը, թուրքերը ձեռնամուխ եղան արդեն բուն հարաքվեի անցկացմանը: Հանձնաժողովը, որին հանձնարարված էր նախապատրաստել և անցկացնել հանրաքվեն, իր կազմով ձևականորեն քաղաքացիական էր ուր ընդգրկված էին երիտթուրքական կուսակցության անդամներ, լրագրողներ, օսմանյան պառլամենտի անդամներ և «պաշտոնական այլ անձինք»:

---

[89] Д.С.Завриев, նշվ. աշխ., էջ 71:

[90] ՍՀ օրաթերթ, նույն տեղում:

կազմակերպված էր ընդհանուր թվով 62 ընտրատեղամաս, քվեարկությանը մասնակցելու իրավունք էին ստացել միայն 19 տարին լրացած տղամարդիկ: Քվեարկության համար ընտրվել էր շատ յուրահատուկ ձև՝ «կամավոր գաղտնի»: Քվեարկությունը ընթացել է հետևյալ կերպ՝ սեղանին դրված են եղել 2 տեսակի քվեաթերթիկներ՝ սպիտակ գույնի՝ վրան կարմիր կիսալուսին և աստղ, և կապույտ գույնի: Կարմիր աստղով ու կիսալուսնով թերթիկները համապատասխանել են Թուրքիայի կազմում լինելու կողմ ձայնին, իսկ կապույտը՝ դեմ ձայնին: Ընտրողը մոտեցել է սեղանին և բարձրաձայն հայտարարել, թե որ գույնի թերթիկն է ինքն ուզում և տարել թերթիկն իջեցրել է քվեատուփի մեջ: Իսկ ինչ վերաբերում է կարգուկանոնին, ապա քվեարկությունն ընթացել է թուրքական բանակի խիստ հսկողության տակ:[91] Անդրադառնալով հանրաքվեի անցկացմանն ու քվեարկության ընթացքին՝ Թբիլիսիում լույս տեսնող մենշևիկյան մի թերթ իր 1918թ. հուլիսի 24-ի համարում գրում էր. «*... քվեարկությունն անցել է այն երկրի սվինների առկայության ու սվինների սպառնալիքի ներքո, որը ձգտում է խլել փվլալ փարածքը... Հանրաքվեն անցկացվել է թուրքական զինվորական իշխանությունների կողմից, թուրք սպաների վերահսկողության ներքո... Քվեարկությունն ընթացել է բաց: Քվեարկողը ասկյարի ներկայությամբ քվեախցիկ պետք է գցեր մի թուղթ, որի գույնը մատնանշում էր, թե քվեարկողը Թուրքիային կողմ է քվեարկում, թե՝ ոչ: Քվեարկությանը մասնակցել են նաև թուրք զինվորականները: Նրանք էլ քվեախցիկների մոտ էին բերում նրանց, ում ցանկանում էին...Նման պայմաններում քվեարկության արդյունքները ի սկզբանե կանխորոշված էին...*[92]»: Որևէ այլ մեկնաբանություն, գնահատական կամ արձագանք բերելն իրոք որ ավելորդ է: Թուրքիան այդ խաղը խաղացել է բացարձակ բաց՝ սկզբից մինչև վերջ: Անգամ թուրք հեղինակներն են շեշտում, որ հանրաքվեն անցել է միայն օսմանյան կողմի հսկողության տակ, և հարևան երկրներից և ոչ մեկից ներկայացուցիչներ հրավիրված չեն եղել, ուստիև իրոք առաջ է գալիս այդ հանրաքվեի օրինական լինելու և դրա արդյունքները ճանաչելու հարցը: Բայց միաժամանակ նրանց կողմից շեշտվում է, որ միևնույն է, որևիցե գործոն չէր կարող ազդել քվեարկության արդյունքների վրա, քանզի ցանկացած պարագայում մահմեդական մեծամասնությունը քվեարկելու էր Օսմանյան կայսրությանը միանալու օգտին[93]:

Հանրաքվեն սկսվել էր 1918թ. հունիսի 12-ին և տևել մինչև հուլիսի կեսերը: Ձայների հաշվումը տևել էր մինչև օգոստոսի

---

[91] Е.В.Клюкин, նշվ. աշխ., էջ 122,126:
[92] Д.С.Завриев, նշվ. աշխ., էջ 72:
[93] Е.В.Клюкин, նշվ. աշխ., էջ 121, 122:

սկիզբը, իսկ 1918թ. օգոստոսի 15-ին սուլթան Մեհմեդ VI-ի հրամանագրով Կարսի, Արդահանի և Բաթումի տարածքները ընդգրկվեցին Օսմանյան կայսրության կազմի մեջ:[94]

Թեև քվեարկության արդյունքում կարմիր և կապույտ գույների քվեաթերթիկների հարաբերությունը քվեատուփերում իրոք ոչ մեկի մոտ կասկած չի առաջացրել ոչ այն օրերին, ոչ էլ այժմ, բայց բերենք, համենայնդեպս, որոշ հրապարակված տվյալներ այդ քվեարկության վերաբերյալ: 1918թ. վրացական թերթերը գրել են, որ Բաթումի ու Կարսի մարզերում Թուրքիային միանալու օգտին է քվեարկել 83.000 մարդ, դեմ՝ 2.000:[95] Ըստ այդ օրերին թուրքական աղբյուրների կողմից հրապարակած տվյալների,[96] քվեարկության պատկերը եղել է հետևյալը. բնակչության ընդհանուր թիվը՝ 302.693 (որից 200.486-ը՝ Կարսի մարզում), քվեարկության իրավունք ստացածների թիվը՝ 83.082 (որից 55.904-ը՝ Կարսի մարզում): Դեմ է քվեարկել ընդամենը 286 մարդ (որից 267-ը՝ Կարսի մարզում), կողմ՝ 82.796-ը (որից 55.637-ը՝ Կարսի մարզում): 1946թ. Թուրքիային տարածքային պահանջներ ներկայացնելու կապակցությամբ այդ երկրի վարչապետ Սարաջօղլուն հանրաքվեի վերաբերյալ ներկայացրել է սույն թվերը.[97] եղել է 87.530 մասնակից, որից կողմ են քվեարկել 84.124-ը, դեմ՝ 1.924-ը, և 1.482 մարդ եղել է ձեռնպահ (հանելուկ է մնում, թե երկու գույներով քվեաթերթիկների պարագայում ինչպես է իրագործվել այդ ձեռնպահ լինելը): Խորհրդային կողմը Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Գրիգոր Հարությունյանի միջոցով ներկայացրել է իր տվյալները. քվեարկությանը մասնակցել է մոտ 11.000 մարդ, կողմ է քվեարկել 8.500 մարդ, դեմ՝ 2.500-ը:[98] Խորհրդային մեկ այլ հեղինակ էլ նշում է, որ մարզերի մոտ 500.000 բնակչությունից քվեարկությանը մասնակցել է 90.000-ից ոչ ավել մարդ:[99]

Առավել ուշագրավ է, սակայն, թուրքական հեղինակներից մեկի այն պնդումը, որ թեև հանրաքվեն իրոք անցել է «ոչ քաղաքակիրթ մակարդակով», բայց միևնույնն է, դրա արդյունքները կանխորոշված էին, քանզի այդ տարածքների բնակչության 85%-ը մահմեդականներ էին[100]: Մենք կանդրադառնանք միայն Կարսի մարզի այդ ժամանակաշրջանի բնակչությանը վերաբերող տվյալներին (անկախ նրանից, թե այն օրերին Բաթումի մարզում ինչ է տեղի ունեցել, Բաթումն

---

[94] Е.В.Клюкин, նշվ. աշխ., էջ 122, 123:

[95] Д.С.Завриев, նշվ. աշխ., էջ 72, 73:

[96] Е.В.Клюкин, նշվ. աշխ., էջ 122-124:

[97] ՍՀ օրաթերթ, նույն տեղում:

[98] Նույն տեղում:

[99] Е.В.Клюкин, նշվ. աշխ., էջ 125:

[100] Նույն տեղում, էջ 123:

այսօր վրացիների ձեռքում է և, ինչպես ասում են, «թող իրենց հալալ լինի»): Ըստ Ռուսական կայսրության պաշտոնական վիճակագրական տվյալների՝[101] 1916թ. հունվարի 1-ի դրությամբ Կարսի մարզի ամբողջ բնակչությունը կազմել է 404.305 մարդ, որից 170.310-ը՝ մահմեդականներ (42%): Ոչ մահմեդականները կազմել են 233.995 հոգի (58%): Ըստ վերը բերված թուրքական տվյալների՝ 1918թ. հանրաքվեի օրերին Կարսի մարզի ամբողջ բնակչությունը եղել է 200.486 մարդ, որի 85%-ը, այսինքն՝ 170.413-ը, թուրքական աղբյուրի պնդմամբ եղել են մահմեդականներ, իսկ մնացած 15%-ը, այսինքն՝ 30.073-ը՝ ոչ մահմեդականներ: Տվյալների համեմատությունից հետևում է՝ Կարսի մարզի մահմեդական բնակչության թիվը 1918թ. եղել է նույնը, ինչ որ 1916թ.: Այսինքն՝ չի պակասել: Բայց ոչ մահմեդական բնակչության թիվն այդ ընթացքում 233.995-ից նվազել-հասել է 30.073-ի: Այսինքն՝ 2 տարվա ընթացքում կրճատվել է 7,78 անգամ! Ո՞ւր անհետացան այդ 203.922 ոչ մահմեդականները և ի՞նչ պատճառով չմասնակցեցին հանրաքվեին: Իսկ թվային այս աճպարարության ետևում ծավալվող իրականությունն ավելի քան դաժան էր. իրականացվում էր հայության հերթական հայրենազրկումը: Այս անգամ արդեն բռնի հայազրկված տարածքների վրա հայտնված ինչ-որ բնակչության «ազատ կամարտահայտման միջոցով»: Բառացիորեն արյունոտ քաղաքական մի ֆարսի միջոցով, որի սկիզբը դրեց և որին խթան հանդիսացավ Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը՝ իր չարաբաստիկ 4-րդ հոդվածով: Ի դեպ, ինչպես հայտնի է, 1918թ. սեպտեմբերի 20-ին Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը Թուրքիային ուղղված իր նոտայում Թուրքիայի մասով չեղյալ հայտարարեց Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը՝ միաժամանակ մեղադրելով Թուրքիային այդ պայմանագրի հենց 4-րդ կետը խախտելու մեջ:[102] Ըստ նույնի՝ իր այդ նոտայում բոլշևիկյան կառավարությունը հայտնում էր, որ ինքը չի կարող համաձայնվել այդ հանրաքվեի արդյունքների հետ և այդ տարածքներում նոր կարգ հաստատելու վերաբերյալ դրանց բնակչության իրավունքը համարում է չօգտագործված, իսկ հիշյալ օկրուգներում նոր կարգի հարցը թողնում է բաց:[103] Բոլշևիկյան իշխանությունները, ցավոք, չեն շեշտում, թե «*մանավանդ Թուրքիայի համաձայնությամբ*» հաստատածից բացի ուրիշ ինչ կարգ էր հնարավոր հաստատել այդ օրերին այդ օկրուգներում:

Եվ ամենևին պատահական չէր նաև, որ անդրադառնալով վերը նշված հանրաքվեի անցկացմանն ու դրա արդյունքներին՝ թուրքա-

[101] Д.С.Завриев, նշվ. աշխ., էջ 17:
[102] Армянский Вопрос, Энциклопедия, с. 85, 86.
[103] ՍՀ օրաթերթ, նույն տեղում; Е.В.Клюкин, նշվ. աշխ., էջ 127, 128:

կան կողմը ժամանակին շեշտել է, որ հանրաքվեի օրերին Կարսի մարզի բնակչության 85%-ը մահմեդական է եղել: Եվ ոչ ոք չի զարմանա, եթե մնացած ոչ մահմեդական 15%-ի մեջ ոչ մի հայ չհայտնաբերվի: Սա այն դեպքն ու իրադրությունը չէ, որ անհրաժեշտ է վկայակոչել փաստաթղթեր կամ վկաներ ու ականատեսներ: Այնպես որ, «համապատասխան» գործողություններն իրականացնելուց հետո թուրքերն իրոք չէին ստում. 1918թ.-ի ամռանը Կարսի մարզում բավականին դժվար էր ողջ հայ գտնելը: Եվ միանգամայն բնական է, որ նման իրավիճակում Թուրքիան մեծագույն գոհունակությամբ պետք է անցկացներ այդ հանրաքվեն, որի արդյունքները «կանխորոշված էին»:

1918թ. ապրիլի վերջերից սկսած՝ Կարսի մարզը պաշտոնապես հայտնվեց թուրքական օկուպացիայի տակ: Դա տևեց 6 ամիս՝ մինչև Մուդրոսի զինադադարի ստորագրումը (1918թ. հոկտեմբերի 30-ը), որով ազդարարվեց Առաջին աշխարհամարտի ավարտն ու դրանում Անտանտի տերությունների հաղթանակը:[104]

## I.6. Բաթումից մինչև Մուդրոս

1918թ. մայիսի 30-ին Հայոց Ազգային Խորհուրդը Թիֆլիսում հրապարակել էր հետևյալ փաստաթուղթը.

« *Յայտարարութիւն*

*Անդրկովկասի քաղաքական ամբողջութեան լուծումով եւ Վրաստանի եւ Ազրպէջանի անկախութեան հռչակումով ստեղծուած նոր դրութեան հանդէպ Հայոց Ազգային Խորհուրդը իրեն յայտարարում է հայկական գաւառներու գերագոյն եւ միակ իշխանութիւն: Որոշ ծանրակշիռ պատճառներով թողնելով մօտիկ օրերը կազմել Հայոց Ազգային Կառավարութիւն՝ Ազգային Խորհուրդը ժամանակաւորապէս ստանձնում է կառավարման բոլոր ֆունկցիաները՝ հայկական գաւառների քաղաքական եւ վարչական ղեկը վարելու համար:*

*1918թ. Մայիս 30, Թիֆլիս* »:

Դա տեղի էր ունեցել Անդրկովկասյան Սեյմի ինքնալուծարումից հետո (1918թ. մայիսի 26-ին), երբ Վրացական Ազգային Խորհուրդը և Սեյմի Մուսուլմանական ֆրակցիայից կազմված Ադրբեջանի ժամանակավոր Ազգային Խորհուրդը, համապատասխանաբար, Վրաստանը (1918թ. մայիսի 26-ին) և Ադրբեջանը (1918թ. մայիսի 27-ին) հռչակեցին որպես անկախ պետություններ: 1918թ. մայիսի 28-ին կազմվեց նաև Հայաստանի անկախության մասին համապատասխան բանաձևը, որն էլ հայտարարության տեսքով հրապարակվեց մայիսի 30-ին:[105]

---

[104]А.М.Погосян, Карсская область…, էջ 216-223; ՀՍՀ, հ. 5, էջ 344:

[105] Ա.Ներսիսյան, Զ.Թորոսյան, Բաթումի կոնֆերանսը: Հայաստանի Հանրապետության սահմանների հարցը Բաթումի պայմանագրում, Ակունք, ԵՊԸ Իջևանի մասնա-

Անդրադառնալով այդ փաստաթղթում տեղ գտած ձևակերպումներին, Ռուբեն Տեր-Մինասյանը բացատրում է.« …*Հայ ամենամեծ հայրենասէր Սփեփան Մամիկոնեանի այդ վարպետ բանաձեւումով միայն կարող էր պաշտպանուել Հայկական դատը, ինչպէս Տաճկաց Հայաստանում նոյնպէս եւ Կովկասում*»:[106] Մեր կարծիքով ամեն ինչ ասված է շատ պարզ և «բացատրության բացատրություն» տալու անհրաժեշտությունը չկա:

Բայց… միայն հայերը չէին, որ այդքան հայրենասեր էին և բանաձևումների մեջ էլ այդչափ վարպետ: Անդրկովկասյան մյուս երկու պետությունների, ինչպես այսօր կասեին, հիմնադիրները, նույնպես քաջ գիտակցում էին, որ անկախ պետականության կառուցման գործընթացում պետական անկախության դեկլարատիվ հռչակումն այդ գործընթացի դեռևս ընդամենը առաջին քայլն է, իսկ տարածաշրջանում շատ բան և շատ արագ կարող է փոփոխվել, ուստիև իրենք էլ, մտածելով իրենց ազգերի ու պետությունների թե այդ օրվա և թե գալիք օրերի մասին, խուսափել էին իրենց հռչակագրերում որոշակիորեն մատնանշել իրենց պետությունների կոնկրետ սահմաններն ու տարածքները: Ադրբեջանի պարագայում ընդհանուր ձևակերպմամբ հայտարարվում էր, որ «*Ադրբեջանը, որը կազմված է Հարավային և Արևելյան Անդրկովկասից*» հռչակվում է որպես անկախ պետություն,[107] իսկ Վրաստանի «*անկախության Ակտում*» առհասարակ որևիցե խոսք չկար, թե հատկապես ո՛ր տարածքների վրա է հիմնվում այդ պետությունը:[108]

Կողմերի նման խուսափողական դիրքորոշումն ու ձևակերպումների ակնհայտ «շրջահոսելիությունը» պայմանավորված էին նախևառաջ նրանով, որ ցարական իշխանությունների կողմից բազմազգ Անդրկովկասում անցկացրած վարչատարածքային բաժանումը, ինչպես և ցանկացած կայսրությունում, ժամանակին իրականացվել էր ազգերի ու տարածքների առավելագույն հնարավոր խառնաշփոթ ստեղծելու սկզբունքով ու նպատակով: Եթե մի կողմ թողնենք մեծաքանակ հայկական բնակչություն ունեցող Թիֆլիսն ու Բաքուն, որոնց հայապատկանության մասին, բնականաբար, խոսք չի կարող գնալ,

---

ճյուղ, Գիտական հոդվածների ժ-ծու, թիվ 2(5), Երևան 2012, էջ 12-13 (Հայաստանի Հանրապետութեան Բոստոնի Կեդրոնական Արխիվ, թղթածրար 1/1, գործ 6):

[106] Ռուբէն, հ.7, էջ 136:

[107] Азербайджанская Демократическая Республика(Под. ред.Н. Агамаловой), Баку, 1998, с. 103; М.Волхонский, В.Муханов, По следам Азербайджанской Демократической Республики, Москва, 2007, с. 229.

[108] Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, Тифлис, 1919,с. 336-337; Акт о независимости Грузии 26 мая 1918г., Комплект четырех листов с декларацией на грузинском и переводами на русском, английском и французском языках. Изд. Грузинского Национального Совета в Петрограде, Пг., 1918, 4 листа.

ապա, օրինակ, հայկական Ջավախքն ու Լոռին (այն օրերին՝ Բորչալուն) իրենց բացարձակ ճնշող մեծամասնություն կազմող հայկական բնակչությամբ մտնում էին Թիֆլիսի գուբերնիայի մեջ: Նույն ձևով էլ հայկական Զանգեզուրն ու ամբողջ Ղարաբաղը, Գանձակը, հոծ հայկական բնակչություն ունեցող մի շարք այլ պատմական հայկական գավառներ ընդգրկված էին Ելիզավետպոլի գուբերնիայի կազմում: Հասկանալի է, որ նման բաժանումն իր մեջ պարտադիր կերպով պարունակում է դանդաղ գործող ականի հատկություն և կայսրությունների փլուզման դեպքում միշտ էլ պայթում է ազգամիջյան արյունալի կոնֆլիկտների տեսքով: Այդպես եղավ ցարական Ռուսաստանի փլուզման դեպքում, այդպես եղավ (և դեռ շարունակվում է) Խորհրդային կայսրության փլուզման պարագայում: Մյուս կողմից, անկախացման վերաբերյալ այդ հայտարարությունները հնչեցվում էին այն իրավիճակում, երբ թե՛ խաղացանկը, թե ՛ դերերի բաշխումն ու խաղալու թույլտվությունը Անդրկովկասում տնօրինվում էին Թուրքիայի և Գերմանիայի կողմից, ուստիև նման խնամատարության առկայության պայմաններում իրոք անիմաստ էր «հարևանական վեճերի» առիթ տալ: Թեև Անդրկովկասի այդ երեք նորահռչակ պետություններից ամեն մեկն ուներ իր սեփական հեռահար նպատակները, սակայն երեքի համար էլ ամենաառաջնային խնդիրն այդ օրերին կայանում էր նրանում, որպեզի իրենց վիճակի մեջ ինչ-որ որոշակիություն մտցվի: Ինչից հետո նոր հնարավորություն ունենան գոնե խնամատարների կողմից թույլատրելի ինքնուրույնության շրջանակներում նախաձեռնել այս կամ այն քայլերը:

Այդ առումով առավել անկյուն քշված վիճակում հայտնվել էր Հայաստանը. Վրաստանին հովանավորում էր Գերմանիան, Ադրբեջանը Անդրկովկաս ներխուժած Թուրքիայի կրտսեր եղբայրն էր, իսկ Հայաստանն էլ մեն-մենակ կանգնած էր այդ «բարեկամական» շրջապատի մեջ:

Ստեղծված իրավիճակում որոշակիություն մտցնելու առումով առաջին քայլը, թեև Հայաստանի համար չափազանց ծանր, արվեց թուրքերի կողմից գրավված Բաթումում. 1918թ. հունիսի 4-ին Բաթումում նորանկախ Հայաստանն ու Թուրքիան կնքեցին «*Հաշտության և բարեկամության պայմանագիր Օսմանյան Կայսերական կառավարության և Հայաստանի հանրապետության միջև*»:[109] Ինչպես տեսանք նախորդիվ, բոլշևիկյան Ռուսաստանը, ստորագրելով Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, Թուրքիային վերադարձրեց

[109] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), (հետայսու՝ ՀՄԴՍԱՔՓ), Երևան, 1972թ., էջ 531-537:

ամբողջ Արևմտյան Հայաստանը և ի հավելում էլ դրան, հայկական տարածքներից Թուրքիային նվեր տվեց նաև Կարսի մարզը: Թուրքիան այդքանով չբավարարվեց, խախտեց նույնիսկ այդ չափազանց թուրքանպաստ Բրեստ-Լիտովսկի պայմանագրի պայմանները, ներխուժեց Անդրկովկաս և հիմա էլ հայկական կողմին ստիպեց ստորագրել Բաթումի պայմանագիրն իր ուզած պայմաններով: Պայմանագրում հստակ նշվում էին (Հոդված II) սահմանագիծը Թուրքիայի և Հայաստանի Հանրապետության միջև, ինչպես նաև այդ սահմանագծին համապատասխան Էրիվանյան գուբերնիայից Թուրքիային զիջվող տարածքները: Քանակապես ի՞նչ թիվ էին կազմում այդ տարածքները: Գնահատման համար կօգտվենք նախահեղափոխական Ռուսաստանի ամենավերջին՝ 1917թ. հրապարակված պաշտոնական տվյալներից:[110] Համաձայն դրանց՝ 1916թ. Էրիվանի գուբերնիայի տարածքը կազմում էր 23.494,7 քառ. վերստ (26.784 քկմ): Աղյուսակ 10-ը ցույց է տալիս, թե Բաթումի պայմանագրով Էրիվանի գուբերնիայից ինչ չափի տարածքներ էին անցնում Թուրքիային:[111]

**Աղյուսակ 10.** *Էրիվանի գուբերնիայի ույեզդներից Թուրքիային անցած տարածքները*

| **Ույեզդ** | **Ալեքսանդրապոլ** | **Նախիջևան** | **Նոր Բայազետ** | **Շարուր - Դարալագյազ** | **Սուրմալու** | **Էրիվան** | **Էջմիածին** |
|---|---|---|---|---|---|---|---|
| Ույեզդի ամբողջ տարածք, քառ. վերստ | 3.586,7 | 3.939,04 | 4.122,76 | 2.687,17 | 3.147,09 | 2.724,1 | 3.287,5 |
| Թուրքիային անցած մաս, քառ. վերստ | 2.690 (75%) | – | – | 537,43 (20%) | 3.147,09 (100%) | 1.362,05 (50%) | 2.432,75 (75%) |
| ՀՀ-ին մնացած տարածք, քառ. վերստ | 896,7 | – | 4.122,76 | 2.150 | – | 1.362,05 | 854,75 |

Ինչպես տեսնում ենք, Բրեստ-Լիտովսկով նախատեսված՝ Թուրքիային հանձնվող հայկական տարածքներից զատ, Թուրքիան Բաթումում հայերից խլեց ևս 10.170 քառ.վերստ (11.594 քկմ) տարածք: Հարկ է նշել, որ թեև Բաթումում իր բոլոր պահանջներն ու թելադրած պայմաններն, ըստ էության, բավարարվել էին, Թուրքիան այդ պայմանագրի հատուկ կետով մեկ անգամ ևս հիշեցնում ու պարտադրում էր, որպեսզի հայկական կողմը նորից հայտարարի, որ ինքը ճանաչում է Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը և ընդունում է նրա բոլոր պայմանները: Ահա այդ կետը. «*Հոդված XII. Բրեստ-Լիտովսկում Օսմանյան կայսրության ու նրա դաշնակիցների և Ռուսաստանի*

[110] КК на 1917г., Отдел статистический, с. 236-237

[111] Д.С.Завриев, նշվ. աշխ., էջ 70 ;А.М.Погосян, Карсская область…, էջ 221:

*միջև կնքված հաշտության ընդհանուր և լրացուցիչ պայմանագրերի դրույթները, որքանով որ դրանք չեն հակասում ներկա պայմանագրին, ուժի մեջ են պայմանավորվող կողմերի համար»:* Ահա թե ինչ զորավոր ներուժ էր պարունակում Թուրքիայի համար Բրեստ-Լիտովսկը՝ ընդդեմ հայերի և նրանց պետականության:

Կրկին անդրադառնալով այդօրվա Հայաստանի սահմանների և տարածքի հարցերին, կարող ենք նշել, որ Բաթումի պայմանագրով նշվում էր ընդամենը այդօրվա հայ-թուրքական սահմանը և որևիցե խոսք չկար Հայաստանի մյուս սահմանների և նրա կողմից զբաղեցրած տարածքների մասին: Այդ օրերին, բացի Թուրքիայից Հայաստանը չուներ նույնիսկ ինչ-որ պայմանավորվածությունների մակարդակով որոշակիացված սահմաններ իր մյուս հարևանների՝ նախևառաջ Վրաստանի և Ադրբեջանի հետ: Ճիշտ է, Ադրբեջանի սրտացավ հովանավորը Բաթումի պայմանագրում համենայնդեպս խցկել էր մի կետ, որտեղ նշվում էր, որ «*Հայկական Հանրապետության կառավարության և Ադրբեջանի Հանրապետության կառավարության միջև կնքված, նրանց փոխադարձ սահմանների որոշմանը վերաբերող համաձայնագիրը կհաղորդվի Օսմանյան կայսերական կառավարությանը»*: Միանգամայն հասկանալի է Թուրքիայի ցանկությունը իր վերահսկողության տակ պահել հայ-ադրբեջանական սահմանագծի որոշման գործընթացը, բայց միաժամանակ փաստ է, որ այդ սահմանն այդ օրերին որպես այդպիսին գոյություն չի ունեցել: Նույնը և հայ-վրացական սահմանի առումով:

Ճիշտ է, այդ օրերին հայ-թուրքական սահմանն անցնում էր Ուլուխանլուի (այսօրվա Մասիսի) մոտով՝ Երևանից ընդամենը 7կմ հեռավորության վրա, բայց Նախիջևան և Զանգեզուր այդ օրերին «այցելել» էր Անդրանիկ Օզանյանն իր զորախմբով,[112] իսկ Ղարաբաղում էլ իշխանությունը գտնվում էր տեղի Հայկական Ազգային Խորհրդի ձեռքում:[113] Եվ այդ հայկական գավառներն այդ օրերին որևէ այլ պետության, կոնկրետ Ադրբեջանի կազմի մեջ չէին գտնվում: Այնպես որ, Բաթումի պայմանագրի համատեքստում խոսել ՀաՀ-ի կողմից զբաղեցրած կամ վերահսկվող իրական տարածքների մասին կարելի է թերևս շատ մեծ վերապահումներով: Այլ հարց է, որ մեր երկու անմիջական հարևանները, օգտվելով Հայաստանի ծայրահեղ ծանր վիճակից, ձգտում էին նրա հաշվին իրենց սեփական տարածքները

---

[112] Ծ.Պ.Աղայան, Զորավար Անդրանիկի գործունեության մասին, Պատմա-բանասիրական հանդես, №2, 1968, էջ 40-57: Որոշ ռուսաստանյան հետազոտողներ այդ օրերի Զանգեզուր-Ղարաբաղ տարածքը անվանակոչում են որպես “Республика Андроника”, տե՛ս А.Зубов, Политическое будущее Кавказа: опыт ретроспективно-сравнительного анализа, Знамя, 2000, №4, http://magazines.russ.ru/znamia/2000/4/zubov.html:

[113] Հ.Աբրահամյան, Մարտնչող Արցախը. 1917-2000. գ. Ա, 1917-1923. Երևան, 2003, 338 էջ:

հնարավորինս ճոխացնել, իսկ հայերին էլ խցկել այնպիսի մի չնչին տարածքի շրջանակների մեջ, որ այդ ազգի ու նրա պետության ֆիզիկական գոյատևումը, ըստ էության, անգամ տեսականորեն դառնա անհնարին:[114] Վրացական կողմն, օրինակ, Իրակլի Ծերեթելու շուրթերով հայերին սրտացավ հասկացնում էր, թե Բաթումի պայմանագրից հետո հայերն ի վիճակի չեն ստեղծել փոքրիշատե կենսունակ պետություն, ուստիև հայերին ձեռնտու է մտնել վրացական պետության կազմի մեջ և ուժեղացնել նրան, որը Գերմանիայի աջակցությամբ կպաշտպանի և՛ իրեն, և՛ հայերին: Իսկ շրջանառության մեջ դրված և ցայսօր արծարծվող հայտնի 10.000-12.000 քկմ թիվը՝ Սևանա լիճն իր շրջապատով և Արարատյան դաշտի մի հատվածը, ոչ թե Բաթումի պայմանագրով որոշվող ՀաՀ-ի իրական տարածքն էր, այլ հենց այն չնչին տարածքը, որը Բաթումի պայմանագրից և Թուրքիայի հետ սահմանի որոշակիանալուց հետո մտադիր էին Անդրկովկասի մնացած տարածքից (մոտ 200.000 քկմ) Հայաստանին բաժին հանել Վրաստանն ու Ադրբեջանը:[115] Դա էլ ասենք, որ մի փոքրիկ ու թույլ պետականանման հայկական միավորի ստեղծման հարցում Հայաստանի այդ 3 հարևաններից Թուրքիային նույնիսկ կարելի է դիտել որպես ամենահանդուրժող (և նույնիսկ՝ շահագրգիռ) կողմ, քանզի նման պետության գոյությունն իր համար իրական վտանգ չէր կարող ներկայացնել: Բայց իր կողմից վերահսկվող նման պետության գոյության պարագայում Թուրքիայի համար խիստ նվազում էր հայերի կողմից իր նկատմամբ պահանջներ ներկայացնելու արդյունավետությունը և նույնիսկ հավանականությունը՝ միաժամանակ զգալիորեն բարձրացնելուվ այդ պետության փաստի գոյությամբ պայմանավորված թուրքական կողմի շահարկումների ու մերժողականության արդյունավետությունը:

Իսկ ինչ էր իրենից ներկայացնում այդօրվա Հայաստանն իր այդ մի հատ եղած և մի քանի հատ չեղած սահմաններից ներս, այդ անորոշ տարածքի վրա ծվարած հայությամբ: Դժվար է գտնել որևէ հայի, որը պատկերացում չունենա, թե ինչպիսին էր ՀՀ ներքին իրավիճակը 1918թ. ամռան-աշնան ամիսներին: Նուրբ ու փխրուն պոետիկ հոգի-

---

[114] Ս.Վրացյան, Հայաստանի Հանրապետություն (հետայսու՝ Ս.Վրացյան, ՀՀ), Երևան, 1993թ., էջ 214-222; Վ.Հարությունյան, 1918թ. Հայ-վրացական պատերազմը (նյութեր և փաստաթղթեր) (հետայսու՝ Վ.Հարությունյան, 1918թ. Հայ-վրացական...), Երևան, 2014, էջ 6-15:

[115] Գործը երբեմն հասնում էր արդեն բացահայտ զավեշտի. համարելով, որ նույնիսկ այդ չբերրի և բնական պաշարներից զուրկ հողակտորը հայերի համար բավականին մեծ ճոխություն է, վրացական և ադրբեջանական կողմերն աչք էին դրել նույնիսկ Սևանի ձկնապաշարների վրա, հայտարարելով, թե Սևանի իշխանի հանդեպ իրենք նույնպես պետք է ունենան որոշակի քվոտաներ; տե՛ս Վ.Հարությունյան, նույն տեղում:

ները այդ օրերի Հայաստանը բնութագրում էին որպես «Ողբի հայրենիք, որբի հայրենիք», «Այրիների և որբերի երկիր», «Երկիր, ուր մշուշ է ու մահ», ավելի սառնասիրտների բնութագրումներն ավելի դառն էին ու դաժան. «գերեզմանոց», «մեռելանոց», «համազգային որբանոց», «գաղթակայան» ևն... Պետական այրերը գերադասում էին վիճակի ավելի դիվանագիտական ձևակերպում՝ «կատաստրոֆիկ»:

Եվ ահա այդ մռայլ, ծանր ու գրեթե անհուսալի ֆոնի վրա 6 դար ընդմիջումից հետո, Հայոց Ազգային Խորհուրդը հայտարարություն է հրապարակում հայկական պետության ստեղծման մասին: Եթե մի պահ մի կողմ ենք դնում բարձրագոչ, «խելացի ու խորիմաստ» հարցերը և կենտրոնանում ենք զուտ մեր պետականության հռչակման փաստի վրա, ապա զուտ մարդկայնորեն հնարավոր չէ մեծագույն հարգանքով չլցվել այն անձանց նկատմամբ, որոնք այդ ծանրագույն իրավիճակում ցուցաբերեցին կամք ու վճռականություն և, նախ հայտարարեցին մեր պետական անկախության մասին, որից հետո էլ ստանձնեցին այդ պետության ղեկավարման չափազանց դժվարին, ծանր ու տանջալի պատասխանատվությունը: Այդ օրերի Հայաստանում, ի տարբերություն մերօրյա Հայաստանի, իշխանության մեջ ներգրավվելը ամենևին չէր ենթադրում կերատաշտի մոտ իր կայուն տեղն ամրագրելը և հաշված, եթե ոչ օրերի, ապա առնվազն ամիսների ընթացքում միլիոնատեր (բնական է՝ ոչ ազգային արժույթով) դառնալու երաշխիքներ ստանալը: Ի տարբերություն մերօրյա Հայաստանի, այդ երկրում թալանելու ոչ թե հնարավորություն, այլ պարզապես թալանելու բան չկար, որ հանկարծ, առաջնորդվելով այսօրվա հայկական իրականությանը բնորոշ տրամաբանությամբ «կյանքը հասկացողներից» որևէ մեկն ասի, թե «եթե մեջը քյար չունենային, չէին անի»: Այդ առումով ամենևին ավելորդ չէ նշել, որ այդ մարդկանց մեծ մասը, ունենալով պատկառելի կրթական ցենզ, արդեն կայացած անձինք էին ու ճանաչված մասնագետներ և սեփական երկրի թալանով չէ, որ պետք է ապահովեին իրենց բարեկեցությունը: Ճիշտ է, բոլշևիկյան հեղափոխությունը փշրեց քաղաքական, տնտեսական, սոցիալական ու հասարակական շատ մեծ թվով հարաբերություններ, բայց այդ մարդիկ ի վերջո կարող էին մեկնել արտասահման և այնտեղ ապրել անվտանգ և բավականին ապահով կյանքով: Բայց այդ անձանց մոտ առկա էր ամենակարևորն ու ամենագլխավորը. սեփական ազգային պետականություն ունենալու անհրաժեշտության գաղափարը, այդ գաղափարին հավատարիմ լինելը և այն՝ որպես անվիճելի գերագույն արժեք ընդունելն ու պահպանելը: Եվ հենց այդ հանգամանքն էր առաջին հերթին նրանց ուժ ու վճռականություն տալիս ստանձնելու ղեկավարումը մի երկրի, «ուր մշուշ է ու մահ»: Չշրջանցենք նաև կարևորագույն մի հանգամանք.

իսկ այդ օրերին կա՞ր արդյոք որևիցե այլընտրանք թե՛ անձերի, թե՛ քաղաքական ուժերի առումով: Բոլորիս էլ քաջ հայտնի է, որ այդ այլընտրանքն իրոք չկար և ասպարեզում էր միայն Դաշնակցությունը՝ իր կողմից առաջադրվող անձերով ու քայլերով:[116]

Քաղաքական այրերի կողքին շատ պատկառելի և ներկայանալի էր նաև այդ օրերի հայ այն զինվորականության ցուցակը, որը որոշել էր իր հետագան ու ապագան կապել իր պատմական հայրենիքի հետ: Դրանց մեջ նույնպես պատահական անձինք չկային. բոլորն էլ ռազմական կրթություն ստացած ցարական բանակի գեներալներ ու սպաներ, որոնք մասնակցել էին ոչ միայն տարբեր ճակատամարտերի, այլ ոմանք նույնիսկ մի քանի պատերազմների: Նրանք, որոնց մեջ քիչ չէին տիտղոսակիր ազնվականներ, կարող էին ռուսական բանակի մյուս սպաների նման ռազմաճակատը լքող ռուսական զորամասերի հետ թողնել հեռանալ տարածաշրջանից: Նրանց համար միշտ էլ տեղ կգտնվեր թե՛ սպիտակների, թե՛ կարմիրների մոտ, թե՛ ցանկացած պետության բանակում:[117] Ի վերջո նրանցից և ոչ մեկը Հայաստանում ոչ կալվածքներ ուներ, ոչ էլ «օբյեկտներ»: Այնպես որ այդօրվա Հայաստանի կողմից նրանց տրվող աղքատիկ վարձատրությունը չէր, որ նրանց պետք է պահեր Հայաստանում: Իսկ Բաթումին նախորդած հայկական զինվորականության կողմից մղած մայիսյան ճակատամարտերը դրա ամենաանաչառ ու ամենաանվիճելի վկայությունն ու ապացույցն են: Այնպես որ այն օրերին, երբ հռչակվում էր ՀաՀ-ը, ասպարեզում ունեինք այնպիսի մարդկանց մի համախումբ (ինչպես այսօր կասեին՝ էլիտա), որոնց արժեհամակարգում ազգային պետականության վերականգնումն ու կառուցումը իրոք հանդիսանում էին առաջնայինն ու գլխավորը, և այդ ամենի իրագործման ու պահպանման հարցում այդ մարդիկ իրոք դրսևորում

---

116 Ուշագրավ է այդ կապակցությամբ արտահայտած Սիմոն Վրացյանի միտքը. «Իհարկե, ավելի լավ կլիներ, եթե այդ րոպեին մեջտեղ գար մի նոր ուժ, որ կարողանար առավել կամ պակաս ձեռնահասությամբ, փոխարինել Հայ Հեղափոխական Դաշնակցությանը», տե՛ս Ս.Վրացյան, ՀՀ, էջ 185:

117 Օրինակ, հայկական 6-րդ կամավորական գնդի հրամանատար Հայկ Բժշկյանցը բոլշևիկյան հեղաշրջումից հետո գերադասեց մեկնել Ռուսաստան, որտեղ Գայ անվամբ դարձավ Կարմիր բանակի 24-րդ դիվիզիայի հրամանատար: Ուշագրավ է նաև, որ 1917թ. վերջերին, երբ բավականին իրատեսական էր թվում Արևմտյան Հայաստանը ներառյալ հայկական պետության ստեղծումը, երիտասարդ միչման Իվան Իսակովին առաջարկվել է գալ Հայաստան, բացատրելով, որ նրա հմտությունները ռազմածովային բնագավառում հայրենիքին կարող են պետք գալ: Նա կտրականապես մերժել է այդ առաջարկը և ծառայության է անցել բոլշևիկյան նավատորմի նավերից մեկի վրա: Իսկ նույն ժամանակ, ծովակալության սպաներ Գարագաշյանն ու Հերյանը, գարդեմարին Թումանյանը եկան հայրենիք և չարչարվում էին, որպեսզի Սևանում կարողանան ստեղծել գոնե մի քանի նավից ու նավակներից բաղկացած ռազմական որևէ միավորում; տե՛ս https://hovikcharkhchyan.wordpress.com/tag/; Ա.Խատիսեան, նշվ. աշխ., էջ 135:

էին կամք ու վճռականություն: Կարելի է վստահաբար պնդել, որ այդ օրերին նրանք կատարում էին այն ամենը, ինչը որ հնարավոր էր կատարել ստեղծված իրավիճակում: Իրավիճակ, որի մասին ՀաՀ-ի առաջին ղեկավար Արամ Մանուկյանն ասել է. «*Մենակ ենք եւ պէտք է ապավինենք միայն մեր ուժերին՝ թե՛ ճակատը պաշտպանելու եւ թե՛ երկրի ներսը կարգ հաստատելու*»: Եվ իրոք, երկրի կառավարությունը շատ արագ մշակեց անհետաձգելի միջոցառումների մի ծրագիր, որով առաջնորդվելով իրականացվեցին մի շարք գործնական քայլեր ֆինանսների, արդարադատության, հարկային, զինվորական, արտաքին հարաբերությունների և այլ ոլորտներում հնարավորի սահմաններում կարգուկանոն հաստատելու ուղղությամբ:[118]

Բայց այդ ամենի հետ մեկտեղ կար մի հանգամանք, որն անտեսելն անհնար է. այդօրվա էլիտայի՝ հատկապես բարձրաստիճան զինվորականության և տեղի ժողովրդի միջև բացակայում էին օրգանական միասնությունն ու կապը: Փոխարենը նրանց միջև առկա էր որոշակի ճեղքվածք: Դա պայմանավորված էր ընդհանուր կրթական, մշակութային, հոգեբանական, աշխարհահայացքային, լեզվական, ավանդույթական, հոգևոր, բարոյական և մի շարք այլ՝ ընդհուպ մինչև կենցաղային բնույթի հարցերի նկատմամբ կողմերի մոտեցումների և ընկալումների տարբերությամբ: Ինչը, բնականաբար, հետագայում չէր կարող չունենալ իր բացասական հետևանքները: Ինչպես հետագան ցույց տվեց՝ մասնավորապես և հատկապես, Կարսի զորախմբի պարագայում:[119]

Ահա թե ինչ է գրում այդ մասին իր հուշերում ՀաՀ-ի օրոք Կարսի նահանգապետ Ստեփան Ղորղանյանը իր «*Հուշեր՝ հայ զորավարներ գեն. Ախվերդովի, Դրոյի, Սեպուհի և Նազարբեկովի մասին*» պատումում.

*«Նա միշտ ռուսերէն էր մտածում, նա հնարաւորութիւն չունէր իջնելու դէպի հայկական իրականութիւնը եւ գուցէ այդտեղ է այն գաղտնիքը, որ նա միշտ օտար էր մեզ համար և մենք ոչ ցանկալի մթնոլորտ իր համար…*

*Եւ այդպիսով, իր բոլոր փեռրեփրկ պատրաստականութեամբ հանդերձ, գեներալ Ախվերդով, մեր վերջի օրերում շտաբի պետ դառնալով, չէր կարող այդ ջուխտ ու կենտ օրերում ազգային կուռ բանակ ստեղծել:*

*Եւ եթէ Դրո, պայթալից պատրաստ այդ բանակը դէպի Դուտինին եւ դէպի ազգային մեծ յաղթութիւն առաջնորդել, գեն. Ախվերդով օժտված չէր նորուն այդ բանակը կազմակերպելու եւ այդ փայլը ստեղծե-*

---

[118] Ս.Վրացյան, ՀՀ, էջ 196, 197:

[119] Գ.Ցազըճեան, Կարսի 1920թ. …:

*լու: Եւ իրագործվում էր այն, ինչ որ պէտք է կատարվէր: Ազգային մթնոլորտում պետական անկախութիւն ստացան, Հայաստանը չունէր իր ազգային բանակը, նա բնականապէս պէտք է պարտվէր:*

*Այստեղ պէտք է ասեմ, որ թէ Դրօի ու թէ Սեպուհի անունները սարսուռ էին առաջացնում թշնամու բանակում: Բայց այդ բաւական չէր, իհարկէ: Եզակի խիզախութեամբ եւ եզակի վճռական, այդ ժողովրդական հերոսները միայն հիմյում էին իրանց անուններով մեր յոյսերը եւ համեմում մեր անխուսափելի անկումը եւ մեր չորս կողմը ծփող համազգային դառնութիւնը…*

*Այդպէս էր այդօրերի մեր զինուորական մթնոլորտի հրապարակը: Ներքին գործերի Մինիստրի առանձնասենեակի լուսամուտներից Սպարապետ Նազարբէկովի առանձնասենեակը եւս շատ անգամ դիտում էր մեր այդօրերի մեծի մասամբ դաժլիճի անցուդարձը: Դիմացի շէնքում Մինիստր նախագահի առանձնասենեակում, կատարվում էր անընդհատ խորհրդածութիւն փրկող ճգնաժամի առիթով եւ հայկական բանակի ծերունի սպարապետը, համակված պատմական մոմենտով, միշտ շատ լուրջ էր եւ սպասողական դիրքում: Գեն. Նազարբէկով այդ օրերում թողել էր ռուս պաշտօնազգեստը եւ պճնվել էր հայկական զինվորական նոր տարազով: Բայց, որպէս հնագոյն զինվորական, սովոր կարգի, կանոնի եւ պարտաճանաչ, գեներալ Նազարբեգով այդ օրերում հարկաւոր էր համարում զինված լինելու իր հրամանատարութեան բոլոր առանձնայատկութիւններով: Այդ օրերում նա հագնում էր իր փառաւոր շքանշանները, որպէս յիշողութիւն Դիլմանում եւ այլ վայրերում տարած յաղթութիւնների: Նա կապում էր այդ օրերում պատերազմի դաշտին վայել զօտին եւ առհասարակ յիշեցնում էր այն անցած ժամանակները, երբ հրամանատարը ռազմաբէմ էր դուրս գալիս պճնված եւ զարդարված… Այդ փայլը եւ պաճուճանքը ստեղծում է յաղթական կորով եւ պատերազմական տրամադրութիւն ու շատերը այդ փայլի հետ կապում էին յաղթութեան բախտը: Այսպէս էր նախնի պատերազմական շկոլան եւ նախնի ճաշակները, այսպէս էր եւ հայկական պատկառելի սպարապետը, որպէս վերջի ներկայացուցիչ այդ անցած ժամանակների: Դեռ 77 թվին, տակաւին երիտասարդ սպայ, նա ուղեկցում էր հռչակաւոր Լօրիս Մէլիքովին դէպի Կարսի ամրութիւնները: Բայց այսօր ինքը սպարապետ եւ անհասանելի կամքն երկնքի տնօրէն հայկական պատերազմական բախտի…»:*[120]

Բաթումի պայմանագիրը չվավերացվեց ո՛չ ՀաՀ-ի և ո՛չ էլ Թուրքիայի կողմից (հուսանք՝ ցյուրիխյան արձանագրությունները նույնպես կարժանանան ի վերջո այդ նույն ճակատագրին):

---

[120] ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 9, թթ. 1-4:

Թեև Բաթումից հետո ՀաՀ-ը հայտնվել էր դիվանագիտական, քաղաքական ու տնտեսական կատարյալ շրջափակման ու մեկուսացման մեջ, սակայն հայկական ղեկավարությունն ամենևին չէր հաշտվել իրեն բաժին ընկած «հայի բախտի» հետ և մի կողմից որոշակի քայլեր էր ձեռնարկում հարևանների հետ կոնֆլիկտներից խուսափելու համար, մյուս կողմից՝ գերմանաթուրքական բլոկի երկրների և առանձնապես Թուրքիայի հետ բանակցելու միջոցով փորձում էր գոնե ինչ-որ չափով մեղմել Բաթումի պայմանագրի պայմանները:[121]

Թեև սովն ու համաճարակն այդ ամիսներին բառացիորեն հնձում էին Հայաստանի բնակչությանը՝ հատկապես գաղթականությանը, բայց պետության ղեկավարությունը կարողացավ առանց նոր խոշոր ընդհարումների և առանց նորանոր տարածքային կորուստների երկիրը բերել հասցնել մինչև Մուդրոսի զինադադարի օրը:

Դա էլ ասենք, որ այսօրվա նման՝ այդ օրերին նույնպես զգալի քանակ էին կազմում այն «լայնախոհ ու բանիմաց» հայերը, որոնք գերադասում էին Հայաստանով «զբաղվել» ցանկացած տեղ, բայց ոչ Հայաստանում: Ահա թե ինչ է գրում այդ խավի մասին իր հուշերում Ստեփան Ղորղանյանը. *«Հայ ապիկար, փչացած ինտիլիգենցիան, որ իրան կադետ եւ ինչ-որ էսէր, մէսէր էր անվանում, սիրում էր միայն քննադատել, հայհոյել եւ ծաղրել հայկական կառավարութիւնը: Զանազան պատրվակների եւ ձևերի տակ, նա խմբվել էր իր հայրենիքից դուրս, նա հետաքրքրվում էր իր հայրենի գործերով միայն առավոտները, սուրճի ժամանակ նոր լրագիր կարդալով: Նա անպատասխանատու եւ ծրի խորհուրդներ էր տալիս միշտ եւ ծանձրանում էր «Հայաստան» գալ եւ զբաղվել «հայկական» գործերով...»:*[122] Այսինքն՝ ունեինք այն, ինչ այդ պահին Աստված կամեցել ու տվել էր:

## I.7. Մուդրոսի զինադադար. հայոց հույզեր և հույսեր

Թեև Բրեստ-Լիտովսկը մի տեսակ երկրորդ շունչ հաղորդեց Գերմանիային և Թուրքիային, բայց Առաջին աշխարհամարտն ամբողջովին վերցրած ընթանում էր իր հունով և 1918թ.-ի գարնանը փոխարինելու էր գալիս 1918թ.-ի աշունը: Սեպտեմբերի 29-ին անձնատուր եղավ Բուլղարիան, հոկտեմբերի 30-ին՝ Թուրքիան, նոյեմբերի 3-ին՝ Ավստրո-Հունգարիան, և նոյեմբերի 11-ին վերջապես ծնկի եկավ նաև Գերմանիան: Եվրոպան, որը 4 տարի առաջ կազմ ու պատրաստ միայն սպասում էր Սարաևոյում Գավրիլո Պրինցիպի կողմից հնչեցրած կրակոցի նման մի առիթի, այժմ համարում էր արդեն պատե-

---

[121] Ս.Վրացյան, ՀՀ, էջ 186, 193; Ա.Խատիսեան, նշվ. աշխ., էջ 94, 96-112:

[122] ՀԱԱ,Ֆ 477, ց.1, գ. 23,թ.1:

րազմն իր համար ավարտված և պատրաստվում էր աշխարհի նոր վերաբաժանման իրականացմանը: Իսկ այդ աշխահի մեր անկյունն ունենալու հույսի նշույլը մեզ համար փայլփլեց 1918թ. հոկտեմբերի 30-ին, Հունաստանի Լեմնոս կղզում, որի Մուդրոս նավահանգստում խարիսխ գցած անգլիական «Ագամեմնոն» հածանավի վրա ստորագրվեց պատերազմում Թուրքիայի պարտությունն արձանագրող առաջին փաստաթուղթը՝ Մուդրոսի զինադադարը:[123] Հասկանալի է, որ Թուրքիայի «զգետնվելու» փաստն ինքն իրենով արդեն ընկալվում էր որպես չափազանց դրական մի երևույթ հայկական պետության և ամբողջ հայության համար, քանզի դրա շնորհիվ պետք է որ գոնե վերանար հայության հետագա զանգվածային ֆիզիկական բնաջնջման վտանգը: Զինադադարի 11-րդ կետի համաձայն թուրքական զորքերը պետք է դուրս բերվեին Անդրկովկասի տարածքից՝ մինչև նախապատերազմյան սահմանագիծը, իսկ Արևմտյան Հայաստանի («Թուրքահայաստանի») վերաբերյալ զինադադարի 24-րդ կետն ասում էր, որ *«Հայկական վեց վիլայեթներում անկարգությունների դեպքում դաշնակիցներն իրենց իրավունք են վերապահում օկուպացնել դրանց մի մասը»*:

Այս կետն էր, որից ոգևորված Չարենցի վարժապետ Սողոն «*դարերի մշուշի վրա գրում էր **"Վեց վիլայեթ"**»:*

Բայց աշխարհը հայերին այդ «վեց վիլայեթի» ակնարկով չէր պատրաստվում սահմանափակվել, ինչի շնորհիվ ոգևորությունը հայերի մոտ գնալով սաստկանում էր: Եվրոպական ու ամերիկյան պարբերականները, տարբեր բնույթի պաշտոնական ու կիսապաշտոնական լրատվամիջոցները լցված էին հայի աչքն ու ականջը շոյող տարաբնույթ պալատների, հանձնախմբերի, միությունների, շարժումների ու ասամբլեաների, պետական և ոչ պետական գործիչների և գործիչների խմբերի կողմից արված և ընդունված կոչերով, հայտարարություններով, բանաձևերով, ելույթներով և օդը ցնցող մի շարք այլ որոշումներով ու եզրակացություններով առ այն, որ «...*Հայաստանն այլևս ոչ մի պարագայում և երբեք չի կարող վերադարձվել Թուրքիային...*»,[124] որ «...*պետք է բացառվի, որ թուրքական կառավարման մի կարկատան, կամ էլ մի ստվեր հանկարծ մնան Հայաստանի վրա...*»,[125] որ Դաշնակիցները մտադիր են հայ ազգի հետագա ճակատագրի հետ կապված բոլոր հարցերին լուծում տալ «...*Հումանիզմի և Արդարության բարձրագույն օրենքներին համապատաս-*

[123] Diplomacy in the near and middle east, by J.C.Hurewitz, v.II, Toronto-New York-London, 1956, p. 36, 37; ՀՄԴՍԱՔՓ, էջ 537-539:
[124] Р.Г. Ованнисян, նշվ. աշխ., էջ 4:
[125] Նույն տեղում, էջ 8:

*խան*»:[126] Շեշտվում էր հայերի զգալի և անուրանալի դերակատարումը պատերազմական գործողություններում. սկզբից՝ հայկական կամավորական ջոկատների մասնակցությունը պատերազմում ռուսական բանակի կազմում, հետագայում՝ ռուսների կողմից Կովկասյան ռազմաճակատը մերկացնելուց և երկրամասից հեռանալուց հետո՝ արդեն զուտ հայկական ազգային զորամիվորումների կողմից ռազմաճակատի պահպանումը և թուրքական զորքին ցուցաբերած դիմադրությունը, ինչպես նաև ֆրանսիական բանակի կազմում հայկական լեգեոնի մարտական գործողությունները Կիլիկիայում:[127] Իսկ Բաքվի վրայով Երևան ուղարկած մի հեռագիր–ուղերձում միանշանակ ասվում էր, որ «...*Հայերը ճանաչվել են որպես պատերազմող կողմ, և նրանց տեղ է հատկացված Խաղաղության վեհաժողովում*»:[128]

Տարբեր ազգերի և պետությունների ճակատագիրը որոշող բազմաթիվ հարցերի շարքում, «մեր հարցը» նույնպես պետք է քննարկվեր ու լուծում ստանար 1919թ. հունվարին Փարիզում գումարվելիք Խաղաղության մեծ վեհաժողովում:

Հայկական պահանջները ներկայացնելու համար Փարիզ էին ժամանել 2 հայկական պատվիրակություններ՝ Ազգային պատվիրակությունը Պողոս Նուբարի գլխավորությամբ և ՀՀ պատվիրակությունը՝ Ավետիս Ահարոնյանի գլխավորությամբ: Սակայն հայկական պատվիրակություններից և ոչ մեկին ներս չթողեցին ժողովասրահ: Այն հիմնավորմամբ, որ հայերն այդ պահին չէին ներկայացնում ճանաչված պետություն:[129] Բայց հայերին հավաստիացրին, որ իրենց անպայման հնարավորություն կտրվի ներկայացնել վեհաժողովում իրենց պահանջները և որ այդ վեհաժողովում ակնհայտ է «*բոլոր մասնակիցների կողմից անկեղծ և բացահայտ արտահայտվող համակրանքը հայերի նկատմամբ*»[130] (նման դեպքերում գյումրեցիք սարկազմով ասում են, թե «տղեքը լավ են տրամադրված»):

Հայկական պատվիրակություններին իրոք տրվեց հնարավորություն վեհաժողովին ներկայացնել իրենց միասնական պահանջը: Մեծ տերությունների կողմից առաջարկվում էին հարցի լուծման մի քանի տարբերակներ:[131] Տարածքային փոխհատուցման չափերի առումով ասենք միայն, որ Սևրի պայմանագրով և հետագայում ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի Իրավարար վճռով հայկական կողմին

---

[126] Р.Г. Ованнисян, նշվ. աշխ., էջ 10:

[127] Նույն տեղում, էջ 5, 9, 28, 38:

[128] Նույն տեղում, էջ 29; Ս.Վրացյան, Կյանքի ուղիներով. Դեպքեր, դեմքեր, ապրումներ, 6 հատորով, Կահիրե-Բեյրութ, 1955-1967, հ. 5, էջ 35-36:

[129] Р.Г. Ованнисян, նշվ. աշխ., էջ 26-28, 35-37:

[130] Р.Г. Ованнисян, նշվ. աշխ., էջ 37:

[131] Նույն տեղում, էջ 12, 13, 46:

հատկացվելիք տարածքներն իրենց չափերով առաջարկվող տարբերակների մեջ ամենևին էլ ամենաճոխը չէին:[132] Վեհաժողովում հատուկ շեշտվում էր այն հանգամանքը, որ ցեղասպանության ենթարկված լինելու պատճառով հայերն իրենց տրամադրվելիք Արևմտյան Հայաստանի տարածքներում կազմելու են բնակչության ընդամենը 30-35%, ուստիև անհրաժեշտ է, որպեսզի այդ տարածքների վրա կազմվելիք հայկական պետության նկատմամբ սահմանվի միջազգային հսկողություն՝ որևիցե տերության կողմից Հայաստանի հանդեպ որոշակի ժամանակով համապատասխան մանդատ վերցնելու միջոցով: Մինչև որ բնական աճի և հայրենադարձության շնորհիվ հայերն իրենց պետության մեջ այլևս չկազմեն փոքրամասնություն:[133]

Իրոք որ, «տղերքը լավ էին տրամադրված»: Պարզապես բացակայում էր ամենակարևորը՝ այդ չափազանց հայանպաստ առաջարկների իրականացման գործնական մեխանիզմներն ու երաշխիքները: Իսկ ինչպես քաջ հայտնի է, առանց ուժային պարտադրանքի այս աշխարհում դեռևս ոչ մի պարտված կողմ կամավոր չի կատարել այս կամ այն պայմանագրի, կամ ի վնաս իրեն ընդունված որևէ այլ փաստաթղթի դրույթները: Հաղթող տերություններից և ոչ մեկը վեհաժողովի ժամանակ հարմար չգտավ հանձն առնել և համապատասխան գործողություններ սկսել որպես Հայաստանի մանդատակիր երկիր: Իսկ բառացիորեն արյունաքամ եղած հայությունն էլ առանց արտաքին զգալի նյութական, քաղաքական և բարոյական օժանդակության այդ պահին ի վիճակի չէր իր սեփական՝ ըստ էության գոյություն չունեցող ռեսուրսներով պարտադրել Թուրքիային կատարել այս կամ այն որոշումը: Զինադադարի կետերի կապացությամբ Ալեքսանդր Խատիսյանն ուղղակիորեն գրում է. «*Ծանոթանալով այդ պայմաններին՝ մենք ամիջապես ըմբռնեցինք, որ Հայաստանի ազատությունը ապահոված չէ: Զինադադարը չէր պահանջեր Հայաստանի գրավումը Դաշնակիցներու կողմէ, զինաթափ չէր ըներ Թուրքիան եւ կպարունակեր այն բոլոր դժբախտ կարելիութիւնները, որոնք ապագային իրողութիւն դարձան*»:[134] Ի դեպ, այդ օրերին այդ ամենը շեշտվում էր առաջին հերթին հենց մեծ տերությունների տարբեր ներկայացուցիչների կողմից:[135]

---

[132] Arbitral Award of the President of the Unated States of America Woodro Wilson, prepared with an introduction by Ara Papian, Yerevan, 2011, 327 p. (Ռուսերեն թարգմ.՝Арбитражное решение президента Соединненных Штатов Америки Вудро Вильсона, подг. с предисловием Ара Папян, Ереван, 2015, 327 с. )
[133] Р.Г. Ованнисян, նշվ. աշխ., էջ 44, 46:
[134] Ա.Խատիսեան, նշվ. աշխ., էջ 113:
[135] Р.Г. Ованнисян, նշվ. աշխ., էջ 42-46:

Այդ օրերին Փարիզ էին ժամանել նաև մեր բոլոր սահմանակից հարևանները՝ Վրաստանը, Ադրբեջանը, Պարսկաստանը, ինչպես նաև գլխավոր հանցագործն ու պատասխանողը՝ Թուրքիան: Եվ մեր բոլոր հարևաններն էլ Փարիզում տարածքային պահանջներ էին հնչեցնում այդօրվա հայկական պետության նկատմամբ: Բացառություն էր Թուրքիան, որը հայությունից իր բոլոր պահանջների բավարարումը ստացել էր վաղօրոք:

Պարսկաստանն, օրինակ, պահանջում էր վերականգնել պարսկական կայսրության սահմանները և Հայաստանից իրեն վերադարձնել նախկին Էրիվանի ու Նախիջևանի խանությունների տարածքները: Բարեբախտաբար, դա կրում էր ընդամենը դեկլարատիվ բնույթ, և Հայաստանի ու Պարսկաստանի հարաբերություններն առաջին Հանրապետության օրոք միշտ էլ մնացին ջերմ ու բարիդրացիական:

Վրացական կողմը, ի դեմս Նիկոլայ Չխեիձեի և Իրակլի Ծերեթելու կարողացան հաղթող տերությունների մոտ կոտրել ու լղոզել այն նեգատիվ հանգամանքը, որ մի քանի ամիս առաջ Վրաստանը համագործակցել է Գերմանիայի հետ և նույնիսկ եղել է վերջինիս հովանավորյալը: Ամեն դեպքում, վրացիները հասան նրան, որ Փարիզում իրենց սկսեցին ընկալել ոչ թե որպես Անտանտի գլխավոր հակառակորդի հետ համագործակցած կողմ, այլ որպես վրաց հայրենասերներ, որոնք հանուն իրենց ազգի ու պետության փրկության ճարահատյալ դիմել են Գերմանիայի օգնությանը: Հայկական կողմի հետ առնչվող տարածքների վերաբերյալ նրանք անվիճելի վրացապատկան էին հայտարարում ճնշող մեծամասնությամբ հայերով բնակեցված Ջավախքն ու Լոռին, ինչպես նաև Կարսի մարզի հյուսիսային մասը՝ Արդահանի և Օլթիի շրջանները:[136]

Ադրբեջանն առանց որևիցե բարդույթի և, ինչպես ասում են, «առանց անհարմար զգալու» իր բացահայտ թուրքական կողմնորոշումից, նույնպես «ձայն մը հնչեցրեց» Փարիզում: Ադրբեջանը ներկայացնում էին այդ օրերի հայտնի մահմեդական ինտելեկտուալներ և քաղաքական գործիչներ Ալի Մարդան Թոփչիբաշևն ու Մեհմեդ Էմին Ռասուլ-զադեն: Փարիզում Ադրբեջանը հայտարարում էր, որ անխոս իրենը պետք է լինեն նախկին Ելիզավետպոլի գուբերնիայի կազմի մեջ մտնող բոլոր հայաբնակ տարծքները՝ այդ թվում, և առաջին հերթին Զանգեզուրն ու Ղարաբաղը, Էրիվանի գուբերնիայի հարավային և հարավ-արևմտյան հատվածները՝ առաջին հերթին Նախիջևանն ու Սուրմալուն, Կարսի մարզը և, անցնելով Վրաստան՝ Ախալքալաք-Ախալցխայով մինչև Բաթում:[137]

[136] Նույն տեղում, էջ 71-73:
[137] Р.Г. Ованнисян, նշվ. աշխ., էջ 73,76,77:

Ինչ վերաբերում է Թուրքիային, ապա նրա ներկայացուցիչ մեծ վեզիր Դամադ Ֆերիդ-փաշան հաղթողների առջև վեհաժողովում հանդես եկավ սրտաճմլիկ ու ինքնագանահարմամբ լի հոգեցունց մի մեղայականով: Նա չժխտեց, որ թուրքական կողմն իրոք «*իրականացրել է ոճրագործություններ, որոնք սփիպեցին սարսափից ցնցվել մարդկության գիտակցությունը*», սակայն շեշտեց, որ իրական մեղավորը ոչ թե թուրք ժողովուրդն է, այլ գերմանական կառավարությունը և երիտթուրքական կուսակցությունը: Իսկ մեղայական այդ ճառը թուրք վեզիրն ավարտեց այն մտքով, որ արդար կլինի կնքել խաղաղության այնպիսի պայմանագիր, որով պարտված ու հանցագործ Թուրքիան մնա իր նախապատերազմյան սահմաններում:[138]

Ինչևիցե, տարուց ավել տևած այդ վեհաժողովից հետո՝ Եվրոպայում անցնելով Փարիզ–Լոնդոն–Սան-Ռեմո–Սևր ճանապարհը, թղթի վրա ունեցանք Սևրի պայմանագիրը՝ իր հսկայական տարածքային ձեռքբերումների հեռանկարներով,[139] իսկ իրական կյանքում՝ Մոսկվայի[140] և Կարսի[141] պայմանագրերը՝ մեզ համար նորանոր մեծածավալ տարածքային կորուստներով և տասնյակ հազարավոր մարդկային զոհերով: Թողնենք, սակայն, վեհաշուք Փարիզը և տեղափոխվենք բառացիորեն կենաց-մահու կռիվ տվող 1918-ի աշնան Հայաստան:[142]

## I.8. Հետմուդրոսյան հողահավաքի ջանքեր տեղում. անհաջողություններ և որոշ ձեռքբերումներ

Մուդրոսի զինադադարը, ընդհանուր առմամբ բավարարելով հաղթող տերություններին, պատերազմում ամենամեծ կորուստներ կրած հայության համար փոխհատուցման ու վերածնման համար հիմք հանդիսանալու առումով Թուրքիայի նկատմամբ բավականաչափ խիստ չէր: Զինադադարի պայմաններն, օրինակ, խիստ դժգոհություն առաջ բերեցին բրիտանական պառլամենտում, քանզի, ըստ անգլիացի օրենսդիրների, այդ բովանդակությամբ կնքված փաստաթուղթը չէր ապահովում թուրքական զորքերի անհապաղ

[138] Նույն տեղում, էջ 123-131:

[139] Treaty of Peace with Turkey (signed at Sevres, August 10, 1920), London, 1920, p. 25, 26; Севрский мирный договор и акты, подписанные в Лозанне (под ред. Ю.В.Ключникова и А.В.Сабанина), М., 1927, с. 31, 32.

[140] ДВП СССР, т.3, М., 1959, с. 597-607.

[141] ДВП СССР, т.4, М., 1960, с. 420-429.

[142] Վրացյանի ներկայացմամբ, անկախության հայտարարմանն հաջորդած 6 ամիսների ընթացքում սովից ու հիվանդություններից երկրում մահացել է 180.000 մարդ, և այդ զարհուրելի վիճակը տևել է մինչև 1919թ. գարուն, երբ Հայաստան է հասել ամերիկյան ալյուրը; տե՛ս Ս.Վրացյան, ՀՀ, էջ 200:

դուրսբերումն Անդրկովկասից, մասնավորապես, Կարսի մարզից, ինչպես նաև չէր ապահովում թուրքական զինված ուժերի վերահսկելի զորացրումն Արևմտյան Հայաստանի տարածքում:[143] Բայց, ինչպես ասում են, եղածից էլ պետք է շնորհակալ լինենք. ի վերջո այդ զինադադարը կնքվում էր ոչ թե հայերի, այլ հենց մեծ տերությունների պահանջներին համապատասխան, իսկ մենք պետք է կարողանայինք դրանում ամրագրված պայմանները հնարավորինս ծառայեցնել մեր շահերին: Նույնը, բնականաբար, ձգտում էին իրագործել նաև մեր հարևանները:

Ինչևիցե, զինադադարի կնքումից հետո թուրքական զորքերը սկսեցին աստիճանաբար դուրս գալ Անդրկովկասից, և փոխարենը տարածաշրջան սկսեց մտնել անգլիական զինուժը: Թուրքերի հեռանալուց հետո Անդրկովկասի 3 երկրները պետք է տեր կանգնեին իրենց տարածքներին, այդ թվում՝ նաև լուծումներ փնտրեին վիճելի տարածքների վերաբերյալ: Արդեն 1918թ. նոյեմբերի 15-ին ՀՀ կառավարության նիստում քննարկում է ծավալվում և ընդունվում համապատասխան որոշում պարտված թուրքական զորքերի՝ Անդրկովկասից հեռանալու հետ կապված հարցերի մասին,[144] իսկ 1918թ. դեկտեմբերի 6-ին հայկական զորքերը Դրոյի գլխավորությամբ մտան Ալեքսանդրապոլ և հայ-թուրքական սահմանը եկավ մոտավորապես 1877թ. ռուս-թուրքկան սահմանի դրության: Բայց միաժամանակ, թուրքական զորքերի կողմից Ջավախքի և Բորչալուի–Լոռվա տարածքները թողնելուց հետո շատ արագ սրվեցին հայ-վրացական հարաբերությունները: Հարցը նրանում էր, որ մեր դրացի վրացիները այդ տարածքների նկատմամբ իրենց ունեցած հավակնությունների նախկին «հիմնավորումներին» հիմա էլ ավելացրել էին նաև այն, թե հայերին Արևմտյան Հայաստանից էնքա՞ն հողեր են տալու, թող գոնե էսքանն էլ մեզ լինի: Եվ, օգտվելով այդօրվա մեր ծանր, ուժասպառ վիճակից, որոշեցին, որ իսկը ժամանակն է «*սապկած էշի նալերը քաշել*» և կառավարության հրահանգով վրացական զորախմբերը սկսեցին զբաղեցնել հայկական Լոռվա ու Ջավախքի բնակավայրերը: Բայց չէ՞ որ նույն իրավիճակի համար ասված է նաև, թե «*ուխտն ինչքան էլ ընկնի, կաշին էլի յոթը էշի բեռ կանի*»: Հայկական կողմը, չցանկանալով ավելի թեժացնել առանց այն էլ սրված իրավիճակը, առանց պաշտոնապես պատերազմ հայտարարելու սկսեց դուրս մղել վրացական ջոկատները Ղարաքիլիսա-Թիֆլիս երկաթգծի ամբողջ երկայնքով: 1918թ. դեկտեմբերի 31-ի ժ.

[143] Р.Г. Ованнисян, նշվ. աշխ., էջ 7, 8:

[144] Հայաստանի Հանրապետությունը 1918-1920թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութեր ժ-ծու, Երևան, 2000թ., էջ 70:

24.00-ին, երբ Անգլիայի և Ֆրանսիայի անդրկովկասյան ներկայացուցիչների միջամտության շնորհիվ կողմերն համաձայնվեցին դադարեցնել ռազմական գործողությունները, Դրոյի գլխավորած հայկական զորաջոկատը կանգնած էր Թիֆլիսից ընդամենը 40-45կմ հեռավորության վրա: Այդ երկշաբաթյա պատերազմից հետո կողմերից ամեն մեկն իրեն համարեց հաղթանակած: Կողմերից երկուսն էլ ճիշտ էին: Զուտ ռազմական տեսակետից հաղթանակը բացահայտորեն հայերի կողմն էր. այն արտահայտվում էր գրաված տարածքներով, զգալի ռազմավարով[145] և ի վերջո՝ զինադադարի պահին հայկական զորքի կանգնած դիրքերով: Պատերազմի վերջնական արդյունքի տեսակետից Հայաստանի այդ ռազմական հաղթանակը, ավաղ, վերածվեց նրա դիվանագիտական պարտության, քանզի անգլիական կողմը պրակտիկորեն ուլտիմատիվ կերպով հայկական կողմին ստիպեց Լոռիում զորքերը ետ բերել մինչև Դսեղ–Ջալալ-օղլի (այսօր՝ Ստեփանավան) գիծը, ստեղծելով այդտեղ անգլիական վերահսկողության ներքո, այսպես կոչված, «Լոռվա չեզոք գոտի»: Նման ուժային կեցվածքով էլ անգլիացիք Ջավախքն ամբողջությամբ հանձնեցին Վրաստանին: Սա էր այդ պատերազմի վերջնական արդյունքը, ըստ էության՝ վրացական կողմի անհերքելի հաղթանակն ու մեծ ձեռքբերումը:[146]

Անգլիացիների կողմից նման որոշում կայացնելն ամենևին թելադրված չէր պահի ինչ-որ յուրահատկությամբ և ամենևին չէր կրում ինչ-որ իրավիճակային բնույթ: Դա տարածաշրջանային մշակված քաղաքականության կոնկրետ դրսևորում էր: Մասնավորապես, Բրիտանական արտաքին գործերի նախարարության՝ 1918թ. նոյեմբերի 21-ի հուշագրում Ախալքալաքի և Ախալցխայի վերաբերյալ նշվում էր, որ *«…իրենց ազգային հատկանիշներով այդ ույեզդները պետք է պատկանեն Հայաստանին, սակայն ռազմավարական տեսակետից նրանք իշխում են Վրաստանի սրտի վրա և ամբողջովին վերցրած նպատակահարմար է դիտվում դրանք հանձնել Վրաստանին, միաժամանակ հնարավորություն տալով այդ շրջանների հայ բնակիչներին արտագաղթի ընտրություն կատարել դեպի հարավ-արևմուտ-*

---

[145] Այդ կարճ ժամանակահատվածում հայերը վրացական կողմից վերցրին 28 հրանոթ (4 հաուբից), 75 գնդացիր, 25 հազար հրացան, Սանահինի, Վորոնցովկայի ու Սադախլոյի ռազմական պահեստները՝ հանդերձանքով ու այլ պիտույքներով, որոնք գերմանացիների կողմից թողնվել էին վրացիների համար, մեծ քանակությամբ փամփուշտներ, արկեր, 3 զրահապատ գնացք, 30 շոգեքարշ և 300 վագոն: Բացի այդ, Սադախլոյում առգրավվել էր մեծ քանակության ալյուր և եգիպտացորեն; տե՛ս Վ.Հարությունյան, Հայ-վրացական…, էջ 39, 40, 61; ՀԱԱ, Ֆ. 275, ց.2, գ.5,թ.20:

[146] Ա.Խատիսեան, նշվ. աշխ., էջ 131; Վ.Հարությունյան, 1918թ. Հայ-վրացական…, էջ 104; ՀԱԱ, Ֆ. 275, ց.2, գ.5,թ. 38, 39:

*քում հայերին փրամադրվելիք ընդարձակ հողափարածքները»*:[147] Ինչ-որ չափով իրավիճակային կարելի է համարել Լոռիում չեզոք գոտու ստեղծումը. տեսնելով հայկական և վրացական բանակների մարտունակություններն իրական գործի մեջ, այդ չեզոք գոտին ստեղծվեց հավանաբար, այդ ուղղությամբ նույնպես «*Վրաստանի սիրտը*» հայերից ապահովագրելու նպատակով:

Նույնպիսի անզիջում դիրքորոշում ունեին անգլիացիք նաև Ղարաբաղի հարցում:[148] Ֆորին Օֆիսի նույն հուշագրին կցված քարտեզում Ղարաբաղն առանձնակի էր շրջագծվել, իսկ ուղեկցող տեքստում էլ ասվում էր հետևյալը.

«*Սարերում առկա է մեծաթիվ հայկական բնակչություն, որը պահպանել է իր ազատությունը Պարսկաստանից նախառուսաստանյան ժամանակաշրջանում և դիմագրավել է թուրք զավթիչներին վերջին մի քանի ամիսների ընթացքում: Պատմական պատճառներով այն (Ղարաբաղը – Վ.Հ.) պետք է անցնի Հայաստանին, սակայն այնտեղ (Ղարաբաղում – Վ.Հ.) առկա է նաև ուժեղ ադրբեջանական բնակչության տարրը: Ուստի, որպես հարցի լավագույն և միջանկյալ կարգավորում կարող է հանդես գալ մի շարք շրջաններում հայերի և ադրբեջանցիների փարանջատման իրականացումը՝ համոզելով ղարաբաղյան հայերին արտագաղթել Երևանի շրջան, իսկ երևանյան ադրբեջանցիներին՝ տեղափոխվել Ղարաբաղ»:*[149]

Եվ այդ քաղաքական գծին համապատասխան, Մուդրոսի զինադադարից հետո Անդրկովկասում բրիտանական ներկայացուցչությունը բառացիորեն ամեն գնով ու տարբեր եղանակներով թույլ չտվեց, որպեսզի հայկական կողմը հօգուտ իրեն լուծեր Ղարաբաղի շուրջ սարքած մտացածին ու անհիմն տարածքային վեճը, ինչի հնարավորությունն այդ օրերին (ինչպես և այս օրերին) Հայաստանն ուներ:[150]

---

147 Р.Г. Ованнисян, նշվ. աշխ., էջ 49:

148 Ա.Խատիսեան, նշվ. աշխ., էջ 167-9, Ս.Վրացյան, ՀՀ, էջ 256, 259, 327-35:

149 Տ.Ն.Սարուխանյան, Մեծ Բրիտանիան և Ղարաբաղի հարցը (1918-20թթ.), Լրաբեր Հասարակական Գիտությունների, № 3, 2013, էջ 39-50; Р.Г. Ованнисян, նշվ. աշխ., էջ 49, 53, 66: Այդ օրերի համար Վրացյանը բերում է հետևյալ տվյալները Ղարաբաղի բնակչության վերաբերյալ. «Ղարաբաղի լեռնաստանում 1917թ. տվյալներով ապրում էին՝ հայեր՝ 150.000, մուսուլմաններ՝ 58.000, այլ ազգեր՝ 5.000: Այժմ ազգությունների թվական հարաբերությունը միանգամայն փոխված է: Ուրիշ ազգերից ռուսները հեռացել են Ռուսաստան: Դրա դիմաց լեռներն են ապաստանել տափաստանում եղած հայ գյուղերի բնակիչները: Այսպիսով, հայկական Ղարաբաղում հայկական տարրն ավելի է ամրացել թվով»; տե՛ս Ս.Վրացյան, ՀՀ, էջ 327-328:

150 Գ.Մախմուրյան, Անգլիական ռազմական վարչակարգը Անդրկովկասում և Հայաստանի կառավարությունը (1918թ. դեկտեմբեր – 1919թ. օգոստոս), Լրաբեր Հասարակական Գիտությունների, №2, 2001, էջ 62-80; Բանբեր Հայաստանի Արխիվների, 1(83), Երևան, 1989, էջ. 88-9; Հ.Աբրահամյան, Անգլիական նվաճողների քաղաքականությունը Արցախի նկատմամբ (1918թ. նոյեմբեր – 1919թ. օգոստոս), Լրաբեր հասարակա-

Ադրբեջանում ցայսօր դասագրքային մակարդակով անգամ շեշտվում է, որ «*В споре Азербайджана и Армении о Карабахе, Зангезуре и Нахчиване английское командование взяло сторону азербайджанцев (декларация генерала Шатерворта, апрель 1919г. о распространении власти генерал-губернатора Хосров-бека Султанова на все уезды Карабаха и Зангезура и поддержке его англичанами)*»:[151]

Ի դեպ, բավականին ուշագրավ է, որ այդ օրերին բոլշևիկների (առաջին հերթին՝ հայ բոլշևիկների) կողմից հնչեցրած մոտեցումները Ղարաբաղի հարցի վերաբերյալ ոչ թե համահունչ են,այլ ըստ էության միանգամայն համրնկնում են անգլիական դիրքորոշման հետ, գրեթե բառացի կրկնելով այն. «…*Ղարաբաղը (Ելիզավետպոլի գուբերնիայի կեսը), որտեղ բնակչության մեծամասնությունը կազմում են հայերը, երբևիցե Ադրբեջանին չի ենթարկվել և նրա մասը չի հանդիսանում: Սակայն…. Ղարաբաղի բնակչության կենսական շահերը պահանջում են, որպեսզի նա լինի Ադրբեջանի կազմում…*»:[152]

Ինչևիցե, 1918թ. վերջին 2 ամիսների ընթացքում ՀՀ իշխանությունների փորձերն իրենց իշխանությունը հաստատել Ջավախքի, Լոռվա հյուսիսային հատվածի և Ղարաբաղի հայկական տարածքների վրա կրեցին անհաջողություն: Այդ ժամանակահատվածում չհաջողվեց Հայաստանին միացնել նաև Էրիվանի գուբերնիայի Շարուր-Դարալագյազի և Նախիջևանի ույեզդները:[153] Հասկանալի է, որ տեղական անգլիական վարչակարգի ուղղակի ճնշման հետևանքով հայոց հայրենիքի մի քանի հատվածների նման ձևի օտարումը, հարյուր հազարավոր գործնականում բացառապես հայկական հոծ բնակչություն ունեցող և բնական պաշարներով բավականին հարուստ հայկական այդ գավառների չընդգրկումը ՀՀ կազմում հայկական պետությանը զրկեց այդ պահի համար չափազանց կարևոր և չափազանց շոշափելի ծավալով մարդկային ու տնտեսական ռեսուրսներից: Ընդ որում, Հայաստանը որևիցե ռազմական պարտություն այդ ընթացքում չի կրել: Այդ քայլերի անհաջողության պատճառները զուտ քաղաքական էին, որոնց վրա ներազդել և ինչ-որ կերպ փոխել դեպքերի ընթացքը Հայաստանի այդօրվա կառավարությունը ոչ թե

---

կան գիտությունների, №7, Երևան, 1989, էջ 13-23; Հայաստանի Հանրապետությունը 1918-1920թթ., փաստաթղթերի և նյութերի ժ-ծու, Երևան, 2000թ., էջ 71:

[151] История Азербайджана с древнейших времен до начала XX в. (Под ред. чл.-корр. АН Азербайджана Играра Алиева), Баку: Элм, 1995, с. 196.

[152] Վ.Հարությունյան, Հայ բոլշևիկների հակապետական գործունեությունը 1919-1920թթ., Փաստաթղթերի ժ-ծու, Երևան, 2014, էջ 76 (հետայսու՝ Վ.Հարությունյան, Հայ բոլշևիկների…):

[153] Генералъ А.И.Деникинъ, Очерки русской смуты, т.4, Вооруженные Силы Юга Россіи, 1925, Париж-Берлинъ (Библиотека “Руниверс” http://www.runivers.ru/bookreader/book479778/), с. 172.

ի վիճակի և կամ էլ ի զորու չէր, այլ պարզապես այդ ամենը, ինչպես տեսանք, գտնվում ու որոշվում էր նրա կորողությունների ու հնարավորությունների շրջանակներից ու իր հասանելիության տիրույթներից շատուշատ հեռու: Ճիշտ է՝ բերվում էր նաև այն հիմնավորումը, թե *« ...Անգլիացին չի հավատա հային, ավանդաբար համարելով սրան անուղղելի ռուսասեր, ռուսական օրիենտացիայի անհողդողդ հետամտող... Անգլիան չի ուզում հենվել որևէ հայ ուժի վրա, որովհետև իր կարծիքով (և, դժբախտաբար, ոչ միայն իր կարծիքով) հայն ավելի է ռուս, քան ինքն ռուսը և չի կարելի հենվել հայի վրա...»:*[154]

ՀաՀ-ի ԱԳՆ արխիվում 1919թ. սեպտեմբերի 16-ով թվագրված բավականին միամիտ, սակայն պերճախոս մի փաստաթղթում սևով սպիտակին գրված է. «...*անգլիացիք Կովկասում իրենց ներկայության ամբողջ ընթացքում յեղել են վոչ անկեղծ դեպի մեզ և վարել սիստեմատիկաբար մուսուլմանական քաղաքականություն... Ղարաբաղի և նրա հարակից խնդիրներում գեն. Տոմսոն և իր գործակիցները և հաջորդները գործել են ոչ իրենց գլխու, այլ արտաքին և զորական Մինիստրությունների գիտությամբ և համաձայնությամբ...»:*[155]

Այդ ամենով հանդերձ, սակայն, ՀՀ տարածքն այդ նույն ժամանակահատվածում նաև որոշակի չափով ընդլայնվեց: Անէության գիրկն անցավ Բաթումի չվավերացված պայմանագիրը և արևմտյան ուղղությամբ ՀՀ կազմի մեջ սկսեցին ներգրավվել Բաթումի պայմանագրով Թուրքիային անցած նախկին Էրիվանյան գուբերնիայի Ալեքսանդրապոլի, Էջմիածնի, Սուրմալուի ույեզդների տարածքները: Օգտվելով վրաց-ադրբեջանական հակասություններից՝ հայերը կարողացան այդ ժամանակ իրենց հսկողությունը հաստատել նաև Ղազախի ույեզդի հայաբնակ լեռնային մասում:[156]

Այդ օրերին սեփական Հայրենիքի տարածքներին տիրանալու գործընթացների հաջողությունների և անհաջողությունների վերաբերյալ հայկական կողմի քայլերի արդյունավետության մասին թերևս չափազանց շիտակ ու ճշգրիտ արտահայտվել է ՀաՀ-ի 2-րդ վարչապետ Ա.Խատիսյանը. «*Եւրոպական ներկայացուցիչները՝ Ուօրփրոպ, կոմս փը Մարթել և ուրիշներ շարունակ կ'ըսէին մեզի բերանացի և թե գրավոր կերպով թե «բոլոր հողային հարցերը պիտի լուծուին Փարիզի խորհրդաժողովին մեջ»: Լուծուեցան միայն այն հարցերը որոնց լուծման Հայաստանի Հանրապետութիւնը ձեռնարկեց ինքը անմիջապես, առանց ուրիշներու միջնորդութիւնը կամ միջամտութիւնը սպասելու»:*[157]

Անհրաժեշտ շեղումներից հետո կրկին շարժվենք Կարսի մարզ:

---

[154] Ս.Վրացյան, ՀՀ, էջ 259,260:
[155] ՀԱԱ, Ֆ. 200, ց.2, գ.62,թ. 1, 2:
[156] Ռուբէն, նշվ. աշխ., էջ 181:
[157] Ա.Խատիսեան, նշվ. աշխ., էջ 155:

## I.9. Հետմուդրոսյան հավակնությունները Կարսի նկատմամբ

Մուդրոսի զինադադարի պայմանների գործնական իրագործումը ենթադրում էր նաև, որ քանի դեռ Փարիզի վեհաժողովի կողմից չի կայացվել վերջնական որոշում տարածաշրջանի երկրների սահմանների վերաբերյալ, Թուրքիան պետք է թողնի Կարսի մարզը և այդ հատվածում ետ քաշի իր զորքերը առնվազն մինչև 1914թ. ռուս-թուրքական սահմանը: Զորքերի դուրսբերման գործընթացը՝ թեև չափազանց դանդաղ և չափազանց ծուլորեն, բայց, համենայնդեպս գործի դրվել էր: Բայց թուրքերի հեռանալուց հետո ո՞ւմ էր բաժին հասնելու Կարսի մարզը: Ոմանց համար նման հարցադրումը միգուցեև ինչ-ի անիմաստ, սակայն այդ օրերի իրադարձություններն ու դեպքերի ընթացքը ցույց են տալիս, որ մարզի միացումը Հայաստանին ամենևին էլ միարժեքորեն ու անհերքելիորեն որոշված չէր, և մարզի հանդեպ իրոք առկա էին և ներկայացվում էին լուրջ հավակնություններ նաև մի քանի այլ կողմերից:

Ինչպես արդեն նշվել է, Անդրկովկասից թուրքական զինուժի դուրս գալուն զուգահեռ երկրամաս էին մտնում հաղթանակած Դաշնակից ուժերը՝ ի դեմս բրիտանական զորամիավորումների: Զուտ պաշտոնական առումով *«… անգլիացիները Անդրկովկաս ժամանեցին դաշնային Գերագույն խորհրդի ծրագրով. ազգերի ինքնորոշումն ըստ Վիլսոնի, սահմանների վերաբերյալ status quo-ի պահպանումը մինչև խաղաղության վեհաժողովի որոշում կայացնելը, նոր պետական գոյացումների ներքին գործերին չմիջամտելը»*:[158] Բայց իրականում միանգամայն հասկանալի էր, որ չնայած նրան, որ անգլիացիք զուտ ձևական առումով Անդրկովկասում օժտված չէին «տարածաբաշխական» լիազորություններով, սակայն այդ պահին երկրամասում գերագույն ատյանն իրականում իրենք էին, և Կարսի հետագա ճակատագրի որոշման հարցում այդ պահին վճռական ու ծանրակշիռ էր լինելու հենց բրիտանական կողմի վճիռը: Կարսը կհանձնվեր նրան՝ ինչպես որ դա կատարվեց, օրինակ, Ջավախքի և Ղարաբաղի պարագաներում, ում որ իր տարածաշրջանային քաղաքականության ծիրի մեջ այդ դերակատարման համար առավել հարմար կգտներ տեղի բրիտանական ներկայացուցչությունը: Այնպես որ, թեև Անդրկովկասի մի շարք տարածքների նման, Կարսն էլ սկսեց վերահսկվել անգլիացիների կողմից, բայց նրա հետագա ճակատագրի առումով դա որևիցե որոշակիության դեռևս չէր հանգեցնում: Անգլիացիների գալուց հետո Կարսի հետագա կարգավիճակը, դրա ապագա պատկանելությունն ու կառավարումը դեռևս մնում էին մի տեսակ օդից կախված ու անհասցե:

---

[158] Генералъ А.И.Деникинъ, նշվ. աշխ., էջ 141:

Բացի ՀՀ-ից Կարսի մարզի հանդեպ այդ օրերին իրենց հավակնություններն էին ներկայացնում հետևյալ կողմերը. ռուսականը, վրացականը և թուրք-ադրբեջանականը (մահմեդականը):

### *I.9.1. Ռուսական հավակնությունները*

1918թ. աշնան-1919թ. գարնան ամիսներին վերաբերող ժամանակահատվածում խոսք չի կարող գնալ կովկասյան ուղղությամբ իրականացվող ինչ-որ միասնական ռուսական պետական քաղաքականության մասին: Ռուսաաստանն այդ օրերին թաղված էր քաղաքացիական կռիվների քաոսի մեջ, բոլշևիկյան կառավարությունը Բաքվի կոմունայի անկումից հետո (31 հուլիսի, 1918թ.) Անդրկովկասում ոչ մի կերպ և ոչ մի տեղում ներկայացված չէր: Ավելին, այն միանգամայն կտրված էր երկրամասից, իսկ բոլշևիկյան Ռուսաստանի այդ օրերի իրական վիճակը ամենից ճիշտ բնութագրել է, թերևս, նրա կարկառուն առաջնորդներից մեկը՝ Լև Բրոնշտեյն-Տրոցկին. *«մենք բոլորս էլ դիակ ենք, պարզապես մեզ թաղող չկա»*: Ի՞նչ Կովկաս, ի՞նչ Անդրկովկաս… Ինչպես ինքը՝ ռուսն է ասում. «Не до жиру, быть бы живу»:

Կոլչակի իշխանությունը տարածվում էր Կենտրոնական Ռուսաստանից դեպի արևելք, այնպես որ անդրկովկասյան պետությունների և առհասարակ այս տարածաշրջանի հետ այսպես թե այնպես անմիջական շփումներ իրականացնում էր գեներալ Անտոն Դենիկինի գլխավորած կամավորական շարժումը՝ ի դեմս Ռուսաստանի Հարավի Զինված Ուժերի: Հենց այդ ուժն էլ ներկայանում էր ռուսական կողմից, այսօրվա լեզվով ասած, որպես կովկասյան խաղացող: Գեներալ Դենիկինը «*միացյալ և անբաժանելի Ռուսաստանի*» գաղափարի կրողն ու հավատարիմ զինվորն էր, և իր իսկ խոսքերով այս տարածաշրջանում իր գլխավոր նպատակն էր «… *պետական կապի պահպանումը Ռուսաստանի և Անդրկովկասյան ծայրամասի միջև, կամ էլ առնվազն՝ հնարավորինս սահմանափակել երկրամասի տարածքային քայքայումը…»*:[159] Դենիկինյան քաղաքականությունը ենթադրում էր, որ *«…Անդրկովկասը 1914թ. սահմաններում հարկ է դիտարկել որպես Ռուսաստանյան պետության անբաժանելի մաս»,*[160] ուստիև անհրաժեշտ է *«… հող նախապատրաստել այդ տարածքները Ռուսաստանի հետ վերամիավորելու համար՝ համառուսաստանյան գերագույն իշխանության կառավարման ներքո»:*[161]

---

[159] А.С.Пученков, Национальная политика генерала Деникина (весна 1918-весна 1920г.), Санкт-Петербург, 2012, с. 77-138; Генералъ А.И.Деникинъ, նշվ. աշխ., էջ 136:

[160] А.С.Пученков, նույն տեղում; Генералъ А.И.Деникинъ, նշվ. աշխ., էջ 137,138:

[161] Генералъ А.И.Деникинъ, նույն տեղում:

Բայց ժամանակները փոխվել էին: Դենիկինը, թեև իր տրամադրության տակ ուներ զգալի ռազմական ուժ և վերահսկում էր Ռուսաստանի հարավում շատ մեծ տարածքներ, սակայն չէր ներկայացնում որևէ պետական միավորում, և իր իսկ խոստովանվամբ անգլիացիների կողմից իր ուժերը դիտվում էին «...*ընդամենը որպես հակաբոլշևիկյան միավորումներից մեկը...*» և որ անգլիացիների պլանների մեջ ամենևին չէր մտնում հզոր և միասնական Ռուսաստանի վերականգնումը, այդ թվում նաև՝ կովկասյան տարածաշրջանում այդ նոր Ռուսաստանի ազդեցության վերականգմանն օժանդակելը:[162]

Կարսի հարցում, ռուսական-դենիկինյան գիծն ու հավակնությունները դրսևորվում էին արդեն ավելի կոնկրետ ու գործնական տեսքով: Բերենք որոշ հատվածներ մի քանի զեկուցագրերից, որոնք հղվել են այդ օրերին Հայաստանում դենիկինյան բանակի ներկայացուցիչների կողմից իրենց հրամանատարությանը.

*«...բավականին հրատապ մի հարց. հունվարի կեսին (1919թ. – Վ.Հ.) թուրքերը պետք է ետ գնան 1914թ. սահմանագծից այն կողմ: Ըստ այդմ, ցանկալի կլիներ հարաբերակցվել նրանց հետ և Բաթումում իրականացնել թեկուզ ոչ մեծ ափհանում և ընդունել այդ շրջանը թուրքերից...»,*[163]

*«...Թուրքերը զբաղեցնում են Կարսի նահանգը, սակայն հունվարին ետ են քաշվելու 1914թ. սահմանից այն կողմ: Կարս-Բաթում շրջանի բնակչությունը տրամադրված է հայերի դեմ: Ըստ դրան էլ ես առաջարկեցի անգլիացուն /կապիտան Գրինին/ այդ տարածքում ստեղծել գեներալ-նահանգապետություն և գլխավոր պաշտոնում նշանակել մեր Գլխավոր շտաբի սպաներից մեկին /գնդապետ Զենկևիչին/...»,*[164]

*«Թանկագին Վլադիմիր Վլադիմիրովիչ: Ժամանելով Կարս՝ ես այստեղ պատահաբար հանդիպեցի անգլիացի մի մայորի, որն այստեղ էր եկել մեր և գեներալ Բիչի միջև կապն իրականացնելու համար: Ցավում եմ, որ նրա հետ Դուք ինձ ոչ մի բան չեք ուղարկել... Այժմ գրում եմ Կարսից՝ վագոնում նստած: Դրությունն այստեղ բավականին վտանգավոր է, քանզի անգլիացիներն այստեղ բոլոր տեղերում որպես գլխավոր անձ նշանակում են հայերին: Սրանք էլ այստեղ են բերում առավելապես դաշնակցականներին, ընդ որում՝ ապաշնորհներին: Երեկ երեկոյան ինձ մոտ եկած միապղմանական պատվիրակությունը հայտարարեց, որ բացի ռուս նահանգապետից որևէ այլ նահանգապետ իրենք չեն հանդուրժի: Առավել ևս՝ հայի: Նրանք առաջարկեցին ինձ մնալ Կար-*

[162] Генералъ А.И.Деникинъ, նշվ. աշխ., էջ 139,142:

[163] ՀԱԱ, ֆ.275, ց.2, գ.5,թ.23:

[164] ՀԱԱ, ֆ.275, ց.2, գ.5,թ.30:

*սում՝ մարզը կառավարելու համար, սակայն ես բացատրեցի, որ ինքս ինձ չեմ կարող նահանգապետ նշանակել, սակայն այս ամենի մասին կզեկուցեմ և, եթե ինձ նշանակեն, ապա կգամ, հնարավոր է, որ ուղարկեն մեկ ուրիշի: Պատվիրակները հայտարարեցին, որ իրենք կազմավորված են և ունեն զինուժի բոլոր տեսակները, մեծ քանակի զենք և արկեր: Եթե իրենց համար այստեղ ռուս նահանգապետ չնշանակեն, ապա իրենք ոչ մեկին այստեղ թույլ չեն տա մուտք գործել և կգերադասեն բոլորը մեռնել, քան թե հայերի մուտ ստրուկ լինել... Թուրքական Նանդին /այստեղ ավագն այժմ ինքն է/ առաջարկեց ինձ մնալ այստեղ, ասելով, որ միայն ռուսական դրոշի առկայության պարագայում այստեղ հնարավոր կլինի պահպանել կարգուկանոն: Ընդ որում, թուրքական հրամանատարությունը իր վրա պարտավորություն է վերցնում աջակցել մեզ ամեն ինչով՝ իրենց ունեցած հնարավորությունների սահմաններում...»,*[165]

*«Գեներալ Դրագոմիրովին, պատճենը՝ գեներալ Վյազմիտինովիչին: Դեկտեմբերի 31-ին /հ.տ./ ես մեկնեցի Կարս, որպեսզի այնտեղ ծանոթանամ իրավիճակին և ներկայանամ այնտեղ նորանշանակ անգլիական նահանգապետ գնդապետ Տեմպերլիին: Կարսի մարզի սահմանագծին՝ Կարսյալ կոչվող առաջին կայարանում, ինձ դիմավորեց Շուրոիլի տեղամասի մուսուլմանական պատվիրակությունը ի դեմս Հուսեյն-Խան-Տախկլու և Մաշեթ-Հասի-Ալի-Օղլու: Ինձ փոխանցելով խնդրագիրը, որը կցում եմ՝ նրանք հայտարարեցին, որ հայերն արդեն փորձում են անցնել իրենց սահմանը, ինչի պատճառով էլ տեղի էր ունեցել փոխհրաձգություն... և հայերը ստիպված են եղել նահանջել: Կարս ժամանելիս ինձ դիմավորեցին թուրքական հրամանատարության ներկայացուցիչը և անգլիական նահանգապետը, որոնց ես այցելեցի պատասխան այցով: Կարսում թուրքական հրամանատարությունում ամենաբարձրաստիճանը 13-րդ դիվիզիայի հրամանատար Ալի-Ռեֆահաղ-բեյն է, որը պատրաստվում է 10 օր հետո իր զորքերով թողնել Կարսի մարզի տարածքը: Թուրքական հրամանատարությունն ինձ ընդունեց շատ ջերմ, ցանկություն հայտնեց կապի մեջ մտնել մեր հրամանատարության հետ՝ ամեն կերպ ցուցադրելով իրենց բարյացկամ տրամադրվածությունը ռուսների նկատմամբ: Մարզը կառավարում է ընտրովի մարմնի «Շուրոյի» (կամ «Շուրայի» – Վ.Հ.) կողմից: Ինձ մոտ եկել էին նրա ներկայացուցիչներ դոկտոր Ասադ-բեկը, Մահմադ-բեկ-Ալիբեկովին, Մաղվեյ Ռազինսկին, Ստեփան Բինիադին և Մահմեդ-բեկ-Րասամ-բեկը: Նրանք ցանկություն հայտնեցին հնարավորինս շուտ միացված լինել Ռուսաստանին և առաջարկեցին ինձ մնալ իրենց մոտ որպես նահանգապետ: Անգլիացիներին նրանք ընդունել են ջերմորեն, բայց ըստ իրենց ասածի, հետևյալ խոսքերով. «Մենք ուրախ ենք Ձեզ*

---

[165] ՀԱԱ, ֆ.275, ց.2, գ.5,թ.24, 25:

*այստեղ տեսնել որպես դաշնակիցների, որպես հաղթանակողների և որպես թանկագին հյուրերի՝ ռուսական տարածքում»: Հիշատակում էին նույնիսկ, որ իրենք անգամ կապի մեջ են Բաթումում գտնվող մեր գեներալի հետ /ազգանունը պարզել հնարավոր չեղավ/, որն իրենց իբր հեռագրել է, որպեսզի իրենք մարզը չթողնեն ո՛չ հայերին, ո՛չ անգլիացիներին: Այստեղ ներկայացա նաև անգլիացի գեներալ Բիչին /վերջինս, կարծես, ռուսատյաց է/, որը ժամանել էր Սարիղամիշից: Խոսում էր շատ քիչ, բայց տեղեկացրեց, որ իրենց նպատակն է կարգի գցել երկաթուղային հաղորդակցությունը… Գեներալ Բիչը հունվարի 4/18-ին մեկնեց Թիֆլիս, որպեսզի ուղիղով տեղեկացնի Կոստանդնուպոլիս, որ Կարսի մարզի բնակչությունը չի ցանկանում իր տարածք թողնել հայերին և Ամերիկա ուղարկված է մի պատվիրակություն՝ մարզը Ռուսաստանին միացնելու խնդրանքով… Անգլիացիները մտադրված են Կարս ուղարկել երկու գունդ և հրահանգել են հայկական զորամասերին պատրաստ լինել տարածքները զբաղեցնելու համար…»,*[166]

*«Կրկին զեկուցում եմ, այն անհրաժեշտության մասին, որ հարկ է, որպեսզի ռուսական ձայնն այստեղ հնչի նույնքան հեղինակավոր կերպով, ինչպես հնչում են դաշնակիցների ձայները: Դրա համար անհրաժեշտ է, որպեսզի Կամավորական Բանակը որոշակիորեն հայտարարի, որ ինքը նույնպես մասնակցում է Կովկասին վերաբերող բոլոր հարցերի լուծմանը: Մասնավորապես նա պետք է հայտարարի իր իրավունքների մասին Կարսում գտնվող ունեցվածքի վերաբերյալ /իսկ այդ ունեցվածքը, հատկապես ռազմական, Կարսում չափազանց մեծաքանակ է/, որ ինքն իր վրա է վերցնում դաշնակիցների հետ համատեղ ամենուրեք հասունացող բոլոր հակամարտությունների լուծումը…»:*[167]

Բերված փաստաթղթերը հուշում են, որ դենիկինյան կողմը պարզապես իներցիայով, այլ ոչ թե հիմքում ունենալով իրական գործոններ, շարունակում էր Կարսի մարզը դիտարկել որպես ռուսական տարածք: Տեղի անգլիական հրամանատարությունն ուղղակիորեն շեշտում էր, թե *«…Ռուսաստանի և ոչ մի հատվածում գոյություն չուներ այնպիսի մի կառավարություն, որը հնարավոր լիներ համարել որպես Միացյալ Ռուսաստանի կառավարություն…»*:[168] Կարսի մարզի հարցում անգլիական հրամանատարության և դենիկինյան կողմի միջև փոխհարաբերությունների մասին նույն Դենիկինը գրում է.

*«Կարսի հարցի վերաբերյալ անգլիական հրամանատարությունը առհասարակ չուներ իր սեփական քաղաքականությունը, կամ էլ այն չափազանց մաքիավելիական էր: Ռուսաստանի նկատմամբ, բոլոր*

---

166 ՀԱԱ, ֆ.275, ց.2, գ.5,թ. 35-37:
167 ՀԱԱ, ֆ.275, ց.2, գ.5,թ.40:
168 Генералъ А.И.Деникинъ, նշվ. աշխ., էջ 141:

*դեպքերում, այդ քաղաքականությունը միանգամայն որոշակի էր. Կարսի ու Բաթումի մարզեր ռուս փախստականների վերադարձի համար գեներալ Ուոքերը պայման էր դնում, որ վերադարձած փախստականները չպետք է վարեն բոլշևիկյան գաղափարների և Ռուսաստանի հետ միավորվելու ուղղությամբ քարոզչություն...»:*[169]

Այս ամենից պարզ երևում է, որ տարածաշրջանում անգլիացիների այդօրվա ստանձնած դերակատարման պարագայում Կարսի հարցում դենիկինյան կողմի համար հաջողության հասնելու որևէ իրական շանս գոյություն չուներ և որպես որոշակի հավակնություններ ունեցող կողմ, ինչպես այսօր կասեին՝ այն պարզապես հայտնված էր լուսանցքում: Ի դեպ, այսօրվա բազմաթիվ ռուսական հրապարակումներում կարելի է հանդիպել մի շարք նյութերի, որոնցում Կարսը հոգոցով ու կարոտախտով նշվում է որպես «կորցված ռուսական քաղաք»:[170]

### I.9.2. Վրաստանի հավակնությունները

Վրաստանը, հայ-վրացական կարճատև պատերազմի ամբողջ ընթացքում կրելով պարտություն պարտության հետևից, անգլիացիների սրտացավության շնորհիվ արդյունքում պատերազմից դուրս եկավ ոչ միայն առանց կորուստների, այլ նույնիսկ ունեցավ մեծածավալ տարածքային ձեռքբերումներ՝ Ջավախքն ու Հյուսիսային Լոռին: Առաջին աշխարհամարտի ավարտից հետո Կարսի ուղղությամբ նույնպես Վրաստանը ձեռքերը ծալած չէր նստել. այդ հատվածում նա հավակնություններ ուներ առնվազն Արդահանի և Օլթիի շրջանների նկատմամբ:[171] Այն դեպքում, որ մինչև պատերազմը վրացիների թիվը Կարսի մարզում չնչին էր՝ մոտ 4.000 մարդ մարզի բնակչության 404.000 ընդհանուր թվից:[172] Կարսի մարզին առնչվող խնդիրների պարզաբանման համար Ալ.Խատիսյանը մեկնում է Թիֆլիս, ու անգլիական ներկայացուցիչ գեներալ Ուոքերի գիտությամբ և մասնակցությամբ բանակցում վրացական կողմի հետ: Այդ կապակցությամբ նա գրում է. «*...Իմ Թիֆլիս երթալուն արդիւնքը այն եղաւ, որ Վրացիներու հետ սահմանը գծուեցաւ հետեւեալ կերպով: Արտահանի գաւառի հիւսիսային մասը, Արտահան քաղաքն վէրեւ, Բոսխով չայ գետի միւս կողմը կ'անցնեն Վրաստանին...*»:[173] Այդպիսով և այդքանով, բնականաբար, կրկին անգլիական կողմի հոգածությամբ, բավարարվեցին այդ

---

[169] Генералъ А.И.Деникинъ, նշվ. աշխ., էջ 147:
[170] Տե՛ս, օրինակ, Потерянные Россией земли, Раздел IV Карсская область, amnesia.pavelbers.com/Straniza%20istorii%20Rossii%20%2026.
[171] Ա.Խատիսեան, նշվ. աշխ., էջ 155; Ռուբէն, նշվ. աշխ., էջ 180; Генералъ А.И.Деникинъ, նշվ. աշխ., էջ 151:
[172] Ա.Խատիսեան, նույն տեղում:
[173] Նույն տեղում, էջ 156:

օրերին վրացական կողմի հավակնությունները Կարսի մարզի նկատմամբ: Չմոռանանք, համենայնդեպս, որ ընդամենը կես տարի առաջ, թուրքական արշավանքների ամենաթեժ պահին, Անդրֆեդերացիայի վրաց ղեկավարությունը, ջանալով մեղմել արշավանքի հետևանքները վրացիների համար, աշխատեց հնարավորինս շուտ՝ որպես հենց հայկական տարածք, թուրքի երախը նետել Կարսը:

Ի վերջո անգլիացիների «խիստ անաչառ» միջնորդությունը հայ-վրացական տարածքային վեճերում հանգեցրեց հետևյալ արդյունքներին. Անդրկովկասում բրիտանական զորքերի հրամանատար գեներալ Թոմսոնի վերջնական որոշման ուժ ունեցող դիմում-կոչի համաձայն Վրաստանին հանձնվեցին Ջավախքը, Լոռվա հյուսիսային մասը՝ Ալավերդի բնակավայրն ու երկաթգծի կայարանը ներառյալ, Արդահանի ույեզդի Կուր գետի ձախափնյա մասը, ներառյալ արդեն նաև Արդահան քաղաքը:[174] Ի վերջո պայմանավորվեցին, որ Արդահան քաղաքով անցնող բաժանարար գծի երկայքով կողմերը կպահեն 50-ական զինվոր և 2-ական գնդացիր:[175] Նշենք, որ վրացական կողմն այդքանով չբավարարվեց և հետո՝ արդեն տեղում, նոր հողակտորների տիրանալու նպատակով քանիցս խախտեց պայմանավորվածությունը՝ կազմակերպելով տարատեսակ սադրանքներ:[176]

### *I.9.3. Թուրք-ադրբեջանական (մահմեդական) հավակնությունները*

Առաջին Համաշխարհային պատերազմում Թուրքիան պարտվեց: Բայց դա ամենևին չէր նշանակում, որ դրանից ելնելով, նա, ինքնըստինքյան իրեն համարելու էր պարտված կողմ նաև հայության հանդեպ և համակերպվելու էր նախկին Օսմանյան կայսրության մի մեծ հատվածի վրա տարածված հայկական պետության ստեղծման և նրա զարգացման ու հզորացման հանգամանքի հետ: Հակառակը, քաջ գիտակցելով, որ Թուրքիայի նկատմամբ պահանջներ ներկայացնող կողմերից թեև ամենաթույլը հայկական կողմն էր, սակայն հենց նրա պահանջներն էին մահացու վտանգներ պարունակում թուրքական պետության ներկայի և ապագայի համար, թուրքերը ամեն ինչ պետք է անեին, որպեսզի վիժեցնեին այդ տարածքների վրա հայկական պետականության ստեղծումն ու կայացումը: Իրենց կողմից հայազրկման ենթարկված վայրերը թուրքերը ոչ միայն չէին

---

[174] Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарий (Ред. и сост. Ю.Г.Барсегов), том 2., ч.1, Москва, 2003, с. 31.
[175] ՀԱԱ, Ֆ.200, ց.1, գ.353, թթ. 81, 82 և շրջ.; ՀԱԱ, Ֆ.200, ց.1, գ.353,թ.44:
[176] ՀԱԱ, Ֆ.201, ց.1, գ.26,թ. 223; ՀԱԱ, Ֆ.200, ց.1, գ.353, թթ. 90,92; ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 353,թ.2; ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 353,թ.101:

պատրաստվում մաքրել մահմեդական տարրից և հանձնել հայերին, այլ հակառակը, այդ հողերի վրա ինտենսիվորեն իրականացնում էին նորանոր վերաբնակեցումներ, ինչի դեմ հայկական կողմը քանիցս բողոքներ էր ներկայացրել:[177]

Բացի այդ, դեպքերի ընթացքը ցույց տվեց, որ թուրքական զորքերի դուրսբերումը անդրկովկասյան, մասնավորապես, հայկական տարածքներից, խիստ պայմանական ու ձևական առումներով էր ազդարարում թուրքական ազդեցության վերջը տվյալ երկրամասում: Իրականում, պրակտիկորեն ամենուրեք իթթիհադականների ցուցումներով տեղերում մնում էին օսմանյան սպաներ, որոնք շատ արագ կապեր էին հաստատում տեղական մահմեդական զանգվածների և կազմակերպությունների հետ:[178]

Ինչ վերաբերում է նորաստեղծ Հայաստանի Հանրապետություն անվամբ փոքրիկ հայկական պետությանը, ապա այստեղ նույնպես առկա էին մի շարք բարենպաստ պայմաններ՝ առանց հրապարակային ագրեսիայի և լայնածավալ ռազմական գործողությունների ճնշել և խեղդամահ անել հայկական այդ պետական գոյացումը: Հակահայկական հիմնական (և հիմնարար) բարենպաստ այդ գործոնները հետևյալն էին. Ադրբեջանական Հանրապետություն անվամբ թուրք-թաթարական պետական գոյացման առկայությունը Հայաստանի անմիջական հարևանությամբ և հայկական պետության բավականին համեստ մասշտաբների պարագայում մեծաթիվ մահմեդական բնակչության առկայությունը թե՛ այդօրվա ՀՀ-ի պրակտիկորեն ամբողջ սահման-պարագծով, թե՛ հենց նրա ներսում:

Ձեռքի տակ ունենալով Աղյուսակներ 11, 12-ի տվյալները՝ եկեք մտովի շրջենք այդօրվա Հայաստանի սահմանագծով: Սկսենք Ղազախի ույեզդից, որտեղ հատվում են Վրաստանի, Ադրբեջանի ու Հայաստանի սահմանները: Ույեզդի բնակչության 43,16%-ը կազմում էին հայերը, 51%-ը՝ մահմեդականները: Այդ օրերին հիմնականում հայերով բնակեցված ույեզդի լեռնային հատվածը վերահսկվում էր Հայաստանի կողմից, և սահմանից այն կողմ տարածվում էին հիմնականում մահմեդականներով բնակեցված հողերը: Հաջորդ՝ Նոր-Բայազետի ույեզդում հայերը կազմում էին բնակչության 66%-ը, մահմեդականները՝ 32%: Շարուր-Դարալագյազում, որն այդ օրերին դեռևս ՀՀ-ի կազմում չէր, այլ հարավում նրան սահմանակից էր, հայերն ու մահմեդականները կազմում էին բնակչության, համապատասխանաբար, 33% և 64%: Դրանից հարավ՝ Զանգեզուրում և Նախիջևանում, հայերի ու մահմեդականների քանակները, համապա-

[177] Р.Г. Ованнисян, նշվ. աշխ., էջ 82-85:
[178] Е.В.Клюкин, նշվ. աշխ., էջ 140:

տասխանաբար, 44% ու 54% և 41% ու 58%: Շարուր-Դարալագյազի սահմանագծով բարձրանում ենք դեպի Էրիվանի ույեզդ: Այստեղ պատկերը հետևյալն է. հայեր՝ 45%, մահմեդականներ՝ 48%: Թեքվենք դեպի արևմուտք՝ դեպի Սուրմալու: Հայերն այստեղ կազմում էին 31%, իսկ մահմեդականները՝ 58%: Սուրմալուով բարձրացանք վերև՝ դեպի հյուսիս և հասանք Կարսի մարզ: Ստորև մանրամասն կանդրադառնանք այդ օրերի Կարսի մարզին, այստեղ նշենք միայն, որ այդ օրերի համար խոսել Կարսի մարզում հայ բնակչության առկայության մասին, որպես այդպիսին, պարզապես անիմաստ է: Այնտեղ «շքերթի» մասնակիցն ու կառավարողը նույնն էր՝ մահմեդական տարրը: Այսինքն՝ այդ օրերին ՀՀ-ն իր սահմանների գրեթե ամբողջ երկայնքով փաստորեն գտնվում էր երկշերտ մահմեդական օղակի մեջ. մահմեդական տարրը ներկա էր սահմանի թե՛ այն, թե՛ այս կողմում:

**Աղյուսակ 11.** *Էրիվանի գուբերնիայի ազգաբնակչության կազմն ու թվաքանակը (1917թ. փվյալներ)*[179]

| Ազգություն, կրոն / Քաղաք, ույեզդ | Ռուս (քրս., աղ.) | Հայ | Քուրդ (մահմդ.) | Թուրք, թաթար | Ոչ մահմդ. այլ ազգ. | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| ք.Ալեքսանդրապոլ | 4.102 (7,9%) | 45.646 (87,99%) | 71 (0,14%) | 1.003 (1,93%) | 1.052 (2,03%) | 51.874 |
| ք.Նախիջևան | 147 (1,72%) | 2.865 (32%) | – | 5.832 (65,2%) | 100 (1,12%) | 8.944 |
| ք.Նոր-Բայազետ | 113 (0,77%) | 14.315 (97,06%) | 243 (1,65%) | – | 77 (0,52%) | 14.748 |
| ք.Օրդուբադ | 86 (1,68%) | 179 (3,13%) | – | 5.449 (95,31%) | 3 | 5.717 |
| ք.Էրիվան | 1.059 (2,06%) | 37.625 (73,36%) | 39 (0,076%) | 12.266 (23,92%) | 299 (0,58%) | 51.288 |
| Ալեքսանդրապոլի ույեզդ | 3.306 (1,9%) | 156.850 (89,99%) | – | 8.177 (4,69%) | 5.963 (3,42%) | 174.296 |
| Նախիջևանի ույեզդ | 471 (0,38%) | 51.365 (41%) | 517 (0,41%) | 72.716 (58,06%) | 169 (0,13%) | 125.238 |
| Նոր-Բայազետի ույեզդ | 4842 (2,78%) | 114.966 (66%) | 2.756 (1,58%) | 50.713 (29,13%) | 834 (0,48%) | 174.111 |
| Սուրմալուի ույեզդ | 429 (0,4%) | 32.686 (31,19%) | 14.679 (14%) | 45.954 (43,85%) | 11.043 (10,54%) | 104.791 |
| Շարուր-Դրլգզ. ույեզդ | 122 (0,13%) | 29.853 (32,86%) | 1.864 (2,05%) | 58.403 (64,29%) | 606 (0,67%) | 90.848 |
| Էջմիածնի ույեզդ | 41 (0,02%) | 115.026 (68,56%) | 9.653 (5,75%) | 41.310 (24,62%) | 1.756 (1,05%) | 167.786 |
| Էրիվանի ույեզդ | 1.435 (0,93%) | 69.710 (45,17%) | 6.774 (4,39%) | 74.170 (48,38%) | 2.243 (1,45%) | 154.332 |
| Ընդամենը գուբերնիայում | 16.153 (1,44%) | 671.086 (59,7%) | 36.596 (3,26%) | 375.993 (33,45%) | 24.145 (2,15%) | 1.123.973 |

[179] КК на 1917г., Отдел статистический, с. 214-221.

**Աղյուսակ 12.** *Ջանգեզուրի և Ղազախի ույեզդների ազգաբնակչության կազմն ու թվաքանակը (1917թ. տվյալներ)*[180]

| Ազգ., կրոն / Քաղաք, ույեզդ | Ռուս (քրս., աղ.) | Հայ | Քուրդ (մահմդ.) | Թուրք, թաթար | Ոչ մահմդ. այլ ազգ. | Ընդա-մենը |
|---|---|---|---|---|---|---|
| ք.Գորիս | 196 (8,9%) | 1.744 (79,24%) | – | 247 (11,22%) | 14 (0.64%) | 2.201 |
| Ջանգեզուրի ույեզդ | 1.617 (0,72%) | 99.331 (44,3%) | 3.668 (1,64%) | 119.480 (53,29%) | 101 (0.05%) | 224.197 |
| Ընդամենը Ջանգեզուրում | 1.813 (0,8%) | 101.075 (44,64%) | 3.668 (1,62%) | 119.727 (52,88%) | 115 (0.06%) | 226.398 |
| Ղազախի ույեզդ | 6.798 (4,96%) | 59.147 (43,16%) | 35 (0.03%) | 69.971 (51%) | 1.098 (0,8%) | 137.049 |

Երկրի ներսում, խոշոր հաշվով, համեմատաբար «բարվոք» ու անվտանգ կարելի էր համարել թերևս միայն Ալեքսանդրապոլի ույեզդը, որտեղ հայերը կազմում էին բացարձակ մեծամասնություն՝ 90%: Մնացած բոլոր ույեզդներում, ինչպես երևում է Աղյուսակներ 11, 12-ում բերված տվյալներից, երկրի ներսում էլ առկա էր մեծաքանակ մահմեդական բնակչություն, որը պատրաստ էր վճռական պահին մոբիլիզացվել ու գործել որպես հզոր և կործանիչ դերակատարումով հակահայկական-հակապետական հինգերորդ շարասյուն:

Կատարելով այդ տագնապալի շրջագայությունն այդօրվա Հայաստանի սահմանագծով՝ պարզապես անհնար է չանդրադառնալ հետմուդրոսյան այն օրերին, երբ անգլիացիները միայն իրենց հայտնի պատճառներով ուլտիմատիվ եղանակով թույլ չտվեցին, որպեսզի Հայաստանին միացվեն հենց իրենց՝ անգլիացիների խոստովանությամբ հայկական հանդիսացող Ջավախքն ու Ղարաբաղը: Եվ երբ հիշում ես 1921թ. հուլիսի 5-ին և 7-ին բոլշևիկյան կուսակցական մարմնի՝ Կովկասյան բյուրոյի կողմից կայացրած կամայական որոշումները, ըստ որոնց Ղարաբաղը հանձնվեց Ադրբեջանական ԽՍՀ-ին, իսկ Ջավախքն էլ՝ Վրացական ԽՍՀ-ին,[181] բնական հարց է ծագում. իսկ ինչո՞վ էին տարբերվում տոտալիտար ու բռնապետական խորհրդային համակարգի ներկայացուցիչների կողմից կայացրած այդ որոշումները գերդեմոկրատական և գերօրինապաշտ անգլիական քաղաքական համակարգի ներկայացուցիչների կողմից ժամանակին նույն Ջավախքի ու Ղարաբաղի վերաբերյալ կայացրածներից:

Թողնենք, սակայն զեղումները և վերադառնանք այդ օրերի իրականությանը: Այն շատ ամփոփ և ընդգրկուն կերպով ներկայացված է Խատիսյանի հուշերում, *«…Մեր հարևաններու հետ ունեցած բախումներու գլխաւոր պատճառը սահմանային այս վէճերն էին, որոնց մեջ ամէնէն դավադիր դերը խաղաց Թուրքիան ուղղակի Ափրպէջա-*

[180] КК на 1917г., Отдел статистический, с. 190-197.
[181] Ա.Պապյան, Հայրենատիրություն (հոդվածների ժ-ծու), Երևան, 2012, էջ 87, 88:

*նի միջոցով: Իր բիրաւոր գործակալները կը վխտային ամէն կողմ, կը գրգռէին խաղաղ բնակչութիւնը հայկական հանրապետութեան դեմ, կը զինեին մեզի թշնամի տարրերը և կ'ըմբոստացնէին մեր դէմ. Մէկ խոսքով՝ կանոնաւոր պատերազմ կը մղէին Հայաստանի Հանրապետութեան դէմ: Թրքական պրոպագանդի և պայքարի գլխաւոր օջախներն էին Բէօյիք Վեդին, Զանգիբասարը, Զարուշատը, Աղբաբան, Գարագոյունլըի ձորը, Հաճիսամընլուն, Օրդուբադը և շարք մը ուրիշ վայրեր, ուր թրքական սպաներու ղեկավարութեամբ կանոնաւոր դիմադրութիւն էր կազմակերպուած Հայաստանի Հանրապետութեան դէմ: Սպաները կու գային Էրզրումէն և ապա Անկօրայէն, դրամը կու գար Պաքուէն...»:*[182]

Եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ հայերը բնակվում էին կենտրոնացված ձևով, իսկ մահմեդական տարրը տարածված էր մեծ տարածքների վրա, ապա, ինչպես ասում են, պատկերն ամբողջանում էր. իրենց սեփական պետության մեջ հայերը հայտնվել էին մահմեդականների ձեռքում պատանդի կարգավիճակում:

Եվ ահա այս ֆոնի վրա Ադրբեջանը, որն իր անկախության հռչակագրում նշել էր, որ Ադրբեջան պետությունը ստեղծվում է հարավային և արևմտյան Անդրկովկասի տարածքների վրա, սկսեց տարածքային պահանջներ ներկայացնել Հայաստանի Հանրապետությանը: Խոսքը տանք Ռուբեն Տեր-Մինասյանին. «...*Նախքան մանրամասնութեանց անցնելը, տեսնենք թե գործնական կերպով ի՞նչ կ'ուզեր Ադրբեջանը Հայաստանից: Նախ կը պահանջէր, բացարձակ կերպով, որ Ղարաբաղից բոլորովին ձեռք քաշեն հայերը՝ ցանկանալով, որ Զիւանշիր, Շուշի, Ջիբրայիլ, Գանձակի լեռնամասը, Զանգեզուր գաւառները փաստօրէն եւ իրավաբանօրէն ճանաչուէին իբրեւ Ադրբեջանի մաս: Այդպիսով, Գանձակի անբողջ նահանգը*[183] *պիտի անցնէր Ադրբեջանի սահմանների մէջ: Լռելեայն կ'ընդունէր միայն, որ Դիլիջան եւ Իջեւան շրջանները Հայաստանի մաս են, այն էլ վերապահութեամբ, որովհետեւ Բաշկէնդ եւ Կարակոյունլու շրջանները իրը կը համարէր: Դրանով չէր բաւականանում Ադրբեջանը. դա միայն նախաբանն էր իր ձգտումների իրագործման: Նա կ'ուզէր իրեն միացնել Երեւանեան նահանգից՝ Նախիջեւան եւ Շարուր գավառները, Երեւանի եւ Էջմիածնի գավառներից՝ Սադարակի, Վեդիբասարի, Զանգիբասարի շրջանները եւ Արաքսի աջ ափով, Մասիսի ստորոտներով՝ ամբողջ Սուրմալուն մինչեւ Կարսի նահանգը: Կարսի նահանգը եթէ տաճիկներին չէր լինելու, ապա նա* (Ադրբեջանը – Վ.Հ.) *պիտի տարածուէր մինչեւ Բաթումի շրջանը, որտեղից Ադրբեջանը դէպի ծովը ելք պիտի ունենար: Բացի դրանից, Սեւանի լճի*

---

[182] Ա.Խատիսեան, նշվ. աշխ., էջ 154:

[183] Խոսքը ցարական Ռուսաստանի Ելիզավետպոլի գուբերնիայի մասին է:

*հիսիսային ափերը Կարակայունլու ծորի հետ միացնելով, Բասարգեչարի շրջանը կը պահանջէր Ադրբեջանը, որով Ղարաբաղի թիկունքը ամրացած կը լինէր եւ իրեն միացրած իսլամ ազգաբնակչութիւնը: Այս հսկայական ծրագիրը ո՛չ դատարկ ցնորք էր եւ ո՛չ ալ զառանցանք. դա մատչելի եւ բնական մի ծրագիր էր համարւում թուրք-թաթարների համար, որը իբրեւ տեսութիւն չէր թողնուած դպրոցներին, այլ կեանքի մէջ կը գործադրուէր 1919-ից, եւ այժմ էլ կը գործադրուի Անդրկովկասում:*»[184] Ինչպես ասում են՝ «no comment»:

Կանգ առնենք, սակայն այս հայախեղդ ծավալուն ծրագրի՝ Կարսին վերաբերող հատվածի վրա և տեսնենք, թե ինչպես էին զարգանում մարզում իրադարձությունները այդ ուղղությամբ:

## I.10. Կարսի մարզը՝ իբրև «մահմեդական հանրապետություն»

1918թ. դեկտեմբերին թուրքերը հեռացան Ալեքսանդրապոլից և իրենց զորակայանը տեղափոխեցին Կարս: Անգլիացիների կողմից թուրքերի առջև պահանջ էր դրվել, որ օսմանյան զորքերը պետք է դատարկեն Կարսի մարզը և այդ ուղղությամբ ետ քաշվեն 1914թ. ռուս-թուրքական սահմանից այն կողմ մինչև 1919թ. հունվարի կեսերը:[185] Այդ օրերին Հայաստանի կառավարության համար կարևորագույն խնդիրներից էին պետության տարածքի ընդարձակումը և ներգաղթի իրականացման ու փախստականների վերաբնակեցման կազմակերպումը:[186] Դրանք խնդիրներ էին, որոնց չլուծման պարագայում պարզապես անհնարին կդառնար հայկական պետության հետագա գոյությունը: Եվ միանգամայն հասկանալի էր, որ Ալեքսանդրապոլից հետո այդ ուղղությամբ օրակարգ էր մտնում արդեն Կարսի մարզը Հայաստանին միացնելու հարցը: Թե՛ հայկական, թե՛ թուրքական կողմերի համար միանգամայն պարզ էր, որ ստրատեգիական առումով այդ կարևոր տարածքի միացումը Հայաստանին նախ կլուծի նրա առջև ծառացած մի շարք անհետաձգելի առօրյա խնդիրներ, մյուս կողմից՝ հիմք ու հենարան կհանդիսանա արդեն դեպի Արևմտյան Հայաստան ծավալվելու համար: Բնականաբար, թուրքական կողմն անխուսափելիորեն ձեռնարկելու էր հակառակ քայլեր: Նախ պետք է նշել, որ 1918թ. հոկտեմբերի 8-ի Թալեաթփաշայի կառավարության հրաժարականն ամենևին չէր նշանակում երիտթուրքերի ազդեցության վերջը թուրքական պետության և հասարակության ներսում: Անգլիայի արտգործնախարար Բալֆուրն այդ կապակցությամբ 1918թ. նոյեմբերի 9-ին գրում էր. «...*Ներկայիս թուրքական կառավարությունն ընդամենը մի զարդաճակապ է, որի*

---

[184] Ռուբէն, նշվ. աշխ., էջ 182-184:

[185] Генералъ А.И.Деникинъ, նշվ. աշխ., էջ 146:

[186] Ս.Վրացյան, ՀՀ, էջ 256, 261; Ա.Խատիսեան, նշվ. աշխ., էջ 155:

*հետևում թաքնված է «Միասնություն և Առաջադիմություն» կոմիտեն...»:*[187] Կապիտուլյացիայից հետո թուրքական կողմը որոշ ջանքեր գործադրեց Կարսի և Բաթումի մարզերն իր վերահսկողության տակ պահպանելու համար, սակայն դա նրան չհաջողվեց:[188] Ստիպված լինելով դաշնակիցների ուղղակի պահանջով սկսել զորքերի դուրսբերումը Կարսի և Բաթումի մարզերից՝ թուրքական հրամանատարությունն առաջարկում էր, օգտագործելով դուրս բերվող զինուժի հնարավորությունները, այդ տարածքներում ստեղծել ոստիկանական ուժեր, հիմնել կամավորների հավաքագրման կետեր և ստեղծել տեղի մահմեդականներից կազմված քաղաքացիական կառավարման գործուն մի համակարգ, որը կիրականացնի այդ տարածքների հուսալի վերահսկումն ու կառավարումը նույնիսկ այդ տեղերից օսմանյան զորքերի լիակատար դուրսբերման պարագայում:[189] Գործնականում այդ ամենը դրսևորվելու էր հետևյալ կերպ. տվյալ տարածքում կազմակերպվում ու ստեղծվում է մահմեդական ինչ-որ տեղական կառավարման մարմին, որը ներկայանում է որպես «իշխանություն», իսկ մահմեդական զանգվածը զինվում է և իր այդ զինված միավորումներով թույլ չի տալիս, որպեսզի իրենց հիմնական բնակության վայրերը վերադառնան այն փախստականները, որոնք ստիպված լքել են իրենց տները օսմանյան արշավանքի ժամանակ: Այդ սխեման թուրքերը մի անգամ արդեն հաջողությամբ փորձարկել ու իրականացրել էին Բալկաններում՝ Արևմտյան Թրաքիայի Թուրքական Ինքնավար Հանրապետության ստեղծման օրինակի վրա:[190]

Կարսի մարզում այդ մոդելի հաջող գործարկման համար առկա էին բոլոր բարենպաստ պայմաններն ու գործոնները. տարիների ընթացքում ստեղծված և խորը արմատներ ունեցող լայն տարածված թուրքական գործակալական ցանցը[191] և այդօրվա դրությամբ մարզի բնակչության գրեթե բացառապես մահմեդական կազմը:[192] Բնական է՝ թուրքական ներխուժման շնորհիվ ուրիշի հողին, տանն ու ունեցվածքին տիրացած այդ զանգվածը, գիտակցելով ներգաղթի պարագայում այդ ամենի կորստյան ու նաև որոշակի պատասխանատվու-

---

[187] Е.В.Клюкин, նշվ. աշխ., էջ 134, 138:

[188] Նույն տեղում, էջ 134-145:

[189] Е.В.Клюкин, նշվ. աշխ., էջ 142, 143:

[190] Նույն տեղում, էջ 145:

[191] Նույն տեղում:

[192] Այդ կապակցությամբ դենիկինյան բանակի կադրային հետախույզ գնդապետ Լեսլին այդ օրերին զեկուցում է իր հրամանատարությանը. *«...Թուրքական հարձակման ժամանակ* (1918-ին – Վ.Հ.) *Կարսի մարզից փախավ ամբողջ հայ բնակչությունը, տեղում մնաց գրեթե բացառապես մահմեդականը, որն անեց հետագայում նաև բուն Թուրքիայից մարզ եկած մահմեդականների հաշվին...»*, տե՛ս ՀԱԱ, ֆ.275, ց.2, գ.5,թ.53; Генералъ А.И.Деникинъ, նշվ. աշխ., էջ 146:

թյան անխուսափելիությունը, պետք է ամեն գնով բացառեր փախստականների վերադարձն իրենց տները: Դեռևս 1918թ. հոկտեմբերին տեղի թուրքական հրամանատարությունը հեռագրում էր բանակի Գլխավոր Շտաբ այն մասին, որ «*…Արփաչայից արևմուտք ընկած փարածքների մահմեդական բնակչությունը, սարսափելով հայերի և վրացիների վերադարձից, գտնվում է խուճապահար վիճակում…*»:[193] Եվ հավելվում էր, որ «*…օսմանյան զորքերի դուրս բերումը փարածաշրջանից հնարավոր է միայն իշխանությունը տեղական մահմեդական կառավարման մարմիններին հանձնելուց հետո…*»:[194] Տարածաշրջանում նշված «*տեղական մահմեդական կառավարման մարմինների*» ստեղծման և նրանց համար ուժային հենարան հանդիսացող մահմեդական զինված միավորումներ ստեղծելու նպատակով Թուրքիայի ռազմական գերատեսչությունը դեռևս 1918թ. հոկտեմբերին տեղի թուրքական զորահրամանատարությանը տրամադրում է 400.000 լիրա գումար:[195] Թուրքական կողմը չէր հապաղում. թուրքական զորահրամանատարության ուղղակի նախաձեռնությամբ և աջակցությամբ շատ կարճ ժամանակահատվածում տարածաշրջանում ստեղծվեցին իշխանության հայտ ներկայացնող հետևյալ մահմեդական ազգային-կրոնական-քաղաքական գոյացումները.

ա) Ախալցիխեի Ժամանակավոր կառավարություն (29.X.1918թ.)[196]
բ) Արաքս-Թյուրքական Ժամանակավոր կառավարություն (16.XI.1918թ.)[197]
գ) Կարսի Մահմեդական խորհուրդ (5.XI.1918թ.), որը հետագայում վերանվանվեց որպես Կարսի Մահմեդական ազգային կոմիտե (Ազգային խորհուրդ՝ Միլլի Շուրա):[198]

Վերջինս այս մարմինների մեջ ամենաազդեցիկն ու մահմեդականներին միավորող դերակատարում ունեցողն էր:

1918թ. նոյեմբերի 30-ից – դեկտեմբերի 2-ին Կարսում գումարվում է Հարավ-Արևմտյան Կովկասի մահմեդականների Երկրորդ Կոնգրեսը, որին մասնակցում են 10 պատվիրակություններ՝ Բաթումից մինչև Օրդուբադ: Դրա գործունեության ընթացքում հայտարարվում է Հարավ-Արևմտյան Կովկասի Հանրապետության (որոշ հեղինակների մոտ՝ Կարսի Հանրապետություն) հռչակման մասին:[199] Ինքնահռչակ

193 Е.В.Клюкин, նույն տեղում:
194 Նույն տեղում:
195 Е.В.Клюкин, նույն տեղում:
196 Ս.Վրացյան, ՀՀ, էջ 309; Е.В.Клюкин, նշվ. աշխ., էջ 146:
197 Ս.Վրացյան, նույն տեղում; Е.В.Клюкин, նշվ. աշխ., 149:
198 Ս.Վրացյան, ՀՀ, էջ 259, 257, 309; Ա.Խատիսեան, նշվ. աշխ., էջ 155; Е.В.Клюкин, նշվ. աշխ., էջ 144-146,158:
199 Е.В.Клюкин, նշվ. աշխ., էջ 162,163:

մահմեդական այդ «հանրապետությունը», որը ստեղծվել ու կառավարվում էր երիտթուրքերի «Իթթիհադ վե Թերաքքը» կուսակցության գործիչների կողմից և ուներ տեղացիներից և թուրք ասկյարներից կազմված ընդամենը 5-6 հազարանոց ոչ կանոնավոր մի զորախումբ,[200] հավակնում էր իր իշխանությունը տարածել ոչ միայն Կարսի մարզի, այլ հսկայական մի տարածքի վրա:[201] Եկեք, հետևելով այդ «հանրապետության» տարածքները թվարկող «Հոդուդնամե» անվամբ փաստաթղթին, մտովի շրջենք այդ տարածքների սահմանով: Հարավում Հարավ-Արևմտյան Կովկասի Հանրապետության (ՀԱԿՀ) սահմանը համընկնում էր 1914թ. ռուս-իրանական սահմանի հետ, թեքվելով դեպի արևելք սահմանագիծը դառնում էր ՀԱԿՀ-Ադրբեջան սահման, Ադրբեջանին թողնելով Օրդուբադն ու Զանգեզուրը: Նախիջևանից վերև՝ դեպի հյուսիս, Շարուրով ու Արաքսի երկայնքով, ներառելով գետի ձախափնյա բնակավայրերը, շրջանցելով Երևանը հարավից և հարավ-արևմուտքից, բարձրանում էր մինչև Ալեքսանդրապոլ: Շրջանցելով Ալեքսանդրապոլն արևմուտքից՝ բարձրանում էր դեպի հյուսիս, ներառում Ախալքալաքը և մեսխեթի թուրքերով բնակեցված տարածքներով հասնում մինչև Ախալցխայի և Բորժոմի միջև ընկած լեռնաշղթան: Այդտեղից, Բորժոմից 5-6կմ դեպի արևմուտք, սահմանը Աբասթումանից լեռների շարքով հասնում էր մինչև Օզուրգետ և դուրս գալիս Սև ծով: Որպես ՀԱԿՀ-ի արևմտյան սահման հաստատվել էր 1877թ. ռուս-թուրքական սահմանը՝ սևծովյան առափնյա Խոփա ավանից մինչև Իրանի հետ սահմանը:[202] Եթե վերհիշենք այժմ նաև Ադրբեջանի ախորժակը, ապա կունենանք հետևյալ պատկերը. թուրք-ադրբեջանական այդ «պրոյեկտով» Հայաստանը հայտնվում էր չափազանց նեղ բացվածք ունեցող մի պայտաձև մահմեդական շերտի շրջափակման մեջ: Այդ պայտի նեղ բացվածքը դա հայ-վրացական սահմանն էր, որը ցանկացած պահին կարող էր փակվել, հնարավորություն տալով պայտի ծայրերին միանալ, ինչից հետո Հայաստանը կհայտնվեր մահաբեր օղակում: Բացի այդ, Հայաստանի Հանրապետության և Արևմտյան Հայաստանի միջև ստեղծվում էր մահմեդական պետական միավորում, որն ուղղակի արգելք ու խոչընդոտ էր ՀՀ-ի՝ դեպի Արևմտյան Հայաստան ծավալվելու ձգտմանը:[203]

Հավելենք, որ ՀԱԿՀ-ի ղեկավարությունը որոշակի քայլեր էր ձեռնարկում նաև միջազգային հանրության կողմից ճանաչվելու ուղղու-

[200] Генералъ А.И.Деникинъ, նշվ. աշխ., էջ 146:
[201] Այդ տարածքների քարտեզը բերված է ՀԱՎԵԼՎԱԾ 1-ում:
[202] Е.В.Клюкин, նշվ. աշխ., էջ 194, 195:
[203] Տե՛ս ՀԱՎԵԼՎԱԾ 1-ի քարտեզը:

թյամբ. նման խնդրանքով ՀԱԿՀ-ը դիմում է ԱՄՆ և Ֆրանսիայի նախագահներ Վիլսոնին և Պուանկարեին, Մեծ Բրիտանիայի վարչապետ Լլոյդ-Ջորջին: 1918թ. դեկտեմբերի 7-ին համապատասխան լիազորագրերով Փարիզի վեհաժողով են ուղարկվում 2 բանագնացներ, որոնք տեղ չեն հասնում, իսկ 1 օր անց, ՀԱԿՀ-ի ղեկավարությունը, հայտնաբերելով ճապոնացիների հետ ընդհանուր ասիական արմատներ ունենալու փաստը, հեռագրում են Ճապոնիայի կայսրին, որպեսզի վերջինս աջակցի սպանդի միջոցով ուրիշից խլած հողի վրա ինքնահռչակված «պետության» համաշխարհային ճանաչմանը:[204]

Այն օրերի իրավիճակում ՀԱԿՀ-ի ճանաչված-չճանաչված լինելու հարցը ամենևին էլ գերխնդիր չէր. պարտված Թուրքիայի և նորաստեղծ Ադրբեջանի այդ համատեղ «ծնունդի» *de-facto* գոյությունն արդեն մեծագույն նվաճում էր այդ կողմերի համար և ճանաչված լիներ այն, թե՝ չճանաչված, միևնույնն է՝ լուծելու էր նույն խնդիրը: Այն է՝ անել ամեն ինչ որպեսզի հանկարծ Կարսի մարզ չվերադառնան հայ փախստականները, որպեսզի հանկարծ չխախտվի նախքան Մուդրոսն այդտեղ հաստատված ժողովրդագրական պատկերը և ոչ մի պարագայում թույլ չտալ, որպեսզի մարզում հանկարծ հաստատվի հայաստանյան իշխանություն: Ավելին՝ չճանաչված լինելը նույնիսկ ավելի շատ հնարավորություններ էր տալիս այդ հարցերի շուրջ լայն մանևրելու համար:

Հետագայում ՀԱԿՀ-ում իրականացվեցին պետականության ցուցանակ ձևավորելու ևս մի քանի ձևական միջոցառումներ՝ գումարվեց պառլամենտ, ընդունվեց Սահմանադրություն, ստեղծվեց կառավարություն, հաստատվեցին դրոշը, զինանշանը, պետական լեզուն (բնական է՝ թուրքերենը):[205] Բացակայում են միայն տեղեկությունները օրհներգի վերաբերյալ:

Իսկ «գլխավոր կուսակցական գիծն» իրագործվում էր անշեղորեն: Թե՛ դեռևս Կարսում գտնվող օսմանյան զորքերը, թե՛ ՀԱԿՀ-ի ղեկավարությունը թույլ չէին տալիս, որ փախստականներն «անցնեն Արփաչայի աջ ափը»:[206] 1919թ. հունվարի առաջին օրերին Արդահանում գումարված 2 համաժողովներում որոշում էր կայացվել չճանաչել Մուդրոսի զինադադարը, խոչընդոտել դրա պահանջների իրականացմանը, զենքը չհանձնել անգլիացիներին, հայթայթել զենքի նոր խմբաքանակներ և Էրզրում ետ քաշված թուրքական բանակի օժանդակությամբ ստեղծել նոր զինված խմբավորումներ, որոնց միջոցով շարունակել պայքարը թշնամու

[204] Ս.Վրացյան, ՀՀ, էջ 258; Е.В.Клюкин, նշվ. աշխ., էջ 165:
[205] Е.В.Клюкин, նշվ. աշխ., էջ 166, 167, 177-187, 213:
[206] Նույն տեղում, էջ 162, 174:

(իմա՝ հայերի) դեմ:[207] Առաջ անցնելով նշենք, որ Թուրքիայի ու Ադրբեջանի դրդմամբ և ուղղորդմամբ Կարսի մարզում մահմեդականների այդ պայքարը հայերի դեմ՝ բացահայտ ու գաղտնի, բոլոր հնարավորություններով ու միջոցներով, տևեց թե՛ մինչև ՀԱԿՀ-ի լիկվիդացումը (ապրիլ, 1919թ.), թե՛ շարունակվեց նաև հետագայում՝ մարզը ՀաՀ-ին միացնելուց հետո:[208]

Մուդրոսի զինադադարից մինչև 1919թ. ապրիլի վերջն ընկած ժամանակահատվածում Կարսի մարզը պաշտոնապես փաստորեն որևիցե պետության տարածք չի հանդիսացել: Այն մասամբ վերահսկվել է թուրքերի, մասամբ՝ անգլիացիների կողմից, իսկ որպես տեղական իշխանություն որոշ ժամանակ այնտեղ հանդես է եկել ինքնակոչ մահմեդական Շուրան:

Ընդ որում, հարցը զուտ ինքնակոչ լինելը չէ: Այդ Շուրա կոչվածը միանգամայն հակաօրինական մի գոյացում էր: Այդ «պրոյեկտի» հեղինակները Շուրայի ստեղծման համար որպես հիմք վկայակոչում էին ինքնորոշման վիլսոնյան սկզբունքները: Մինչդեռ այդ նույն վիլսոնյան սկզբունքները բացառում են հենց նման դեպքերը, երբ հանցագործության միջոցով տարածքներ զբաղեցրած կողմը փորձ է անում արդեն նման «ինքնորոշման միջոցով» օրինականացնել իր կողմից ուրիշի հողին բռնի տիրանալու փաստը:[209]

### I.11. Կարսի մարզի միացումը Հայաստանի առաջին Հանրապետությանը

Անդրկովկաս մուտք գործելուց հետո անգլիացիներն ասես չցանկանային գրգռել տեղի մահմեդական տարրին և զանազան պատրվակներով թույլ չէին տալիս, որպեսզի հայկական ուժերը գրավեն Կարսի մարզը, կամ գոնե ապահովվեր մարզի փախստականների վերադարձն իրենց բնակավայրեր:[210] Անգլիացիների նման գործելաոճը միանգամայն համահունչ էր Կարսից դեռևս չհեռացած թուրքական զորահրամանատարության և տեղի «Շուրայի» դիրքորոշմանն

---

[207] Նույն տեղում, էջ 166, 167:

[208] Է.Զոհրաբյան, Թուրք-թաթարական (ադրբեջանական) հակահայկական գործունեությունը 1919թ. առաջին ամիսներին և Կովկասի բրիտանական հրամանատարությունը, Բանբեր Երևանի համալսարանի, № 135.1, 2011, էջ 33-47; Գ.Ցազըճեան, Հայ-քրդական հարաբերությունները Կարսի մարզում 1919-1920 թվականներին, Մերձավոր Արևելք (հոդվածների ժ-ծու), Երևան, 2002, էջ 158-169; Է.Զոհրաբյան, Քուրդ-թաթարական (ադրբեջանական) հակահայկական շարժումները Կարսի մարզում 1919թ. և 1920թ. սկզբին, Բանբեր Երևանի համալսարանի, №318, 6, 2012, էջ 3-17; С.Мирзоян, Г.Авакян, Докладные и письма генерала Степана Корганова о Карсской области, Բանբեր Հայաստանի արխիվների, № 2(102), Երևան, 2003, էջ 19-33:

[209] Ա.Պապյան, Հայրենատիրություն,..., էջ 68-71:

[210] Ս.Վրացյան, ՀՀ, էջ 257:

ու գործունեությանը: Մինչդեռ այդ նույն ժամանակ Ալեքսանդրապոլում, Թիֆլիսում և Երևանում կուտակվել էին թվով մոտ 100.000 գաղթականներ Կարսի մարզից, որոնք անընդհատ դիմում էին ՀաՀ կառավարությանը և դաշնության ներկայացուցիչներին՝ հնարավորություն ստեղծել իրենց ծննդավայրերը վերադառնալու համար:[211] Հայաստանի իշխանությունները, բնականաբար, ձեռքերը ծալած նստած չէին. մի կողմից իրենց հնարավորությունների շրջանակներում դիվանագիտական հատվածով ճնշում էին գործադրում թուրքական կողմի վրա, բացատրություն պահանջելով Կարսի մահմեդականությանը զինելու կապակցությամբ,[212] մյուս կողմից՝ ՀՀ կառավարությունը դաշնակիցների առջև մշտապես բարձրացնում էր երկրի սահմանների ընդարձակման, ներգաղթի, պարենավորման, գյուղատնտեսության, հաղորդակցության, ռազմական և այլ ոլորտների հետ կապված խնդիրների լուծման հրատապությունն ու անհրաժեշտությունը:[213] Սակայն անգլիացիները, որոշ ժամանակ առաջ կանխելով հայերի կողմից Ջավախքի, Լոռու և Ղարաբաղի միացումը Հայաստանին, Կարսի հարցում նույնպես չէին շտապում: Ի պատասխան ՀաՀ բազում խնդրանքների՝ բացել Կարսի մարզը և թույլ տալ գոնե հայ գաղթականներին վերադառնալ իրենց օջախները, անգլիական զորքերի շտաբի պետ գեներալ Բիչը տվել է չափազանց լակոնիկ ու կոշտ պատասխան. «*Կարսի մարզը Հայաստանին չի պատկանում*»:[214]

Վերջապես 1919թ. հունվարի 8-ին Արևմտյան Անդրկովկասում բրիտանական զորքերի հրամանատար գեներալ-մայոր Ջ.Ֆորեստիե-Ուոքերի և ՀՀ արտգործնախարար Սիրական Տիգրանյանի միջև մի համաձայնագիր էր կնքվել, որում մի շարք հարցերի հետ մեկտեղ, մասնավորապես, շեշտվում էր, որ մոտակա ժամանակները՝ մինչև վեհաժողովում խաղաղության պայմանագրի ստորագրումը, Կարսի մարզ կուղարկվեն բրիտանական զորամիավորումներ անգլիական զինվորական նահանգապետի գլխավորությամբ, իսկ մարզի քաղաքացիական կառավարումը կհանձնվի հայկական կողմին: Ենթադրվում էր, որ հայկական վարչակազմը, անգլիական զինվորական նահանգապետի հետ համագործակցելով, իրավասու կլինի լուծել մարզի առօրյա խնդիրները, իսկ լուրջ տարաձայնությունների ի հայտ գալու պարագայում, հարցի վերաբերյալ վերջնական որոշումը կայացնելու է դաշնակիցների զորքերի կովկասյան հրամանա-

---

[211] Ա.Խատիսեան, նշվ. աշխ., էջ 155:
[212] Е.В.Клюкин, նշվ. աշխ., էջ 161:
[213] Ս.Վրացյան, ՀՀ, էջ 256, 261:
[214] ՀԱԱ,Ֆ 275, ց2, գ 5,թ. 53; Генералъ А.И.Деникинъ, նշվ. աշխ., էջ 147:

տարությունը:[215] Այդ մասին՝ դիրեկտիվների տեսքով, Ֆորեստիե-Ուոքերը տեղյակ է պահում Կարսից դեռևս չնահանջած թուրքական զորքերի հրամանատարությանը, սակայն վերջինս անգլիական կողմին պատասխանում է կատեգորիկ մերժումով:[216]

Բայց համաձայնությունը բրիտանական հրամանատարության և հայկական կառավարության միջև ստորագրված էր, թուրքական զորամիավորումների դուրսբերումը Կարսի մարզից ավարտվելու էր 1919թ. հունվարի 25-ին, և մարզը թուրքերից «ընդունելու» համար 1919թ. հունվարի 13-ին Կարս ժամանեցին անգլիական զինվորական նահանգապետ նշանակված Կ.-Է. Թեմպերլեյը և հիշատակված գեներալ Բիչը՝ 200 բրիտանական զինվորների ուղեկցությամբ: Մարզի ենթադրյալ քաղաքացիական կառավորումն իրականացնելու համար նրանք իրենց հետ բերել էին նաև 50-60 հոգուց բաղկացած հայ չինովնիկների խումբը:[217] Բայց, ինչպես քանիցս շեշտվել է, մինչև անգլիացիների՝ Կարս մուտք գործելը, թուրքական կողմն արդեն կարողացել էր մարզում ձևավորել համապատասխան տրամադրություններ և, ի դեմս «Շուրայի»՝ նաև որոշակի քաղաքական իրավիճակ և մթնոլորտ, որոնց իմաստն ու էությունն այն էր, որպեսզի ամեն գնով թույլ չտրվի հայերի մուտքը Կարսի մարզ:

Այդ ամենին համապատասխան և համահունչ էլ կայացավ անգլիական զինվորական նահանգապետի և իր հետ եկած հայ քաղաքացիական չինովնիկների դիմավորումն ու ընդունելությունը: Հենց Կարսի երկաթգծի կայարանում «Շուրայի» ներկայացուցիչները թարգմանչի միջոցով բրիտանական կողմին հանձնեցին մի դիմում-հայտարարություն, որում իրենց բողոքն ու անհամաձայնությունն էին հայտնում մարզի քաղաքացիական իշխանությունը հայերին հանձնելու՝ անգլիացիների որոշման կապակցությամբ: Անգլիացիներին ներկայացվեց, որ Կարսի Ազգային խորհուրդը, նույն ինքը՝ «Շուրան» իրենից ներկայացնում է մարզի ազգային մեծամասնության կառավարման մարմին և մինչև արյան վերջին կաթիլը կպայքարի, որ բացառվի հայերի վերադարձը Կարսի մարզ: Այդ դիմումի հանձնումն անգլիական կողմին առավել տպավորիչ դարձնելու համար, «Շուրան» Կարսի կայարանում կազմակերպել էր նաև բազմահազարանոց հանրահավաք: Դրանց մասնակիցները հայերի հողերին, տներին, անասուններին և այլ ինչքին տիրացած մահմեդականներն էին, որոնք, բնականաբար, դեմ էին հայերի վերադարձին և

215 Ս.Վրացյան, ՀՀ, էջ 257; А.М.Погосян, Карсская область…, էջ 225, 226; Е.В.Клюкин, նշվ. աշխ., էջ 169, 170:

216 Е.В.Клюкин, նույն տեղում:

217 Е.В.Клюкин, նշվ. աշխ., էջ 161:

սպառնում էին դաժան հաշվեհարդար տեսնել Կարս ժամանած հայ չինովնիկների նկատմամբ:[218] Անգլիացիները տեղի տվեցին: Նրանք հայերին ետ ուղարկեցին, իսկ իրենց պահանջներն էլ սահմանափակեցին ընդամենը Կարսում բրիտանական նահանգապետի ներկայության պնդմամբ: Կարսում հաստատվեց եռիշխանություն. դեռևս դուրս չբերված թուրքական զորքերի հրամանատարություն, տեղի Մահմեդական Ազգային խորհուրդ և անգլիական նահանգապետ, որը դրսևորում էր թուրքերի և նրանց կողմից հռչակած հակահայկական կուրսի նկատմամբ ավելի քան հանդուրժողական մոտեցում: Կարսից թուրքական զորքերի հեռանալուց հետո բրիտանական նահանգապետն ու «Շուրան» կարծես ավելի մտերմացան ու բարեկամացան: Նրանց նստավայրերը գտնվում էին նույն փողոցի վրա, իրար դեմ-դիմաց շենքերում: Մեկի կտուրի վրա ծածանվում էր օսմանյան դրոշը, մյուսի կտուրին՝ բրիտանականը:[219]

Բայց այդ «երանելի» իրավիճակը երկար չտևեց: 1919թ. փետրվարի վերջին Կարսի զինվորական նահանգապետի պաշտոնում թուրքոֆիլ Թեմպերլեյին փոխարինում է գեներալ Վ.Ասսերը:[220] Մարտ ամսի ընթացքում անգլիացիների պահվածքը բավականին կտրուկ փոփոխություններ է կրում. կարծես անհետանում են նրանց կողմից դրսևորվող թուրքոֆիլությունն ու հայերի նկատմամբ անբարյացկամ վերաբերմունքը: Այդ օրերի գործիչները դա հակված են բացատրել մի կողմից բուն թուրք-անգլիական հարաբերությունների սրմամբ և մյուս կողմից՝ այդ նույն ժամանակաշրջանում պանիսլամական շարժումների ակտիվացմամբ:[221] Համապատասխանաբար փոխվում է նաև անգլիական կողմի ընդհանուր քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ: Այդ կապակցությամբ Սիմոն Վրացյանը գրում է. «*…Ապրիլ ամսից սկսած, Անդրկովկասի անգլիական հրամանատարության քաղաքականությունը զգալի կերպով փոխվեց հօգուտ հայերի, և Հայաստանի սահմանների ընդարձակման խնդիրը ստացավ նոր մղում: Հայկական կառավարության և անգլիական բարձր հրամանատարության համաձայնությամբ որոշվեց հայ-անգլիական ուժերով գրավել Կարսը…*»:[222] Շարունակությունը ընթերցենք Ալեքսանդր

---

[218] Генералъ А.И.Деникинъ, նշվ. աշխ., էջ 146; Е.В.Клюкин, նշվ. աշխ., էջ 170, 171:
[219] Ս.Վրացյան, ՀՀ, էջ 256, 257; А.М.Погосян, Карсская область…, էջ 224, 225; Генералъ А.И.Деникинъ, նշվ. աշխ., էջ 146,147; Е.В.Клюкин, նշվ. աշխ., էջ 171-174:
[220] Генералъ А.И.Деникинъ, նշվ. աշխ., էջ 147; Е.В.Клюкин, նշվ. աշխ., էջ 174: Այդ կապակցությամբ նշենք նաև, որ թե՛ Սիմոն Վրացյանը, թե՛ Ալեքսանդր Խատիսյանը 1919թ. մարտ-ապրիլ ամիսներին՝ որպես Կարսի բրիտանական զինվորական նահանգապետի շարունակում են նշել գնդապետ Թեմպերլեյի անունը. տե՛ս Ս.Վրացյան, ՀՀ, էջ 261, Ա.Խատիսեան, նշվ. աշխ., էջ 156:
[221] Генералъ А.И.Деникинъ, նշվ. աշխ., էջ 146,147,173:
[222] Ս.Վրացյան, նույն տեղում:

Խատիսյանի հուշերում. «*Որոշուեցաւ, որ մեր զօրամասերը պիտի շարժվին դէպի Կարս երկու ուղղութեամբ. մէկը՝ երկաթուղային գծով, միւսը՝ խճուղիով: Հայ զինուորներու թիւը պիտի ըլլար 1.200, իսկ անգլիական զինուորները պիտի ըլլային սկիզբը 1.500 և ապա՝ 3.000... Ավելորդ է ըսել, թե որպիսի խոշոր դէպք էր մեր պետական կեանքին համար հայ զօրքերու մուտքը Կարս... Հայ զինուորներու եկՆէն բնական է, որ ծայր տուաւ նաև վերադարձը հայ գաղթականներուն դէպի Կարսի նահանգը...*»:[223]

Հայկական զորքերը 1919թ. ապրիլի 24-ին Կարս մտան առանց որևիցե դիմադրության հանդիպելու: Բնական հարց է ծագում, բա ի՞նչ եղավ, ինչպե՞ս իրեն դրսևորեց այդ պարագայում Կարսի «Շուրան», որ երդվել էր ոչ մի հայի Արփաչայի աջ ափ չթողնել և որի այդ սպառնալիքներին տեղի էին տալիս անգլիացիները: Բայց... չմոռանանք, որ նույն անգլիացիներին է պատկանում «*չկան հավերժ բարեկամներ և հավերժ թշնամիներ*» դրույթի հեղինակային իրավունքը: «Շուրան» փորձ էր արել դիմադրել և չզիջել իշխանությունը: Իրավիճակի հանգուցալուծումը եղել էր չափազանց պրոզաիկ. անգլիացիները պարզապես ձերբակալել էին «Շուրայի» բոլոր անդամներին ու ևս մի քանի տեղի ազդեցիկ մահմեդական դեմքերի (ընդամենը 153 մարդ) և տեղափոխել նրանց Մալթա կղզի:[224]

Կարսի մարզում այդ օրերի դեպքերի ընթացքի ժամանակագրությունը՝ ըստ Սիմոն Վրացյանի. «*...Առաջին օրերը, իշխանությունը և քաղաքի ու բերդի պահպանությունը անում էին անգլիական զինվորները. ապր. 28-ին իշխանությունն ամբողջապես փոխանցվեց հայերին. անգլիական զինվորներին փոխարինեցին հայերը. բերդապետ նշանագվեց փոխգնդ. Մատվեևը:*

*Մայիսի 2-ին հայերի ձեռքն անցավ Արփաչայ-Սարիղամիշ երկաթուղին, և մայիսի 4-ից սկսվեց կանոնավոր երթևեկությունը:*

*Մայիսի 9-ին հայկական զորքերը գրավեցին Մերդենեկը, մայիսի 13-ին, առանց կռվի, մտան Օլթի և Կաղզվան: Քրդերն ու թուրքերը ընդունեցին նրանց աղ ու հացով...*»:[225]

Համաձայն նախօրոք ձեռք բերված պայմանավորվածության, Կարսի մարզի Արդահանի շրջանի հյուսիսային մասը հանձնվեց Վրաստանին, իսկ Օլթիի շրջանը դեռևս պետք է կառավարվեր անգլիացիների կողմից:[226]

---

[223] Ա.Խատիսեան, նշվ. աշխ., էջ 156:

[224] Ս.Վրացյան, նույն տեղում; Ա.Խատիսեան, նշվ. աշխ., էջ 156, 157; Генералъ А.И.Деникинъ, նշվ. աշխ., էջ 147:

[225] Ս.Վրացյան, նույն տեղում:

[226] А.М. Погосян, Карсская область..., էջ 225; Վ.Հարությունյան, նշվ. աշխ., էջ 118-120:

1919թ. մայիսի 10-ին Կարս են ժամանում և մեծ հանդիսավորությամբ ընդունվում այդ օրվա ՀՀ վարչապետ Ալեքսանդր Խատիսյանն ու անգլիական գեներալ Դևին: Մայիսի 11-ին համաժողովրդական մաղթանք է տեղի ունենում Կարսի Առաքելոց եկեղեցում, ուր Խատիսյանն իր արտասանած ճառում հայտարարում է. «...*Մինչև մայիսի 15-ը մեր զորքերը պետք է գրավեն Ալաշկերտի հովիտը և Բասենը...*»:[227] Դա, ինչպես հայտնի է, տեղի չունեցավ, սակայն 1919թ. եղան այլ կարևոր տարածքային ձեռքբերումներ:

Անգլիացիների համաձայնությամբ, նույն սցենարով, ապրիլ-մայիս ամիսներին, առանց միջադեպերի տեղի ունեցավ նաև Նախիջևանի միացումը Հայաստանին:[228] Գրավման ծրագիրը կազմվել էր անգլիացի գեներալ Դևիի, Դրոյի և գեներալ Հախվերդյանի կողմից: Հայկական զորքերի՝ 1919թ. մայիսի 20-ին Նախիջևան մտնելն ազդարարեց միաժամանակ նաև այդտեղ Կարսի նմանակով ստեղծված ինքնահռչակ Թուրք-Արաքսյան Հանրապետության լիկվիդացումը:[229]

Հետևելով Սիմոն Վրացյանին՝[230] մենք նույնպես կարող ենք արձանագրել, որ 1919թ. ապրիլ-մայիսին փաստորեն իրականացվեց Էրիվանի գուբերնիայի և Կարսի մարզի ամբողջացման ու միավորման գործընթացը ՀաՀ-ի սահմաններում:

Ավելորդ է բացատրել, թե ի՞նչ իսկայական նշանակություն ուներ Հայաստանի համար 1919թ. գարնանն իրականացրած՝ երկրի սահմանների այդ ընդլայնումը: Ամենակարևորը, թերևս այն էր, որ սահմանների նման փոփոխման շնորհիվ Հայաստանը կարողացավ պատռել իրեն շրջապատող մահմեդական օղակը և, եթե այդ պահին հնարավոր չէր այն լիովին ոչնչացնել, ապա գոնե այն բացվեց և զգալի չափով հեռացվեց, երկիրը կարողացավ դուրս պրծնել ոչ լրիվ 3 ույեզդներում կծկված վիճակից և դուրս գալ դեպի նոր՝ ավելի ընդարձակ ստրատեգիական տարածք: Միացված տարածքներում էլ սկսեց բնակություն հաստատել հայ բնակչությունը:

Բայց այդ ամենի հետ մեկտեղ միացված տարածքներն իրենց հետ բերեցին նաև լուրջ խնդիրներ: Դրանցից կարևորագույններն էին պարենային հարցը. սոված երկրի վզին ավելացավ նոր ուտողների մի մեծ գլխաքանակ, և երկրորդն էլ այն էր, որ հայկական պետությունը սահմանների այդ ընդլայնումով իր կազմի մեջ ներգրավեց իր նկատմամբ բացահայտ թշնամաբար տրամադրված և Թուրքիայի ու Ադրբեջանի կողմից ուղղորդվող մահմեդական բնակչության բազմա-

[227] Ս.Վրացյան, նույն տեղում:

[228] Ա.Խատիսեան, նշվ. աշխ., էջ 161-165; Հայաստանի Հանրապետությունը 1918-1920թթ. (քաղաքական պատմություն)..., էջ 87:

[229] Ս.Վրացյան, ՀՀ, էջ 261-262; А.Зубов, նշվ. աշխ.:

[230] Ս.Վրացյան, ՀՀ, էջ 262:

հազարանոց մի նոր խմբաքանակ:[231] Հայաստանում տեղաբաշխված այդ մահմեդական զանգվածը միշտ էլ հանդես եկավ որպես հայկական պետության անվտանգությանն ու բուն գոյությանն ուղղակիորեն սպառնացող մեծագույն մի վտանգ:[232]

Նշենք նաև, որ հայկական պետականության և տեղում նրա իշխանությունն հաստատելու նկատմամբ ամենևին լոյալություն չեն դրսևորել նաև տեղի հունական և ռուսական համայնքները: Նրանք ամեն պատեհ առիթով՝ թե՛ առանձին-առանձին, թե՛ մահմեդականների հետ դաշնակցելով, միշտ էլ որպես հակառակորդ են հանդես եկել ընդդեմ հայկական անկախ պետականությանը:[233]

Անգլիացիները, առաջնորդվելով միայն իրենց հայտնի քաղաքական նպատակահարմարությամբ, չափազանց կտրուկ միջոցներով ժամանակին կանխեցին հայկական պետության որոշակի հզորացումը, ինչն անկասկած տեղի կունենար, եթե Հայաստանին միացվեին կայուն ու ամուր հոծ հայկական բնակչություն ունեցող Ղարաբաղը, Լոռին ու Ջավախքը: Փոխարենը, նույն նպատակահարմարությունից ելնելով, Հայաստանին հնարավորություն տրվեց իրեն միացնել պրակտիկորեն հայաթափ և մահմեդականներով բնակեցված Կարսն ու Նախիջևանը: Տարածքներ՝ որոնց գործնական իրացումն ու իր ձեռքում պահելը Հայաստանից պահանջում էին ոչ միայն հսկայական նյութական, այլ նաև մարդկային և զինական ռեսուրսներ ու ներդրումներ: Որոնք բոլորն էլ, ինչպես քաջ հայտնի է, այդօրվա Հայաստանում ավելի քան սահմանափակ էին, իսկ որոշ դեպքերում պարզապես բացակայում էին: Մասնավորապես, մեզանում հենց զինուժի քանակային պակասի պատճառով 1919-ի օգոստոս-սեպտեմբերին հայաստանյան իշխանության վերահսկողությունից և առհասարակ, Հայաստանի կազմից փաստորեն դուրս եկավ Նախիջևանը…[234]

Ինչևիցե, ութ ու կես դար հետո Կարսը կրկին կազմեց հայկական պետության մի մասը: Հետագայում՝ 1920թ. ամռանն իրականացված

---

[231] Ս.Վրացյան, ՀՀ, էջ 309-326; Генераль А.И.Деникинъ, նշվ. աշխ., էջ 175:

[232] Ս.Վրացյան, նույն տեղում; Ա.Խատիսեան, նշվ. աշխ., էջ 154-155; Ռուբէն, նշվ. աշխ., էջ 182-189:

[233] ՀԱԱ Ֆ.200, ց.1, գ.274, թ.10; ՀԱԱ Ֆ.200, ց.1, գ.353, թ.109; ՀԱԱ Ֆ.200, ց.1, գ.353, թ.109; Վ.Հարությունյան, Հայ բոլշևիկների …, էջ 132-150:

[234] 1919թ. հուլիս-օգոստոսին՝ անգլիական զորքերի հեռանալուց հետո, Նախիջևանը փաստորեն դուրս եկավ ՀՀ պետական համակարգից: Մահմեդական գերակշռող զինուժի ճնշման տակ հայ փոքրաթիվ զորաջոկատների հետ գավառը ստիպված թողեց նաև տեղի խիստ նոսրացած հայ բնակչության մեծ մասը: Ճիշտ է, մինչև Անդրկովկասի խորհրդայնացումը իրավաբանորեն գավառը Ադրբեջան պետության մաս էլ չկազմեց, բայց այլևս երբևիցե Նախիջևանը չհանդիսացավ նաև հայկական պետության մաս; տե՛ս Ս.Վրացյան, ՀՀ, էջ 314 -8, 325, 326; Ա.Խատիսեան, նշվ. աշխ., էջ 165-7:

երկրի վարչատարածքային նոր բաժանումից հետո (չորս նահանգ՝ Արարատյան, Շիրակի, Վանանդի և Սյունիքի), Կարսի մարզը դարձավ առաջին Հանրապետության Վանանդի նահանգը:

Ամենևին չթերագնահատելով այդ օրերի մեր մյուս տարածքային ձեռքբերումները՝ դժվար թե նորություն հայտնած լինենք, որ հատկապես Կարսն իր ռազմավարական դիրքով և, կարելի է ասել, իր էությամբ, նոր բովանդակություն, շոշափելի «կշիռ ու հասակ», որոշակի սոլիդություն հաղորդեց այդօրվա հայկական պետությանը: Առաջին Հանրապետության օրերի մի հոդվածագիր ուղղակիորեն նշել է. «...*Կարսի նահանգը ամենամեծ անհրաժեշտությունն է մեր պետական-ազգային գոյության համար*...»:[235] Ոմանց մոտ էլ նույնիսկ մի յուրատեսակ վախվորածություն կար, թե իր ստրատեգիական կարևորությամբ հայտնի այդ տարածքը արդյո՞ք Հայաստանի «հագովն է»:

1919-ի գարնան այն օրերին, պատմական դեպքերի բերումով կրկին մեր ձեռքն անցած հինավուրց հայկական այդ տարածքում, որը բացի Անդրկովկասում կարևորագույն ռազմավարական նշանակություն ունենալուց, ուներ նաև զգալի տնտեսական ներուժ,[236] ՀաՀ կառավարությունը շատ արագ ձեռնամուխ եղավ մի քանի կարևոր ծրագրերի իրականացմանը. «*Չորս գլխաւոր նպատակներ կը հետապնդէր մեր իշխանութիւնը Կարսի նահանգին մէջ: Առաջին՝ օգտագործել ցարական կառավարութենէն մնացած հարստութիւնները՝ մեքենաները, երկաթէ ձողերը, հագուստեղէնը, ռազմամթերքը, երկաթուղային արհեստանոցները, փայտը և բազմաթիւ ուրիշ առարկաներ: Պէտք էր հոգ տանիլ ոչ միայն անոնց օգտագործման, այլ պէտք էր միջոցներ ձեռք առնել անոնց պահպանման համար, որ բաւական դժուար գործ էր այն ժամանակուայ պայմաններուն մէջ: Մեր երկրորդ նպատակն էր խաղաղեցնել բնակչութեան խլամ տարրը ու հաշտեցնել զայն քրիստոնեայ զանգուածին հետ: Երրորդ՝ շահագործել բնական հարստութիւնները՝ անտառը, արօտավայրերը, ածխահանքերը և աղահանքերը: Եւ, վերջապէս չորրորդ՝ ասպիճանաբար մօտենալ թրքական սահմանին՝ գրաւելով 1914թ. սահմանին վերաբերեալ բոլոր վայրերը, և ապա պատրաստուիլ անցնելու Թրքահայաստան, երբ Փարիզի վեհաժողովը իր վերջնական որոշումը տայ մեր պետութեան սահմաններու մասին*...»:[237]

Իրոք, մարզն անհրաժեշտ էր իրացնել, ինչպես ասում են՝ «մարսել» շատ արագ: Քանզի դա այն ռազմավարական հենադաշտն էր,

---

[235] "Յառաջ", 12 նոյեմբերի, 1920թ.:

[236] Карсская область, Российские универсальные энциклопедии: БрЕ и БСЭ, объединенный словник, http://gatchina3000.ru/brockhaus-and-efron-encyclopedic-dictionary/049/49279.htm.

[237] Ա.Խատիսեան, նշվ. աշխ., էջ 157:

որտեղից հայքական զորքը պետք է մոտ ժամանակներում շարժվեր դեպի Արևմտյան Հայաստան՝ ինչն այդ օրերին թվում էր շատ հավանական, սակայն այդպես էլ չդարձավ իրականություն: Մյուս կողմից՝ արևմուտքից որևիցե սպառնալիքի ի հայտ գալու դեպքում (ինչն այդ օրերին թվում էր ոչ շատ հավանական, բայց դարձավ իրականություն), հենց այդ տարածքում հայկական զորքը պետք է դիմավորեր թշնամուն և, օգտագործելով Կարսի հնարավորությունները, կասեցներ նրա առաջխաղացումը:

Բնականաբար, տարածքը գրավելուն պես Կարս մուտք գործեց նաև մարզի նորանշանակ հայկական իշխանությունը: Կարելի է ասել, որ այն բավականին ներկայանալի էր՝ քաղաքացիական նահանգապետ էր նշանակվել Ղորղանյանների հայտնի ազնվական տոհմի շառավիղներից մեկը՝ Ստեփան Ղորղանյանը, որը 1885-88-ին եղել էր Սուրմալուի, 1888-95-ին՝ Նախիջևանի գավառապետի օգնական, 1895-1910-ին՝ Նոր Բայազետի, 1910-15-ին՝ Քութայիսի գավառապետ,[238] իսկ հետագայում՝ մինչև Ռոմանովների դինաստիայի տապալումը՝ նաև Կարսի շրջանի կառավարիչ:[239] Ստեփան Ղորղանյանն ուներ նաև գեներալ-մայորի զինվորական կոչում:[240] Կարսի բերդի հրամանատար էր նշանակվել ցարական բանակի գնդապետ, հայկական բանակի գեներալ Դանիել-բեկ Փիրումյանը, որը հայտնի էր որպես Սարդարապատում մեզ համար հաղթանակ կորզող ամենահայտնի և քաջ զորապետերից մեկը: Դրանց կողքին իր անցած ուղով համեմատաբար համեստ էր դիտվում Կարսի մարզի հայկական զինված ուժերի ընդհանուր հրամանատար նշանակված գեներալ Արտեմի Հովսեփյանցը (նաև՝ Հարություն Հովսեփյան): Այս եռյակն էլ հենց հանդիսանում էր Կարսի մարզի այդօրվա մեր բարձրագույն իշխանությունը:[241] Եվ նրանց միասնական ջանքերով պետք է իրականացվեին մարզում երկրի կառավարության կողմից նախատեսված ռազմաքաղաքական, տնտեսական և բոլոր այլ բնույթի ծրագրերը:

Ինչպիսի՞ն էր այդ օրերի Կարսի մարզի հայկական իշխանական կառույցը, որքանո՞վ էր այն միասնական, միաձույլ և համախմբված, որպեսզի կարողանար մարզում հանդես գալ որպես կուռ և միասնական հայկական պետական իշխանական ուժ, և որքանո՞վ էր այն տիրապետում իրավիճակին մարզի՝ իրեն հանձնած տարածքներում: Ինչպիսի՞ն եղավ նրա ծավալած գործունեությունը հետագայում:

---

[238] ՀՍՀ, հատոր 7, 1982թ., էջ 40-41:
[239] Ա.Խատիսեան, նշվ. աշխ., էջ 156:
[240] С. Мирзоян, Г. Авакян, նույն տեղում:
[241] Ա.Խատիսեան, նշվ. աշխ., էջ 157; R.G.Hovannisian, Republic of Armenia: First year, 1918-1919, University of California Press, 1971, p. 204-227:

Կրկին խոսքը տանք այդօրվա նրանց անմիջական ղեկավար, Հայաստանի վարչապետ Ալեքսանդր Խատիսյանին.

*«Դժբախտաբար, անոնց միջև շարունակ վէճեր և բաղխումներ կ'ըլլային իրենց իշխանութեան սահմաններու վերաբերեալ, ինչպես նաև Կարսի շրջանը կառավարելու եղանակներու և միջոցներու մասին իրենց ունեցած տարակարծութեանց հետևանքով:*

*Ղորղանեանը կողմնակից էր խաղաղ եղանակներու, կ'ուզէր կառավարել երկիրը վստահելով ազգաբնակութեան բոլոր տարրերուն, ջանալով քաղաքակրթական միջոցներով, տնտեսական շնորհներով և մեղմ վերաբերմունքով գրաւել ամէնքի սիրտը դէպի հայկական նոր իշխանութիւնը: Իսկ մեր երկու զորավարները սրի ծայրը կը տեսնէին միակ փրկութիւնը և միակ միջոցը երկիրը խաղաղեցնելու:*

*Այս հիմնական տարակարծութեան գետնի վրայ էր, որ շարունակ տեղի կ'ունենային անախորժ ու վնասակար թիւրիմացութիւններ ու բաղխումներ: Զոր. Փիրումեանը կը պահանջէր, որ իրեն զինուորական նահանգապետի իրաւունքներ տրուին, որպեսզի քաղաքացիական իշխանութիւնն ալ, յանձին նահանգապետ Ղորղանեանի, իրեն ենթարկուի: Ղորղանեանը, ընդհակառակն, բացարձակապէս դէմ էր իշխանութեան այդ ձևի կազմակերպման: Աւելորդ է ըսել, թէ այդ խուլ պայքարը կը փոխանցուէր և համապատասխան մարմիններուն ու պաշտօնեաներուն:*

*Այստեղ ես կը բավականանամ միայն փաստը արձանագրելով, առանց կանգ առնելու անոր գոյութեան և յառաջհման պատճառներուն վրայ: Եւ կ'արձանագրեմ ասիկա, որովհետև այդ պայքարը ծանրագոյն, և կարելի է ըսել, ճակատագրական հետևանքներ ունեցավ ապագային...»*[242]

Եկեք, սակայն, այս պահին մեր զորքն ու չինովնիկությունը՝ իրենց զորահրամանատարներով ու նահանգապետով, վերադարձող հայ գաղթականությունը թողնենք Կարսում և տեսնենք, թե ինչ իրադարձություններ էին կատարվում և հասունանում այդօրվա Հայաստանի և, մասնավորապես՝ Կարսի մարզի շուրջ: Առավել ևս, որ Առաջին աշխարհամարտում պարտված ու բառացիորեն «անդամահատման» ռեալ վտանգի առջև հայտնված Թուրքիան ուշքի էր գալիս և ձեռնարկում էր իրական քայլեր, որպեսզի պատերազմում կրած ռազմական պարտությունը չվերածվի հանկարծ կատարյալ աղետի թուրք ազգի և թուրքական պետության համար:

## I.12. Կարսի մարզը՝ քեմալական շարժման առաջնային թիրախ

Փարիզի վեհաժողովի մասնակից արևմտյան դիվանագետներից մեկը 1919թ. մարտի վերջերին իր օրագրում կատարել էր հետևյալ՝

[242] Ա.Խատիսեան, նշվ. աշխ., էջ 157-158; R.G.Hovannisian, նշվ. աշխ., էջ 207; տե՛ս նաև Գ.Ցազըճեան, Կարսի 1920թ. ...:

չափազանց անկեղծ մի գրառում. *«Խեղճ Նուբար, խեղճ Ահարոնյան, դժբախտ հայեր: Մեր բոլոր խոստումները ասես քամին փարավ, և նորահռչակ Հայկական պետությունը չունի անգամ մի չնչին հնարավորություն…»*:[243] Իրոք, Մեծ տերությունների կողմից չէր կատարվում և ոչ մի կոնկրետ քայլ Արևմտյան Հայաստանի տարածքում գտնվող թուրքական զորամիավորումները զինաթափելու և այդտեղից դրանց դուրս բերելու ուղղությամբ: Դրա իրագործումը, բնականաբար, ենթադրում էր պարտադրանք՝ ռազմական ուժի կիրառումով, ինչից Դաշնության անդամ պետությունները զերծ էին մնում: Թուրքական կողմը, բնականաբար այդ ամենից քաջատեղյակ և քաջալերված, ինչպես ասում են՝ «իր գործն էր առաջ տանում»: Պարտված Թուրքիան մի կողմից ամենախիստ ու դաժան ձևով խոչընդոտում էր կոտորածից փրկված հայ գաղթականների վերադարձը դեպի իրենց բնակավայրեր: Իսկ նրանք, ովքեր համառում էին ու փորձ էին անում գալ ու տիրանալ իրենց օջախին, ենթարկվում էին բռնությունների, իսկ ավելի հաճախ՝ «թուրքական ավանդույթի» համաձայն՝ պարզապես սպանվում էին:[244] Մյուս կողմից՝ թուրքական իշխանությունները հայաթափված տարածքներն ինտենսիվորեն բնակեցնում էին այլ վայրերից տեղափոխված մահմեդականներով՝ «մուհաջիրներով»՝ զուգաբերելով այդ վերաբնակիչներին զգալի նյութական աջակցություն:[245] Պարզ է, որ այդ գործընթացների միջոցով Թուրքիան շատ արագ կհասներ այնպիսի արդյունքի, որով վեհաժողովի մասնակիցներին կկանգնեցներ կատարված այնպիսի մի փաստի առաջ, որի դեմ այլևս անզոր կլիներ դաշնակիցների կողմից կայացվելիք ցանկացած հայանպաստ որոշում:

Հայաստանը, բնականաբար, վեհաժողովում հնչեցրեց այդ խնդիրները և պահանջեց, որպեսզի դաշնակիցները միջամտեն և ստիպեն Թուրքիային դադարեցնել հիմա էլ գաղթականների վերադարձին խոչընդոտելով ու մուհաջիրների տեղավորման միջոցով հայկական տարածքների բռնազավթումը: Սակայն, քաջ գիտակցելով, որ որևէ դրական արձագանքը ենթադրում ու պահանջում է հետագա ուժային միջամտություն, վեհաժողովի և ոչ մի մասնակից ինչ-որ կերպ չարձագանքեց հայերի կողմից հնչեցրած այդ տագնապին: Հաղթող տերությունների կողմից այդ պահին արձագանքի չարժանացավ նաև Հայաստանի մյուս առաջարկը՝ իրեն բավարար չափով ռազմական օգնություն տրամադրել, որպեսզի հայերը սեփական

---

[243] Р.Г. Ованнисян, նշվ. աշխ., էջ 94, 95:

[244] Р.Г. Ованнисян, նշվ. աշխ., էջ 83; Ս.Վրացյան, ՀՀ, էջ 260:

[245] Օրինակ, արևելյան վիլայեթներում վերաբնակվող մահմեդականների մի խմբաքանակին Օսմանյան կառավարությունը տրամադրել էր ոսկով մոտ 3 միլիոն ֆունտ գումար; տե՛ս Р.Г. Ованнисян, նշվ. աշխ., էջ 85:

ուժերով փորձեն կանխել Արևմտյան Հայաստանի բնակեցումը մահմեդականներով և միաժամանակ աջակցեն հայ գաղթականների վերադարձին իրենց օջախները:[246] Միաժամանակ, ինչպես ցույց տվեցին դեպքերի հետագա զարգացումները, այդ օրերին Թուրքիայում առկա էր զգալի մի զանգված, որին, մեղմ ասած, այնքան էլ չէին գոհացնում պատերազմից հետո ստեղծված իրավիճակն ու Թուրքիայի համար դաշնակիցների կողմից նախատեսվող ապագան:

Իրոք, Օսմանյան կայսրությունը շատ պատերազմներ էր վարել, տարել էր հաղթանակներ, ունեցել պարտություններ, սակայն այնպիսի ծանր իրավիճակում, որում որ նա հայտնվեց Առաջին աշխարհամարտից հետո, երբեք չէր եղել: Մուդրոսի զինադադարից հետո թուրքերի գլխին կախվել էր պետականությունը կորցնելու իրական վտանգը: Մեծ տերություններն արդեն, փաստորեն, զբաղեցրել էին Օսմանյան կայսրության՝ իրենց համար անհրաժեշտ տարածքներն ու հաղորդակցության ուղիները: Հայերը, չնայած իրենց համար առկա դժվարություններին, աստիճանաբար ընդլայնում էին իրենց կողմից վերահսկվող տարածքները և 1919թ. կեսերին արդեն մոտենում էին բուն Արևմտյան Հայաստանին: Օսմանյան կայսրությունից իրենց ստանալիքն ունեին նաև հույները՝ մեծ տերությունները նրանց էին հատկացնում Արևելյան Թրակիան և Փոքր Ասիայի առափնյա շրջանները՝ խառը թուրք-հունական բնակչությամբ:[247] Հայկական գործոնի համընդհանուր բնույթի հետ մեկտեղ, հույն-թուրքական խառը բնակչությամբ այդ վայրերում (օրինակ՝ Իզմիր, Սամսուն) հունական կողմի ակտիվացումն իր հերթին միանգամից առաջ էր բերել թուրքական տարրի վախն ու դժգոհությունը: Տեղի թուրքերի կողմից հակազդող քայլերի ձեռնարկման հետևանքով այդ տարածքներում սկսվեցին բռնկվել միջհամայնքային ընդհարումներ: Միաժամանակ, այն բոլոր վայրերում, որտեղ առկա էր տարածքներ կորցնելու վտանգը՝ Իզմիր, Սամսուն, Տրապիզոն, Էրզրում և այլն, 1918թ. վերջերին-1919թ. սկզբներին շատ արագ ստեղծվեցին «Ազգային իրավունքների պաշտպանության կոմիտե» անվամբ մի շարք մահմեդական կազմակերպություններ, որոնց ստեղծողն ու ուղղորդողներն էին հիմնականում թուրքական բանակի սպաներն ու իթթիհատական գործիչները:[248] Այդ կիսառազմական, կիսաքաղաքական, կիսահա-

---

[246] Р.Г. Ованнисян, նշվ. աշխ., էջ 84-90, 403; Ս.Վրացյան, նույն տեղում:

[247] Н.Н.Разумихина, Распад империи и зарождение кемализма 1918-1920 годы, Культура народов Причерноморья, №196, т.2, с. 100-1. С.Тарасов: Как Владимир Ленин и Мустафа Кемаль советизировали Закавказье, http://regnum.ru/news/polit/1160915.html.

[248] Օրինակ, 1918թ. դեկտ. 4-ին Էրզրումում ստեղծված «Արևելյան վիլայեթներում ազգային իրավունքների պաշտպանության միության» հովանավորը երկրի հյուսիս-արևելքում

սարական կազմավորումները, որոնց միակ նպատակն էր թույլ չտալ, որպեսզի հայերն ու հույները, օգտվելով Թուրքիայի պարտված լինելու հանգամանքից, դաշնակիցների աջակցությամբ վերատիրանային իրենց պատմական հողերին, ինչպես և Կարսի «Շուրա»-ի պարագայում, իրենց ստեղծումը ձևականորեն հիմնավորում էին ինքնորոշման վիլսոնյան սկզբունքներով:[249]

Բռնկված թուրք-հունական ընդհարումներին վերջ տալու և հետագայում դրանք կանխելու նպատակով 1919թ. մարտի 9-ին Սամսունում ափ են իջնում 200 բրիտանական զինվորներ: Միաժամանակ Թուրքիայում բրիտանական Գերագույն կոմիսարը Պոլսի կառավարությանը բողոք էր ներկայացրել, որ թուրքական բանակը՝ Սվազից մինչև Էրզրում ընկած տարածքներում մահմեդական բնակչության շրջանում ինտենսիվորեն կազմակերպում է ինչ-որ «*խորհուրդներ*», և պահանջել էր դրանց շուտափույթ լուծարումը: Պոլսի իշխանությունները, զգուշանալով, որ այդ շրջաններում տեղի ունեցող անկարգությունները կարող են պատճառ դառնալ, որ անգլիացիների կողմից օկուպացվեն նաև այդ տարածքները, շատ արագ արձագանքում են անգլիացիների այդ բողոքին և Պոլսի կառավարության՝ 1919թ. ապրիլի 30-ի որոշումով տեսչական շատ լայն լիազորություններով այդ շրջաններ են գործուղում զինադադարից հետո անպաշտոն մնացած, լուծարված թուրքական 7-րդ բանակի նախկին հրամանատար, 38-ամյա գեներալ Մուստաֆա Քեմալին: Առաքելության նպատակները ձևակերպված էին հետևյալ կերպ. գեներալ Քեմալը պետք է վերականգներ կարգուկանոնը, հետևեր տեղում բնակչությունից ու տարբեր կազմավորումներից զենքն հավաքելու և նրա պահեստավորման գործընթացներին, ստուգեր տեղեկությունները բրիտանական կոմիսարի կողմից նշված մահմեդական «*խորհուրդների*» գոյության վերաբերյալ, իսկ հաստատվելու դեպքում՝ լուծարեր դրանք: Լիազորությունների առումով գեներալ Քեմալին էին ենթարկվելու արևելյան շրջաններում այդ օրերին տեղակայված թուրքական 9-րդ (հետագայում՝ 3-րդ) բանակը և արևելյան այդ տարածքների քաղաքացիական ադմինիստրացիան: Այնպես որ Քեմալն այդ օրերին փաստորեն հանդես էր գալիս որպես ամբողջ արևելյան տարածքների պետական կոմիսար, որն օժտված էր բացառիկ իշխանական լիազորություններով:[250]

---

տեղակայված 15-րդ բանակային կորպուսի հրամանատար Քյազիմ Կարաբեքիրն էր: Տե՛ս Мустафа Кемаль переходит Рубикон, http://vk.com/wall-39695140_1158942

[249] Ա.Պապյան, Հայրենատիրություն,…, էջ 68-71:

[250] Али Гаджизаде, 1915 – Османское Досье: Посвящается 100-летию событий, происходивших в Османской империи в 1915 году, и всем жертвам, павшим в это смутное время,

Մուստաֆա Քեմալն այն բարձրաստիճան թուրք զինվորականներից էր, որոնք չէին համակերպվել մեծ տերությունների կողմից աշխարհում Թուրքիայի համար նախատեսված հետագա դերակատարման հետ (ավելի ճիշտ՝ դրա վերացման հետ) և ուղիներ էին փնտրում իրենց երկրի փրկության և նրա հետագա վերածնման համար: Ըստ կենսագիրների, գեներալ Քեմալն առանձնանում էր իր անձնական արիությամբ, համառությամբ ու նպատակասլացությամբ: Նա միաժամանակ բավականին լավ տիրապետում էր թե՛ ռազմական գործին և թե՛ քաղաքական ինտրիգի արվեստին: Քեմալն ուներ առաջնորդի անուրանալի տաղանդ և ի զորու էր գտնել ու հավաքագրել համակիրներ, համախմբել նրանց ազգային շարժման շարքերում և անձամբ առաջնորդել այն:[251] Նման գործունեություն ծավալելու համար արևելյան տարածքները չափազանց հարմար էին՝ մի կողմից այստեղ դեռ չէր հաստատվել դաշնակիցների օկուպացիոն ռեժիմը, իսկ փոքրամասնություն կազմող տեղի քրիստոնյա բնակչությունն էլ՝ հույներն ու հայերը չունեին բավարար ուժեր ինքնուրույն ինչ-որ լուրջ գործողություններ ծավալելու համար: Մյուս կողմից՝ այստեղ առկա էին դաշնակիցների ծրագրերի իրագործման նկատմամբ դիմադրություն կազմակերպելու համար բավականին խոստումնալից հնարավորություններ՝ ի դեմս տեղում գտնվող բանակի ցամաքային ուժերի և տարածքներին քրիստոնյա փոքրամասնության կողմից տիրանալու փորձերին դիմադրություն ցուցաբերելու պատրաստ՝ նույն բանակի հետ համագործակցող տեղի մահմեդական տարբեր ազգայնական կազմակերպությունների:[252]

Արդյոք Պոլսի գերագույն իշխանության ընտրությունն էր այդ առաքելության համար ընկել Քեմալի վրա, կամ էլ թե նա ինքն էր գործի դրել որոշակի լծակներ, որպեսզի պաշտոնապես այդքան լայն լիազորություններով օժտված՝ օրինական կարգով հայտնվի արևելյան վիլայեթներում, տվյալ դեպքում էական չէ: Էականն ու իրականն այն արդյունքն է, ինչին այդ տարածքներ մեկնելուց հետո հասավ ի վերջո Քեմալը՝ իր գործունեության շնորհիվ դառնալով Աթաթուրք…

… 1919թ. մայիսի 14-15-ին դաշնակիցների որոշմամբ և Անգլիայի, Ֆրանսիայի ու ԱՄՆ ռազմանավերի աջակցությամբ հունական զորքերը ափհանում են իրականացնում Իզմիրում և գրավում են քաղաքը: Ինչից հետո հունական զորրքերը շարժվում են առաջ ու գրավում

Баку, 2015, с. 132; Мустафа Кемаль переходит Рубикон, նույն տեղում; Идеи, Лидеры, Действия, Москва, 2006, с. 135.

[251] А.Жевахов, Кемаль Ататюрк, Москва, 2008, 352 с. http://www.e-reading.club/book.php?book=1013613

[252] Н.Н.Разумихина, նույն տեղում; Мустафа Кемаль переходит Рубикон, http://vk.com/wall-39695140_1158942

ևս մի քանի բնակավայր:[253] Դա դրդում է Քեմալին վճռական քայլերի: 1919թ. մայիսի 19-ին՝ հայկական զորքի Կարս մտնելուց մի ամիս էլ չանցած՝ իր երկու տասնյակ գաղափարակից և հավատարիմ սպաներից կազմված շտաբով նա ափ է իջնում Սամսուն[254] և առանց ժամանակ կորցնելու անցնում գործի: Քեմալն սկսում է իրականացնել քայլեր, որոնք համընկնում էին իրեն տրված հանձնարարականների հետ…ուղիղ հակառակի ճշտությամբ: Շատ կարճ ժամանակահատվածում՝ բառացիորեն հաշված շաբաթների ընթացքում, նրան հաջողվում է էապես բարձրացնել կարգապահությունը տեղի բանակի շարքերում, կազմակերպորեն ամրացնել արդեն գործող «Ազգային իրավունքների պաշտպանության» տարբեր կոմիտեները, մի շարք բնակավայրերում կազմակերպել նորերը, անհրաժեշտ կապ ստեղծել այդ կոմիտեների և բանակային կառույցների միջև, բանակին ու մահմեդական բնակչությանը միավորել թուրքական ազգային պետական ինքնիշխանության գաղափարի շուրջ:

Սամսուն գալուց ընդամենը 10 օր անց՝ 1919թ. մայիսի 29-ին Սվազի, Անկարայի և Էրզրումի կոմիտեներին Քեմալը հայտնում է, որ շուտով «*վճռական և մաքուր ձեռքերը*» կառաջնորդեն ազգին ամենակարճ ճանապարհով դեպի անկախություն և ազատություն՝ «*մեր հողերի վրա*»:[255] Ուստիև՝ ցանկացած մահմեդական ճիշտ քայլ կանի, եթե վաճառի իր ունեցվածքը և զենք գնի: Հակառակ պարագայում, եթե եկան դաշնակիցները՝ նրանց հետ էլ տեղի քրիստոնյաները (հայերն ու հույները), մահմեդականները միևնույնն է, կորցնելու են ամեն ինչ: Ասում են՝ հենց այդ օրերին է Քեմալն առաջին անգամ հնչեցրել իր հայտնի կոչը. *«Գլխավորը Հայրենիքն է, մնացյալ ամենը՝ մանրուքներ»:*

Անգլիացիները շատ սթափ և իրատեսորեն էին գնահատում Անատոլիայում Քեմալի գործունեությունը: Վերջինիս՝ Անատոլիայում հայտնվելուց հետո դեռ ամիսը չլրացած՝ 1919թ. հունիսի 6-ին բրիտանական Գերագույն կոմիսարը Պոլսում մի զեկույց է ստանում, որտեղ նշված էր, որ Քեմալը «…*կազմակերպել է մի շարժում, որն ըստ ամենի իր էներգիայի արտահոսքը կդրսևորի միայն կոտորածի միջոցով*»:[256] Բրիտանական Գերագույն կոմիսարն իր հերթին այդ շարժ-

---

[253] Н.Н.Разумихина, նույն տեղում:

[254] А.Жевахов, Кемаль Ататюрк, Часть I, Гл.8 (Высадка в Самсуне), http://www.e-reading.club/chapter.php/1013613/30/Zhevahov_-_Kemal_Atatyurk.html. Ի դեպ, Թուրքիայում այդ տարեթիվը համարվում է որպես քեմալական ազատագրական շարժման հիմնադրման օր, իսկ Մուստաֆա Քեմալը, որի ծննդյան ճշգրիտ օրը հայտնի չէ, հենց այդ օրն է ընտրել պաշտոնապես որպես իր ծննդյան օրը:

[255] Мустафа Кемаль переходит Рубикон, նույն տեղում.

[256] Նույն տեղում.

ման մասին տեղեկացնում է Լոնդոն՝ Ֆորին Օֆիս. «...*Այդ շարժումն այնքան բնական է, և ես զգում եմ, որ նա այնքան համընդհանուր է, որ իմ կարծիքով անհույս մի բան է ճիգեր գործադրել այն կանգնեցնելու համար...*»:[257] Ինչպես կասեր Մ.Գորբաչյովը. *«Процесс пошел!»*:

Քեմալը բացառիկ հմտությամբ ու խիստ արդյունավետ ձևով օգտագործում է կառավարության կողմից իրեն տված լիազորությունները՝ Անատոլիայում ազգայնական շարժումը կազմակերպելու, իսկ ըստ էության՝ Պոլսի իշխանություններին և նրանց քաղաքականության այլընտրանքային իշխանություն՝ իր այլընտրանքային քաղաքականությամբ ու ծրագրերով ստեղծելու և ձևավորելու ուղղությամբ: Սուլթանական կառավարությունը նրան մի քանի անգամ փորձում է հետ կանչել Պոլիս, բայց ապարդյուն: Քեմալն ամեն անգամ տարբեր պատրվակներ է գտնում Պոլիս չվերադառնալու համար, իսկ 1919թ. հուլիսի 9-ին հայտարարում է բանակի շարքերից իր դուրս գալու մասին: Դրան անմիջապես հետևում է սուլթանի որոշումը՝ Քեմալին տված լիազորություններից զրկելու վերաբերյալ: Բայց... այս անգամ էլ ուշ էր: Քեմալն այդ պահին արդեն պաշտոնական որևիցե լիազորագրի կարիքը չուներ, քանզի, ինչպես ասվել է, բառացիորեն հաշված շաբաթների ընթացքում միանգամայն ճիշտ զգալով, գնահատելով և օգտագործելով իրավիճակը, իր տեսչության ենթակա տարածքներում կարողացավ կազմակերպել ու գլխավորել ծավալուն ազգայնական շարժում և իր ձեռքը վերցնել այդ տարածքների՝ դեռևս ոչ պաշտոնական, սակայն՝ իրական իշխանությունը: Մասնավորապես, բացի էրզրումը որպես կենտրոն ընտրած «Արևելյան վիլայեթների պաշտպանության միությունից», մի շարք այլ Ազգայնական կոմիտեների հիման վրա նա ստեղծում է նաև «Ռումելիայի և Անատոլիայի իրավունքների պաշտպանության միությունը»:[258] Այդ միություններն արդեն փաստացի քաղաքական միավորումներ էին և փաստացի էլ ղեկավարվում էին Քեմալի կողմից:

1919թ. հունիսի 21-22-ին Ամասիա քաղաքում գումարվում է մի շարք կոմիտեների ներկայացուցիչների ժողով, որի ընդունած փաստաթղթում («Ամասիայի շրջաբերական») պարզ հայտարարվում է, որ ազգի ու պետության անկախությունը հնարավոր է փրկել միայն ազգի բոլոր ուժերի միավորման միջոցով, և այդ նպատակով մոտ ժամանակներում անհրաժեշտ է գումարել առավել ներկայացուցչական համաժողովներ, որպեսզի ազգայնական շարժման ներկայա-

[257] Мустафа Кемаль переходит Рубикон, նույն տեղում; А.Жевахов, նույն տեղում:

[258] Ռումելիան դաշնակիցների կողմից հույներին խոստացած Արևելյան Թրակիայի տարածքն էր, որի առափնյա որոշ մասերում արդեն ներկա էին հունական զորքերը, իսկ Անատոլիա անվան տակ էլ թաքնված էր Արևմտյան Հայաստանը, որի սահմանին այդ պահին կանգնած էին հայկական զորքերը:

ցուցիչները մշակեն և հաստատեն շարժման գործունեության մարտավարությունն ու հեռահար ծրագրերը: Այդ համաժողովները կայանում են Էրզրումում (1919թ. հուլիսի 23-ից օգոստոսի 6-ը) և Սվազում (1919թ. սեպտեմբերի 4-ից 11-ը):[259] Այդ համաժողովները չեն ճանաչում Մուդրոսի զինադադարի պայմանները և որոշում են ամեն գնով պայքարել օսմանյան պետության ամբողջականությունը պահպանելու համար: Սվազի կոնգրեսի՝ իր բացման խոսքում Քեմալը մասնավորապես շեշտել է. «*...Նկատի ունենալով այն անօրինականությունները, որ իրականացվում է Անտանտի տերությունների կողմից և հաշվի առնելով սուլթանական կառավարության թուլությունն ու անտարբերությունը, անհրաժեշտություն է առաջացել ապացուցելու, որ թուրքական ազգ գոյություն ունի և հենց ինքը ակտիվորեն հանդես է գալիս ի պաշտպանություն իր պատվի և անկախության*»:[260]

Համաժողովների կողմից ստեղծված կառավարման մարմինը՝ Ներկայացուցչական կոմիտեն, որի ղեկավար էր ընտրվել Քեմալը, իր հավակնություններն է հայտարարում Օսմանյան կայսրության բոլոր տարածքների նկատմամբ՝ բացառությամբ մայրաքաղաք Ստամբուլի և մեծ տերությունների կողմից օկուպացված շրջանների: Համաժողովները միարժեքորեն և չափազանց վճռական ձևով բացառում են Օսմանյան կայսրության նախկին տարածքում հայկական (ինչպես նաև՝ հունական և արաբական) պետության ստեղծման գաղափարը: Համաժողովի կողմից հայերի պահանջները Արևմտյան Հայաստանի նկատմամբ հայտարարվեցին որպես «զավթողական», իսկ Անդրկովկասի այն բոլոր տարածքները, որտեղից թուրքական զորքերը դուրս էին բերվել Մուդրոսի զինադադարից հետո, կրկին հայտարարվեցին որպես պատմականորեն թուրքապատկան տարածքներ: Այսինքն, քեմալական շարժումը նախատեսում էր Անդրկովկասում վերահաստատել նվազագույնը Բրեստ-Լիտովսկի պայմանագրով գծված սահմանները:

Հայերի հանդեպ դիրքորոշումը չափազանց կոշտ էր: Անձամբ Քեմալը վճռականորեն հայտարարել էր, որ ազգը ոչ մի թիզ հող չի զիջի հայերին և որ պետք է վճռական պայքար մղել հայկական ցանկացած հոսանքի դեմ, որն իր առջև նպատակ է դնում անկախ հայկական պետության ստեղծումը:[261]

---

[259] Ըստ մի շարք ամերիկյան պատմաբանների, եթե 1919թ. հուլիսյան հենց այդ օրերին հայկական կողմը վճռականություն ցուցաբերեր և հայկական զորքերը շարժվեին դեպի կենտրոնական Անատոլիա, ապա դրանով վերջ կդրվեր քեմալական շարժմանը, տե՛ս С.Тарасов, նույն տեղում:

[260] Кемалистское движение, Геноцид.ru, Энциклопедия, http://genocide.ru/enc/kemalism.htm; Н.Е.Шутова, նշվ. աշխ., էջ 106:

[261] Мустафа Кемаль, Геноцид.ru, Энциклопедия, http://genocide.ru/enc/ataturk.htm

Իրենից արդեն ռեալ ուժ ներկայացնող քեմալական շարժման պահանջով սուլթանը համաձայնվեց 1919-ի աշնանն անցկացնել խորհրդարանական ընտրություններ, որոնց արդյունքում ձևավոր-ված համաթուրքական խորհրդարանը մի շարք քննարկումներից հետո 1920թ. փետրվարի 18-ին ընդունեց քեմալականների կողմից ներկայացրած «Ազգային Ուխտ» կոչվող փաստաթուղթը: Այն փաստորեն հանդիսանում էր հանուն Թուրքիայի պետական անկախության մղվող պայքարի ծրագիր, որով որոշվում էին ապագա պետության տարածքային սահմանները և նրա ապագա հասարակական-քաղաքական համակարգը: Մեզ հուզող տարածքային հարցերով այդ փաստաթղթով նախատեսվում էր նաև Բաթումի մարզի, Կարսի, Արդահանի տարածքների և Հայաստանի ու Վրաստանի մի քանի այլ շրջանների ընդգրկումը թուրքական նոր պետության կազմում:[262]

Հասկանալի է, որ Անտանտի պլաններին միանգամայն հակա-ռակ ուղղված՝ Քեմալի գործունեությունը շատ արագ առաջ էր բերելու հաղթող տերությունների դժգոհությունն ու դրդելու էր նրանց պա-տասխան քայլերի: 1920թ. փետրվարի 18-20-ին Անատոլիա է ժամա-նում հունական զորքերի մի նոր խմբաքանակ, իսկ 1920թ. մարտի 15-16-ին Պոլսում ափ է իջնում բրիտանական ծովային հետևակը, քաղաքում հայտարարվում է ռազմական դրություն, սուլթանական իշխանությունն ամբողջապես վերցվում է բրիտանական ուժերի հսկողության տակ: Քեմալը՝ Ներկայացուցչական կոմիտեի անունից հղած բողոքում խստորեն դատապարտում է դաշնակիցների կողմից իրականացրած՝ մայրաքաղաքի այդ նոր օկուպացիան և դիմում է բանակին, տեղական կառավարման մարմիններին և հասարակու-թյանը՝ պաշտպանել երկրի բնակչության (իմա՝ մահմեդականների) կյանքի և անկախության իրավունքները: Միաժամանակ նա շեշտում է, որ անհրաժեշտ է ընտրել նոր խորհրդարան, որն այս դժվարին օրերին ազգի կողմից պետք է օժտվի արտակարգ լիազորություննե-րով՝ ազգի և պետության առջև ծառացած խնդիրները լուծելու համար: Հասկանալի է, որ այդ ամենն անխուսափելիորեն հանգեցնելու էր Քեմալի և սուլթանական իշխանության միջև բացահայտ հակամարտության դրսևորման:

1920թ. մարտի վերջերին սուլթանական կառավարությունը Քեմա-լին հայտարարում է պետական հանցագործ, և Պոլսի տրիբունալը

---

[262] ДВП СССР, т.3, с. 682,683; Ե.Ղ. Սարգսյան, *Քեմալականների 1920-1921թթ. արշա-վանքն Անդրկովկաս և 1921թ. մարտի 16-ի մոսկովյան պայմանագիրը.* Լրաբեր Հասարակական Գիտությունների, №1, 1992, էջ 19-21; Н.Н.Разумихина, նույն տեղում: Н.Е.Шутова, նշվ. աշխ., էջ 104, 105, 138:

հեռակա կարգով դատապարտում է նրան մահապատժի:[263] Ստեղծված ոչ միարժեք իրավիճակում դա Քեմալին բերում է միայն նոր քաղաքական դիվիդենտներ…

1920թ. ապրլի 23-ին Անկարայում իր անդրանիկ նիստն է գումարում արդեն այլընտրանքային՝ Թուրքիայի Ազգային Մեծ Ժողով (ԹԱՄԺ) անվամբ քեմալական խորհրդարանը, որը նախագահ է ընտրում Մուստաֆա Քեմալին: Այդ խորհրդարանն իր մեջ միաժամանակ միավորում էր օրենսդիր և գործադիր իշխանական մարմինները: Նույն պետության մեջ 2 իշխանությունների՝ սուլթանական ու քեմալական և նույն սահմանների մեջ 2 պետությունների՝ պարտվող և մարտնչող Թուրքիաների գոյությունը դառնում է իրական փաստ:[264] Մինչ այդ Քեմալը կարող էր հանդես գալ որպես մի շարժման, ամենաշատը՝ որպես քաղաքական կազմակերպության ներկայացուցիչ: 1920թ. ապրիլի 23-ից սկսած նա հանդես էր գալիս արդեն որպես պետական իշխանության գերագույն մարմնի ղեկավար:

Քեմալական շարժման կազմակերպման, ամրապնդման ու կայացման այդ 1 տարվա ընթացքում Կարսի մարզն այդ շարժման կողմից մշտապես շոշափվել և դիտվել է որպես առաջնահերթ հարվածի ենթակա թիրախ: Անձամբ Քեմալն իրենց արևելյան սահմանների վերաբերյալ քանիցս հստակ հայտարարել էր, որ «*Թուրքիայի սահմանները Կովկասում պետք է ընդգրկեն Կարսը, Բաթումը, Արդահանը…*»:[265] Իսկ անդրադառնալով Հայաստանի ապագային՝ ճշգրտել էր. «*Մենք պետք է ոչնչացնենք հայկական բանակը և հայկական պետությունը*»:[266] Տարիներ հետո նա կբացատրի. «*Սկզբնական ժամանակահատվածում ընդդեմ հույների և ֆրանսիացիների դրվում էին զուտ պաշտպանական բնույթի խնդիրներ… Հիմնական ուշադրությունն հափկացվում էր Արևելյան ճակատին, քանզի հաջողությունն այս ուղղությամբ պետք է բերեր հայկական բանակի և հայկական պետության ոչնչացմանը*»:[267]

---

[263] Н.Н.Разумихина, նշվ. աշխ., էջ 101, 102: Նշենք, որ հետագայում Ստամբուլի ռազմական դատարանը հեռակա կարգով մահապատժի դատապարտեց ոչ միայն Քեմալին, այլ նաև նրա գլխավորած Անկարայի կառավարության ամբողջ կազմը, տե՛ս "Յառաջ", 5 օգոստոսի, 1920թ.:

[264] Р.Г. Ованнисян, նշվ. աշխ., էջ 457; Н.Н.Разумихина, նույն տեղում:

[265] Мустафа Кемаль (Ататюрк), նույն տեղում:

[266] Նույն տեղում:

[267] Ю.Розалиев, Мустафа Кемаль Ататюрк, примечание 14, http://www.e-reading.club/bookreader.php/1037455/Rozaliev_Yuriy_-_Mustafa_Kemal_Atatyurk.html (Кемаль Мустафа, Путь новой Турции, т.3, Интервенция союзников, Греко-турецкая война и консолидация национального фронта, Москва, 1934, с. 314); Ю.Розалиев, Мустафа Кемаль Ататюрк, Вопросы истории, 1995, №8, с. 57-77.

Հայկական բանակի առավել մեծաքանակ զորախումբն այդ օրերին տեղակայված էր հենց Ալեքսանդրապոլ-Կարս ռազմավարական ուղղությամբ և այդ զորախմբի ոչնչացումը սկիզբը կհանդիսանար ամբողջ հայկական զինուժի եթե ոչ անմիջապես ոչնչացմանը, ապա առնվազն նրա կազմալուծմանն ու քայքայմանը:

Պատկերավոր ասած՝ Կարս մտած հայկական զորքը դեռ չէր հասցրել տեղակայվել իր դիրքերում ու զորանոցներում, իսկ Կարս վերադարձած հայ գաղթականն էլ դեռ չէր հասցրել իր վարուցանքն անել հողի վրա, երբ թուրքի «ձայն մը հնչեց Էրզրումի հայոց լեռներեն», թե Կարսը անհապաղ պետք է վերադարձվի թուրքերին: Ինչպես տեսանք, ամիսներ անց պարտված, բայց պարտության հետ չհաշտված Թուրքիայի կողմից այդ նպատակն ամրագրվեց արդեն նաև համապատասխան փաստաթղթում՝ «Ազգային Ուխտում»:

## I.13. Քեմալաբոլշևիկյան ձեռքսեղմումները

Ինչպես ասում են, խնդիրը հստակ էր դրված, նպատակներն էլ պարզ էին: Մուստաֆա Քեմալի գլխավորած ազգայնական շարժումը նպատակադրվել էր փրկել թուրքական պետականությունը սպասվող կործանումից, արմատական, իմա՝ հեղափոխական վերափոխումների ենթարկել այն և վերականգնել թուրքական պետության ու թուրք ազգի անմիջական և ուղղակի մասնակցությունն ու ծանրակշիռ դերակատարումը աշխարհի մասշտաբով ընթացող, աշխարհի ներկան ու ապագան որոշող բոլոր իրադարձություններում: Ծրագրերի գործնական իրականացման առումով առաջին հերթին անհրաժեշտ էր որոշել թուրքական այդ նոր պետության սահմանները և աշխարհին ճանաչել տալ նոր Թուրքիան հենց այդ սահմաններում: Ընդ որում, նախորդ շարադրանքից ակնհայտ էր, որ քեմալականների «տարածքային» ամբողջ հռետորաբանությունը պարզ վկայում էր այն մասին, որ նոր Թուրքիայի համար տարածքներ ետ գրավելու հարցում առաջինը հարվածի տակ էր հայտնվելու Կարսի մարզը:

Թեև քեմալական շարժումը գնալով ավելի ու ավելի էր թափ առնում և պատրաստ էր վճռական գործողությունների, բայց միևնույնն է՝ նրա նյութական, տնտեսական ու ռազմական հնարավորությունները խիստ սահմանափակ էին, իսկ արտաքին ուժերի հետ արդյունավետ շփվելու համար եղած քաղաքական ու դիվանագիտական ռեսուրսներն էլ՝ դեռևս ոչ բավարար: Իսկ իրավիճակը՝ Անտանտի ճնշումները և «հույնը մի կողմից, հայը՝ մյուս», ստիպում էր քեմալականներին գործել չափազանց արագ և անսխալ:

Քանի որ խոսքը համաշխարհային մասշտաբի «պրոյեկտի» իրականացման մասին էր, ապա պարզ էր, որ քեմալական շարժումն ի զորու չէր միայնակ հաղթահարել առկա դժվարություններն ու այն

«գլուխ բերել»: Միանգամայն հասկանալի էր, որ Անտանտի ծրագրերի դեմ ուղղված այդ պայքարը հաղթական ավարտին հասցնելու համար անհրաժեշտ էր, որպեսզի այդ պայքարին բազմակողմանի և իրական օժանդակություն ցուցաբերի Անտանտին հավասարազոր հակառակորդ՝ համաշխարհային տրամաչափի հնարավորությունների տեր որևէ մեկ այլ ուժ: Այդ օրերին՝ 1919-ի կեսերին, աշխարհում այդպիսի միակ ուժը բոլշևիկյան Ռուսաստանն էր: Դա ակնհայտ իրողություն էր և, ինչպես ասում են, տեսանելի էր նույնիսկ անզեն աչքով: Իրոք, Անտանտի կողմից թելադրած Առաջին աշխարհամարտի արդյունքներից խիստ դժգոհ և վտանգված (բավական է նշել միայն, որ Սև ծովն ու նեղուցները հայտնվել էին Անտանտի լիակատար հսկողության տակ) և Անտանտի նախաձեռնությամբ ու գլխավորությամբ թշնամական ամուր օղակի մեջ հայտնված բոլշևիկյան Ռուսաստանն այդ օրերին կողջուներ և պատրաստ էր աջակցել ցանկացածին, ով կհայտարարեր Անտանտի դեմ պայքարելու իր պատրաստակամության մասին:

Առավել ևս, որպես հակազրոհ Անտանտի նկատմամբ, Երրորդ Ինտերնացիոնալի (Կոմինտերնի) Առաջին կոնգրեսը 1919-ի մարտին որոշում էր կայացրել Ռուսաստանից դեպի այլ երկրներ (ներառյալ նաև մահմեդական Արևելքի երկրները) հեղափոխության արտահանման և համաշխահային հեղափոխության իրականացման վերաբերյալ, և Խորհրդային Ռուսաստանն էլ իր հերթին այդ «պրոյեկտի» իրականացման համար փնտրում էր համախոհներ և դաշնակիցներ:[268] Այդ նպատակների (հատկապես մահմեդական Արևելքում հեղափոխական կրակը վառելու) իրականացման տեսանկյունից բոլշևիկյան Ռուսաստանի համար այդօրվա Թուրքիան սերտ համագործակցության և դաշնակցելու տեսակետից չափազանց գայթակղիչ ու հարմար թեկնածու էր: Նախ, դարեր շարունակ նա եղել էր մահմեդական Արևելքի՝ այդ թվում և կովկասյան մահմեդականության շրջանում ամենահզոր ու ամենահեղինակավոր պետություններից մեկը, ապա՝ հենց այդ նույն Թուրքիան էր անմիջականորեն և առաջնահերթորեն ենթարկվում Անտանտի ճնշումներին ու գաղութացմանը: Իսկ ամենակարևորն այն էր, որ այդ պահին Թուրքիայում առկա էին ռեալ ուժեր, որոնք ոչ միայն ցանկանում էին, այլև պատ-

[268] К.Маккензи, Коминтерн и мировая революция. 1919–1943, Москва, 2008, Глава 3: Перспективы и стратегия революции, 1919-1928, http://aleksandr-kommari.narod.ru/Makkenzi_Komintern_i_mirovaya_revolyutsiya.htm; А.Жевахов, Кемаль Ататюрк, Часть I, Гл. 8 (Среди полей подсолнечника), http://www.e-reading.club/chapter.php/1013613/30/Zhevahov_-_Kemal_Atatyurk.html

րաստ էին պայքարելու թե՛ տարածաշրջանում Անտանտի ծրագրերի իրագործման, թե՛ սուլթանական միապետական կարգերի դեմ:

Համագործակցության համար բոլշևիկներն ընտրեցին այդ «հեղափոխականակերպ» քաղաքական «պլատֆորմի» վրա կանգնած երեք ուժ. թուրք կոմունիստների և ինչ-ինչ պահերով նրանց հետ համագործակցող արմատական որոշ քաղաքական խմբակներ, ինչպիսիք էին, օրինակ, «Մեսսաի»-ն, կամ «Կարակոլ»-ը, որի ետևում պարզ երևում էին նույն երիտթուրքական «ականջները»,[269] իշխանությունից հեռացված, բայց քաղաքական ռեալ կենսունակությունը դեռևս զգալիորեն պահպանած բուն իթթիհադական զանգվածը[270] և քեմալական շարժումը, որի շարքերում, ի դեպ, քիչ չէին նաև նախկին իթթիհադականները՝ հանձին նաև հենց Մուստաֆա Քեմալի:[271] Ընդ որում, ժամանակագրական առումով այդ երեք ուժերից Քեմալի գլխավորած շարժումն ամենավերջինը մտավ բոլշևիկների հետ շփումների մեջ: Բոլշևիկյան Ռուսաստանի՝ արևելյան-մահմեդական ուղղությամբ Անտանտի դեմ տարվող պայքարում թուրքական այդ ուժերից ամեն մեկն ուներ իր տեղն ու դերը: Թուրք կոմունիստների այդ օրերի փաստացի առաջնորդ Մուստաֆա Սուբհին, որն ի դեպ գտնում էր, որ Արևելքը կապիտալիզմի «աքիլեսյան գարշապարն է», 1914թ.-ից գտնվում էր Ռուսաստանում, 1915-ին ընդունվել էր բոլշևիկյան կուսակցության շարքերը, 1917թ. հոկտեմբերին բոլշևիկների կողմից իրականացրած հեղաշրջման կողմնակից էր, 1919թ. եղել էր Կարմիր բանակի կազմում կռվող թուրք ռազմագերիներից կազմված թուրքական վաշտի կոմիսարը: Բայց բոլշևիզմի գաղափարները ոչ միայն տարածում չունեին մահմեդական զանգվածների մեջ, այլև նույնիսկ խորթ էին նրանց և անընդունելի:

Թուրք կոմունիստները ոչ միայն ռեալ ուժեր չունեին ինչ-որ պայքար սկսելու համար, այլ անհնար էր ենթադրել, թե երբևիցե Թուր-

---

[269] 1918թ. աշնանը Ստամբուլում կազմակերպվել էր թուրքական բոլշևիկյան խմբակ, իսկ թուրք կոմունիստների այդ օրերի փաստացի ղեկավար Մուստաֆա Սուբհին Ռուսաստանի բոլշևիկյան կուսակցության անդամ էր և հանդիսանում էր քարոզչության հարցերով պատասխանատուն նրա մուսուլմանական բյուրոյում: Տե՛ս А.Жевахов, Кемаль Ататюрк, նույն տեղում:

[270] А.Жевахов, Кемаль Ататюрк, Часть I, Гл. 9, Возвращение Энвера; նշվ. աշխ., Часть II, Гл. 1, Новые времена, http://www.e-reading.club/chapter.php/1013613/30/Zhevahov_-_Kemal_Atatyurk.html; С.Тарасов, Как Владимир Ленин и Мустафа Кемаль советизировали Закавказье, http://regnum.ru/news/polit/1160915.html:

[271] S.J.Shaw, From Empire to Republic, The Turkish War of National Liberation 1918-1923, A Documentary Study, vol. II, Ankara, 2000, p. 942-960; С.Тарасов, նույն տեղում; А.Жевахов, Кемаль Ататюрк, Часть I, Гл. 6, 7, http://www.e-reading.club/chapter.php/1013613/30/Zhevahov_-_Kemal_Atatyurk.html.

քիայում նրանք այդ ուժը կունենային: Այնպես որ, թուրք կոմունիստները Մուստաֆա Սուբհիի գլխավորությամբ փաստորեն լինելով ռուսաստանյան բոլշևիկներին ենթակա ուժ, այդ գործընթացներում մի որոշ ժամանակ հանդես էին գալիս որպես օժանդակող, մասնավորապես, որպես կապ հաստատող օղակ ռուսաստանյան բոլշևիկների և իթթիհադականների ու քեմալականների միջև:[272]

«Իթթիհադ վը թերաքքը»-ի բարձրագույն պարագլուխները՝ Թալեաթը, Էնվերն ու Ջեմալը, Գեյֆանդ-Պարվուսի և Սոբելսոն-Ռադեկի միջոցով նույնպես կապեր էին հաստատել բոլշևիկյան վերնախավի հետ քեմալական շարժման ասպարեզում ի հայտ գալուց ավելի շուտ՝ դեռևս 1917-1918 թվականներից: Ի վերջո չմոռանանք այն հանգամանքը, որ Թուրքիայի արևելյան հատվածում XX դարում նրա համար այդքան հաջող տարածքային կոնֆիգուրացիան կանխորոշող Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը ստորագրվել էր հենց բոլշևիկյան և իթթիհատական ղեկավարների միջև, իսկ բոլշևիկյան Մոսկվայում էլ երիտթուրքերի կառավարությունը մինչև առաջին աշխարհամարտի ավարտն ունեցել էր գործող դեսպան:[273] Բայց 1919թ. գարնան-ամռանը, երբ ընդլայնվում էր բոլշևիկյան Ռուսաստանի դեմ Անտանտի կազմակերպած ինտերվենցիան, իսկ Սպիտակ շարժումն էլ գրանցում էր շոշափելի ռազմական հաջողություններ բոլշևիկյան բանակների նկատմամբ, Անտանտի դեմ պայքարում Խորհրդային Ռուսաստանին անհրաժեշտ էր այնպիսի գործընկեր, որի միջոցով՝ անկախ նրան տրամադրվելիք օգնության ծախսատարությունից, հնարավոր կլիներ բավականին սեղմ ժամկետներում հասնել Անտանտի դեմ պայքարում եթե ոչ գլոբալ, գոնե տարածաշրջանային մասշտաբի էականորեն դրական արդյունքի: Այդ առումով երիտթուրքերը, թեև կազմում էին զգալի ուժ, սակայն

---

[272] Ռուսաստանյան բոլշևիկների հովանու տակ գործող թուրքական կոմունիստական խմբավորումները 1920թ. սեպտեմբերին Բաքվում հրավիրում են Թուրքական Կոմկուսի առաջին՝ հիմնադիր համագումարը, որտեղ կուսակցության նախագահ է ընտրվում Մուստաֆա Սուբհին: Համագումարից հետո Սուբհին իր մի քանի ընկերների հետ մեկնում է հայրենիք՝ Մեծ հոկտեմբերի գաղափարներն այդտեղ տարածելու համար: Սակայն քեմալական նորաստեղծ ռեժիմն այնքան էլ հյուրընկալ չի գտնվում Մոսկվայի հրահանգով ժամանած հեղափոխական իր հայրենակիցների նկատմամբ: 1921թ. հունվարի 28-ի լույս 29-ի գիշերը Մուստաֆա Սուբհիին իր 14 աջակիցների հետ թուրք ժանդարմները նավակով Տրապիզոնից տանում են բաց ծով, բոլորին բառացիորեն մորթում և հետո նետում ծովը: «Տասնհինգի սպանդ» անվանումն ստացած այդ դաժան հաշվեհարդարը ցույց է տալիս, որ Մուստաֆա Քեմալը ամենևին չէր պատրաստվում հանդուրժել իր երկրի տարածքում՝ թեև իրեն եղբայրաբար օգնող, բայց, միևնույնն է, մեկ այլ երկրի կողմից ուղղորդվող և այլ երկրի շահերը սպասարկող, թեկուզև թուրքերից կազմված կազմակերպության ներկայությունն ու գործունեությունը:

[273] М.Озтюрк, Советско-турецкие отношения на Кавказе в 1918-1921гг., канд. диссертация, Санкт-Петербург, 2010, сс.21-29.

իրենց օդիոզ ու վարկաբեկված պարագլուխներով հանդերձ քաղաքականության մեջ արդեն «երեկվա օր էին»: Իսկ բոլշևիկներին պետք էր այսօրվա՝ թարմ և ռեալ ուժ:

…1919թ. գարնանը Բաքվում բավականին ակտիվ գործունեություն ծավալած Էնվերին մի խնդրանքով է դիմում Խորհրդային Ռուսաստանի Ազգությունների հարցերով ժողկոմ Իոսիֆ Ջուղաշվիլին: Բոլշևիկ ժողկոմը խնդրում է, որ Էնվերը հանդիպում կազմակերպի ռուսաստանյան բոլշևիկների ներկայացուցիչների և քեմալական շարժման ղեկավարների միջև: Այդ հանդիպումը, որին անձամբ մասնակցում էր Քեմալը, կայացել է 1919թ. մայիսի վերջերին-հունիսի սկզբներին Սամսունից ոչ հեռու գտնվող իր բուժիչ հանքային ջրերով հայտնի Հավզա փոքրիկ քաղաքում: Բոլշևիկյան կողմից հանդիպման գլխավոր բանակցողը եղել է ԽՍՀՄ ապագա մարշալ Բուդյոնին: Ինչպես վկայում են հետագա իրադարձությունները, քննարկված հարցերի շուրջ կողմերը հիմնականում ցուցաբերել են միմյանց նկատմամբ զգալի փոխըմբռնում և մի շարք հարցերի նկատմամբ մոտեցումների նմանություն: Կարմիր հեծելազորի թավ ու երկար, «քրդական» բեղերով հրամանատարը, խոստանալով բոլշևիկյան կողմից անհրաժեշտ օգնություն, հորդորել է Քեմալին պայքարել օտար իմպերիալիստների դեմ և տապալել տեղի սուլթանական ռեժիմը՝ փոխարենը հաստատելով իր երկրում բանվորագյուղացիական իշխանություն:[274] Այդ հանդիպումից տպավորված՝ Քեմալի երիտասարդ զինակիցներից մեկը՝ կապիտան Հյուսրևը, Քյազիմ Կարաբեքիրին ուղղված իր նամակում հարցնում էր գեներալին. *«Ի՞նչ է մեզ սպասում…Գուցե փորձ անենք հարմարեցնել բոլշևիկյան սկզբունքները մեր իրականությանը՝ միաժամանակ պահպանելով թուրքերի մոտ գոյություն ունեցող օրենքներն ու ավանդույթները…»*:[275]

1919թ. ամռան-աշնան ընթացքում նշված հանդիպմանը հաջորդում են նորանոր և այդ իրավիճակի համար բավականին հաճախակի հանդիպումներ, որոնք ավելի են ամրապնդում «բարեկամությունն ընդհանուր թշնամու դեմ», խորացնում են կողմերի փոխըմբռնումն ու նրանց միջև փոխշահավետ համագործակցությունը:[276] Այդ օրերին

---

[274] Ա.Պապյան, Հայրենատիրություն…, էջ 365; С.Тарасов, նույն տեղում; В.Гафаров, Русско-турецкое сближение и независимость Азербайджана (1919-1921гг.), Кавказ & Глобализация, т.4. Вып. 1-2, Швеция, 2010, с. 241; Hüsameddin Ertürk, Iki Devrin Perde Arkasi, yazan: Samih Nafiz Tansu, Istanbul, 1957, s. 338-342. (Հյուսամեդդին Էրթյուրք, Երկու ժամանակաշրջանի հետնաբեմը, գրի առավ՝ Սամիհ Նաֆիզ Թանսու, Ստամբուլ, 1957թ., էջ 338-342 ) – առավել մանրամասն տե՛ս. Արա Պապյան, Մի կարևոր վկայություն ռուս-թուրքական (բոլշևիկա-քեմալական) հարաբերությունների սկզբնավորման մասին (մայիս, 1919թ.) – www.lragir.am/index/arm/0/society/view/127786:

[275] А.Жевахов, Кемаль Ататюрк, Часть I, Гл.8 (Среди полей подсолнечника).

[276] М.Озтюрк, նշվ. աշխ., էջ 44-49:

թուրքական բանակի լավագույն զորամիվորման 15-րդ բանակային կորպուսի հրամանատար Քյազիմ Կարաբեքիրը, ում վրա էր դրված քեմալական շարժման և բոլշևիկյան կողմի միջև հարաբերություննե-րի հաստատման ու խորացման, գործողությունների փոխհամաձայ-նեցման պատասխանատվությունը,[277] հետագայում իր հուշերում շեշտում է, որ բոլշևիկների հետ համատեղ Անտանտից ազատվելու գաղափարը վաղուց էր ճախրում օդում, սակայն 1919թ. հունիսից նոր սկսեցին պայմաններ հասունանալ դրա իրականացման համար:[278]

1919թ. հոկտեմբերին Ստամբուլի կոմունիստական բջջի կազմում ներդրված անգլիական գործակալը և այլ երկու թուրք կոմունիստներ հանդիպում են Քեմալի ներկայացուցչի հետ և փոխանցում նրան Խորհրդային Ռուսաստանի կառավարության ուղերձը: Ուղերձում մասնավորապես շեշտվում էր, որ եթե հանուն ազգային անկախու-թյան պայքարի ելած քեմալականները ըմբռնում են Ռուսաստանի կողմից աշխատավոր ժողովրդի ազատության համար մղվող պայ-քարի սրբազան էությունն ու նպատակները, ապա բոլշևիկները պատրաստ են քեմալական շարժմանը տրամադրել անհրաժեշտ օգ-նություն գումարով, զենքով և նույնիսկ «կամավորներից» կազմված զորաջոկատներով:[279] Պատասխանը, ինչպես պատմությունն է ցույց տվել, եղել է միանգամայն դրական: Այլ կերպ չէր էլ կարող լինել, քանզի կողմերի շահերի համընկնումը և նույն հակառակորդի դեմ պայքարելու անհրաժեշտությունն ակնհայտ էին:

Ինչպես ասում են՝ «ընտրությունը կատարված էր»: Բոլշևիկյան կողմը, ամենևին չմերժելով և չհեռացնելով իր կողքից ո՛չ թուրք կոմունիստներին և ո՛չ էլ երիտթուրքերին, համենայն դեպս որպես առաջնահերթ պաշտոնական դաշնակից ի վերջո կանգ էր առել քեմալական շարժման վրա, թեև վերջինիս կողմից քանիցս հայտա-րարվել էր՝ Հոկտեմբերյան հեղաշրջման նման հեղափոխություն Թուրքիայում իրականացնելը բացառվում է:[280] Այդ շարժումը բոլ-շևիկների կողմից հայտարարվել էր որպես ազգային-ազատագրա-կան և հեղափոխական, որը պայքարում է Անտանտի իմպերիալիզմի և սեփական երկիրը կործանող, Անտանտի կամակատար ներքին ուժերի դեմ: Ուստի, այդ շարժումը հանդիսանում է Խորհրդային Ռու-սաստանի հուսալի դաշնակիցը, որին բոլշևիկյան կողմը պարտա-

---

[277] S.J.Shaw, նույն տեղում; А.Жевахов, Кемаль Ататюрк, Часть I, Гл. 9, Возвращение Энвера, www.e-reading.club/chapter.php/1013613/30/Zhevahov_-_Kemal_Atatyurk.html ; В.Гафаров, նույն տեղում:

[278]М.Озтюрк, նշվ. աշխ., էջ 46:

[279] А.Жевахов, Кемаль Ататюрк, Примечание 30; М.Озтюрк, նույն տեղում:

[280] А.Жевахов, նույն տեղում; М.Озтюрк, նշվ. աշխ., էջ 51:

վորվում է ցուցաբերել անհրաժեշտ աջակցություն և օգնություն:[281] Այսինքն՝ այդ օրերին քեմալական շարժումն ու բոլշևիկյան Ռուսաստանը ոչ թե ընդամենը եկան մի ինչ-որ պայմանավորվածության ու համաձայնության որոշ հարցերի շուրջ, այլ երկու կողմերն էլ հրաշալի հասկանում էին, որ իրենցից ամեն մեկի համար չափազանց կարևոր նպատակների իրագործման համար տվյալ փուլում նրանք մեկը մյուսին պարզապես անհրաժեշտ են:[282]

Քեմալաբոլշևիկյան մերձեցման սկզբնական այս փուլի ամփոփումը և հետագայում դաշնակցելու տեսլականն ավելի քան պարզ ներկայացված էր 1919թ. սեպտեմբերի 13-ին ռուսաստանյան «Известия» թերթում տպագրված *«Թուրքիայի բանվորներին և գյուղացիներին»* վերնագրված կոչում: Ընթերցելով այդ կոչը, որի տակ դրված են բոլշևիկյան Ռուսաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Գեորգի Չիչերինի և այդ գերատեսչության մուսուլմանական Մերձավոր Արևելքի բաժնի վարիչ Նարիման Նարիմանովի ստորագրությունները և վերհիշելով Քեմալի ելույթներն ու ճառերը՝ ակամա սկսում ես կասկածել, թե չի բացառվում, որ այդ օրերին որոշ ելույթներ Քեմալի ու Չիչերինի համար գրել է նույն մարդը: Իրոք, տեքստի հիմնական մասը հիշեցնում է որևիցե թուրք ազգային գործչի դիմում, ուղղված իր ժողովրդին, որտեղ բացատրվում է, թե խիզախ ու մարտնչող թուրք ժողովուրդը այսօր հայտնվել է Անտանտի ճիրաններում, կորցրել է նեղուցները և «պատմական թուրքական քաղաք Ստամբուլը»: Չի մոռացվում նաև նշել, որ բանվորագյուղացիական Ռուսաստանը հրաժարվել է ոչ միայն Կոստանդնուպոլիսը գրավելու ցարական իշխանության ծրագրերից, այլ առհասարակ բոլոր տեսակի նվաճողական ծրագրերից, և առաջին հերթին՝ Թուրքիայի հանդեպ: Հիմնական ասելիքը խտացված է ամենավերջում.

*«Ընկերնե՛ր, Թուրքիայի բանվորներ և գյուղացիներ... Անհրաժեշտ է, որպեսզի ամբողջ աշխարհի աշխատավորները միավորվեն մարդկանց ստրկացնող համաշխարհային ուժերի դեմ: Ստալին, Խորհրդային Ռուսաստանի բանվորագյուղացիական կառավարությունը հույս է տածում, որ դուք՝ Թուրքիայի բանվորներդ ու գյուղացիներդ, ձեր եղբայրական ձեռքը կմեկնեք հանուն այն բանի, որպեսզի միասնական և համախմբված ուժով վռնդենք* [ձեր երկրից] *եվրոպական գիշատիչներին ու երկրի ներսում ոչնչացնենք և ոչնչացնենք նրանց, ովքեր սովոր են ձեր դժբախտության վրա կառուցել իրենց երջանկությունը:»*[283]

---

[281] М.Озтюрк, նշվ. աշխ., էջ 43, 48; Н.Е.Шутова, նշվ. աշխ., էջ 139; В.Гафаров, նշվ. աշխ., էջ 241, 243:

[282] Н.Е.Шутова, նշվ. աշխ., էջ 37, 138, 139; В.Гафаров, նշվ. աշխ., էջ 240; С.Тарасов, նույն տեղում:

[283] “К рабочим и крестьянам Турции”, Газета Известия, 13 сентября, 1919г.

Այսինքն՝ բոլշևիկյան Ռուսաստանը պարզորոշ և բացեիբաց հայտարարում էր, որ Թուրքիան հնարավորինս շուտ պետք է միասնական դաշինք կնքի Ռուսաստանի հետ՝ Անտանտի դեմ համատեղ պայքար մղելու համար: Ասված է, չէ. «*...և այսօր՝ փորձությանդ ժամին, քեզ բարեկամ է դառնալու երեկվա քո թշնամին...*»:

...Ինչպես հայտնի է, Նապոլեոնի մինիստրներ Շառլ-Մորիս Թալեյրանն ու Ժոզեֆ Ֆուշեն եղել են անհաշտ թշնամիներ: Նրանք երկուսն էլ, ըստ պահպանված տեղեկությունների, մարդկային առաքինությամբ առանձնապես աչքի չեն ընկել, բայց երկուսն էլ եղել են բավականին հզոր ու ազդեցիկ և չափազանց վտանգավոր անձնավորություններ: Փարիզը տարիներ շարունակ վկան ու ականատեսն է եղել այդ երկու ոչ այնքան հաճելի անհատների միջև ծավալված հակամարտությանը: Բայց մի օր Փարիզը տեսավ, թե ինչպես Ֆուշեն ու Թալեյրանը թևանցուկ զբոսնում են Ելիսեյան դաշտերում և շատ սիրալիր զրուցում: Փարիզը տեսավ դա և...ցնցվեց. *«ԱՐԱՏՆ ու ՉԱՐԻՔԸ միմյամց թևանցուկ: Տեսնես ինչ արհավիրք է գալու մեր գլխին»*: Հիմա... ՔԵՄԱԼԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱՆ ու ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ՝ միմյանց ձեռք մեկնած: Տեսնես ի՞նչ արհավիրք է գալու հայի գլխին...

Այս ամենի մեջ կա, սակայն, շատ կարևոր մի հարց. բոլշևիկյան կուսակցության կազմում զգալի թիվ էին կազմում և որոշակի ազդեցություն ունեին նաև հայազգի անձինք: Ինչպիսի՞ն էին քեմալաբոլշևիկյան այս դաշինքի կայացման գործընթացներում հայ բոլշևիկների կեցվածքն ու դիրքորոշումը, նրանց դերակատարումը:

## I.14. Հայ բոլշևիկները քեմալաբոլշևիկյան դաշինքում

Անդրադառնալով այդ ժամանակաշրջանին՝ անհնար է շրջանցել ու անտեսել այն իրողությունն ու ակնհայտ փաստերը, որոնք միաբերան վկայում են, որ քեմալաբոլշևիկյան դաշինքի կողմից ձեռնարկած և իրականացրած հակահայկական ճգմիչ գործընթացներում՝ ընդհուպ մինչև «մեծ հաջողությամբ» ՀաՀ-ի վերացումը, ուժերի ներածի չափով իրենց անմիջական ներդրումն ու մասնակցությունն են ունեցել նաև հայազգի մի շարք անձինք: Անձինք, ովքեր զինվորագրվել ու ներկայացնում էին միանգամայն օտարածին քաղաքական հոսանք և օտարի շահերը տարածաշրջանում առաջ տանելու համար ջանք ու միջոց չէին խնայում թեկուզ սեփական ազգային պետության կործանման գնով: Խոսքն այդօրվա հայ բոլշևիկների ծավալած գործունեության մասին է:

Ինչպես հայտնի է, թե՛ 1917թ. հոկտեմբերյան հեղաշրջմանը նախորդող ժամանակաշրջանում, թե՛ հեղաշրջումից հետո բոլշևիկյան

վերնախավի և անձամբ Լենինի կողմից բազմիցս հնչեցվել են հայկական անկախ պետության ստեղծման օգտին ուղղված մի շարք հայտարարություններ:[284] Բոլշևիկների «հայասիրության» դրսևորման գագաթնակետը դարձավ 1917թ. դեկտեմբերի 31-ին հրապարակված «Թուրքահայաստանի» մասին դեկրետը, որն ստորագրել էին Խորհրդային Ռուսաստանի ժողովրդական կոմիսարների սովետի նախագահ Վ.Ուլյանովը (Լենին) և Ազգությունների գործերի ժողովրդական կոմիսար Ի.Ջուղաշվիլին (Ստալին): Բոլշևիկյան վերնախավը այդ դեկրետում շեշտում էր, որ *«Ժողովրդական Կոմիսարների Սովետը հայտարարում է հայ ժողովրդին, որ Ռուսաստանի բանվորական և գյուղացիական կառավարությունը պաշտպանում է Ռուսաստանի կողմից օկուպացված «Թուրքահայաստանի» հայերի ազատ ինքնորոշման իրավունքը՝ ընդհուպ մինչև լիակատար անկախություն...»*:[285] Բնական է, որ բոլշևիկների կողմից արտոնվող այդ պետական միավորումը կայանալու դեպքում պետք է ընդուներ կառավարման բոլշևիկյան մոդելը՝ «Հայ ժողովրդի դեպուտատների սովետի ձևով...»:[286] Դեկրետը կյանքի կոչելու և իրագործելու պարտականությունները դրվում էին 1917թ. դեկտեմբերի 16-ին բոլշևիկյան կառավարության կողմից Կովկասի գործերով արտակարգ կոմիսարի պաշտոնում նշանակված Ստեփան Շահումյանի վրա:[287]

Միանգամայն հասկանալի է նաև, որ նման մասշտաբային ծրագրի իրականացման համար անհրաժեշտ էր նաև մասշտաբային մի գործիք: Բոլշևիկյան մեթոդաբանության մեջ նման գործիքը նախևառաջ կուսակցությունն է: Արևմտյան Հայաստանում գործելու և լենինյան դեկրետն իրականացնելու համար 1917թ. վերջերին, 1918թ. սկզբներին Գուրգեն Հայկունու գլխավորությամբ հատուկ ստեղծվեց «Հայաստանի կոմունիստական կուսակցություն» անվամբ կազմակերպություն: Իրականում լինելով ռուսաստանյան բոլշևիկյան կուսակցության «պրոյեկտը» և նրա ուղղակի «ծնունդը»՝ այդ կուսակցությունը ձևական առումով հանդես էր գալիս որպես ինքնուրույն կոմունիստական կազմակերպություն և որպես այդպիսին էլ ընդգրկվել էր նույնիսկ Երրորդ Ինտերնացիոնալի կազմի մեջ: Այդ կուսակցությանն առավել ազդեցիկ «երանգ ու կշիռ» հաղորդելու համար նրա ղեկավար կազմում ընդգրկված էին Վ.Տերյանը, Վ.Ավանեսովը, Հ.Բժշկյանցը (Գայը) և մի շարք այլ հայտնի հայազգի կոմունիստներ[288]:

[284] Լ.Ա.Խուրշուդյան, Սովետական Ռուսաստանը և հայկական հարցը, Երևան, 1977, էջ 7-13

[285] Նույն տեղում, էջ 40-41:

[286] Նույն տեղում:

[287] Նույն տեղում:

[288] Վ.Հարությունյան, Հայ բոլշևիկների..., էջ 14:

Բայց իրավիճակը փոփոխվում էր շատ արագ: Բոլշևիկյան Ռուսաստանը նախ 1918թ. մարտին չնեղացրեց երիտթուրքական պարագլուխներին՝ Բրեստ-Լիտովսկում նրանց զիջելով ոչ միայն բուն «Թուրքահայաստանը», այլև նախորդ չորս տասնամյակում «Ռուսահայաստանի» կազմում եղած Կարսի մարզը: Մեկ տարի անց սկիզբ առավ արդեն քեմալաբոլշևիկյան եղբայրությունը, որն ինչքան ամրապնդվում, այնքան սպառնալից էր դառնում անկախ Հայաստանի համար: Չնայած նրան, որ բոլշևիկյան կողմը ցուցաբերում էր լիակատար ըմբռնում քեմալականների կողմից Հայաստանի հանդեպ հնչեցվող տարածքային պահանջների նկատմամբ, միևնույնն է, «Թուրքահայաստանի» մասին դեկրետը մեկ-մեկ ասես ամպոտ եղանակ էր ստեղծում եղբայրության՝ ընդհանուր առմամբ պայծառ այդ մթնոլորտում: Պարզից պարզ է, որ ոչ քեմալականները, և ոչ էլ բոլշևիկները իրենց գործողություններում որևիցե բարոյական զսպակներով ամենևին էլ կաշկանդված չէին: Պարզապես, իր բոլոր թերություններով ու կիսատությամբ հանդերձ, այդ դեկրետը պատեհ իրավիճակում հնարավոր էր օգտագործել ընդդեմ Թուրքիայի: Ահա թե ինչու քեմալաբոլշևիկյան եղբայրությունը բացարձակ անամպ դարձնելու համար պետք էր ազատվել նախ այդ դեկրետից, ապա՝ այդ դեկրետն իրականացնելու համար ստեղծված «գործիքից»:

1919թ. դեկտեմբերին Ռուսաստանյան կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության (ՌԿԿ) Կովկասյան երկրամասային կոմիտեի անդամ Անաստաս Միկոյանը Կովկասյան հարցի առնչությամբ բոլշևիկյան կուսակցության ղիրքորոշման վերաբերյալ պատրաստում է մի զեկուցում, որն այդպես էլ վերնագրված էր՝ «Կովկասյան հարցի առնչությամբ»: Այդ փաստաթղթում ընկ.Միկոյանը նախ արձանագրում է, որ Առաջին աշխարհամարտի տարիներին Թուրքիայի կողմից իրականացրած հայկական կոտորածների «շնորհիվ» Արևմտյան Հայաստանը բառիս բուն իմաստով մնացել է առանց հայերի, և այնտեղ այսօր բնակվում են ըստ էության միայն մահմեդականներ: *«Սակայն,* – շարունակում է Անաստաս Իվանովիչը, – *հայ շովինիստները, հենվելով սև հարյուրական գեներալ Դենիկինի և Դաշնության իմպերիալիստական ուժերի վրա, դեռևս փայփայում են յոթ վիլայեթների տարածքով «Մեծ Հայաստանի» ստեղծման քիմերիկ և հանցավոր գաղափարը: Հայերի բացակայությունը և բացառապես մահմեդական բնակչության առկայությունն այդ տարածքներում նրանց բացարձակապես չի հուզում: Այդ «Մեծ Հայաստանը» հենվելու է ոչ թե բնակչության մեծամասնության կամարտահայտման վրա, այլ նրա վզին է փաթաթվելու իմպերիալիստական զենքի ուժով, ներդրվելու է ավերակների և ոչ հայկական տարրերի անմեղ դիակների վրա: Նման դժոխքի ու բռնության մղձավանջի իրականացման ծրագիրը*

*օժանդակվում է Դաշնության իմպերիալիստների կողմից, որոնք մտադրված են ի դեմս հայերի ունենալ լավագույն, նվիրված ու առավել ընդունակ գործակալներ, որոնց միջոցով կկարողանան թալանել ու գաղութացնել Թուրքիան»:* Դրանից հետո Անաստաս Իվանովիչը «մի թեթև» սրամտում է, ասելով, թե պաշտպանել Արևմտյան Հայաստանի նկատմամբ հայերի պահանջները, նշանակում է «ինքնավարության իրավունք շնորհել նաև մեռելներին»: *«Սակայն մեր կուսակցությունը,* – խորխտ հայտարարում է բոլշևիկ Միկոյանը, – *չի կարող հենվել հայ ազգայնականների և Դաշնության իմպերիալիստների տեսակետների վրա և դառնալ դաիճը նորանոր հազարավոր անմեղ զոհերի՝ ի դեմս հայերից ոչ պակաս ճնշված Թուրքիայի աղքատ մահմեդականների՝ հանուն հայ շովինիստների հանցավոր ցանկությունների: Բոլշևիկյան կուսակցությունը չի կարող կողմնակիցը լինել ո՛չ «Մեծ», ո՛չ «Փոքր» և առհասարակ հայերի պահանջների առումով՝ ոչ մի տեսակի Արևմտյան Հայաստանի: Քանի որ ազգերի ինքնորոշման սկզբունքը ոչ թե պատմական իրավունք է, այլ այս պահին այդ հողի վրա ապրող ազգի իրական իրավունքն է»*: Ընկ. Միկոյանը խիստ քննադատության է ենթարկում իր բոլոր այն կուսակիցներին, որոնք դեռևս հայկական անկախ պետության հարցում մնում են «հին դիրքերում», այն է՝ 1917-ի հեղաշրջումից հետո հայկական անկախ պետության ստեղծման չժխտման դիրքերում: Կովկասյան ուղղությամբ որպես բոլշևիկների կողմից թույլ տված կոպիտ սխալ՝ Միկոյանը նշում է «Թուրքահայաստանի» մասին դեկրետը, որի պատճառով բոլշևիկների դեմ տրամադրվեց ոչ միայն Թուրքիայի, այլև ամբողջ Կովկասի մահմեդականությունը, քանի որ այդ դեկրետի ընդունումով Խորհրդային իշխանությունը մահմեդական բնակչության ընկալմամբ, սկսում էր սատարել մահմեդականների թշնամի հանդիսացող հայ շովինիստներին՝ անտեսելով մահմեդական բնակչության խնդիրները: *«Եվ առհասարակ,* – եզրափակում է հայ բոլշևիկ Անաստաս Միկոյանը, – *հայկական ազգային շարժումը ազատագրականից վերածվեց հետադիմական և նվաճողական («իմպերիալիստական») մի շարժման, իսկ «Մեծ, Միացյալ և Անկախ Հայաստանի» մասին միտքը հանդիսանում է խիստ հետադիմական, վտանգավոր ու հանցավոր քիմերիկ մի գաղափար, որի դեմ պետք է պայքար ծավալի բոլշևիկյան կուսակցությունը»*:[289] Նույն զեկուցման վերջում անդրադարձ էր արված նաև Արևմտյան Հայաստանի տարածքում և արևմտահայերի միջավայրում գործելու համար հատուկ ստեղծված վերոնշյալ Հայաստանի կոմունիստական կուսակցությանը:

---

[289]Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарии (Ред. и сост. Ю.Г.Барсегов), том 2, ч.2, Москва, 2005, с. 36-39; Վ.Հարությունյան, Հայ բոլշևիկների…, էջ 78-82:

Հասկանալի է, որ հայկական կոմունիստական կազմակերպությունը, որը ստեղծվել էր հայկական անկախ պետականության (թեկուզև բոլշևիկյան մոդելով) հարցին սատարելու համար,[290] 1919թ. բռնկված քեմալաբոլշևիկյան սիրավեպի պարագայում արդեն դիտվում էր որպես տհաճ մի մնացուկ, որից անհրաժեշտ էր շուտափույթ ազատվել: Նույն Միկոյանի ջանքերով այդ կուսակցությունը ոչ թե փակվում է կամ լուծարվում, այլ բառացիորեն ջախջախվում ու ոչնչացվում է: 1919թ. հոկտեմբերի 21-22-ին Աստրախանում գումարվում է հայ կոմունիստների մի ժողով, որտեղ բացի Գ.Հայկունու գլխավորած՝ Հայաստանի կոմկուսի ներկայացուցիչներից ներկա են եղել նաև «կովկասյան հայ ընկերները»՝ Անաստաս Միկոյանը և Իսահակ Դովլաթովը:[291] Այդ ժողովի ընթացքում Հայկունու գլխավորած կուսակցությունը ենթարկվում է այն բոլոր հնարավոր քննադատություններին, մեղադրանքներին և պիտակավորումներին, որոնք կարող են արտաբերվել ավելորդ դարձած կոմունիստների դեմ նպատակային քննադատող ճառով հանդես եկող մեկ այլ բոլշևիկի կողմից: Կուսակցությունը լիկվիդացվում է, ինչի մասին «կովկասյան ընկերները» անմիջապես տեղյակ են պահում Վլադիմիր Իլիչին:[292] Իսկ «Կովկասյան հարցի առնչությամբ» զեկուցման մեջ ընկ. Միկոյանը գրում է. *«Ինչ վերաբերում է թուրքահայերի միջավայրում կոմունիստական աշխատանքներ ծավալելուն, ապա այդ աշխատանքները չպետք է վարի, այսպես կոչված, Հայաստանի նացիոնալ-կոմունիստական կուսակցությունը,[293] որը կանգնած է «միացյալ» (Թուրքական և Կովկասյան) Հայաստանի կողմը և դրանով իսկ զանգվածներին է մատուցում կոմունիզմի մածուկի տակ թաքնված հայկական շովինիզմը, իսկ մահմեդականների կոտորածները՝ որպես հանուն Խորհրդային իշխանության և ընդդեմ հակահեղափոխության դեմ մղվող պայքար»*:

Ոչ ոք իհարկե չի պատրաստվում պնդել, թե Գուրգեն Հայկունու գլխավորած կուսակցությունը դրական առումով ինչ-որ վճռական դեր կարող էր ունենալ հայության ճակատագրում: Ամենևի՛ն: Ի վերջո այդ կուսակցությունն էլ ընդամենը ռուսաստանյան բոլշևիկների կողմից, պահի պահանջներից ելնելով, հրահանգավորված ու արտոնված մի կառույց էր: Հարցը պարզապես այն է, թե այդ կոմունիստական կուսակցության հետ կապված՝ արծարծվում էին դեռևս «հնուց»՝ 1917-18-ից, մնացած հայկական անկախ պետության մասին ինչ-ինչ գաղափարներ. ուրեմն պետք էր վերացնել-անհետացնել այդ

---

[290] Վ.Հարությունյան, Հայ բոլշևիկների…, էջ 53-64:

[291] Այդ օրերին Աստրախանում էր գտնվում նաև կովկասյան ու հայկական խնդիրների մեկ այլ «փորձագետ»՝ հայտնի բոլշևիկ Ս.Մ.Կիրովը, տե՛ս, M.Озтюрк, նշվ. աշխ., էջ 51:

[292] Վ.Հարությունյան, Հայ բոլշևիկների…, էջ 66-71:

[293] Խոսքը, բնականաբար, գնում է արդեն ոչ ձեռնատու դարձած Հայկոմկուսի մասին:

կուսակցությունը, որպեսզի թեկուզ իր այդ թույլ էությամբ անգամ այն չստվերի քեմալաբոլշևիկյան եղբայրության լազուր երկնակամարը:

Միկոյանի զեկուցման տեքստային-բովանդակային «պարունակության» վերաբերյալ որևիցե պարզաբանում կամ էլ մեկնաբանություններ բերելը տվյալ դեպքում միանգամայն ավելորդ է, անիմաստ և անտեղի: Հավելենք միայն, որ զեկուցումն ուղարկված էր անձամբ Լենինին, և, ինչպես երևում է ուղեկցող նամակից, այն պատրաստվել էր բոլշևիկյան կուսակցության Քաղբյուրոյի հերթական նիստում որպես օրակարգային հարց քննարկվելու համար:[294] Եթե նկատի ունենանք, որ բոլշևիկյան կուսակցության ղեկավար ատյանների անդամներն ամենևին «ազատ ստեղծագործողներ» չէին և կուսակցական ցանկացած ղեկավար մարմնում, հատկապես նրա բարձրագույն մարմնում՝ Քաղբյուրոյում, քննարկվելիք ցանկացած հարց ներկայացնելու համար անհրաժեշտ էր նախօրոք տրված հանձնարարական, ապա կասկածից վեր է, որ Միկոյանի սույն զեկուցումը ոչ թե «շարադրություն է ազատ թեմայով», այլ կուսակցական հստակ հանձնարարականի կատարում՝ կովկասյան տարածաշրջանում, և գլխավորապես անկախ Հայաստանի նկատմամբ բոլշևիկյան կուսակցության կողմից որդեգրվելիք քաղաքական կուրսի առնչությամբ անհրաժեշտ առաջարկությունների մշակման վերաբերյալ:

Չմոռանանք, որ Լենինին ուղղված այդ երկտողը գրվել էր 1919թ. դեկտեմբերի 25-ին՝ այն օրերին, երբ մի կողմից՝ Կարմիր բանակն արդեն շարժվում էր դեպի Կովկաս, իսկ մյուս կողմից՝ արդեն բավականին խորացել, ամրացել ու սերտացել էին քեմալաբոլշևիկյան հարաբերությունները:

Հասկանալի է, որ «Թուրքահայաստանի» դեկրետը բոլշևիկների կողմից կառավարական հատուկ որոշումով չեղարկելը մի տեսակ «չէր նայվի»: Նախ դա փաստացի կնշանակեր ուղղակի պատերազմի հայտարարում գոյություն ունեցող հայկական պետությանը: Մյուս կողմից՝ այդօրվա բոլշևիկյան Ռուսաստանում (ինչպես և հետագա յոթ տասնամյակներում) առաջնայինը հենց կուսակցական որոշումներն էին:

Չմոռանանք նաև, որ այդ ժամանակաշրջանում Քյազիմ Կարաբեքիր փաշան արդեն բավականին սերտ գործնական հարաբերություններ էր հաստատել նաև բոլշևիկյան կովկասյան կառույցների ղեկավարների ու 11-րդ Կարմիր բանակի հրամանատարության հետ,

---

[294] Երկտողում գրված է. «Վլադիմիր Իլյի՛չ, լուծելով կազմակերպական հարցը, ԿԿ-ի Քաղբյուրոն հետաձգեց Կովկասում մեր քաղաքականության վերաբերյալ հարցը: Քանի որ հարցի քննարկման ժամանակ ես արդեն Մոսկվայում չեմ լինելու, որպես Կովկասում մեր քաղաքական գծին վերաբերող քննարկման նյութ՝ Ձեզ և ԿԿ Քարտուղարությանն եմ ներկայացնում իմ զեկուցումը»; տե՛ս Ю.Г.Барсегов, նշվ. աշխ., էջ 39:

և Հայաստանից դուրս գործող «հայ ընկերների» իրականացրած ամեն մի նման «ակցիա» միաժամանակ և՛ ընծա էր, և՛ հաշվետվություն՝ ուղղված քեմալական կողմին: Քեմալաբոլշևիկյան դաշինքի կայացման ու ամրապնդման գործում սա թերևս հայ բոլշևիկների կողմից իրականացրած առաջին խոշոր ու էական ներդրումն էր:

1919թ. աշնանը քեմալական կողմն ինտենսիվ բանակցություններ էր վարում ՌԿԿ կովկասյան երկրամասային կոմիտեի հետ, որոնց արդյունքում 1920թ. հունվարի 11-ին կնքվում է մի պայմանագիր, որի հիմնական նպատակն էր «*…բոլոր մուսուլմանական երկրների ազատագրումը Արևմտյան Եվրոպայի իմպերիալիզմի լծից…*»: Իսկ այդ փաստաթղթի 11-րդ կետում նշված էր, որ կողմերն իրենց վրա պարտավորություն են վերցնում «*… աջակցություն ցուցաբերել Կովկասում սկսվող ընդհանուր շարժմանը, որն ուղղված է անգլիական և ռուսական իմպերիալիզմների և նրանց հրամանով ու ազդեցությամբ գործող Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի ներկա կառավարությունների դեմ, որոնք արգելակում են այդ շարժումը…*»[295]: Կովկասյան բոլշևիկյան կազմակերպության ղեկավար մարմնի կազմում այդ օրերին ընդգրկված են եղել նաև հայ բոլշևիկներ Ա.Ա.Բեկզադյանը, Ի.Ի.Դովլաթովը, Ս.Հ.Կասյանը, Հ.Մ.Հակոբյանը, Ա.Ի.Միկոյանը, Ա.Հ.Մռավյանը և այլք: Ինչպես տեսնում ենք, հայ բոլշևիկները իրոք միանգամայն զերծ էին ազգայնական և նույնիսկ ազգային որևիցե բարդույթից և իրենց ներկայությամբ ոչ թե դառնացնում, այլ անգամ «քաղցրացնում» ու ամրապնդում էին քեմալաբոլշևիկյան եղբայրական դաշինքը:

Հայաստանի հարցով քեմալաբոլշևիկյան դաշինքում դեռևս 1919թ. վերջերին արդեն առկա էր տեսակետների և մոտեցումների բացառիկ և լիակատար համընկնում, այն է՝ «Կարթագենը», ի դեմս անկախ Հայաստանի, պետք է կործանվի: Հայ բոլշևիկներն էլ պարտաճանաչությամբ ու խանդավառությամբ մասնակցում և իրենց «համեստ» լուման էին ներդնում այդ ամենի մեջ:

*ՄՈՒՍՏԱՖԱ ՔԵՄԱԼ. «Մենք պետք է ոչնչացնենք հայկական բանակը և հայկական պետությունը»*:

*ԱՆԱՍՏԱՍ ՄԻԿՈՅԱՆ. «…միտքը “Մեծ, Միացյալ և Անկախ Հայաստանի” մասին հանդիսանում է խիստ հետադիմական, վտանգավոր ու հանցավոր քիմերիկ մի գաղափար, որի դեմ պետք է պայքար ծավալի բոլշևիկյան կուսակցությունը…”:*

---

[295] В.Гафаров, նշվ. աշխ., էջ 242; Большевистское руководство. Переписка, 1912-1927. Сборник документов (Сост.: А.В.Квашонкин, О.В.Хлевнюк, Л.П.Кошелева, Л.А.Роговая), Москва, 1996, (հետայսու՝ Большевистское руководство…), №70, примечание 6; М.Озтюрк, նշվ. աշխ., էջ 51-53:

### I.15. Կեցցե՛ Խորհրդային Ադրբեջանր

Կովկասյան տարածաշրջանում ձևավորվող նոր ռազմաքաղաքական իրավիճակն, ասես, ինքն էր տանում, ուղղորդում ու մղում տարածաշրջանի գործընթացներում ներգրավված բոլոր կողմերին վճռական քայլերի ու գործողությունների: Մի կողմից՝ Անգլիան 1919թ. աշնան սկզբներին Անդրկովկասից արդեն դուրս էր բերել իր էքսպեդիցիոն կորպուսր, և այդտեղ մնացել էին միայն բրիտանական դիվանագիտական և ռազմական ներկայացուցիչներր: Զորքերի դուրսբերումր թեև էապես թուլացրեց բրիտանական ազդեցությունն այդ շրջանում, սակայն հանրահայտ փաստ է, որ այդ 3 հանրապետություններն էլ այդ պահին այսպես թե այնպես շարունակում էին մնալ Անտանտի (Անգլիայի) քաղաքական ուղեծրում: Մյուս կողմից՝ 1919թ. նոյեմբերից 1920թ. մարտ ժամանակահատվածում Կարմիր բանակր մի քանի ծանր պարտությունների մատնեց դենիկինյան Կամավորական բանակին, նրանից խլեց և իր ձեռքր վերցրեց ոչ միայն հարավկովկասյան ուղղության ռազմավարական նախաձեռնությունր, այլև «Միացյալ և Անբաժանելի» Ռուսաստանի վերածնման գործընթացի փաստացի իրականացումր և մոտեցող գարնան հետ միասին սկսեց անհամբեր թակել որոշ ժամանակով Ռուսաստանի ձեռքից «փախած» Կովկասի դռներր: Առավել ևս, որ Դաշնակիցների զինուժի հեռանալուց հետո ստեղծված «ցածր ճնշման» քաղաքական կլիման բավականին բարենպաստ էր հյուսիսից դեպի տարածաշրջան շարժվող հզոր հոսանքների ներխուժման համար:

Այդ իրավիճակում Անգլիան իբր մտադրված էր Կովկասյան լեռնաշղթայից այս կողմ՝ դեպի հարավ, Անդրկովկասի 3 հանրապետությունների միջոցով բոլշևիկների դեմ ստեղծել լրացուցիչ «Կովկասյան պատնեշ»:[296] Սակայն այդ մտադրության իրագործման համար որևէ գործնական քայլ, ասենք՝ տարածաշրջան ինչ-որ քանակի զորք ուղարկել, չէր կատարում:[297] Հավանաբար Ալբիոնում և Դաշնության մյուս երկրներում մեծ կասկածներ ունեին, թե ընդհանրապես հնարավո՞ր է արդյոք միմյանց հետ բազմաթիվ հակասություններ ունեցող այդ 3 փոքրիկ հանրապետություններր միավորել մեկ ճակատի կազմում, իսկ միավորելուց հետո էլ այդ թույլ պետություններն ի վիճակի կլինե՞ն արդյոք ռեալ դիմադրություն ցույց տալ Անտանտի ինտերվենցիան ըստ էության արդեն ետ մղած և Սպիտակ շարժման բանակները պարտության մատնած բոլշևիկյան զինված ուժերին:[298]

---

[296] Р.Г.Ованнисян, նշվ. աշխ., էջ 396-402; М.Озтюрк, նշվ. աշխ., էջ 53, 54:
[297] Р.Г.Ованнисян, նույն տեղում; М. Озтюрк, նշվ. աշխ., էջ 54, 55; В.Гафаров, նշվ. աշխ., էջ 244:
[298] Р.Г.Ованнисян, նույն տեղում:

Իսկ Կովկասում սեփական զինվորներով բոլշևիկների հետ ռազմական ընդհարումների մեջ մտնելու ցանկություն ո՛չ Բրիտանիան և ո՛չ էլ մյուս դաշնակիցները ակնհայտորեն չունեին:[299] Չէ՞ որ բոլշևիկյան Կարմիր բանակն այդ ժամանակահատվածում, կարելի է ասել, քանակական գերաճ էր տվել և տարբեր հաշվարկներով, հասնում էր 3-5 միլիոնի:

Բայց նույնիսկ զուտ գաղափարի տեսքով «Կովկասյան պատնեշի» նախագիծը չափազանց մտահոգիչ էր բոլշևիկյան կողմի համար և սարսափեցնող՝ քեմալականների համար:

Բոլշևիկների համար ամբողջ Անդրկովկասում Ադրբեջանը (ավելի ճիշտ՝ Բաքուն) իր նավթահանքերով ուներ առաջնային նշանակություն: Բոլշևիկները վախենում էին ուշանալուց: Չէր բացառվում, որ Ադրբեջանի այդօրվա պրոանգլիական կառավարությունը կարող էր այս անգամ էլ ինքը Բաքու հրավիրել անգլիացիներին: 1920թ. մարտի 17-ին Լենինը հեռագրում է Կովկասյան ռազմաճակատի ռազմահեղափոխական խորհրդի անդամ Օրջոնիկիձեին. *«Մեր կողմից Բաքուն գրավելը ծայրահեղ, ծայրահեղ անհրաժեշտություն է: Բոլոր ջանքերը ուղղեք դրան…»*:[300] Այսինքն՝ այդ օրերին Ադրբեջանի խորհրդայնացումը բոլշևիկյան կողմի համար կովկասյան տարածաշրջանում իրագվելիք քաղաքականության ամենաառաջնային և ամենաանհետաձգելի հարցն էր:

Իր հերթին էլ քեմալական կողմի համար պարզ էր, որ արևմտյան ուղղությամբ՝ հունական ճակատում, ինքն այդ պահին որևէ լուրջ քայլերի ընդունակ չէր, և հենց Անդրկովկասն էր այն միակ ու հնարավոր ճակատը, որտեղ՝ այն էլ բոլշևիկյան ուժերի առկայության պարագայում միայն թուրքական ազգայնական շարժումն այդ պահին կարող է նախաձեռնել արդյունավետ հակագրոհ Անտանտի դեմ: Պարզ էր, որ եթե Անտանտը հանկարծ կարողանար հասցնել անդրկովկասյան 3 հանրապետությունները զինել, կազմակերպել ու միավորել մեկ հակաբոլշևիկյան բլոկի մեջ և դրանով խոչընդոտել (կամ՝ թեկուզև դանդաղեցնել) բոլշևիկների մուտքը տարածաշրջան, ապա դա կլիներ թուրքական անկախ պետություն ստեղծելու հույսերի վերջը: Այդ մասին անձամբ Քեմալը շատ հստակ նշում էր 1920թ. փետրվարի 6-ին Քյազիմ Կարաբեքիրին ուղարկած իր հեռագրում. «*…Երբ բոլշևիկները հաղթականորեն նվաճեն Կովկասը, Եվրոպան կհայտնվի ծանր կացության մեջ… Համարելով "Կովկասյան պատնե-*

[299] М.Озтюрк, նշվ. աշխ., էջ 55, 56:

[300] А.В.Квашонкин, Советизация Закавказья в переписке большевистского руководства 1920-1922 гг., In: Cahiers du monde russe: Russie, Union Sovetique, Etats independants, v. 38, №1-2, 1997, p. 165.

*շի" ափեղծումը Թուրքիայի ոչնչացման պլան՝ մենք ստիպված ենք դիմելու ամենածայրահեղ միջոցների, որպեսզի թույլ չտանք այդ պատնեշի ափեղծումը Անտանտի երկրների կողմից»*:[301] Թուրքերի կողմից հայտարարվող այդ *«թույլ չտալու»* առաջին (և ամենակարևոր) անհրաժեշտ պրակտիկ քայլը պետք է լիներ Ադրբեջանի դուրս բերումը անգլիական ազդեցության ոլորտից: Տվյալ պարագայում դա հնարավոր էր իրականացնել միայն Ադրբեջանը խորհրդայնացնելու միջոցով. այլընտրանք չկար: Հետևաբար, թուրքերը խիստ շահագրգռված էին, որպեսզի օր առաջ իրականացվեն բոլշևիկների կողմից Անդրկովկասում և առաջին հերթին՝ Ադրբեջանում վերահսկողություն հաստատելու ծրագրերը և բնականաբար ջանքեր չպետք է խնայեին դրա իրականացման համար: Ինչպես տեսնում ենք, տվյալ դեպքում կողմերի շահերի համընկնումը առանց չափազանցության բացառիկ էր և բացարձակ: Այնպես որ մնում էր միայն հնչեցնել. *«Ի գո՛րծ, եղբայրներ»*: Ադրբեջանի խորհրդայնացման ուղղությամբ իրականացված քեմալաբոլշևիկյան համատեղ գործողությունը կարելի է համարել բառացիորեն դասագրքային մի նմուշ, որտեղ պարզորոշ ցուցադրվում է, թե ինչպես պետք է համագործակցեն տվյալ տարածաշրջանի ռազմաքաղաքական կոնֆիգուրացիայի ձևավորման հարցում միմյանց հետ համաձայնության եկած երկու կողմերը: Պետք է խոստովանել, որ կողմերի նպատակների իրականացման տեսանկյունից ամեն ինչ արվեց չափազանց հստակ և, կարելի է ասել, նույնիսկ՝ շատ նուրբ ու գեղեցիկ:

Քեմալաբոլշևիկյան շփումների ժամանակագրության մասով նախորդիվ մենք հասանք մինչև 1919թ. աշուն: Դրանից հետո շփումները կողմերի միջև շարունակվեցին, բազում հարցեր հստակեցվեցին և ձեռք բերվեցին մի շարք կարևորագույն՝ դեռևս բանավոր պայմանավորվածություններ Անդրկովկասը մոտ ժամանակներում միմյանց միջև բաժանելու վերաբերյալ:[302] Պայմանավորված Կարմիր բանակի՝ Կովկասին մոտենալու գործոնով՝ բնական է, որ թուրք-բոլշևիկյան երկկողմ շփումների և գործարքների «էպիկենտրոնը» դառնալու էր Ադրբեջանը: Դեռևս 1918թ.-ից Բաքվում և առհասարակ Ադրբեջանում գտնվում էր թվով մոտ 3.000 թուրք զինվորականություն,[303] որոնց գլխավորում էին Էնվեր փաշան և Նուրի փաշան, ինչպես նաև նրանց նման նույն պանթուրքական գաղափարներ կրող մի շարք այլ

---

[301] В.Гафаров, նույն տեղում; www.aniarc.am/2015/09/26/bolshevik-kemalist-cooperation-part-two/

[302] Установление политических связей между советской Россией и турецкими националистами, Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарий (Ред. и сост. Ю.Г.Барсегов), т. 2, ч. 2, Москва, 2005, с. 308-10.

[303] Р.Г.Ованнисян, նշվ. աշխ., էջ 375:

թուրքական կազմակերպություններ և անհատ գործիչներ: Էրզրումի և Սվազի կոնգրեսներից հետո քեմալական շարժման կողմից Բաքու ուղարկվեցին նաև «լրացուցիչ թարմ ուժեր»՝ ի դեմս փորձված հին իթթիհադական՝ Էնվերի և Նուրիի ազգական, իր հայաջինջ գործունեությամբ հայտնի Խալիլ փաշայի և այլոց: Քեմալական շարժման ձևավորումից ու կայանալուց հետո Ադրբեջանում առկա և զգալի ուժ ներկայացնող թուրքական այդ կոնտինգենտը սկսեց օժանդակել այդ շարժման ծրագրերի իրականացմանը: Քեմալից ու Կարաբեքիրից ստացված բանավոր հրահանգներն ու հեռագրերը միշտ պնդում էին նույնը. Բաքվում գործող թուրքական գործակալական ցանցի խնդիրն այն է, որ նա պետք է կարողանա կազմակերպել բոլշևիկներից օգնություն ստանալը, իսկ ամենագլխավորը՝ աջակցել Խորհրդային Ռուսաստանի և Թուրքիայի միջև ցամաքային ճանապարհի բացմանը: Կարաբեքիրը հեռագրում էր Խալիլին. *«Ձեր և Էնվեր փաշայի ու Նուրի փաշայի գլխավոր խնդիրն է հանդիսանում խորհրդային կառավարման ձևը մինչև Թուրքիայի սահմանն հասցնելը: Հակառակ դեպքում՝ դրանից կշահեն ուրիշները»*:[304] Թուրք էմիսարները անմիջական և ուղղակի կապ են ստեղծում Բաքվի ընդհատակում գործող ռուսաստանյան բոլշևիկների հետ և հասնելով մինչև ՌԿԿ Կովկասի երկրամասային կոմիտե, ինչպես արդեն նշել ենք՝ 1919թ. նոյեմբերին նախապատրաստում, իսկ 1920թ. հունվարի 11-ին ստորագրում են երկկողմանի մի փաստաթուղթ, որը կարելի է համարել Խորհրդային Ռուսաստանի և քեմալական շարժման միջև ստորագրված առաջին պայմանագիրը: Պայմանագրում, որը թուրքական կողմից ստորագրել էր Բահա Սաիդը, իսկ ռուսաստանյան կողմից՝ Շալվա Էլիավան, մասնավորապես նշվում էր, որ կողմերի գլխավոր նպատակը պայքարն է արևմտաեվրոպական իմպերիալիզմի դեմ և մահմեդական ժողովուրդների ազատագրումը նրա լծից: Ըստ պայմանագրի՝ բոլշևիկյան Ռուսաստանը պարտավորվում էր թուրքական կողմին ապահովել զենք-զինամթերքով, հանդերձանքով, գումարով և առհասարակ, կանոնավոր բանակ ստեղծելու և պահելու ամեն անհրաժեշտ բաներով: Թուրքական կողմը պարտավորվում էր մահմեդականների ապստամբություններ հրահրել Բաթումում, Աֆղանստանում, Իրանում և Հնդկաստանում, օգնել Խորհրդային Ռուսաստանին՝ հակախորհրդային ուժերի դեմ նրա պայքարում, այդ թվում նաև Կովկասում հակաիմպերիալիստական շարժմանը խոչընդոտ հանդիսացող և Թուրքիայի ու Ռուսաստանի ընդհանուր նպատակների իրականացմանը դեմ գործող Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի ներկայիս կառավարու-

[304] В.Гафаров, նշվ. աշխ., էջ 242:

թյունների դեմ:[305] Գործնական հարթության մեջ այդ ամենը նշանակում էր, որ քեմալականները կստանան բոլշևիկների կողմից խոստացված օգնությունը, բայց իրենք էլ պետք է իրենց մասով ապահովեն Ադրբեջանի հնարավորինս շուտափույթ և դյուրին խորհրդայնացումը: Սա, չմոռանանք, որ հենց իրենց՝ քեմալականների համար նույնպես հրատապ խնդիր էր: Բայց մինչև Ադրբեջան հասնելը դեռ անհրաժեշտ էր խորհրդայնացնել Հյուսիսային Կովկասը՝ իր հոծ մահմեդական լեռնականներով: Այդ խնդրի վերաբերյալ Քեմալի մոտեցումը հետևյալն էր.

*«…Անհրաժեշտ է պաշտոնապես կամ ոչ պաշտոնապես Արևելյան ճակատում իրականացնել զորահավաք և սկսել "Կովկասյան պատնեշի" ավերումը նրա թիկունքից: Անհրաժեշտ է շտապ հարաբերություններ հաստատել կովկասյան նոր կառավարությունների՝ հատկապես Ադրբեջանի և Դաղստանի մուսուլմանական կառավարությունների հետ, ուսումնասիրել նրանց վերաբերմունքը Անտանտի նախագծի նկատմամբ: Եթե կովկասյան ազգերը որոշեն որպես արգելք հանդես գալ մեր նկատմամբ, ապա պետք է պայմանավորվել բոլշևիկների հետ նրանց վրա համատեղ հարձակում իրականացնելու համար…»:*[306]

Կարաբեքիրն էլ իր հերթին 1920թ. մարտի 17-ին Խալիլին ու Նուրիին հասցեագրված իր նամակում հորդորում էր.

*«Որպեսզի բոլշևիկները հայտնվեն Թուրքիայի սահմանների մոտ, անհրաժեշտ է որպեսզի բոլշևիկները շատ արագ գրավեն ամբողջ Կովկասը: Նույնիսկ նրանց փոքրաթիվ ուժերը, մտնելով Ադրբեջան և ադրբեջանցիների հետ միասին հասնելով մեր սահմանները, մեծ դերակատարում կունենան թուրքական նպատակների իրագործման հարցում: Չափազանց կարևոր կլիներ ապահովել, որպեսզի բոլշևիկները իշխանության գան Ադրբեջանում, Դաղստանում և Վրաստանում…»:*[307]

Այս ամենը, իհարկե անգլիացիների աչքից չի վրիպում: 1920թ. մարտի 12-ին Անդրկովկասում Մեծ Բրիտանիայի գլխավոր կոմիսարը հեռագրում է Ֆորին օֆիս.

*«Մուստաֆա Քեմալը Լենինի հետ համաձայնություն ունի, ինչը բոլշևիկներին ընձեռում է ձեռքերի ազատություն Հյուսիսային Կովկասում և Ադրբեջանում, ինչի նպատակն է ապահովել իր համար անարգելք զենք տեղափոխելը: Մուստաֆա Քեմալը համաձայնվել է բրիտանացիներին տհաճություններ պատճառել Միջագետքում: Թուրքերն առաջարկում են մոտ ժամանակներում Բաքվում իրականացնել պետական հեղաշրջում»:*[308]

---

[305] В.Гафаров, նշվ. աշխ., էջ 243:
[306] Նույն տեղում, էջ 244:
[307] Նույն տեղում:
[308] Ю.Г.Барсегов, նույն տեղում; С.Тарасов, նույն տեղում:

Երբ բոլշևիկները հասան բուն Կովկասի լեռներին, քեմալականները դեռևս Օսմանյան կայսրության ժամանակներից Կովկասի լեռնական մահմեդականների միջավայրում գործող գործակալական ցանցի միջոցով տեղի բնակչությանը բավականին լոյալ տրամադրեցին երկրամասի խարհրդայնացման նկատմամբ և, ինչպես որ «հարկն էր», այդ հարցում նույնպես բոլշևիկներին գործուն աջակցություն ցուցաբերեցին:[309] Դա էլ ասենք, որ բոլշևիկները դեպի Կովկաս էին գալիս, մեղմ ասած, ոչ այնքան բարեսիրտ տրամադրությամբ. *«Մեզ հույժ անհրաժեշտ է նավթը: Կազմեք բնակչությանն ուղղված մի մանիֆեստ այն մասին, որ մենք կմորթենք բոլորին, եթե այրեն կամ էլ փչացնեն նավթը, և, ընդհակառակը, իրենց կյանք ենք պարգևում, եթե Մայկոպը և հատկապես Գրոզնին մեզ հանձնեն չվնասված…»:*[310] Բայց ամեն ինչ անցավ համեմատաբ հարթ. գործը մորթելուն չհասավ: Ինչևիցե, 1920թ. մարտ-ապրիլին խորհրդայնացվեցին Թերեքի մարզն ու Դաղստանը և ապրիլի 2-րդ կեսին Կարմիր բանակն արդեն կանգնած էր Ադրբեջանի հյուսիսային սահմանը հանդիսացող Սամուր գետի ափին՝ կազմ ու պատրաստ Ադրբեջան մտնելու համար: Այդ նույն օրերին Մուստաֆա Քեմալը, Օրջոնիկիձեի հետ համաձայնեցված, դիմում է Ադրբեջանի իշխանություններին, որպեսզի թույլ տրվի բոլշևիկյան Կարմիր բանակին մտնել Ադրբեջանի տարածք և այնտեղից շարժվել դեպի Թուրքիա՝ այդ երկրի սահմանները անգլիացիների ոտնձգություններից պաշտպանելու: Պաշտոնական Բաքուն պատասխանում է լռությամբ:[311] Իսկ պաշտոնական Մոսկվան էլ իր հերթին լռությամբ է պատասխանում նույն օրերին պաշտոնական Բաքվի կողմից հղած հարցմանը, որտեղ ադրբեջանական կողմը բացատրություն էր պահանջում այն փաստի վերաբերյալ, թե ինչ նպատակով են Ադրբեջանի հյուսիսային սահմանների երկայնքով կենտրոնացվում Կարմիր բանակի զորամասերը:[312]

Պահը եկավ… Հիմա արդեն, ինչպես ասում են, խոսքը քեմալականներինն էր: Եվ նրանք իրականացրել էին մեծածավալ նախապատրաստական աշխատանք՝ կարմիր զորքերի անարգել մուտքը Բաքու ապահովելու համար: Ավելի համաձայնեցված և արդյունավետ գործելու նպատակով Ադրբեջանում գործող թուրքական տարբեր խումբ-խմբավորումներն ու հոսանքները 1920թ. սկզբներին

---

309 Ա.Ավագյան, Հյուսիսկովկասյան քաղաքական վտարանդիությունը Թուրքիայի արտաքին քաղաքականության համատեքստում (1920-1971թթ.), Երևան, 2011, էջ 34-36; В.Гафаров, նշվ. աշխ., էջ 245:

310 Այս հեռագիրը 1920թ. մարտի 28-ին Լենինն ուղարկել է Օրջոնիկիձեին, տե՛ս А.В.Квашонкин, նշվ. աշխ., էջ 165:

311 А.В.Квашонкин, նշվ. աշխ., էջ 166; Большевистское руководство…, No 70.

312 История Азербайджана, Баку, 1995, с.202.

ստեղծեցին մի ընդհանուր համակարգող մարմին: Ռուսաստանյան գործընկերոջ ակն ու ունկը շոյելու, նրա հետ ավելի սերտ, ուս-ուսի տված գործելու նպատակով այդ մարմինն անվանեցին Թուրքիայի կոմունիստական կուսակցություն, որի ղեկավարներից էր հանրահայտ ու ամենահաս Խալիլ-փաշան: Այդ կազմակերպության գործունեությունը համակարգվում և ուղղորդվում էր Մուստաֆա Քեմալի և Քյազիմ Կարաբեքիրի հրահանգներով:[313] Անելիքներն ու նպատակները որոշակիացած էին արդեն վերջնական տեսքով. աջակցել բոլշևիկների կողմից Ադրբեջանը խորհրդայնացնելու ծրագրին, որից հետո կազմակերպել բոլշևիկյան օգնության տեղափոխումը դեպի Թուրքիա: Երկրի խորհրդայնացման հարցում ամենամեծ խոչընդոտը անկախ Ադրբեջանի կառավարությունն էր: Այդ խոչընդոտը հաղթահարելու համար թուրքական էմիսարների կողմից շատ հմուտ ձևով օգտագործվեցին նման դեպքերում արդյունք տվող բոլոր եղանակներն ու մոտեցումները: Թուրք էմիսարները շրջում էին բառացիորեն թաղամաս առ թաղամաս, փողոց առ փողոց և զանգվածների, զինվորների մեջ տպավորիչ և ազդեցիկ ագիտացիա տանում, որ եկող Կարմիր բանակը կազմված է հիմնականում մահմեդականներից, որ նրա կոմիսարները հավատացյալ իսլամիստներ են, իսկ անձամբ այդ բանակի հրամանատարն էլ թուրք է: Նրանք հավատացնում էին, որ այդ բանակի մուտքը չի փոխելու Ադրբեջանի՝ որպես անկախ երկրի կառավարման ձևը և որ մի քանի օր Բաքվում մնալուց հետո բանակն արշավելու է Հայաստանի վրա, այնտեղից էլ՝ դեպի Թուրքիա՝ այնտեղի բանակի հետ միասին Անտանտի դեմ կռվելու: Հետևաբար այդ բանակի մուտքը դեպի Ադրբեջան խոչընդոտելը փաստորեն կլինի դավաճանություն Անատոլիայի ապստամբ, ազատատենչ եղբայրների նկատմամբ:[314] Եվ այսպես, օգտագործելով Աստրախանից ու Կրասնովոդսկից բոլշևիկների կողմից ուղարկված գումարներն ու զենքը, թուրքական զինվորականությունը գրավում էր մայրաքաղաք Բաքվի կարևոր օբյեկտները, զինաթափում, կամ իր կողմը թեքում ադրբեջանցի զինծառայողներին: Անհրաժեշտության դեպքում էլ կաշառքի, սաբոտաժի, շանտաժի, իրենց ձեռքի տակ եղած զինվորականության կողմից սպառնալիքի և նման այլ «համոզիչ» եղանակների կիրառումն էր բերում ուզած արդյունքի: Քեմալականների և տեղի բոլշևիկյան ուժերի կողմից[315] իրականացրած

[313] В.Гафаров, նշվ. աշխ., էջ 243:

[314] Նույն տեղում, էջ 246:

[315] 1920թ. փետրվարի 11-12-ին ընդհատակյա պայմաններում Բաքվում գումարվել էր Ադրբեջանի կոմունիստների հիմնադիր համագումարը, որտեղ հայտարարվել էր Ադրբեջանի Կոմունիստական կուսակցության ստեղծման մասին; տե՛ս История Азербайджана, Баку, 1995,с.201.

այդ «կոմպլեքս միջոցառումները» հիմնովին խարխլեցին և ըստ էության զրոյացրին անկախ Ադրբեջանի իշխանության դիրքերը: Այսինքն՝ իր ավարտին հասցրին Ադրբեջանում քեմալականների կողմից նախաձեռնած «խորհրդայնացմանն ընդառաջ» գործողությունը:[316] Ամեն ինչ կատարված էր սպասածից այնքան առավել, որ բոլշևիկներն այլևս չսպասեցին նման դեպքերում սովորաբար իրենց կողմից գործածման մեջ դրած ստանդարտ սխեմայի իրագործմանը, երբ «աշխատավոր զանգվածները» իրենք են «ներսում» բարձրացնում ապստամբություն (կարևոր չէ՝ իրական, թե վիրտուալ), ստեղծում են «հեղափոխական իշխանություն» (նույնպես կարևոր չէ՝ իրական, թե վիրտուալ) և օգնության խնդրանքով դիմում են Մոսկվային: Մոսկվան էլ, բնականաբար, դրական է արձագանքում «ապստամբ աշխատավորության» այդ խնդրանքին, որից հետո Կարմիր բանակի ստորաբաժանումները շտապում են օգնության և օկուպացնում են տվյալ երկիրը: Այս դեպքում նույնիսկ այդ բեմականացման անհրաժեշտության կարիքը չզգացվեց. 1920թ. ապրիլի 26-ի լույս 27-ի գիշերը Կարմիր Բանակը, այլևս ավելորդ համարելով օգնության հասնելու վերաբերյալ ձևական կանչին սպասելը, հատեց անկախ Ադրբեջանի սահմանը և որևէ լուրջ դիմադրության չհանդիպելով՝ շարժվեց դեպի Բաքու: Կարմիր զորքերից քիչ առաջ ընկած գալիս էր Թուրքիայի կոմունիստական կուսակցության ղեկավարներից մեկը՝ բոլորիս արդեն լավ հայտնի Խալիլ փաշան՝ թուրք սպաներից կազմված իր զորաջոկատով, և հորդորում տեղի ժողովրդին՝ արժանի վերաբերմունք և ընդունելություն ցուցաբերել դեպի իրենց երկրի մայրաքաղաք առաջացող բոլշևիկյան 11-րդ Կարմիր բանակի զորքերին: Ապրիլի 28-ի լուսաբացին այդ բանակի առաջապահ ջոկատը բոլշևիկյան կուսակցության կովկասյան մարմնի ղեկավարների հետ միասին, «III ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ» զրահագնացքը նստած ժամանեցին Բաքու: Ի դեպ, ղեկավար այդ խմբի կազմում էր նաև բոլորիս նույնպես լավ ծանոթ հայ բոլշևիկ Անաստաս Միկոյանը, որն ընդամենը կես տարի անց, նույն քեմալական ռեժիմի հետ սերտ համագործակցելով, նույն 11-րդ Կարմիր բանակը արդեն ՀաՀ-ի դեմ գլխավոր ուղարկողներից մեկն էր:

Բավականին ուշագրավ են «Ադրբեջանի խորհրդայնացում» քեմալաբոլշևիկյան համատեղ այս գործողության ավարտի վերջին 2 արարները: Մեկն այն է, որ անկախ Ադրբեջանի կառավարությունը, տեսնելով երկրի բռնազավթումը և իր տապալումը, որոշում է լրիվ կազմով գնացք նստել և հեռանալ մայրաքաղաք Բաքվից, սակայն Բաքվի կայարանը հսկող թուրք ասկյարների ջոկատը լրիվ կազմով

[316] В.Гафаров, նշվ. աշխ., էջ246- 247; История Азербайджана, Баку, 1995,с.203-204.

էլ նրանց ձերբակալում է և հանձնում բոլշևիկներին: Դրա համար այդ ջոկատի հրամանատար թուրք սպան 1920-ի մայիսի մեկին արժանանում է Խորհրդային Ռուսաստանի այդօրվա բարձրագույն պարգևի՝ Կարմիր դրոշի շքանշանի:[317] Մյուսն էլ այն է, որ չնայած նրան, որ 11-րդ Կարմիր բանակն արդեն 3 օր է, ինչ ներխուժել էր անկախ Ադրբեջանի տարածք և հայտնի զրահագնացքով եկած ռուսաստանյան բոլշևիկները նախօրոք կազմած ցուցակներով Բաքվում արդեն նշանակել էին «ապստամբ ժողովրդի կողմից ընտրված» նոր իշխանության մարմինը՝ ռազմահեղափոխական կոմիտեն. վերջինս՝ «պրոտոկոլը» չխախտելու համար, 1920թ. ապրիլի 28-ին հետին թվով համենայնդեպս դիմում է հղում Մոսկվա՝ իրենց ռազմական օգնություն ցուցաբերելու խնդրանքով:[318] Թե քաղաքական դրամատուրգիայի հատկապես ո՞ր ժանրին են պատկանում այս արարները, թողնում ենք արդեն ընթերցողի ճաշակին:

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ թուրք-բոլշևիկյան դաշինքը հենց առաջին իսկ միասնական քայլով, առանց ուժերի մեծ լարման, Հարավային Կովկասում հասավ չափազանց կարևոր արդյունքի: Տարածաշրջանային-քաղաքական տեսակետից Ադրբեջանը դուրս բերվեց Անգլիայի քաղաքական ազդեցության դաշտից և փաստորեն կազմեց Խորհրդային Ռուսաստանի մի մաս՝ ռազմաքաղաքական և տնտեսական տեսակետներից այդ երկրի համար բերելով կարևոր արդյունքներ: Քեմալականները մի կողմից Ադրբեջանի խորհրդայնացման հարցում բոլշևիկների առաջ իրենց խոսքի տերը եղան և հիմա արդեն ավելի վճռական ու հիմնավորված ձևով կարող էին խոսել վերջիններիս կողմից խոստացված օգնությունը տրամադրելու մասին: Մյուս կողմից, առանց մի գնդակ արձակելու, առանց մի զոհ տալու, դեռևս չունենալով կանոնավոր զինված ուժեր, Թուրքիան, այս անգամ արդեն ի դեմս քեմալականների, կրկին ապահովեց իր ներկայությունը Հարավային Կովկասում և Խորհրդային Ռուսաստանի հետ համատեղ դարձավ այդ տարածաշրջանի վերաձևման ու XX դարում նրա ապագայի գլխավոր կանխորոշողներից մեկը:

Հաճախ, երբ անդրադարձ է արվում Ադրբեջանի խորհրդայնացման հարցում քեմալականների ունեցած դերակատարմանը, կարծիքներ են հնչում, թե քեմալականները ոչ մի բանի առաջ կանգ չէին առնում. հանուն իրենց շահերի՝ նրանք զոհաբերեցին նույնիսկ Ադրբեջանի անկախությունը՝ նվիրելով երկիրը բոլշևիկներին: Բայց չէ՞ որ կա նաև հարցի մյուս կողմը: Իսկ Ադրբեջանն ի վիճակի՞ էր արդյոք դիմադրելու Կարմիր բանակին և մի՞թե ակնհայտ չէ, որ

---

317 А.В.Квашонкин, նշվ. աշխ., էջ 167; Большевистское руководство…, No71.

318 Большевистское руководство…, նույն տեղում; В.Гафаров, նշվ. աշխ., էջ 246:

առանց քեմալականների օժանդակության էլ Ադրբեջանը միևնույնն է, խորհրդայնացվելու էր: Բայց այդ պարագայում նրա հետագան արդեն կընթանար միանգամայն այլ հունով: Այնպես որ, խորհրդայնացման գործընթացին օժանդակելով՝ քեմալականները, կարելի է ասել, իրականում փրկեցին Ադրբեջան պետությունն անհետացումից և ապահովեցին նրա գոյությունը առնվազն ևս մի հարյուրամյակ:[319] Մի կարևոր հանգամանք ևս, որին անդրադառնալը պարտադիր է: Ադրբեջանի խորհրդայնացումը հնարավորինս դյուրին դարձնելու «նախապատրաստական աշխատանքներում» ներգրավված էին այդտեղ գործող թուրքական մի շարք քաղաքական ու հասարակական կազմակերպություններ, անհատներ, որոնք բոլորն էլ անկասկած ունեցել են իրենց սեփական լոկալ շահերը: Բայց երբ հարցը դրվել է շատ հստակ, և հասկանալի է դարձել, որ իրավիճակն այնպիսին է, որ դրված է իրենց հայրենիքի և պետության լինել-չլինելու հարցը, նրանք բոլորը միավորվել և գործել են համատեղ՝ հանուն մեկ միասնական նպատակի: Չեն արձանագրվել դեպքեր և իրավիճակներ, որ նրանցից ինչ-որ մեկը «վազի Մոսկվա» և այնտեղ սկսի երդվել ու հավաստիացնել՝ առավել ևս իր հայրենիքի շահը ամբողջովին կամ մասամբ զոհաբերել պատրաստ լինելու ցուցադրմամբ, թե հենց ինքը, այլ ոչ թե «է՛ն մյուսներից» որևէ մեկը կարող է լինել Մոսկվայի համար ամենահավատարիմ ու ամենահուսալի գործընկերն ու եղբայրը: Օբյեկտիվ այլ հանգամանքների հետ մեկտեղ նաև դա էր հիմնական գրավականներից մեկն այն բանի, որ թուրքական կողմի համար թե՛ 1920-ի ապրիլին, թե՛ հետագայում ամեն ինչ ընթացավ այդքան հաջող և արդյունավետ: Երեք ամիս անց՝ 1920թ. օգոստոսի 14-ին, Քեմալը ԹԱՄԺ-ի նիստում անդրադառնալով այդ օրերին, կասի հետևյալը. *«Բոլշևիկների հանրապետությունն հետապնդում էր իր գոյապահման խնդիրը: Հենց որ նա կարողացավ դուրս պրծնել Անտանտի ճիրաններից, նա մեզ օգնության ձեռք մեկնեց և դարձավ մեր ամենահզոր օգնականն ու դաշնակիցը… 10-րդ և 11-րդ [Կարմիր] բանակների ուժերով Կովկասում ճեղքվեց Արևելյան ռազմաճակատը: Այդ բանակները հեշտությամբ անցան Հյուսիսային Կովկասը և մտան Ադրբեջան. դա մեր նպատականշումն էր, մեր ազդեցությունն էր և մեր ծառայությունն էր…»*:[320] Իսկ բոլշևիկներն էլ ամենաբարձր մակարդակով գոհունակությամբ կնշեն. *«Քեմալականները մեզ հետ շփման մեջ մտան Ադրբեջանի խնդրով, որտեղ նրանց կողմնակիցների խումբը աջակցեց հեղաշրջման իրականացմանն ու հեղափոխական ադրբեջանական կա-*

[319] Ю.Г.Барсегов, նշվ. աշխ., էջ 312,313,317:
[320] В.Гафаров, նշվ. աշխ., էջ 247:

*ռավարության կողմից ռուսասպանյան կարմիր զորքերի հրավիրմանը»:*[321] Խոսք չկա,ամեն ինչ հրաշալի էր ընթանում քեմալաբոլշևիկյան հարաբերություններում: Քեմալական կողմը բոլշևիկներին անարյուն, բառացիորեն սկուտեղի վրա մատուցանեց Ադրբեջանը: Հիմա արդեն պատասխան ընծաներ մատուցելու հերթը բոլշևիկներինն էր: Բայց առանց արյան գործն այստեղ «գլուխ չէր գա»: Բոլշևիկյան Ռուսաստանն էլ, լիակատար ըմբռնումով մոտենալով իր հետ եղբայրացած քեմալական կողմի ճաշակին ու պահանջին, հետևողականորեն դեպի զոհասեղան էր քաշում դրան դիմադրող ու համառող Հայաստանի առաջին հանրապետությանը:

## I.16. Մուրճի ու սալի արանքում

1920-ի ապրիլի վերջին օրերին քեմալաբոլշևիկյան համատեղ ջանքերով իրականացված՝ Ադրբեջանի խորհրդայնացումը դարձավ յուրատեսակ մի ջրբաժան Անդրկովկասյան երկրամասում ծավալված իրադարձությունների ընթացքի և դրանց հետագա զարգացումների համար: Ռուսական կայսրությունը՝ հիմա էլ բոլշևիկյան Ռուսաստանի կերպարանքով, 1920-ի գարնանը կրկին հայտնվեց Հարավային Կովկասում: Եվ եթե նախորդ հարյուրամյակի ընթացքում Ռուսաստանը կովկասյան իր բոլոր նախաձեռնությունների ժամանակ ստիպված էր եղել պատերազմել տարածաշրջանում իր հանդեպ թշնամի հանդես եկող Թուրքիայի հետ, ապա 1920թ. գարունը Հարավային Կովկասում նշանավորվեց ռուս-թուրքական կայացած եղբայրությամբ, որի շրջանակներում արդեն ձեռք էին բերված համապատասխան պայմանավորվածություններ Անդրկովկասն իրար մեջ բաժանելու վերաբերյալ:[322] Աշխարհում ոչ մեկի կողմից չճանաչված այդ 2 ռեժիմները (այսօրվա ռուս պատմաբան Ա.Զուբովի դիպուկ բնութագրմանը՝ այդ «երկու երիտասարդ գիշատիչները») Ադրբեջանը խորհրդայնացնելուց հետո ավելի խորացնում ու ընդլայնում էին իրենց եղբայրությունը՝ երկրամասում իրենց առջև դրված վերջնական նպատակների հնարավորինս արագ իրականացման համար:

Իսկ ինչպիսի՞ն էին այդ նույն ամիսներին Եվրոպայից հայաստանյան ուղղությամբ փչող քամիները:

Մինչև 1920թ. մայիս ամիսը մեծ տերությունները Հայաստանի հարցը բարձրագույն մակարդակով քննարկել էին երեք անգամ՝ բուն Փարիզի վեհաժողովում (18 հունվարի – 28 հունիսի 1919թ.), Լոնդոնի կոնֆերանսում (12 փետրվարի – 10 ապրիլի 1920թ.) և Սան-Ռեմոյում

---

[321] ДВП СССР, т. 2, 1958, с. 724.

[322] Ю.Г.Барсегов, նշվ. աշխ., էջ 309, 317; Ե.Ղ. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 20; Ա.Ավագյան, նշվ. աշխ., էջ 42:

(18–26 ապրիլի 1920թ.): Դեպքերի ընթացքը վկայում էր, որ վեհաժողովների տևողության ժամանակի կրճատման հետ միանգամայն համահունչ կրճատվում էին նաև հայերին հատկացվելիք հողատարածքների թե՛ մակերեսը, թե՛ առհասարակ որևէ տարածք ռեալ տրամադրելու հավանականությունը: Դաշնակիցներն ըստ էության եկել էին այն մտքին, որ Կիլիկիայով և «վեց վիլայեթներով» Մեծ Հայաստանն անիրականանալի է, և պետք է բավարարվել ավելի համեստ Հայաստանով, որը կազմված լինի Ռուսահայաստանից և Թուրքահայաստանի արևելյան մի քանի սահմանամերձ վիլայեթներից:[323]

Սան-Ռեմոյում, ուր ի վերջո իր հանգուցալուծումն էր ստանում Թուրքիայի հետ պայմանագրի կնքման հարցը և այդտեղից էլ հետևող՝ հայկական պետության ստեղծման վերաբերյալ վերջնական որոշումը, հայերի նկատմամբ ձևավորվել էր հետևյալ մոտեցումը. «Հայերը մեղք են, համ էլ մի տեսակ անհարմար է՝ այդքան խոստումներ տվեցինք, հիմա գոնե որոշ տարածքներ տանք դրանց: Հետն էլ՝ որոշ քանակի զենք: Թե կարող են, թող պահեն այդ հողերը, իսկ մենք այդ ուղղությամբ որևէ քայլ չենք անի և ոչ մի զինվոր չենք ուղարկի»:[324] Բավականին հիմնավորված տպավորություն էր ստեղծվում, որ Սան-Ռեմոյում, ուր հարցի լուծման հետագա ձգձգումն այլևս անհնար էր, Անտանտի տերությունները ոչ թե քայլեր էին մշակում վերջապես կենսունակ հայկական պետության ստեղծման ուղղությամբ, այլ տքնում էին ապացուցել դրա անհնարինության օբյեկտիվ բնույթը և փորձում էին իրենց վրայից հանել հարցի չիրականացման պատասխանատվությունը:[325]

Միաժամանակ, Մեծ տերություններից և ոչ մեկը չէր պատրաստվում զորք ուղարկել Քեմալի դեմ,[326] և օդում ասես ինքնին կախվում էր այն հարցը, թե «իրականում որքանո՞վ է նպատակահարմար մասնատել Թուրքիայի Արևելյան հատվածը, եթե այնտեղ այսօր առկա է Թուրքիայի միջնադարյան մոդելից հրաժարվող և աշխարհիկ պետության ուղով շարժվելու պատրաստ ռեալ ուժ: Ավելի ճիշտ չի՞ լինի արդյոք պայմանավորվել հենց այդ ուժի հետ»:[327]

---

[323] Р.Г.Ованнисян, նշվ. աշխ., էջ 305, 333, 368, 485:

[324] Օրինակ, դեռևս 1919-ին, երբ խոսք է գնացել Անգլիային հետաքրքրող տարածքները վերահսկելու մասին, այդօրվա ռազմական մինիստր Ուինսթոն Չերչիլն հայտարարել է. «Բրիտանական կառավարությունը պահել է, պահում է և կպահի այդ տարածքներում այնքան զորք, որքան որ անհրաժեշտ է»: Հեգնական զուգադիպությամբ այդ հայտարարությունն արվել է այն նույն օրերին, երբ բրիտանական պաշտպանության նախարարությունը հայտարարում էր, որ իր տրամադրության տակ չունի գոնե մի գունդ, որ ուղարկի Կովկաս, կամ Հայաստան; տե՛ս Р.Г.Ованнисян, նշվ. աշխ., էջ 308, 309, 425, 484, 485, 493-495, 497, 498:

[325] Նույն տեղում, էջ 485, 486, 495, 496, 505:

[326] Նույն տեղում, էջ 497, 498, 500:

[327] Ю.Г.Барсегов, նշվ. աշխ., էջ 239-242:

Հայաստանի պաշտպանության համար քննարկվում էր 2 տարբերակ: Առաջին. հայկական կողմին տրամադրելով հրահանգիչ սպաներ, զենք, հանդերձանք և այլ միջոցներ՝ կազմավորել ու վարժեցնել հայոց բանակը և ապա հնարավորություն տալ Հայաստանին *«դրսևորել գոյություն ունենալու իր իրավունքը»*: Եթե հայերի գործն իրոք արդար է, և նրանք բավականաչափ ուժեղ են, ապա թուրքերի հետ կռվում նրանք կհաղթեն: Հակառակ դեպքում՝ իմաստ չունի մտածել հայերին փրկելու մասին:[328] Մյուս տարբերակն էլ այն էր, որ Միացյալ Նահանգները համաձայնվեին ստանձնել Հայաստանի մանդատը: Ինչի մասին էլ կոնֆերանսը 1920թ. ապրիլի 25-ին համապատասխան փաստաթղթով դիմեց ԱՄՆ-ի նախագահին, որտեղ մասնավորապես ասվում էր.

1. Դիմել նախագահ Վիլսոնին ընդունել Հայաստանի մանդատը այն շրջանակներում, որոնք շարադրված են պայմանագրի պայմանների առկա նախագծում;
2. Իրենց կողմից մանդատն ընդունելու անհամաձայնության դեպքում հրավիրել ԱՄՆ-ին՝ իրավարար դառնալու սահմանների որոշման հարցում, նախօրոք պայմանավորվելով, որ Թուրքիան, Հայաստանը և ստորագրող մյուս երկրները կհամաձայնվեն դիմել նախագահին, որպեսզի նրա կողմից սահմանները որոշվեն Տրապիզոնի, Էրզրումի, Բիթլիսի և Վանի վիլայեթների շրջանակներում, և վաղօրոք հայտնում են, որ կընդունեն ցանկացած որոշում, որը կներառնի Հայաստանի անկախ պետության համար դեպի ծով ելք ապահովող ցանկացած պայման;
3. Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանների որոշման հետ մեկտեղ՝ որոշել նաև հյուսիսում և արևելքում Հայաստանի սահմանները Վրաստանի և Ադրբեջանի հետ, եթե այդ 3 պետությունները դեռևս չեն եկել անհրաժեշտ համաձայնության:

Շեշտվում էր նաև, որ Հայաստանը բազմակողմանի օգնության խիստ կարիք ունի և միայն նման օգնության առկայության պարագայում կկարողանա մարդկային սեփական ռեսուրսներն արդյունավետ օգտագործել պետության պաշտպանության համար:[329] Առաջ անցնելով՝ նշենք, որ այդ մոտեցումների շրջանակում 1920թ. ամռանը Անգլիան՝ աշխարհի հայության կողմից հավաքած գումարը՝ 829.634 անգլիական ֆունտ ստանալուց հետո հայոց բանակին ուղարկեց 440 գնդացիր, 25.000 հրացան, 57,5 մլն լիցքավորված փամփշտատուփ, 40.000 ձեռք զինվորական հանդերձանք, 80.000 զինվորական տեսակի վերնաշապիկ, 1.077 ծրար բժշկական պիտույքներ, կողմնացույցներ, հեռադիտակներ, ժամացույցներ և այլն:[330]

---

[328] Р.Г.Ованнисян, նշվ. աշխ., էջ 497:
[329] Նույն տեղում, էջ 497, 504-507; Ю.Г.Барсегов, նշվ. աշխ., էջ 243,244:
[330] Р.Г.Ованнисян, նշվ. աշխ., էջ 565-569:

1920թ. մայիսի 17-ին ստացվեց ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի պատասխանը, որում նա նշում էր, որ անձամբ ընդունում է իրեն ուղղված առաջարկը՝ հայ-թուրքական սահմանի որոշման հարցում հանդես գալ որպես իրավարար վճիռ կայացնող և ցանկանում է նպաստել հայ ժողովրդի բարեկեցությանը:[331] Ամերիկայի կողմից Հայաստանի մանդատը վերցնելու, ինչպես նաև ռազմական, տեխնիկական, ֆինանսական և այլ օգնություն ցուցաբերելու մասին այդ պատասխանի մեջ դեռևս որևէ անդրադարձ չկար:[332] Այսինքն՝ մեծ տերությունների կողմից հայկական կողմին տարածքներ հատկացնելու և այնտեղ կենսունակ պետություն ստեղծելու վերաբերյալ որևէ գործնական երաշխիք այդ պահին չէր տրվում: Առավել ևս՝ այդ ուղղությամբ չէին ձեռնարկվում ինչ-ինչ գործնական քայլեր:

Դրան հակառակ՝ արդեն հենց գործնական առումով շատ արագ խորանում, ընդլայնվում ու ամրապնդվում էր քեմալա-բոլշևիկյան եղբայրացումը:

Սան-Ռեմոյի վեհաժողովը դեռ չավարտված՝ 1920թ. ապրիլի 23-ին Անկարայում հավաքվեց և իր առաջին գումարման աշխատանքներն սկսեց քեմալական խորհրդարանը՝ ԹԱՄԺ-ը, որի նախագահ ընտրվեց Մուստաֆա Քեմալը: Վերջինս ապրիլի 24-ին հանդես է գալիս մի ընդարձակ ելույթով, որի միջոցով բացատրում է ներկաներին բոլշևիկյան Ռուսաստանի հետ պաշտոնական կապեր հաստատելու անհրաժեշտությունն ու դրա ակնհայտ օգուտը թուրքական կողմի համար: Այդ խորհրդարանի կողմից հետագայում (1920թ. մայիսի 3-ին) ձևավորվեց նաև գործադիր իշխանության մարմին՝ ԹԱՄԺ-ի կառավարությունը: Քեմալական իշխանության առաջին պաշտոնական քայլը դեպի արտաքին հարաբերությունների ասպարեզ արտահայտվեց 1920թ. ապրիլի 26-ին Քեմալի կողմից Լենինին ուղարկած հայտնի նամակով, որի պաշտոնական վերնագիրը հետևյալն էր. «Թուրքիայի Ազգային մեծ ժողովի առաջին առաջարկը Մոսկվայի ռուսաստանյան խորհրդային կառավարությանը»: Ի դեպ, ելնելով գաղտնիության նկատառումներից, նամակը սկզբից եղել է անվերնագիր և չի պարունակել հասցեատիրոջ անվանումը: Այստեղ բերված վերնագիրն ավելացրել է Քյազիմ Կարաբեքիր-փաշան: Նամակի բովանդակության հիմքում էլ այն հրահանգի տեքստն է, որը կազմել էր 1920թ. ապրիլի 18-ին նույն Կարաբեքիրը հետագայում Մոսկվա ուղարկվող ռազմական պատվիրակության համար:[333]

---

[331] Р.Г.Ованнисян, նշվ. աշխ., էջ 508; Ю.Г.Барсегов, նշվ. աշխ., էջ 244, 245:

[332] Այդ կապակցությամբ անթույլատրելի է չհիշատակել այն հսկայական օգնությունը, որը Հայաստանին ցուցաբերել է ԱՄՆ-ն՝ 1919թ.-ից սկսած: Ի վերջո, այդ օրերին սովը Հայաստանում հաղթահարվել է հենց ԱՄՆ-ի կողմից ցուցաբերած օգնության շնորհիվ; տե՛ս Ս.Վրացյան, ՀՀ, էջ 256:

[333] Ю.Г.Барсегов, նշվ. աշխ., էջ 311; М.Озтюрк, նշվ. աշխ., էջ 67, 68:

Քեմալական բարձրագույն իշխանությունը՝ ԹԱՄԺ-ը այդ նամակում Խորհրդային Ռուսաստանին առաջարկ էր անում հաստատել դիվանագիտական հարաբերություններ և միաժամանակ դիմում նրան այն խնդրանքով, որ Անտանտի դեմ պայքար մղող թուրքական կողմին ցուցաբերվի օգնություն ֆինանսների և զենք-զինամթերքի տեսքով: Բացի դրանից՝ նամակում շոշափվում էին նաև անդրկովկասյան երկրամասի ապագան միասին ձևավորելու հարցերը: Անկարայի իշխանությունը պարտավորվում էր «ռուս բոլշևիկների հետ համաձայնեցնել ամբողջ աշխատանքն ու միավորել ռազմական գործողությունները, և, եթե խորհրդային ուժերը ծրագրում են ռազմական գործողություններ սկսել Վրաստանի դեմ կամ դիվանագիտական ճանապարհով իրենց ազդեցության միջոցով Վրաստանին հարկադրել միության մեջ մտնել և ձեռնարկել Կովկասի տարածքից անգլիացիների վտարումը, ապա թուրքական կառավարությունն իր վրա է վերցնում կայսերապաշտ (իմպերիալիստական) Հայաստանի դեմ ռազմական գործողությունները և հանձն է առնում հարկադրել Ադրբեջանի հանրապետությանը՝ մտնելու խորհրդային պետության կազմի մեջ…»:[334] Այսինքն՝ նամակում շարադրված էր քեմալական կողմի առաջարկ-ծրագիրը երկու կողմերի միջև քաղաքական փոխգործակցության վերաբերյալ:

Ադրբեջանի հարցով նամակը կարծես թե ուշացած էր. հենց ապրիլի 26-ի գիշերը բոլշևիկյան զորքերն անցան Սամուր գետի կամուրջը և ներխուժեցին անկախ Ադրբեջանի տարածք: Այդ ուշացումը, սակայն, ավելի շատ հիշեցում էր բոլշևիկյան Ռուսաստանի ղեկավարությանն այն մասին, որ քեմալական կողմը «ընծաները մի օր առաջ» արդեն բերել էր: Ուստի մնում էր կարգավորել դիվանագիտական կապերի հաստատումը և ապահովել եղբայրական օգնությանը վերաբերող հարցերի գործնական իրականացումը, իսկ հետո արդեն պետք էր անցնել Անդրկովկասում համատեղ մշակված ու համաձայնեցված սցենարի իրագործմանը: Մոսկվա մեկնելու և այդ բոլոր հարցերը բոլշևիկյան կողմի հետ հանգամանալից քննարկելու համար 1920թ. մայիսի 5-ին Անկարայում ձևավորվում է 5-հոգանոց ներկայացուցչական կառավարական մի պատվիրակություն, մայիսի 11-ին ուղևորվում է դեպի Մոսկվա՝ նաև անձամբ Լենինի հետ հանդիպելու ակնկալիքով:[335]

Բայց դրանից առաջ բառացիորեն Ֆիգարո դարձած ամենահաս Խալիլ-փաշան ապրիլի 28-ից հետո հայտարարել էր, որ *«Ադրբեջա-*

---

[334] Ю.Г.Барсегов, նույն տեղում; Ե.Ղ.Սարգսյան, նշվ. աշխ., էջ 20; Ա.Ավագյան, նշվ. աշխ., էջ 42:

[335] М.Озтюрк, նշվ. աշխ., էջ 69,70:

*նում այլևս անելիք չկա»* և, Քյազիմ Կարաբեքիրից ստանալով համապատասխան հրահանգներ, Ֆուադ Սաբիտի հետ շտապել էր Մոսկվա: Ադրբեջանի խորհրդայնացման ջատագովները տեղ են հասնում մայիսի 16-ին:

Ինչ վերաբերում է «այն» հայտնի նամակին, ապա Լենինին հասցեագրված՝ Քեմալի նամակի մի օրինակը Բայազետի վրայով 1920թ. մայիսի 24-ին հասնում է Բաքու, որտեղից Օրջոնիկիձեի միջոցով ուղարկվում է Մոսկվա և հունիսի 1-ին հասնում անձամբ Լենինին:[336] Իսկ նամակի բնագիրը Կարաբեքիրի սպաներից մեկը Նովոռոսիյսկով հասցնում է Մոսկվա և մայիսի 20-ին հանձնում այն անձամբ ժողկոմ Գ.Չիչերինին:[337] Լենինի հրահանգով 1920թ. հունիսի 3-ին բոլշևիկյան Ռուսաստանի արտգործնախարար Չիչերինը իր երկրի կառավարության անունից պատասխան նամակ է ուղարկում Քեմալին, որտեղ ներկայացված էին բոլշևիկյան կողմի ըմբռնումը, հիացմունքն ու խորին գոհունակությունը քեմալականների վարած քաղաքականության հանդեպ, և պատրաստակամություն էր արտահայտվում հարաբերությունների հաստատման և համագործակցության խորացման անհրաժեշտության մասին, ինչպես նաև բոլշևիկյան կողմի որոշ նկատառումներ փոխադարձ հարաբերությունների կառուցման վերաբերյալ: Իսկ ամանակարևորն այն էր, որ բոլշևիկյան կողմը ոչ մի ձևով չէր հայտնում որևէ անհամաձայնություն Կովկասի տարածքում Քեմալի կողմից առաջարկվող համատեղ գործողությունների ծավալման առաջարկի վերաբերյալ: Սա ինքնըստինքյան ենթադրում է համաձայնություն:[338] 1920թ. հունիսի 4-ին Քեմալի բանագնացը ստանում է Չիչերինի պատասխան նամակը և, բռնելով հետդարձի ճամփան, հունիսի 14-ին հասնում է Տրապիզոն:

Սան-Ռեմոյից և Ադրբեջանի խորհրդայնացումից հետո Անդրկովկասում ձևավորված ընդհանուր իրավիճակը կարելի է նկարագրել հետևյալ կերպ.

- Բոլշևիկյան Ռուսաստանը ձգտում էր վերանվաճել Կովկասը՝ ներառյալ նաև Հարավային Կովկասը և չեզոքացնել ու ի վերջո զրոյացնել այդտեղ Անտանտի ազդեցությունը: Դրա համար անհրաժեշտ էր հնարավորինս արագ նախ խորհրդայնացնել այդտեղի հանրապետությունները՝ Ադրբեջանը, Հայաստանն ու Վրաստանը: Քեմալականները հանձն էին առել օժանդակել բոլշևիկներին այդ հարցում՝ 3 հանրապետություններից ամեն

---

[336] Ю.Г.Барсегов, նշվ. աշխ., էջ 314; Большевистское руководство, ..., №76:
[337] М.Озтюрк, նշվ. աշխ., էջ 68:
[338] Письмо Народного Комиссара Иностранных Дел РСФСР Председателю Великого Национального Собрания Турции Мустафе Кемалю, ДВП СССР, т. 2, 1958, с. 554-555; Ю.Г.Барсегов, նշվ. աշխ., էջ 316:

մեկի դեպքում յուրովի: Բոլշևիկները համաձայնել էին քեմալականների պայմաններին, այն է՝ խորհրդայնացման հարցում օժանդակելու դիմաց ցուցաբերել օգնություն զենքով և ոսկով, թույլ տալ թուրքական կողմին գրավել և իրեն միացնել Անդրկովկասի որոշ տարածքներ՝ հիմնականում հայերին պատկանող և անհամեմատ քիչ չափով վրացիներին պատկանող: Ընդ որում, հայերի հաշվին «մի բան էլ» խոստացվել էր տալ նաև խորհրդայնացված Ադրբեջանին: Բոլշևիկյան կողմի համար նման «շարվածքը» միանգամայն ընդունելի էր: Տարածաշրջանը խորհրդայնացնելուց և իրար մեջ կիսելուց հետո բավարարված (և բավականին ուժեղացած) թուրքական կողմը տարածաշրջանում կանգնում էր արդեն Ռուսաստանի և Անտանտի միջև և Ռուսաստանի համար դառնում հուսալի պատվար՝ ընդդեմ տարածաշրջան Անտանտի ներթափանցմանը: Իսկ թե ում հաշվին և ինչ եղանակով պետք է բավարարվեր քեմալականների տարածքային ախորժակը, բոլշևիկները գիտեին, բայց նրանց համար դա արդեն էական չէր:

- Անգլիային անհրաժեշտ էր, որպեսզի այդ ուղղությամբ դեպի մահմեդական Արևելք բոլշևիկների կողմից իրականացվող էքսպանսիան սահմանափակվեր գոնե կովկասյան տարածաշրջանով: Անդրկովկասի 3 հանրապետությունները հարմար «շինանյութ» չհանդիսացան հակաբոլշևիկյան պատնեշի կառուցման համար, իսկ Ալբիոնում էլ չէին ցանկանում անձամբ բախվել բոռլշևիկների հետ՝ այն էլ Կովկասի լեռներում: Բայց տարածաշրջանում առկա էր նաև քեմալական ռեժիմը: Ճիշտ է, քեմալականները բարեկամացել էին բոլշևիկյան ռեժիմի հետ՝ այն էլ հակաատլանտիզմի հիմքի վրա, բայց… նախ բոլոր տվյալները ավելի քան համոզիչ կերպով վկայում են, որ քեմալականները ոչ մի պարագայում թույլ չեն տա, որ բոլշևիզմը թե՛ ռուսաստանյան, թե՛ թուրքական կերպարանքով ներթափանցի իրենց երկիր: Իսկ մյուս կողմից էլ հենց այդ քեմալ-բոլշևիկյան եղբայրությունը կհանդիսանա այն գործոնը, որի առկայության հետևանքով բոլշևիկները կանգ կառնեն մի որոշակի՝ քեմալականների հետ պայմանավորված գծի վրա: Սրանից հետո նույն բավարարված (և բավականին ուժեղացած) թուրքական կողմը տարածաշրջանում կրկին կանգնում էր Ռուսաստանի և Անտանտի միջև և արդեն Անտանտի համար դառնում հուսալի պատվար՝ ընդդեմ Կովկասից դուրս բոլշևիզմի հետագա տարածմանը: Իսկ թե ում հաշվին և ինչ եղանակով պետք է բավարարվեր քեմալականների տարածքային ախորժակը, Անգլիան նույնպես հրաշալի գիտեր, բայց այդ պահին դա նրան արդեն շատ քիչ էր հուզում. նրա համար դա

նույնպես էական չէր: Էականն այն էր, որ քեմալաբոլշևիկյան եղբայրությունն ի վերջո հանգեցնելու էր Կովկասի սահմաններից բոլշևիզմի հետագա տարածման արգելակմանը: Ուստիև պետք չէր խոչընդոտել այդ եղբայրության կայացմանն ու ամրապնդմանը:

- Տարածաշրջանում ամենից «բարձր և վեհ» նպատակներ հետապնդում էին քեմալականները: Նրանք ձգտում էին Անտանտի փաստացի չմիջամտության և բոլշևիկների հետ սերտ համագործակցության պայմաններում անդրկովկասյան որոշ տարածքների հաշվին որոշ չափով «շտկել» իրավիճակը և ի վերջո փրկել սեփական երկիրն անհետացումից՝ բացառելով միաժամանակ ոչ միայն Կարմիր բանակի, այլև առհասարակ բոլշևիզմի մուտքը թուրքական հող: Իսկ թե ում հաշվին և ինչ եղանակով պետք է ձեռք բերվեին այդ տարածքները, քեմալական կողմը խիստ որոշակի մատնանշել էր: Համապատասխան տարածքները մատնանշված էին «Ազգային ուխտ»-ում, իսկ ձեռքբերման եղանակն էլ նույնպես հայտնի էր՝ ավանդական-թուրքական, այն է՝ հայերի ցեղասպանության շարունակության միջոցով:

Այսինքն՝ այդօրվա քաղաքական իրավիճակն այնպիսին էր, որ հայկական անկախ պետության գոյությունը Թուրքիայի համար նշանակում էր ասպարեզից իր անհետացումը, բոլշևիկյան Ռուսաստանի համար՝ միանգամայն անընդունելի մի կացություն Անդրկովկասում, իսկ Անտանտի, Անգլիայի համար՝ իր շահերից չբխող և բոլոր առումներով ծախսատար մի գործ: Իսկ Թուրքիան պահպանելու մեջ, հակառակը, ստացվում էր, որ շահագրգռված էին թե՛ Անտանտը, թե՛ Խորհրդային Ռուսաստանը:[339]

Այնպես որ այդ օրերին հենց քեմալաբոլշևիկյան ռազմաքաղաքական դաշինքն էր հանդիսանում տարածաշրջանում այն վճռական գործոնը, որը պետք է մի քանի ամիս անց հնարավոր դարձներ քեմալական կողմի հարձակումը ՀՀ-ի վրա և ի վերջո՝ քեմալաբոլշևիկյան ուժերի համատեղ ու միացյալ ջանքերով նրա ոչնչացումը:

Հայաստանի դրական «սալդոն» առարկայական առումով այդ պահին հետևյալն էր. նա փաստացի վերահսկում էր 70.551 քկմ տարածք (1920թ. աշնանը Ազգերի լիգայի կողմից բերված պաշտոնական տվյալ), որը նախագահ Վիլսոնի իրավարար վճռի կայացման դեպքում ընդլայնվելու էր մինչև 214.000 քկմ:[340] Եվ Հայաստանը քայլ կատարեց՝ ձգտելով բոլշևիկյան Ռուսաստանի հետ լեզու գտնել, նրա

[339] Ն.Վ.Կարապետյան, Իսկ գործնական օգնություն…, ՎԷՄ համահայկական հանդես, Ե(ԺԱ)տարի, թիվ 1(41), հունվար-մարտ, 2013, էջ XXV-XXVII:
[340] Р.Г.Ованнисян, նշվ. աշխ., էջ 829:

հետ կնքել իր անկախությունը ճանաչող և անվտանգությանն ու տարածքային ամբողջականությանը չսպառնացող միջպետական պայմանագիր: Սակայն, անկախ հայկական կողմի քաղաքական ու դիվանագիտական հմտության աստիճանից, այդ քայլն ի սկզբանե դատապարտված էր ձախողման: Իրոք, ի՞նչ արդյունք կարող էր տալ իր գլխին կախված վտանգը բացահայտորեն զգացող անձի մերձեցման փորձը 2 այն անձերից մեկի հետ, որոնք բոլոր մանրուքներով վաղուց մշակել, պլանավորել ու համաձայնեցրել էին վերջինիս ոչնչացումն ու թալանը: Այդպես էլ եղավ: Բոլշևիկյան կողմը հայ-ռուսական բանակցությունները հմտորեն տարավ դեպի բացահայտ փակուղի: Ի հակադրություն դրան՝ Մոսկվայում զուգահեռ ընթացող քեմալաբոլշևիկյան բանակցություններն ընթանում էին ավելի քան արդյունավետ: Քեմալական բանագնացներին ընդունել էր անձամբ Լենինը և նրանց այն ռեպլիկին, թե թուրքական կողմը մտահոգված է, որ խորհրդային Ռուսաստանը կարծես թե որոշ պայմանավորվածություն է ձեռք բերել հայերի հետ, Լենինը պատասխանել էր, որ այդ հարցում Ռուսաստանն իրոք որ սխալ է թույլ տվել և կաշխատի ուղղել այդ սխալը, իսկ եթե դա արդեն նրա ուժերից վեր լինի, ապա այդ դեպքում թող դա անի հենց քեմալական կողմը:[341]

Բոլշևիկյան կուսակցության քաղբյուրոյի որոշմամբ խորհրդային կողմը սկսում է քեմալական կողմին տրամադրել ոսկի և զենք-զինամթերք:[342] Նշենք միայն, որ այդ օգնության ծավալն այնպիսին էր, որ քեմալական կողմը դրա շնորհիվ կարողացավ կազմակերպել իր բանակը, հագցնել, զինել, վարձատրել ու կերակրել նրան, ինչն էլ վճռորոշ եղավ քեմալականների կողմից նախ՝ Հայաստանի, հետո էլ՝ Հունաստանի հանդեպ հաղթանակների հասնելու հարցում:[343] Իսկ դիվանագիտական հարթակում կողմերը շատ արագ գործ տանում էին դեպի եղբայրության, փոխօգնության ու բարեկամության պայմանագրի ստորագրումը: Այնպես որ ստեղծված իրավիճակից ելք կար միայն քեմալաբոլշևիկյան կողմի համար՝ Հայաստանի դեմ ինտերվենցիա իրականացնելու միջոցով: Հատկանշական է այն «դեղա-

---

[341] М.Озтюрк, նշվ. աշխ., էջ 74-75:

[342]1920թ. հունիսի 28-ին բոլշևիկյան կուսակցության քաղբյուրոյին ուղղված իր գրության մեջ Չիչերինը նշում է. «Քաղբյուրոյի որոշմամբ հաստատվել էր Թուրքիայում Քեմալի կառավարությանն օգնություն ցուցաբերել ոսկով և զենքով», տե՛ս Большевистское руководство, №83:

[343] Մերօրյա ռուսաստանյան հեղինակներից մեկն, օրինակ, պարզ գրում է. «…поставки советского оружия помогли кемалистам выиграть войну с Арменией», տե՛ս А.В.Владимирский, Великий Ататюрк: «Отец народа», «Человек Судьбы», Москва, Яуза, Эксмо, 2014, էջ 157: Բոլշևիկյան Ռուսաստանի կողմից քեմալականներին ցուցաբերած ֆինանսական և ռազմատեխնիկական օժանդակության մասին մանրամասն տվյալներ բերված են ՀԱՎԵԼՎԱԾ 2-ում:

տոմսր», որը մշակվել և բոլշևիկյան ռազմաքաղաքական ղեկավարության էր առաջարկվել Հայաստանը վերջնականորեն ծնկի բերելու համար: Ներկայացնում ենք այն բնագրի լեզվով.

"ЗАКЛЮЧЕНИЕ ПРЕЗИДИУМА СОВЕТА ПРОПАГАНДЫ И ДЕЙСТВИЯ НАРОДОВ ВОСТОКА
о политике России на Востоке, представленное Президиуму Исполкома Коминтерна и ЦК РКП(б)

(Баку, 17 сентября 1920 г.)

Президиум Совета пропаганды и действия народов Востока, обсудив создавшееся в настоящий момент политическое положение на ближайшем Востоке причел к следующему заключению: …

…6)…С дипломатической стороны для предотвращения бури общественного негодования в Западной Европе наступление на Армению должно быть произведено следующим образом: турецкие войска начнут наступать на Армению, а мы во всей нашей печати и при помощи всех наших органов гласности в Европе поднимем страшный шум о новой армяно-турецкой резне и о необходимости ее прекращения раз и навсегда, и для прекращения этой резни наши войска вступят в Армению через оголенную от ее войск восточную границу… Таким образом, мы окажемся в глазах западноевропейского пролетариата в чрезвычайно благородной роли умиротворителей, двинувшихся на Армению только с тем, чтобы положить конец резне и спасти остатки армянского народа от окончательного уничтожения… Наше положение на Ближнем Востоке сейчас так скверно, что мы не можем стоять на месте, и чтобы не бежать назад, мы должны идти вперед. Мы должны идти немедленно...":[344]

Եվ նրանք եկան: Բացի մի շարք արտաքին գործոններից՝ այդ գալուն մեծապես նպաստեցին նաև հայ բոլշևիկները, որոնք իրենց թե՛ 1920թ. մայիսյան բացահայտ սադրիչ ու արկածախնդիր առաջին բեմելով, թե՛ հետագա գործունեությամբ ցուցաբերեցին ազգային ու պետական դավաճանության դասական, հիրավի էնցիկլոպեդիկ նմուշներ և օրինակներ: Ահա նրանց ամփոփ տեսակետը այդ ժամանակաշրջանի իրադարձությունների վերաբերյալ. *«…Որպեսզի հնարավոր լիներ հարաբերություններ հաստատել Խորհրդային Ռուսաստանի և Թուրքիայի միջև, նախևառաջ անհրաժեշտ էր լուծել հայկական խնդիրը: Դրա համար պետք է ընդունել Հայաստանի հաշվին Թուրքիային մաքսիմալ տարածքային զիջումներ անելու անհրաժեշ-*

[344] Ю.Г.Барсегов, նշվ. աշխ., էջ 366; ի դեպ այդ դոկտրինին միանգամայն համահունչ է 1920թ. նոյեմբերի 15-ին Ստալինի ուղարկած հեռագիրը Լենինին. «…Հնարավոր է, որ Հայաստանի պարագայում մենք արդեն ուշացել ենք, այսինքն՝ Քեմալն այն ավելի շուտ կուտի կվերջացնի, քան մենք տեղ կհասնենք», տե՛ս Большевистское руководство, №107:

*տրութիւնը»*:[345] Այսինքն՝ հայ բոլշևիկներն այդ օրերին լծված էին բոլշևիկյան Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի շահերի սպասարկմանը՝ ի հաշիվ հայկական պետության և հայ ազգի բուն գոյության: Եվ միանգամայն օրինաչափ է, որ Մոսկվայի պայմանագրի շուրջ ընթացող բանակցությունների ընթացքում այդօրվա կրեմլյան ղեկավարությունը հայ բոլշևիկներին շատ պարզ ու կոշտ հրահանգեց, որ նրանք բարի լինեն դուրս փակեն «այն կողմից»: Նման դասի տեղը իրենց տերերի մոտ միշտ էլ, լավագույն դեպքում, դռան հետևում է:

Չշրջանցենք նաև այն փաստը, որ ՀաՀ-ի ղեկավարությունը տեղյակ էր քեմալաբոլշևիկյան պլաններին և ժողովրդին բավականին մանրամասնորեն տեղեկացրել և բացատրել էր, թե ինչ մահացու վտանգ է իրենից ներկայացնում Հայաստանի անկախ պետականության համար այդ դաշինքը: Բայց այդ օրերին հայ ժողովուրդն այդ տեղեկությունն ընդունեց ու մեկնաբանեց բավականին յուրահատուկ ձևով: Եթե իշխանությունները պնդում ու առաջ էին տանում այն թեզը, թե «թուրքերը հիմա էլ միավորվել են բոլշևիկների հետ և նրանց աջակցությամբ ու օգնությամբ ոչնչացնելու են հայությունն ու Հայաստանը», ապա ժողովուրդը, բեկելով իր մեջ այդ իրողությունը, ընկալեց այն մոտավորապես հետևյալ կերպ. «քանի որ թուրքերը հիմա միավորված են հենց ռուսների հետ, ապա այս դեպքում արդեն մեզ որևիցե վտանգ չի կարող սպառնալ»:[346]

Իսկ ինչ վերաբերում է թուրքերի ամենաառաջնային ու հիմնական նպատակին՝ Արևմտյան Հայաստանը ձեռքում պահելու և Կարսի մարզը վերանվաճելու պրակտիկ իրագործմանը, ապա դրան քեմալական կողմը ձեռնամուխ եղավ դեռևս 1920թ. սկզբներին: Ի կատարումն «Ազգային ուխտի» ծրագրի՝ 1920թ. փետրվարի 6-ին Քեմալի գլխավորած Ներկայացուցչական կոմիտեն հրահանգել էր Կարաբեքիրին Արևելյան ճակատում իրականացնել զորահավաք՝ ՀաՀ-ի դեմ անհրաժեշտ ռազմական գործողություններ սկսելու համար: Իրականացնելով այդ ուղղությամբ բոլոր անհրաժեշտ քայլերը, վերջինս ապրիլի կեսերին հեռագրում է Քեմալին, որ *«Մոտակա օրերին ես պետք է տեղեկացնեմ այն մասին, որ Հայաստանը ջնջված է աշխարհի քարտեզի վրայից»*:[347] Ըստ որում, համաձայն Կարաբեքիրի կազմած ռազմական պլանի, քեմալական բանակն ու բոլշևիկյան Կարմիր

---

[345] Н.Е.Шутова, նշվ. աշխ., էջ 26:

[346] Այդ կապակցությամբ խիստ ուշագրավ է Օրջոնիկիձեի՝ Ստալինին ուղարկած հեռագրերից մեկը, որտեղ մասնավորապես ասվում է. «…Դաշնակները խոստովանում են, որ բոլշևիկաքեմալական միության մասին իրենց քարոզչությունը առաջ բերեց Քեմալի դեմ չկռվելու տրամադրություններ, քանի որ նա բոլշևիկներին դաշնակից է…», տե՛ս М.Перинчек, Армянский вопрос…, էջ 224:

[347] Ю.Г.Барсегов, նշվ. աշխ., էջ 311, 312:

բանակը պետք է շարժվեին միմյանց ընդառաջ և, հանդիպելով ու միավորվելով իրար հետ, բացառեին անգլիացիների խցկվելը կով-կասյան տարածաշրջան: Կարաբեքիրը հիշեցնում էր նաև, որ Բրեստ-Լիտովսկի պայմանագրի լրացուցիչ կետերը իրենց հնարա-վորություն են ընձեռում գրավել Կարսը, Արդահանն ու Բաթումը, ուս-տիև այս պահին այդ տարածքներին տիրանալու հնարավորությունը ձեռքից բաց թողնելն աններելի է:[348] Եվ նրանք ձեռքից բաց չթողե-ցին և ոչ մի հնարավորություն: Բոլշևիկյան Ռուսաստանի կողմից քեմալականներին ոսկու և զենքի առաջին չափաբաժինը բաց թող-նելուց հետո 1920թ. սեպտեմբերի 2-ին քեմալական Մեջլիսը որոշում է կայացնում *«առաջին իսկ հնարավորության դեպքում հայկական ուժերին կանխարգելիչ հարված հասցնել Կարսի և Արդահանի շրջանում»*:[349] Իսկ 1920թ. սեպտեմբերի 20-ին նույն Մեջլիսն արդեն անհրաժեշտ համարեց, որ քեմալական բանակը պետք է *«…դաշ-նակների դեմ ռազմական գործողություններ սկսի Արևմտյան Հայաս-տանում: Առաջին պատճառն այն էր, որ դրանով Թուրքիան իրենով էր անում Բրեստ-Լիտովսկի պայմանագրով իրեն խոստացված տա-րածքները և պաշտպան էր կանգնում այդ տարածքներում հայերի կողմից ճնշվող մահմեդական և ռուս բնակչության: Եվ երկրորդը, դրանով Թուրքիան որոշեց ճանապարհ բացել Ռուսաստանից դեպի իրեն եկող օգնությունը Կովկասով անցկացնելու համար»*:[350]

Թերևս այստեղ կանգ առնենք և անցնենք փաստաթղթերի ներ-կայացմանը: Դրանք մեզ կպատմեն, թե պատմական այդ ժամանա-կահատվածում իրենց ինչպես են դրսևորել մեր բարեկամներն ու թշնամիները, օտարներն ու յուրայինները, մեր բարձր ու ցածր պաշ-տոնյաները, ունևորներն ու ընչազուրկները, ազնիվներն ու թալանչիները, գեներալներն ու հասարակ զինվորականները: Հուսով ենք, որ դրանք ընթերցելուց հետո ոմանք հարց կտան, թե իսկ մենք, ինքներս արդյոք արե՞լ ենք այն օրերին ամեն անհրաժեշտն ու հնարավորը մեր անառիկ բերդաքաղաքը և առհասարակ մեր պետությունն ու պետականությունը փրկելու, պահպանելու համար: Հուսով ենք, որ ոմանք էլ բերված փաստաթղթերում կգտնեն այդ հարցի պատասխանը:

*Վլադիմիր Հարությունյան*

---

[348] М.Озтюрк, նշվ. աշխ., էջ 60, 61:
[349]Նույն տեղում, էջ 80:
[350] М.Озтюрк, նշվ. աշխ., էջ 82:

# ԲԱԺԻՆ II

## ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

*Թող պաթետիկ և շաբլոն չհնչի, բայց այդ օրերի Հայաստանի վիճակում հայտնված ցանկացած պետություն ու իր ժողովուրդն ի վիճակի կլինեին լուծել իրենց առջև ծառացած խնդիրները միայն ու միայն պետական համակարգի և ամբողջ ազգի ուժերի գերլարման ու կենտրոնացման դեպքում: Նման իրավիճակներում է, որ ժողովուրդը պետք է դրսևորի բարձր ինքնագիտակցություն ու պատասխանատվություն՝ սեփական պետականությունն ընդունելով որպես բարձրագույն արժեք և համարելով այն որպես անձի ու ազգի պաշտպանության, անվտանգության ու գոյության միակ երաշխավորը: Կարող է ասեն, թե նման իրավիճակներում դա անհնարին է: Ում համար որ հնարավոր է, նրա ճակատագիրն էլ այլ է, ում համար որ անհնարին է, նրա ճակատագիրն էլ կլինի այնպիսին, ինչպիսին որ եղավ: Բայց…թող խոսեն փաստաթղթերը:*

### II.1. Մարզի ներքին կյանքը

Կարսի մարզը Հայաստանին միացնելուց հետո երկրի կառավարության կողմից ձեռնարկվեցին մի շարք քայլեր տեղական կառավարման մարմինների ստեղծման, նրանց կայացման և մարզում օրինականության հաստատման ուղղությամբ: Մեկնարկ տրվեց նաև Խատիսյանի կողմից վերը նշված ծրագրերին: Մասնավորապես.

«*Վերոյիշեալ չորս խնդիրներու մէջ բաւականին մեծ դժուարութիւններու հանդիպեցաւ մեր ձեռք ընկած հարստութիւններու պահպանման գործը: Շատ բան կորսուեցաւ սիսթեմի եւ բաւականաչափ պահապան ուժերու բացակայութեան ու անհոգութեան պատճառով… Այսուհանդերձ կարելի եղավ օգտագործել լքուած օթօմոպիլներու մեկ մասը, հագուստեղէնը, ձողերը, մեքենաները, ապակի եւ այլն:*

*Շինուեցան յատուկ կարաժներ ու արհեստանոցներ նորոգման համար: Իսկ բնական հարստութիւններու եւ մասնաւորապէս անտառներու շահագործման համար Սարիղամիշի մեջ շինուեցան տախտակ կտրող գործարաններ, սկսաւ Կաղզուանի աղահանքերու*

*շահագործումը, ձեռնարկուեցավ խոփի արփահանութեան մեծ քանակութեամբ, ինչպէս նաեւ անասուններու գնման եւ փոխադրութեան Երեւանի շրջանը, ուր անոնց պակասը կզգացուէր...»:*[351]

Նշվածներից բացի քննարկվեցին և սկիզբ առան նաև բազմաթիվ այլ առաջարկներ ու սոցիալական, տնտեսական ու հասարակական բնույթի ծրագրեր: Այս բաժնում ներկայացված փաստաթղթերը լուսաբանում են, թե երկրի բարձրագույն իշխանության ծավալած գործունեության հետ մեկտեղ ինչպիսին էր երկրորդ կողմի՝ տեղական մարզային պաշտոնյաների, հասարակության, ի վերջո, տեղի ամբողջ հայության դերն ու դերակատարումը այդ ծրագրերի իրականացման կամ էլ ձախողման հարցերում այդօրվա հայկական պետության համար բոլոր առումներով կարևորագույն վարչատարածքային այդ միավորում:

[351] Ա.Խատիսեան, նշվ. աշխ., էջ 158:

## No 1
## ՀԱՏՎԱԾՆԵՐ ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ ՍՏԵՓԱՆ ՂՈՐՂԱՆՅԱՆԻ ՀՈՒՇԵՐԻՑ

*Կարսի նահանգում իշխանություն կազմավորելու համար անգլիական հրամանատարության հետ իր վարած բանակցությունների, Կարսում հայկական պետական իշխանության հաստատման և տեղի ազգաբնակչության հետ հայկական իշխանության և անձամբ հայ նահանգապետի վարած քաղաքականության մասին (1922թ.)*

### I

1917 թվին, ռուս պետական յեղաշրջման օրերում, ես Կարսի զինվորական վարչական շրջանի պետն էի: Կարսը առաջնակարգ զինվորական քաղաք էր, մեծ զորաբանակով: Ռուս զինվորը, դարեր անլեզու, հնարաւորութիւն էր ստացել լիովին թափելու… *[պեքսափի խզում]* ուր և պատվիրել էի ամբարել այդ գրքերը մինչ առանձին կարգադրութիւն: Ես մտադրութիւն ունէի քաղաքի կենտրոնում մեծ գրադարան-ընթերցարան... [*թերթը վնասված է*] ...պետերին…

Ի զարմանս բոլորի, ազատ էի մնացել միայն ես: Բացատրում էին, որ այդ բանտարկութիւնները կատարվել էին Թիֆլիզից ստացված ցուցակով, ուր իմ անունը չը կար:

Բայց մի երկու ժամից յետոյ իմ բնակարանի դիմաց երևաց… *[պեքսափի խզում]*…

ինձ պատվի ցոյց անելու համար դեմոնստրատիւ շարվեցին իմ բնակարանի դիմաց և յայտարարեցին այդ փողոցում վխտող ռուս զինվորներին, որ ես անձեռնամխելի եմ:

Եւ այդ բարոյեական մեծ զրահի տակ ես մի երկու ամիս դեռ շարունակում էի պաշտօնաւարել, մինչդեռ բոլոր գեներալները, իմ դիրքի բոլոր պաշտօնեաները, հեռացել, գնացել էին:

Կարսի այն ժամանակվայ բնիկների մեծամասնութիւնը հայեր էին և դաշնակցութիւնը տիրեց օրվայ հրապարակը:

Հազիւ թէ պէտք է բացատրել այսօր, որ դրութիւնը տիրապետում էին աւելի ճարպիկ մարդիկ, «աշխատաւորութիւն» և «ազատութիւն» կոչումներով վխտողները: Եւ մի ինչ որ Ձամօեվ, վրացախօս, այդ օրերում Ձամօեան դառնալով, նախորոք իրան դաշնակցական էր յայտարարել ու ինքը իրան Կարսի նահանգական կոմիսար «ընտրել» [*բնագրից 2 թերթ պակասում է՝ 8-ը և 9-ը*]…

…ազգանունով, որ դեռ յեղաշրջումից առաջ, բժիշկ Սուլթանօվի հետ միասին, վարում էր Կարսում, Բագվի թուրք բարեգործական ընկերութեան դրօշակի տակ, Մուսաֆաթի քաղաքական գործակալի պարտաւորութիւնները: Այդ խորամանկ ու ճկուն թուրքը փաստօրէն

իր ձեռքը առաւ Կարսի նահանգի կառավարչական գործը: Նա տենդոտ զինում էր թուրքերին, «նահանգական կոմիսար» Ձամօեվի գլխի վերայով ձեռք էր մեկնել տաճկաց իշխանութեանը և թուրք ազգային խորհուրդների դիմակի տակ, նախապատրաստական աշխատանքներ էր կատարում Կարսի նահանգում ապագայ Շուրաի համար և այդպիսով ճանապարհ հարթում դէպի Բագու, դէպի ապագայ Ադրբեյջան և համիսլամական երազ...

Եւ այդ դաւալից մթնոլորտում, ուր ինքնահաւան և անհոգ դաշնակցութեան զրահի տակ «թագաւորում էր» Ձամօեվ, նրա խելոք օգնականը, Կանտ[դ]եմիրով անպատասխանատու բայց եռանդալից, իշխում և կառավարում էր: Եւ «Հայկական» այդ կարծեցեալ իշխանութեան մթնոլորտում հասունանում էր արդէն Կարսի 18 թվականի անվանի անկումը:

Հայերը, ի դէմս դաշնակցական Ձամօեվի[352] և միւս կուսակցական դատարկաբանների, զբաղված էին ճառերով, ծափերով և նոցա առանցքում թալանով, իսկ թուրքերը, յանձինս Կանդեմիրօվի, անվրեպ տանում էին իրանց քաղաքական վարքագիծը և իրագործում րեալ, դրական նպատակներ «փայփայում» իրանց հեռաւոր քաղաքական իդեալը... Այդ միջոցում դրութիւնը Կարսի նահանգում բարդվում էր օրից օր և շունը տիրոջը չէր ճանաչում: Եւ այդ աղմկալից օրերում, երբ բոլորը միայն խօսում էին և միայն ծափահարում, ես թողեցի պաշտօնս:

Ի ծայր ջղայնացած, ես վճռեցի ընդմիշտ հեռանալ կրքալից հրապարակից և քաշվելով Դիլիջան, մի յետ ընկած գաւառակ, վերսկսեցի «Մշակ» լրագրում իմ «Գաւառական նամակներ» ուսումնասիրութիւնները:

Աւելի քան 30 տարի շարունակ մեծ սիրով ուսումնասիրելով գաւառական կեանքը, բնականաբար ես այսօր լաւ չէի զգում ինձ իմ առանձնութեան մէջ: Հինը քանդվում էր, ժամանակները փոխվում և աւերակների վերայ նոր կեանք էր ծլում: Բայց այդ մեծ շինարար աշխատանքում ես մնացել էի անգործ և հնարաւորութիւն չունէի օգտագործելու երկար տարիների ընթացքում իմ ամբարած վարչական փորձը և կեանքի բազմատեսիլ դիտողութիւնները:

Այդպէս ճնշիչ անցնում էր ժամանակս, երբ 19 թվի յունվարի 11 մեր վաստակաւոր և բազմաշխատ հասարակական գործիչ Սամսոն Յարութիւնեան, այն ժամանակվայ Հայեաստանի

---

352 1919թ. հունիսին այդ անձնավորությունը՝ Գրիգոր Ձամոյանը ուղարկվել է ծովակալ Կոլչակի մոտ որպես Հայաստանի կառավարության հատուկ հանձնարարություններով ներկայացուցիչ; տե՛ս Վ.Հարությունյան, Հայ բոլշևիկների…, էջ 26:

Հանրապետութեան արդարադատութեան մինիստրը, Երևանից հրաւիրեց ինձ հեռախօսի մօտ:
– Մինիստրների խորհուրդը, – ասաց արդարադատութեան մինիստրը, – լսելով այսօրվայ նիստում անգլեական հրամանատարութեան առաջարկը Կարսի նահանգի մեզ յանձնելու մասին, միաձայն որոշեց առաջարկել Ձեզ Կարսի նահանգապետի պաշտօնը: Անգլիական գեներալ Բիչ, – շարունակեց Սամսոն Յարութիւնեան, – այսօր Թիֆլիզից մեկնում է Աղէքսանդրապօլ և դուք պէտք է հենց այսօր ճանապարհվէք, որպէսզի գեներալ Բիչի հետ միասին անցնէք Կարս:
Ժամանակի և բարքերի բնորոշման իմաստով, չեմ կարող չարձանագրել այստեղ իմ հոգու վերապրումները այդ րոպէին: Ես յիշեցի իմ երիտասարդութիւնը, ութսունական թվականների մշակականների յուզմունքները, մեր քաղաքական «ցնորքները» և այդ բոլորը, իրականացած այսօր, կանգնած էր իմ առաջ որպէս մի քաղցր ու հմայիչ երազ...
Շնորհակալութիւն անելով կառավարութեանը ինձ արած մեծ պատվի համար, ես մի քանի ժամից յետոյ մեկնեցի Դիլիջանից:
Աղէքսանդրապօլ ես հասայ գեներալ Բիչից առաջ և երկաթուղու կայեարանում ինձ ասացին, որ Երևանից ժամանել է մինիստր Աղէքսանդր Խաթիսեան և սպասում է ինձ:
Պ. Խաթիսեան, այն ժամանակ խնամատարութեան մինիստր, ներքին գործոց մինիստր Արամ-փաշայի հիւանդութեան ժամանակամիջոցում և մինիստր նախագահ Քաջազնունու արտասահման գնալու պատճառով, կատարում էր այս վերջի երկու մինիստրների պարտաւորութիւններն ևս:
Մինիստր նախագահ Խաթիսեան ընդունեց ինձ շրջապատված իր փայլուն շքախմբով, ուր կային գեներալներ, գնդապետներ, պարլամենտի անդամներ ու հասարակական գործիչներ: Հանդիսաւոր յանձնելով հայկական անդրանիկ նահանգապետին կառավարութեան գրաւոր որոշումը ինձ Կարսի նահանգապետ նշանակելու մասին,[353] Խաթիսեան նոից յուզեց իմ առանց այն էլ շատ բարձր տրամադրութիւնս:
Ի հատուցում Ձեր ժողովրդագիտութեան և դորա հետ կապված Ձեր գրական գործունէութեան, շարունակեց պրեմիերը, Ձեզ վիճակվում է լինել Հայոց Հանրապետութեան առաջի նահանգապետը: Դուք գնում էք գրաւելու այն մեծ առանցքը, ուր կուտակվել է մեր ազատագրութիւնը, ուր մոխրացած, մերթ բռնկվել, մերթ մարել

---

[353] Ստեփան Ղորղանյանը Կարսի քաղաքացիական նահանգապետի պաշտոնում է նշանակվել Հայաստանի առաջին հանրապետության Ներքին գործերի մինիստրի 1919թ. ապրիլի 12-ի հրամանով:

են մեր երազները և ուր համայն հայիւթիւնը յուսում է այսօր իր սպասելիքները և իր դարաւոր իրաւունքը... Մի քանի ժամից յետոյ ճեպնթաց գնացքով Թիֆլիզից եկաւ գեներալ Բիչ և գնդապետ Տեմպերլեյ, ուր որ պէտք է մնար Կարսում որպէս Անգլիայի գերագոյն ներկայեացուցիչ, ունենալով իր հետ մի քանի տասնեակ զինվոր: Կայեարանում մինիստր նախագահ Խաթիսեան դիմաւորեց գեներալ Բիչին և հայկական կառավարութեան անունից շնորհակալութիւն յայտնեց դաշնակիցների վերաբերմունքի համար դէպի հայի արդար և հինաւուրց դատը: Ապա նա ներկայեացրեց գեներալին և ինձ որպէս Կարսի նահանգապետի: Չը նայեած տիրող սառնամանիքի և գիշերվայ ժամի 2, կայեարանում ասեղ ձգելու տեղ չը կար:

Միւս օրը մենք պէտք է մեկնէինք Կարս: Փայլուն արտակարգ գնացքը, որ սպասում էր դէպի հինաւուրց Արփաչայ տանելու մեզ զարդարված էր անգլիական ու հայկական դրօշակներով և կանաչ ժապաւեններով: Ամբողջ Աղէքսանդրապօլը, Կարսի ու թիւրքահայ ամբողջ գաղթականութիւնը հեղեղել էր կայեարանը և երկաթուղու գծով բռնել ամբողջ ճանապարհը: Երբ լսվեց գնացքի առաջի սուլոցը, մինիստր նախագահ Խաթիսեան մի յուզիչ ճառով դիմեց հայ ժողովրդին օրվայ նշանակութեան և մեր անելիքների մասին: Ապա շատ ոգևորված խոսեց պրիմիերի թիկնապահ գեներալ Բեյ-Մամիկոնեան, որ կեցցէ բացականչեց ի պատիւ դաշնակիցների և ի պատիւ այն Ռուսաստանի, ուր երբէմն պատսպարվել և խնամվել է գաղթական ու ընչազուրկ հայիւթիւնը:

Երբ գնացքը շարժվելու վերայ էր և Հայոց Հանրապետութեան... [*բնագրից 1 թերթ պակասում է՝ 29-ը*]...

...և ինքնորոյնութեան ոչ միայն գաղափարը, այլև զգացմունքը: Մենք մեր տանն էինք և կանգնած այն հինաւուրց օջախի շուրջը, որի ծուխը ոչ միայն քաղցր, ախորժելի էր, այլև նվիրական, որպէս մի դարաւոր ժառանգութիւն: Այդ ժառանգութիւնը անցաւ փորձանքների և արհաւիրքների բովով և այսօր անհասանելի կամօք և հայոց պատմութեան մենք և իրաւատեր էինք և անկախ...

Եւ այդ ոչ միայն տեսիլ էր, ոչ միայն սինեմատօգրաֆիկ ցայտուն մի պատկեր, այլ մի մեծ դարագլուխ այն պատմութեան, ուր ժամանակի անիւը, զրկանքների և դառնութիւնների հետ միասին, բերում է և հատուցում և արդարադատութեան մարմնացում...

## II

### Կարս

Ի ծայր յուզված և ընկճված, ես շտապեցի դէպի ինձ յատկացված կուպեն: Տպաւորութիւնները ոչ միայն շատ բարձր էին, այլև այնչափ ծանրաբեռ, որ ես պէտք էի զգում առանձնութեան: Բայց ինձ վիճակվում էին ոչ միայն մեծ, պատմական պարտաւորութիւններ, ինձ

վերայ ծանրանում, ճնշում էր ինձ իմ պատասխանատվութիւնը երկրի և ժողովրդի առաջ:

Երկիր կառավարելու գործը միշտ եղել է այն մեծ առանցքը, ուր մարտնչել և խորտակվել են մտքեր: Քաղաքական միտումները կազմել են միշտ այն խայտաճամուկ տարազը, որի ծալքերում բոր-բոքվել և մարել են աշխարհակալ և փառասէր ձգտումները: Բայց երկիր կառավարելու սիստեմը ստեղծում է ինքը՝ ժողովուրդը, և այն գաղտնիքը, թէ ի՞նչ է պէտք երկիր կառավարելու համար և թէ ինչպէ՞ս պէտք է կառավարել այդ երկիրը, մշակում և ձևակերպում է ինքը՝ կեանքը:

Այդ մեծ գաղտնիքը երկրի սովորութիւնների, նրա ճաշակի, նրա հակումների բաղադրութիւնն է: Եւ օգտագործել այդ բարդ բաղադրութիւնը, երկրում իրաւակարգ ստեղծելու համար, եղել է միշտ այն պատմական հանգոյցը, որի շուրջը բորբոքվել է այնչափ կրքեր, արիւն ու այնչափ՝ ես...

Ես տարված էի այդ խուռն մտքերով, երբ գնացքը սուլեց Արփաչայի վերայ: Գնացքի կոմենդանտը զեկուցեց, որ չը նայեած կարգադրութեան, որ ոչ ոքի չը վերցնել Աղէքսանդրապօլից, բացի նահանգապետին ուղղեկցող պաշտօնական անձանց, երբ գնացքը շարժվել է, նրա վագոններից կպել և անցել են մինչև Արփաչայ 65 հայ գաղթականներ: Այդ ցնցոտիների մեջ կորած մարդիկը, Կարսի նահանգի զանազան գիւղերից, այդ սարսափելի ցրտին, բացօթեայ, շտապում էին դէպի աւեր օջախներ, դէպի այն երկիրը, ուր հանգել է նոցա կացութիւնը, նոցա չարն ու բարին:

Վերադարձնել այդ թշվառներին նորից Աղէքսանդրապօլ, դժվար էր և ես կարգադրեցի տեղ տալ նոցա գնացքում և տանել Կարս:

Երբ գնացքը շարժվեց և մենք անցնում էինք Տաճկաստանի պատմական սահմանը, ես ակամայ դարձայ դէպի հեռաւոր անցեալը: Չէ որ այդ այն վայրն է, ուր միշտ բորբոքվել են մեր ազատագրական կայծերը...

Հայ ազգի հռչակաւոր զօրաւար իշխան Բեհբութեան, ոչ պակաս մեծադէմք կոմս Լօրիս-Մելիքով և մեծահամբաւ գեներալ Լազարեվ ոչ միայն այստեղից ռուս տիրապետութիւնն էին տարածում, այլև հարթում էին այն պատմական ուղիները, ուր պարբերաբար բռնկվել և մարել են մեր ազգային երազները: Այստեղ անուն և հռչակ են հա-նել ութսունական թվականների իդեալիստ Սարգիս Կուկունեանները, այստեղ լեգենդար է դարձել Անդրանիկ, այստեղ են ոգևորվել և մեր երգիչ-աշուղները և այդ վայրը միշտ բևեռել է մեր տենչանքները և մեր քաղաքական յոյսերը: Մի կէս ժամից յետոյ հասանք Կարաեալ կայեարանը: Այդ այն պատմական բնակատեղին էր, որտեղից 77 թվին հռչակաւոր Լօրիս, Կովկասեան ահարկու զօրաբանակի հրա-

մանատարը, արձակեց իր առաջի հրամանը Կարսի ռմբակոծութեան մասին: Կայեարանում գնացքին սպասում էր մեծ բազմութիւն շրջակայ գիւղերի թուրքերից, որոնց թվում կային պատվաւոր, դիրք ունեցող թուրքեր, իմ վաղեմի ծանօթներից: Երբ գեներալ Բիչ իր շքախմբով դուրս եկաւ վագօնից, նրան յետևեցի և ես իմ ուղեկիցներով: Բայց մի քանի րոպէից յետոյ գեներալը ասաց ինձ, որ հայերի երևալը կարող է վատ տպաւորութիւն թողնել թուրքերի վերայ և խնդրեց ինձ հեռացնել իմ շքախումբը: Այդ առաջարկը այնչափ ծանր և ճնշիչ էր ինձ համար, որ ես նոյնիսկ չէի կարողանում բացատրել, թէ ինչումն է բանը: Հայը, որ վերադարնում էր իր հայրենիքը, վերադառնում էր որպէս իրաւատէր, որպէս իշխող և ոչ գաղտնագողի, պէտք է չերևար թուրքերին, նոցա տրամադրութիւնը չը փչացնելու համար...

Ինչևիցէ, բայց անգլիացու այդ յայտարարութիւնը ստեղծում էր այն խորթութիւնը մեր և անգլիացիների միջև, որ և յետագայիմ անանցանելի մի վիհ էր...

Բայց շատ հետաքրքիր և բնորոշ էր, որ տեղացիներին ներկայեցնում էր գեներալ Բիչին Գանձակի կողմերից փախած մի արկածախնդիր երիտասարդ, Բագու-Ադրբեյջանի Մուսաֆաթի վարձկան այն գործակալներից մեկը, որոնք այդքան տարի շարունակ պղտորում էին Կովկասի երբէմն խաղաղ ջրերը:

Ռուսերեն կոտրատելով Գանձակի պրիստաւի նախկին գրագիրը ասաց գեներալ Բիչին, որ տեղական թուրք ազգաբնակութիւնը ողջունում է անգլիական գեներալին և իր գոհունակութիւնն է յայտնում տիրող այն իշխանութեանը, որ ի դէմս Շուրաի, կառավարում է Կարսի նահանգը մեր ազատ օրերում, շեշտալից վերջացրեց երիտասարդը իր սերտած դասը: Մենք ուզում ենք օգտվել «ինքնորոշման» սկզբունքից և կառավարվել այնպէս, ինչպէս ցանկանում ենք...

Գեներալ Բիչ շնորհակալութիւն անելով, մի ինչ որ անորոշ բան ասաց այդ առիթով և մենք թողեցինք Կարաեալը շատ ծանր տպաւորութեան տակ: Շատ հետաքրքիր ու բնորոշ է, որ մեզ դիմաւորող թուրք անվանիները, որոնք բոլորն էլ ինձ ճանաչում էին և բոլորն էլ երբեմն այնչափ պատկառալից էին դէպի ինձ, այսօր ձևանում էին, իբր չեն ճանաչում ինձ և խուսափում էին նայելու դէպի մեր կողմը... Նրանք գտնվում էին Մուսաֆաթի [*բնագրից 1 թերթ պակասում է՝ 47-ը*]...

...Երբ գնացքը կանգ առաւ, գեներալ Բիչի սալօնը անցաւ Կարսի ամրութիւնների պարետը, կօմենդանտը, մի փաշայ և ողջունելով անգլիական գեներալին, ասաց, որ զօրքերի հրամանատար, Շեֆկետ փաշան, մի ժամ առաջ, պաշտօնական շտապ գործով մեկնեց Սարիղամիշ: Եւ այդ էր պատճառը, որ պարետի ընդունելութիւնը գեներալի մօտ շատ սառն էր և տևեց երկու րոպէ միայն:

Բայց Շեֆկետ փաշան դիտմամբ էր մեկնել Կարսից գեներալի գալուց մի ժամ առաջ միայն, որպէսզի ստիպված չը լինի դիմաւորելու անգլիացուն և նրա հետ խօսելու: Մեզանից ոչ ոք դուրս չեկաւ վագօնից, թուրքերը թշնամալից, խմբվում էին այն վագօնների շուրջը, ուր հայեր կային: Գեներալ Բիչ չընդունեց պատվաւոր պահակը և թիւրք հրամանատարութեան համար միանգամայն անսպասելի կէս ժամից յետոյ մեկնեց Սարիղամիշ, Շեֆկետին հասնելու և նրա հետ տեսնվելու համար: Գիշերը մեր գնացքում անցկացնելուց յետոյ, միուս օրը ես ու գնդապետ Տեմպերլեյ աֆտօմօբիլով անցանք քաղաք, թիւրք հրամանատարութեան կողմից մեզ համար պատրաստված բնակարանը տեսնելու:

Բայց այստեղ մի դէպք ևս տեղի ունեցաւ: Աղէքսանդրապօլից մեկնելիս, ինձ ուղղեկցողները հայկական մի դրօշակ էին վերցրել իրենց հետ նահանգապետի տան համար:

Երբ Կարսի վագզալում այդ դրօշակը դուրս բերեցին, գնդապետ Տեմպերլեյ խնդրեց ինձ կարգադրել, որ դրօշակը մնայ վագոնում, որովհետև, բացատրեց անգլիացին, այդ դրօշակը կարող է վատ տպաւորութիւն թօղնել թիւրքերի վերայ... Խնդիրը մեզ համար շատ փափուկ, դելիկատ էր իհարկէ, ես ոչ մի ոյժ չունէի իմ տրամադրութեան տակ, ես դեռ չէի ստանձնել պարտաւորութիւներս և այդ երերուն ու անորոշ մթնոլորտում անտակտութիւն կը լինէր իմ կողմից յամառելու այս դէպքում: Համենայն դէպս պարզ էր, որ թէև անգլիացիները «յանձնում էին» մեզ Կարսի նահանգը, բայց այդ աւելի դիպլօմատիկ մի փորձ էր, քան թէ միջազգային վճռալից մի ակտ: Այսպէս թէ այնպէս, ես ստիպված էի դառնալից փակելու այդ խնդիրը և մենք Կարս էինք մտնում համակված ոչ սուվերեն զգացմունքներով ...[*բնագրից պակասում են՝ թթ. 56-63-ը*]... չեն ցանկանում:

...Այդ գրութիւնը կազմել էր մի հրեայ, որ շատ լաւ տիրապետում էր թէ՛ անգլերէն և թէ՛ թիւրք լեզուներին: Բագվի Մուսաֆաթ հոգատար կոմիտեն, անգլիացիների դերը երկրում նախատեսելով վաղօրոք ուղարկել էր այդ հրեաին Կարս, Շուրաի տրամադրութեանը: Իսրաէլի այդ ճարպիկ որդին, որ միևնոյն ժամանակ լրտեսի պարտաւորութիւն էր կատարում թիւրքաց հրամանատարի մօտ, շատ շուտ անցաւ անգլիացիների կողմը:

Երբ մի ամսից յետոյ անգլիացիք վճռեցին ցրել Շուրան և բանտարկել նրա անդամներին, լեզվագէտ հրեան թարգմանի պաշտօնով անցաւ անգլիացիների մօտ և մեծ վարպետութեամբ մատնում էր այնուհետև իր հին բարեկամներին:

Երբ մենք գնդապետ Տիմպերլէի հետ խորհրդակցում էինք ստացված գրութեան մասին, գնդապետը ստացաւ մի այլ նամակ, ուր Շուրան ունկնդրութիւն էր խնդրում նորանից: Երբ գնդապետ

Տեմպերլեյ հարցրեց այդ առիթով իմ կարծիքս, ես ասացի, որ սակաւախօսութիւնը, լրջութիւնը և խստութիւնը Արևելքում մի ընդհանուր հասկացողութիւն են կազմում: Թոյլ չը տալ մարդկանց երկար ու բարակ խօսելու, կը նշանակէ կտրուկ քաղաքականութիւն վարել: Այդ գործելակերպի առաջ Արևելքը սովոր է խոնարհվել և Շուրան, վերջացրեցի ես, պէտք է այդպէս միայն ընդունել:

Գնդապետը միանգամայն համաձայնվեց ինձ հետ: Նշանակված ժամին գնդապետ Տիմպերլէյ խնդրեց ինձ ևս ներկայ լինել այդ ունկնդրութեանը և մենք, ուղղեկցութեամբ մեր շքախմբերի, անցանք ընդունարանը: Շուրան բաղկացած էր երեք հոգուց՝ նախագահ՝ Մամեդ բէգ Ալիբեկօվ: Նա Երևանի նահանգի՝ Սուրմալու գաւառի, Հիւսեյնքեանդ գիւղիցն էր, իմ վաղածանօթը: Երբ շատ տարի առաջ, ես Սուրմալու գաւառապետի պաշտօնակատարն էի, այդ Մամեդը իմ դիւանատան գրագիրների թվումն էր: Մեծահռչակ հայատեաց Սուրմալուի գաւառապետ Բօգուսլավսկու օրով, որի հրէշաւոր գործունէութեանը վերջ տվեց դաշնակցութեան մեծահամբաւ գնդակը[354], Մամեդը դարձաւ Բօգուսլաւսկու քարտուղարը, նրա աջ թևը և մեծ յաջողութեամբ, 12 տարվայ ընթացքում զինում էր թուրքերին հայերի դէմ և ի կատար ածում Բագվի Մուսաֆատ կուսակցութեան ցուցմունքները:

Ռուս պետական յեղաշրջումից յետոյ, փախչելով հայկական վրէժից, նա ապաստան էր գտել Կարսում և այնտեղ էլ ի կատար էր ածում Բագվի քաղաքական պատվերները:

Շուրայի միւս անդամներն էին՝ Սարիղամիշի անտառների պահապաններից մէկը, մի վայրենի անգրագէտ քուրդ, իսկ միւսը գիւղական տանուտէրի նախկին գրագիրը: Երեքն էլ իր ժամանակին ենթարկվում էին իմ իշխանութեանը և իրերի դրութիւնը բնորոշելու համար հարկաւոր եմ համարում ասել այստեղ, որ երեքն էլ իր ժամանակին վախենում էին ինձանից, որպէս կրակից...

Երբ մենք մտանք դահլիճ և Շուրաի նախագահը սկսեց իր ատենաբանութիւնը, գնդապետ Տեմպերլեյ, շատ կոշտ կտրելով նրա խօսքը և հանելով ժամացոյցը, ասաց շատ հրամայալից. «Ձեզ համար ես միայն երեք րոպէ ունեմ ասացէք, ի՞նչ էք խնդրում...»:

Այդ աւելի քան սառն ընդունելութիւնը այնպէս շշմացրեց Շուրաի անդամներին, որ նախագահ Մամեդի խօսքը մնաց նրա բերանում և նա հազիւ կարողացաւ թոթովել մի քանի անկապ բառ միայն գնդա-պետ Տեմպերլէյ, անվերաբեր լսածին, ասաց, որ երկիրը յանձնվում է

[354] Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս В.Арутюнян, Дро бросился наперерез…, Голос Армении, 28 мая, 1998 г.

Հայկական կառավարութեանը, որին, ի դէմս նրա նահանգապետի, ենթարկվում է Շուրան և դրանով փակեց ունկնդրութիւնը:

Բայց միուս օրը գնդապետ Տեմպերլէյ ստացաւ մի նոր անգլիերէն գրութիւն: Շուրան, այս անգամ շատ արձակ ոճով, տեղեկացնում էր, որ նա բնաւ ցանկութիւն չունի ընդունելու դրսից եկած որևէ իշխանութիւն և խնդրում էր հեռացնել հայերին Կարսից: Եւ ի հաստատութիւն այդ վճռական յայտարարութեան, Շուրաի տան առաջ, որ մեր բնակարանի դիմացն էր, ի ցոյց մեզ, շարվեցին հարիւրի չափ զինված թուրքեր, իսկ մի ագիտատոր, դարձեալ Գանձակի կողմերից մի եկվոր, սկսեց շեշտալից խօսել խռնված ամբոխի առաջ օրվայ խնդրի մասին:

Այդ միջոցում վերադարձաւ Սարիղամիշից գեներալ Բիչ և գնդապետ Տեմպիրլէյ շտապեց երկաթուղու կայեարանը նրան իրերի դրութիւնը զեկուցանելու: Այդ տեսակցութիւնից յետոյ գնդ. Տեմպերլէյ տրամագծօրէն փոխեց իր վերաբերմունքը, գնդապետ Տեմպերլէյ նոյնպէս հեռացաւ Կարսից և նրա յաջորդը, մեր ծանօթ հրէաի միջոցով, պարզեց եկվոր թուրքերի, այդ Երևանի և Գանձակի թուրքերի բոլոր դաւերը:

Թիւրքաց զօրաբանակը արդէն քաշվել, անցել էր դէպի Էրզրում, իսկ Կարս էր եկել մօտ 3000 անգլիական զօրք: Յենվելով արդեն այդ ոյժի վերայ, անգլիական ներկայեացուցիչը ժողովի հրաւիրեց ամբողջ Շուրան: Թուրք անվանիները, կարծելով, որ անգլիական գնդապետը գումարում է այդ նիստը երկրի այդ կառավարութիւնը, ի դէմս Շուրաի, պաշտօնապէս ճանաչելու համար, շատ բարձր տրամադրութեամբ լցնում են դահլիճը: Երբ գնդապետը մօտենում է նախագահի աթոռին, Կարսի նահանգի դէմքը անմիջպէս փոխվում է: Դահլիճում մնացածները փախչում են առանց յետ նայելու, իսկ երկիրը անիծում է «Ադրբեյջանը», որի ցանցերում 17 թվից տարուբերվում էր միամիտ ժողովուրդը: Մինչ այդ, ես ապաքինւեցի իմ ծանր հիւանդութիւնից և հեռագիր ստացայ ներքին գործոց մինիստրից ապրիլի 15 Աղէքսանդրապօլ լինել, նորից Կարս անցնելու համար:

Այստեղ հարկաւոր եմ համարում աւելացնել, որ տեղական թուրքերի ըմբոստութիւնը գալիս և պահպանվում էր ոչ միայն Բագվի ոսկիներով ու գործակալներով, այլև յենվում էր թիւրք հրամանատարութեան վերայ: Գնդապետ Տեմպիրլէյ ասաց ինձ մի օր, որ մինչև թիւրքաց զօրաբանակը չը հեռանայ Կարսի նահանգից, մենք ոչ մի ակտիւ քայլ անել չենք կարող այստեղ: Տաճկաց հրամանտարը, Տեմպերլէի ասելով, առաջարկում էր նրան, իր սվիները Շուրան ցրելու համար, բայց գնդապետ Տեմպիրլէյ երկիւղ էր կրում, որ այդ սվինները միայն առ երես կը լինեն անգլիացիների կողմը և կարող են առաջ բերել երկրում այնպիսի մի շփոթ, որից դուրս գալը շատ դժվար կը լինէր: Այդ էր պատճառը, որ գնդապետ

Տեմպերլէյ, չունենալով իր սեփական ույժը, հրաժարվեց տաճկաց այդ երկդեմի առաջարկութիւնից:

Տաճկաց հրամանատարութիւնը ցոյց էր տալիս անգլիացիներին ձևորէն մեծ ուշադրութիւն: Մեր գալու միուս օրը նոքա կապեցին գնդապետ Տիմպերլէի առանձնասենեակը հեռախօսով Բաթումի հետ և անգլիական սպաները գիշեր ու ցերեկ անդադար ծածկագիր հեռագիրներ էին ուղարկում Բաթումի վերայով Կ.Պօլիս:

Թիւրքերը տենդոտ տեղափոխում էին նահանգից դէպի Էրզրում ինչ որ հնարաւոր էր ռուս անսպառ պահեստներից ու գլխաւորապէս, Կարսի նահանգի մեծաքանակ հացը: Գեներալ Բիչ մի քանի անգամ այդ առիթով բողոքեց, թիւրքերը հաւատացնում էին, որ տանում են իրանց հեռացող բանակի համար մի ամսվայ պաշար միայն, բայց իրօք անխնայ թալանում և կողոպտում էին Կարսի նահանգը:

Անգլիացիների թիկունքում, Շեֆկետ փաշան կազմակերպում էր տեղական Շուրան, կառավարութիւնը զինում էր թուրքերին և վարժեցնում նոցա: Այստեղ պէտք է նկատել, որ այդ ժամանակամիջոցում, 18-19 թվականներում, այս և այն գիւղում տաճկաց զինվորները ամուսնացել էին և այդ մի քանի տասնեակ մարդկանց, որպէս զինվորական ինստրուկտօրներ, Շեֆկեթ փաշան թողեց Կարսի նահանգում իր հեռանալուց յետոյ, թուրքերից վաշտեր ու գումարտակներ կազմակերպելու ու նոցա վարժեցնելու համար...

Տաճկաց հրամանատարութիւնը շարունակ հաղորդակցութեան մէջ էր Բագվի հետ և Ադրբեյջանի էմիսարները, Արդահան-Թիֆլիզի վերայով, անդադար գնում և գալիս էին Կարսից Բագու: Կարսը այդ օրերում նման էր մի քաղաքի, որ ոչ իշխանութիւն ունէր և ոչ տէր: Այդ կեղեքիչ մթնոլորտում բոլորը տանում էին, բոլորը շտապում, իսկ օրվայ տարազը «ինքնորոշման» լօզունգը, դա մի զաւեշտալից եղանակ էր, որ պարում էին հրապարակի բոլոր սրիկաները, մեր օրերի բոլոր ազատասէր գողերը և պղտոր ջրի բոլոր վարպետները: Հայկական մեծահարուստ տները, ուր բազմել էին Գանձակից, Հին Նախիջևանից, Բօրչալուից ու Երևանից փախած արկածախնդիր թուրքերը, լի էին կեանքի բոլոր վայելքներով: Երկրից հեռացող տաճկաց բանակը տանում էր հայի տոկուն աշխատանքի բոլոր արժեքաւորները դաշնամուրը, էլեկտրական մեքենաները, բազմատեսակ գիւղատնտեսական գործիքներ, թանկարժէք կահ-կարասիք, գրքեր, թողնելով տեղական թուրքերին բոլոր մնացածը, որ դիզվել և խնամվել է հարիւրաւոր տարիների ընթացքում: Այդ չափ ճնշիչ էր Կարսի մթնոլորտը, երբ ես, ծանր և անյոյս հիւանդ, 19 թվի յունվարի 24 թողեցի Կարսը:

## III

***Նորից Կարսում: Իմ բանակցութիւնները անգլիական հրամանատարութեան հետ իշխանութիւն կազմակերպելու մասին:***

1919 թվի ապրիլի 15 ես նորից Աղէքսանդրապոլ էի, ուղևորվելով նորից Կարս:

Ալ. Խաթիսեան, մինիստր նախագահը, նորից եկել էր Աղէքսանդրոպոլ Կառավարութեան հրահանգները ինձ տալու համար: Նորա հետ միասին եկել էր և անգլիական գեներալ Դիվի, անգլիական զօրքերի հրամանատարը Կովկասում:

Մինիստր նախագահի սալօն վագօնում կայեացաւ մեր խորհրդակցութիւնը իմ միսիայի առիթով: Որոշվեց, որ ես ինձ ուղեկցող պաշտօնեաների հետ, արտակարգ գնացքով անցնեմ Արփաչայը, Կարս, ստանձնեմ պաշտօնս և երբ հեռագրեմ, Աղէքսանդրապօլից շարժվի Կարսի նահանգի համար պատրաստված հայկական երկրորդ հետևակ բրիգադան և ապա մեր բազմաթիւ գաղթականութիւնը: Ես շատ սիրում եմ մեր երկրի գարունը, նա շատ աղմկալից է և շատ բուրալից: Երբ ջրերը պղտորվում են և չայերը ուժգին աղմկում ու սրընթաց որոտում, արթնանում և շարժվում է ամբողջ բնութիւնը: Սելը, մեր երկրի բախտն է, մեր երկրի վիճակը: Այդ խայտաճամուկ ջրերը բերում, հոսեցնում են դէպի մեր դաշտերը բերրին ու լիութիւնը և այդ է պատճառը, երևի որ մեր ժողովուրդը այդչափ սիրում է գարունը և գարնան առաջի արագընթաց և որոտալիցք սելը...

Եւ այդ գեղածիծաղ օրերում, բնաւէր և թշվառ հայիւթիւնը պատրաստվում էր անցնել Արփաչայ, շտապում էր դէպի այն հանդը, ուր այնչափ մեծ սիրով դէպի երկրի քաղցրութիւնը, նա միշտ երկել, հերկել ու կալսել է...

Գաղթականութիւնը բարձել էր արդէն իր սայլերը և այդ բարք ու բարխանի երկար շարանները բռնել էին դէպի Արփաչայ տանող խճուղին և մին անգամ, երբ ես գալիս էի երկաթուղու վագզալը, կամ փողոցով էի անցնում, ինձ շրջապատում էին թիւրքահայերը, Կարսի նահանգի հայիւթիւնը և մեծ սիրով դէպի ինձ յանձնված գործը, իրաւունք էին խնդրում սահմանը, Արփաչայ անցնելու: Բայց ես պատվիրում էի սպասել իմ այդ առիթով հեռագրական կարգադրութեանը և ապրիլի 19, մեծ զատկի թաթախման օրը, հազարաւոր ամբոխի բարեմաղթութիւնների ուղեկցութեամբ, իմ յատուկ գնացքը շարժվեց Աղէքսանդրապօլից դէպի հռչակաւոր Արփաչայ:

Նորից Կարաեալ, երկաթուղու առաջի կայեանը, նորից բուռն յիշողութիւն, բայց նոր յոյսեր, բուռն եռանդ և շատ բարձր տրամադրութիւն...

Բայց այս անգամ պատկերը արդէն այլ էր: Նոյն թուրքերի աւելի մեծ բազմութիւն, նոյն ծանօթ բայց այս անգամ արդէն աղերսող ու պատկառելից դէմքեր, ժպտող, հինաւուրց աղուհացը և ջերմագին հաւաստիացում խորին յարգանաց և հպատակութեան...

Աղէքսանդրապօլից մինչև Կարս ճանապարհը նման էր մի մեծ յուշարձանի, որ վկայ էր մեծ աւերմունքի ու թալանի: Ճանապարհի աջ ու ձախ կողմերում ընկած էին բազմաթիւ լոկոմոտիւներ, հարիւրաւոր ջարդված վագօններ, աֆտօմօբիլներ, ցեմենտով լի տակառներ, բամբակի վիթխարի հակեր “Торговый домъ бр. Африкянъ” դրօշմով փամփուշտով լի հազարաւոր արկղներ և այլ ռազմամթերք, իսկ կայեարաններում մեծ պահեստներ, ուր թէ՛ թիւրք զօրամասերը և թէ՛ տեղական թուրքերը կուտակել էին ռուս իշխանութեան մեծ հարստութիւնը՝ մեքենաներ, գործիքներ, երկաթ, հացահատիկ, մամլած խոտի լեռներ և այլն:

Ակամայ ապշում, զարմանում ես (յեղափոխական ծափերի տակ երկու տարի աւեր, երկու տարի անխնայ թալան, պատերազմի արհաւիրք, բայց երկրի հարստութիւնը դարձեալ ծով, դարձեալ անչափ ու անհամար:

Կարս հասանք ժամի 10, արդեն գիշեր էր: Վագզալում կար տեղական թուրքերի մեծ բազմութիւն, բայց արդեն երկչոտ և միայն հետաքրքրվող դէմքեր, բայց անվստահ քայլեր ու մարած տրամադրութիւն...

Ես դուրս չեկայ վագօնից: Բախտի բերմունքով, երևի, մենք Կարս էինք ժամանում Մեծ Զատկի օրը: Մենք բոլորս հաւատացողներ լինելով, տրամադիր էինք այդ զուգադիպութեան մէջ բարութեան ու արդարութեան գրաւական տեսնելու:

Բայց Կարսի հայկական հինաւուրց եկեղեցիների զանգակները լուռ էին և այդ ճնշում, ընկճում էր մեզ: Հայը դաստիարակվել է սրբութեան և պատկառանքի մթնոլորտում, մեր մանկութիւնից մենք սիրել ենք «Քրիստոս յարեաւ» քաղցր և ընտանի հոլովի և այսօր մեծ փափագ էինք զգում լինելու այնտեղ, ուր մարդիկ աւետում են իրար այդ դարաւոր և հին ողջոյնը:

Առաւօտը իմ ոստիկանապետը զեկուցեց, որ եկել էր անգլիական պարետի ադիւտանտը և Կարսի թուրք քաղաքագլուխը: Առաջինը ողջունեց հայականն նահանգապետին գնդապետ Պրօսօրի անունից և տրամադրեց ինձ նրա աֆտօմօբիլը, իսկ թուրք քաղաքապետը, ներկայեանալով, ասաց պատկառալից, որ սպսում է հրամաններիս...

Շնորհակալութիւն անելով անգլիացի գլխապետին, ես նրա ուղեկցութեամբ անցա Կարսի ամրութիւնները՝ անգլիական հրամանատարին այցելելու, իսկ յետոյ ինձ համար պատրաստված բնակարանը:

Տաճկաց զօրաբանակի հեռանալուց յետոյ, անգլիացիք ձեռբակալեցին 18 եկվոր թուրք խռովարարներ, Կարսի նահանգը «կառավարող» Շուրան, աքսորեցին նոցա Մալթա կղզին և ցրեցին այդ «ինքնորոշվող» հաստատութիւնը: Բայց նահանգը

կառավարելու համար անգլիացիք կազմեցին, գնդապետ Պրոսսօրի գերիշխանութեան տակ, մի խորհուրդ տեղացիներից, որի մէջ մտան մի ռուս, մի մօլական, 2 յոյն և 5 թուրք: Այդ խորհրդի անձնական կազմը վերին աստիճանի անյաջող էր: Ռուս ներկայացուցիչը մի գնդապետ էր: Երբ նորա մեծ հայրենիքը տակնուվրայ եղաւ և Կարսի պարիսպների վերայ 45 տարուց յետոյ, նորից ծածանվեց տաճկական դրօշակը, նա հնարաւոր համարեց մնալու Կարսում և տրամադրեց իրան թիւրքերին: Իսկ երբ վերջինները թողեցին Կարսը, նա տեղաւորվեց Շուրայիմ և մեծ եռանդով պաշտպանում էր ազգերի «ինքնորոշման» սկզբունքը... Այդ աղմկալից և անցնող օրերում, նա տենդոտ լցնում էր իր տունը, երկրի բոլոր վայելքներով և չափազանց դժգոհ էր, որ հայերը չեն ուզում ճանաչել «Կարսի Հանրապետութիւնը»: Մօլօկանը մօտակայ Բազօդարնօյէ մօլական գիւղի մի մեծ վաշխառու էր և երբէմն կառապան Կարսում: Շատ անգամ, երբ ռուս իշխանութեան օրով ես Կարսի շրջանի պետն էի, նա առանձին պատկառանքով տանում էր ինձ կառքով: Իսկ այժմ, ճաշակելով «ինքնորոշման» գաղափարը, նա հաւակնութիւն ունէր երկիր կառավարելու... Յոյներից մէկը նոյնպէս ռուս բանակի սպաներից էր: Վերջի պատերազմում նա մեծ յաջողութեամբ զարդարեց թէ՛ իր կուրծքը ռուս շքանշաններով և թէ՛ իր գրպանը ռուս ոսկով և այսօր ծարաւի էր և իշխանութեան:

Երկրորդ յոյնը՝ պետական յեղաշրջումից առաջ գործաւար էր Կազմանի գաւառի Խօրասան գաւառակում, իսկ այժմ, որպէս օրէնսգէտ, վարում էր խորհրդում նահանգի վարչական մասը: Թուրքերից մէկը, ռուս իշխանութեան օրով, Կարսում մրգի խանութ ունէր: Երկրորդ թուրքը մսագործ, ղասաբ, երրորդը՝ գիւղական ուսուցիչ և վերջինը նորաւարտ բժիշկ Արդահանի գաւառից: Այդ մարդիկը անվանել էին իրենց «մինիստրներ» և իրար մէջ բաժանել «պօրտֆելները»: Կառապանը, ըստ իր մասնագիտութեան, վերցրել էր «հաղօրդակցութեան» մինիստրի պօրտֆիլը, ռուս գնդապետը, որի տանը վերջում յայտնվեց հեռագրական պարագաների մի մեծ պահեստ յատկացրել էր իրան պօստ-հեռագրի մինիստրի պաշտօնը: Գիւղի վարժապետը դարձել էր «լուսաւորութեան և արվեստների» մինիստր, մրգաւաճառը՝ ֆինանսների, ղասաբը՝ պետակն հսկիչ, իսկ պրիստաւի նախկին գործաւոր յոյնը՝ արդարադատութեան մինիստր էր կոչվում: Բժիշկը, որ մի ֆանատիկ թուրքեր և Բագվի Մուսաֆաթ կուսակցութեան գործակալը, վերապահել էր իրեն խորհրդի նախագահի բազկաթոռը և «պրեմիեր» էր կոչվում...

Ախորժակների և ձգտումների այդ հետաքրքիր համերգի սրտովը չէր, իհարկէ, Կարսի նահանգը Հայեաստանի Հանրապետութեան կցելը: Նոքա ամեն կերպ խուսափեցին նոր իշխանութիւնից և փորձեցին լրտեսութիւն անել անգլիացիների մոտ եկվոր հայերի վերաբերմամբ: Այն բանը, որ հայկական նահանգապետի պաշտոնով եկել է մի մարդ, որ ճանաչում է այդ «մինիստրների» թէ՛ տակը և թէ՛ վրեն...

Միւս օրը Երևանից եկաւ գեներալ Դիվի և ինձ հրաւիրեցին անգլիական շտաբը խորհրդակցութեան:

Կարսի նահանգը կառավարելու համար, ասաց ինձ անգլիացի գեներալը, մենք կազմակերպել ենք խորհուրդ և դուք պէտք է գրաւէք այդ ատեանում նախագահի աթոռը, որպէս Primus inter Paris որպէս աւագը հաւասարների մեջ: Ես առարկեցի գեներալին, որ մեր կառավարութիւնը չի ժխտում, իհարկէ, ժողովրդի գործակցութիւնը, բայց մենք ունենք երկրի պայմաններին համապատասխան մեր կառավարչական սիստեմը և մեր օրէնքները: Մեր խորհրդակցութիւնը տևեց մի քանի ժամ և ոչ մի եզրակացութեան չը հանգաւ, որովհետև գեներալը յամառ պնդում էր, որ Կարսի նահանգի մինիստրները և նոցա խորհուրդը պէտք է Կարսում լինի և ոչ թէ Երևանում:

Միւս օրը Կ. Պոլսից եկաւ անգլիական գեներալ Միլլ և ինձ նորից հրաւիրեցին անգլիական շտաբը: Դարձեալ նոյն ակադեմիկ խնդիրները և գեներալները պնդում էին, որ ես ընդունեմ նոցա առաջարկած կառավարչական ձևը: Մեր այդ առիթով տեսակցութիւնը վերսկսվեց և երկրորդ օրը և անգլիացիները ոչ միայն յամառում էին, այլև սպառնում: Տեղեկացրեցի այդ բոլորի մասին Երևան և երկար տարուբերվելուց յետոյ, չորրորդ օրը, այցելեցի անգլիական շտաբը և յայտնեցի գեներալ Դեվիին, որ ես ընդունում եմ գոյիւթիւն ունեցող «խորհուրդը» և խնդրեցի հրաման արձակել, որ ես այսօրվանից փաստացի ստանձնում եմ Կարսի նահանգապետի պաշտօնը: Բայց նախքան տարել իմ այդ պահանջը գեներալ Դիվի խնդրեց ինձ, որ ես մի յուշագիր կազմեմ իմ որպէս նահանգապետի, անելիքների մասին և ներկայեացնեմ գեներալ Միլլին:

Միւս օրը ես երեք թերթից բաղկացած ֆրանսերեն մի գրութիւն ներկայեացրեցի գեներալին: Իմ կառավարչական սիստեմի նախագիծը հաւանութիւն էր գտել գեներալ Միլլի և գեներալ Դիվիի կողմից և գնդապետ Պրոսսօր, Կարսի ամրութիւնների անգլիական հրամանատարը, հենց նոյն օրը գրաւոր հրաման արձակեց ինձ Կարսի նահանգապետ ճանաչելու մասին: Միւս օրը, շրջապատված իմ պաշտօնեաներով և ներկայիւթեամբ տեղացի հայ և թուրք անվավիների, ես հանդիսաւոր կերպով ընդունեցի անգլիացիների կազմակերպած խորհուրդը, որ փաստացի պէտք է կառավարէր

Կարսի նահանգը: Բայց ես ընդունեցի այդ «Մինիստրներին» ոչ որպէս Primus inter Paris, ոչ թէ որպէս աւագը հաւասարների մէջ, այլ որպէս իշխող ու թելադրող: Եւ «մինիստրների» տրամադրութիւնը իսկոյն մարեց: Խորամանկ բժիշկը, ի դիմաց «խորհրդի», յայտնեց երկրի գոհունակութիւնը ինձ նորից Կարսի նահանգում տեսնելու առիթով և իրանց մեծ պատրաստակամութիւնը կատարելու իմ հրամանները: Ակներև էր, որ «խորհուրդը» այլևս գոյիւթիւն չունէր...

Խորհրդի անդամները, յետոյ, պատկառանքով սեղմում էին իմ պատշօնեաների ձեռքերը և աշխատում նոցա մերձենալու... Այդպէս է Արևելքի հոգեբանութիւնը:

Տեղեկացնելով կատարվածի մասին մինիստր նախագահին, ես հեռագրեցի Աղէքսանդրապօլ, որ Կարսի նահանգի համար պատրաստ երկրորդ հետևակ բրիգադան շարժվի դէպի Արփաչայ և որ իրաւունք տան և գաղթականութեանը անցնելու սահմանը: Միուս օրը Աղէքսանդրապօլ Կարսի ամբողջ խճուղին բռնվեց անհամար սայլերով ու բեռներով, իսկ երկաթուղու յատուկ գնացքներն էլ բերում էին դէպի Արփաչայ հազարաւոր տարագիր թշվառներ:

Պատմական Շիրակը նորից հմայվեց իր հարազատ, գուրգուրալից լէ-լէ ով, այդ մեր սրտին և հոգուն ընտանի եղանակը հայրենիքի կարօտն էր երգում և մաճկալի այդ առանձգական և հմայիչ հառաչանքը տանում էր մեզ դէպի մեր երազների քաղցրութիւնը: Գաղթականական գնացքները գալիս էին Կարս լուսաբացին: Այդ միջոցում կայարանումն էին Կարսի գաւառապետը, Կարսի ոստիկանապետը, քաղաքագլուխը և Խնամատար հաստատութիւնների ներկայացուցիչը: Պէտք էր ցուցակագրել գաղթականութիւնը, պէտք էր սայլեր պատրաստել գաւառները ցրվող ժողովրդի համար, պէտք էր հոգալ նոցա ուտելիքը: Այդ բոլորը պահանջում էր բուռն, հոգատար աշխատանք և ես պէտք է վկայեմ, որ մարդիկ անում էին ինչ կարող էին:

Առավօտվայ ժամը հինգից ես ինքս ոտի վերայ էի արդէն և շատ սիրում էի դիտել, թէ ի՞նչ բերկրանքով հազարաւոր ընտանիքներ շտապում էն «տուն»: Նոքա օր առաջ շտապում էին դէպի իրենց այն հինաւուրց թոնիրը, ուր տարիների բախտը և ձախորդ օրերը համեմել են հայրենիքի կարօտը: Բայց մինչ այդ բոլորը, ես կարգադրեցի, որ մեր զօրաբանակի անցնելու ճանապարհով Արփաչայի ափերից մին-չև Կարս նրան հանդիսաւոր դիմաւորէ երկրի թուրք ազգաբնակութիւ-նը: Իսկ երբ զօրաբանակը մօտենում էր քաղաքին, ես շրջապատված քաղաքացիական պաշտօնեաներով, մի բուռն հայերով և թուրք հոգևորականութեան ու թուրք անվանիների մեծ բազմութեամբ, հանդիսաւոր դիմաւորեցի Հայոց Հանրապետութեան զօրաբանակը և մեծ շքով, ի ցոյց թուրքութեան, առաջնորդեցի զօրքը դէպի Կարս:

Բայց դառնանք մեր վերաբերմունքին դէպի խորհուրդը, որ պէտք է ըստ անգլիացիների, կառավարէր նահանգը: Ստանձնելով պաշտօնս, ես կանչեցի ինձ մօտ խորհրդի անդամներից ամենախորամանկին, այն յոյնին, որ երբէմն գործաւար էր ռուս ոստիկանատանը: Ես գիտէի, որ նա Խորասան գաւառակի յոյն գիւղերից է և մեծ ցանկութիւն ունէր այդ վայրում իշխանութիւն ունենալու: Բացատրելով նրան, որ իմ ցանկութիւնն է նահանգի բոլոր վայրերում ունենալ այնպիսի պաշտօնեաներ, որոնք, որպէս տեղացիներ, մօտ ծանօթ են երկրի անցուդարձին, ես ասացի, որ վստահում եմ նրան Խորասան գաւառակի պետի օգնականի պաշտօնը և իրաւունք եմ տալիս այսօրվանից պատշաճ ուսադիրներ կրել...

Յոյնի ուրախութեանը չափ ու սահման չը կար:

Պաշտօնաւարութեանս երկար տարիների ընթացքում ես սովոր եմ ժողովրդի հետ անմիջական յարաբերութիւններին և չէի կարող զրկել ինձ այդ բաւականութիւնից նահանգապետի դերում: Այդ է պատճառը, որ իմ բնակարանի առջև, աւելի քան որևէ յիմնարկութեան մօտ, դուք վաղ առաւօտվանից կը տեսնէիք ժողովրդի մեծ բազմութիւն: Այստեղ էին և թուրքերը և քրդերը և կարափափախները, յոյները, եզիդիք, թուրքմենները, լազգիք և թիւրքերը և ես սիրում էի այդ մարդկանց հետ խօսել մտերմաբար, առանց իհարկէ, թարգմանի և ամէն մէկի հետ իր լեզվով և իր բառբառով: Եւ հազիւ թէ պէտք է ասել, որ այդ երկրի սրտովն էր: Յոյնի նոր պաշտօնի լուրը ամենքից շուտ իմացաւ փողոցում խառնված մեծ բազմութիւնը և ես լուսամուտից դիտում էի, թէ ի՜նչ մեծ հետաքրքրութիւն առաջ բերեց այդ կարգադրութիւնը ժողովրդական խաւերում:

Մի ժումից յետոյ, երբ ես անցնում էի փողոցով, հանդիպեցի խորհրդի անդամ «ֆինանսների մինիստր» թուրքին: Նա երկիւղածութեամբ և պատկառալից գլուխ իջեցրեց ինձ և երբ ես հարցրեցի նրա քեֆը, տաճիկը խոնարվելով, ասաց. «Սպասում եմ Ձեր հրամաններին և յոյս ունեմ, որ գեներալը իր խոնարհ ծառային էլ անտես չի առնի իր շնորհներում...»: Ես հասկացայ, իհարկէ, որ նա ակնարկում է յոյնին պաշտօն տալը և մի երկու ժամից յետոյ ես կանչեցի նրան ինձ մօտ: Ես կազմակերպում եմ,– ասացի ես թուրքին, որ պատկառալից կանգնած էր դռան մօտ,– Կարսի քաղաքային ինքնաւարութիւնը, դու լաւ ծանօթ ես բազարի, շուկայի անցուդարձին, և ես քեզ բազարբաշի եմ նշանակու, բազարի տնտեսական վերակացու: Տաճիկը արդեն իր դերումն էր և խոնարհ գլուխ տալով, շտապեց այդ նորութիւնը աւետել փողոցի բազմութեանը: Միուս օրը [Բլո...] խորհրդի նախագահ թուրք բժիշկը ունկնդրութիւն խնդրեց ինձանից:

– Սկզբում Շուրան, յետոյ անգլիացիք, – կեղծալից ասաց խորամանկ բժիշկը, – բարձեցին վերաս խորհրդի նախագահի պաշտօնը, մինչդեռ ես միշտ սիրել եմ բժշկութիւնը...

– Ձեր հայրենի Արդհանի շրջանը, բժիշկ, – ասացի ես, – նահանգի մութ անկիւններից մէկն է և իմ առաջի հոգսերից մէկն է այնտեղ մի ձեռնհաս գաւառական բժիշկ նշանակել: Ընդունելով իմ առաջարկը Արդհանի գաւառական բժշկի պաշտօնը, դուք կատարած կը լինէք թէ՛ Ձեր հայրենի երկրի և թէ՛ Ձեր նահանգապետի բուռն ցանկութիւնը:

Խորամանկ թուրքը բաւականութիւնից ժպտաց և ասաց,– այդ հենց իմ piade/ideria-ն է: Միւս օրը, գիշերը, ես ստացայ մինիստր նախագահ Խաթիսեանից հետևեալ հեռագիրը. «Կառավարութիւնը յանձնարարում է Ձեզ պարօն նահանգապետ, յայտնել նահանգի իսլամ ազգաբնակութեանը և նրա անունից կառավարութեանը դիմող բժիշկ Հաջիեվին, որ կառավարութիւնը շատ գնահատում է նահանգի թուրք ազգաբնակութեան հեռագրում արտայայտած ամենահպատակ զգացմունքը և երկրի գոհունակութիւնը հայկական իշխանութիւնից և պատվիրում է Ձեզ, պարոն նահանգապետ, ստեղծել նահանգում այնպիսի կացութիւն, ուր թուրքերը զգան իրանց ազատ, հաւասար ու երջանիկ...»:

Միւս օրը, ոստիկանապետի միջոցով ես տեղեկացրեցի Ղազուն, թուրք հոգևոր կառավարութեան նախագահին և բժիշկ Հաջիեվին, որ մինիստր նախագահի հրամանով պէտք է այցելեմ մզկիթը և ժամ նշանակեցի: Շրջապատված իմ շքախմբով, նշանակված ժամին իմ կառքը կանգ առաւ մզկիթի առաջ, ուր ինձ մեծ հանդեսով ընդունեց հոգևորականութիւնը, անվանիները և Կարսի ամբողջ թուրք ազգաբնակութիւնը: Մզկիթում ես կարդացի մինիստր նախագահի հեռագիրը, Ախունդը և բժիշկը այդ առիթով երկար ճառեր արտասանեցին և երբ ես կառք էի նստում, թուրք ամբոխը երկար գոչում էր,– Եաշասըն էրմունի հոքիմութի՝ կեցցէ Հայոց կառավարութիւնը...

Միւս օրը բժիշկը խնդրեց մինիստր նախագահի այդ հեռագրի պատճեն և ես պատվիրեցի ընտիր թղթի վերայ տպել այդ հեռագիրը:

Երբ առանձին յանձնարարութիւնների իմ պաշտօնեան յանձնում էր Ախունդին և բժիշկին այդ հեռագրի պատճէն, այդ երկու անվանիները, պատկառելից երկու ձեռքով ընդունելով այդ գրութիւնը ասացին. Ամեն... Մինիստր նախագահ Խաթիսեանի հեռագիրը պատասխան էր այն դիմումի, որ թուրք ազգաբնակութիւնը հեռագրով արել էր կառավարութեանը: Մի կողմից տեսնելով իշխանութեան անաչառ վերաբերմունքը, միւս՝ ցանկանալով նահանգապետին հաճոյեանալ, թուրքերը դիմում են Երևան իրանց ամենահպատկ յայտարարութիւնով և ստանում կառավարութեան նախագահի այդ պատասխանը: Այդպէս են ասիացիք իրանց բոլոր տրամադրութիւններում: Մի երկու օրից

յետոյ պաշտօններ ստացած խորհրդի անդամները պատրաստվում էին մեկնելու իրանց պաշտօնատեղին, երբ եկաւ ինձ մօտ «հաղորդակցութեան մինիստր» կառապան մօլականը:

– Դուք ինձ պահանջել էք նահանգապետ, – ասաց մօլականը:

Ես չէի կանչել նրան, բայց հասկացայ, որ այդ մի պատրվակ էր ինձ տեսնելու:

– Դու, կարծեմ, – ասացի ես նախկին կառապանին, – մի ժամանակ փոստի սայլակներ ունէիր, ես մտադրութիւն ունեմ նահանգում Զեմսկի, համայնական փոստ կազմակերպել և այդ աշխատանքը ուզում եմ քեզ յանձնել...

– Այդ հենց իմ գործն է, գեներալ, ի՛նչ խորհուրդ, ի՛նչ Շուրա, ի՛նչ բան...

Եւ «խորհուրդը» ինչպէս տեսնում էք, լուծված էր արդէն: Իսկ երբ մի երկու օրից յետոյ ես այցելեցի գեներալ Դիվիին, նա ասաց ինձ ժպտալով,– ինչպէ՞ս են գեներալ, Ձեր խորհրդի գործերը...

*ՀԱԱ, Ֆ. 477, ց. 1, գ. 1, թթ. 2-152*
*(բացառությամբ թթ. 4, 8, 9, 29, 47, 56-63), բնագիր, ձեռագիր*

**No 2**

ՀԱՏՎԱԾՆԵՐ ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ
ՍՏԵՓԱՆ ՂՈՐՂԱՆՅԱՆԻ ՀՈՒՇԵՐԻՑ

*Մահմեդական Շուրան ցրելուց հետո այլազգի համայնքների կողմից սեփական ազգային խորհուրդները պահպանելու ձգտման, հայկական իշխանության թուլացմանը միտված այդ խորհուրդների գործունեության և դրանք չեզոքացնելու ուղղությամբ նահանգային իշխանության քայլերի մասին (1922թ.)*

...Բայց այն անհատները, որոնք պղտոր ջրում իրանց միշտ լաւ են զգում և յիմարացնելով երկիրը, առաջ էին տանում իրանց քմահաճոյքը և իրանց վայելքները, դեռ արթուն էին և սպասում պատեհ օրերի և յարմար առիթի: Բագու Մուսաֆաթը դեռ տակաւին պահպանել էր Կարսի նահանգում իր կազմակերպութիւնը, նա ունէր այստեղ իր գաղտնի գործակալները և եթէ մինչ այդ նոքա աշխատակցում էին Շուրայի հետ և նրա անվան տակ կապում համիսլամութիւնը, այսօր այդ արկածախնդիրները պէտք է հանդէս գային այլ տարազով և այլ ձևով: Բագվի թուրքութեան համար միևնոյն էր, թէ ո՞վ և ի՞նչ կերպ առաջ կըտանի այդ գաղափարը: Բագուն տալիս էր ընդհանուր դիրեկտիւները, դրամական և այլ միջոցները, թողնելով իր գործակալներին գործի մանրամասնութիւնները և երկրի շահագործելու երկրորդական խնդիրը: Շուրայի և խորհրդի խափանումից յետոյ,

բազմաթիւ ծրիակերներ մնացին առանց վաստակի, զրկվեցին իշխանութիւնից, դիրքից և նշանակութիւնից:

Փողը և իրաւունքը միշտ ալեկոծել են տիեզերքը և կեանքի այդ երկու մեծ խթանների շուրջը պտոյտ է գործել միշտ պատմութիւնը: Եւ նախկին Շուրայի, նախկին խորհրդի չորս կողմը երբեմն վխտողները բնականաբար չէին կարող հաշտվել հայկական իշխանութեան հետ և մի ելք էին որոնում դրամ և նշանակութիւն ստանալու համար:

Զգտումների այդ մթնոլորտում հղացաւ Կարսի նահանգում թուրք ազգային խորհուրդների գաղափարը: Այդ խորհուրդը կազմակերպվեց եկվոր Գանձակի և այլ տեղերից փախած թուրքերից և տեղացիներից, որոնք չէին ցանկանում աշխատակցել ինձ մերձեցող թուրքերի հետ և տրամադրութիւն ունէին ձեռք բերելու սեպարատ իրաւունքներ և իշխանութիւնից անկախ դիրք:

Երբ կազմակերպվեց թուրք ազգային խորհուրդը, այդ յիմաստով բացվեց և ռուս ու յոյն արկածախնդիրների ախորժակը և այդ խորհուրդները բուսան մեկը միւսի յետևից սնկի պէս:

Ես մանրամասն տեղեկութիւն ունէի, իհարկէ, այդ կազմակերպութիւնների մասին և մեծ ուշադրութեամբ դիտում էի նոցա: Որպէս «ինքնաւար» հաստատութիւններ, այդ անձաբնոյթ խորհուրդները միայն «ի գիտութիւն» էին գրաւոր հաղորդում իրանց լոյս աշխարհ գալը նահանգապետին, միանգամայն անտես առնելով ոստիկանապետին, գաւառապետներին և վարչական այլ ինքնորոյն անձանց: Դորանով այդ արկածախնդիրները ուզում էին ընդգծել խաւար երկրի առաջ, թէ ո՞ր չափ բարձր հաստատութիւն է խորհուրդը, որ անտես առնելով գաւառապետներին և միւսներին, ուղղակի դիմում է նահանգապետին և միայն նրան հաշվի առնում... այդ մեզ լաւ ծանօթ Արևելքի հոգեբանութիւնն է: Եւ մենք շտապեցինք հատուցանել մեր պարտքը, տալ նոցա ըստ արժանոյս: Ես պատվիրեցի իմ դիւանատան պետին անպատասխան թողնել այդ խորհրդի ինձ ուղղած բոլոր բազմաթիւ գրաւոր դիմումները: Բայց այդ մասին յետոյ:

Այդ օրերում Կարսի ոստիկանապետը զեկուցեց ինձ, որ առաւօտվայ գնացքով եկել է Թիֆլիզից ռուս գնդապետ Տրօնով, որին, իբր թէ, Կարսի նահանգի ռուս ազգաբնակութիւնը «ընտրել է» ռուս ազգային խորհրդի նախագահ: Բախտի բերմունքով, ես ճանաչում էի այդ գնդապետին: Շատ տարի առաջ, նա պրիստաւ էր Կարսի նահանգում, թալանեց Զարուշատի գաւառակը և որպէս վստահելի ռուս, այն էլ զինվորական, աւելի բարձր պաշտօնով տեղափոխվեց Թիֆլիզի նահանգը:

Յետոյ նա գաւառապետ էր այն կողմերում և Կոմս Վօրօնցովի օրով փոխնահանգապետի թեկնածու էր համարվում: Այդ գնդապետը այն ճարպիկ…

*[բնագրից բացակայում է թ. 349-ը]*

…նա սրբութիւն չէր ճանաչում: 17 թվի խորտակված յոյսերից յետոյ, նա շտապում էր դէպի խաղաղ նաւահանգիստ և ամենալաւ կայեանը Կարսի խաւար նահանգն էր, ուր գնդապետի աստիճանը կարող էր հմայել մարդկանց և այդ կեղևի տակ նա կարող էր թէ՛ դիրք և թէ՛ եկամուտի նոր աղբիւր ստեղծել:

Նա գրագրութեան մէջ մտաւ Կարսի ռուս արկածախնդիրների հետ և նոքա նրան Կարսի նահանգի ռուս ազգային խորհրդի նախագահ «ընտրեցին»:

Գնդապետը իր անցեալում սիրում էր միշտ յարմարվել մեծամեծ թուրքերի ցանկութիւններին: Գնդապետի այդ աշխատանքը միշտ լաւ վարձատրվում էր, իսկ այժմ քաղաքական լաւ հոտառութիւն ունենալով, գնդապետը, նախքան «հասարակական» նոր պաշտօն ստանձնելը հարկաւոր էր համարել այցելել Բագու… Եւ այդ բոլորը ես գիտէի: Ես գիտէի, որ այդ գնդապետը պետք է այդ երեք ազգային խորհրդների նախագահների մէջ աւագի դերը ստանձնէր և ստորերկրեայ արշաւ պէտք է կազմակերպէր հայկական իշխանութեան դէմ նահանգում: Մի երկու ժամից յետոյ զգեստաւորված գնդապետը ներկայեացաւ ինձ:

Ես ընդունեցի նրան ոտի վերայ.

– Պատիւ ունեմ ներկայեանալու Ձերդ գերազանցութեանը, – Կարսի նահանգի ռուս ազգային խորհրդի նախագահ…

– Պարոն գնդապետ, – սառը, անվճռաբեկ պատասխանեցի ես:

*[բնագրից բացակայում է թ.355-ը]…*

…Պատշաճ հրամաններ տվեցի այդ առիթով:

Եւ նոյն օրվայ գնացքով ճարպիկ գնդապետը ընդմիշտ թողեց Կարսը… Ես ստիպված էի այդ արտակարգ միջոցները ձեռք առնելու այդ գնդապետի դէմ, որովհետև նա եկել էր միայն ինտրիգներ և միայն խռովութիւն առաջ բերելու նահանգում:

Բոլորի վերայ այդ անսպասելի կարգադրութիւնը մեծ տպաւորութիւն էր թողել քաղաքում և «խորհուրդները» ձեռք ու ոտք էին ընկել այդ առիթով: Բայց «ազգային» այդ որջերում դեռ տակաւին եռում էին դաւերը, թուրքերը կապ ունէին Բագվի հետ, ռուսները՝ Թիֆլիզի ու հիւսիսային Կովկասի: Այդ խորհուրդները հաւակնութիւն ունէին քաղաքական-վարչական դեր խաղալու երկրում և փորձեցին կառավարութեան մէջ իրանց թագաւորութիւնը ստեղծելու: Նրանք սկսեցին նահանգում ամեն տեսակի խնդիրներ ու գանգատներ ընդունել, միջամտում էին բոլոր հասարակական, քաղաքացիական և քրեական գործերին և միջնորդի պարտաւորութիւններ ստանձնեցին ժողովրդի ու իշխանութեան միջև: Այդ գործելակերպը պէտք է միանգամայն անջատեր երկիրը կառավարութիւնից և հետևապէս, պէտք է

ծգէր և իշխանութեան համարումը երկրի առաջ: Եւ այդ բոլոր գործերի, խնդիրների, դատերի, պահանջների և ընթացիկ թիւրիմացութիւնների առիթով նոքա դիմում էին միայն նահանգապետին ու ժամանակի տարազը պահպանած լինելով «հարցապնդում» անում...

Այստեղ հարկաւոր եմ համարում ասել, որ այդ բոլոր թղթերը գրվում էին Բագվից և Թիֆլիզից ուղարկված վարպետների ձեռքով:

Ես պատվիրեցի դիւանապետիս այդ բոլոր գրութիւնները անպատասխան թողնել:

Ոչ մի պատասխան չը ստանալով ինձանից, նրանք փոխեցին իրանց տակտիկան և իրանց դիմումներով ու հարցապնդումներով նարանք այնուհետև սկսեցին հեղեղել գաւառապետներին և վարչական միուս պաշտօնեաներին: Ես պատվիրեցի և վերջիններին գրագրութեան մէջ չը մտնել այդ խորհրդների հետ և այդպիսով վերացնել խօրհրդների այդ միջնորդ դերը:

Երկիրը յետնկաց և մթին անկիւնները, որ սկզբից մի իշխանութիւն էին տրամադիր ճանաչելու ի դէմս այդ խորհրդների, աստիճանաբար հասկացան նրանց նպատակները: Բայց մեր իշխանութիւնը օրեցօր տիրապետում էր դրութիւնը և ազգային խորհուրդները սկսեցին կորցնել իրանց նշանակութիւնը: Մի փոքր անց, այդ «նախագահները» հերթով շտապում էին դէպի իմ ընդունարանի նախասենեակը, ուր ծառայողներից հոգատար տեղեկանում էին նահանգապետի առողջութեան ու տրամադրութեան մասին...

Այնուհետև այդ «նախագահները» մեծ պատիւ էին համարում հանդիսաւոր օրերում՝ եկեղեցում, զօրահանդէսներում և զանազան ընդունելութիւնների ժամանակ նահանգապետի շքախմբում լինել և օգտվում էին ամէն մի առիթից իմ աչքին երևալու և իրանց ծառայիւթիւնը առաջարկելու...

Երբ ես վերադառնում էի Կարս՝ նահանգում կատարած իմ ճանապարհորդութիւնից, ինձ դիմաւորող գաւառապետի, ոստիկանապետի և միուս պաշտօնական անձանց շտապում էին կցվելու և այդ նախագահները: Եւ այդ նախագահներից ամէն մէկը, առանձին ունկնդրութիւն խնդրելով, իր զեկուցումն էր անում երկրի նորութիւններից և օրվայ հարցերից...

Երբ ես սպասում էի օտարազգի ներկայեացուցիչներին՝ ամերիկացիներին, ֆրանսիացիներին, անգլիացիներին, այդ նախագահները շտապում էին իմ պաշտօնեաների միջոցով իմանալու իմ տրամադրութիւնը և ցուցմունքներ էին խնդրում իրանց ասելիքների մասին օտարազգիների առաջ...

Այդպէս էին ասիական «ինքնաւար» և «ինքնորոշվող» առաձգական և շուտ գունատվող «գաղափարները»: Ի վերջոյ, երբ սկսեցին խօսել, որ մեր կառավարութիւնը հայկական շքանշանների մասին

օրէնք է մշակում, այդ «նախագահները» մեծ ջատագով իմ պաշտօնեաների միջոցով ուզում էին իմանալ իմ վերաբերմունքը դէպի իրանց ծառայիութիւնը և յոյս էին յայտնում, որ ես կը զարդարեմ և նոցա կուրծքը հայկական շքանշաններով...

Պատմութեան համար նիւթեր արձանագրելով ես չեմ ուզում ծածկել այստեղ, որ ես օգտագործում էի մարդկանց այդ թուլութիւնը դէպի այդ pijon et joujou դէպի այդ ունայնութիւնը և պատեհ դէպքերում օրօրում էի նոցա այդ ծարաւը, որ և բնորոշ էր և զաւէշտալից...

Բայց Բագուի Մուսաֆաթ Կոմիտեն իմացել էր արդեն …

*[տեքստի խզում]*… ռուսների յետևից:

Կարսի նահանգի ռուս ազգաբնակութիւնը աղանդաւորներ էին և կայսերական Ռուսաստանը, հարիւր տարի շարունակ պատերազմալից փողահարելով Մերձաւոր Արևելքի դարբասներում, սփռում էր այդ աղանդաւոր գաղութները իր նվաճողական ընթացքի տարածութեամբ:

Ռուս իշխանութեան քաղաքական միտումները պահանջում էին ստեղծել իր յետևում ամուր և վստահելի թիկունք և պետական այդ գերագոյն նպատակների համար կայսերական Ռուսաստանը միջոցների առաջ կանգ չէր առնում:

Իր ապագայ ռազմական մարշի ընթացքով նա ստեղծեց ռուս աղանդաւոր գաղութների մի երկար ցանց, տալով այդ ազգաբնակութեունը բարեկեցիկ կեանքի բոլոր պայմանները: Կարսի նահանգի ռուս գյուղեր, բոլորը շատ հարուստ էին, շատ հանդուգն և շատ գոռոզ իրանց նախամեծար դիրքով:

17 թվի պետական հեղաշրջումը ռուս աղանդաւորների սրտովը չէր: Նոքա բոլորը միապետականներ էին և շատ լաւ հասկանում էին, որ այդ ռեժիմի անկումը խախտում էր նոցա նախամեծար դրութիւնը նահանգում:

Երբ 18 թվին ռուս բանակը թողնում և հեռանում էր Կովկասի ափերից, և տաճկաց զօրքերը նօրից գրաւում էին Կարսի նահանգը, տեղիս ռուս ազգաբնակութիւնը ոչ մի տրամադրութիւն չուներ տեղից շարժվելու: Ռուսների մեծ մասը մնաց Կարսի նահանգում և շատ շուտ համակերպվեց երկրի նոր տէրերի հետ: Երբ 19 թվին հայկական կառավարութիւնը գրաւեց Կարսի նահանգը, ռուսները աւելի, քան երկրի մահմեդական ազգաբնակութիւնը թշնամալից էր դէպի մեզ: Այդ ռուսները ոչ մի կերպ չէին ուզում հաշտվել երկրի նոր դրութեան հետ, նրանք չէին ուզում ճանաչել այն ազգութեան սուվերենիտետը, որին դեռ երէկ նոքար գործիք կայսերական իշխանութեան ձեռքում, նոքա բռնանում էին ու վերևից ներքև նայիմ:

Կարսի նահանգում մեր իշխանութեան ընթացքում այդ աղանդաւորները շարունակ գաղտնագողի պղտորում էին մտքերը թուրք

ազգաբնակութեան շրջաններում և սրելով թուրքերին մեր դէմ, նոքա շարունակ լուրեր էին տարածում, որ հայկական իշխանութեան օրերը հաշված էին և որ երկրում նորից պէտք է վերականգնել ռուս կայսերական իրաւունքը: Երբ գեներալ Դենիկինի բրաւուր շառաչինը Կովկասի ափերում բռնկեց ռուս սև հարիւրակեանների դարան մտած սպասելիքները, Կարսի նահանգի ռուս ազգաբնակութիւնը առաջիններից մեկը ծայնակցեց այդ գիշատիչ ախորժակներին:

Այդ օրերում, 19 թվի ամառը, Աղէքսանդրապօլից Կարս եկաւ ռուս գնդապետ Գրեսսիր: Նա Կովկասեան ռուս զօրաբանակի հին սպաներիցն էր, երկար տարիներ պաշտօնաւարել էր Կարսի նահանգում, Աղէքսանդրապօլ ունէր իր սեփական տունը, իսկ Կարսի նահանգի ռուս *[պեքսփի խզում]*...

...Թէ ինչո՞վ էր իսկապէս զբաղված բժիշկ Սուլթանով Կարսի նահանգում, բաւական կըլինի առաջ բերել այստեղ հետևեալ փաստը: Կայսերական Ռուսաստանը առանձնակի շոյիչ ուշադրութիեամբ վերաբերվելով Կովկասի թուրք ազգաբնակությանը ունէր այդ ընթացքում իր քաղաքական միտումները: Բայց Կարսի նահանգը ոչ միայն գերազանց իսլամական էր, այլև այն կարևորագոյն տարածութիւնը, ուր միշտ թմբուկահար տրամադրութեամբ մարզվել են ռուս գումարտակները և փայփայել առատ իմպերիալիստական... *[պեքսփի խզում]*... Այդ բոլոր պատճառներով ռուս կառավարութեան վերաբերմունքը դէպի Կարսի նահանգի թուրք ազգաբնակութիւնը առանձնապէս հոգատար էր և այդ հովանին ամենից առաջ ցայտուն կերպով բնորոշվում էր երկրի տնտեսական շրջափակում: Նահանգի բոլոր բերրի և լայնածաւալ տարածութիւնները յատկացվում էին թուրքերին, իսկ աշխատասէր և բնածին հողագործ հայը հաշվի չէր առնված կառավարչական այդ հոգսերում և ստիպված էր տարեց տարի հողամասեր գնելու իր հարևան թուրքերից: Իսկ նահանգի ազգաբնակութիւնը, դեռ ասպետ շրջան վերապրելով, բաւականանում էր իր տնտեսական պէտքերում խաշնարած նախնական զբաղմունքով և քաղաքական խարդախ միտումներում իրան բաժին հասած լայնածաւալ հողաբաժինները կամ ծախում էր հայերին, կամ հայու հետ միասին կիսրար ցանում և օգտվում:

Բայց շատ հետաքրքիր է, որ այդ բոլոր տնտեսական բարեկեցիկ պայմաններով հանդերձ Կարսի նահանգի բոլոր հայկական գիւղերում մշակները (ծառաները) և չօբան-մղդուրները բացառապես թուրքեր և քրդեր էին:

Բայց մեծ պատերազմը հղի էր և համիսլամական երազներով և Բաքվի Մուսաֆաթը իր բարեգործական ընկերութեան վահանի տակ առաջ եկաւ 1915 թվին Թիւրքաց Հայեաստանի դարբասում, Կարսի նահանգում, տարածեց իր շօվինիստ ցանցերը: Եւ ճշմարտութիւնը

պահանջում է վկայել, որ բժիշկ Սուլթանով, առաջին անգամ հանդէս գալով թուրք հասարակական ասպարեզում, տաղանդաւոր տարաւ Կարսի նահանգում իրան յանձնարարած այդ բարդ գործը:

Պէտք է ասել, որ թուրք մասսան շատ մոլեռանդ, ֆանատիկ է և անվճռաբեկ, լսող ու ենթարկվող իր հաւատակիցների հեղինակաւորներին:

Եւ Կարսի նահանգի թուրքութիւնը միանգամից շրջապատեց բժիշկ Սուլթանովին: Նրա դուռը սրբատեղի դարձաւ թուրքերի համար և Կարսի նահանգի միջազգային յարաբերութիւնների պատկերը հանկարծակի փոխվեց:

Թուրքերը միանգամից անջատվեցին իրանց հարևան հայերից, հայ գիւղերի բոլոր թուրք մշակները և քուրդ մղդուր-չօբանները թողեցին տասնեակ տարիների ընթացքում իրանց ընտանի դարձած հայկական տները և այնուհետև ոչ ոք թուրքերից չէր համաձայնվում հայ գուղերում մշակութիւն անելու:

Բացի այդ, թուրքերը հրաժարվեցին հայերի հետ և միուս տնտեսական կապերից նրանք հրաժարվեցին իրանց հողերը կիսրար հայերի հետ մշակելու և այդ առանցքում որի երկու հեռագոյն հարևանների միջև առաջ եկաւ խորթութիւն:

Եւ երբ բժ. Սուլթանով այդչափ վարպետ և այդչափ տաղանդաւոր առաջ էր տանում համիսլամական հեռաւոր երազների նախապատրաստական աշխատանքը, հայ դաշնակցութիւնը, որ հաւակնութիւն ունէր Կարսի նահանգում առ …*[անընթեռնելի է]*…հասարակական հոսանքները, ի դէմս իր ներկայացուցիչ Զամօեվի զբաղվեց միայն դատարկաբանութեամբ և նոյն թալանով:

*ՀԱԱ, Ֆ. 477, ց. 1, գ. 1, թթ. 330-360, բնագիր, ձեռագիր*

## No 3

## ԿԱՐՍԻ ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԿԱՐՍ ՄՏՆՈՂ ՀԱՅԿԱԿԱՆ ԶՈՐՔԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ ԳԵՆԵՐԱԼ Ա.ՀՈՎՍԵՓՅԱՆՑԻ ԴԻՄՈՒՄ-ՀՐԱՄԱՆԸ

Հրաման N 37

ԿԱՐՍԻ ՇՐՋԱՆԻ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԵԱՆ

17 ապրիլ 1919թ., Ալէքսանդրոպոլ

Համաշխարհային պատերազմը վերջացաւ: Սրա հետ պէտք է վերջանան և բոլոր տառապանքներն ու տանջանքները: Ամենքը պիտի վերադառնան իրենց օջախները, ամենքը նորէն պիտի ձեռնարկեն խաղաղ աշխատանքի և եռանդուն գործի: Ժողովուրդների փորձութիւնները վերջացան: Նորէն հասել է խաղաղ կենակցութեան

ժամանակը, առանց ազգի և կրօնի խտրութեան – լինի նա հայ թէ քիւրդ, թաթար թէ ռուս, յոյն թէ եզիդի, ամենքի համար պէտք է թանկ լինին իրենց հին դաշտերը, ուր իրենք ծնւել են: Ամենքը պէտք է ղեկավարւեն նախկին կենակցութիւնը վերանորոգելու նպատակով և պէտք է ազնւօրեն սկսեն նորէն ձեռք բերել իրենց առօրեայ հացը:

Իմ *Կառավարութեան* և *Դաշնակիցների* հրամանով ես մտայ Կարսի շրջանը: Ձեզ եմ դիմում, իմ հաւատարիմ զօրքեր: Դուք էք հանդիսանում մեր *կառավարութեան* ներկայացուցիչները և նրա կամքի կատարողները: Դուք պէտք է ազնւօրէն և անձնուրաց կերպով պաշտպանէք մեր *Հանրապետութեան* բոլոր քաղաքացիների կեանքն ու գոյքը առանց ազգի խտրութեան: Այս է լինելու այս րոպէին ձեր կատարելիք գործը: Դուք սրբութեամբ և անշեղ կերպով պիտի կատարէք այս հրամանը: Ամեն մի սպայ, զինւոր կամ միլիցիոներ, որ կը խախտի այդ հրամանը կամ թոյլ կտայ իրեն ի չարը գործադրելու իր իշխանութիւնը կամ զէնքը անձնական շահախնդրական նպատակներով կամ կուզենայ գրգռել քաղաքացիների մի մասը միւս մասի դէմ,- կը գնդակահարւի իմ կողմից: Միլիցիայի և զօրքերի բոլոր ապօրինի գործողութիւնների մասին բոլոր բնակիչները պէտք է յայտնեն տեղական զօրապետներին: Վերջիններիս պատւիրում եմ ամենախիստ պատիժներ գործադրել մեր օրէնքները և բարի հարևանական յարաբերութիւնները խախտողների դէմ:

Բոլոր առանձին զօրասիւներում պատւիրում եմ հիմնել դաշտային դատարան՝ արագօրէն պատժելու խաղաղ կեանքի հաստատումը խանգարող ակներև ոճրագործներին:

Նախազգուշացնում եմ զօրասիւների պետերին, իրենց շրջանում կատարւած բոլոր անկարգութիւններն ու օրինազանցութիւնները ես կը վերագրեմ իրենց յանցաւոր անգործնէութեանը, որ իրենց ցոյց տւած կը լինին օրէնքներն մեր կառավարութեան կամքը կեանքի մէջ կիրառելու գործում: Յիշեցէք, որ մեր Պետութիւնը անւանւում է *Հայաստանի Հանրապետութիւնում* այսինքն Հայաստանում ապրող բոլոր ժողովուրդների հանրապետութիւն:

*Կառավարութեան* գլխաւոր նպատակն է ստեղծել ազատ կեանք Հանրապետութեան բոլոր ժողովուրդների համար:

Մեր ժողովուրդները հաւասար են ինչպէս քրիստոնեայի, այնպէս և մահմետականի համար: Ով էլ որ խախտի օրէնքը, նա հաւասարապէս պատժում է ամենքին էլ:

Ձեզ եմ դիմում, Կարսի շրջանի բնակիչներ:

Ես իմ զօրքերով մտայ այս շրջանը իմ Կառավարութեան և Դաշնակիցների հրամանով իրենց տուն վերադարձնելու համար իրենց բնակավայրերից կտրւած ինչպէս հայ, անյպէս և մահմեդական գիւղացիներին:

Դարաւոր հարևանները նորէն պիտի վերադառնան բարեկամա-կան կենակցութեան: Բոլոր հողերը, ում կողմից ուզում է զաւթած լինին մեր Հանրապետութեան ամբողջ տերրիտորիայի վրայ, պետք է վերադարձւեն իրենց նախկին տէրերին:

Ամեն մի քաղաքացու դէմ, լինի նա հայ թէ թուրք, որ կը համարձակւի հակառակել ամբողջ աշխատաւոր ժողովրդի այս ամենաօրինական պահանջի անյապաղ կատարմանը, իմ կողմից ձեռք կառնւեն ամենավճռական միջոցներ մինչև մահապատիժ: Այն գիւղերն ու աւանները, որոնք դիմադրութիւն ցոյց կը տան, կը համարւեն օրէնքից դուրս և կրակի ու սրի կը մատնւեն:

Ամեն ոք, ում համար թանկ է իր օջախը, պարտաւոր է զսպել չարամիտ անձերին, որոնք կը կամենան իմ հրամանը խախտելով հարստանալ խաղաղ աշխատաւոր ժողովրդի հաշւին:

Յայտարարում և հրամայում եմ բոլոր բնակիչներին, որ անդրկովկասեան բոները պարտադիր են Հանրապետութեան բոլոր քաղաքացիների համար:

Զօրամասերի հրամանատարներին հրամայում եմ համակւել մեր *Կառավարութեան* գաղափարներով և կարողացածին հնարավորու-թեան չափով սահմանել ամեն տեղ կարգ ու խաղաղ կեանք: Իսկ չարամիտ մարդկանց ենթարկել ամենախիստ պատիժների:

Կարողացածին և հնարաւորութեան չափով օգնել կարօտեալ բնակչութեանը, ինչ ազգութեան էլ որ պատկանելու լինի նա:

Ամեն բան, ինչ որ անհրաժեշտ է զօրքերի համար, գնել կանխիկ դրամով:

Իսկականը ստորագրեց՝ Ալէքսանդրապոլի զօրաբաժնի պետ
Գեներալ-Մայոր Յովսէփեան
Իսկականի հետ ճիշտ է՝ շտաբի պետի պաշտօնակատար
Կորնետ Զուրաբով
Համեմատեց աւագ ադիւտանտ պորուչիկ Մունիտիկով

*ՀԱԱ, Ֆ. 280, ց. 2, գ. 8, թ. 1,*
*Տպագիր օրինակ՝ հայերեն, ռուսերեն և արաբատառ թուրքերենով:*

**No 4**
ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ՆԱՄԱԿԸ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ
*Այն մասին, որ Կարսի մահմեդական հոգևորականներն ու երևելիները ինքնակամ հրաժարվել են քաղաքի սբ.Առաքելոց եկեղեցին շարունակել որպես մզկիթ օգտագործելուց և հանդիսավոր հանձնել են այն հայկական կողմին*
*(2 հունիսի, 1919թ.)*

2 յունիսի 1919թ. N 842 ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐԻՆ

Դեռ X դարում, ինչպես հայտնի յե մեր Աբաս թագավորի որով կառուցվեց Կարսի Սուրբ Առաքելոց տաճարը: Այնուհետեվ այդ յեկեղեցին տարուբերվում էր քաղաքական բախտի առանցքում, մերթ որպես մզկի մերթ ուղղափառ աղոթարան յեվ յերբեք տասնմեկ դար շարունակ մայրենի մրմունջների ապաստարան…
Այդպես է մեր հինավուրց մեծահամբավ տաճարի անցյալը: Մայիսի սկզբներում, յերբ Կարսը անցավ մեր իշխանությանը, ինձ այցելեց վեհափառ կաթողիկոսի հրամանով Ալեքսանտրապոլի փոխանորդ Արշակ վարդապետը յեվ խնդրեց գրավել այդ յեկեղեցին: Քաղաքական միտումներով այն ժամանակ համարելով անհրագործել Վեհափառի պատվերը անհապաղ, յես բացատրեցի փոխանորդին, վոր յես միջոցներ ձեռք կառնեմ վորպեսզի թուրքերը իրանք հանձնեն մեզ այդ յեկեղեցին, առանց մեր պահանջների:
Յեվ այսոր, թուրք հոգեվորականությունը շրջապատված անվանի մեծատուներով, ներկայացավ ինձ յեվ խնդրամատույց յեղավ հետ ստանալու մեր հինավուրց սրբությունը:
Յես պատվիրեցի վոստիկանապետին առաջնորդել այդ պատվիրականությունը դեպի մեր առաջնորդարանը յեվ Սուրբ Առաքելոց հնադարյան տաճարը այսոր հանդիսավոր կերպով հանձնվեց մեզ:
Այս դարավոր կամարների տակ ամսիս 8-ին առաջին անգամ մեր մայրենի լեզվով մենք կառաքենք մեր ցնցագին սպասելիքները առ մեր ժողովրդական կառավարությունը յեվ այդ բոլորի մասին յես պարտք համարեցի զեկուցանելու Ձերդ գերազանցության:

ՆԱՀԱՆԳԱՊԵՏ՝ (ՂՈՐՂԱՆՅԱՆ), ԴԻՎԱՆԱՊԵՏ՝ (Ռ. ՉԱԼԽՈՒՇՅԱՆ), ԳՈՐԾԱՎԱՐ՝ (Մ. ԴՈՒԽԻԿՅԱՆՑ)

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 2, գ. 611, թ. 1, պատճեն, մեքենագիր*

## No 5
## ԿԱՐՍԻ ՓՈԽՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ԶԵԿՈՒՅՑԸ ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻՆ

*Գեներալ Հովսեփյանի մի հայտարարության մասին՝ իբր Կարսի փոխնահանգապետը պետության բարձրագույն իշխանության ներկայացուցիչների շրջանում հայտարարել է, որ Արդահանի վարչակազմի ղեկավար գնդապետ Կադիմովը վարում է հակապետական, դավաճանական գործունեություն (19 հուլիսի, 1919թ.)*

19.07.1920 КАРССКОМУ ГУБЕРНАТОРУ Секретно

Рапортъ.

По дошедшимъ до меня свѣдѣніямъ, Начальникъ Карсскаго отряда Генералъ Маіоръ Осепянцъ въ присутствіи Предсѣдателя Парламента Саакяна, Вашемъ и другихъ высокоставленныхъ лицъ заявилъ, что якобы я ему говорилъ, что убѣдился въ томъ что полковникъ Кадымовъ,

Начальникъ Ардаганскаго округа, возглавляетъ собою измѣнниковъ, работающихъ противъ Арменіи и что онъ съ 300 милиціонеровъ обстрѣлялъ нашихъ солдатъ и что якобы я окончательно убѣдился въ томъ, что онъ, Кадымовъ измѣняетъ Арменіи. Настоящимъ имѣю заявить, что: 1/ я не уполномачивалъ Генерала Осепянца дѣлать отъ моего имени подобнаго рода заявленія, 2/ будучи Вице Губернаторомъ Карсской области и, узнавъ объ измѣнѣ или будучи увѣренъ въ измѣнѣ Начальника Округа, я бы счель своимъ служебнымъ долгомъ донести объ этомъ своему прямому начальству, въ данномъ случаѣ Вамъ, ибо въ противномъ случаѣ, могъ бы быть справедливо сочтенъ за соучастника въ преступленіи, но отнюдъ не дѣлатъ таковыхъ откровеніи Генералу Осепянцу, хотя и занимающему высокій постъ въ Арменіи вообще и въ Карсской Области въ частности, но прямого отношенія къ подчиненнымъ хамъ лицамъ администраіи не имѣющему, 3/ Ничего подобнаго я Генералу Осепянцу не говорилъ. Относительно того, что “Кадымовъ съ тремя стами милиціонерами обстрѣливалъ” наши войска или же нашихъ милиціонеровъ или приверженцевъ, уже по одному тому не могъ бы сказать, что мнѣ то ужъ во всякомъ случаѣ хорошо извѣстенъ на личный составъ милиціи области и Ардаганскаго округа.
Что касается заявленія о томъ, что я “убѣдился въ измѣнѣ полковника Кадымова”, то въ этомъ вѣрно только то, что Генераль Осепянцъ пытался меня УБЕДИТЬ въ этомъ, но не сумѣлъ.
Слухи объ “измѣнѣ” Кадымова циркулируютъ давно и все изъ одного и того же источника-Мерденека. Еще въ прошломъ году разнаго рода “агенты” писали въ своихъ донесеніяхъ по начальству, что “Кадымовъ Разьѣзжает по селамъ, агитируеть противъ Арменіи и Совѣтуетъ мусульманамъ все продатъ и взамѣнъ купить Себѣ оружіе.” Еще вь прошломъ году меня пыталисъ на основаніи подобныхъ писемъ Убѣдить въ его Измѣнѣ, но я, читая донесенія Кадымова съ одной стороны, а съ другой, принимал во вниманіе, что онъ слишкомъ уменъ, чтобы разьѣзжатъ по селамъ и вести такую пропаганду, не могъ, конечно убѣдиться въ “Измѣнѣ”. Потомъ были случаи, когда перехватывали письма, съ подписью “Ибрагимъ”, но затѣмъ сами же Убѣждалисъ, что неправы. Затѣмъ были разнаго рода обвиненія противъ Кадымова, что якобы чуть ли не онъ самъ организовываетъ возстанія въ Зарушатѣ, Агдабѣ и, главное въ Чалдырѣ, но и этому я никогда не могъ придать никакого значенія, такь какъ самъ же Кадымовъ въ своихъ секретныхъ рапортахъ на Ваше имя просилъ о присылкѣ воинскихъ частей для пресѣченія мятежнаго настроенія и для усмирѣнія повстанцевъ..
Особенно остро быль поставлень вопросъ о Кадымовѣ въ концѣ августа прошлаго года, когда насъ постигли неудачи подъ Беюкъ Веди, Шаруромъ, Нахичеванномъ, возникло движеніе въ Духурѣ и Хоросанѣ. Тогда изъ “достовѣрныхъ источниковъ” возникли свѣдѣнія, что Кадымовъ подниметъ возстаніе въ Ардаганском округѣ, но и эти “достовѣрныя” Свѣдѣнія не оправдались. Нынѣ вновь возникло такое предположеніе въ связи съ Дѣломъ Арпашенскаго старшины Бахри бека. Не касаясь виновности или невиновности старшины Бахри, подозрѣваемаго въ шпиіонажѣ,

я считаю, что весь инцидентъ созданъ благодаря распоряженiю военныхъ властей вообще и Генерала Осепянца въ частности лично отдавшаго приказъ объ арестѣ его военными в властями. Бахри лицо должностное- непосредственно Начальнику участка, слѣдовательно его надо было арестовать черезъ администрацiю, но Генералъ заявилъ, что онъ "не довѣряетъ администрацi". Сначала быль посланъ для ареста поручикъ, который не сумѣлъ справиться со своею задачей и только осложнилъ дѣло, потомъ, вмѣсто того, чтобы обратиться къ содѣйствiю администрацi, былъ послан хужанный отрядъ подъ начальствомъ Серго, который, окруживъ Бахри на Арпашенской яйлѣ, открылъ стрѣльбу, бросалъ ручныя бомбы и все таки неуспѣшно. Все это страшно перепугало населенiе, которое хотѣло бѣжать изъ Гельскаго участка. Между тѣмъ было бы проще обратиться къ содѣйствiю администрацiи, если бы ею приказъ не былъ исполненъ, то привлечъ къ законной отвѣтственности виновныхъ, начиная отъ Полковника Кадымова...

Бесѣдуя со мною, Генераль Осепянцъ увѣрялъ меня, что "Кадымовъ поддерживаетъ Бахри, что онъ безусловно измѣняетъ, что онъ посылаетъ изъ Хаскейскаго района курдовъ на помощь Бахри сражаться противъ насъ "и т.д. Далѣе Генералъ меня увѣрялъ, что въ Гельскомъ участкѣ готовится возстанiе противъ насъ. Послѣднему я совершенно отказался вѣрить, такъ какъ, во первыхъ Полковникъ Кадымовъ ручался головою за участниковъ, во вторыхъ я въ бытность свою нѣсколько дней назадъ въ Гельскомъ участкѣ видѣль, насколько запугано курдское населенiе, которое просило меня назначить во всѣ курдскiя села армянъ милицуонеровъ, а населенiе, желающее возстать такихъ ...о сѣбѣ заявлять не будетъ..Относительно Кадымова же я ему сказалъ: "Слухи о томъ, что Кадымовъ собирается измѣнить намъ ходятъ давно, но, если Кадымовъ не измѣнилъ намъ въ прошломъ году, когда мы потеряли Веди, Шаруръ, Нахичеванъ, когда въ 5-6 верстахъ отъ нашейъ столицы находился враждебный намъ Зангибасаръ, когда Шайналаръ грозилъ отрѣзать Карсъ отъ Александрополя и происходили событiя въ Чухурѣ, то теперь. Когда мы заняли Зангибасаръ, Беюкъ Веди, Пенякъ- я совершенно не допускаю измѣны съ его стороны. Кадымовъ, если бы и измѣнилъ только въ томъ случаѣ развѣ, если бы турецкiе полки вошли бы въ Ардаганъ. Вотъ каковы были разговоры и ясно, что изъ всего этого можно заключить только одно, что Генералъ Осепянцъ хотѣлъ меня убѣдить въ томъ, что Кадымовъ является для Арменiи измѣнникомъ. Я же всегда то отрицалъ ибо мне, какъ и вашему превосходительству, какъ и нашему правительству, прекрасно были извѣстны доклады полковника Кадымова.

Такимъ образомъ слова, сказанныя Генераломъ Осепянцемъ въ присутствiи вышепоименованныхъ лицъ на вокзалъ, выражали его личное убѣжденiе и, чѣмъ руководился онъ, приписывая ихъ мнѣ - для меня непонятно.

Прошу Вась довести обо всемъ вышеисложенномъ до свѣдѣнiя Предсѣдателя Парламента и г. Министра Внутреннихъ Дѣлъ.

И.д. Вице Губернатора подпись

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 50, թթ. 27-28, պատճեն, մեքենագիր*

**No 6**
**ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ**
**ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ**
*Օլթիի շրջանում և հայկական կողմի իշխանությունը փարածելու և Էրզրումի վալիի կողմից սուտ տեղեկություններ անգլիական կողմին փոխանցելու մասին*
*(21 հուլիսի, 1919թ.)*

21июля 1919 — Министру Внутреннихъ Дѣлъ.
2234 — вх.5976

Посѣтившій сегодня меня представитель англійской миссіи Капитанъ Проссеръ заявилъ, что 14-го сего мѣсяца онъ уѣзжаетъ въ Ольты для ознакомленія съ положеніемъ и затѣмъ уже наша власть можетъ занять этотъ округъ. Съ нимъ ѣдетъ туда представителъ американскаго комитета. На заявленіе мое, что курды сами безчинствуютъ, а Эрзерумская англійская миссія со словъ турецкихъ властей жалуется въ этомъ смыслѣ на армянъ, Проссеръ отвѣтилъ, что на дняхъ быль у него проездомъ англійскій офицеръ и наоборотъ, говоритъ, что со стороны армянъ не было ни одного выступленія.
Эрзерумскую англійскую миссію со словъ Капитана Проссера вводитъ въ заблужденіе Эрзерумскій Вали. Въ дальнѣйшей же бесѣдѣ, Капитанъ Проссеръ заявилъ, что вопросъ о мирѣ съ Турціей затянется мѣсяцеяъ на шесть т.к. Англія, имѣя въ своихъ владѣніяхъ много мусульманъ, вынуждена считаться съ Турецкимъ Султаномъ, какъ Халифомъ правовѣрныхъ.
Недѣли двѣ тому назадъ по агентурнымъ свѣдѣніямъ, исходившимъ изъ англійской миссіи, миссія въ скоромъ должна была оставитъ Карсъ. Нынѣ, говорятъ, выѣздъ ея отложенъ.
Объ изложенномъ для свѣдѣнія и.ч. представить
Вашему Превосходительству.

ГУБЕРНАТОРЪ *ստորագրություն*
Правитель Канцеляріи *ստորագրություն*
Дѣлопроизводитель *ստորագրություն*

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 39, թ. 37 և շրջ., պատճեն, մեքենագիր*
*Գրված է Կարսի քաղաքացիական նահանգապետի՝ հայերեն և ֆրանսերեն լեզուներով դրոշմակնիքով պաշտոնաթերթի վրա:*

## No 7
## ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ
*Կարսի մարզում պետական կառույցներն ու իշխանությունը ամրապնդելու ուղիների մասին*
*(13 օգոստոսի, 1919թ.)*

Министру Внутреннихъ Дѣлъ.

Въ послѣднее время, въ свзи съ Беюк-вединской, вѣроятно, исторіей, ходятъ масса фантастическихъ слуховъ. Но, эти свѣдѣнія приходятъ, главнимъ образомъ, изъ Александрополя, гдѣ публика, видно, панически настроена и это передается во всѣ стороны. Въ отношеніи Карсской Области, я долженъ сказатъ, что всѣ разговоры о какихъ-то новыхъ усиленныхъ вооруженіяхъ среди мусульманъ не вѣрны. Мусульмане въ этой Области за эти два года анархіи вооружились настолько хорошо, что дальше идти въ этомъ напровленіи некуда. Сейчасъ же послѣ переворота, когда власть въ Губерніи были захвачена кучкой крикумовъ, Кантемировъ, /... видный членъ Горскаго Правительства/, бывші въ числѣ Карсскихъ Заправилъ и за цѣлую голову, конечно, выше всѣхъ нихъ стоявшій, вертѣлъ судьбами Области, какъ хотѣлъ. Лихорадочно начали вооружаться, по праву-всѣмъ татарамъ давалось право на ношеніе оружія, а затѣмъ, всѣ склады оружія и патроновъ въ Карсѣ были къ ихъ услугамъ. И въ настоящее время, въ домѣ каждаго мусульманина есть не менѣе 5 ружей, а патронамъ и нѣтъ счета. При такихъ условіяхъ разговоры нашихъ дней, что татары усиленно вооружаются являются лишь пересказомъ прошлаго.

Послѣ занятія нами Области, порядокъ крѣпулъ съ каждымъ днемъ, народъ шелъ къ намъ и вся обстановка давала намъ основаніе думатъ, что жизнъ войдетъ, наконецъ, въ с вою колею. Я испульзуюсъ еще разъ случаемъ говоритъ, что татары въ громодной массѣ, также устали и народъ охотно пойдетъ въ сторону мира и порядка. Но интрига и козни идутъ со стороны, идутъ изъ Баку и слѣдователей поставляются исцы, судебные пристава, секретари, то удивляться такому же пестрому составу администраціи, конечно, не приходится.

Военное вѣдомство переживаетъ тѣ же потуги. Громадный процентъ офицерства не имѣетъ не только ничего общаго съ идеей нашей національной чести и нашихъ задачъ, но и съ духомъ оружія. И странно, что нѣтъ подъема, нѣтъ высокихъ чувствъ въ моментъ, когда передъ нами тотъ просторъ, у пороговъ котораго покоится столько думъ, крови, труда и высокихъ когда-то восторговъ.

Представляя этотъ обзоръ моихъ наблюденій, я еще разъ хотѣлъ бы сказатъ, что насъ можетъ отрашитъ только турецкое нашествіе. Помышлятъ о вооруженномъ этому сопротивленіи намъ не приходится, конечно. Но, внѣ этой угрозы мы можемъ справиться съ

нашей гражданской задачей съ честью, если въ ряды нашихъ работниковъ пойдетъ наша интеллигенція.

Мы должны безотлагательно начать наше государственное строительство, мы должны занять народъ работой и перспективой достатка удобствъ, приволья и покоя. И страна пойдетъ за нами покорно.

Десятки лѣтъ изучалъ провинцію и съ чувствомъ большого удовлетворенія свидѣтельствую, что нашъ народъ оченъ законопокоренъ и въ той же мѣрѣ закововѣренъ. Многое и очень многое зависитъ отъ насъ. Оплатимъ втройнѣ трудъ интеллигенціи, не призовомъ ее, иначе мы обанкротимся не только въ нашихъ чаяніяхъ и надеждахъ, но и въ рамкахъ дѣйствительности, гдѣ по незыбленымъ законамъ природы, все покоится на устояхъ широкаго подбора.

ГУБЕРНАТОРЪ *ստորագրություն*
Правителъ Канцеляріи *ստորագրություն*
Дѣлопроизводителъ *ստորագրություն*

*ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 353, թ. 32, 33, պատճեն, մեքենագիր*
*Գրված է Կարսի քաղաքացիական նահանգապետի՝ հայերեն և ֆրանսերեն լեզուներով դրոշմակնիքով պաշտոնաթերթի վրա:*

## No 8

## ԱՐԴԱՀԱՆԻ ՄԻԼԻՑԻԱՅԻ ՊԵՏԻ ԶԵԿՈՒՅՑԸ ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻՆ

*Օլթուգում փիրող իրավիճակի մասին*
*(16 օգոստոսի, 1919թ.)*

НАЧАЛЬНИКЪ МИЛИЦІИ Копія.
Ардаганскаго округа Секретно.
"16" Августа 1919г. Губернатору Карсской Области.
№16.
Гор. Карсъ. РАПОРТЪ.

Доношу, что общее политическое положеніе Ардаганскаго округа въ связи съ межнаціональными отношеніями въ настоящее время крайне тревожно и внушаетъ серъезныя опасенія. Въ Ардагано-Ольтинскомъ районѣ слишкомъ рѣезка столкнулись территоріальные интересы Правительствъ Арменіи, Грузіи и Турціи тѣсно связанные и базирующіеся на между-національной враждѣ населенія. Въ районѣ ведется усиленная агитація и пропоганда со стороны грузинскаго Правительства и мусульманъ Ольтинскаго района. Одновременно съ этимъ происходитъ повсѣ местная концентрація войскъ въ пограничныхъ районахъ, Грузино-Азербейджанскія войска бозируясь на Ахалкалаки и Ахалцыхъ высылаютъ разъѣзды и ведутъ усиленную расвѣдку до Ханіорскаго перевала Сѣверной части Ардаганскаго Округа. Одно временно съ этимъ ими ведутся дипломатическіе переговоры съ Эрзерумомъ и на съѣздѣ представителей 7 турецкихъ

вилаетовъ присутствовали полномоъные грузинскіе и Адербейджанскіе делеганты. На фронтахъ Ольтинскаго Округа идетъ лихорадочная работа и все время изъ Эрзерума продолжаютъ прибывать части усиленно приготовляющіяся къ наступательнымъ операціямъ, начало каковыхъ ставится въ зависимость отъ рѣшенія турецкаго вопроса мирной конференціей. Въ настоящее время въ эрзерумѣ помимо расположенной тамъ 9-ой дивизіи, несущей пограничную службу, имѣются также и добровольческія части въ количествѣ 10000 штыковъ при артиллеріи и кавалеріи. Все время происходитъ усиленный притокъ добровольцевъ, чтобвъ связи съ объявленной поголовной отъ 20 до 60 лѣтъ мобилизаціей даетъ большой процентъ новобранцевъ. Всѣмъ формирояаниемъ завѣдуетъ и главное командованіе возложено на Шефти-Пашу, штабъ котораго находится въ Эрзерумѣ. Командующимъ передовымъ авангарднымъ отрядомъ Ольтинскаго фронта является Бимбаши Джафаръ-бекъ, штабъ котораго находится въ Ольтахъ. Политическое положеніе Ардаганскаго Округа при неудачной операціи войскъ Мердененскаго населенія, почему и представляется крайне необходимымъ обезпечитъ тщательно тылъ и провести операцію удачно.
Подлинное подписалъ: Начальникъ Милиціи, Поручикъ №
Съ подлиннымъ вѣрно:
Помощникъ Директора Канцеляріи Министерства
Внутреннихъ Дѣлъ *ստորագրություն*
Настоящая копія, по распоряженію Министра Внутреннихъ Дѣлъ, препровождается въ Военное Министерство для свѣдѣнія.

Августа “26” дня 1919 года. Гор. Эриванъ.

Директоръ Общаго Отдѣла *ստորագրություն*
Помощникъ Директора *ստորագրություն*
Дѣлопроизводителъ *ստորագրություն*

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 62, թ. 63*

## No 9

## ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ՆԱՄԱԿԸ ԵՐԿՐԻ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ

*Էրզրում ուղարկած գործակալի զեկույցի և Կարսի մարզում իշխանության անելիքների մասին*
*(19 օգոստոսի, 1919թ.)*

19 августа 1919 г. No 3309
г.Карсъ Предсѣдателю Совѣта Министровъ.
Посланный за свѣдѣніями въ Эрзерумъ агентъ сообщаетъ, что въ Эрзерумѣ и его окрестностяхъ стоитъ 15 корпусъ, командиромъ котораго состоитъ Мустафа Кямилъ Паша. На границѣ въ Кетакѣ, Зияинѣ стоятъ гаубицы, кои, по отзывамъ турокъ, приготовлены “для нашихъ друзей

армянъ”. Вооруженіе, снаряженіе, обмундировка-великолѣпны, люди сыты. Но, въ странѣ нищета, голодъ, разложеніе, уныніе и упадокъ силъ.
Въ Эрзерумѣ есть армяне, но они принижены. Всю эту готовность турецкихъ войскъ связываютъ съ вопросомъ о шести вилаетахъ. Наступать турки, по свѣдѣніямъ и обстановкѣ, не думаютъ, приготовляются лишъ датъ намъ отпоръ, на случай продвиженія нашего къ занятію Эрзерума и дальше. Но, вмѣстѣ съ тѣмъ, говорятъ, что турецкіе аскеры, переодѣваясъ въ куртдское платье, проходятъ къ намъ, чтобы вызвать безпорядки.-
По моему глубокому убѣжденію, мѣстные татары и курды, если турецкія войска будутъ сидѣтъ на своихъ мѣстахъ, намъ не страшны. Большинство ихъ, во первыхъ, хочетъ мира и покоя, а съ остальными мы справимся сами. Властъ наша должна быть хладнокровна и спокойна, мы должны заниматься гражданской работой, какъ ни въ чемъ не бывало и тѣмъ самымъ охлаждать чуткіе нервы и вносить въ страну успокоеніе.
Когда на базарѣ появляются вздорные слухи, въ душѣ меня очень волнующіе и безпокоящіе, я усиленно будирую гражданскія потребности страны и энергично заставляю своихъ сослуживцевъ заниматься дѣломъ строительства, внутренними запросами. Это разряжаетъ воинственно-паническую атмосферу и слухи эти становится несостоятельными.-
Мы обязаны не мѣнятъ этой обстановки до послѣдняго момента и должны всемѣрно сохранитъ спокойствіе. Малѣйшая безтактностъ -мы потеряемъ всѣ.
Болѣе подробно я говорилъ по сему съ Товарищемъ Министра Г.С. Ягджьяномъ и членомъ Парламента Г. Казарьянцемъ,-
ГУБЕРНАТОРЪ *ստորագրություն*
Правителъ Канцеляріи *ստորագրություն*
Дѣлопроизводителъ *ստորագրություն*

*ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 353, թ. 27 և շրջ. 28, պատճեն, մեքենագիր*
*Գրված է Կարսի քաղաքացիական նահանգապետի՝ հայերեն և ֆրանսերեն լեզուներով դրոշմակնիքով պաշտոնաթերթի վրա:*

## No 10
## ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ԳԱՂՏՆԻ ԶԵԿՈՒՅՑԸ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ
*Հայաստանի արևմտյան սահմաններում քրդերի հակահայկական փրամադրությունների և Թուրքիայի արևելքում Պոլսին չենթարկվող թուրքական նոր իշխանության ձևավորման մասին (24 օգոստոսի, 1919թ.)*

№3475 Секретно. 24 Августа 1919
Министру Внутреннихъ Дѣлъ.
Англійскій Капитанъ Проссоръ, ѣздившій на свиданіе съ курдами въ Сурмалиснкій уѣздъ черезъ Кагызманъ сообщаетъ: Эриванскіе и турецко-

поданные курды собрались въ Ахчай Сарибулахскомъ раіонѣ. Къ этому мѣсту собрались и курды Кульпинскаго, Алагезскаго и Игдырскаго раіоновъ. Курды изъ Алагезскаго и Игдырскаго раіоновъ были вынуждены оставить свои очаги изъ за того, что были притеснены армянами. Армяне ихъ грабили и убивали. Скоро наступятся холода и оне не имѣютъ возможности зимовать подъ открытымъ небомъ. Турція ихъ не принимаетъ. Вслѣдствіе этого и принимая во вниманів, что они не желаютъ съ армянами житъ и армянскаго правительства не признаютъ, они рѣшили сами вытѣснитъ армянъ изъ означенныхъ раіоновъ, а равно и изъ Кагызманскаго и Хорасанскаго участковъ, размѣстивъ тамъ своихъ и сбразоватъ свое правительство. Помиму этого, они высказали свое неудовольствіе по поводу того, что былъ казненъ сынъ Мернаго Шейха. На вопросъ мой, можемъ-ли мы противостоятъ противъ курдовъ Ахчей-Сарибулахскаго раіона, англичане отвѣтили: “да”, если наши силы будутъ увеличены въ Кагмазманѣ и тамъ будетъ артиллерія не менѣе 8 пушекъ и сосбразно съ этимъ пѣхота. Затѣмъ, они сообщили, что Абдулъ Меджитъ организуетъ кавалерію и далъ слово помочъ курдамъ въ скоромъ будущемъ. Мнѣ же извѣстно, что Абдулъ Меджитъ, дѣйствительно организуетъ кавалерію въ составѣ 3 эскадроновъ, но эти силы оставлются исключительно въ распоряженіи Эрзерумскаго правительства, которое не подъ какимъ нидомъ не желаетъ уступитъ армянамъ 6 вилаетовъ.
Вчера ко мнѣ явился одинъ мусульманинъ и просилъ разрѣшенія переселиться изъ Турціи въ Кагызманскій участокъ. На вопросъ мой почему онъ оставилъ свое мѣстожительства и теперъ опятъ желаетъ поселиться, курдъ этотъ отвѣтилъ лаконически: “Въ Мили-Шуринскомъ Правительствѣ жить нельзя.” Это означаетъ, что въ Эрзерумѣ образовано правительство, которое не желаетъ подчиниться Константинопольскому и само распоряжается какъ желаетъ, а такое правительство, занятое исключительно грабежомъ своего населенія, не можетъ имѣтъ подъ собою реальной почви, какъ это доказалъ опытъ образованія Карсской “Милли-Шуры”.

ГУБЕРНАТОРЪ *ստորագրություն*
За Правителя Канцеляріи *ստորագրություն*
Дѣлопроизводителъ *ստորագրություն*

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 6, թ. 16, 17, պատճեն, մեքենագիր*
*Գրված է Կարսի քաղաքացիական նահանգապետի՝ հայերեն և ֆրանսերեն լեզուներով դրոշմակնիքով պաշտոնաթերթի վրա:*

## No 11
## ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ՈՒՂԻՂ ԿԱՊՈՎ ԽՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՅԱՅԻ ՀԵՏ
*Էրզրումում թուրքական զինուժի մոբիլիզացիայի և Կարսի մարզում փիրող իրավիճակի մասին*
*(26 օգոստոսի, 1919թ.)*

Разговор по прямому проводу с Карсским Губернатором Коргановым
Августа 26го Дня 1919 года между 8 и 9 ч. вечера

“По моим свѣдѣніям, полученным только вчера с границы, куда я посылал Адиль бека, явствует, что турки наступать не намѣрены а мобилизація 4го корпуса производится на случай вторженія армян в Эрзерум. Лично я склонен вѣрить этому, нахожу, что выступленія, кои имѣли мѣсто до сего являются дѣлом курдских банд, сред которых были и турецкіе четники. В Кагызманском направленіи все спокойно, Карсском округѣ тоже. Ардаганѣ было совершенно спокойно до сегодняшняго дня, но сегодня телеграф поврежден и свѣдѣнія не имѣю. Мобилизацію 32 лѣтних я начал давно и идет она успѣшно В г. Карсѣ и окрестностях полная тишина и мирное обычное настроеніе. Англичане собираются уѣзжать. Заявленіе их о большой для нас опасности я не придаю особаго значенія, во первых потому что они освѣдомлены одностроенне, а я знаю во всяком случаѣ больше их, за тѣм они вчера находились под вліяніем (впечатлѣніем) случая обстрѣла их курдами и пораненія солдата, затѣм я имѣю свѣденія (данныя) говорить, что они сами панически настроены. Изложенные основываем на совокупности большого матеріала, коим расположеніям. Я убѣжденный сторонник сохраненія стараго, настоящаго положенія и еще раз повторяю, что мы держались здѣсь не на штыках и теперь один наш шаг назад повлечет со стороны противника 20 шагов вперед.”

Вѣрно: Правитель канцеляріи Карсскаго Губернатора *ստորագրություն*

*ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 353, թ. 47 և շրջ., պատճեն, մեքենագիր*

## No 12
## ԳՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ

*Հավարարիմ կեցվածքի և արդյունավետ աշխատանքի համար Արդահանի գավառապետ Կադիմովին շնորհակալություն հայտնելու մասին*
*(26 սեպտեմբերի, 1919թ.)*

В т о р и ч н о е

М.В.Д.
МИНИСТРЪ
Внутреннихъ Делъ
РЕСПУБЛИКИ АРМЕНИИ
No 5874
26 сентября 1919г.
Гор. Эривань

Господину Карсскому Губернатору
Прошу Вас объявить Начальнику Ардаганскаго Округа ИБРАГИМЪ-БЕКЪ КАДЫМОВУ что ознакомившись изъ Вашихъ донесеній с полезной дѣятельностью начальника округа Ибрагимъ-Бекъ Кадымова и относя порядокъ и спокойствіе в этом округѣ к его такту и умѣнію править порученным ему районом прошу Вас передать Ибрагиму-

Беку Кадымову мою благодарность и завѣрить его, что онъ всегда может рассчитывать при такомъ образѣ действвій на должное отношение Правительства къ его заслугам.

МИНИСТР ВНУТРЕННИХЪ ДЕЛЪ

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 172, թ. 48, պատճեն, մեքենագիր*

**No 13**

ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ՈՒՂԻՂ ԿԱՊՈՎ ԽՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՕԳՆԱԿԱՆ ՄԱՆԱՍՅԱՆԻ ՀԵՏ

*Մարզում երկաթգծի վիճակի և զինվորներին տաք շորեր ուղարկելու մասին*

*(1919թ. աշուն)*

պ. Մանասեանի խօսակցութիւնը ուղիղ հեռագրաթելով Ղարսի նահանգապետին հետ.

Մանասեան.- Երկաթուղու վարչութիւնը յայտնում ե որ Քիւրիւկ Դադա եւ Կարաեալ կայարանների շրջանում դրութիւնը անհանգիստ է եւ կարող է երթեւեկութիւնը դադարել…

Ղորղանեան.- Արդէն ես հասկանում եմ եւ այդ առիթով աւելացնում եմ, որ այնտեղ հանգիստ է, գաւառապետը այնտեղ է, զանազան պաշտօնական գործերով ուր տարել է աղ եւ նաւթ, գլխաւորապէս Աղբաբայի համար, երեկ էլ ինձ մօտ էր Աղբաբայից մի անւանի թուրք, որը հաւաստացրեց նոյնը,

Մանասեան.- Խնդրեմ այդ մասին Դուք պաշտօնապէս յայտնէք երկաթուղու պետին, որ այնտեղ հանգիստ է եւ վտանգ չկայ: Եկաւ Ձեզ մօտ արդեօք Ալեքսանդրապօլի գաւառական կոմիսարը

Ղարղանեան.- Լօռեցեանը եւ Գէորգ Ղազարեանը եկան այն եզրակացութեան, որի մասին բազմիցս խնդրել եմ եւ հեռագրել, շտապեցնէք ուղարկելու զինւորների տաք շոր, գլխաւորապէս վարտիկներ.

Մանասեան.- Շնորհակալութիւն ցտեսութին.

Ղորղանեան.- Ընդունեցէք յարգանքս, բայց ասացէք երբ կարող ենք ստանալ շորերը.

Մանասեան.- Չեմ կարող ասել, ես միայն յայտնում եմ, զօրական Մինիստրին:

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 48, թ. 5 և շրջ., պատճեն, մեքենագիր*

## No 14
## ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ
## ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ
*Մարզում հարկերի տեսակը փոխելը հղի է մեծ չարաշահումներով*
*(8 նոյեմբերի, 1919թ.)*

N 5195, 8 ноября 1919г.
г.Карсъ N 11038
На N 10402 Министру Внутреннихъ Дѣлъ.

Имѣю честь увѣдомить, что переложеніе податей на натуральную повинность скотомъ я признаю невозможнымъ, ибо это повлечетъ большія злоупотребленія.

| | |
|---|---|
| ГУБЕРНАТОРЪ | *ստորագրություն* |
| И. Д. Правителя Канцеляріи | *ստորագրություն* |
| Дѣлопроизводителъ | *ստորագրություն* |

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 39, թ. 184, պատճեն, մեքենագիր*
*Գրված է Կարսի քաղաքացիական նահանգապետի՝ հայերեն և ֆրանսերեն լեզուներով դրոշմակնիքով պաշտոնաթերթի վրա:*

## No 15
## ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ
## ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ
*Պետական պաշտոնյա դարձած նախկին ուսանողի թալանով զբաղվելու մասին*
*(1 դեկտեմբերի, 1919թ.)*

Министру Внутреннихъ Дѣлъ и дипл. предст. въ Грузіи

Въ дни переворота въ Карсѣ студентъ Рштуни взбираясь на столъ, поставленный среди улицы, горячо говорилъ о народѣ, свободѣ и паденіи произвола. Рштуни по рекомендаціи былъ назначенъ мною Начальникомъ участка и здѣсь, перейдя отъ словъ къ дѣлу, онъ занялся поборами. Разслѣдованіемъ выяснилось, что онъ грабилъ курдовъ, армянъ и черезъ отца своего, живущаго въ сосѣднемъ участкѣ, самъ лично продавалъ награбленное у народа добро. Узнавъ что производится разслѣдованіе онъ прислалъ производителю дознанія 3500 рублей съ просьбой замять дѣло.Дознаніе дало большой матеріалъ слѣдствію и къ характеристикѣ этого дѣятеля, еще вчера съ пѣной у рта съ трибуны распинавшагося за народъ и свободу. Арестованъ отецъ его, и когда было сдѣлано распоряженіе объ арестѣ самаго Рштуни онъ видимо извѣщенный бѣжалъ на станцію Алагезъ и оттуда вѣроятно Тифлисъ куда посланъ за нимъ агентъ.

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 2, գ. 188, թ. 8, պատճեն, մեքենագիր*

## No 16
## ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ
*Կարսում փոստային հաղորդակցության վերականգնման անհրաժեշտության մասին*
*(20 դեկտեմբերի, 1919թ.)*

Բացատրական

Նախանձախնդիր լինելով Հայաստանի Հանրապետութեան կուլտուրական զարգացման և ի նկատի ունենալով Ղարս ներկայ թէ քաղաքային և թէ գաւառային գործերի և կանքի յետամնաց լինելը, ես անհրաժեշտ և անյետաձգելի եմ համարում Ղարսի շրջանում փոստային հաղորդակցութեան վերականգնումը:

Հաղորդակցութեան վերականգնումը մեծ զարկ պիտի տայ շրջանի վարչական, առևտրաարդիւնաբերական և կուլտուրական գործերի յառաջադիմութեանը և պիտի նպաստի մարդկանց տեղափոխմանը, մանաւանդ պետական գործերով երթևեկող պաշտօնական անձանց ամբողջ շրջանումը ցրւած զօրամասերի մէջ կապ պահպանելուն, շրջանի պահակների քանակը և ոյժը մեծացնելուն և վերջապէս տեղացիներին, ինչպէս մասնաւոր, այնպէս և զինւորական մանր պէտքերի համար.– նոցա սայլերը շահագործելուց ազատելուն:

Այս գործի յաջողութիւնը մի այլ մեծ պետական նշանակութիւն ևս ունի, այն է՝ շրջանումը մեր պետութեան ազդեցութեան ուժեղացումը:

Ինչ վերաբերում է հաղորդակցութեան միջոցներին կամ տեսակին, ես գերադասելի եմ համարում ձիաւոր կառքերը, քանի որ աւտօմօբիլային կարևոր մասերը և նոյն աւտօմօբիլները ձեռք բերելու հնարաւորութիւն չկայ ներկայ պարագաներում:

Այնուհետև անկարելի է յուսալ մասնաւոր կապալառուների վրայ, որովհետև մասնաւոր մարդկանցը կամ կազմակերպութեանը ներկայ կենսական պահմաններում ձեռնտու չի ստանձնել նման բարդ գործը՝ մթերքների և գործի համար և այլ անհրաժեշտ իրերի ոչ միայն գների աճման այլ և նրանց չգտնուելու պատճառով:

Այս հարցի առթիւ VIII շրջանապետ, ճարտարապետ Քոչարեանը Ղարսի նահանգապետին ներկայացրել է իր մշակած նախահաշիւը, որի համաձայն տւեալ թւերը ամենևին չեն համապատասխանում իրական պայմաններին: Վերջինի դիմաց գլխաւոր ճարտարապետական վարչութիւնը մեզ ներկայացնում է մի այլ նախահաշիւ, որի համաձայն փոստի կազմակերպութեան և վեց ամիս պահելու համար պահանջւում է 1.500.000 ր.: Այս գումարը աւելի մօտ գտնելով գործի իսկական պահանջին, ես ևս իմ կողմից անհրաժեշտ եմ գտնում միջնորդել այդ մեծ կարևորութիւն կրող գործին 1.500.000 ր. վարկ բաց թողնելու համար: Ի վերջոյ պիտի աւելացնեմ, որ այց փոստը կոչւելու է՝ «Պետական փոստ» և ոչ թէ Զեմստւային, որովհետև Զեմստվօն ոչ մի ձևով մասնակից չի այս ձեռնարկութեանը:

Սոյն հարցի վերաբերմամբ արդէն ստացւած է ֆինանսների մինիստրի համաձայնութիւնը:

Այսու խնդրում եմ Մինիստրների խորհրդից, հաւանութիւն տալով օրինագծին, ներկայացնել Հայաստանի պարլամենտին ի հաստատութիւն:

Ներքին գործոց մինիստր՝ Գիլիխանդանեան:
20.XII.1919թ.:

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 309, թ. 4 և շրջ., ձեռագիր*

**No 17**
ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԵՌԱԳԻՐ
*Զարաբխանա գյուղը գրավելու վերաբերյալ*
*(25 դեկտեմբերի, 1919թ.)*

25.12.1919г.

Копія съ телеграммы Начальника Хорасанскаго участка отъ 25 декабря 1919 года за №1350. Карсскому Губернатору.

21 сего приказано было перейти наступленіе на Зарабхану точка Мною послано на лѣвый флангъ шесть милиціонеровъ, во главѣ помощникомъ моимъ Ятаганджевымъ, а самъ выѣхалъ на правый флангъ остальными конными милиціонерами для поддерживанія связи между флангами точка Выступили 12 часовъ ночи и утромъ заняли Зарабхану безъ потери нашей стороны точка 12 часовъ праваго фланга со стороны Комака Казыкая перешли къ намъ въ наступленіе курды числомъ около 150 человѣкъ и хотѣли обойти насъ но ихъ отбили правая фланговая наша часть подъ прикрытіемъ которой мы отошли Сатверанъ и Башкей бою оказали свою дѣятельную энергію и храбрость вахмистръ мой Нерсесъ Степанянцъ и милиціонеръ Багдасаръ Саакянцъ которыхъ прошу вознаградить точка Со стороны курдовъ около 30 убитыхъ точка Послѣ боя я переговорилъ нѣкоторыми курдами и послалъ письмо Шейхъ усни и надѣюсь положительные результаты въ пользу нашу точка Познакомившись обстановкой я пришелъ такому заключенію что Башкейцамъ Армутлинцамъ Чурукцамъ не грозитъ опасность, если они вернутся по своимъ мѣстамъ точка Вернулся участокъ сегодня 1350. Подписалъ Начальникъ Хорасанскаго участка Капитанъ Енгибаровъ.

Вѣрно: За Дѣлопроизводителя Канцеляріи
Карсскаго Губернатора *ստորագրություն*
Министру Внутреннiхъ Дѣлъ Представляю для свѣдѣнія.
“26” декабря 1919 года г. Карсъ № 6663
ГУБЕРНАТОРЪ Карсской Области *ստորագրություն*
За Правителя Канцеляріи *ստորագրություն*
За Дѣлопроизводителя *ստորագրություն*

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 65, թ. 1 և շրջ., պատճեն, մեքենագիր*

## No 18
## ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ
*Զարուշադի տեղամասային պետի տեղակալի կողմից պետականորեն առգրավված զենքը անհափ անձանց վաճառելու մասին*
*(31 դեկտեմբերի, 1919թ.)*

"31" декабря 1919 г. — 5 յունվ.1920թ.
No 6791 — Մտից No 112
г.Карсъ

Доношу, что помощникъ Начальника Зарушадскаго участка подпоручикъ Шаиновъ изобличенъ въ продаже казеннаго конфискованнаго оружия, уволенъ мною от должности, арестованъ и против него возбуждено уголовное преследование.

Губернаторъ *ստորագրություն*
За Правителя Канцеляріи *ստորագրություն*
За Дѣлопроизводителя *ստորագրություն*

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 450, թ. 2, ձեռագիր*
*Գրված է Կարսի քաղաքացիական նահանգապետի՝ հայերեն և ֆրանսերեն լեզուներով դրոշմակնիքով պաշտոնաթերթի վրա:*

## No 19
## ԿԱՐՍԻ ՓՈԽՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ՈՒՂԻՂ ԿԱՊՈՎ ԽՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՓՈԽՆԱԽԱՐԱՐԻ ՀԵՏ
*Կարսի մարզի ավտոմոբիլային տնտեսությունում իրականացվող թալանի և ավտոպահեստամասերը Թիֆլիսում վաճառելու մասին*
*(9 հունվարի, 1920թ.)*

9-го Января. КАРСЪ.

Чалхушянъ-Манасянъ.

Манасянъ: Получена изъ Тифлиса отъ Минаса Макаряна телеграмма слѣдующаго содержанія:

"Изъ Карса продолжается незаконный вывозъ автомобильныхъ частей. У Заѣдывающаго складомъ Карсского Гаража Александра Караяна задержаны нами въ Тифлисъ цѣнныя части на пятьдесятъ тысячъ рублей. Очень прошу Гибернатора и Васъ совмѣстно съ моим представителямъ Лалаяномъ, который хорошо знакомъ съ авто-частью, назначить внезапную ревизію для установленія какъ, гдѣ и кѣмъ хранится это имущество, какъ ведется отчетность и кто являетcя отвѣтственнымъ за это."

Прошу строго и срочно разслѣдовать и увѣдомить. Распорядитесъ на ст. Карсъ Коменданту и Начмилиціи, чтобы безъ разрѣшенія Губернатора никакихъ автомобильныхъ частей не вывозили бы для кого бы оно не было предназначено.

Чалхушянъ: Здравія желаю, Сейчасъ-же сообщу Губернатору для принятія соотвѣтствующихъ мѣръ. Вопросъ о хищеніяхъ казеннаго имущества сталъ передъ нами съ перваго дня появленія нашей власти въ Карсской области, и большей частью воровали тѣ, которымъ поручали охранять по этому престиж Губернатора не можетъ падать, ибо изъ за того же автомобильнаго имущества у насъ былъ цѣлый рядъ непріятностей и крупныхъ разговоровъ съ военнымъ вѣдомствомъ, а также съ Вами. Извѣстно крупное недоразумѣніе по автомобильному вопросу между Георгіемъ Ивановичемъ и Пирумовымъ.
Въ бытность мою въ Эривани М.В.Д. Просилъ меня поискать специалиста для завѣдыванія всей авто частью Республики Арменіи, я на дняхъ телеграфировалъ вчера въ Зарушатъ между тремя курдскими селеніями съ одной стороны Казиръ-Килисса, гді во главъ стоятъ глаза непокорныхъ курдовъ Селимъ и селенія Мбертикъ и Колайчикъ происходило столковеніе съ обѣихъ сторонъ есть убитыъ, по полученіи подробностей донесемъ. Благодаря новому Начальнику Шурагельскаго участка Миракяна, которых смѣнилъ, бесдѣятельнаго Теръ-Ованесова, въ Шурагельскомъ участкѣ сравнительно спокойно. Много татаръ являются въ Казвимахчахъ по торговымъ дѣламъ. Порядочное число армянъ бываетъ въ Агбабѣ. Самый неспокойный районъ сейчасъ Зарушадъ, гдѣ сейчасъ работаютъ Азербейджанскіе агенты во главѣ Ислаимъ Века Назираліева, Касумъ Халилъ-Бековымъ, Ашамбекомъ Казіевымъ. Завтра утромъ я выѣзжаю въ Кагызманскій округъ. Имѣете-ли что-нибудь приказать.
Манасянъ: Относительно того, кто былъ виноватъ въ прошломъ въ непринятіи надлежащихъ мърь противъ расхищенія казеннаго имущества я сейчасъ не хочу спорить, но нахожу крайне необходимымъ, чтобы всѣ мѣры были бы приняты чтобы по крайней мѣрѣ, такого организованнаго вывоза не было бы. Указывалъ на конкретный фактъ прошу строгаго разслѣдованія. Вашу телеграмму съ рекомендаціей получили….., но ввиду предстоящихъ реорганизацій авто части временно воздерживаемся приглашения новаго лица. Миракова я знаю, считаю способнымъ для административной дѣятельности, но въ его дѣятельности была одна ошибка, которая чернымъ пятномъ ложиться на его имени, пока я примиряюсъ, что онъ цлужитъ у насъ и надѣюсъ, что онъ исправится, но въ случаѣ повторенія этой ошибки, онъ навсегда потеряетъ кредитъ и довѣріе и возможность служитъ въ Арменіи. Спасибо за свѣдѣнія, радъ за Агбабу и Зарушадъ. Кредиты за декабрь мѣсяцъ затрудняются требобаніемъ контролъ о чемъ я уже телеграфировалъ вчера прося выслать вѣдомости, одновременно я сообщилъ совѣту, что таков требованіе контроля ставитъ насъ въ очень тяжелое положеніе. Пока все, передайте привѣтъ Губернатору. Сегодня высылаю на Ваше заключеніе два проекта о новыхъ дорогахъ.
Чалхушянъ: По поводу расхищенія авто-имущества могу сообщить слѣдующее. …… Полковникъ Курбатовъ арестовалъ трехъ шофферовъ, подозрѣваемыхъ въ хищеній прислалъ ихъ Начмилиціи произведеннымъ Джамгаряномъ разслѣдованіемъ выяснилосъ причастность расхищенію Завѣдывающаго складомъ Александра Караяна, который 3 дня до этого выѣхалъ Тифлисъ. Джамгаровъ вчера дала телеграмму Тифлисъ представителю Евангулову и Н-ку Тифлисской Городской Милиціи задержатъ-

арестовать Караяна, виновнаго расхищеніи казеннаго имущества, такъ что Караянъ былъ арестованъ, обысканъ, задержанъ благодаря принятымъ Карсской Администрацією мѣрамъ. Одновременно цообщаю, что Тифлисский Начмилиціи телеграфировалъ намъ просьбу выслать постановленіе судебныхъ властех для отправленія Караяна изъ Тифлиса въ Карсъ Джамгаровъ обратился Судебному Слѣдователю, но тотъ отказался написать постановленіе, сказавъ, что это дѣло чрезвычайной слѣдственной комиссіи КАКЪ Вамъ извѣстно члены слѣдственной комиссіи выѣхали изъ Карса. Прошу Васъ обратиться слѣдственной комиссіи просьбой дополненіе телеграммы Джамгарова выслать постановленіе комиссіи объ арестѣ Караяна адресовать таковое Начмилиціи Джамгярана. Такимъ образомъ расхищеніе обнаружено Телеграфировано нами же другихъ Вашихъ предложеній будутъ исполнены сегодня же.
Манасянъ: Чрезвычайная Комиссія закономъ Парламента упразднена, потому мѣстный Слѣдователь самъ долженъ сдѣлать постановленіе.

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 172, թ. 22, 23, պարճեն, մեքենագիր*

## No 20
## ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ
### *Ռուսական բանակի հեռանալուց հետո Կարսում մնացած գույքը համապետական հաշվեկշռին հանձնելու անհրաժեշտության մասին (12 հունվարի, 1920թ.)*

Господину Министру Внутреннихъ Дѣлъ.

Въ дополненіе къ моимъ неоднократнымъ обращеніямъ о назначеніи Коллегіи спеціалистовъ и передачѣ въ ея вѣдѣніе всего многомилліоннаго имущества, какъ гражданскаго, такъ и военнаго, оставшагося послѣ ухода Россійской Арміи въ Сарыкамышскомъ и Карсскомъ раіонахъ, я еще разъ обращаюсь съ просьбой, Г. Министру, не отказать ускорить разрѣшеніе возбужденнаго мною вопроса. Выслушавъ Управляющаго Техническо-строительнымъ Отдѣломъ Министерствъ Призрѣнія и Труда инженеръ-строителя Мушега Меликъ-Гайказина сообщаю, что съ моей стороны не встречается никакихъ препятствій къ передачѣ всего имущества вышеуказаннихъ раіонахъ въ непосредственное вѣдѣніе Министерствъ Призрѣнія и Труда.

ГУБЕРНАТОРЪ *ստորագրություն*
Правитель Канцеляріи *ստորագրություն*

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 48, թ. 8, մեքենագիր*
*Գրված է Կարսի քաղաքացիական նահանգապետի՝ հայերեն և ֆրանսերեն լեզուներով դրոշմակնիքով պաշտոնաթերթի վրա:*

**No 21**

ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ԵՐԿՐԻ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԵՎ
ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆԸ

*Գարնանացանը մարզում պատշաճ մակարդակով իրականացնելու համար վարկ բաց թողնելու անհրաժեշտության մասին*
*(20 հունվարի, 1920թ.)*

20 января 1920 г. Министру Внутрѣннихъ Дѣлъ
No 279 Копія
Г. Карсъ Въ Главное Управлѣніе Землеѣдѣлія

Если въ прошлом году мы решительно ничего не сделали въ области сельского хозяйства въ Губерніи, то можетъ быть урокъ прошлаго дастъ намъ основанія к заблаговременнымъ посему заботамъ. Народъ весь поглощенъ думами о веснѣ и устройствеѣсвоего быта и намъ нужно идти в головѣ этого настроения. В первой половинѣ февраля я созываю въ Карсѣ подъ своимъ предсѣдательствомъ совѣщаніе из представителей крестьянства области в числе 120 человекъ, на совещание будут приглашены и агрономы области. Совещаніе проектирую на три дня и рассмотримъ вопрос о площади посѣвовъ, наличномъ сѣменномъ зернѣ, количествѣ потребнаго со стороны зерна и способѣ запашки полей тамъ, где крестьянство не имѣетъ рабочега скота, какъ организовать общинную уборку сѣна на беспризорныхъ пространствахъ, гдѣ и кто в какихъ земледѣльческихъ машинахъ нуждается, гдѣ и какия имѣются неисправныя машины, кои средствами правительства могли бы быть исправлены, вопрос о выгоне, летнихъ пастбищахъ и проч.-

Сообщая об изложенномъ и в заботахъ об организации в Карсѣ мастерской по ремонту..., орудій, так и массы частныхъ, имеющихся в области, я прошу об открытии мне теперь же на это кредита, дабы в середине фѣвраля мы могли открыть в Карсѣ большую мастерскую. Если же Вы признаете возможнымъ поручить в Эривани спеціалисту изготовить проектъ организаціи этой мастерской и затѣм прислать таковой с особо назначеннымъ для завѣдованія таковой лицомъ, одновременно отпустив слѣдующую сумму, то я был бы очень радъ этому, так или иначе благоволите в ближайшіе дни меня о послѣдующемъ увѣдомить, такъ какъ прошлый годъ у насъ прошел только в перепискѣ.-

Подписал Губернаторъ Коргановъ,
Скрѣпилъ Правитель Канцелярии Теръ-Мкртчянъ
Вѣрно Дѣлопроизводитель *ստորագրություն*

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 48, թ. 10 և շրջ., ձեռագիր*
*Գրված է Կարսի քաղաքացիական նահանգապետի՝ հայերեն և ֆրանսերեն լեզուներով դրոշմակնիքով պաշտոնաթերթի վրա:*

## No 22
## ՉՐՈՒՅՑ ՈՒՂԻՂ ԿԱՊՈՎ ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ԵՎ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՓՈԽՆԱԽԱՐԱՐ ՄԱՆԱՍՅԱՆԻ ՄԻՋԵՎ

*Դաշնության պետությունների Գերագույն խորհրդի կողմից Հայաստանի առաջին հանրապետության կառավարությունը պաշտոնապես ճանաչելու մասին*
*(23 հունվարի, 1920թ.)*

МАНАСЯНЪ. ЗДРАВСТВУЙТЕ СТЕПАНЪ АЛЕКСАНДРОВИЧЪ СЧАСТЛИВЪ ПЕРЕДАТЬ ВАМЪ СОДЕРЖАНIЕ СЛѢДУЮЩЕЙ ТЕЛЕГРАММЫ ЕГО ПРЕВОСХОДИТЕЛЬСТВУ Г. ХАТИСОВУ ЭРИВАНЪ

Имѣю честь передать слѣдующее сообщенiе полученное сегодня утромъ въ 10 ½ часовъ отъ Лорда Керзона Начало Двоеточiе

Верховный Совѣтъ въ Парижѣ постановилъ что Правительство Арменiи должно быть признано какъ Правительство де факто съ тѣмъ условiемъ чтобы таковое признанiе ни коимъ образомъ не предрѣшало окончательнаго рѣшенiя вопроса о границахъ точка

Настоящее признанiе безусловно касается Арменiи въ ея нынѣшнемъ состянiи со столицей въ Эривани но никоимъ образомъ не касается турецкой Арменiи конецъ

Прошу Ваше Превосходительство принять мои искреннiя и сердечныя посдравленiя по поводу этого событiя такого знаменательнаго въ смыслѣ влiянiя на будущее благополучiе такъ долго страдавшаго Армянскаго народа точка

Замѣститель Уордропа-Гранди

23-го января, 12 ч. 15 мин.

Прошу передать содержанiе телеграммы: Начальникамъ всѣхъ учрежденiй, широко огласить среди населенiя поздравить

1/ Завтра 12 часовъ Правительство Оффицiально принимаетъ поздравленiя

2/ Завтра учрежденiя должны быть закрыты

3/ Нужно устроить шествiя манифестацiя парадъ войскамъ и т д

4/ Освободить всѣхъ административныхъ арестованныхъ и списокъ освобожденныхъ прислать Министерство Внутреннихъ Дѣлъ

Губернаторъ Коргановъ: Сердечно благодарю Васъ и востороженно привѣтствую, все будет сдѣлано и пока будемъ довольствоваться этимъ.

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 172, թ. 24, պատճեն, մեքենագիր*

## No 23
## ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԸ
### *Երկրում գարնանային սերմնացանը պատշաճ կազմակերպելու մասին (30 հունվարի, 1920թ.)*

Մինիստր Ներքին Գործերի — № 825
«30» Յունուարի 1920թ — Շրջաբերական
Երեւան

Ղարսի նահանգապետին եւ գաւառական Կոմիսսարներին.

Կառավարութեան սոյն յունուարի 27-ի որոշման համաձայն Նախարարների անմիջական հսկողութեան տակ եւ արտակարգ լիազօրութիւններով կազմւած է «Հ.Հ. Սերմանման յատուկ կոմիտէ»՝ յառաջիկայ գարնան սերմացուի պատրաստութեան համար:

Նախարարական Խորհրդի որոշման համաձայն այդ կոմիտէի նախագահն է Ֆինանսների Մինիստր պ. Ս. Արարատեան, իսկ կոմիտէն Փոխ-Նախագահ ընտրած է՝ իր կազմի եւ Պարլամենտի անդամ Ա. Մաքսապետեանին:

Արուած կարգադրութեան համաձայն, մեր կառավարութեան բոլոր բաժինները աջակցելու եւ ենթարկւելու են այդ կոմիտէին իր գործունէութեան սահմաններում:

Ձեր ուշադրութեան եմ յանձնում՝

1- Աջակցել ամեն կերպով Կոմիտէի պաշտօնեաներին գարնան սերմացու հաւաքելու եւ փոխադրելու համար՝ գիւղերից հանելով փոխադրական միջոցներ-սայլեր, ձիեր, ջորիներ եւ էշեր. Հաւաքած սերմացուն գաւառի կենտրոնական պահեստը փոխադրելու համար, ուր վճարելու են փոխադրական ծախսը.

2- Յատուկ ուշադրութիւն դարձնել հաւաքած սերմացուին եւ փոխանակւելիք նիւթերը ապահով իրենց տեղը հասցնելու համար:

3- Անյապաղ գործադրել Սերմանման յատուկ կոմիտէի նախագահի կամ փոխ-նախագահի բոլոր կարգադրութիւնները.

Անհրաժեշտ է այս բոլորը տեղեկացնել նաեւ Ձեր ստորադաս պաշտօնեաներին ի կարգադրութիւն եւ ի գործադրութիւն:

Ներքին Գործոց Մինիստր՝ *ստորագրություն*
Դիւանի Տեսուչ՝ *ստորագրություն*

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 98, թ. 3, պատճեն, մեքենագիր*

## No 24
## ՆԵՐԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆ
*Կարսի մարզում ապրանքափոխանակություն իրականացնելու մասին*
*(6 փեփրվարի, 1920թ.)*

6 փետրվարի, 1920թ.
N 488 Ֆինանսների Մինիստրին.

Ղարսի նահանգապետը ուղիղ հեռագրագծով սոյն փետրուարի 5-ին յայտնում է, որ Ղարս է եկել մեկ աջարացի վաճառական, խնդրում է թոյլ տալ արտահանել Ղարսի նահանգից 10.000 փութ խոտ, որի փոխարէն առաջարկում է մանուֆակտուրա: Նահանգապետը խնդրում ե թոյլ տալ նրան համաձայնել: Այս հարցի մասին խնդրում եմ շտապով Ձեր կարծիքը:

Ներքին Գործոց Մինիստր՝ *ստորագրություն*
Դիւանի Տեսուչ՝ *ստորագրություն*

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 48, թ. 22, պատճեն, մեքենագիր*

## No 25
## ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՐՈՒԹՅՈՒՆ
*Նահանգապետի՝ Կարսում արհեստակցական բանկ հիմնելու առաջարկությանը հավանություն տալու մասին*
*(7 փեփրվարի, 1920թ.)*

զիմ-քաղ Ղարսի պ.Նահանգապետին
N 1618 7 փետր. 1920թ. N 759, գործ N 25

Ի պատասխան

Ձեր անցեալ տարվայ դեկտեմբերի 26-ի N 6655 գրութեանը սրանով յայտնում եմ որ Ներքին Գործոց Մինիստրը հավանութիւն է տալիս Ձեր խնդրին- Ղարսում Արհեստակցական բանկ բանալու առթիվ…

*ՀԱԱ, Ֆ. 201, ց.1, գ. 309, թ. 6, ձեռագիր*

## No 26
## ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ
*Կարսի մարզում ուղղակի ապրանքափոխանակություն իրականացնելու մասին*
*(11 փեփրվարի, 1920թ.)*

Г. Министру Внутренних Дѣлъ

Въ отвѣтъ на Вашъ № 488, выражаю принципіальнов свое соглаціе на товарообмѣнъ сѣна и мануфактуры.

Стоимость вывозимаго сѣна согласно расцѣнкѣ Комитета Товарообмѣна 50 руб. Пудъ На сумму стоимости вывозимаго сѣна экспортеръ обязанъ доставить мануфактуру съ обязательной сдачей половины ввезеннаго товара Министерству Финансовъ по жѣнамъ оцѣночной комиссіи Комитета Товарообмѣна. Для оцінки необходимо представить образцы предлагаемыхъ товаровъ.

МИНИСТРЪ ФИНАНСОВЪ *ստորագրություն*
Начальникъ Торгово-Промышленнаго Отдѣла *ստորագրություն*

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 48, թ. 20, պատճեն, մեքենագիր*

## No 27

ՆԵՐԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆ

*Առատ ձյան պատճառով Կարսի մարզի ճանապարհները շտապ մաքրելու համար երկրի կառավարության կողմից անհրաժեշտ գումար բաց թողնելու մասին*
*(13 փետրվարի, 1920թ.)*

N474 Մինիստրների Խորհրդին ՇՏԱՊ
13 փետրուարի 1920թ.

Ղարսի նահանգապետը սոյն փետրուարի 5-ին ուղիղ հեռագծով հաղորդում է մինիստրութեանս, որ Ղարսի շրջանում եկել է մեծ քանակութեամբ ձիւն եւ հաղորդակցութեան ճանապարհները միանգամայն փակել են եւ որովհետեւ այժմ Ղարսի շրջանում կատարւում է զորքերի շարժողութիւն Ձեզ յայտնի գործերի համար, անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել ճանապարհը մաքրելու համար. այդ նպատակի համար խնդրում եմ 750.000 ռուբլի դրամ: Ի նկատի ունենալով գործի խիստ անհրաժեշտութիւնը եւ որպէս զի ապագայում տեղիք չըտրուի մեծ բարդութիւնների, խնդրում եմ Խորհրդիդ շուտափոյթ կարգադրութիւնը բաց թողնել վերոյիշեալ գումարը այդ նպատակի համար:

Ներքին Գործերի Մինիստրի Օգնական՝ *ստորագրություն*
Դիւանի տեսուչ՝ *ստորագրություն*
Գործավար՝ *ստորագրություն*

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 48, թ. 23 և շրջ., պատճեն, մեքենագիր*

## No 28

ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ

*Մարզի որբանոցներում խոշոր չափերի հասնող չարաշահումների առնչությամբ հետաքննություն սկսելու անհրաժեշտության մասին*
*(23 փետրվարի, 1920թ.)*

Телеграфъ въ Эривань
Ввиду больших злоупотребленій пріютахъ ведомства Министерства Призренія прошу командировать судебного следователя важнѣйшим делам последующем прошу телеграфировать
330 Губернатор Корганов

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 48, թ. 35, ձեռագիր*

## No 29

### ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ

*Մարզի որբանոցներում խոշոր չափերի հասնող չարաշահումներ բացահայտելու մասին*
*(23 փետրվարի, 1920թ.)*

Ввиду больших злоупотребленій пріютах и силу представлѣнных мнѣ законом прав я приказал арестовать врача Мамиконяна и завѣдывающего хозяйством пріюта. Расслѣдование будет передано судебному слѣдователю важнейшим дѣлам командировать которого прошу прокурора
329 Губернатор Корганов

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 48, թ. 39, ձեռագիր*

## No 30

### ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ՆԱՄԱԿԸ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ

*Արդահանի օկրուգում տիրող իրավիճակի և այնտեղի վարչակազմի ղեկավար Կադիմովի հայանպաստ գործունեության մասին*
*(23 փետրվարի, 1920թ.)*

Ներքին գործերի պ. մինիստրին

Արդահանի քրդերի և թուրքերի (կարափափախների) միջև մեծ սառնութիւն է նկատւում և մինչդեռ վերջինները, գոնէ ի դեմս նոցա առաջաւոր մարդկանց, ձգտում են ցոյց տալ դէպի Վրաստան, քրդերը լսել չեն ուզում վրացիների մասին և հակւած են մեզ վերայ յենուելու:

Գալով այդ ազգութիւնների վերաբերմունքին դէպի Ադերբէյջան, պէտք է ասեմ, որ քրդերը բոլորովին տրամադրւած չեն այդ իմաստով և քաղաքական այդ ուղւագիծը միանգամայն և խորթ և անընդունելի է նոցա համար:

Ինչ վերաբերւում է թուրքերին՝ կարափափախներին, նոցա այն չափով կարելի է Ադերբէյջանի կողմնակից համարել, որչափով նոցա առաջնորդների շահերը կապւած են այդ աւանտիւրայի հետ: Ձա-

կերպելով դրութիւնը, կարող եմ ասել, որ Արդահանի շրջանում մենք ունենք մեր կողմում գրեթէ ամբողջ քրդութիւնը, որի կենտրոնում, որքան և տարօրինակ թւի այդ, կանգնած է գնդապետ Կադիմով:

Դուք գիտէք, իհարկէ, որ նախանձը Արևելքում դասակարգային մեծ ֆակտոր է եղել միշտ և այդ նախանձը շատ բնորոշ կերպով արտահայտուել է թուրք ազնւականութեան պատմութեան մէջ:

Կադիմովի գաւառապետութիւնը և ապա նրա գնդապետի աստիճանը խանգարել է կարափափախների քունը, որոնց կենտրոնում մենք տեսնում ենք Աջարսկի բէգերին: Նոցա պարագլուխը, Ջալալ բէգը, Արդահանի հայերին կոտորողը, ապրում է վրաց Արդահանում:

Նա շրջում է, այն էլ երբեմն, զինուած թիկնապահներով շրջապատուած և շատ զգաստ է, Կադիմովից վախենալով: Կադիմովը, իւր կողմից, շրջապատել է իրան քրդերով և ջիք է թափում Ջալալ բէգի համարումը երկրում ձգելու:

Բացի այդ, մինիստրների խորհրդի նախագահը պարգևա-տրեց, ինչպէս գիտէք, մի քանի նշանաւոր և ազդեցիք քուրդ պարագլուխների և այդ բանը նախանձ առաջ բերեց աջար բէգերի մէջ, որոնք ռուս իշխանութեան օրից իրանց են միայն մենաշնորհ համարել դէպի կառավարչական ուշադրութիւնը:

Իսկ քրդերը, որ այդ շրջանի մեծամասնութիւնն են կազմում, տեսնելով նախագահի վերաբերմունքը դէպի նոցա աղալարները, շրջապատեցին մեր ներկայացուցիչ Կադիմովին, որ և յենուեց նոցա վերայ, իր անձնական, իհարկէ, եսը առաջ տանելով ի դիմաց կարափափախների պարագլուխ Ջալալ բէգի:

Ի լրումն այս բոլորի, նախագահի այդ վերաբերմունքը դէպի քուրդ առաջաւորները անդրադարձաւ և միւս շրջանների քրդերի շարքերը և այդպիսով քրդութիւնը կապւեց մեզ հետ:

Ի նկատի ունեցէք, որ թասիբը մեծ նշանակութիւն ունի քրդի աշխարհայեցողութեան մէջ և այդ թասիբի համար քուրդը պատրաստ է անել ամեն բան:

Ասիական այդ թշնամութեան առանցքում, ուր փառքի ուրւականը զբաղեցնում է միայն տեղական, անձնական միտումները, քաղաքական խնդիրները կարող են արտահայտւեն միայն ի միջի այլոց, հետևաբար և սպառնալից չեն:

Եւ Կադիմով, տարւած իր ուսադիրներով, պաշտօնական դիրքով և այն անունով, որ ունի մեր կառավարութեան մէջ,

գերադասում է, կարծում եմ, այդ անձնական նախամեծարութիւնը խաբուսիկ քաղաքականութեանը և այդ շրջափակում ժողովելով իր շուրջը ամբողջ քրդութիւնը, տանում է Աջարսկու դիմաց, իւր եսը և, հետևապէս, ամրապնդում մեր պետականութիւնը:

Այդ բոլորի մասին, ընդհանուր դրութիւնը բնորոշելու համար, ես հարկաւոր համարեցի իրազէկ անելու Ձեզ:

Ստորագրել է նահանգապետ Ղորղանեան,

Վավերացրել է՝ դիւանապետ Տէր-Մկրտչեան:

24 փետրվարի 1920թ.:

*ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 274, թ. 12, 12 շրջ., 13, ձեռագիր*

## No 31
## ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ Ս. ՂՈՐՂԱՆՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ

«29 փետրվարի 1920թ.
Կարս

Նահանգական բժշկի օգնական Քալանթարյանը թողեց պաշտոնը և անցավ ամերիկացիների մոտ: Բժիշկ Քալանթարյանը մեր բազմաթիվ բժիշկների շարքում աչքի ընկնող դեմք է, իր կրթությամբ և գաղափարական ուղղությամբ: Նա թողեց մեր առանց այն էլ նոսր շարքերը նյութական միտումներով, որովհետև կիսակուշտ փորով ազգասիրությունն էլ չափ պետք է ունենա:

Նահանգի 22 բժիշկի պաշտոններից տասն ու մեկը արձակ են և բոլոր տվյալները գալիս են վկայելու, որ այս վերջին թիվը պետք է մեծանա և ոչ պակսի: Ես հանձնարարել էի նահանգական բժիշկ հրավիրել Արդահանի համար, մի գաղափարական հայ բժիշկ, որ օգներ հայրենի կառավարությանը մեր պետական սաղմի կազմման գործում, բայց մեր դիպլոմավոր ոսկեզօծ երիտասարդությունը գերադասում է հեռվից դիտելու պատմությունը: Հրավերին արձագանք էր տվել մի ռուս բժիշկ միայն, բայց ես ոչ մի կերպ չհամաձայնվեցի ընդունել այդ թեկնածությունը, շատ հասկանալի է քաղաքական և պետական միտումներով:

Թափուր են ծայրագավառներում և մեր մյուս պաշտոնները: Մեր կարող և ինտելիգենտ երիտասարդությունը, որ երբեմն կազմում էր մեր երազների կորիզը, խմբվել է կենտրոններում, իսկ գավառ գալիս են միայն արկածախնդիրները և միայն գիշատիչ տարրը: Իմ բոլոր դիմումները, թե մամուլի միջոցով և թե մեր

ականավոր հասարակական գործիչներին՝ գաղափարական աշխատողներ տալ ինձ, մնում են առանց նույնիսկ արձագանքի:

Ոմանք առարկում են, թե աշխատանքը հայրենիքում չի վարձատրվում, մյուսները փախչում են զինվորակոչությունից, գուցե և շատ իրավացի կերպով նկատելով, թե չի կարելի ամբողջ երկիրը զենքի կոչել: Այդ դրությունը, ասում են վերջինները, ստեղծում է կենտրոնախույս հոսանք և օրենքը հետևաբար մնում է միայն օրենքի համար և ոչ կյանքի:

Ես չեմ ուզում վերլուծել առարկությունները, բայց կուզեի արձանագրել իրողությունը և հրավիրել կառավարության բարձր ուշադրությունը այդ մեծ և մտախոհ խնդրի վրա: Գուցե տարօրինակ համարվի իմ այդ առիթով դիմումը այսօր, երբ դեռ երեկ լուծվել է ռոճիկների խնդիրները: Բայց ինձ չի վերապահված օրինադիր ֆունկցիաները կյանքի կենտրոնում լինելով և գուցե ավելի քան որևիցէ միջոց ունենալով, անմիջապես դիտելու այդ կյանքը: Ես սրբազան պարտք եմ համարում հրավիրելու կառավարության առանձին ուշադրությունը այս նշանավոր պետական հարցի վրա: Չի կարելի գավառը կառավարել պատահական մարդկանց միջոցով և չի կարելի մինիմալ միջոցների վրա կառուցանել քաղաքացիություն: Կյանքը, իրականությունը հրամայաբար պահանջում են պետական աշխատավորների խիստ ընտրություն, իսկ այդ հնարավոր է միայն այն ժամանակ, երբ այդ գործիչը ապահովված կլինի: Այդ խոհրդակցությունը շատ տարրական է, իհարկե, բայց ես թույլ եմ տալիս ավելորդ անգամ կրկնելու այդ բոլորը, որովհետև մենք կանգնած ենք պետական կատաստրոֆայի մեծ անդունդի առաջ:

Եթե շարունակվի այդպես, եթե մեր գավառական պետական գործիչների շարքերը լցվեն միայն թերուսներով, միայն այն մարդկանցով, որոնք ուզում են միայն ապահովել իրանց և հեռանալ, մենք կմոտենանք այն պետական սնանկության, երբ ընդհանուր պայթումն անխուսափելի կլինի:

Բոլորը խոսում են «սիրելի հայրենիքի» անունից, բոլորը քննադատում են, ոչ ոք ոչ կարողություն և ոչ տրամադրություն ունի աշխատելու և բոլորը… կեղեքում և ստանում են …

Այդպես է մեր օրերի դառն իրականությունը, և ես պետական պարտք համարելով զեկուցանելու Ձեզ այս մասին, թախանձանոք խնդրում եմ և այս զեկուցումն առաջարկել օրենսդիր մարմինների առանձին հոգացողության: Եվ ես չեմ չափազանցնում:

Նահանգապետ Ղորղանյան»:

*ՀԱԱ, Ֆ. 199, ց. 1, գ. 126, թ. 5, բնագիր, ձեռագիր*
https://hovikcharkhchyan.wordpress.com/tag/ղորղանյան/

## No 32
## ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

*Պետական ծառայողների չնչին աշխատավարձի և այդ պատճառով մարզում պետական մարմինների դժվար համալրման և ոչ արդյունավետ գործունեության մասին*

*(3 մարտի, 1920թ.)*

N 1857, 3 марта 1920. Вх. N 1325
г.Карсъ Копія

Г. Председателю Совета Министровъ.

На современные оклады никто служить не хочетъ, да и не можетъ. Мнѣ достаточно указать, что Начальникъ округа получаетъ 3870 руб., считая тамъ и разъездные, а дѣлопроизводителъ его- 1984р. Наряду съ этимъ, дѣлопроизводители ... различныхъ отделовъ, вроде заготовки сена и прочъ установленіи получаютъ по 5-6 тысячъ. Я даже не знаю, какъ объяснитъ эту, если не сказать больше, пестроту и Вы не упрекнете меня, надѣюсь, если я скажу, что административные оклады граничатъ со смешнымъ.

Я уже имелъ честь телеграфировать, что у меня десятки вакансіи и дозваться никого не могу.

Всѣ спрашиваютъ- прежде всего- каковъ окладъ и услышавъ о .... нашемъ, улыбаются, предоставляя любителямъ заниматься романтизмомъ...

Вновь и вновь имею честь просить Вам вниманія по этому положеніию большой государственной важности.-

Подписалъ: Губернаторъ Коргановъ *ստորագրություն*
Скрепилъ: Правитель Канцеляріи Теръ-Мкртчянъ *ստորագրություն*
Вѣрна: ... Дѣлопроизводителя *ստորագրություն*

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 48, թ.82 և շրջ., ձեռագիր*
*Գրված է Կարսի քաղաքացիական նահանգապետի՝ հայերեն և ֆրանսերեն լեզուներով դրոշմակնիքով պաշտոնաթերթի վրա:*

## No 33
## ՆԵՐԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆ

*Կարսի նահանգի Արդահանի շրջանում գոնե մեկ բժիշկ նշանակելու անհրաժեշտության մասին*

*(17 մարտի, 1920թ.)*

N 1165 Խնամատարութեան Մինիստրութեան
17 մարտի 20թ. Բժշկա-Սանիտարական Բաժնին

Ներքին Գործերի Մինիստրի յանձնարարութեամբ ուղարկելով Ղարսի Նահանգապետի 539 հեռագիրը խնդրում եմ տեղեկացնել պ.Մինիստրին զեկուցելու համար մի թէ հնարավորութիւն չունի մեկ բժիշկ նշանակել Արդահան:

Դիվանի տեսուչ *ստորագրություն*

Գործավար *ստորագրություն*

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 48, թ. 63, պատճեն, մեքենագիր*

## No 34

### ԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՄԵՐԻԿՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԻՑ

*Ամերիկյան կողմից օգնության կարգով Հայաստանին տրամադրվող ամերիկյան կաթն ամբողջ Հայաստանով մեկ շուկաներում վաճառելու մասին*

*(30 մարտի, 1920թ.)*

| | |
|---|---|
| *NEAR EAST RELIEF* | *ПОМОЩЬ НА БЛИЖНЕМЪ ВОСТОКѢ* |
| *INCORPORATED UNDER THE LAWS OF THE UNATED STATES OF AMERICA* | *ОБЪЕДИНЕННАЯ ПОДЪ ВЕДОМСТВОМЪ СЕВЕРО-АМЕРИКАНСКИХЪ СОЕДИНЕННЫХЪ ШТАТОВЪ* |
| CAUCASUS BRANCH | КАВКАЗСКОЕ ОТДѢЛЕНИЕ |
| OFFICE OF THE DIRECTOR GENERAL, TIFLIS | КОНТОРА ГЛАВНАГО ДИРЕКТОРА, ТИФЛИСЪ |

Товарищу Министра *Эривань,*

Внутренних Дѣл АРМЕНiИ М.Г. 30 марта 1920

Полковник Тельфорд просит Вас распространить Ваше распоряженiе о конфискацiи американскаго молока на всю АРМЕНiЮ, т.к. по имеющимся сведенiям таковое продается на всѣх рынках в городах АРМЕНiИ.

По приказанию М.Г.Цуринов, Офицер связи Подпоручик

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 22-I, թ. 289, ձեռագիր*

## No 35

### ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

*Հայաստանի շուկաներում Ամերիկյան օգնության մաս կազմող կաթի վաճառքը կասեցնելու վերաբերյալ*

*(3 ապրիլի, 1920թ.)*

М.В.Д. Циркулярно

Директор Отдела

По Администрации и Милиции Всѣмъ уѣзднымъ комиссарамъ

No 3144, 3 апреля Начальнику Эриванской гор. милицiи

Г. Эривань и Карсскому Губернатору.

Немедленно приступить къ конфискаціи Американскаго молока поступившаго въ продажу на рынокъ.

Директоръ Отдѣла *ստորագրություն*

Дѣлопроизводитель *ստորագրություն*

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 22-I, թ. 286, պատճեն, մեքենագիր*

## No 36

## ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՆԵՐԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆ

*Ինչպես տնօրինել կաշառք հանդիսացող առգրավված գումարները*

*(31 մարտի, 1920թ.)*

N 3026 Карсскому Губернатору

31 марта 1920 г. По докладѣ рапорта Вашего отъ 20-го марта сего года за No 1616 Министру Внутреннихъ Дѣлъ онъ поручилъ мнѣ сообщить Вамъ, что конфискованныя деньги у лицъ, предложенныя в видѣ взятки должностнымъ лицамъ, надлежитъ вносить въ Казначейство въ доходъ казны, а въ техъ случаяхъ, когда находите нужнымъ выдать награду тѣмъ или другимъ должностнымъ лицамъ в видѣ поощрения, слѣдуетъ возбудить ходатайство передъ Министромъ Внутреннихъ Дѣлъ.

За Директора Отдѣла Дѣлопроизводитель *ստորագրություն*

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 65, թ. 10, բնագիր, մեքենագիր*

## No 37

## ԿԱՐՍԻ ՓՈԽՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ՈՒՂԻՂ ԿԱՊՈՎ ԽՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՕԳՆԱԿԱՆ ՄԱՆԱՍՅԱՆԻ ՀԵՏ

*Օլթիի սպասվող գրավումից հետո այնտեղ հեռագրակայան հիմնելու, մարզի տնտեսական պահանջների համար վարկեր տրամադրելու և Ղարաբաղում ու Զանգեզուրում հայկական ուժերի ունեցած հաջողությունների մասին*

*(4 ապրիլի, 1920թ.)*

Разговоръ по прямому проводу Товарища Министра Внутреннихъ Дѣлъ Манасяна съ Карсскимъ Вице-Губернаторомъ Чалхушяномъ.

4/IV 19ч. Изъ Карса сообщаютъ.

ЧАЛХУШЯНЪ: Въ виду того, что мы 9 числа двигаемся на Ольты и неоднократно возбуждали вопросъ о томъ, чтобы учреждить почтово-телеграфное учережденіе и имѣемъ изъ Министерства свѣдѣнія что распоряженіе сдѣлано, а между тѣмъ до сихъ поръ нѣтъ штата служащихъ Губернаторъ

проситъ Васъ принять рѣшительные шаги къ удовлетворенію этого нашего ходатяйства во вторыхъ въ виду предстоящаго этого дѣйствія необходимо немедленнаго открытія кредитовъ на милицію и администрацію Ольтинскаго округа къ стати въ свое время кредитъ на Ольтинскій округъ былъ открытъ, но не былъ открытъ Ардаганскій и т.к. на Карсскій, Ардаганскій Ольтинскій округа кредиты открыты, это необходимо срочно открыть кредитъ на Ардаганскій округъ подъ коимъ будетъ подразувѣдаться новый Отльтинскій еще 5 декабря Губернатор возбуждалъ ходатайство объ открытии его распоряженіе милліоннаго кредита на пріобрѣтаніе лошадей для милиціи, т.к. при занятіи новаго раіона необходимо ввести хотя бы 25 конныхъ армянъ милиціонеровъ. Благоволите принять мѣры къ срочному отпуску на этотъ предметъ точка Губернаторъ проситъ Васъ на всѣ эти 3 пункта дать завтра отвѣтъ точка Области у насъ спокойно, настроеніе бодрое Прошу Васъ сообщить вѣрны ли слухи о взятіи нами Шуши о Ханкендовъ татар убійствѣ Халилъ Паши Плѣненіе Султанова со Штабомъ у насъ есть здѣсь много Карабахцевъ въ томъ числѣ Леонъ Зараянцъ, который страшно интересуется событіями происходящими на ихъ родинѣ.
МАНАСЯНЪ: Относительно телеграфистовъ сейчасъ сдѣлано распоряженіе Александрополъ Начальнику отдѣла чтобы до 7 числа назначили бы чиновник для Ольты въ противномъ случаѣ вы должны набрать служащихъ на их счетъ, 2/ Что же касается кредитовъ на содержаніе Ольтинскаго округа у насъ есть Парламентскій Законъ по которому для вновъ присоединяемыхъ округивъ открываются кредиты въ размѣрѣ Эчміадзинскаго уѣзда, но т.к. эти формальности могутъ затягиваться, потому Вы можете использовать остатки за январь, февраль и мартъ открытые на содержаніе администраціи и милиціи, 3/ что же касается милліона рублей я завтра войду срочно въ Совѣтъ Министровъ съ просьбой открыть Губернатору кредитъ милліонъ рублей на экстроординарные расходы связанные съ занятіемъ Ольты. Надѣюсъ, что Совѣтъ удовлетворитъ точка, 4/ Что касается до новостей я вчера сообщилъ Вамъ оффиціальную сводку гдѣ сказано что Шуша Ханкенды Тартар Мали-Беклю окружены армянами что территорія между Зангезуромъ и Карабахомъ очищена Зангезурцы пошли на помощь Карабаху, шоссе Шуша-Герусы въ рукахъ армянъ. Всѣ атаки азербайджанцевъ отбиты видимо положеніе Азербейджанцевъ не важно такъ какъ въ своихъ сообщеніяхъ очень скромны представители союзниковъ рѣшили послать комиссію въ Шушу для ознакомленія съ событіями на мѣстѣ съ этой цѣлью Уордробъ вызванъ изъ Эривани въ Герусы для поѣздки въ Шушу. Пятаго апрѣля съ этой цѣлью назначена въ Тифлисъ конференція армянъ грузинъ и азербейджанцевъ выѣхали Мининостранныхъ Дѣлъ докторъ Оганджанянцъ Сумбатъ Качатрянъ Сегодня утромъ выѣхали въ Герусы Дро и Захаръ Голянъ составъ кабинета вчера сообщили Вамъ оффиціально Имѣете ли новыя дополнительныя свѣдѣнія къ шифрованнымъ депешамъ о положеніи Ардагана Сарыкамыша.
ЧАЛХУШЯНЪ: И въ томъ и другомъ пунктѣ спокойно Ходившіе недавно слухи угрожающіе опасностью Мерденакахъ и Сарыкамышѣ какъ мы Вамъ вчера телеграфировали не подтверждаются Вчера Командиръ А

полка былъ Карсѣ тоже никакихъ угрожающихъ свѣдѣній не имѣетъ какъ я вамъ сообщилъ въ области спокойно. Есть ли какія либо свѣдѣнія съ конферанціи объ Армянскомъ вопросѣ.
МАНАСЯНЪ: Вчера италіанское радіо сообщило что Верховный Совѣть постановилъ мандатъ надъ Арменіей передать лигѣ націи Болѣе других свѣдѣній не имѣемъ. До свиданія *սփորագրություն*

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 48, թ. 69 և շրջ., պատճեն, մեքենագիր*

## No 38
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԹԱՄԱՆՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԵՐԿՐԻ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐԻՆ
*Անիի փարածքից գյուղացիների կողմից պեղածո նյութերի և այլ թալանված իրերի վերադարձման և նման թալանին վերջ դնելու համար անհրաժեշտ միջոցներ ձեռք առնելու մասին*
*(19 ապրիլի, 1920թ.)*

| | |
|---|---|
| Գլխավոր ճարտարապետ | Ներքին գործերի |
| Խնամ և վերաշինութեան | պարոն նախարարին |
| Նախարարութեան | |
| “19” ապրիլի 1920 թ. | Գլխավոր ճարտարապետ |
| N120 | ակադեմիկոս Թամանեան |
| Ք.Երեւան | Ալեքսանդրից |
| Տեր-Ղուկասեան փող. N13 | մտ. N1484 |

Զեկուցագիր

Ճարտարապետ պ. Թորոս Թորոմանեանի անձնական պարզաբանութիւններիից երևում է, որ Ղարսի նահանգապետի կարգադրութեամբ յատուկ Անին պահպանելու համար ուղարկուած միլիցիոներները տեղաւորել և ցայժմ ապրում են Արազ գիւղում, Անիից 3 վերստ հեռաւորութեան վրայ, և ոչ Անիում. բացատրելով, որ Արազ գիւղում ապրելը աւելի յարմար է: Նոքա բոլորովին հաշվի չեն առնում յատուկ նշանակուած հսկիչ մասնագէտ ճարտարապետ պ.ն Թորոմանեանի ցուցումները. օրինակ. նոքա ոչ միայն իրենք չեն ձեռնարկում անհրաժեշտ միջոցները կողոպտած և դեռ շրջակայ գիւղերի բնակիչների բակերում գտնուող գոյքը, որ շուտով կարող է իսպառ չքանալ, վերադարձնելու, այլ և նոյնիսկ արգելում են Անիի յատուկ պահապաններին խլել այդ գոյքը գիւղացիների ձեռքից:

Այդ գոյքը բաղկանում է բաւականին մեծ թւով շինարարական փայտեղէն նյութերից և տնական կահ-կարասիքից, պեղումների համար անհրաժեշտ գործիքներից, սայլակներից և այլ բաներից: Նա ձեռք էր բերւել տարիների ընթացքում անդուլ աշխատանքով և մեծ

մասը նփրատուութեամբ /մասամբ օտարների/: Այդ գոյքը, որ նախ տարել էին քրդերը, իսկ ապա նրանց հեռանալուց յետոյ, ինքնագլուխ կերպով հայ գիւղացիներն են խտացրել, մեծ արժէք է ներկայացնում և հազիւ թէ հնարաւոր լինի նորից գնել, այն ինչ նա խիստ կարևոր է ներկայ շինարարական սեզոնում կատարուելիք անհրաժեշտ աշխատանքների համար՝ թէ ամրացնելու մի քանի յուշարձաններ, որոնց փլումին լուրջ վտանգ է սպառնում, և թէ վերաշինելու թանգարանները և կառավարիչների ու պահապանների բնակարանները, և խիստ կարևոր է Անիի համար իբրև անհրաժեշտ գոյք: Այդպիսով, երկարատև միջնորդութիւններից յետոյ Անին պահպանելու համար ուղարկւած միլիցիոներների ներկայութիւնը Արազում հանդիսացաւ ոչ միայն անօգուտ այլ նոյնիսկ վնասաբեր:

Յայտնելով վերոյիշեալի մասին, խնդրում եմ արտաքոյ կարգով նշանակել մի լիազօր գիւղացիներից, յետ խլելու կողոպտուած Անիի գոյքը և յանձնելու ճարտարապետ Թորոմանեանին:

Ինչ վերաբերում է միլիցիոներներին, կասեմ, որ քանի որ նոքա այդպիսի վերաբերմունք են ցոյց տալիս դէպի իրենց վրայ դրուած պարտականութիւնները: Նոցա ներկայութիւնը՝ թէկուզ հենց Անիին մօտ, համարում եմ աւելորդ:

Գլխաւոր ճարտարապետ՝

Ակադեմիկոս՝ Ա. Թամանեան *ստորագրություն*

Գործավար՝ *ստորագրություն*

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 48, թթ. 117 և շրջ., 118, ձեռագիր*

## No 39

## ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ՀԵՌԱԳԻՐԸ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՕԳՆԱԿԱՆ ՄԱՆԱՍՅԱՆԻՆ

*Կարսի նահանգում փոստային ծառայության ընդլայնման և բարելավման անհրաժեշտության մասին*

*(1920թ. գարուն)*

12-25 Карсъ Эривань

Крс39/2 No 462 24 сл Товарищу Министра Манасяну

Прошу Васъ лично оказать содѣйствіе разрѣшенію вопроса земской почты, дѣло тянется съ осени отсутствіе сообщений тормозитъ все. 725 Губернатор Корганов

Д5/1920 Карс Губернатору 725 Внесем смѣту скоро на будущем парламентъ разсмотритъ

1662 Манасянъ

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 48, թ. 82 և շրջ., բնագիր, ձեռագիր*

## No 40

## ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

*Բնակավայրերը գարնանային հեղեղներից պաշտպանելու համար մասին*
*(21 ապրիլի, 1920թ.)*

Շրջաբերական

Ն.Գ.Մ.

No 3616

Տեսուչ

21 ապրիլի, 1920թ.

Երեւան

Բոլոր գավառական Կոմիսարներին, Ղարսի Նահանգապետին եւ Քաղաքային Միլիցապետին
Առաջարկում եմ անյապաղ միջոցներ մտածելու, գետերի ջրերը յորդանալու եւ հեղեղների ժամանակ գետափերին գտնուող գիւղերը հեղեղատներից պաշտպանելու մասին եւ հետեւանքի մասին զեկուցել ինձ:

ՏԵՍՈՒՉ *սփորագրություն*

Գործավար *սփորագրություն*

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 22-II, թ. 382, պափճեն, մեքենագիր*

## No 41

## ԿԱՂԶՎԱՆԻ ԳԱՎԱՌԱՊԵՏԻ ԶԵԿՈՒՅՑԸ ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻՆ

*Պեփական ծառայողների աշխափավարձերի չնչին լինելու մասին, որի պափճառով այդ պաշփոններն ի վերջո կզբաղեցնեն կաշառակեր և ավազակաբարո անձիք*
*(23 ապրիլի, 1920թ.)*

23 апреля, 1920, No 887 — Канцелярия Карсскаго губернатора
Гор, Кагызманъ — 27 апреля, 1920, вх. No 2895

ГОСПОДИНУ ГУБЕРНАТОРУ КАРССКОЙ ОБЛАСТИ.

РАПОРТЪ.

Считая долгомъ доложить Вашему Превосходительству нижеслѣдующее: по существующимъ окладамъ я-какъ Начальникъ округа получаю 3870 руб. вмѣстѣ съ разъѣздными, фуражными, квартирными и т.д. Не лучше оплачивается трудъ другихъ чиновъ администраціи и милиціи: Помощникъ мой получаетъ 3600 руб., участковый начальникъ 3330 руб. Секретарь Управленія ввѣреннаго мнѣ округа 2350 руб., дѣлопроизводитель 2000 руб. сторожъ тоже 2000 руб., конный милиціонеръ 2600 руб. и пѣшій 2000 руб. Наряду съ этимъ я не могу не упомянуть о томъ, что рабочій Кагызманскихъ соляныхъ промысловъ получаетъ минимумъ 4200 р. не считая сверхурочныхъ. Я покорнѣйше прошу Ваше Превосходительство запросить и поставить меня въ извѣстненость чѣмъ руководствовались люди, назначая такіе оклады.

Если тѣмъ, что чины администраціи должны брать взятки, то во первыхъ я осмѣливаюсь доложить, что есть и такіе, которые служатъ не за страхъ, а за совѣсть, а во-вторыхъ я полагалъ бы въ такомъ случаѣ слѣдуетъ объявить объ этомъ оффиціально. Если же люди, устанавливающіе подобные оклады думаютъ, что желудки Начальниковъ округовъ или даже милиціонеровъ чувствуютъ меньше потребности въ насущномъ хлѣбѣ, чѣмъ желудки рабочихъ, то въ этомъ случаѣ я котегорически заявляю, что мы работаемъ не меньше. Держатъ въ такой нуждѣ служащихъ и еще имѣть на нихъ милліонъ претензій, по меньшей мѣрѣ преступление. Благодаря такой необезпеченности не одинъ приличный человѣкъ не хочетъ поступить на службу и первымъ долгом спрашиваетъ "какой окладъ" и услышавъ отвѣтъ ухмыляется и уходитъ, заявляя, "найдите другого дурака". На силу приходится удерживать разными обѣщаніями тѣхъ, которые нынѣ служатъ и если такъ будетъ продолжаться, я осмѣливаюсь опредѣленно заявить, что мы или останемся вовсе безъ служащихъ или же должности въ администрацію и милиціи будутъ заняты грабителями и разбойниками съ большой дороги, которымъ служба нужна по стольку, по скольку им необходимо будетъ службой такъ или иначе завѣшивать свои грабежи. Ваше Превосходительство я офицеръ и имѣю боевое прошлое и если нынѣ я поступлю въ армію хотя бы на должность младшаго офицера, то буду обезпеченъ больше, чѣмъ по должности Начальника округа.

Далѣе на канцелярскіе и хозяйственные расходы по предсѣдательствуемому мною Воинскому Присутствію я получаю 600 руб., а на однѣ телеграммы у меня въ мѣсяцъ выходитъ болѣе полтары тысячи, не считая того, что листъ бумаги стоитъ 12 руб., а фунтъ керосину 30руб. На телеграфные расходы по Управленію округа я получаю 105 руб., а трачу болѣе двухъ съ половиной тысячъ и т.д. и т.д. Спрашивается чѣмъ я долженъ покрыватъ перерасходъ? Я прошу указаній по сему.

Настоящимъ рапортомъ я передаю Вамъ послѣдние вопли голодающихъ служащихъ. Неужели же нужно обязательно довести до того, что-бы служащіе начали организовавыться въ разные союзы, предъявлять требованія объявлять забастовки и тѣмъ самымъ подрывать основы государства. Чѣмъ вызвана такая несправедливость тиранія, спрашиваютъ меня служащіе и я не нахожу отвѣта.

Докладывая объ изложенномъ я покорнѣйше прошу Ваше Превосходительство войти съ ходатайствомъ къ кому слѣдуетъ, познакомитъ съ положеніемъ дѣлъ и о послѣдующемъ поставить меня въ извѣстность.

По ввѣренному мнѣ округу изъ смѣтныхъ суммъ ежемѣсячно бываетъ остатки болѣе двухъ сотъ тысячъ руб. не находите ли возможнымъ разрѣшитъ мнѣ выдачу наградныхъ служащимъ изъ этихъ остатковъ.

Начальникъ округа, ШТАБСЪ-КАПИТАНЪ *ստորագրություն*

СЕКРЕТАРЬ *ստորագրություն*

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 450, թ. 5 և շրջ., պատճեն, մեքենագիր*

## No 42
## ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ՀԵՌԱԳԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ
*Միլիցիայի աշխատողների չափազանց ցածր աշխատավարձերի և դրանց բարձրացման անհրաժեշտության մասին*
*(6 մայիսի, 1920թ.)*

Մտ.770/6 /V Шифровка из Карса Эривань

Министру Вн.Делъ

Служащіе милиціонеры расходятся никто на этихъ окладахъ служить не хочетъ вновь прошу пересмотреть штаты оклады ибо мы идем государственному краху точка последующему прошу телеграфировать 982

Губернаторъ Коргановъ Расшифр *ստորագրություն 6 /V*

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 48, թ. 99, ձեռագիր*

## No 43
## ՆԵՐԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆ
*Կարսի նահանգապետի միջնորդությամբ Արդահանի գավառապետ Կադիմովին Հայաստանի պետական շքանշանով պարգևատրելու մասին*
*(6 մայիսի, 1920թ.)*

N5785 Մինիստրների Խորհրդին

21/VI 20 Սրան կից ուղարկելով խորհուրդ Կարսի նահանգապետ Ղորղանեանի սոյն յունիս 18-ի N 1356 ծածկագիր հեռագիրը գնդապետ Կադիմովին շքանշան պարգևելու մասին, խնդրում եմ յարգիլ անդ միջնորդութիւնը և անել այդ մասին համապատասխան կարգադրութիւն:

Ն.Գ.Մինիստր *ստորագրություն*

Դեպ. Տեսուչ *ստորագրություն*

Դիվանապետ *ստորագրություն*

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 48, թ. 127, ձեռագիր*

## No 44
## «ԺՈՂՈՎՈՒՐԴ» ԹԵՐԹԻ 1920թ. ՄԱՅԻՍԻ 13-Ի ԱՐՏԱԿԱՐԳ ՀԱՎԵԼՎԱԾԻՑ
*Այդ օրը Կարսում և մարզում փիրող իրավիճակի մասին*
*(13 մայիսի, 1920թ.)*

ԴՐՈՒԹԻՒՆԸ ՂԱՐՍՈՒՄ

Մինիստր-նախագահ Հ.Օհանջանեանը ստացել է Կարսից հետևեալ ռադիո-հաղորդագրութիւնը:

«Ղարսում, շրջանում բոլորովին խաղաղ է:Բոլոր զօրքերը աննկուն կանգնած են կառավարութեան կողմը: Ինքնակոչ բօլշևիկական կոմիտէն ցրուած է: Զօրքը և ազգաբնակութիւնը վրդովուած են Ալեքսանդրապօլի բօլշևիկների չնչին խմբակի դաւաճանական քայլից:»
Գեներալ-մայօր Փիրումեան,
Աղբալեան

*ՀԱԱ, Ֆ. 280, ց. 2, գ. 12*
*(ԺՈՂՈՎՈՒՐԴ թերթի արտակարգ յաւելուած,*
*13 մայիսի, 1920թ.), տպագիր օրինակ*

**No 45**
ՀԱՏՎԱԾՆԵՐ ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ
ՍՏԵՓԱՆ ՂՈՐՂԱՆՅԱՆԻ ՀՈՒՇԵՐԻՑ
*Բոլշևիզմի, Հայաստանում փիրող խառն իրավիճակի և մայիսյան դեպքերի մասին (1922թ.)*

Արձանագրելով այստեղ մայիսեան բռնկումը, ես կուզէի մի քանի խօսք էլ ասել այդ շարժման բնոյթի և իմաստի մասին: Որպէս նահանգապետ և որպէս մի մարդ, որ երկար տարիներ զբաղվել է գաւառական կեանքով, ինձ համար և տեսանելի էր և հասկանալի այդ շարժման իսկական պատճառը: Մայիսեան դէպքերը բոլշեվիզմ չէր, ինչպէս անարխիկ, բօլշևիկ չէ և հայ մարդը: Երկիրը ի ծայր անբաւական էր տիրող կատարեալ անիշխանութիւնից: Նա իր չորս կողմը տեսնում էր միայն թալան, միայն դատարկաբաններ, նա *xxx* էր հանկոտի և իրաւակարգի: Կառավարութիւնը, թէ կենտրոնում և թէ գաւառներում, պետական լրջութիւն չունէր: Երկիրը դրական, շինարարական աշխատանք չէր տեսնում, նա կարօտ էր խիստ և արդարադատ կառավարչական վերաբերմունքի, իսկ այդ տրամադրութիւնը նա չէր տեսնում: Հայկական դատարանը, գէթ նմուշի համար, մի վճիռ չարձակեց, որ երկրի սրտովը լինելով, բաւարարեր նորա խիղճը: Ադմինիստրացիան, սպայութիւնը, մրցում էին թալանի արհեստում և այդ բոլոր «յեղափոխական» փորձերը կատարվում էին, իհարկէ, ի հաշիւ «աշխատաւոր մասսաների» և անջատում երկիրը այդ «յեղափոխական» տարրից: Ռուս կայսերական ռեժիմը երկրի հասկացողութիւններում դառնում էր այն իդեալը, որին նա կարոտում էր: Եւ ռուս իշխանութիւնը այն միակ ելքն էր, որին ձգտում էր երկիրը 17 թվի արձակածներից յետոյ լիուլի ճաշակելով «յեղափոխութեան» քաղցրութիւնը...

Պէտք է ասել, որ այդ շփոթ և անիշխան օրերում մեր գիւղերում ռուսների մասին շարունակ շշուկներ կային: Ասում էին, որ Դենիկին թագաւորի հանդիսաւոր մուտքի ճանապարհն է հարթում և բոլորը

սրտատրոփ սպասում էին: Հաղորդակցութիւնը 17 թվից միանգամայն խանգարված լինելով, գաւառներում ֆանտաստիկ պատմութիւններ էին շրջում: Կողբի աղահանքի շրջանը, որ Սուրմալու գաւառի մի անկիւնն է, առանձին «հանրապետութիւն» էր, նա ոչ թիւրք էր և ոչ հայկական իշխանութիւն էր ճանաչում: Թէև այդ «հանրապետութեան» սահմանները «փակ էին», բայց Արարատեան դաշտի ժողովուրդը հնագոյն ժամանակներից սովոր լինելով Կողբի աղին, այնուամենայնիւ միջոց էր գտնում երբեմն անցնելու դէպի Կողբ և այնտեղից դառնալով, ցրվում էր գիւղերը բազմատեսակ ֆանտաստիկ «քաղաքական» նորութիւններ: Այդ օրերում Շօրագեալի մի սայլապան, վերադառնալով Կողբից, պատմել էր, որ աղահանքում նա ռուս զօրք է տեսել: Այդ պատմութիւնը, հաւելումներով ու գունալից կայծակի արագութեամբ անցնում է ամբողջ Կարսի նահանգը և մեծ իրարանցում առաջ բերում Ախուրեանի հովտում: Այդ միջոցում մի երկու թուրք պատրաստվում էին անցնել Կողբ, աղի: Շրջակայ գիւղերում, իմանալով այդ բանը, մի թուրք գալիս է Կողբ գնացողների մոտ և շատ խորհրդալից ու գաղտնի յանձնարարում է գնացողներին, եթէ ճիշդ է ռուս զորքի Կողբ գալը, մի որևէ կերպով, ասում է թուրքը, ռուս զինվորի մի գլխարկ, մի փափախ կը բերէք Ձեզ հետ, որ մենք միամտվենք և այդ ռուս փափախի առաջ մեր զիարաթը, ուխտը կատարենք...

Ես կարծում եմ, որ այդ անպաճոյճ պատկերում երկրի հոգեբանական վերապրումներն են և ժողովրդի ուխտը ու նրա սպասելիքները: Թէ ի՞նչ էր բօլշևիզմը և թէ ի՞նչ դիմակի տակ էր գալիս ռուսը այս անգամ Կովկասու մենք չը գիտէինք: Երկրի յիշողութիւններում վերականգնում էր խիստ իշխանութիւնը և նա ծարաւի էր այդ իշխանութեան վերջի տարիների ճառերից ու ծափերից յետոյ: Համենայն դէպս հայ ժողովուրդը բօլշևիկ, ջարդարար տրամադրութիւն չունէր և իր խաղաղ, աշխատալից, տնտես ու «տուն դնող» բնորոշ ազգային հատկութիւններով, նա շատ հեռու էր բօլշևիզմից: գալով նրա ցայթուն ազգայնական տրամադրութիւններին, հազիւ թէ պէտք է կրկնել, որ նա շատ սիրում է իր մայրենի մրմունջները, իր օջախը և իր ազատածիր ուղիներում նա իւր ժամանակին թափել է շատ արցունք և շատ արիւն...

Եւ եթէ Կովկասի ազգութիւնների թվում կար մի ժողովուրդ, որ ունէր բոլոր տվեալները քաղաքական-ազգային ինքնորոշ պահանջների համար, դա, անկասկած, հայ ժողովուրդն էր: Եւ այդ բոլոր պատճառներով նա չէր կարող ուխտազանց լինել և չէր կարող այսօր տեգերել իրան միանգամայն խորթ և միանգամայն անընդունելի մթնոլորտում: Նա ի ծայր անբաւական էր իր հայրենիքում տիրող կարգերից, նա հիասթափված էր սպասելիքներում և գուցէ այդ էր պատճառը, որ Ռուսաստանը, անվերաբեր նորա դիմակին, ուրվագծվում էր նրա առաջ որպէս կաւին իշխանութիւն և խիստ իրաւակարգ:

Հայ ժողովուրդը շատ հեռու էր սուվերէն իշխանութիւնից հրաժարվելու մտքից, նա նպատակ չունէր տապալելու իր կառավարութիւնը: Հրապարակ ձգելով իր անբաւականութիւնը, երկիրը բողոքում էր միայն իշխանութեան թոյլութեան դէմ և կոչ էր անում դէպի կառավարչական լուրջ և խիստ գործելակերպ: Եւ իր այդ պահանջները դէպի աջ, մենք բնաւ տրամադիր չէինք անելու ի հաշիւ մեր ինքնորոյնութեան և մեր ազգային դեմքի: Մեր բողոքներով և յայտարարութիւններով Մայիսին մենք հրապարակ դուրս եկանք ոչ ինտերնացիոնալով, այլ մեր ազգային հմայիչ «Մեր հայրենիքով»: Եւ այստեղ էր այդ բորբոքումի հոգեբանութիւնը:

Բայց հայկական կառավարութիւնը կարողութիւն չունեցաւ հասկանալու ժամանակի տրամադրութիւնը և նա անկարող եղաւ բաւարարելու երկրի պահանջը: Եւ փոխանակ դէպի աջ, դէպի լուրջ և հեղինակալից նաւահանգիստ փութալու, հայկական կաբինետը հանդես եկաւ իր հաշիւներով քաղաքական կուսակցութիւնների հետ և դորանով միայն հրդեհեց հայկական անբաւական մթնոլորտը: Ռուբէն փաշայի միահեծան և ինքնահաւան կառավարութիւնը միամտութիւն ունէր կարծելու, որ իր անսիստեմ հալածանքներով անձնաւորութիւնների դէմ նա կարող է փրկել դրութիւնը: Բիւրոյի կառավարութիւնը ի վիճակի չէր երկրի դրութեան և հրապարակի պահանջներին և նա գալիս էր իշխանութիւն կերտելու հայդուկ և քալագեոզ միջոցներով: Նա մինչև ի վերջն էլ չը կարողացաւ հասկանալ, որ օրինականութիւնը արդարադատութեան հիմունքն էր և որ չի կարելի կառավարել երկիրը վայրի ի վերոյ և թեթևընթաց: Կարսի անկման նախօրեակում անգամ նա ընդունակ չեղաւ հասկանալու, որ հայկական ազգային բանակը լքել է նրա ռուս ու ռուսախօս հրամանատարութիւնը, որ չի կարելի երկիրը ամբողջովին զբաղեցնել զէնքի շառաչիւնով: Որպէս արկածալից հայդուկ, Ռուբէն փաշան չը կարողացաւ հասկանալ, որ երկիրը ծարաւի է քաղաքացիական զբաղմունքի և որ անաչառ դատարանը ու լուրջ, կազմակերպված ադմինիստրացիան երկրի հանգստի և խաղաղութեան գրաւականներն են:

Բիւրօի կառավարութիւնը զսպեց, կարծես թէ, Մայիսեան խռովութիւնը, բայց այդ «կարգի վերականգնումը» և խաբուսիկ էր և չարագուշակ...

«Արտակարգ» դատարանները և արտակարգ «լիազօրութիւններով» գաւառները մեկնած «ընկերները» միայն վատթարացրին դրութիւնը: Բաւական կլինի արձանագրել այստեղ, որ Նոր Բայազետի պէս մի նահապետական և յետնգաց գաւառում, այդ մայիսեան օրերում մի խումբ տաքգլուխներ բանտարկեց այն կողմերի զօրքերի հրամանատար գեներալ Սիլիկովին և նորա շտաբը: Եւ այդ շատ հասկանալի էր, ի հարկէ, երբ այդ հրամանատարութեան մի հայ «գնդապետ», անյայտ արհեստի տէր իւր երեկվայ անցեալում, սրի է քաշում

Բասարգեչարի թուրք գիւղերը, փախցնում ազգաբնակութեանը, իսկ ինքը, իր «ընկերներով», ասպատակում ու թալանում այդ վայրը, որ տասնեակ տարիներ խաղաղ և հանգիստ ապրել է Նոր Բայազետի հայութեան հետ և նոցա հետ միասին ամբարել երկրի հարստութիւնը:

Բիւրօն, իր միահեծան իրաւունքներով հանդերձ, չը կարողացաւ հասկանալ, որ երկիրը երերվում է կառավարութեան անկազմակերպ և անսիստեմ առանցքում: Համօ Յովհանջանեանի կաբինետը չը կարողացաւ վերլուծել ժողովրդի անբաւականութեան պատճառը, նա միայն «դաւ» էր որոնում և իր այդ որոշումը ի կատար ածելու համար նա հրապարակ հանեց Ռուբէն փաշային: Սպայութիւնը, ադմինիստրացիան և «զեմստվոն» օգտվեցին միայն իրենց օրերի առաձգական իրաւունքներով ու տիրող շփոթով և մեծ ներդաշնակութեամբ, բայց անջատ իրարից, «խորացրին յեղափոխութիւնը», իրանց գիշատիչ աշխատանքը: Մայիսեան օրերից յետոյ հրապարակում այլևս իշխանութիւն չը կար:

Դաշնակցութեան վաղեմի համարումը ընկել էր իսպառ: Պաշտօնեաների փոխյարաբերութիւնը և նոցա պարտաւորութիւնները բաբելօնի այնպիսի մի շփոթ էր, որի լուծումը վեր էր օրինական միջոցներից:

Այդ մթնոլորտում երկիրը չէր կարող այլևս հաւատալ իր կառավարութեանը…*[մեկ թերթ (թերթ 12) այստեղ ներկայացված չէ]*

…անտարբերութեամբ իր իղձերի և սուվերէն իդեալների հրապարակը, նա քաշվում, գնում էր, առանց հասկանալու կատարվող մեծ անցքերի իմաստը և առանց որևէ բացատրութիւն տալու իրան այդ ինքնակործան հետևանքների մասին: Բայց ո՞վ էր մեղաւորը – մեղաւորը հայկական կառավարութիւնն էր, որ չըգիտէր իր երկիրը, նորա պահանջները և միանգամայն անպատրաստ էր պետական մեծախարիսխ նաւը փոթորիկներից փրկելու: Բայց անարդարացի կլինէր այդ ծանր մեղադրանքը միայն կառավարութեան վերայ բարդելու – աւելի մեծ չափով պատասխանատու էր իր երկրի առաջ հայ հասարակութիւնը, մեր բազմաթիւ ինտիլիգենցիան, որ խմբված իր հայրենիքից դուրս, միայն քննադատում էր և միայն հայհոյում մեզ: Այդ մթնոլորդում հայկական կառավարութիւնը չէր կարող հրաշքներ գործել-...

Նա պէտք է ընկներ բռնալից գրոհի տակ:

Հայկական հարցը դարձաւ այն *modus vivendi*, ուր գեթ որոշ ժամանակով կայսերական Ռուսաստանի և Թիւրքիաի միջև լուծվում էր արևելքում այդ դարաւոր մրցութիւնը: Միջազգային հրապարակից վտարվում էր մի մեծ պատմական դատ, որ այնչափ տարի բորբոքում էր Մերձավոր Արևելքը և այդչափ տարի գուրգուրում հայկական սպասելիքները: Այդ բոլոր պատճառներով բօլշեվիզմը արկածապէս հակասում է մեր ազգային բնոյթին և բախտի անողոք ծաղրով միայն մենք զոհ գնացինք ժամանակի այդ աւերիչ հոսանքին: Մենք չէինք

կարող ընդգրկել հայրենիքի գաղափարը վտարող և ազգային սրբութիւնները սրբապղծող այդ ջարդարար վարդապետութիւնը, մենք միայն անզօր ընկանք նորա հարվածների տակ, լքելով այն բոլորը, որի ճանապարհներով մեր սերունդները թափել են այնչափ հրճվանք և այնչափ արցունք…

Այդպէս էին Մայիսեան օրերը փաստերում և դիտողութիւններում:

*ՀԱԱ, Ֆ. 477, ց. 1, գ. 21, թթ. 1-11, 13-15, բնագիր, ձեռագիր*

## **No 46**

## ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ

*Կարսի մարզում բռնկված անկարգությունների, բռնությունների և թալանի մասին*
*(6 հունիսի, 1920թ.)*

No 2251, 6 յունիսի 1920թ.
Մտ. 7682, 9/VI -20թ.
г.Карсъ

Ներքին Գործերի պն. Մինիստրին

Իմ բացակայութեան ժամանակ նահանգում պատահած դէպքերը ես նախատեսել եմ դեռ անցեալ տարի աշնանը և ձմեռը, և այդ մասին դեռ այն ժամանակ նախազգուշացրել եմ Ձեր նախորդին երկու ընդարձակ գրութեամբ: Այս անարխիկ տրամադրութիւնը խմորւեց Ալէքսանդրապոլում, որտեղից և …նը ստացաւ: Սկզբում մասնակի բռնութեան և կողոպուտի դէպքեր, տարրական իրաւակարգի բացակայութեան ուր ես չէի կարող չանդրադառնալ և դէպի Կարսի նահանգը, իսկ յետոյ, ձմեռը, մասսայական թալան: Իմ մի շարք գրութիւններից Ձեր նախորդին, Դուք գիտէք, երևի, որ զինուորական զբոսանք պահանջելով երկրի այս ու այն կողմը, ես նկատի ունէի միայն իրաւակարգը: Բայց մէր այդ միջոցների շուրջը բռնկւեց միայն գիշատիչ բնազդը և թալանը աhռելի կերպարանք ստացաւ: Դէպի այդ զբոսավայրը թափւեց Ալեքսանդրապոլի շուրջը կուտակւող ամբողջ գաղթականութիւնը, բազմաթիւ լիազօրներ և այլ աստիճանաւորներ և ես մի գրութիւնով Ձէր նախորդին 24 մարտի ս/թ №63 բնորոշեցի ստեղծւած կացութիւնը: Բաւականութիւն ստացած կը լինեմ եթէ Դուք ծանոթանաք այս գրութեան հետ:

Երբ բռնկւեց միաժամանակ արկածը և զորքը, ասաց ղեկավարի, որպէս մոլորեալ ոչխար կարծես թէ անջատւեց երկրից և ժողովրդից տաճկահայեր, գէթ որպէս ուրւական, հանդիսացան մէր միակ յենարանը: Այդ բարձրացրեց նոքա տրամադրութիւնը և նոքա, տրիապետելով մօմենտը, մոռացան, իհարկե, չափը և արձագանք

տալով մթնոլորտում փառող բացասական բնազդին, նետւեցի դէպի թալան… նա օրը ցերեկով թալանեց մի շարք քիւրդ ու թուրք գիւղեր և տրամադրութիւն ունէր թալանելու և տեղացի հայերին:

Դեռ ձմեռուայ վերջում թուրքահայերից կազմակերպում էին ինչ որ վարչական մարմիններ, ներգաղթը աչքի առաջ ունենալով: Յետոյ նոյն մարտիք – Փիլոս և մյուսները վերացւում են, գոնէ բերանացի և երևի, թղթի վերայինը որ զօրամասերի որ պէտքէ ենթարկւէին տեղիս հրամանատարութեանը: Իսկ իրօք, իհարկե, «ոչ այս և ոչ այն, այլ ծնունդ մի նոր ազգի»…

Եւ իրերի ու հասկացողութիւնների այդ բնորոշ առանցքում պէտքէ բռնկուեր այդ հրդէհը: Ինձ պետք չէ ասել այստեղ որ այդ տանող-տանողների շարքում կային և պաշտոնեաներ:

Ես մի քանի առանձին մարտիք եմ նշանակել այդ անկարգութիւնների քննութիւնը կատարելու և միաժամանակ հեռագրել եմ դադաստանական պալատի պրոկուրօրին առանձին գործերի դադաստանական քննիչ ուղարկելու, որին և կը յանձնեւի իմ այդ նախնական քննությունը: Եւ ես պահանջել եմ այդ քննիչը այն պատչառով, որ տեղիս անփորձ դադաստանական քննիչը ի ծայր բեռնաւորուած, անկարող է վարել այդ մեծ գործը: Ավելորդ եմ համարում այստեղ խոսելու և այն մասին, որ այդ անձերի շուրջը առիթից օգտվելով նորից գլուխ են բարձրացնում կրքեր, անձնական միտումներ և մեր օրերում բնորոշ ինտրիգներ:

Ձևակերպելով այդ բոլորը, հարկաւոր եմ համարում նկատելու, որ դեռ ձմեռը ես գրել եմ կառավարութեանը թիւրքահայերի նկատմամբ պէտք է վաղօրոք միջոցներ ձեռք առնել եթէ ոչ գարնանը մեր ձորե-րում կը բռնկւի այնպիսի մի հրդէհ, որի առաջը առնելը մէնք անկա-րող կը լինենք… Զինւած և անգործ այդ մարդկանց մէնք պէտք է մի կերպ զբաղեցնենք, բայց կազմակերպւած և ոչ սանձարձակ շրջափակում: Բացի այդ եթէ Երևանում կա մի ազդեցիկ և լուրջ Տաճկահայ նրան պէտքէ անպատճառ ուղարկել այստեղ:

Ի հարկէ, մինչև որ կը լուծուի Հայկական խնդիրը և մինչև որ գաղթականութիւնը չանցնի իր տեղերը, մէր այդ բոլոր միջոցները պալիատիւներ են, բայց չէ որ զորանում է մէր խնդրի տրագիզմը և չէ որ պատմութեանը մէնք պէտքէ համակերպւենք:

| | |
|---|---|
| Նահանգապետ | *ստորագրություն* |
| Դիւանապէտի պաշտոնակատար | *ստորագրություն* |
| Ի.տ. գործավարի | *ստորագրություն* |

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 48, թ. 120-121 և շրջ., ձեռագիր*
*Գրված է Կարսի քաղաքացիական նահանգապետի՝ հայերեն և ֆրանսերեն լեզուներով դրոշմակնիքով պաշտոնաթերթի վրա:*

## No 47
## ԿԱՐՍԻ ՓՈԽՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ՄԻԼԻՑԻԱՅԻ ՏԵՍՈՒՉԻ ԳԱՂՏՆԻ ԶԵԿՈՒՅՑԸ ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻՆ

*Կաղզվանում փեղի ունեցած հանցագործությունների հեփաքննության արդյունքների, զինվորականների կողմից կափարած ծանր հանցագործությունների մասին*
*(21 հունիսի, 1920թ.)*

Копія Секретнаго Рапорта и.д. Карсскаго Губернатора Чалхушяна и Инспектора Областной Милиціи Аветисяна отъ 21-го Іюня 1920г. Карсскому Губернатору

Доносимъ Вашему Превосходительству, что получивъ предписаніе Ваше за №2961 отъ 7-го Іюня, мы немедленно выѣхали въ Кагызманскій Округъ, гдѣ пробыли четыре дня и выяснили тѣ жалобы, которыя раздавались по адресу администраціи Кагызманскаго Округа вообще и Начальника Округа, штабсъ капитана Джамгарянца въ частности. Главныя обвиненія раздавались въ связи съ “бездѣйствіемъ” Начальника Округа при проишедствіяхъ.

Какъ намъ удалось выяснить, недовольство противъ Начальника Округа и обвиненія противъ него создаются главнымъ образомъ на почвѣ стремленія бывшаго Начальника округа Пальянца, нынѣ находящагося подъ судомъ, занять это мѣсто вновъ. Пальянцъ неоднократно обращался и въ Министерство Внутренихъ дѣлъ, привозя съ собой рекомендательныя письма отъ нынѣшняго городского головы, пробовалъ возстановиться въ правахъ черезъ военныхъ, причемъ былъ поданъ спеціальный рапортъ Генераломъ Осепьянцемъ, съ отличной его рекомендаціей, но всюду онъ потерпѣлъ неудачу и имъ былъ избранъ другой путь, а именно возстановиться- “по волѣ населенія”. Такъ какъ у него въ Кагызманѣ есть нѣсколько приверженцевъ и есть много родственниковъ, то они и начали кампанію по поддержкѣ нѣкоторыхъ членовъ Карсскаго Центральнаго Комитета партіи Дашнакцутюнъ. Изъ Карса были посланы соотвѣтствующія письма о желательности его возстановленія въ должности и его приверженцы Матоянъ, Митоянъ, Мугдатъ эффенди и, кажется братъ его жены /Пальянца/, принялись за работу, причемъ изъ Карса былъ привезенъ соотвѣтсвующій “хамахосканъ”. Приверженцы ходили по городу и подсовывали подписывать приговоръ о желательности возвращенія Пальянца на мѣсто-прежней должности.

Долгомъ считаемъ заявитъ, что, хотя и есть нѣсколько родственниковъ Пальянца, желающихъ возвращенія его, а такъ же есть нѣсколько лицъ, связанныхъ съ нимъ торговыми и иными отношеніями, но населеніе противъ этого и къ намъ являлись представители мусульманъ, которые опредѣленно заявили, что они просятъ выселиться и даже оставить свои вещи, лишь бы только не оставаться здѣсь вновь при Пальянцѣ. Одинъ такой протоколъ при семъ представляем И нѣт

сомнѣнія, что, если бы мы пробыли въ Кагызманѣ однимъ днемъ больше то число подписей удесяторось бы....

Вотъ при такихъ условіяхъ и начался походъ на Начальника Округа. Съ одной стороны энергія Пальянца и его родственниковъ и близкихъ ему лицъ, съ другой стороны желаніе нѣскольких влiятельныхъ лицъ видѣть возстановленнымъ въ правахъ дѣлали свое дѣло и началось обвиненеіе нынешняго Начальника округа "въ бездѣятельности" и чуть ли не открытыхъ разбояхъ.

Между тѣмь виновныхъ надо искать совсѣмъ въ иныхъ мѣстахъ. Когда мы бѣсѣдовали съ гражданами, то намъ представляли слѣдующія случаи, когда имѣли мѣста преступленія и преступники не были обнаружены или не были наказаны: 1/ Безслѣдное исчезновеніе Тороса Абаджяна, 2/ Избіеніе на улицѣ Геворка Крмояна, 3/ Убійство 80 лѣтняго турка Ибрагима Мачесанъ оглы вмѣстѣ съ его женой съ цѣлью грабежа, 4/ Убійство безногаго татрина Гасана Курбанъ оглы, 5/ Убійство турчанки въ ночь на 15 Іюня, 6/ Угонъ у двухъ трехъ татар.... коровъ.

По произведеннымъ нами разслѣдованіямъ выяснилось: 1/ Покойный Торосъ Абаджянъ былъ человѣкъ картежникъ и развратнаго образа жизни. Онъ все время путался съ разными проститутками, въ томъ числѣ татарками. Всегда имѣлъ при себѣ деньги, кольца, золотые часы, всегда отправляясь куда нибудь, онъ считалъ своимъ долгомъ доставать пачку денегъ и показывать, словомъ, хвастался своимъ богатствомъ. Вечеромъ 1 мая онъ куда то исчезъ. Въ убійствѣ подозрѣвали одного сводника татарина Аслана, который скрылся, дѣло у слѣдователя. Мѣстная администрація приложила много стараній и хлопотъ къ тому, чтобы разыскать трупъ, но до сихъ поръ не удалось, надежды не теряются и мѣстной администаціи преподано указаніе напрячь всѣ силы къ отысканію трупа и выясненію убійцъ. 2/ Геворка Крмояна побили милиціонеры Суко и Овикъ. По произведеннымъ разслѣдованіямъ это въ высшей степени подозрительная личность. Въ прошломъ году, въ бытность полковника Шагубатова Начальникомъ Кагызманскаго отряда, онъ выпросилъ у послѣдняго отпускъ для своего сына, обѣщаясь доставить его въ срокъ, но обѣщаніе не исполнилъ сынъ дертировалъ и изъ отпуска не вернулся, уѣхавъ, при помощи своего отца на Сѣверный Кавказъ. Тотъ же самый Крмоянъ, по имѣющимся свѣдѣніямъ продавалъ патроны мусульманамъ, онъ же давалъ у слѣдователя показаніе, на тѣхь милиціонеровъ, которые его побили, будтобы они убили Асланбекова и наконецъ, по негласнымъ свѣдѣніямъ, онъ человѣкъ развратной жизни и приставалъ къ женѣ вышеупомянутаго Суко. Милиціонеры были уволены Начальникомъ Округа со службы. Такимъ образомъ поступокъ не остался безнаказаннымъ, преданіе же ихъ суду, ввиду ссылокъ на показанія Крмояна, могло бы принять неблагопріятный оборотъ и повредить престижу нашего Правительства. 3/ Убійство Ибрагима Мачесанъ Оглы было произведено въ полутра верстахъ отъ ворода въ ущельѣ. Убійцы, какъ есть негласныя свѣдѣнія, солдаты 8-ой роты. 4/ Убійство Гасана Курбанъ оглы, такъ-же совершено солдатами, такъ-же въ полутара верстахъ отъ города.

Во первыхъ на убитомъ были штыковыя раны, во вторыхъ на двери были слѣды штыка, въ третьихъ отъ окна шли слѣды солдатскихъ ботинокъ. 5/ Убійство турчанки было произведено такъ-же солдатами. Въ 250 шагахъ отъ мѣста убійства находится полевой караулъ. Было унесено 5-6 котловъ и верхи отъ одѣяла и тюфяка, по дорогѣ пухъ разсыпался и слѣды доводятъ почти до караула. Слѣды солдатскихъ ботинокъ.

На мѣстѣ проишедствія былъ Слѣдователь и пришелъ къ тѣмъ-же выводамъ. Между прочимъ, одинъ изъ солдатъ караула уже привлекался, но по другому дѣлу. 6/ Корова такъ-же была уведена солдатами. Видѣли 4 солдатъ, ведущихъ эту корову. Якобы съ ними встрѣтился офицеръ и потомъ они дали ему долю за молчаніе.

Итакъ, ясно и очевидно, что почти всѣ случаи убійствъ и грабежей были произведены военными, при чемъ же тутъ администрація? Безусловно, въ Кагызманскомъ Гарнизонѣ имѣется небольшая организація изъ солдатъ, которая и производить безчинства. Кстати сказать, мѣстные жители настолько перепуганы и терроризированы этой шайкой, что населеніе сплошъ и рядомъ заявляетъ что знаетъ, но не можетъ выдать имена преступниковъ, ибо боится, что потом выдавшаго постигнетъ та-же печальная участь... Работать при такой обстановке когда, съ одной стороны преступленіе совершается солдатами, а съ другой, населеніе боится выдавать убійцъ и грабителей довольно трудно, если не невозможно и обвинять администрацію за нераскрытіе таковыхъ преступленій, обвинять въ “бездѣйствіи” или приписывать эти преступленія самой администраціи по меньшей мѣрѣ недобросовѣстно. При бѣсѣдѣ съ представителями населенія, Вице Губернаторъ открыто обвинялъ присутствующихъ въ томъ, что они способствуютъ своими дѣйствіями преступникамъ, такъ какъ являются ихъ укрывателями, представители населенія молча выслушивали, но все таки именъ и преступниковъ не называли. Общее мнѣніе такого, что въ преступленіяхъ виноваты солдаты, мѣстные жители. По отзывамъ Кагызманцевъ, радикальнымъ рѣшеніемъ вопроса для прекращенія преступленій былъ бы переводъ кагызманскаго отряда въ другов мѣсто, такъ какъ подобное рѣшеніе вопроса было бы слишкомъ громоздкимъ и, такъ какъ можетъ быть по военнымъ соображеніямъ и невозможно, то, придется прибѣгнуть къ палліативу, а именно перевести изъ Кагызмана всѣхъ тѣхъ солдатъ, которыхъ молва небезсознательно указываетъ, какъ на виновныхъ преступленій, тѣмъ болѣе, что нѣкоторые изъ нихъ были задержаны на мѣстѣ.

Насколько обнаглѣли солдаты, совешающія преступленіе, видно изъ того что въ свое время былъ взломанъ и ограбленъ цейхгаузъ Окружного Управленія, причемъ солдатъ, совершавшій это ограбленіе, сшиль изъ украденнаго при взломѣ краснаго сукна себѣ брюки и въ нихъ открыто разгуливалъ по городу, подсмѣиваясь надъ администраціей. Другой солдатъ, Миранъ Теръ-Акопянъ ограбилъ магазинъ и, когда его вели на гаупвахту, то онъ преспопойно ѣлъ чурчхалу. Характерно то, что бывали случаи, когда взломы совершали тѣ солдаты, которые были патрульными

или же караульными. Излишне говорить, что это сплошной ужасъ тѣмъ болѣе, что люди, которыхъ по справедливости считаютъ защитниками, сами же являются преступниками.

Кромѣ того солдатъ обвиняютъ мѣстнаго гарнизона вообще въ томъ, что они разрушаютъ дома и постройки, причемъ конечно для пріобрѣтенія топлива, впрочемъ не меньше виноваты и сами кагызманцы. Обвиняютъ солдатъ и въ томъ, что они берутъ рабочій скотъ у жителей и подъ предлогомъ казенныхъ повинностей, обрабатываютъ свои поля...Кромѣ того по вечерамъ патрулированіе совешаютъ солдаты и, конечно могутъ дѣлать что угодно и милиція не имѣетъ права вмѣшиваться.

Для борьбы съ всѣмъ этимъ были приняты слѣдующія мѣры. Вице Губернаторъ былъ у Начальника мѣстнаго отряда, полковника Тер-Асатурова и просилъ его замѣнить патрулированіе солдатъ патрулированіемъ милиціонеровъ, съ тѣмъ, чтобы въ случаѣ задержанія на мѣстѣ солдатъ, они немедленно препровождались Начальнику отряда. Одновременно, чтобы съ оружіемъ солдаты не разгуливали. Затѣмъ мною былъ переданъ ему списокъ тѣхъ чиновъ Гарнизона, которые такъ или иначе подозрѣваются или уличаются/нѣкоторые изъ нихъ арестованы/. Я просилъ полковника перевести ихъ изъ Кагызмана въ другие районы. Онъ на все это согласился. При семъ прилагаю списокъ: Солдаты 8-ой роты 1/ Мигранъ Теръ-Акопянъ, замѣшанный въ убійствахъ и арестованный и 2/ Грикоръ Налбандваросянъ, артиллеристы поршневой батареи: 1/ Ваганъ Абаджянъ и 2/ Гайкъ Акопянъ взломавшій цейхгаузъ, солдаты 5 роты: 1/ Галустъ Тумасянъ 2/ Князъ Геворкянъ, 3/ Галустъ Овсепянъ и 4/ взводный унтеръ офицеръ Бакратъ-они вообще подозрѣваются въ ограбленіяхъ. Тѣхъ изъ нихъ, кои только подозрѣваются, можно перевести, въ Мерденекъ или иное мѣсто, но сдѣлать безшумно, чтобы не было разговоровъ. Кромѣ того надо перевести командира восьмой роты капитана Ніазьяна, ибо говорятъ, что онъ покровительствуетъ своимъ солдатамъ, которые скомпроменттированы. Одновременно съ возложеніемъ патрулированія на милицію и строгимъ приказаніемъ властямъ обнаружить, я по соглащенію съ инспекторомъ милиціи назначилъ Овика Арутюнова исполняющимъ должность помощника Городского Камиссара. Этотъ Арутюнянъ ручается за порядокъ въ городѣ, обязуется раскрыть всѣ преступленія. Просимъ ВАШЕ ПРЕВОСХОДИТЕЛЬСТВО объ утвержденіи его въ должности.

Въ заключеніе подтверждаемъ, что интриги сторонниковъ Пальянца съ одной стороны, рядъ преступленій, совершенныхъ группой солдатъ съ другой и породили всѣ толки о “бездѣйствіи” и преступности Начальника Округа.

Подписали: И.Д. Вице-Губернатора Чалхушянъ и
Инспекторъ Областной Милиціи Аветисянцъ.
Съ подленнымъ вѣрно: Дѣлопроизводитель *սփորագրություն*

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 48, թ. 191-192 և շրջ., պատճեն, մեքենագիր*

## No 48
## ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՍՑԵԱԳՐՎԱԾ՝ ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԱՐԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ

*Կարսի մարզում բանակի օգտին իրականացրած գումարահավաքի արդյունքների մասին*
*(23 հունիսի, 1920թ.)*

Վարչութեան և միլիցիայի պ-ն տեսչին

Համաձայն Ձեր շրջաբերականի 25 մայիսի ս/թ N4791, ստացանք Կարսի քաղաքային վարչութիւնից հետևեալ բացատրութիւնը:

«Յօգուտ հայ զինուորների «Բանակի օրւայ» մինչև սոյն թւի յունւարի մէկը նւիրատւութիւն եղել է 198 099 ռ. 65 կ., որից ծախսւել է զանազան մանր պէտքերի վրայ 5345 ր. 80 կ., յանձնւել է սոյն թւի յունւարի 15-ին պարլամենտի նախագահութեան 192 750 ռ. և մնացել էր առձեռն 3 ռ. 85 կ.: Այնուհետև շարունակւել է նւիրատւութիւնը մինչև մայիս 16-ը և ստացւել է յիշեալ մնացորդի հետ միասին 56439 ռ. 85 կ., որից ծախսվել է զանազան զինւորական պէտքերի վրայ 43240 ռ. և մնում է քաղաքային դրամարկղում 13199 ռ. 85 կ., որը այս մօտ օրերս պէտք է յանձնւի զինւորական իշխանութեանը: Բացի յիշեալ գումարներից գնդապետ Միրմանեանից ստացուած է մի հատ թուղթ 50 ֆրանկանոց»:

Վերոյիշեալ գրութեան մասին յայտնում եմ Ձեզ ի գիտութիւն:
Փոխ. նահանգապետ՝ Ռ. Չալխուշեան,
դիւանապետի պաշտօնակատար՝ Մ. Դոխիկեան,
գործավար՝ Լ. Միրզայեան:
23 յունիսի 1920:

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 48, թ. 151, պատճեն,մեքենագիր*

## No 49
## ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ

*Կարսի մարզի նահանգապետի որոշմամբ Զարուշատի ենթաշրջանի 12 բնակավայրերում հաստատված՝ ավազակությամբ զբաղվողներին զինաթափելու, հօգուտ տուժածների նրանցից նյութական հատուցում ստանալու, հօգուտ պետության զենք, զինամթերք, ձի և խոշոր եղջրավոր բռնագրավելու և այդ գործողությունների կապակցությամբ մարզի զինվորական իշխանությունների կողմից տեղի թուրքերի և քրդերի միջոցով մարզի քաղաքացիական վարչակազմի նկատմամբ դժգոհություններ հրահրելու փորձերի մասին*
*(27 հունիսի, 1920թ.)*

N 131, 27 յունիսի, 1920թ. Մտ. 977, 5/VII - 20թ

Ներքին Գործերի պ. Մինիստրին Գաղտնի

Զարուշատի այս տասներկու գիւղերը, որոնք ընկած են տէպի Արդահանի սահմանը, ձմեռուայ մեր զինաթափ գործողութիւննիրից դուրս մնալով, չյանձնեցին զէնքերը:

Օգտվելով իրանց բնակատեղիինիրի դիրքով, որտեղով անցնում է Կարսից-Արդահան տանող խճուղին, նոքա փակեցին ճանապարհը և բոլոր անցնորդներին թալանում, սպանում և դիակները ձգում էին ձորը: Մի շարք սպանութիւններ, կողոպուտ խպառ կտրեցին այդ տարածութիան հաղորդակցութիւնը, և մինչև այսօր մենք հնարաւորութիւն չունէինք անցնելու այդ ուղութիամբ: Բոլոր ձեռք առած միջոցները վերականգներ այդտեղ կարգը անարդիւնք մնացին: Որովհետև այդ անիշխանութիւնը անդրադառնում էր տէպի շրջակայ լեռները և աւազակութիւնը ապառնալից բնոյթ ընդունելով, խախտում էր իշխանութիան համարումը, չարիքը արմատից կտրելու- ես կանգ առայ հետևիալ միջոցի վերայ: Ես ուղարկեցի այդ վայրը Կարսի գավառապետին 60 ձիաւորով, ձեռբակալեցի բոլոր գիւղերի մեծատուն անձանց և պահանջ դրեցի ներկայացնիլ առաջինը, թալանուածնիրի և սպանուածնիրի ընտանիքներին բաւարարելու համար մէկ միլլիօն րուբլի, երկրորդ հետևակ միլիցիայի համար հարիւր ձի, որովհետև այդ լեռներում և աիռելի ձորերում միայն հեծելազօր մասերը կարող են իրաւակարգ պահպանել, երրորդ 500 հրացան և փամփուշտ, բայց նոքա տւեցին միայն 63 հրացան և 2345 փամփուշտ, իսկ մնացածների փոխարէն ներկայացրին իրկու հարիւր լծկան տաւար: Դրամը յանձնուած է գանձարան, որտեղից թալանուածները և սպանուածների ընտանիքները կստանան իրանց հասանելիք գումարը: Ձիաննիրը ցուցակագրուած են միասնական վարչութեան մատիանններում և որպէս պիտական սեփականութիւն կը յանձնուի միլիցիօներներին և այդպիսով մենք ստանում ենք բռունցք, որ մեզ շատ և շատ պէտք է:

Ձեզ պէտքէ յայտնի լինի, իհարկէ, որ թուրքերը վաղեմի կորովով չեն գալի ծառայելու թէ ժամանակակից մթնոլորտում տիրող պայմաննիրի շնորհիւ թէ այն պատճառով, որ վաստակի կարիք չունին: Մնում են հայերը, որոնք թէ աղքատ ին, ձի չունեն և թէ նախամեծարում են կողմնակի աշխատանքը:

Հարկաւոր եմ համարում աւելացնել, որ Ձեզ հասած այդ տուգանքի մասին տեղիկութիւնները բղխում ին այն աղբիւրից ուր ես միշտ ընդիմադրութիան եմ հանդիպում: Ինտրիգների այդ կենտրոնում կանգնած անձնաւորութիւնը, թէ ինքն է հետախույզ լինում առիթներ գտնելու նոր և նոր դաւեր կազմելու ադմինիստրացիայի դէմ և թէ համախմբում իր շուրջը այն բոլոր մարդկանց, որոնք այս ու այն պատճառով արտաքսուած լինիլով ադմինիստրացիայից, կամ ան-

բաւական ինձանից, ի կատար են ածում այդ մեծ ու բնածին ինտրիգանի պրօէկտները: Երբ այդ ձորում կողոպուտ ու սպանութիւններ էին կատարւում, նոր շրջանում ուժգին հունցւում էր իմ դէմ բողոք: Դափնեկնիրի տէնչով տարւած այդ անձնաւորութիւնը տքնում էր տարածել հասարակութիան մէջ, որ նահանգապետը թոյլ է, որ երկիրը կառավարելու համար զինւորական տիկտատուրա է պէտք, բայց երբ այդ որջանոցի դէմ ես խիստ միջոցներ ձեռք առայ, նա մի թուրք ինտրիգան իր մօտ կանչելով սկսեց համոզել նրան, որ նահանգապետի կարգադրութիւնները ապօրինի են, որ պէտք է բողոքել նորա դէմ այս կամ այն ճանապարհով և այդ տուգանքը չը տալ:

Այդպէս են հայրինիքի մեր փքուն նախանձախնդիրները և այդպէս է մեր «հասարակական» գործի աստառը:

Բարիհաճեցէք պնդելու որ Երկրագործութեան Մինիստրը շուտափոյթ կարգադրութիւն անի իմ բռնագրաւած տաւարը ստանալու:

Նահանգապետ՝ Ղորղանյան *ստորագրություն*
Դիւանապետի Պաշտօնակատար՝ Դոխիկյան *ստորագրություն*
Ի.տ. Գործավարի Սինանյան *ստորագրություն*

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 50, թթ. 1, 2 և շրջ., ձեռագիր*
*Գրված է Կարսի քաղաքացիական նահանգապետի՝ հայերեն և ֆրանսերեն լեզուներով դրոշմակնիքով պաշտոնաթերթի վրա:*

## No 50
## ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՂԶՄԱՆԻ ԱՂԻ ՀԱՆՔԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉԻՆ
*Զարաշահումներ թույլ տված հանքի պաշտոնյաներին աշխատանքից ազատելու մասին*
*(28 հունիսի, 1920թ.)*

28 июня 1920 г. С Е К Р Е Т Н О
N 132 Завѣдывающему Кагызманскими соляными промыслами
г.Карсъ Горному Инженеру АГАЯНЦУ

В порядкѣ надзора не находя возможнымъ оставить на службѣ на Кагызманских промыслахъ капитана Сургунова и Татевоса Асоянца, предлагаю Вамъ немедленно уволить ихъ со службы.

Губернаторъ *ստորագրություն*
И.об. Правителя Канцеляріи *ստորագրություն*
Дѣлопроизводитель *ստորագրություն*

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 281, թ. 6, բնագիր, մեքենագիր*
*Գրված է Կարսի քաղաքացիական նահանգապետի՝ հայերեն և ֆրանսերեն լեզուներով դրոշմակնիքով պաշտոնաթերթի վրա:*

## No 51

## ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ

*Սահմանից այն կողմ թուրքական զորաջոկատների տեղաշարժերի, Օլթին մեր կողմից գրավելու հնարավորության, այնտեղիածխահանքերի և Կաղզվանի աղի հանքերի օգտագործման, կաշառակեր պաշտոնյաների նկատմամբ ձեռնարկած քայլերի, մարզում խոշոր պետական այգեգործական կենտրոն հիմնելու և մարզի տնտեսության բազմաթիվ այլ ուղղությունների զարգացման հնարավորությունների մասին*

*(1 հուլիսի, 1920թ.)*

Հ.Հ.
Ն.Գ.Մ.
ԿԱՐՍԻ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ՆԱՀԱՆԳԱՊԵՏ
"1" հուլիսի 1920թ.
Նօ. 137
Ք.Կարս

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ Պ.ՄԻՆԻՍՏՐԻՆ

Հաղորդում եմ այսոր իմ ստացած տեղեկությունները: Հունիսի 20 Ալաշկերտի Կարաքիլիսա յեկավ Բիթլիսի կողմից մի գումարտակ յեվ այդ հովտում լուր տարածվեց, վոր Ազնավուր բեյի մի քանի զորամասերը անցել են Մուսթաֆա Քյամալի կողմը: Այդ գումարտակի գալու հետ միաժամանակ համիդիայի յեվ թուրքերի զորակոչ հայտարարվեց, բայց զորահավաքը հաջողություն չունեցավ, վորովհետեվ ցեղապետների միջեվ համաձայնություն չկա: Ասում եյին, վոր զորահավաքը Հայաստանի վերա հարձակում գործելու համար ե, բայց ամսի 23 նոր հրաման ստացվեց դադարեցնել գործողությունները յեվ սպասել նոր կարգադրության մինչեվ հուլիսի 12, միյեվնույն ժամանակ Բիթլիսի կողմից յեկած գումարտակը նորից հետ դարձավ:

Սարիղամիշի ուղղությամբ նոր ույժեր թյուրքեր չունեն, միայն ինչ վոր մի զորամաս Հասան Կալայից մի փոքր առաջացել ե: Հրամանատարն ե Կյազըմ-փաշա, կարծեմ 15 դիվիզիայի հրամանատարը:

Ալաշկերտի հովտում քրդերի պարագլուխներ են Ալի բեգը յեվ Աբդուլ Մեդջիտը, բայց նոցա միջեվ մեծ պառակտում կա: Ալի-բեգը նորից պնդել ե իմ պաշտոնյա Պորուչիկ Հասա-բեգ Շամշադինովին տեղից չշարժվել: Թյուրքերը խոսում են, վոր շուտով ռուսների յեվ անգլիացիների միջեվ պատերազմ ե լինելու յեվ իրանք պետք ե ռուսների կողմնակից լինեն:

Ախչայի շուրջը խմբված քրդերը արդեն տրամադիր եյին, ինչպես գրել եմ Ձեզ, հանձնվելու մեզ, բայց Տաճկաստանից վերջի լուրերը նորից ջղայնացրել են նոցա: Բայց յես շարունակում եմ բանակցել նոցա հետ յեվ գուցե մի դրական հետեվանքի գամ:

Ոլթիի գործողությունները, ինչպես յես նախագուշակել յեվ գրել եյի Ձեզ, վերջացան մեծ թալանով. Թալանվեց անգամ Իզո-բեկը: Նա անցյալ որը յեկել եր ինձ մոտ, ստանձնեց պաշտոնը յեվ Կարսի գավառապետ Տեր-Անտոնյանի յեվ իր մյուս պաշտոնյաների հետ մեկնեց Կոսոր: Նա խիստ գանգատվում եր թալանից: Խաղաղ ազգաբնակչությունը փախավ թալանչիներից, թողնելով ամայի հասնող արտերը, այգիները յեվ ագարակները: Թեյեվ մինչ այդ վայրում իշխում եյին միայն զինվորականները բայց յես, այնուամենայնիվ, տեղեկություն ստանալով, վոր Ոլթիի գավառից, քշում են զանազան ուղղությամբ մեծաքանակ տավար, կարգադրեցի ճանապարհները փակել յեվ բռնել տվեցի հափշտակված տավարի մի մասը: Ուղարկելով Իզո-բեկին իր պաշտոնատեղին, յես հրամայեցի նորան թռուցիկ հեծելազոր մասեր կազմակերպել սահմանների պահպանության համար յեվ միլիցիայի կայաններ հաստատել ինձ հետ կապ պահպանելու համար:

Հեռագրագծի աշխատանքները դեպի Կոսոր շարունակվում են: Յես պատվիրեցի գավառապետ Տեր-Անտոնյանին գլավարների, վախմիստրների յեվ այլ ադմինիստրատիվ պաշտոններ տալ ազդեցիկ յեվ մեծանուն տեղացիներին յեվ նոցա միջոցով գրավելով յերկրի համակրությունը յեվ աջակցությունը, տարածել աստիճանաբար մեր իշխանությունը դեպի առաջ: Հավաքած տեղեկություններից յերեվում ե, վոր ռուսները պատերազմի ընթացքում մեծաքանակ քարածուխ են պատրաստել յեվ դիզել Ոլթիում: Այդ ածուխը նոքա ուզում եյին տանել դեպի Տաճկաստան, իրանց գրաված վայրերը, գուցե Երզրումի յերկաթուղու համար: Իզո-բեգի ասելով, Ոլթի պատրաստ կա մոտ 2 միլլիոն փութ ածուխ: Հենց վոր մենք անցանք Ոլթի, յես ուժգին մոբիլիզացիայի կյենթարկեմ թե այդ շրջանի յեվ թե Արդահանի գավառի բոլոր սայլերը յեվ ամեն միջոց գործ կդնեմ այդ ածուխը թափելու Մերդենիք յեվ ձիաքարշով-Կարս: Յեվ վորովհետեվ ձիաքարշի մեր ապագա ձիյերի թիվը սահմանափակ կլինի, իսկ վագոններ մենք ունենք մոտ 1000 հատ, յես Արդահանի գավառից յեվ Զարուշատից դուրս կբերեմ մի 20 որով բոլոր ձիանները յեվ այդ հազար վագոնները ածուխ բարնալով, կթափեմ Կարսի յերկաթուղու կայարանը: Ի նկատի ունենալով, վոր Կոսորի շրջակայքի գյուղերը փախել են, յես կարգադրեցի նոցա արտերը, այգիները յեվ ագարակները հանձնել մոտակա քրդերին, թե Ոլթի շրջանի յեվ թե Արդահանի, վոր մեր կողմնակիցներ են, պայմանով, վոր բերքի կեսը հանձնվի արքունիս:

Յես ոգտվում եմ դեպքից նորից խնդրելու աչքի առաջ ունենալու գաղթականության 10-15 հազար, վորոնցով մենք կարողանանք

բնակեցնել Գեոլ շրջանի հույն գյուղերը: Այդ գյուղերը սփռված են Մերդնիկի աջ ու ձախ կողմը, այդ յերկիրը անասնապահ տարածություն ե, շատ ճոխ բուսականությամբ յեվ անտառով:

Ուզում եմ դարձնել յերկրագործության մինիստրի ուշադրությունը Ձոլախանտ հույն գյուղի վերա: Այդ գյուղը ընկած ե Կարս-Կաղզման խճուղու վրա, Կաղզվանից 30 վերստ տարածության վրա, մի գեղածիծաղ ձորում, վոր պաշտպանված ե գեղատեսիլ լեռնային կամարով քամիներից: Հույները թողնում յեվ գնում են:

Մի քանի մալականներ այստեղ տնակներ ունեն յեվ մեծ հաջողությամբ պարապել են մեղվաբուծությամբ, այգեգործությամբ յեվ բանջարանոցով: Այստեղ բուսնում ե ձմերուկ յեվ նույնիսկ ծխախոտ, ձորում կան հանքային ջրեր յեվ այդ վայրը մեծ հաջողությամբ կլիներ գյուղատնտեսական կայան, պետական: Յես մի յերկու անգամ թե անցյալ յեվ թե այս տարի, գրել եմ կառավարությանը, թե Կաղզվանի այգեգործությունը զարգացնելու համար պետք ե ունենալ այդտեղ այգեբանական դպրոց: Յես կարծում եմ, յեթե յերկրագործության մինիստրը գյուղատնտես ուղարկի այդ գյուղը այդ իմաստով ուսումնասիրելու, նա կանգ կառնի իմ առաջարկության վրա գրավել այդ գյուղը պետական մեծ գյուղատնտեսական կայանի համար յեվ յերեվի այնտեղ կլինի այդ տարածության յեվ այգեբանական դպրոցը: Պետք ե շտապել յեվ պետք ե այդ հիանալի յեվ բնության բոլոր բարիքներից օժտված վայրում տարածել մեծ մասշտաբով մեր կուլտուրան: Վոչ մի կերպ չպետք ե թողնել այդտեղ կողմնակի մարդկանց: Յեվ յեթե յերբյեվիցե Կաղզվան-Կարսի միջեվ մենք լսենք յերկաթուղու գնացքի սուլոցը, գեղեցկության յեվ կյանքի հաճույքների սիրահարները կշտապեն Ձոլախանտ հանգստանալու յեվ դիտելու բնության կապրիզները: Բարեհաճեցեք ուշադրություն դարձնել յեվ հիմնել այստեղ մեր քաղաքացիության մի փարոս յեվս, ուր կձգտե յերկրի ուշադրությունը թուրքաց թալանչիներին յեվ նոցա հետ համախորժակ պաշտոնյաներին յես կարծես թե սանձահարեցի: Իմ Յերեվանից գալուց հետո, յես բանտարկեցի 60 մարդուց ավել յեվ գիշատիչ տրամադրությունը մարվեց:

Ձեռնարկում եմ հավաքել զինվորական հեռագրացանցը, վոր անխնամ թողած Կարսի չորս կողմը, փչանում յեվ հափշտակվում ե: Այդ տասնյակ գծերը գնում եյին յերբեմն դեպի Կարսի ամրություն-ները, բայց այդ ամրությունները այսոր ամայի, հեռագրացանցն էլ, ի հարկե, կորցրել ե իր նշանակությունը: Մինչդեռ մենք պետք ունենք կապվելու հեռախոսով յեվ հեռագրով- մեր վարչական կենտրոնների հետ յեվ այդ պարագաները կբավարարեն մեր այդ պետքերին: Յես հեռագրեցի այսոր ինժիներ Շերմազանին աջակցել

ինձ այդ գործում, ժամանակը անցնում է յեվ մենք աշխատելու մի յերկու յերեք ամիս ունենք միայն:

Մինիստր պ. Բաբալյան միջոցներ տվեց նահանգի ադմինիստրատիվ պետական շենքերը, վորոնք ավերվում յեվ փչանում են, վերանորոգելու համար յեվ յես հանձնել եմ այդ աշխատանքները ինժիներ Խատիսյանին: Թուրք շրջաններում կատարյալ խաղաղություն է մալականները գլուխ են տալիս մեզ մինչև գետին: Աղի յեմ ուղարկել, սայլերի շարանը բռնել է Կարսից մինչեվ Կաղզվան ամբողջ տարածությունը ադմինիստրացիայից դուրս գալով, մի յերկու պաշտոնյաներ տեղավորվեցին աղահանքում: Յես առաջարկեցի աղահանքի կառավարիչին անհապաղ վերացնել նո... Աղի շուրջը վխտող ախորժակների մասին առանձին քննություն եմ նշանակել յեվ մի պաշտոնյա, մի քանի մասնավոր մարդկանց հետ բանտարկել:

Սարիղամիշի փայտ մատակարարելու գործի մասին էլ հարկավոր եմ համարում խիստ քննություն նշանակել յեվ վաղը ուղարկում եմ այնտեղ յերկու պաշտոնյա յեվ ադմինիստրատիվ միջոցների կդիմեմ յես այստեղ: Այդչափ գուցե այսոր բավական լինի նահանգի ընդհանուր դրության մասին: Շատ խնդրում եմ ուշադրություն դարձնել վարկեր ստանալու խնդրի վերա. իմ տասնյակ այդ առիթով հեռագրներս նույնիսկ անպատասխան են նմում: Գործ չի կարող լինել առանց միջոցների, իսկ ձգձելով վճարել պաշտոնյաին յեվ այն կոպեկները, վոր նա ստանում է, մենք զրգում ենք նորան ամեն բան անելու, բացի իր գռծից: Բացի այդ, չլուծելով իմ տասնյակ գրությունններս, դուք անելանելի դրության մեջ եք դնում ինձ: Այդ որինակ մթնոլորտում մեր գործունեությունը շրջանառում է միայն խոսքի յեվ թղթի առանցքում, իրավակարգը սպառնալից յերեվում է, իսկ յերկիրը, վոր տրամադիր է ամեն բան նահանգապետից սպասել յեվ ամեն բան նորա անվան հետ կապել, կարծում է, վոր յես եմ դանդաղում յեվ յես եմ ձգձգում այս ու այն խնդրի լուծումը: Յերբ վերջացնում եյի գրությունս, Տաճկական սահմանից ստացված տեղեկությունները ճշտվեցին իմ մի այլ աղբյուրից: Այդ յեկվորին յես հանձնել եյի ստուգել առաջի հաղորդագրությունը:

Պատմության մանրամասնություններից յերեվում է, վոր ինչպես յես բազմիցս գրել եմ կառավարությանը, թյուրքերը անձեռնմխելի եյին համարում 14 թվի սահմանը յեվ կանոնավոր զորքը Ոլթի չեր անցել: Այդտեղ կային միայն դասալիքներ յեվ տեղացի արկածախնդիրներ, վորոնք յեվ բռնվեցին կռվի մերոնց հետ: Յեվ յերբ սահմանում գտնված տաճկաց կանոնավոր մասերը իմացան ընդհարումը, անմիջապես հրաման ուղարկեցին այդ հրոսակներին

դադարեցնել ընդիմադրությունը: Այդ տվյալները իրավունք են տալիս ինձ կարծելու, վոր յեվ Ոլթին իր ամբողջ գավառով, մենք կարող ենք գրավելԻ ապացույց այն հանգամանքի, վոր թյուրքերը բոլորովին ակնկալություն չունեյին Ոլթիի վերա յեվ ժողովրդի մեջ տիրում եր նույն համոզումը, յես ձեռքի տակ ւոնեմ այսպիսի մի դեպք: Մի նշանավոր մեծատուն, թյուրքերի կողմնակից, Բակիր, լսելով մեր պատրաստությունների մասին դեպի Ոլթի շարժվելու յեվ իրազեկ լինելով թյուրքերի վերաբերմունքին դեպի այդ խնդիրը, բարձում ե իր բարբախեն յեվ ընդմիշտ հեռանում: Մի նշանավոր թյուրք, վոր ինձանից ռոճիկ ե ստանում, ուղարկում եմ վաղը դեպի Ալաշկերտ, հետեվանքի մասին կգրեմ:

ՆԱՀԱՆԳԱՊԵՏ՝ Ղորղանյան *ստորագրություն*

ԴԻՎԱՆԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Դոխիկյան *ստորագրություն*

Ի.Տ. ԳՈՐԾԱՎԱՐ՝ Սինանյան *ստորագրություն*

Պետ. Կենտ. Արխիվ:

Դաշ. Կառ. Ներքին Գործերի Մինիստրութիան Գաղտնի գրութիուններ

Գործ N 1763; եջ 230

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 2, գ. 635, թթ. 12-17, պատճեն, մեքենագիր*

## No 52

## ՀԱՏՎԱԾՆԵՐ ԿԱՐՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՕՐԳԱՆ «ԱՇԽԱՏԱՎՈՐԻ ՁԱՅՆ» ԹԵՐԹՈՒՄ ՏՊԱԳՐՎԱԾ ՆՅՈՒԹԻՑ

*Կարսից գյուղմթերքի և այլ ապրանքների արտահանման մասին, թեև մարզն ու քաղաքն իրենք ունեն այդ ամենի խիստ պահանջն ու կարիքը*

*(2 հուլիսի, 1920թ.)*

«...Կարսի մեջ չէ կարելի ճարել, յուղ, պանիր, միս, բայց Կարսի շրջանից Բաթում և Թիֆլիս կերթա այդ ամենը:

...Անասնավաճառները Կարսի անասուններով կողողեն Վրաստանը: Բուրդը խուզվեցավ, մեկ ֆունտ բուրդ անգամ չծախվեցավ Կարսի մեջ:

...Մեր սահմանապահ պաշտոնյաները դժբախտաբար իրենց կոչմանը վրա չեն գտնվիր, զուրկ են այն գիտակցությունեն, որով միայն կարելի է սովե ազատել հայրենիքը և զայն վերաշինել, ռուս պաշտոնյաներու բարքերը ժառանգած լինիլ կթվին և մեր քաղաքական ներկա կացությունը կչարաշահեն աններելի անբարեխղճությամբ...»:

*ԱՇԽԱՏԱՎՈՐ ՁԱՅՆ, Կարս, Ուրբաթ, No 9, 2 հուլիսի, 1920թ.*

## No 53
## ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ

*Օլթին գրավելուց հետո հետագայում դավադրությունները կանխելու նպատակով այդ ենթաշրջանի արու ազգաբնակչության տեղահանման վերաբերյալ գեներալ Հովսեփյանի պահանջի, ենթաշրջանում իրականացրած թալանի, իրավիճակից օգտվող հույների հակաքրդական քայլերի, մի քանի քրդական գյուղերի՝ կամավոր կերպով Հայաստանի կազմի մեջ մտնելու և Հունաստան արտագաղթող հույների տարածքները հայերով արագորեն բնակեցնելու անհրաժեշտության մասին*
*(9 հուլիսի, 1920թ.)*

9 հուլիսի 1920թ. N 4617
ԿԱՐՍ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ Պ.ՄԻՆԻՍՏՐԻՆ

Անցյալ որը Գեն. Փիրումովը հրավիրեց ինձ խորհրդակցության, ուր գեն. Ոսեփովը պահանջ դրեց հեռացնելու դեպի Կարս Ոլթի գավառի գրաված բոլոր գյուղերի արու ազգաբնակությունը: Յես չեմ կարող, ասաց Ոսեփովը, շարժվել առաջ, թե իմ դիմացը և թե թիկունքում թշնամի ունենալով, նամանավանդ, ավելացրեց նա, այդ գյուղերը դավադրություն են պատրաստում իմ դեմ, հենց վոր շարժվեյի դեպի Ոլթի: Բացի այդ, գեն. Ոսիփովը պահանջում եր, վոր պաշտոնից հեռացվի նոր նշանակված գավառապետ Իզո-Բեկ, նույն միտումներով:

Յես վոչ մի տեղեկություն չունենալով գեներալին սպառնող մեծ, նորա ասելով, վտանգի մասին և վերլուծելով խնդիրը միայն սկզբունքով, ասացի, վոր, չառարկելով նրան ըստ եյության, մենք պետք ե հաշվի առնենք, բացի գեներալի անձնական կարծիքը, պայմանների այն բաղադրությունը, վոր ժամանակից մթնոլորդն ե կազմում: Այսոր մենք տիրում ենք այն վայրը, վորի բնակչությունը Իզո-Բեկի կուսակից ազգակիցները, հավիրել են մեզ դեռ անցյալ տարի: Գրավելով այդ տարածությունը, ինչպես վկայեցին յերկու գեներալներն ել, մենք խպառ թալանեցինք ազգաբնակությունը:

Բացառություն չկազմեց և մեր կողմնակից Իզո-Բեկը, վորին մենք անցյալ տարի դեռ վստահացանք յերկու գնդացիր, վոր և հետ ստացանք այդ գյուղերը գրավելիս: Թալանվեց նա յեվս: Չժխտելով այդ բոլորը, գեներալ Ոսեփովը պարզեց, վոր հենց այդ թալանն ե ջղայինացրել ազգաբնակությունը և վոր հենց այդ ե հիմք տալիս իրան հավատալու, վոր այդ ջղայնացած ամբոխը պատեհ դեպքում, կխփի նրան թիկունքից:

Այդ միտումներով, յես, առաջինը անարդար եմ գտնում ազգաբնակությանը հեռացնելը իր բնակավայրից: Յերկրորդը, մենք

պետք է հաշվի առնենք, վոր նոր բռնություն թույլ տալով ազգաբնակոիթյան դեմ, կը գրգռենք մեր դեմ ամբոխը մեր սահմանակից Տաճկաստանում և ով գիտե, թե ինչ հոգեբանական անդրադառնում ունենան կրքերը այդ առանցքում: Բացի այդ, մենք չպետք ե աչքաթող անենք և մեր թիկունքը, վոր ամբողջությամբ Ոլթեցիների ցեղակից Արդահանի քրդությունն ե, իսկ ապա տարածվում ե Զարուշադը, Աղաբաբեն: Միամտություն կլիներ կարծելու, վոր մեզ շրջապատող ձորերը համակարծիք կլինեն այս խնդրում մեզ հետ: Յեվ այդ ակտը, իմ կարծիքով, կստեղծի մեզ մի նոր մեծ բարդություն, վորով պարապել մենք վոչ ժամանակ ունենք, վոչ միջոցներ: Գեներալները, լսելով իմ կարծիքը, համաձայնվեցին ինձ հետ, վոր Գեն. Ոսեփովի առաջարկությունը յերկսայր միջոց ե: Այդ միտումներով վորոշվեց ուժեղացնել մի 300 հոգով գրաված վայրում միլիցիան և ամեն գյուղերում 10-15 հոգուց մի մի պահակ դնել իրավակարգը պահպանելու համար և այդ տարածության վրա հսկելու համար: Բացի այդ, յես պահանջել եմ ինձ մոտ Կարս, մի քանի անվանիներ այդտեղից, վորոնց մի պատրվակով կպահեմ ինձ մոտ, մինչև վոր Ոլթիի խնդիրը լուծվի: Գալով գավառապետ Իզո-Բեկին հեռացնելու պահանջին, յես ինկատի ունենալով, վոր, բացի գեն. Ոսեփովի լոկ անձնական կարծիքից այդ Իզո-Բեկը նշանակվել ե հենց նույն Ոսեփովի հատուկ խնդիրով, յես գտնում եմ, վոր գեներալի պահանջը վոչ միայն անհիմն ե, այլ և առնվազը տարորինակ: Հեռացնելով Իզո-Բեկին, մենք իսպառ կը կորցնենք յերկրի համակրությունը:

Յեվ, վերջապես, նկատի ունենալով, վոր Իզո-Բեկը ինքնագլուխ չի, վոր նա յենթարկվումե փորձված, հեռատես և զգույշ Կարսի գավառապետ Տեր Անտոնյանին, վորին ուղարկելով այնտեղ յես նկատի ունեյի գործի վոչ միայն վարչական, այլ և քաղաքական միտումները, յես հնարավորություն չգտա Իզո-Բեկին հեռացնելու պաշտոնից:

Գեներալները համաձայնվեցին ինձ հետ: Իսկ յերբ մենք գեներալների հետ բանակցում եյինք հիշած խնդիրների մասին, Իզո-Բեկը, ինչպես գիտեք իմ յերեկվա ծածկագիր հեռագրից, կատարելով իմ պատվերը, անցնում ե Թաուսկերտի գավառամասը և համոզում ե ազգաբնակությունը հպատակություն հայտնել:

Անձնատուր են լինում յերկու Փանազկերտները և յերբ այդ բանը իմանում են հույները, վորոնք Գեներալ Ոսեփովի առաջապահ դիրքերի կամանդներն են, հարձակում են գործում այդ գյուղերի վրա և քշում մի յերկուսի վոչխարն ու տավարը, իսկ մյուսները տեսնելով այդ բանը, փախչում են:

Արդահանի գավառի հույները գաղթում են Հունաստան և ուզում են ծախել իրանց թե շարժականը և թե անշարժը: Յես արդեն գրել

և խնդրել եմ Ձեզ տեղեկացնել ինձ, թե վորտեղից կարող ենք ուղղել այդտեղ 17 գյուղ բնակեցնելու համար գաղթականություն: Յերեկ այս առիթով յես տեսնվեցի Մինիստրի ոգնական Քաջբերունու հետ և նա խոստացավ Ալեքսանդրապոլից ուղարկել:

Յես կարծում եմ, վոր մենք պետք ե շտապենք գնելու հույներից վոչ միայն անշարժը, այլ և ցանքսերը և բոլոր շարժականը, ի դեպ այդ վորջինը նրանք կամ կը ծախեն թյուրքերին կամ մի կերպ կը տանեն Վրաստան: Ոլթիի հացը հասել ե, Փինակի շրջանում մի տարածության 10 քառակուսի վերստաչափ ամբողջովին հացի անխնամ արտեր են: Այսոր յես ուղարկում եմ այնտեղ գյուղատնտես Աղամալյանին, վորին պատվիրեցի կազմակերպել գավառապետի հետ միասին հացի կիսրար հավաքման գործը: Նույն հրահանգները արել եմ հացի և խոտի վերաբերմամբ և մյուս գավառներում:

Վաղը մի խումբ տաճկահայեր, խնուսցիներ մալականների հետ միասին, ուղարկում եմ Ոլթի այդ հացերը հավաքելու:

Ազգային տրամադրությունը յերկրում դեռ բարձր ե և միանգամայն հակառակ կոմունիստական ձեռնարկություններին, բայց մենք պետք ե ոգտագործենք տրամադրությունը և պետք ե բավարարենք այն մինիմալ պահանջները, վոր տրվեցին մայիսին: Յես չեմ ծանրանա այն խնդրի վերա, վորովհետեվ մանրամասնությունները հայտնի յեն պարլամենտի անդամ Աղբալյանին և նորա աշխատակիցներին:

Յերկիրը զբաղված ե արդեն աշնան հոգսերով և կարծում եմ, վոր քաղաքական զառանցանքների տեղիք չկա:

ՆԱՀԱՆԳԱՊԵՏ՝ ՂՈՐՂԱՆՅԱՆ *ստորագրություն*

ԴԻՎԱՆԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

Մ.ԴՈԽԻԿՅԱՆ *ստորագրություն*

Ի Տ. ԳՈՐԾԱՎԱՐԻ՝ ՍԻՆԱՆՅԱՆ *ստորագրություն*

Պետ. Կենտ. Արխիվ: Դաշ-Կառավ. Ներք.Գործ. Մին.:
Գործ Նո. 1800, եջ 5

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 2, գ. 635, թթ. 7-9, պատճեն, մեքենագիր*

## No 54

## ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ

*Անիում իրանանացված պեղումների գտածո նյութերի թալանը կանխելու և այնտեղ մշտական վերահսկողություն սահմանելու մասին (21 հուլիսի, 1920թ.)*

21 հուլիսի 1920թ. — 27 հուլիսի 1920թ.
Կարս — Երեւան

Ներքին գործերի պ. Մինիստրին

Ներկայացնելով ի լրումն անցեալ յունիսի 4-ի No 2936 իմ գրութեան Կարսի գաւառապետի օգնականի զեկուցագիրը Անիին վերաբերյալ, հաղորդում եմ, որ հնութիւնների յափշտակութիւնը վերաբերվում է այն անցողական ժամանակին, երբ նահանգումս հայկական իշխանութիւնը գոյութիւն չուներ և կամ լաւ չէր կազմակերպվել: Այդ յափշտակութիւնները, ինչպես երևում է պ. Թորոմանեանի գրաւոր ցուցմունքից արդեն վաղուց դադարել են, իսկ ավերակների պահպանութեան համար նշանակված է մշտական պահակ ութ միլիցիօներներից:

Կարսի Նահանգապետ *ստորագրություն*
Դիվանապետի պաշտոնակատար *ստորագրություն*
Գործավար *ստորագրություն*

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 50, թթ. 5-7 և շրջ., ձեռագիր*

## No 55

## ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ

*Հեռագրաշիֆրի հաճախակի փոփոխության անհրաժեշտության մասին*
*(26 հուլիսի, 1920թ.)*

Ներքին գործերի պ. մինիստրին

Խնդրում եմ յանձնարարել ում հարկն է փոփոխութեան ենթարկել հեռագրաշիֆրը, և այդ հարկատր է անել երկու ամիսը մի անգամ: Կան սիրողներ, եթէ չասենք աւելին, որոնք օրւայ նորութիւններ ձեռք բերելու համար և անձնական մութ միտումներով, որի աստառը, ի հարկէ, ինտրիգան է, տրամադիր են թափանձել և այնտեղ, ուր մուտքը արգելւած է և այդ մթնոլորտում հարկաւոր է պարբերաբար փոփոխել շիֆրը: Ռուսաց իշխանութեան օրով, նամանաւանդ պատերազմի ընթացքում, շիֆրը փոխւում էր գրեթէ ամեն մի երկու ամսից յետոյ:

Նահանգապետ՝ Ղորղանեան *ստորագրություն*
Դիւանապետի պաշտօնակատար Մ.Դոխիկեան *ստորագրություն*
ի. տ. գործավարի Ս.Գէորգեան *ստորագրություն*

26 յուլիսի 1920թ.:

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 48, թ.231, ձեռագիր*
*Գրված է Կարսի քաղաքացիական նահանգապետի՝ հայերեն և ֆրանսերեն լեզուներով դրոշմակնիքով պաշտոնաթերթի վրա:*

**No 56**

ՀՈԴՎԱԾ «ԱՇԽԱՏԱՎՈՐ» ԹԵՐԹՈՒՄ

*Ներքին թշնամին՝ ի դեմս չարաշահումների և դրանց հեղինակների, ավելի զորեղ ու վտանգավոր է, քան արտաքինը*

*(6 օգոստոսի, 1920թ.)*

ՎԵՐՋ ՊԵՏՔ Ե ՏՐՎԻ

Վոր չարաշահությունը մի անբուժելի ցավ ու խոց ե դառել մեր կյանքում ընդհանրապես, իսկ Հայաստանում յեվ Ալեքսանդրապոլում մասնավորապես, անվիճելի ե: Մինչդեռ գոնե ուրիշ քաղաքներում, մանավանդ Յերեվանում, թե կառավարությունը Արտակարգ դատարանի միջոցավ յեվ թե քաղաքային ինքնավարությունը համառ կռիվ ե մղում չարաշահների յեվ չարաշահության դեմ յեվ որ չի անցնում վոր չկարդանք մի քանի տուգանգված չարաշահների մասին, մեզանում այդ ուղղությամբ բոլորովին վոչինչ չի արված:

Յեվ այդ ե պատճառը, վոր չնայելով մի քանի մթերքների, ինչպես որինակ հացի գնի անկումը 250-ից-120 ռուբլու, չնայելով մեր չեկերի բարձրացումը, խանութների ապրանքները, մասնավորապես աշխատանքները գնալով թանգանում են ու թանգանում: Հացի ֆունտը 250ռ. պատճառաբանող յեվ որական 1000ր. պահանջող աշխատավորը հացի 120 դառնալուց հետո 1500 ր. ե պահանջում որավարձ, գարու փութը 7-8000 րուբլու ժամանակ, յերբ դեռ խոտ ել չեր ճարվում, կառքը մինչեվ կայարան 150-200ր. եր վերցնում, այժմ յերբ կարելի ե 2-3000-ով գարի գնել յեվ ձրիաբար դուրս հանել ձիերը արածացնելու, 500 րուբլուց պակաս չեն վերցնում: Նույն մեսի, կաթի, նույնը յեվ ձվի ու այլ մթերքների վերաբերմամբ. Ել չեմ ասում խանութներում վաճառող վաճառականների քմահաճույքից կախված ապրանքները, վորոնց ցայտուն յեվ տիպիկ արտահայտիչն ե մեծամեծ խոստումներով մեր յերկրում բույն դրած իտալական «Սագո» ընկերությունը, վորը ինչպես գիտենք չարաշահության համար Յերեվանի Արտակարգ դատարանը տուգանել ե կես միլիոն րուբլով: Իսկ այստեղի բաժանմունքը շարունակում յեվ մեկին՝ հարյուր հանում սպառողի կռնակից:

Վորապես ապացույց կարող ենք մերել մի քանի թվեր, ցույց տալու համար թե ինչպիսի տոկոսների են հասցրել ու բարձրացրել ապրանքների իրանց խանութի:

Հասարակ Ֆլանելը վոր 4-5 ամիս առաջ ծախվում եր 70-80 րուբլիով դարձավ -120-150 յեվ այժմ ծախվում ե 700 րուբլիով:

Կոճի թելը 40-60ր. ծախվում ե 280թ. կոստյումը տղամ. 5000 ր. ծախվում ե 12000ր.: Թաշկինակի հատը 25ր., այժմ 210 կամ դյուժինը 2500ր. յեվ այսպես յեվ դեռ ավելի մյուս ապրանքների գները, այսինքն յընթացս 4-5 ամսվա թանգացրել են մեկին հինգ, նույնիսկ տասը անգամ:

Դա անհանդուրժելի ե:
Վերջապես պետք ե խիստ յեվ կտրուկ միջոցների դիմել կռվելու մեր մեջ բուն դրած յեվ արտաքին թշնամուց ավելի վտանգավոր ներքին յեվ զորեղ թշնամու՝ չարաշահության յեվ չարաշահների դեմ:
Պետք ե վերջ տրվի:

ԱՐՍՏԱՄ

*«ԱՇԽԱՏԱՎՈՐ» 1920թ. 6 օգոստոսի Նո. 41 եջ՝ 1 Ալեք-պոլ.*

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 2, գ. 624, թ. 11-12, պատճեն, մեքենագիր*

## No 57

ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ
*Փիլոսի խմբի կամավորների կատարած անասնագողության մասին*
*(12 օգոստոսի, 1920թ.)*

12 օգոստոսի 1920թ.
No 5374 Ներքին Գործոց պ. Մինիստրին
Յայտնում եմ, որ յուլիս ամսոյ 12-ին գիշերը յափշտակել ու տարել են Սողանլուղի շրջանի Ասպունջար գյուղի անասունները: Յանցավորներն են Փիլօսի խմբի կամավորները, որոնք գտնվում են Օլթիի զորամասում:

Ի.տ. Նահանգապետի՝ Փոխնահանգապետ *ստորագրություն*
Դիվանապետի պաշտոնակատար *ստորագրություն*
Գործավար *ստորագրություն*

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 309, թ. 117, ձեռագիր*
*Գրված է Կարսի քաղաքացիական նահանգապետի՝ հայերեն և ֆրանսերեն լեզուներով դրոշմակնիքով պաշտոնաթերթի վրա:*

## No 58

ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ
*Գեներալ Հովսեփյանի՝ մարզի քաղաքացիական իշխանության գործերին անհարկի միջամտելու և բնակչության շրջանում տեղական իշխանական մարմինների հանդեպ անվստահություն սերմանելու մասին*
*(16 օգոստոսի, 1920թ.)*

N 5421, 16 օգոստոսի 1920թ., N10593, 7 սեպտ., 1920թ.
г.Карсъ

Ներքին Գործերի պ. Մինիստրին

Վերադարձնելով գեն. Օսիփովի միջնորդութեան առիթով ծագած գրագրութիւնը, պատիւ ունեմ հաղորդելու, որ ռուս գիւղում ժամանակաւոր ապրող քրդերը հեռացած են Արդահանի գաւառապետի կարգադրութեամբ այդ գրութիւնը ստանալուց դեռ առաջ և ըստ էութեան խնդիրը սպառուած է: Բայց ես կուզէի Ձեր ուշադրութիւնը դարձնել, որ կողմնակի մարդիկ, որպէս այս անգամ գեն. Օսիփովը, իրաւունք են համարում միջամտելու վարչական գործերին և այդպիսով խաւար հասարակական մթնոլորտում ստեղծում են այնպիսի թերուղէմ կարծիքներ, որոնք միայն երերում են երկրի իրաւակարգը: Եւ պէտք չ՛կայ պարզելու, որ գեն. Օսիփովը, իր իրաւունքների մեկնութիւններով, առիթ է տուել ռուսներին այդպիսի մի բուն վարչական գործի առիթով դիմել իրան և ոչ տեղիս քաղաքական իշխանութեան: Հազիւ թէ պէտք է ասել, որ եթէ, նոյնիսկ թիւրիմացութեամբ, զինւորական բնոյթ ունեցող մի գրութիւն, ուղղուած լինէր ինձ, ես երբէք թոյլ չէի տայ ինձ մտնել այդ խնդրի վերլուծման մէջ և կուղակէի այդ գրութիւնը ի պատշաճ տնօրինութեան, այն էլ ոչ բարձր հրամանատարութեան, այլ զինւորական անմիջական իշխանութեան: Եւ ես կարծում եմ, որ այդպէս է պահանջում ոչ միայն օրէնքը, այլ և հասարակ էտիկան:

Նահանգապետ Ղորղանյան *ստորագրություն*
Դիւանապետի պաշտօնակատար Դոխիկյան *ստորագրություն*
Ի. տ. գործավարի Ե. Չալթիկյան *ստորագրություն*

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 48, թ. 218 և շրջ., ձեռագիր*
*Գրված է Կարսի քաղաքացիական նահանգապետի՝ հայերեն և ֆրանսերեն լեզուներով դրոշմակնիքով պաշտոնաթերթի վրա:*

## No 59

## ԳՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻՆ ԵՐԿՐԻ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ

*Մարզի տարածքում Փիլոսի խմբի կատարած թալանի վերաբերյալ արձանագրություն կազմելու անհրաժեշտության մասին*
*(18 օգոստոսի, 1920թ.)*

Մտ.10054 No 7774
18/VIII 20 18/VIII 20

ԿԱՐՍ
ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻՆ

Արձանագրութիւն կազմեցեք Փիլօսի խմբի կամավորների կատարած թալանի մասին եւ զեկուցեք Ներգործմինին, Ռազմմինին և Օլթիի զորամասերի հրամանատարին:

Ի. տ. դեպտեսչի *ստորագրություն*

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 309, թ. 116, պատճեն, մեքենագիր*

## No 60
## ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ
*Երկրի բարձրագույն իշխանության մշակվող քաղաքական կուրսի վերաբերյալ նահանգապետին ժամանակին իրազեկելու անհրաժեշտության մասին*
*(21 օգոստոսի, 1920թ.)*

N 5241, " ..." օգոստոսի, 1920թ. N 10184, 21 օգոստոսի, 1920թ
Г. Карс Ներքին Գործերի պ. Մինիստրին

Դուք գիտէք, իհարկէ, որ երկրի բարձրագոյն կառավարութիւնը քաղաքական այն բարդ մեքենան է, ուր անդրադառնում են կեանքի բոլոր կողմերը, իրանց բոլոր խայտաճամուկ մանրամասութիւններով: Եւ նահանգապետը, որ ոչ միայն ի կատար է ածում, այլև ուղղութիւն է տալիս նահանգի կեանքին, պէտք է ի վիճակի լինի պետութեան ձեռներեցութեան, նորա քաղաքական միտումներին և ընդհանուր անելիքներին ու գործելակերպին: Եւ եթէ ճիշտ է յայտնի դարձւածքը «թէ ինչինը ստեղծում է երաժշտութիւնը» հիտևապէս կառավարութեան միտումները, կարգադրութիւնները և տեղիկութիւնները, անջատ նոցա սուբիկտիւ բնոյթից, մեծ նշանակութիւն ունին կառավարութեան ընթացքի ընդհանուր սիստեմում: Այդ հիմունքներով և միտումներով, ես կարծում եմ, երկրի նահանգապետները միշտ պէտք է իրազեկ լինեն կառավարչական ընդհանուր կուրսին, մենք պէտք է տեղիակ լինենք կառավարչական ընդհանուր անցուդարձին, որպէսզի, շրջահայաց լինելով, կարողանանք ըստ այնմ ուղղել մեզ յանձնած առագաստները: Քաղաքականութիւնը ճիշտ գիտութիւն չէ և որոշ սահմաններում չի պարփակւում: Մենք կարող ենք այսօր ընթանալ այսպէս, իսկ վաղը մի այլ ուղղութեամբ, համակերպվելով մեր պետական ընդհանուր նպատակներին և որոշումներին:

Այդ հիմունքներով խնդրում եմ իրազէկ անել ինձ բոլոր հարկաւոր տեղեկութիւնների և միտումների մասին ոչ նորա համար, իհարկէ, որ ես ի վիճակի դարձնեմ այդ բոլորի մասին ինձ ենթակայ պաշտօնեաներին և հաստատութիւններին, կամ հասարակութեանը, այլ նորա համար, որ ես, ներդաշնակիմ կառավարութեան հետ, ուղղեմ նահանգի քաղաքական ղեկը: Թոյլ եմ տալիս կարծելու, որ ես կարող կլինեմ ինքս որոշելու, թէ ինձ հաղորդւած տեղեկութիւններից որը կարող է հրապարակ հանուել և որը նահանգապետի անձնական դիդողութիւնների համար է միայն:

Նահանգապետ՝ *Ղորղանյան* *ստորագրություն*
Դիվանապիտի պաշտոնակատար՝ *Դոխիկյան* *ստորագրություն*
Ի.Տ. գործավար *անընթեռնելի* *ստորագրություն*

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 48, թ. 209 և շրջ., ձեռագիր*
*Գրված է Կարսի քաղաքացիական նահանգապետի՝ հայերեն և ֆրանսերեն լեզուներով դրոշմակնիքով պաշտոնաթերթի վրա:*

## No 61

## ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ

*Բաշկադիկլար կայարանի մոտ տեղի ունեցած միջադեպի մասին (24 օգոստոսի, 1920թ.)*

24.08.1920г.

Г. Карсъ Министру Внутреннихъ Дѣлъ.

Вчера Генералъ Пирумовъ получилъ телеграфное со ст. Башкадыкляръ донесеніе, что татры большой силой поднялись, началась пальба, убить солдатъ и желѣзнодорожный путь на Карсъ отрѣзаны. Что и говоритъ, конечно, что здѣсь поднялась суета. Я сейчасъ же выслалъ на место Начальника Карсскаго Округа съ однимъ-вліятельнымъ татариномъ и дѣло, по разслѣдованіи, представляется въ такомъ видѣ: никто желѣзнодорожный путь не преграждаль. Капитанъ 1-го полка Никогосовъ поручилъ нѣсколькимъ своимъ солдатамъ погнать къ себѣ домой въ Александрополь, трехъ коровъ и нѣсколько баранов. Около ст, Башкадыкляръ, проходя по шоссѣ мимо мусульманскаго селенія, солдаты встрѣтили татарина при кинжалѣ. Хотѣли отнять у него кинжалъ, завязалась перестрѣлка, сбежался нарадъ, раздались выстрѣлы, солдаты, бросивъ скотъ, бѣжали и въ этой суматохѣ пропалъ одинъ изъ солдатъ. На этомъ кончилось все. Начальникъ Округа успокоилъ на мѣстѣ умы и произведенное разслѣдованіе будетъ направлено въ установленномъ порядкѣ.

ГУБЕРНАТОРЪ *ստորագրություն*
За Правителя Канцеляріи *ստորագրություն*
Дѣлопроизводитель *ստորագրություն*

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 62, թ. 15, պատճեն, մեքենագիր*

## No 62

## ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ

*Նահանգի միլիցիոներներին հասանելիք այլուրն անհրաժեշտ վայրեր հասցնելու համար վարկ բաց թողնելու խնդրանքով (29 օգոստոսի, 1920թ.)*

29 օգոստոսի 1920թ.

No 6240 Շտապ

г.Карсъ Ներքին Գործերի Պ.Մինիստրին

Որովհետև միլիցիային ալիւրը ձրի պէտք է տրւի, բահաճեցէք ինձ վարկ բանալ, աւանսաբար, 200 հազար րուբլի, ալիւրը գավառները տեղափոխելու համար:

Նահանգապետ Ղորղանեան *ստորագրություն*
Դիվանապետի պաշտօնակատար *ստորագրություն*
Գործավար *ստորագրություն*

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 48, թ. 232, ձեռագիր*

**No 63**

ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ

*Օլթիում հեռագրակայան հիմնելու անհրաժեշտության և նահանգապետի՝ այդ հարցին վերաբերող բազմաթիվ գրություններն անպատասխան թողնելու մասին*
*(11 սեպտեմբերի, 1920թ.)*

N 6403, 11 սեպտեմբերի 1920թ. N10774, 14 սեպտ., 1920թ.
г.Карсъ Պատճէն

Հաղորդակցութիան պ. Մինիստրին:
Ամիսների ընթացքում իմ բազմաթիւ գրութիւններս և հեռագրներս Օլթիի հեռագրական կայեան յիմնելու մասին շրջանառում են միայն և միայն թղթի առանցքում: Իսկ իմ հեռագրներս, որ ուղարկում եմ Մերդենեկ Օլթիի գաւառապետի անունով, կամ անհետք կորչում են, կամ տեղ են հասնում օրերից յետոյ, կապւած լինելով Մերդենեկի պաշտօնեաների քմահաճոյքի հետ:
Ներողութիւն եմ խնդրում, որ ստիպւածիյ նորից անհանգստացնելու Ձեզ, բայց չ՞է որ պետականութիւնը չի կարող զարգացել այդ օրինակ մթնոլորտում:
Ստորագրել է՝ Նահանգապետ Ղարղանեան,
Վավերացրել՝ պ.կ. Դիւանապետի՝ Դոխիկիան
Ճիշտ է՝ Ի.տ. գործավարի՝ Բայաթիան *ստորագրություն*

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 48, թ. 230, ձեռագիր*
*Գրված է Կարսի քաղաքացիական նահանգապետի՝ հայերեն և ֆրանսերեն լեզուներով դրոշմակնիքով պաշտոնաթերթի վրա:*

**No 64**

ԳՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻՆ

*Հազարավոր անասուններ Վրաստան տանելու վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու մասին*
*(18 սեպտեմբերի, 1920թ.)*

18/ IX-20 Խիստ շտապ

Ղարս
Նահանգապետին

Խնդրում եմ անյապաղ ուղարկել նախարարութեանս Արդահանի սահմանագլխից Վրաստան տարւած տասնեակ հազարաւոր տաւարների մասին փաստաթղթերը:
Իտ վարչդեպտեսչի

*ՀԱԱ, Ֆ-Պ. 201, ց. 1, գ. 23, թ. 63, պատճեն, մեքենագիր*

## No 65

ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԶԵԿՈՒՅՑ

*Մարզի գյուղերում հայերի կողմից անասնագողության մասին*

*(26 սեպտեմբերի, 1920թ.)*

Копія съ рапорта Коменданта с. Радіоновки поручика Дандурова, оть 24-го сего сентября за № 29. Карсъ Губернатору.

Копія Начгруппы, Копія Начбригу.

24 сентября 23 часа 20 конныхъ Мурадхана или Пилоса угнали изъ селенія Лала-Варгинисъ весъ скотъ въ сторону Карса черезъ селеніе Алтунъ-Булахъ въ Бердикъ Ограбленъ бывшій случайно въ этомъ селеніи старшина селенія Арпашенъ Сулейманъ № 29 Поручикъ Дандуровъ.

Вѣрно: Дѣлопроизводитель Канцеляріи
Карсскаго Губернатора *ստորագրություն*

Министру Внутреннихь Дѣлъ. Для свѣдѣнія.

“26” сентября 1920г. г. Карсъ, № 6809

ГУБЕРНАТОРЪ Карсской Области *ստորագրություն*

И.Об. Правителя Канцеляріи *ստորագրություն*

Дѣлопроизводитель *ստորագրություն*

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 48, թ. 282, պատճեն, մեքենագիր*

## No 66

ՄԵՋԲԵՐՈՒՄ «ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՕՐԵՆՔԻՑ

*(6 հոկտեմբերի, 1920թ.)*

Ժամանակավոր օրենք պաշտոնեանների հանցագործությունների մասին

1.

«…Պաշտոնեան, որը կաշառք կվերցնի փողով, իրով, կամ որևէ այլ ձևով,… պատիժը՝ 1 տարվա բանտարկություն, կամ 4 տարի տաժանակիր աշխատանք, խոշոր չափերի դեպքում- մինչև մահապատիժ…»:

*«ՅԱՌԱՋ», չորեքշաբթի, 6 հոկտեմբերի, 1920թ.*

**No 67**

ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ

*Բռնություններին ու թալանին վերջ փալու, թուրքերի և քրդերի հետ բարեկամական հարաբերություններ սփեղծելու նպափակահարմարության վերաբերյալ Կարսի մարզի զինվորական իշխանության առաջարկության և դրա խիստ ուշացած լինելու մասին (28 հոկփեմբերի, 1920թ.)*

N ..., 28 հոկտեմբերի 1920թ.,
г.Карсъ

Գաղտնի

Ներքին Գործերի պ. Մինիստրին

Գեներալ Սիլիկովը հաղորդում է ինձ այսօր զօրաց մինիստրի հրամանի պատճէնը, որով առաջարկւում է զինւորական իշխանութեանը բարեկամական յարաբերութիւններ ստեղծել թուրքերի և քրդերի հետ և վերջ տալ թալանին և բռնութեան:

Եւ գէթ այսօր, իրբ մեր վերաբերմունքը դէպի այդ ազգութիւնները զրկեց մեզ գրեթէ երեք գաւառից, այդ որոշումը, որը ստեղծւած մթնոլորդում ունի միայն սկզբունքային նշանակութիւն, այնուամենայնիւ գոհացուցիչ է:

Դուք գիտէք, անշուշտ, որ Կարս մտնելու օրից ես աշխատում էի խոնարեիցնիլ մեր պետական կոչման առաջ այս այլատարր երկիրը և յոյս ունէի անել այդ քաղաքացիական ուղինիրով: Ես օգտւում եմ առիթից մի աւիլորդ անգամ ընդգծելու, որ մեր լեռներում քաղաքական զառանցանքներ չըկան, որ Ադրբէյջան Տաճկական արկածները ոչ մի օրգանական իմաստ չունին մեզանում և որ երկիրը տրամադիր է գնալու միայն ոյժեղ և լուրջ կառավարութիան յետևից: Եթէ մենք զբաղեցնէինք երկիրը քաղաքացիօրէն և հաւաստիացնէինք նորան մեր անաչառ արդարադատ վերաբիրմունքի մէջ, այսօր այդ քրդերը և թուրքերը կը լինէին մեզ հիտ և ոչ թէ մեր դէմ:

Բայց այսօր իրերի ընդհանուր իմաստը այնչափ խղճալի չէ, մարդկանց գազանային, գիշատիչ տրամադրութիւնը այնչափ սանձարձակ կերպարանք է ստացել, որ ես դժւարանում եմ ասիլ թէ որտեղ կը հանգչի այդ տարրերային բռնկումը:

Թալանը և բռնութիւնները շարունակւում են, այն կամայական-բազմիշխանութիւնը, որ ստեղծւել է զինւորական դրութեամբ, միանգամայն չեզոքացրել է օրինականութիւնը և գէթ այսօր, իրբ շառաչում է ոյժը, օրէնքը մի ակադեմիկ հասկացողութիւն է միայն: Գտնվելով եռուն և ալէկոծ կաթսայի մօտ, ես ի վիճակի եմ իրերին աւելի քան որ նէ մէկը և եթէ դառնացնելով Ձեր հոգացող առ

երկիրը վերաբերմունքը, անուանում եմ իրերը իրանց սեփական անունով, ես ուզում եմ միայն ներկայացնիլ իմ մինիստրին երկրի իսկական պատկերը:

Բայց ես յոյս ունիմ, որ մրրիկը կանցնի, որ իրաւունքը և արդարութիւնը կը գրաւին իրանց տեղը և մենք նորից առաջ կը մղենք մեր պետական առագաստները մեր ժողովրդի և մեր կառավարութիան իղձիրի համաձայն:

Եւ ես կը շարունակիմ մաքառիլ այդ անիշխան-կամայականութիւնների դէմ իմ բոլոր ունեցած միջոցներով և ոյժերով:

| | |
|---|---|
| Նահանգապետ՝ Ղորղանյան | *ստորագրություն* |
| Դիվանապիտի պաշտօնակատար՝ Դոխիկյան | *ստորագրություն* |
| Իտ. Գործավար՝անընթեռնելի | *ստորագրություն* |

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 55, թ. 1 և շրջ., ձեռագիր*
*Գրված է Կարսի քաղաքացիական նահանգապետի՝ հայերեն և ֆրանսերեն լեզուներով դրոշմակնիքով պաշտոնաթերթի վրա:*

## No 68
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄ

*Դրամանիշների շուկայում չարաշահումների դեմ պայքարելու մասին*
*(29 հոկտեմբերի, 1920թ.)*

### ՊԱՐՏԱԴԻՐ ՎՈՐՈՇՈՒՄ

Հայաստանի Հանրապետության դրամանիշների վերաբերմամբ աճող չարաշահության /սպեկուլացիյա/ վերջ տալու համար սրանով հայտարարում եմ ի գիտություն ամենքի:

1. Չեկերի ընդունելը պարտադիր ե բոլոր վճարումներում բոների հետ հավասար:

2. Ապրանքների վաճառումը բացառապես բոներով, ինչպես նայեվ այլ գործարքներ բացառապես բոներով կատարելը արգելվում ե. արգելվում ե նայեվ ապրանքների վաճառումը չեկով ավելի բարձր գներով, քան բոնով:

3. Բոների վաճառումը չեկով ավելի բարձր գներով, քան նշանակած ե իրենց դրամանիշների վրա, արգելվում ե:

Այս վորոշումի խախտումը կճանաչվի իբրեվ չարաշահություն դրամանիշների վերաբերմամբ, այդպիսի չարաշահության մեջ մեղադրվողները կամ կիանձնվեն արտակարգ դատարանին կամ վարչական կարգով կյենթարկվեն բանտարկության յերեք ամիս ժամանակով, առանց տուգանքով փոխարինելու, իսկ այն ապրանքները, բոնը, կամ չեկը, վորոնց միջոցով այդ անձինք

պարապել են Հայաստանի Հանրապետության դրամանիշների վերաբերմամբ չարաշահությամբ կգրավվեն արքունիս:
Միլիցիայի պաշտոնյաներին ունենալ անթերի հսկողություն սույն վորոշմամբ ճշտիվ գործադրման վրա: Դրամանիշների վերաբեմամբ չարաշահության հայտնագործողները ստանում են գանձարանից արքունիս գրավված ապրանքների յեվ դրամի արժեքի 10 տոկոսի չափով վարձատրություն:

Ֆինանսների մինիստր Ա. ԳՅՈՒԼԽԱՆԴԱՆՅԱՆ
Ներքին Գործոց Մինիստր Ռ. Տ. ՄԻՆԱՍՅԱՆ
Տպարան Ներքին Գործոց Նախարարության.

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 2, գ. 629, թ. 11, մեքենագիր*

**No 69**

ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

*Կարսի անկման մասին*

*(1 նոյեմբերի, 1920թ.)*

**ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ!**

Կարսը ընկել է: Մեր զօրքերը անկարող դիմանալու թշնամու գրոհին կուից յետոյ մեծ մասով նահանջել են դեպի Պարկետ: Կարսում մնացած փոքրաթիւ զօրամասերն անձնատուր են եղել: Քաղաքը և ամրութիւնները անցել են տաճիկների ձեռքը:

Այս ահաւոր իրողութեան առաջ կառավարութիւնը հարց է տալիս ձեզ, Քաղաքացիներ, ուզում էք դուք կուել արշաւող թշնամու դէմ, կամենում էք պաշտպանել ձեր հայրենիքի անկախութիւնը, ժողովրդի կեանքը, էեր նամուսը: Ինչ էք մտածում դուք:

Կառավարութեան համար այս հարցին երկու պատասխան չկայ. նա վճռել է կուել մինչև վերջին հնարաւորութիւնը մինչև մահ: Լաւ է մեռնել պատւով, քան ոչխարի պէս կոտորուել տաճիկի ձեռքից: Լաւ է մահ գտնել դիրքերում, քան թէ տեսնել հայրենիքի խորտակումը:

Քաղաքացիներ, փորձութեան այս սարսափելի ժամին մոռացէք ամեն անձնական գործ և ամբողջ էութեամբ նւիրուեցէք երկրի պաշտպանութեանը: Պատերազմը պէտք է լինի համաժողովրդական: Ամեն հայ զէնքը ձեռքին պէտք է պաշտպան կանգնի Հայաստանի ազատութեան, Մահ կամ ազատութիւն այս է օրւայ նշանաբանը:

Հայաստանի Հանրապետութեան Կառավարութիւն:

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 54, թ. 72, տպագիր օրինակ*

**No 70**
ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
5 նոյեմբերի, 1920թ.

ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Հայաստանի ժողովուրդ

Կարսի անկումից յետոյ թշնամին կանգ չառաւ: Տաճիկ զօրամասերը շտապում են առաջ այն հաշւով, որ յանկարծակիի եկած հայկական զօրքը ակնարող կլինի դիմանալու: Կարսի շրջանի հայ ժողովուրդը մեծագոյն մասը տեղահան է եղած: Մինչև Արփաչայ հայ գիւղերը դատարկւած են, և գիւղացիութիւնը նորից փախստական է եղել: Նորից աւեր ու տնաքանդութիւն, նորից սով ու թշւառութիւն: Նորից կոտորած:

Տաճիկ սակաւաթիւ զօրքերն արդէն ծեծում են Շիրակի կենտրոնի դռները: Ժողովուրդը գլուխը կորցրած փախչում է:

Ինչու՞ է, սակայն, այս փախուստը: Ու՞ր է փախչում խելակորույս ամբոխը: Հայաստանի բոլոր սահմանները փակ են: Փախուստի դուռ չկայ: Յետևից անողորմ թշնամին է գալիս, առջևից՝ փակ սահմաններ: Միակ ելքը կռիւն է:

Կամ կռւով փրկւել-կամ պատւով մեռնել: Այս է օրւայ հրամայականը: Ուրիշ բանի մասին մտածելը յիմարութիւն է:

Հայ ժողովուրդ, մեր խօսքը քեզ է ուղղւած: Թօթափիր վրայիցդ անտարբերութիւնը, մոռացիր անձնական գործդ, մոռացիր մի րոպէ գծուծ հաշիներդ, մոռացիր արտդ, այգիդ, արհեստանոցդ, խանութդ: Մոռացիր ամեն բան և նետւիր դէպի ճակատ: Ով զինապարտ է, թող շտապէ զօրամասերը: Ով զինւորական հասակից վեր է, թող սեփական զէնքով ու 7 օրւայ հացով, իսկ ձի ունեցողը նաև ձիով դնէ ....... դրութեան տակ իբրև կամաւոր: Կառավարութիւնը կօգտագործէ ամեն ոյժ հայրենիքի պաշտպանութեան համար:

Հայ զինւոր, որ կոչւած ես Ազատ Հայաստանի փառքը լինելու, ու՞ր է քո գովւած արիութիւնն ու խիզախութիւնը:

Մի՞թէ դու մոռացել ես Սարդարապատի ու Ղարաքիլիսայի հերոսամարտը: Մի՞թէ ջնջւելու են քո յիշողութիւնից այն հազարաւոր հերոսները, որոնք հայրենիքի փառքի համար զոհւեցին: Սթափւիր, հեռու մղիր քեզանից վախն ու թուլամորթութիւնը: Ուժեղ սեղմիր շարքերդ և յառաջ դէպի դիրքերը: Յառաջ անվախ ու համարձակ: Թշնամին փոքրաթիւ է և թոյլ: Մի գրոհ, մի ուժեղ հարւած և յաղթութիւնը ապահովւած է՜

Հայաստանի ժողովուրդ, դու մենակ ես, խելագարութիւն է ինչ որ հրաշքի յոյսով ապրելը: Քեզ միայն քո սեփական ոյժը կփրկէ:

Կառավարութիւնը նորից ու նորից յիշեցնում է քեզ-քո փրկութիւնը միայն ինքնագործունէութեան, միայն կռւի մէջ է:

Ուշքի եկ, շարժւիր, հաւաքիր քո ամբողջ զօրութիւնը: Թշնամին սպառնում է մեր գոյութեան: Եթէ ուզում ենք ապրել, պէտք է կռւենք:

Կռիւ կամ մահ-ուրիշ ելք չկայ:

Կառավարութիւն Հայաստանի Հանրապետութեան

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 54, թ. 73, տպագիր օրինակ*

**No 71**

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

*Կարսի անկումից հետո Ստ.Ղորղանյանին Ներքին Գործոց Նախարարի օգնական նշանակելու մասին*

*(10 նոյեմբերի, 1920թ.)*

10 նոյեմբեր, 1920թ. Շրջաբերական

Յայտնում եմ ի գիտութիւն համաձայն վարչապետի հրահանգի Կարսի Նահանգապետ Ղորղանեանը նշանակւած է ներքին Գործոց նախարարի Օգնականի պաշտօնում սոյն նոյեմբերի 5-ից

Վարչդեպտեսուչ

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 54, թ. 77, պատճեն,մեքենագիր*

**No 72**

ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐ

*Քեմալականների կողմից հաշտության բանակցությունների առաջարկը մերժելու մասին*

*(11 նոյեմբերի, 1920թ.)*

Շտապ Հերթից դուրս

Ղարաքիլիսա

Վարշամեանին բոլոր Պարլամենտի Անդամներին

Տաճիկները մերժել են հաշտութեան բանակցութիւնները սկսել կէտ Ոտքի հանեցէք ամբողջ ժողովուրդը եւ թեւ ու թիկունք հանդիսացէք Սեպուհին եւ մեր բանակին կէտ Կառավարութիւնը դիմել է ժողովրդին եւ սպասում է լայն օժանդակութեան կէտ Օգնեցէք նաեւ Թիֆլիզի ոյժերին

Ներքգործմին Արարատեան *ստորագրություն*

Ճիշտ է գործավար *ստորագրություն*

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 54, թ. 78, պատճեն, մեքենագիր*

**No 73**
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ
*Քեմալականների հետ հարկադրական զինադադար կնքելու և դրան համապատասխան հայկական կողմի հետագա անելիքների մասին*
*(20 նոյեմբերի, 1920թ.)*

Շրջաբերական

Կառավարութիւնը հարկադրաբար զինադադար է կնքել Տաճիկների հետ կէտ Հաշտութեան բանակցութիւնները կըսկսեն Ալէքսանդրապոլում ամսիս 24 երեկոյան կէտ հաշտութեան բանակցութիւնների ընթացքում մեր եւ Տաճկաց զօրամասերի միջեւ պէտք է լինի մի չեզոք գօտի կէտ Տաճիկները պէտք է բռնեն հետեւեալ գիծը Արտաչայ գետը ապա կայարան Ալագօզ Կրօղլի Կուլիջան գիւղերը Նալբանդ կայարանը ու Թոգորան գիւղը կէտ Այս գիւղերի եւ կայարանների վերայով քաշեցինք քարտէզի վերայ մի ուղիղ գիծ որից արեւելք ոչ ժողովուրդը եւ ոչ էլ ադմինիստրացիան թէ գաւառային թէ երկաթուղային պէտք է մնան իրենց տեղերում կէտ Այդ գծից դէպի արեւմուտք ադմինիստրացիան չըպէտք է մնայ, ժողովուրդը ցանկալի է որ մնա իր տեղերում կէտ նկատի ունենալով այս դրութիւնը առաջարկում եմ Ձեզ հեռագիրս ստանալուն պէս անել հետեւեալը կէտ Վերոյիշեալ գծից մէկից մինչեւ հինգ վերստ նայած տեղին ու պայմաններին նշանակել միլիցիական պօստեր Տաճիկների համար երեւացող կէտերում կէտ Դնել սպիտակ դրօշակներ կէտ Նշանակել այդ կէտերում գիտակից եւ պատասխանատու ղեկավարներ յանձնարարելով նոցա բարեկամական յարաբերութիւն ստեղծել ֆրոնտի տաճիկների հետ եւ միաժամանակ թոյլ չըտալ Տաճիկներին անցնել գիծը իւրաքանչիւր խախտման դէպքի մասին հեռագրել մեզ միաժամանակ յայտնելով այդ մասին մօտակայ զօրամասի հրամանատարին կէտ Տաճիկներից գրաւած կայարաններից դէպի արեւելք երկաթուղագծի վերայ պէտք է մնան ամբողջ պաշտօնէութիւնը եւ երկաթուղու միլիցիան կէտ Ալագեօզ եւ նալբանդ կայարաններից մէկից մինչեւ հինգ վերստ դէպի արեւելք նայած տեղի յարմարութեան նշանակւում են Զինւորական իշխանութեան կողմից մի-մի սպայ որոնց պահանջմամբ պէտք է տրամադրէք նոցա հինգից մինչեւ տասը միլիցիօներ կէտ նկատի ունենալով որ Տաճիկ եւ մեր զօրամասերի գրաւած գծերի միջեւ միակ կազմակերպւած ոյժը պէտք է լինի միլիցիան առաջարկում եմ ուժեղացնել Միլիցիան ըստ հարկի նրաւիրել նորերին կէտ Այս հրահանգը կատարել 24 ժամւայ ընթացքում եւկատարման մասին մանրամասն հեռագրել

Ներքգործմինիստր՝ *ստորագրություն*

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 54, թ. 84, պատճեն, մեքենագիր*

**No 74**

ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ՆԱՄԱԿ-ՀԱՇՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՐԻ ՄԻՆԻՍՏՐ-ՆԱԽԱԳԱՀԻՆ (ՎԱՐՉԱՊԵՏԻՆ) ԵՎ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐԻՆ

*Նահանգապետի պաշտոնում աշխատած ժամանակահատվածում մարզի խնդիրների ու ընդհանուր իրավիճակի, մարզի քաղաքացիական և զինվորական իշխանությունների միջև եղած հակասությունների և պետության կառավարման մոտեցումների և սկզբունքների վերաբերյալ իր տեսակետների մասին*

*(1920թ. նոյեմբերի սկիզբ)*

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՊԱՐՈՆ ՄԻՆԻՍՏՐԻՆ

ՊԱՏՃԵՆԸ ՄԵԾ. Պ. ՆԱԽԱԳԱՀԻՆ.

Յես կուզեյի մի ընդհանուր տեսություն ներկայացնել Ձեզ այն բոլոր աշխատանքների մասին, վոր տարի ու կես ժամանակի ընդացքում կատարել ե մեր քաղաքցիությունը Ղարսի նահանգում: Այդ տեսությունը Ձեզ գուցե պետք լինի. Նոր ստանձնելով Ներք. Գործ. Մինիստրությունը դուք հնարավորություն չունեք վորոնելու իմ բազմաթիվ զեկուցումները, վոր սփռված են բոլոր մինիստրություննե-րի դիվաններում: Բայց այդ տվյալները կըլուսաբանեն յեվ այն արկածալից դրությունը, վորի առանցքում մարդկանց քմահաճ՝ ցանկություններով այսոր տարուբերվում ե Ղարսի նահանգը:

Յես առաջին հայն եի, վոր անգլիացիների հետ անցա Ղարսի նահանգը: Անգլիացիք կազմակերպել եին տեղացիներից յերկրի խորհուրդը, վոր յեվ կառավարում եր նահանգը: Նոքա տրամադիր չեին լուծելու այդ հաստատությունն յեվ պահանջում եին վոր յես, իբրեվ ներկայացուցիչ հայկական կառավարության, գրավեյի այդ խորհրդում նահանգի տեղը, վորպես ավագը հավասարների մեջ: Յես չեմ ծանրանա այն խնդրի վրա,-անգլիացիք չեին ըմբռնում մեր իրավական հասկացողությունները յեվ մեր պետական իրավունքնե-րը, թե՞ անում եին այդ բոլորը քաղաքական միտումներով, մի բան միայն ակներեվ եր, նոքա 1 օրվա ընթացքում սակարգում եին ինձ հետ իմ իրավունքների խնդրում յեվ նոքա հրաման արձակեցին, ինձ, վորպես նահանգապետի, ճանաչելու մասին միայն այն ժամանակ, յերբ յես ընդունեցի տեղական խորհուրդը, վորպես նահանգապետին կից մի հաստատություն:

Այդ խորհուրդը, վոր բաղկացած եր արկածախնդիրներից, նայում եր մեզ վրա վերեվից ներքեվ յեվ վոչ մի տրամադրություն չուներ գետ համակերպվելու մեզ հետ:

Յերկիրը յերկու տարվա ընթացքում քայքայված բարոյապես յեվ իրավորեն անիշխանության առանցքում, անտեղյակ կատարվող անց ու դարձին, տակավին սպասողական դրության մեջ եր: Ստանձնելով

պաշտոնս, յես նույն որը հեռագրով պահանջեցի Ալեքսանդրոպոլից կուտակված ու սրտատրոփ սպասող գաղթականությունը, յեվ այնուհետեվ գնացքների անվերջ շարաններ բերում եին տնավեր յեվ ուժասպառ հայերի խմբեր: Մի շաբաթից հետո Ախուրյանն անցավ յեվ մեր զորքը: Յես արդեն կազմակերպել եի իշխանությունը յեվ ժողովելով շուրջս մի բուռն հայեր, տեղիս ազգությունների ներկայացուցիչներին, մեծ պատկառանքով ի ցույց յերկրի դիմավորեցի կառավարական զորամասերը:

Քաղաքականությունն յեվ ուժը արեվելքում միշտ ճանաչվել են վորպես կեանքի հզոր ֆակտորներ յեվ յես չեի կարող չնկատել, վոր յերկիրը խոնարհվում ե իշխանության առաջ: Յեվ յես ոգտագործեցի րոպեն- յես բաժանեցի տեղիս ազդեցիկների շահերը, խորհրդի անդամներին այլ յեվ այլ հրապուրիչ պաշտոններ տվեցի յեվ 4 որից հետո փոստորեն ցրեցի այդ խորհուրդը: Անգլիացիք վոչ միայն չառարկեցին այդ գործըլակերպին, այլ կարծես թե հավանություն տվին: Բայց այստեղ, ուր մենք մեծ թափով անցանք քաղաքացիության աշխատանքին, առաջ յեկավ մի միջնադեպ, վոր կամ սխալ եր, կամ թյուրիմացություն-Ղարսի նահանգը գեներալ-նահանգապետություն հայտարարվեց, յեվ այդ միահեծամ իրավունքները հանձնվեցին զորավոր Ոսիփովին:

Ինձ պետք չի բացատրել այստեղ, վոր յերկրի տիրապետության այն գործելակերպը, վոր առաջարկում են մեզ անգլիացիք յեվ վոր, ըստ իմաստի, այդպես եր, չեր կարող հանդուրժել բռնակալից իշխանությունը: Մենք պետք ե կոփեինք պետականությունն սվինների հետ, բայց վոչ երբեք սվիններով: Յեվ ի մեծ գոհունակություն յերկրի ու ճակատագրի կառավարությունը նկատեց այդ սխալն յեվ 20 որից հետո արդեն վերացրեց զինվորական դրությունը, վոր այնպես հասկանում եր յերկրի ու մեր քաղաքացիական տրամադրությունների (հետ): Բայց այստեղ կառավարչական ուշադրությունից վրիպեց դարձյալ մի բան: Դուք գիտեք անշուշտ, վոր յերբ ռուսաց կառավարությունը վերացնում եր այս ու այնտեղ զինվորական դրությունը, յերկրի կառավարությունը տեղափոխում եր գեներալ-նահանգապետին մի այլ վայր, ի նկատի առնելով, վոր մարդկանց հետ միասին միշտ գոյություն ունեն անձնական, յեսական, փառասիրական ձգտումները յեվ յերբեք գերիշխողին չի կարելի թողնել նույն վայրում շատ հասկանալի վարչական ու հոգեբանական միտումներով: …

Բայց Գեն. Ոսիփովին թողեցին Կարսի նահանգում յեվ այդ խանգարեց նրա հոգու անդորրությունն:

Ստանձնելով պաշտոնս յեվ ներկայացնելով Յերեվան վարչական շտատները, յես թախանձորեն խնդրում եյի վարձատրել աշխատանքը, ապահովել պաշտոնյայի վիճակը: Բայց մենք շարունակում եյինք սավառնել իդեալական մթնոլորտում յեվ կարծում եյինք, վոր միկրո-

սկոպիկ ռոճիկները կըհամեմվեն գաղափարական իմաստով: Այդ ակադեմիկ հաշիվը, ի հարկե, խորտակեց, մարդկանց մեծամասնությունը կապված է կյանքի հետ նյութական միտումներով յեվ մեր գավառները թափվեցին կյանքի վայելքին նախանձախնդիրները, իսկ ինտելիգենցիան, մեր վոսկեզոծ յերիտասարդությունը գերադասեց կենտրոնը այն գավառին, վորի մասին յերբեմն այնքան յերազել ու մարտնչել է: Յեվ իմ բոլոր դիմումները, թե մամուլի միջոցով յեվ թե մեր ականավոր հասարակական գործիչներին՝ աշխատակիցներ ուղարկել ինձ, մնացին ապարդյուն: Ավելի քան մեկ տարվա ընթացքում յես ստիպված եյի հեռացնել, դատի տալ յեվ նույնիսկ բանտարկել ավելի քան 20 պաշտոնյաների, այլ յեվ այլ աստիճանների յեվ այդ արշավը չբարելավեց դրությունը: Մարդիկ վարակված են թալանելու, ապահովվելու յեվ ապա հեռանալու տենչով: Պաշտոնը կորցրել է իր վաղեմի նշանակությունը ու հմայքը, մարդկանց մեջ բթացել է յերկյուղը դեպի քրեյական պատիժը, յեվ այդ մթնոլորտում վոճիրը ստացել է տարերային կերպարանք: Յեվ յես կարծում եմ, վոր միայն վարչական յեվ միայն դատաստանական գործելակերպն այդ առանցքում անճար է: Վոճիրը պարփակում է իր մեջ քաղաքական, տնտեսական յեվ իրավական բացատրություններ յեվ այդ բարդ ու խճճված պայմաններում է մեր որերի քրեական տրամադրությունների գաղտնիքը:

Յես միշտ կարծում եյի, վոր որինականությունն արդարադատության հիմունքն է յեվ ինքս, դաստիրակված լինելով հին ռեֆորմների դարագլխի մթնոլորդում, սովոր եմ պատկառելու դատարանի առաջ:

Դատարանը միշտ առաջնորդել է բոլոր հառաջադիմական տրամադրությունները, յեվ դատարանի շուրջն են խմորվել մեր բոլոր ազատագրական ու հասարակական իդեալները: Յեվ համակված այդ գաղափարներով, յես մեկ տարվա ընթացքում ուժգին բախել եմ բոլոր դռները յեվ յեռանդալից պահանջել եմ ուղարկել նահանգը դատաստանական գործիչներ: Դատարանը դաստիրակում է յերկիրը, հետեվապես նա պետք է ազգայնացված լինի: Բայց այդ կրթող ու բարձր հաստատությունը պետք է փակ լինի բոլոր թերուսների համար: Միայն յեվ միայն այդ առանցքում դատարանը կըլինի մեր սրբության սրբոցը:

Բացի խախտումն այս ակներեվ ճշմարտությունների, մեր գավառական դատաստանական գործիչների շարքերը լցվեցին վոչ միայն թերուսներով, նախկին գրագիրներով, թարգմաններով, այլ յեվ միայն ռուսախոսներով, յեթե չասենք ռուսներով: Դատական այդ կազմի առանցքում ադմինիստրացիան ել պետք եր գրավեր իր պատշաճ տեղը, 10 տարվա ընթացքում ադմինիստրացիան Կովկասում սովոր եր ակնածելու դատարանից: Համալսարանական ու առաջադիմական քննիչը յեվ դատավորը միշտ զսպել ու

սանձահարել են ադմինիստրացիային յեվ այդտեղ ե Ռուսաստանի 60-ական թվականների մեծ հմայքի յեվ մեծ դաստիրակիչ իմաստը:

Յեվ յես առաջի հայ նահանգապետը, իրավունք ունեյի պահանջելու, վոր արդարադատությունն յերկրում կերտե իրավաբան, համալսարանական հայը յեվ վոր այդ ճշմարտությունն ավանդեն մեզ մեր մայրենի լեզվով: Յեվ այսոր, տարի ու կեսի անհաջող այդ ուղղությամբ փորձից հետո, յես ոգտվում եմ դեպքից նորեն շեշտելու- չի կարելի զրկել յերկիրը արդարադատությունից յեվ այդ դատարանը պետք ե լինի մեզ բոլորիս պատիվ բերող բարձրության վրա:

Յերբ անգլիացիներից ինձ ավանդ թողած խորհուրդը լուծվեց, այդ խորհրդի շուրջը վխտող տարրը փութաց մի նոր նավահանգիստ գտնել, յեվ այդ առանցքում կազմակերպվեցին ազգային խորհուրդները: Կորցնելով քաղաքական նշանակությունն այնտեղ, այն մարդիկ, վորոնք շատ լավ եյին զգում իրենց անիշխանության միջանցքում, շտապեցին կազմակերպել ազգային խորհուրդներ, ուր յեվ տեղավորվեցին: Այդ դիմակավորված ռուսները, յեզդիներ յեվ թուրքերը (յեկվոր ադրբեյջանցիք) շտապեցին իրենց ցանցը տարածել յեվ նահանգում, հիմնելով գյուղերում յենթակոմիտեներ: Նոքա հույս ունեյին խառնվելու յերկրի բոլոր գործերին, գեթ միջնորդ լինելով ժողովրդի յեվ իշխանության մեջ, ընդունում եյին ամեն տեսակի խնդիրներ ու գանգատներ, ինքնաբերաբար բարձրացնում եյին այս կամ այն խնդիրը, ներդաշնակության մեջ մտան իրար հետ յեվ նույնիսկ փորձ յեղավ կոլլեկտիվ դիմումներ անել ինձ: Յես մեծ ուշադրությամբ դիտում եյի այդ կոմեդիան յեվ բոլոր միջոցները ձեռք առա ձգելու ժողովրդի մեջ այդ խորհրդների նշանակությունը: Իսկ մինչ այդ, նրանք հեղեղում եյին ինձ իրենց գրավոր պահանջներով ու հայտարարություններով: Յես վոչ մի պատասխան չը տվեցի այդ դիմումներին, հրահանգեցի նույն իսկ յենթակա մարմիններին, բանտարկեցի գյուղական վոստիկանության մի քանի պաշտոնյաներին, վորոնք, իրենց իշխանությունը թողնելով, ուղղակի հարաբերության մեջ մտան այդ խորհուրդների հետ: Իրենց բազմաթիվ գրավոր դիմումներին ինձ, գավառապետներին, պրիստավներին՝ վոչ մի պատասխան չստանալով, նոքա փոքր առ փոքր դադարեցին այդ ուղղությամբ աշխատելուց, իսկ յերկիրը, տեսնելով իշխանության վերաբերմունքը դեպի այդ «ընտրված» մարդիկ, իսպառ թեքվեց նոցանից: Յեվ այդ խորհուրդները լուծվեցին բնական կերպով յեվ չքացան մեկը մյուսի յետեվից: Փորձեց կանգուն մնալ դեռ ռուս ազգային խորհուրդը: Դրսից յեկած մի յերկու հրեա բոլշեվիկ գումարեցին Կարսում ներկայացուցչական ժողով, իրենք ընտրեցին, յեվ յերբ կատակերգությունը վերջացավ, յես նույն որը ուղարկեցի վոստիկանապետին ցրելու ժողովը, ձերբակալեցի ընտրվածներին յեվ քշեցի նահանգի սահմաններից: Բայց նոցանից յերկուսը անցան

Յերեվան, բողոքեցին Ներքին Գործոց Մինիստրին յեվ վերադառնալով, վերջինի համաձայնությամբ, Կարս, կազմակերպեցին այստեղ մայիսյան աղմկալից, բայց վերջին ցույցը: Վերջում ազգային խորհուրդների յերեք նահանգները պատիվ եյին համարում ժամերով սպասել մի նախասենյակում յեվ մեծ ջատակով կատարում եյին մեր կոնֆիդենցիալ հանձնարարությունները, վոչ առանց դրամական վարձատրության, իրենց խնամքին հանձնված համայնքների մասին:

Այդպես վերջացավ այն խորհուրդները, վոր հավանություն ունեյին թագավորության մեջ թագավորելու:

Այնուհետեվ հրապարակին բավարարություն տալու համար յեվ վորպես մի միջոց յերկիրը մեր ձեռքում պահելու, յես կազմակերպեցի թուրքերի յեվ յեզդիների հոգեվոր կառավարությունը: Արեվելքը դեռ տակավին, ի հարկե, հավատալիքների յերկիր ե յեվ այդ տիրող ու տակավին իշխող դրությունը չի կարելի հաշվի չառնել յերկիր կառավարելու բարդ խնդրում: Այդ մոլեռանդ, կարող, ազդեցիկ յեվ խորամանկ կղերը, մեր գանձարանից ռոճիկ ստանալով, այսպես թե այնպես կապվում են մեր կառավարչական ղեկի հետ, յեվ ինձ պետք չե ասել, վոր յես վարվում եմ նոցա հետ այնպես, ինչպես վոր ցանկանում եմ:... Հանդեսներում նոքա պատիվ են համարում նահանգապետի շքախմբում լինել, իսկ ոտարազգի հյուրերին դիմավորելիս նրանք ջոկատով առաջ են տանում պետական միտումները: Չխախտելով նոցա կոչման իմաստը դեպի ծուխը յեվ հոգեվոր իրավասությունը յես ոգտագործում եմ նոցանից ինձ հարկավորը պետական ուղղությամբ, իսկ նրանք միանգամայն հնարավոր են համարում հաշտեցնել յերկու դարավոր սկզբմունք-յերկինքը՝ աստծուն, իսկ յերկիրը՝ թագավորին:

1918թ մեր նահանջից հետո Կարսի նահանգը դարձավ այն վայրը, վոր թրքությունն ավետյաց աշխարհ եր համարում: Այստեղ եյին Ադրբեյջանի, Բորչալուի ու Յերեվանի նահանգի գաղթականությունը, տեղացիները անբավարար գտնելով իրենց նախնի վայրերը, քոչել եյին այլ գյուղեր, յեվ այդպիսով յերկրի քարտեզը կորցրել եր իր նախնի դեմքը ու նոր խայտաճամուկ պատկեր եր ներկայացնում: Հայի բնակավայրը տիրել եյին թուրքերը յեվ մի քանի տեղում մեծ դժվարությունների հանդիպեցինք գաղթականությունն իրենց տեղերում բնակեցնելու խնդրում:

Բայց հայը դարձավ ցնցոտիների մեջ յեվ ուժասպառ: Նահանջը վոչնչացրեց ամեն բան. այրվեցին ու փչացան բոլոր գրավոր տվյալները ազգաբնակչության քանակի մասին, այրվեցին բոլոր մատյանները, վոր պարունակում եյին հարկավոր ստատիստիկական տեղեկություններ, կործանվեց, ի հարկե, գյուղական համայնքների վարչական կազմը. իսկ այդ առանցքում թագավորում եյին միայն հրոսակախմբերը, վորոնք իրանց շատ լավ եյին զգում այդ անարխիկ առանցքում:

Բնիկ հայերը վերադարձան հայրենիք վոչ բոլորը, վորովհետեվ մեկ մասը մնաց Ռուսաստան, Հյուսիսային Կովկասում, բայց Կարսի նահանգը անցան թուրքահաերի մեծ խմբեր, վորոնք յեվ փոխեցին յերկրի ազգագրական դեմքը: Այդ խայտաճամուկ մթնոլորդում, ուր փոփոխվել եյին վոչ միայն մարդկանց բարոյական հասկացողու-թյուններն, այլ յեվ չքացել եյին հրապարակից յեվ ֆիզիկական իրերը, ուր միանգամայն խորտակվել եր կառավարչական մեքենան, ապարատը, այդ յերկրում մենք կանչված եյինք վոչ միայն վերականգնելու պետականությունն, այլ ստեղծագործելու այդ իմաստով: Յեվ այդ մեծ ու բարդ գործը պահանջում եր վոչ միայն տեսական ու գործնական գիտություն, այլ յեվ մեծ տակտ, մեծ շրջահայացք յեվ գործելու քաղաքագիտական ձեվ, վորպեսզի պահպանված լինեն յերկրի ու պետության ներդաշնակ շահերը:

Այսպես որինակ, յեթե Յերեվանի նահանգում զինակոչը կատարում ե գաղտնի տվյալների ու որինականության շրջաններում, Կարսի նահանգում մենք չունենք այդ ոժանդակիչ պայմանները: Ընտանեկան ցուցակները, յեկեղեցիական մատյանները, ժողովրդի աճման յեվ նվազելու տվյալները մենք չունենք. յերկրի մեծագույն մասը բորբոքման շրջանակումն ե յեվ ամեն մի գնացք բերում ե մարդկանց յեվ նոր խմբեր յեվ մարդկանց այդ մեծաշարժման առանցքում գրեթե անհնարին ե այդ իմաստով հաշվետվությունը: Այդ բոլոր բարդ ու տեսական որենքներով չնախատեսնված պայմանները ավելի քան դժվարին են դարձնում վարչական գործը յերկրում յեվ մի ավելորդ անգամ գալիս են ասելու, վոր յերկիր կառավարելու խնդիրը ամենածանր ու ամենապատասխանատու խնդիրն ե պետական իմաստի մթնոլորդում:

Գաղթականությունը թե՝ ներսի յեվ թե՝ դրսի վերադառնում ե ցնցոտիների մեջ, առանց տնտեսության յեվ ծայր չքավոր:

Յեվ նա գալիս ե այն յերկիրը, ուր մարդիկ պատերազմի ընթաց-քում հանգիստ են առել, ուր տնտեսությունը վոչ միայն չի խախտվել, այլ աճել ե ի հաշիվ ուրիշների: Այդ տվյալներին յեթե ավելացնելու լինենք յեվ ժամանակակից անիշխան վարդապետությունը, բոլշեվիզ-մի գիշատիչ քարոզները, մենք կստանանք այն բոլոր պայմանները, ուր վոճիրը, թալանը յեվ բռնակալությունը պետք ե բռնկվեյին: Բացի այդ ՝ գաղտնիք չե յեվ այն, վոր պետական հայացք, պետական աշխարհայեցողություն մենք չունենք: Մեզանում կարծում են, վոր Հայաստանը միայն հայերի համար ե յեվ վոչ թե հավասար բոլոր հայաստանցիների համար: Այդտեղից առաջ ե գալիս անպատաս-խանատու տրամադրություն բռնանալու յեվ վոչ թե կառավարելու արդարադատություն կերտելու: Բացի իրերի յեվ հասկացողություն-ների այդ մթնոլորդում առաջին տեղն ե բռնում տաճկահայությունը: Գրեթե մի դար շարունակ ազատագրական սկզբունքների համար

մարտնելով, տաճկահայը տասնյակ տարիների ընդացքում գաղթել է, վորից վերադարձել, շարունակ քայքայվել յեվ այժմ իսպառ տարագիր, անտեղ ու անտուն, ապրում է որվա սպասելիքներով: Յեվ այս մի դար շարունակ կուտակված յեվ լճացած մաղձը, ջղայնացումը յեվ վրեժխնդիր տրամադրությունը, պայթելով, առաջ է բերում այն վոճիրը, վոր այսոր տարերային բնույթ է ստացել: Յեվ թուրքահայը լուծում է իր դարավոր վրեժը իրան քայքայելու յեվ տարագիր դարձնելու համար բոլոր պարանոցների վրա, լինի սա քուրդ, թե հայ…

Արեվելքը վոչ միայն մարդկության, այլ յեվ վրեժի հայրենիքն է վրեժխնդրությունը մեզանում իրական հասկացողություն է, յեվ մենք քավում, սրբում ենք արյունը արյունով, թալանը ասպատակությամբ, յեվ հասկացողությունների այդ առանցքում հաշտվում ենք յեվ կիյանք կոփում:

Յես ծանրացա այդ բոլոր բացադրությունների յեվ նկատողությունների վրա, վորպեսզի պարզեմ, թե ինչ պայմաններում յես կոչված եյի պետական ապարատ ստեղծելու նահանգում: Այդ նյութական յեվ բարոյական փլատակների վրա իրավակարգ հաստատելու գործը վոչ այնքան հեշտ եր, ինչպես կարծում են շատերը յեվ կառավարությունն ի դեմս Ձեր պ. Մինիստր, իր ապագա անելիքների ընթացքում պետք է հաշվի առնի կյանիքի այդ հազար ու մի գծերը, վորոնց խայտաճամուկ հավաքածուն ինքը կյանքն է, մեր իրականությունը:…

Ամեն որ բազմատեսակ պաշտոններ թխելով, մենք անուշադրության մատնեցինք դատարանն յեվ այդ հաստատությունը, փոխանակ առաջընթաց լինելու, քաշ է գալիս կառավարչական ապարատի հետեվից:

Արդարադատություն կերտելու նյութական միջոցները այնքան չնչին են, յեթե չասենք ավելին, վոր գործը ձեվականի է միայն վերածվում: Յեվ այդ բոլոր պայմանների շնորհիվ է, վոր յերկիրը արդարադատություն չի տեսնում. դատաստանական քննիչը, վոր յերբեմն գավառի ամենաահարկու մարդն եր, կորցրել է իսպառ իր նշանակությունը, իսկ թե վորտեղ յեվ ինչ է կատարածը մենք արդեն մոռացել ենք:

Այդ բոլոր բազմատեսիլ մեծ ու փոքր պաշտոններում վոճիրը սանձարձակվել է միանգամայն յեվ միամտություն կը լիներ ապավինելու այս դեպքում միայն յեվ միայն վարչական ուժերի վրա:

Կիանքի քրեական կողմից դառնալով քաղաքացիական մասին, յես հարկավոր եմ համարում նկատել այստեղ, վոր դեռ անցյալ աշնանը յես դիմեցի կառավարության մի հայտարարությամբ, վոր ձմեռվա ընթացքում մենք պետք է պատրաստվենք, վորպեսզի գարնանից մեծ թափով դիմենք շինարար աշխատանքի: Իմ այս միջնորդությունը հետակա ամիսների ընթացքում յես կրկնեցի մի քանի անգամ գրավոր յեվ հեռագրներով, բայց մեր բոլոր այդ

առիթով դիմումները շրջանառում էին միայն թղթի առանցքում յեվ մենք այս գարնան ու ամառվա ընթացքում գրեթե վոչինչ չարեցինք:

Կարսի նահանգը Ռուսաստանում, Լեհաստանից հետո, առաջին տեղ է բռնում խճուղիների բազմությամբ, բայց մենք չոգտագործեցինք այդ հարստությունը: Ավտոմոբիլների մեծաղմուկ գործը այս տարի ու կես ժամանակի ընթացքում շրջանառում եր միայն խոսք ու թղթի առանցքում: Հաղորդակցության ու Զինվորական մինիստրությունների միջեվ այդ ավտոմոբիլները կռվածաղիկ եյին, բայց մինչեվ շարունակվում եր այդ սկզբունքային ու գերիշխանության ձգտող այդ վեճը, ավտոմոբիլային գործը ատրոֆիայի եր յենթարկվում ավելի ճարպիկ ու ակնթարթ բաց չթողողների ջատագով…Իսկ յերկիրը մնում եր առանց հաղորդակցության միջոցների: Կարսից Կաղզվան, որինակ, գնալու համար պետք եր անվերջ սպասել պատեհ միջոցով, փոշտի շրջանառությունը պահատմունքի խնդիր եր: Իմ բազմաթիվ զեկուցումներն ու հեռագիրները զեմսկի փոստի յեվ Մերդենիկի ձիաքարշի մասին շրջանառում եյին միայն թղթի առանցքում: Յեվ դեռ անցյալ աշնանը, ներկայացնելով Յերեվան այդ առթով նախահաշիվներ, յես պատիվ եմ ունեցել գրելու, վոր, ճանապարհների վրա յերթեվեկություն ստեղծելով, մենք կիանքի կըկոչենք յերկիրը յեվ այդպիսով իրավակարգ կստեղծենք: Բայց այսպես թե այնպես մենք ձգձգեցինք գործը մինչեվ այսոր յեվ զրկեցինք յերկիրը տարրական հարմարությունից, հետեվապես վտանգեցինք յեվ իրավակարգը:

Անցնելով յերկրի վերաշինության այլ խնդիրներին, յես հարկավոր եմ համարում մի յերկու խոսք ել ասելու մեր հեռագրական ցանցի մասին: Ռուսները թողեցին մեզ հարուստ հեռագրացանց յեվ շատ ուղղություններով. մեկ հեռագրաթելի փոխարեն մենք ունեինք վեցը: Ինձ պետք չէ ասել, վոր հեղաշրջումից հետո աշխատանքը կանգ առավ, յեվ այդ տրամադրությունը դեռ շարունակվում է: Տարի ու կես ժամանակամիջոցի ընտացքում յես տասնյակ գրություններով յեվ նույնչափի բազմաթիվ հեռագրներով բախել եմ այդ առիթով բոլոր դռները, շարունակ պահանջել եմ վերանորոգել հեռագրացանցը, բայց իմ այդ բոլոր պահանջները նույնպես շրջանառել են միայն թղթի առանցքում: Մենք որերով գրեթե ամեն շաբաթ հեռագրական կապ չունենք Յերեվանի, Սարիղամիշի, Կաղզվանի, Արդահանի միջեվ, իսկ վերջինի հետ ընդմիջումը, վորքան յեվ տարորինակ թվա նույնիսկյեվ մեր որերի համար, այս ամառ տեվեց յերկու շաբաթ: Այդ առիթով յես տասնյակ հեռագիրներ ուղարկեցի, յեռանդալից բողոքեցի ու սպառնացի, բայց սայլը դարձյալ իր տեղում մնաց: Յեվ ինձ պետք չէ ասել, վոր իրավակարգը առանց դատարանի, առանց հաղորդակցության միջոցների, առանց փոստի յեվ շաբաթների ընթացքում առանց նույնիսկ հեռագրական պատի, դա մի տեսական հաղորդակցություն է յեվ վոչ գործնական: …

Քաղաքականությունը չի կարող հենվել միայն սվինների յեվ միայն ադմինիստրատիվ միջոցների վրա. նա պետք ե պարփակվի այն բազմաթիվ պայմանների առանցքում, ուր ինքը կիյանքն ե, իր խաղաղ ու շինարար պահանջներով:

Անցնելով մեր գործունեության մյուս ճյուղերին- աղի արդյունաբերությունը, խոտի ամբարման գործին, մթերքներ ձեռք բերելու խնդրին, յես կարծում եմ, վոր յեվ այդ ճյուղերում գործը չեր կրում պետական բնույթ: Այս հաստատությունների բազմաթիվ պաշտոնյաները անվերջ գնում եյին Յերեվան ու գալիս, ավելի խոսում յեվ աղմկում, ընդհանուր շփոթ առաջ բերելով յեվ վոչ զարգացնելով պետական տնտեսությունը: Այդ բոլոր հաստատությունները անկոնտրոլ ու ինքնավար զբաղված եյին ավելի ի հաշիվ պետական գանձարանի, իսկ յերկիրը յեվ պետությունը չկարողացան շոշափել այն սպասելիքը, վոր նա իրավունք ուներ պահանջելու նոցանից: Մենք չենք տեսնում վոչ այն աղը, վոչ այն խոտը յեվ վոչ այն բազմազան մթերքները, վոր պետք ե բարձրացնեն մեր կուրսը, հետեվապես յեվ մեր կացությունը: Մենք գիտենք միայն, վոր այդ բոլոր խնդիրների շուրջը տեղացել ե հեռագրների տարափը միայն, իսկ սայլը մնացել ե իր տեղում մենք անընդունակ յեղանք արտահանելու յեվ սպառում եյինք մեր ամբողջ յեռանդը մեր պահանջների, դրսից սպասելիքների համար: Այդ անարժեք ու անգործնական աղմուկը վոչինչ չեր տալիս, ի հարկե, յերկրին, իսկ շոշափելի գործունեության բացակայությունը, լրացնելով ժամանակակից կիյանքի բոլոր բացասական կողմերը, միայն յեբերում եր յերկրի իրավակարգը:

Մեր անտառները, մեր պետական տնտեսության այդ մեծ հարստությունը նույն քաոսն եր: Արդեն ձմեռ ե, բայց յերկիրը վառելու փայտ չունի հազարավոր շինություններ, վորոնց վերականգնելը կախված ե փայտեղենի հետ, անվերջ սպասում են, իսկ բազմաթիվ լիազորները գնում յեվ գալիս են, աղմկում են, բայց վոչ շինում են յեվ վոչ աշխատում: Մեր որերի, յերեվի, շատ բնորոշ գիծը, վոր վոչ պակաս քաոս ե ստեղծում յերկրում, յերերում իշխանությունը, կարգ ու կանոնի իմաստը յեվ այդպիսով իշխանություն ստեղծում, այդ այն ե, վոր մենք յենթակա պաշտոնյաներ չենք ճանաչում: Մի վորեվե պահեստապետ, կամ նման որինակ մի պաշտոնյա իր դիմումները ուղղում ե վոչ այլ մի տեղ, այլ միայն մինիստրին, յեվ նույնիսկ Մինիստր-Նախագահին:

Յես չտեսա մի մարդ, վոր իր պահանջներով դիմեր ըստ պատկանելույն, գյուղական, քաղաքային ու գավառական իշխանությանը. նոցա մենք հաշվի չենք առնում յեվ մեր արժանավորությունից ցածր ենք համարում նոցա հետ խոսելու: Նվազագույն դեպքում մենք դեռ մի կերպ հաշտվում ենք նահանգապետի հետ, բայց ընդհանրապես,

բացի մինիստրից, Մինիստր-Նախագահից ու պարլամենտից վոչ վոքի ճանաչել չենք ուզում: Մի որ յես հարցրեցի գավառական մի քաղաքագլխի,- ի՞նչ արեցինք մեշոկների մասին,- հեռագրեցի Մինիստր-Նախագահին, պատասխանեց ինձ քաղաքագլուխը:

Մեր որերի այս բնորոշ գծերը նույնչափ զավեշտական են, վորչափ յեվ վողորմելի, ի հարկե, բայց խնդիրը նրանումն ե, վոր նրանք յերերում են յերկրի իրավակարգը յեվ քաոս ստեղծում այնտեղ, ուր ամեն մարդ պետք ե իր տեղը ճանաչի: Անտես առնելով մի շարք պաշտոնյաներ, վորոնցից ամեն մեկն ունի վոչ միայն իր պարտավորությունը, այլ յեվ իր բավական մեծ իրավունքներն ու իրավասությունը յեվ դիմելով ուղղակի մինիստրին, մենք ձգում ենք յերկրի աչքում նույն մինիստրի յեվ իշխանության համարումը յեվ անիշխան տրամադրություն ենք ստեղծում մեր շուրջ: Այդ որինակ արհամարական վերաբերմունքը դեպի մի շարք պաշտոնյաներ խախտում ե պետական սիստեմը յեվ բացասորեն դաստիրակում մարդկանց դեպի որենքը յեվ նրա ի կատար ածողները: Յեվ յես կարծում եմ, վոր դեմոկրատիկ սկզբունքները տակավին իրավունք չեն տալիս մեզ ձգտելու այն իշխանության համարումը, վոր հանուն որենքի կոչված ե ծառայելու յերկրին, լինի նա պրիստավ կամ մինիստր, միյեվնույն ե, նոցանից ամեն մեկը գործում ե հանուն հանրապետության որենքի:

Անցնելով նահանգի բժշկական, անասնաբուժական յեվ սանիտարական դրության, յես սրտի մեծ ցավով պետք ե նկատեմ, վոր նա յեվս բացառություն չի կազմում յերկրում գործող մարմինների շարքում: Յեթե ռուսաց իշխանության որով նահանգական բժիշկն ու անասնաբուժը միայն չինովնիկ եյին, մենք այդ չինովնիկներինել չունենք: Հայ բժիշկը, վոր յերբեմն տարագրել ե մեր ազատագրական-իդեալները, միանգամայն յերես ե դարձրել հայրենի գավառից յեվ այսոր բոլոր նահանգում գավառական բժիշկների տասնյակ ազատ տեղեր կան: Գալով անասնաբույժերին բավական կլինի ասել, վոր ամբողջ նահանգի համար մենք ունենք միայն մի անասնաբույժ, այն ել... վոչ հայ: Տիրելով յերկիրը, մենք պետք ե քաղաքացիներեն ակոսենք այդ վայրը, բայց միթե հնարավոր ե այդ մեծ աշխատանքը հատուկենտ բարձր ուսում ստացած մասնագետներով... Գյուղը վոչ մի հասկացողություն չունի բժշկական ոգնության մասին, տարափոխիկ հիվանդությունները հնձում են մարդկանց անարգել: Դեռ անցյալ տարի քաղաքական միտումներով մենք ուզեցինք կապել մեզ հետ քրդությունը, ծրագրվել եյին քրդերի համար հատուկ դպրոցներ, բժիշկներ, դեղատուն, բայց այդ բոլորը մնաց ցանկությունների առանցքում միայն. հայ բժիշկը հրաժարվեց գաղափարական գործից, նախադասելով կետրոնում «վիզիտներ» ստանալ յեվ անպատասխանատու պարապել հայ ժողովրդի բախտով: Յերբ մենք պետք

ե գրավեյինք Ոլթիի գավառը, յես ամեն միջոցներ ձեռք առա մի բժիշկ ուղարկելու այնտեղ, յեվ, ի հարկե, անպատճառ հայ, ի նկատի ունենալով, վոր անցնելով բացառապես քրդերով ու թուրքերով բնակեցրած մի վայր, մենք պետք ե պատվաստեյինք մեր պետականությունը: Բայց հայ բժիշկը լսել չուզեց այդչափ «հեռու» գնալու մասին յեվ յես ստիպված եյի ընդունել մի ռուս բժիշկ:

Ծայրագավառների վարչության, ադմինիստրացիայի համար, նույնպես յեվ դատաստանական հիմնարկությունների համար մարդիկ չենք գտնում, բոլորը հարցնում են նախ՝ կյանքի ինչ հարմարություն ունի պաշտոնատեղին յեվ...ռոճիկի չափը, յեվ այդպիսով մենք մարդ չենք գտնում նույն իսկ այնպիսի պաշտոնյաների համար, ինչպես գավառապետ հաշտարար դատավորը: Գալիս են միայն յեվ միայն գիշատիչ բնազդներով օժտվածները, գալիս են կեղեքելու, ապահովելու իրենց յեվ հեռանալու: Չգիտեմ ի՞նչ ե մտածում այդ մասին կենտրոնական կառավարությունը, բայց յես կիանքի բովում գտնվելով յեվ այդ կիանքը ուշադիր ուսումնասիրած լինելով ավելի քան 30 տարվա ընդացքում, յերկրի դրությունը կատաստրոֆիկ եմ համարում: Յեվ այդ դրությունը ավելի հաստատ ե նրանով, վոր մարդկանց մեջ բթացել ե պատասխանատվության, ամոթի յեվ յերկյուղի զգացմունքները: Ապրուստի միջոցներ վորոնելով յեվ վոչ, ի հարկե, աշխատանքի ձգտելով, մարդիկ, նույնիսկ նոցա տափակները, արհամարում են փոքրիկ յեվ միջակ պաշտոնյաների. բոլորն ուզում են կենտրոնական տեղը գրավել, ծաղր ու զավեշտ դարձնելով պետականությունը:

Ընդհանուր կացության պատկերը լրացնելու համար հարկավոր եմ համարում մի յերկու խոսք ել ասել փոստ-հեռագրական գործունեության մասին: Այդ հաստատությունը ամենուրեք մի բազար, հրապարակ ե, ուր դուք կարող եք գտնել բոլորին, ում վորոնում եք. այստեղ գալիս են բոլոր պետական ու մասնավոր նորություններ իմանալու, իրենց մասնավոր հանձնարարությունները այս ու այն քաղաքը ուղիղ գծով հաղորդելու համար: Իմ բազմաթիվ պաշտոնական հեռագրները, թե ինձանից ուղղված յեվ թե ինձ ուղարկված, կորչում են, կորչում են նույնիսկ մինիստրների հեռագիրները յեվ նոցա անունով ուղարկվածները:

Յեթե այդ վիճակում են բարձր պաշտոնական անձանց կարեվորագույն հեռագրները, կարելի ե յերեվակայել մասնավոր մարդկանց դրությունը: Փոստ-հեռագրատանը բազար անվանելով, յես պետք ե նկատեմ, վոր նրան բազար են դարձնում վոչ այնքան մասնավոր մարդիկ, վորքան մեր բազմաթիվ պաշտոն յեվ իրաունք ունեցողները: Իր պաշտոնի ու կոչման զրահի տակ, հեռագրատունը նա իր պապոնց անունն ե համարում յեվ վորտեղ վոչ իշխանություն ե ճանաչում յեվ վոչ մեծ: Դժվար ե հետեվապես այդ առանցքում

իրավակարգ պահպանել ու պահանջել... պաշտոնյայից ճշտություն յեվ որինապահություն: Նահանգապետը դիտմամբ միշտ խուսափել ե հեռագրատուն գնալու, վորպեսզի որինակ լինի կարգի, բայց, ի հարկե, մի ձեռքը ծափ չի տալիս:

Անցնելով քաղաքացիական գործունեության մեր մյուս ճյուղերին, պետք ե հիշել յեվ պետական կալվածների կառավարիչին: Վորպես յեվ միակ անասնաբույժը նահանգում, նա յեվս իր հոգսերն յեվ իրավունքները պետք ե տարածի ամբողջ նահանգի վրա: Թե ո՞վ ե այդ կառավարիչը յեվ թե ի՞նչ ե անում, յերկիրը չգիտե, ի հարկե. մի բան միայն ինձ համար անվիճելի ե,- նա վոչ մի հասկացողություն չունի նահանգի տափարակի լեռնոտ մասերի մասին, հողատիրական ձեվերի յեվ հողից ոգտվելու պայմանների մասին. տեղեկություն չունի յերկրի հռչակավոր արոտների մասին յեվ յերեվի ինքն էլ չգիտե-ինչի համար ե ուղարկված: Ռուս իշխանության որով էլ կային այդ պաշտոնյաները, նոքա էլ քրդերին ծախում եյին 200 րուբլով ամբողջ Արարատը, յեվ քրդերը հավատում եյին այդ ծայր ու մեծ իրավունքներին յեվ զարմանում, վոր այդ փոքր գումարով ձեռք են բերել մեծակշիռ Մասիսը, բայց այդ մարդիկ գոնե մրոտում եյին թղթերը, աղմկում, ինչ վոր հաշիվ ու ստատիստիկ տեղեկություններ ներկայացնում յեվ աշխատանքի գոնե իլյուզիա ստեղծում, բայց մենք այդ էլ չունենք յեվ ակամա ստացվում ե մեր որերի բնորոշ տպավորություն- հողերի կառավարիչը իր համար ե միայն... Այդպես վողորմելի ե մեր յերկրի տնտեսական այն առանցքը, վորի վերա գավառը տրամադիր ե հառելու իր ամբողջ եությունը:

Գաղափարի ու առաջադիմական ձգտումների խմորումը մնացել ե միայն դպրոցական աշխարհում, յեվ այդ միակ փարոսն ե, վորի շուրջը դեռ աղոտ կուտակվում են մեր ստեղծագործական ուժերը: Շատ սուղ միջոցներով, մեր ուսուցիչը տանում ե դեռ իր խաչը, յեվ իրավունք ե տալիս յերկրին կարծելու, վոր այդտեղից կը ծավալվի մեր քաղաքացիությունը: Յեվ յեթե կիանքի մյուս ասպարեզներում յեռում են կիրքը, փառասիրական յեվ նյութական միտումները, կրթական անդաստանում մարդիկ շարունակում են հափշտակվել կյանքի ակադեմիկ խնդիրներով յեվ համառ առաջ են գնում դեպի բարին, գեղեցիկը յեվ լույսը: Բայց այն միջոցները, վոր տրված ե կրթական գործի համար, դա մեր բյուջեի այն մինիմալ մասնիկն ե, վոր ավելի ձեվական բնույթ ունի, քան թե եականը յեվ ակամա հիշեցնում ե այն վերաբերմունքը, վոր ունիր ռուս կառավարությունը դեպի գավառը: Յերբ մի երկու որ առաջ, Մինիստր Վրացյանի յեվ Բաբալյանի հետ մենք շրջում եյինք նահանգը մի շարք գյուղերում, ուր ժողովուրդը աղու հացով դիմավորեց կառավարության ներկայացուցիչներին, վերջինների հարցին, թե ի՞նչ կարիքներ ունի համայնքն, ամեն տեղ ստացվեց միատեսակ պատասխան- ուսումնարան ենք խնդրում...

Յեվ դա այն նվազագույն պահանջն ե, վոր անում եր իրավատեր յերկիրը: Պետք չե ինձ ասել, ի հարկե, վոր լսելով այդ համեստ ու տարրական խնդիրը, մենք լավ չզգացինք մեզ…

Յերկրի կառավարչական այդ ընդհանուր յեվ գլխավոր խնդիրներից անցնելով պետական սիստեմի իմաստին, յես կը ծանրանամ այն քաղաքականության վրա, վոր յես վարում եյի նահանգում յեվ վոր հավանություն եր գտել իշխող քաղաքական կուսակցական ու կառավարության կողմից, անջատ իմ ինդիվիդուալ զգացմունքներից, վորպես նահանգապետ յես տեսնում եյի առաջ ազգագրական մի խայտաճամուկ կալեյդոսկոպ, ուր մարդիկ կապված եյին հողին ու ջրին դարավոր անքակտելի կապանքներով: Աշխարհի յեվ կյանքի այդ հնագույն անիվի շուրջը, պատմությունը կուտակել ե բազմաթիվ ընդհանուր շահեր, տնտեսական կապեր, ընդհանուր յեվ նվիրական սովորություններ, ու համանման ճաշակ: Յեվ այդ բազմատեսիլ առանցքում առաջ ե յեկել առանձնակի հոգեբանությունը սովորությունների, ճաշակի, հակումի յեվ հնչյունների այն անտեսանելի ընդհանուր ցանցը, վոր կազմում ե մարդկանց վայրի հետ յեվ հայրենի յերկրի քաղցրություն ստեղծում: Յես տասնյակ տարիների ընթացքում զբաղվել եմ վարչական գործերով յեվ շատ հետաքրքրվել, թե ի՞նչ ե պետք յերկիր կառավարելու համար յեվ թե ինչպես պետք ե կառավարել այդ յերկիրը:

Տարիների ընթացքում ուսումնասիրելով գավառական կյանքը, յես ամեն որ դարձյալ մի ապացույց եյի գտնում, վոր միայն այդ գործելակերպի առանցքում հնարավոր ե ուժեղ ու արդար պետականությունը: Յեվ յես մեծ բավականությամբ դիտում եյի, թե ինչպես այդ յերկիրը, ի դեմս այդ քրդերի, հայերի, թուրքերի, ասորիների, թուքմենների յեվ կարափափախների, սիրելով այդ վերաբերմունքը յեվ մեծ հավատ տածելով, գնում եյի այդ «Հախ ու արդար դիվանի» հետեվի: Յեվ յերեսուն տարի այդպես գնալով յես չեյի սխալվում:

Արեվելքը ցույցի (....) յեվ շուքի աշխարհ ե, յեվ բոլոր իշխողները, ոգտագործելով յերկրի այդ տրամադրությունը, հենվել են այդ հակման վրա յեվ այդ առանցքում տիրել յեվ կառավարել են: Ստանձնելով պարտավորություններս մի յերկրում, ուր 200 հազարն ոտարազգի ե, յես առաջին որվանից շոյեցի մարդկանց այդ թույլ կողմը, պաշտոններ, ուսադիրներ տվեցի. ականավոր, ազդեցիկ մարդկանց յերկրին մատնանշելու համար՝ յես նոցա կիսապաշտոնական հանձնարարություններ եյի տալիս: Յեվ յես տեսնում եյի, թե ինչպես դեպի այդ, դեպի այդ ունայն թիթեռնիկները թեքվեց յերկրի ամբողջ ուշադրությունը: … Բայց յեթե յուր ժամանակին յերկիր կառավարելու գործում այդ անցողական գործելակերպը կենտրոնական տեղ եր գրավում մեր բարդ ու առանձնակի որերում, միայն այդ ուղիները բավական չեյին: Կյանքի հարմարությունները յեվ առհասարակ

քաղաքացիական տրամադրությունն արդեն շատ զբաղեցնում են գավառը, յեվ յերկիրը հակված ե գնալու այն կառավարության հետեվից, վոր գալիս ե բավարարություն տալու նորա այդ պահանջներին: Սկզբից յեվ յեթ իմ բազմաթիվ զեկուցումների մեջ, մատնանշելով այդ դրությունը, յես պատիվ եմ ունեցել գրելու, վոր քաղաքական զառանցանքներ մեր գավառում չկան, յեվ վոր հող ու ջուրը, կյանքի տնտեսական հոգսեր եյին միայն հետաքրքրում մեզ: Յեթե, զեկուցել եմ յես, մենք կարողանայինք զբաղեցնել յերկրիը այդ իմաստով, յեկվոր քաղաքական դավերը կչքանան ինքնըստինքյան, յեվ մենք կտիրեյինք յերկիրը առանց բռնի ուժի յեվ առանց սվինների:

Բայց միյեվնույն ժամանակ յերկրի հոգեբանությունը նկատի առնելով յեվ վորովհետեվ յերկիրը սովոր ե իրավունքը զենքի շառաջման մեջ տեսնելու, յես միջնորդեցի զինվորական զբոսանք կազմակերպել նահանգի այն վայրերը, ուր ոսմանյան, ադրբեջանյան խմորումների համար ավելի պատրաստ հող կար: Բայց հենց այստեղ առաջ են գալիս բացառապես անձնական բնույթ ունեցող բարդությունները, վորոնք ավելի քան մեկ տարվա ընթացքում զբաղեցնում են թե վարող շրջանները յեվ թե հասարակությունը:

Յեվ այս հուշագրի սկզբում յես նկատեցի, վոր, վերացնելով յերկրում զինվորական դրությունը, կառավարությունն աչքաթող եր արել, վոր յերեկվա միահեծան իշխող, այսոր այդ առանցքում իրավազուրկ, մնալով նույն վայրում, չեր կարող միանգամայն անտարբեր լինել դեպի կատարված փաստը: Սկզբունքները անառատ են միայն վորպես ակադեմիկ հասկացողություն, իսկ յեթե այդ իդեալները իջնում են այնտեղ, ուր աշխարհի սկզբից խոսում են մարդկային միտումներն յեվ կիրքը, այդտեղ արդեն այդ գաղափարները յերերում են յեվ առաջ ե գալիս յեսը, իր բազմատեսիլ վարիանտներով: Այդպես ե յերկրի բնույթը աշխարհում:

Զինվորական իշխանությունն ի դեմս, ի հարկե, անհատների, աշխատեց ապացուցանելու, վոր Կարսի նահանգը կարող ե գոյություն ունենալ միայն բռունցքով: Յեվ նա վոչ մի միջոցի առաջ կանգ չառավ խառնվելու յերկրի քաղաքացիական, վարչական գործերին, հավագնություն ունենալով թելադրելու կառավարությանը իր քաղաքականությունը: Ինձ պետք չե ասել, վոր այնտեղ, ուր զինվորականը սկսում ե պարապել քաղաքականությամբ, թուլանում ե զորական կորովը յեվ ստեղծվում ե մի մթնոլորդ, ուր բոլորը խոսում են, բոլորը կարծիքներ են հայտնվում, բոլորը քննադատում են, թելադրում, բայց վոչոք աշխատել չի ուզում: Հազիվ թե կարիք լիներ բացադրելու, վոր իրերի այդ առանցքում խմորվում ե միայն պարտավորությունների կազմալուծման յեվ յերկրի իրավակարգը ուժգին յերերվում ե: Կողմնակից լինելով յերկրի քաղաքացիական նվաճման յեվ անընդհատ պահանջելով, վոր մենք շտապենք մեր շինարարությամբ, յես գտնում

եյի, միաժամանակ, վոր մենք պետք ե ցույց տանք մեր բռունցքը մեր լեռներում, բայց վոչ գործադրենք: Արեվելքը սովոր ե խոնարհվել բռունցքի առաջ, յեվ ույժը իրավունքի եմբլեման, նշանաբանն ե յեղել միշտ: Այդ միտումներով յեվ ի նկատի առնելով թուրք-թաթարական մեր որերի դավերը, յես դեռ ավելի քան մի տարի առաջ պահանջեցի զինվորական զբոսանք կատարել մեր լեռներում, ուր յերաժշտությունը պետք եր կատարեր մեր քայլերգը, յեվ մենք ի ցույց ձորեր պետք բերեյինք մեր զրահը: Միանգամայն ներդաշնակ յերկրի հոգեբանության հետ, այդ գործելակերպը կստեղծեր ուժեղ պետական հմայքը, Ադրբեջանի ինտրիգները կլչքանային ինքնըստինքյան, յեվ այդ զրահի տպավորությունը կամրապնդեր յերկրի իրավակարգն յեվ մարդիկ անձնատուր կլինեյին խաղաղ աշխատանքի: Բայց այդ ձեռներեցությունը ինձ եր պատկանում, յեվ տեղիս հրամանատարությունը ձեռք առավ բոլոր միջոցները: Վերջապես իմ 17 այդ առիթով գրավոր յեվ հեռագրական դիմումից հետո տեղիս հրամանատարությունը ստիպվեց կազմակերպելու իմ պահանջած զբոսանքը: Բայց նրան չէր հետաքրքրում, ի հարկե, գործի իմաստը, նրան պետք եր ոգտվել առիթից յերերելու յերկրի հանգստությունն ու իրավակարգը յեվ մի ավելորդ անգամ կրկնելու, վոր պետք ե զինվորական հեգեմոնիա յեվ վոչ քաղաքացիական դրություն:

Յերկաթուղու գիծը, ճիշտ ե, մաքրվեց թրքությունից, բայց թուրքերն անցան լեռները զինված, կողոպտված ի ծայր …….. յեվ վրեժխնդիր: Թալանն այդ որերում առասպելական եր, պաշտոնական դիմակի տակ մարդիկ գալիս եյին կեղեքելու յեվ հարստանալու, յեվ ինձ պետք չե ասել, վոր այդ առանցքում խախտվում եյին պետական հիմունքները, յեվ իրավակարգը արմատորեն կազմալուծվում: Կրկնվում եր մի պատմական տեսիլ-զվարճություն յեվ հաց, յեվ այդ մթնոլորդում խոսք չէր կարող լինել պետական վերաշինության մասին: Իզուր եյի յես իմ բազմաթիվ այդ առթով զեկուցումներում կարգի կանչում մեր սանձարձակ տրամադրությունը, իզուր եյի յես արտակարգ դատաստանական քննություն պահանջում- թալանի տենչը մի տարերային բռնկումն եր, վորի առաջ անզոր եյին մարդիկ իրենց սկզբունքներով ու դատաստանական պատգամներով: Բայց շատ բնորոշ ե, վոր ալան թալանի առանցքում, ուր տանող-տանողի եր, Ալեքսանդրապոլի վակզալում ինչ վոր քաղաքագլխների ու զորավարների մասնակցությամբ վճռվում ե Կարսի նահանգի Աղբաբա գավառամասը կցել Ալեքսանդրապոլի գավառին: Յեվ մեր որերի համար վոչ պակաս հետաքրքիր ե, վոր այդ մեծ ու յերկրի համար նշանավոր խնդիր լուծելիս՝ Ալեքսանդրապոլի վակզալ հեղինակավոր հաղորդակցությունը, գեթ ընդունված քաղաքավարությունը պահպանված լինելու, հարկավոր չհամարեց Կարսի նահանգապետի

կարծիքը այդ առթով լուծելու, յեվ ինձ տեղավորեցին Մինիստրների խորհրդի այդ առիթով վորոշման մասին միայն:

Հետո յես լսեցի, վոր Ալեքսանդրապոլի վակզալի խորհրդակցությունը, ռազմաբեմում վճռելով այդ քաղաքացիական խնդիրը, ի նկատի ուներ թուլացման Աղբաբայի թրքությունն յեվ զեմսկի գաղափարներ պատվաստել այդ տարածության վրա: Յեթե ռուս իշխանության որով ավելի քան 40 տարվա ընթացքում Աղբաբան Կարսի նահանգի սահմանումն եր, այդ ուներ իր հիմնավոր պատճառները: Բացի առանձնահատուկ տոպոգրաֆիկ պայմանների, Աղբաբան կապված ե Կարսի նահանգի հետ տնտեսական, արդյունաբերական ու վարչական կապերով, վորոնք կոփվել յեվ կերպարանք են ստացել տասնյակ տարիների տարածության վրա: Այդ բնական սահմաններում, ուր Ախուրյանը միշտ բաժանել ե Ալեքսանդրապոլը Կասից, կյանքը տաշել ե իր հործանքները, յեվ դժվար ե մի տեսական ակտով փոխել դարավոր ընթացքը: Այսպես թե այնպես Ալեքսանդրապոլի վակզալի խորհրդակցությունը չլուծեց խնդիրը: Աղբաբան առանձնացավ ավելի քան յերբ յեվ իցե յեվ Ալեքսանդրապոլի իշխանությունը նույնքան տեղյակ ե Աղբաբայի անցուդարձին, վորքան յես Կարսի կյանքից: Գալով այն հույսերին, վոր ունեյին զեմսկի գաղափարների ազդեցության վրա, յես կարծում եմ, վոր այդ զեմստվան դեռեվս պետք ե ձեվ ու կերպարանք ստանա Ալեքսանդրապոլում յեվ ապա, վորպես պատվաստ, տարվի Աղբաբայի վորջերը: Թե ի՞նչ ե այդ զեմստվոն այդ Ալեքսանդրապոլում, մենք չենք վիճի, կարծում եմ, վոր դորա մասին այժմ յերկու կարծիք չի կարող լինել: Մեր որերին դա մի եքսպերիմենտ ե քաղցր յեվ հեռավոր յերազների... Մնում ե խնդրի վարչական կողմը- բռունցքում պահել Աղբաբան: Բայց չե՞ վոր այդ ել կարող ադմինիստրատիվ ապարատի հարց ե: Յեվ այդպես, վոր կողմից ել մոտենալու լինենք Աղբաբան Կարսի նահանգից անջատելու խնդրին մի բան միայն անվիճելի կըմնա-Աղբաբան առանձնացավ իսպառ, վարչական կապը նրա հետ դարձավ ավելի փոքր քան նոմինալ: Գալով նրա վրա բարոյական ազդեցության հարցին, ի դեմս զեմստվայի, յես կարծում եմ, վոր դա մի ուտոպիա ե, յեթե չասենք զառանցանք, վորի մասին լուրջ խոսել անգամ չարժե:...

Այդպիսով ինչպես տեսնում եք, իմ պահանջած զինվորական զբոսանքը, փախանակ ամրապնդելու մեր պետական համարումը յեվ ուժեղ իրավակարգ ստեղծելու, միանգամայն յերերեց այդ գրությունը: Բացի այդ, նա գրգռեց մարդկանց գիշատիչ բնազդը, թուլացրեց պետական պաշտոնեության առաջ առանց պաշտոնեության մեջ առանց այդ ել յերերուն պարտաճանաչությունը:

Դառնալով նահանգի մյուս քաղաքացիական աշխատանքներին, յես հարկավոր եմ համարում կանգ առնել Ոլթիի գավառի գրավման վրա: - Այդ խնդիրը վոչ ռազմական այլ միայն քաղաքական ե: Յեթե

դուք աչքի անցնելու լինեք ավելի քան մի տարվա ընդացքում այդ առիթով գրառած իմ զեկուցումները, Դուք կըտեսնեք, վոր յես յերկար բանակցել եմ այդ առիթով Ոլթիի ազդեցիկ ջոջերի հետ յեվ հերկել եմ պետք ուղիներ այդ վայրը մեր սահմաններին կցելու համար: Բայց այստեղ ել յես հանդիպեցի նույն խոչնդոտներին: Տեղիս զինվորական իշխանությունը, հավակնություններնենալով ինքը յերկրի քաղաքականությունը վարելու, փոխանակ հենարան լինելու ինձ, ձեռք առավ բոլոր միջոցները խանգարելու ինձ: Այդ հրամանատարությունը վոչ միայն անջատ ինձնից, այլ յեվ գաղտնի ինձանից, սկսեց բանակցություններ վարել այդ ուղղությամբ թուրքերի հետ յեվ ստեղծեց մի մթնոլորդ, ուր Ոլթիի ազգաբնակություն չգիտեր, թե ով ե իշխանավորն յեվ ո՞վ յենթական: Ինձ պետք չե ասել, վոր այդ առանցքում յերեվում ե յերկրի հավատը դեպի կառավարչական մարմինը, նամանավանդ արեվելցու աչքում, վոր սովոր ե միահեծան իշխանության հրամանների, վոր կատարվում են առանց առարկության…

Դեռ մի տարի առաջ, հարկավոր ուղիները քաղաքական բանակցություններով հարթված համարելով, յես պահանջեցի, վոր մենք անցնենք Ոլթի: Զորքը պետք ե լիներ մեր պետականության առաջընթաց շարքը, բայց այսպես ձեվակերպելով խնդիրը, յես բնավ նկատի չունեյի մեր կյանքի գնով նվաճելու յերկիրը: Զորքը կը լիներ մեր իրավունքի յեվ մեր ույժի եմբլեման միայն: Բայց գործի ձեռներեցությունն ինձ եր պատկանում, յեվ մեր հրամանատարությունը, վոր ինքն հավականություն ուներ յեվ քաղաքականությամբ յեվ յերկրի վարչական հարցերով պարապելու, ամեն միջոց գործ դրեց խափանելու Ոլթին տիրելու: Սկզբում այդ հրամանատարությունը փորձեց վախեցնելու Յերեվանը թուրքական մեծ ուժերով, ապա տեղական ապստամբ տրամադրությամբ, թիկունքի սպառնալիքով յեվ վերջապես հազար ու մի տեխնիկական արգելքներով: Այսպես յերբ յես յեռանդուն պահանջում եյի շարժվել ու գրավել Ոլթին, տեղիս հրամանատարությունը ջղայնացնում եր Յերեվանը իր ահաբեկող հեռագրներով: Այդ որերում նա Յերեվան, վոր յերկու ուղղությամբ – Սարիղամիշ յեվ Մերդենեք, Նոքա կռիվ են մղում Տաճկաց զորամասերի հետ, յեվ հետեվապես Ոլթին գրավելու մասին խոսք չի կարող լինել: Ներքին գործերի մինիստր պ. Գյուլխանդանյան, կարդալով ռազմական այդ սենսացիոն բյուլետենը, յեվ իր նահանգապետից վոչ մի տեղեկություն չունենալու առթով, հեռագրով, հեռագրով հարցապնդում ե անում ինձ: Յես պատասխանում եմ, թե այդ պատերազմների մասին յես չեմ լսել, յես հաղորդում եմ նրան հետեվյալը. «Սարիղամիշի ուղղությամբ մի յերեք մաքսանենք քուրդ, Յերասխն անցնելիս, հետապնդվում են մեր զինվորների կողմից, քրդերից մեկը սպանվում ե յեվ բոլորը կողոպտվում: Մերդենեկի մոտ տեղի ե ունեցել այսպիսի մի դեպք: Մերոնք բարձրացնում են մի բլրակի վրա

մի թնդանոթ. լուրը տարածվում է յեվ Ոլթիի գավառի մոտակա քրդերի մի խումբ գալիս է իմանալու, թե ինչո՞ւմն է խնդիրը, գալիս են թամաշի: Մերոնք էլ նունյպես յերեվի թամաշի իմաստով, մի թնդանոթ են արձակում այդ թամաշաջիների վրա, վորոնք յեվ փախչում են: Յեթե այդ յերկու արկածն են մի ռազմական հաղորդակցություններում, պարզեցի յես մինիստրին, պատերազմական գործողություններ են անվանում այդ դեպքում մեր տեղիս հրամանատարության հետ մենք խոսում ենք տարբեր լեզուներով:…. Բայց այս դիպվածը միայն ի միջի այլոց: Ինչյեվիցե, այս ու այն պատրվակով յերկար ձգձգումներից հետո, տեղիս հրամանատարությունը, Յերեվանի պահանջով, զիջեց, վերջապես, իմ դիմումներին յեվ շարժվեց դեպի Ոլթի: Յեվ այս դեպքում էլ գործողություններին ռեկլամ տալու համար յեվ մի ավելորդ անգամ կառավարությանն ու հասարակությանն ցույց տալու համար, վոր մենք գործ ունենք Տաճկաց մեծ բանակի հետ, տեղիս հրամանատարությունը պահանջեց լրացնել իր ուժերը կամավորական մասերով: Կազմակերպվեցին ինչ վոր պարտիզան խմբեր, վորոնք դեռ Ոլթի չշարժված սկսեցին վարժվել ապագա գործողության համար թալանել թիկունքում մեր խաղաղ, առանց ազգի խտրության, ազգաբնակությունը: Իզուր եյի յես հեղեղում դատաստանական, զինվորական հաստատությունները այդ առիթով կազմված արձանագրություններով, իզուր եյի յես բազմաթիվ հեռագրներով յեվ գրություններով դիմում Յերեվան, բռնություններն ու թալանը աճում եյին որեցոր: Տեղիս զինվորական իշխանությունը հետապնդում եր մի նպատակ-յերերել յերկրի իրավակարգը յեվ հասնել իր նպատակներին, նորից բռնանալ յերկրի վրա, նորից ի դեմս գեներալ-նահանգապետի գերիշխել: Յեթե Դուք թերթելու լինեք Ոլթիի մասին իմ բազմաթիվ հեռագրներն յեվ գրությունները, Դուք կը տեսնեք, վոր Ոլթիի թուրքերը շատ քիչ ուժեր ունեն, վոր այն 36 գյուղը, վոր մենք գրավել եյինք, կեղծված յեկվոր արկածախնդիրներից յեվ ի ծայր զզված նոցանից, վաղուց խնդրում եյին, վոր մենք գանք յեվ տիրենք. այդպիսով մեր ռեգուլյար զորամասերը միանգամայն բավական եյին այդ գործողությունների համար յեվ այդ ուժերով գնալով այդ յերկիրը, մենք տարած կը լինենք այնտեղ մեր համարումը յեվ մեր պետականությունը: Բայց այդպես յես եյի մտածում, հենված տվյալների յեվ իրերի ընդհանուր իմաստի վրա: Իսկ կային յեվ այլ կերպ մտածողներ, վորոնց իրերի խաղաղ ընթացքը անհանգստացնում եր, նոցա պետք եր դղրդալից մթնոլորդ, պետք եր հավատացնել, վոր Ոլթին մի Վերդեն է, վոր գրավումը պահանջում է առանձնակի ուժեր ու ռազմական հանճար, յեվ այդ պատճառով նահանգապետին, վոր մտածելակերպը քաղաքացիական է, հավատալ պետք չէ: Յեվ այդ կամավորական շարքերը լցրեցին մեր բազմաթիվ այն անպատասխանատուները, վորոնք մեր ազատ որերում ընտելացել եյին հնձելու

առանց ցանելու: Ոլթիի 36 մեզ հպատակ գյուղերը մենք գրավեցինք, վորովհետեվ իսպառ թալանեցինք այդ տարածությունը: Այդ թալանի հռչակն այնքան ռեկլամային եր, այնքան հմայիչ, վոր Սարիղամիշի յեվ Կարսի զորամասերում սկսվեց դասալքություն, յեվ այդ բոլոր դասալիքները փախչում եյին դեպի Ոլթի: Գնում եյին դեպի այն ավետյաց յերկիրը, ուր մարդիկ հերասաբար թալանում եյին յեվ հարստանում…

Բայց այստեղ յես մի դառնալից յեվ նույնչափ զավեշտական հավելում պետք ե արձանագրեմ: Յերբ մենք պետք ե գրավեյինք Ոլթին, այնտեղի մի ազդեցիկ աղալարներից մեկին, Իզո բեգին, վոր աշխատել եր դեպի մեզ թեքել դեռ անցյալ տարվանից այդ 36 գյուղերը, յես ուզում եյի գավառապետի ոգնական նշանակել: Բայց հրամանատարությունը միջնորդեց նրան գավառապետի պաշտոն տալ, յեվ յես ել հակառակ իմ կամքի հարգեցի այդ խնդիրը, վորպեսզի զինվորականների մի ավելորդ անբավականությունն ինձնից հեռացրած լինեմ: Բայց գավառապետի հմայքը չոգնեց Իզո Բեգին, յեվ նրան ել մերոնք թալանեցին. այդ խայտառակ դեպքի մասին յես հաղորդեցի, ի հարկե, Յերեվան, բայց մի ամիս հետո այդ գավառապետը նորից տուժեց, մեր պետական պատվի նախանձախնդիրները քշեցին նրա 800 վոչխարը, սպանեցին նրա յերեք հովիվներին: Դորա մասին ել ի հարկե, կազմվեց արձանագրություն, բայց ո՞վ ե կարդում այդ արձանագրությունները յեվ ո՞վ ե ի կատար ածում որենքը:…

Բայց հենց այդ որերում պահանջեց վոչ պակաս զավեշտ միջնադեպ: Առաջին հետեվակ գնդի հրամանատարը հաղորդեց ինձ գրավոր, վոր գնդի փոտրատչին գնել ե Ոլթի պարտիզան զորամասի հրամանատարից 4 միլյոնի տավար, բայց պարոն հրամանատարը հետո ծախել ե այդ տավարը վոսկի փողով մի ուրիշին, ուստի գնդապետը խնդրում եր գրավել պարտիզան զորամասի հրամանատարի այդ տաք որը, վոր, ի հարկե Ոլթիի ժառանգությունից նրան եր հասել: Դժվար եր ի հարկե այդ պայմանին ավելի փաստացի ապացույց ձեռք բերել յեվ յես այդ գրությունը ուղարկեցի ըստ պատկանելույն, բայց այդ դոկումենտն ել, ի հարկե, դասվեց մեր այն գրավոր նյութերի շարքը, վորոնք պետք ե ապագայում ծառայեն վորպես նյութեր մեր հասարակական բարքերի ուսումնասիրության համար: Բայց վորպես նյութ նույն մթնոլորտի ուսումնասիրության համար. պետք ե արձանագրել այստեղ մեր որերի համար բնորոշ մի միջնադեպ: Այդ ժամանակամիջոցում, յերբ Ոլթի-Արդահանի տարածությունը ստանում եր մեծ պետական նշանակություն, ընդհատվում ե Կարսի յեվ Արդահանի միջեվ հեռագրական հաղորդակցությունը: Իզուր եյին տեղում իմ բազմաթիվ հեռագրներս Ալեքսանդրապոլում նստած փոստ-հեռագրական վարչության Պետին, հաղորդակցության յեվ ներքին գործերի մինիստրին, իզուր եյի այդ առիթով անհանգստաց-

նում նույն իսկ մինիստր-Նախագահին: Իմ բոլոր դիտումները շրջանառում եյին միայն յեվ միայն թղթի առանցքում, յեվ գիծը վերականգնող չկար տասն յեվ չորս որվա ընթացքում: Յես կարծում եմ, վոր նմանորինակ դեպք հեռագրական տարեգրության մեջ գտնել դժվար ե յեվ այդ բացառությունը մարդկանց քմահաճույքը մեզ եր թողել ճաշակելու:

Ինձ պետք չե ասել, ի հարկե, վոր 14 որվա ընթացքում Կարսից մինչեվ Արդահան կարելի եր նոր գիծ ստեղծել, ուր մնաց գծի խախտումը կապել: Այս 14 որվա ընթացքում հարյուրավոր կարեվոր կառավարչական հեռագրներ յերեսի վրա թափված եյին թե Կարսում յեվ թե Արդահանում, իսկ Մերդենեկի հեռագրակայանը, վոր գտնվում ե Արդահանի յեվ Կարսի մեջեվ, հնարավորություն ունենալով փոխանակելու հեռագրները հեռախոսով, մերժում եր մեր այդ մասին պահանջը: Վերջում պարզվեց, վոր կայանի կառավարիչը, զրկում եր ինձ Արդահանի գավառապետի հետ կապ ունենալու, վորպեսզի հաճույք պատճառի զինվորական ջոջերին, յեթե չասենք վերջինների դրդմամբ:

Այդ մասին յես հեռագրեցի Ալեքսանդրապոլ վարչության պետին յեվ պահանջեցի հեռագրական կայանի այդ կառավարչին հեռացնել նահանգի սահմաններից. վերջինս պատասխանեց, վոր կարգադրված ե տեղափոխել նրան այնտեղից: Յերբ զինվորականներն իմանում են այդ բանը, նոցա մեծ հեռագրում ե Ալեքսանդրապոլ, վոր հեռագրական կայանի պետը որինակելի պաշտոնյա ե յեվ խնդրում ե նահանգապետի այդ առթով պահանջը մերժել: Հեռագրական վարչությունն այդպես ել անում ե: Ինչպես տեսնում եք, անձնական միտումներով մարդիկ զրկում են նահանգապետին 14 որվա ընթացքում կապ ունենալու իր ամենակարեվոր հեռավոր գավառի հետ յեվ յերբ մեղավորը արզվում ե, յեվ նահանգապետը պահանջում ե պատժել նրան, նույն միտումներով արգելվում ե այդ: Դուք կը համոզվեք, հույս ունեմ, վոր նմանորինակ կամայականություն յեվ զուլումների աշխարհում դժվար ե հանդիպել: Յեվ միթե իրերի այդ առանցքում կարելի ե խոսել իրավակարգը ու առհասարակ պետականության մասին: Բայց այդ ուղղությամբ այդ դեռ բոլորը չե: Դեռ անցյալ տարվանից, յերբ մենք պետք ե գրավեյինք Ոլթին, յես տասնյակ գրավոր ու հեռագրական դիմումներ արեցի փոստ-հեռագրական վարչության, ներքին գործոց մինիստրներին յեվ վերջապես Մինիստր-Նախագահին Ոլթի հեռագրագիծ պատրաստելու մասին: Այդ տասնյակ խիստ ու յեվ յերբեմն սպառնալից պահանջներից հետո, վերջապես, յերբ մեր զորամասերն արդեն շարժվել եյին Ոլթի, հեռագրական վարչությունը բարեհաճեց սկսել աշխատանքը: Բայց յերբ գիծը պատրաստ եր, զինվորական իշխանությունը շահագրգռված, վոր նահանգապետը տեղյակ չլինի այդ հեռավոր գավառի անց ու

դարձին, արգելեց հեռագրական ապարատ դնելուն, առարկելով, վոր իրանք ունեն իրանց հեռախոսը յեվ հեռագրաթելերի մեջ պետք չեն տեսնում: Յես ստիպված եյի իմ պաշտոնական, ծածկագիր կարեվորագույն հեռագրներս ուղարկել Ոլթի նոցա հեռախոսի միջոցով, բայց այդ հեռագրները, տարուբերելով այն առանցքում, ուր խոսում եյին մարդկային կրքերը, տեղ չեյին հասնում, յեվ յես ստիպված եյի կրկնել հեռագրներս իմ Ոլթիի ներկայացուցիչին սուրհանդակների միջոցով, գրավոր յեվ փոխանակ մի յերկու ժամից հետո պատասխան ստանալու, յես այդ ստանում եյի շաբաթներից հետո: Զինվորականներին պետք եր զրկել նահանգապետին հնարավորություն կապ ունենալու Ոլթիի հետ, բայց նրանք զրկեցին ինձ դրանով մի յեվ նույն ժամանակ յեվ հնարավորությունից միջոցներ ձեռք առնելու այն պատահարի հետ, վորի հետեվանքով մենք ամոթալի թողեցինք Ոլթին:

Գտնելով, վոր Ոլթիից մենք փախանք վոչ ռազմական պատճառներով յես ուղարկեցի Ձեր նախորդին հետեվյալ ծածկագիր հեռագիրը. «բարեհաճեցեք միջնորդել մինիստրների խորհրդի առաջ մի հանձնաժողով ուղարկել Ոլթիի պատահարը լուսաբանելու համար, գտնելով, վոր այդ դեպքը ունի վոչ այնքան ռազմական, վորքան հասարակագիտական յեվ իրավական մեծ նշանակություն, միջնորդում եմ, վոր հանձնաժողովին մասնակցեն բարձր դատաստանական հիմնարկությանը ներկայացուցիչները յեվ իշխող քաղաքական կուսակցության ականավոր մարդիկ: Որինականությունը արտադրության հիմունքն են: Այդ հանձնաժողովը պետք եր պարզեր, թե ինչո՞վ եյին պարապում մարդիկ Ոլթիում հետեվապես հայ հասարակության ու կառավարության համար կըպարզվեր, թե ինչո՞ւ պետք ե թողնեինք Ոլթին: Բայց հանձնաժողովը չեկավ. իսկ խուճապով բռնված մարդիկ մի քանի որից հետո դատարկեցին յեվ Մերդենեկը: Այդ որվանից զինվորականները խզեցին հեռագրական կապը Արդահանի հետ, հնարավորություն չտալով ինձ կապ ունենալու Արդահանի գավառապետ գնդապետ Կադիմովի հետ յեվ այդպիսով զրկեցին կառավարությունը այն արժեքավոր տեղեկություններից, վոր յես շարունակ ստանում եյի այդ գավառապետից:

Գնդապետ Կադիմովը դեռ սեպտեմբերի 20-ին հեռագրել եր ինձ ծածկադրով, վոր խալիլ փաշան մեծ ուժերով պատրաստվում եր միաժամանակ հարձակվելու յեվ Սարիզամիշի յեվ Մերդենեկի վրա, բայց այդ հեռագիրը զինվորական քմահաճույքի շնորհիվ, յես ստացա միայն յոթ որից հետո: Յես զուր եյի իմ բազմաթիվ հեռագրներով բողոքում զինվորական այդ կամայականության դեմ, հեռագրական կապը Արդահանի հետ մնաց փակ ինձ համար մինչեվ սեպտեմբերի 29, յերբ մերոնք դատարկեցին յեվ Արդահանը:

Ինչպես տեսնում եք, պետական սրբազանագույն շահերը զոհ են բերվում մի ցանկությեան- չեզոքացնել քաղաքացիական իշխանու-

թյունը աշխատանքի հրապարակից յեվ զինվորական հեգեմոնիա ստեղծելով, ասել յերկրին ու կառավարությանը- մենք ենք ամեն ինչ յեվ ամեն բան: Յեվ այսոր յերկիրը մեծաչափ ճաշակում ե այդ բռնությունների հետեվանքը: …

Ինժիներ Խատիսյանը, վոր զոհ գնաց այդ արկածալից մթնոլորդին յեվ վոր այդ պատահարից մի քանի որ առաջ դարձյալ գնացել եր Ոլթի, ասում եր, վոր Ոլթի բոլորը տոգորված են միայն յեվ միայն հարստանալու տենչով յեվ բոլորը տանում են, անվերջ տանում….

Պարլամենտի նախագահը, վոր այդ պատահարից մի յերկու որ առաջ միայն վերադարձել եր Ոլթիից, ասում եր, վոր նա ճնշված ե Ոլթիում իր բոլոր տեսած ու լսածից: Ազգաբնակությունը, ավելացրեց պարլամենտի նախագահը, ահաբեկված ե սիստեմատիկ բռնություններից ու թալանից: Այդ որերում Ձեր նախորդը ծածկագիր հեռագրով առաջարկեց ինձ զինաթափ անել մաուզերիստներին յեվ մաուզերներ կրելու վոչվոք չտալ, յես պատասխանեցի, վոր բոլոր մաուզերիստները գտնվում են մեր զորամասերի կամավորական վաշտերում, գտնվում են Ոլթի… (յեվ խնդրեցի զինվորական իշխանությունը նոցա զինաթափ անել, բայց այդ ել ի հարկե)

Ի նկատի ունենալով, վոր այն որերը, վոր մենք վերագրում ենք, առաջ են յեկել սիստեմատիկ բռնությունների յեվ բազմատեսակ թալանի մթնոլորդում յեվ ամրապնդել այն անիշխան առանցքում, ուր իրավունքը յեվ իրավասությունը վոտնահարվում եր ի հաշիվ անձնական յեվ նյութական միտումների, յես կուզեյի ծանրանալ այդ ուղղությամբ:

Յերբ մի քանի ամիս առաջ, Պարլամենտի անդամ Լեվոն Թաթեվոսյանի հետ մենք շրջագայում եյինք նահանգը, ամենուրեք ամենասիրալիր ընդունելություն գտնելուց հետո, ժողովուրդը խնդրում եր ազատել յերկիրը բռնություններից ու կեղեքումներից: Անվերջ ասում եյին գյուղացիները, գալիս են սպաներ, զինվորներ, նոցա անվան տակ բազմաթիվ մարդիկ յեվ անասուն, մթերք են պահանջում իբր թե զորամասերի համար: Մենք պատրաստ ենք պահել զինվորը, բացատրում եր ժողովուրդը, բայց մենք հիմք ունենք ասելու, վոր այդ պահանջների նվազագույն մասը միայն գնում ե ըստ պատկանելույն: Մեր խնդիրն ե, վերջնականացնել այդ անվերջ պահանջները յեվ յերաշխավորություն տալ գավառին, վոր այդ բոլորը զորքի համար ե յեվ վոչ մասնավոր մարդկանց համար:

Յես մատնացույց արեցի միայն Պարլամենտի անդամի ներկայությամբ տեղի ունեցած բողոքը, հնարավորություն չունենալով արձանագրելու այստեղ այն հարյուրավոր գանդատները, վորոնք մեր այստեղի տիրապետության որից տեղում են, յեվ ի հարկե անհետեվանք մնում:

Տարի ու կես շարունակ յես բազմաթիվ գրություններով ու հեռագրներով դիմել եմ տեղիս հրամանատրության, Զինվորական ու ներքին գործերի Նախարարներին, Մինիստր-Նախագահին վերացնել կամայականությունը զորքին մթերքներ, մատակարարելու գործում, կենտրոնացնելով այդ գործը համբարակային մարմնի ձեռքում յեվ իրավունք չտալ անհատներին զբաղվելու տնտեսական խնդիրներով: Բայց իմ բոլոր այդ անվերջ դիմումները շրջանառում եյին միայն թղթի առանցքում յեվ միայն բարդում եմ հարաբերություններս զինվորականների հետ:

Այս կամայական ու անկոնտրոլ մթնոլորդում, բնականաբար պետք ե առաջ գար յերկրի դժգոհությունն, յեվ մենք կարողություն չունենայինք զսպելու այդ սանձարձակ դրությունը, յերերում եյին յերկրի իրավակարգը:

Վորպես նահանգապետ յես չեյի կարող հաշտվել այդ դրության հետ, Պետական ըսկզբունքներ բարձր լինելով ինձ համար կողմնակի բոլոր միտումներից, ինձ հարկավոր եր հեղինակացնել յերկրում մեր համարումը, վորովհետեվ պետությունը չի կարող պահպանել միայն սվիններով նա պետք ե հենվի որենքի յեվ արդարության վրա: Բայց իմ հակառակորդները առանց քաշվելով ինձ հետ խտրություն չեյին դնում միջոցների մեջ, յեվ իրանց չիմանալու եյին դնում, վոր յերերելով ինձ, նրանք խախտում եյին պետության հիմքը: Ամեն միջոցներով խառնվելով վարչական յեվ հասարակական շրջաններում հավաստացնելու, վոր նահանգապետի ուղղությունը սխալ ե, վոր տեղական այլազգիների մեջ պետք ե տեսնել միայն ըմբոստ յեվ միայն ապստամբ տարր յեվ այդ այլասեռ ժողովուրդը պետք ե ճնշել վոչ շոյել: Յեվ յերբ տեղական անվանիներին առաջ քաշելով ուսադիրներ յեվ պաշտոնական հանձնարարություններ տալով, ուզում եյի մեր ազդեցությունը կցել այդ վորջանոցը, իմ հակառակորդներ միջից կես եյին լինում գցելու յերկրում այդ մատնանշված մարդկանց նշանակությունը միմիայն յեվ միմիայն ինձ կշտամբելու միտումներով: Յեվ վորովհետեվ Արդահան-Ոլթի տարածությունում այդ քաղաքականությունը վարում եյի յես գլխավորապես Արդահանի գավառապետ Կադիմովի միջոցով, իմ բարեկամներս իրենց բոլոր նետերն ուղղեցին Կադիմովի վրա յեվ տարի ու կես ժամանակամիջոցի ընթացքում կանգ չառան վոչ մի միջոցի առաջ նրան արատավորելու, ձգելու, հետեվապես խորտակելու յեվ ինձ: Դեռ անցյալ տարվա ամառը, նոքա հաղորդեցին Յերեվան, վոր Կադիմովը հակապետական հարաբերությունների մեջ ե, ինչ վոր Աբաշիձեի հետ յեվ Յերեվանը հեռագրով պահանջ դրեց ձերբակալելու Կադիմովին: Բայց բարեկամներս տեղյակ չեյին, վոր այդ Աբաշիձեի մասին ինձ տեղեկություններ հաղորդողը Կադիմովն եր յեվ նույն Կադիմովի պահանջով յես բանտարկեցի Աբաշիձեին:

Այնուհետեվ, յերբ այդ իմ դեմ փորձնական համարը չանցավ, բարոյականներս սկսեցին հաղորդել Յերեվան, վոր Կադիմովը ծախվել ե վրացիներին, վոր նա պատրաստել ե Վրաստան անցնելու յեվ այլն: Բայց այդ մարդիկ չգիտեյին, վոր նույն Կադիմովը շարունակ գաղտնի տեղեկություններ եր հաղորդում ինձ Վրաստանի անց ու դարձի մասին յեվ խլրտում առաջ բերում Արդահանի հյուսիսային մասում:

Յերբ այդ ապստամբության անկարողությունը պարզվեց, 12-րդ հետեվակ բրիգադայի հրամանատարը, վոր ժամանակ եր գտնում յեվ վարչական-քաղաքական խնդիրներով ծանծրացնելու, դավադրություն ե գտնում իր թիկունքում՝ Ոլթի յեվ պահանջ ե դնում հեռացնելու, Ոլթիի գավառի ամբողջ հույն ազգաբնակությունը դեպի Կարս վորպես պատանդ յեվ բացի այդ պաշտոնանկ անելու գավառապես Իզո-բեգին վորի թեկնածությունը մի յերկու շաբաթ առաջ ինքն եր առաջ քաշում: Այդ հայտարարությունն արեց զորավարն Ոլթին գրավելուց յերկու շաբաթ հետո: Յես միանգամայն մերժեցի այդ յերկու պահանջն ել յեվ մի ավելորդ անգամ նկատեցի, վոր պետք ե վերջ տալ թալաններին յեվ բռնություններին յեվ դրանով վերացնել մեր կասկածները ինչ վոր դավերի մասին: Յես այդ բոլորի մասին մանրամասն հաղորդեցի ձեր նախորդին:

Անցան ավելի քան 2 ամիս, ապստամբություն Ոլթիում չեյինք տեսնում, բայց թալանն ու բռնությունները շարունակվում եյին նույն տեմպով, յեվ ազգաբնակությունը մեզնից յերես եր դարձնում: Բայց մեկ ամսից հետո, մեր հրամանատարությունը նոր ապստամբություն եր գտնում, յեվ այժմ Արդահանի գավառում, քրդական այն գյուղերում, որոնք ավելի քան մեկ տարվա ընթացքում անկոնտրոլ ու անհաշիվ շարունակ մատակարարել են մեր այնտեղի զորքին տավար ու մթերքներ: Այդ կարծեցյալ ապստամբության հետ նույն մարդիկ միջից կես յեղան կապելու յեվ Կադիմովի անունը, բայց քրդերի յետ հաշիվների այդ մեծաղմուկ բռնկումը ավելի մնաց միայն բռնկում յեսական միտումների:

Յես դատաստանական քննություն նշանակեցի այդ չակերտավոր ապստամբության առթով, ոգտվեցի դեպքից, վոր Կարսումն եր այդ ժամանակ դատաստանական պալատի անդամ Աբգարյանը յեվ խնդրեցի նրան անցնել Արդահան ու հսկել այդ քննության վրա, խնդրեցի յեվ պարլամենտի անդամ Մաքսապետյանին անցնել նույն գավառը յեվ ծանոթանալ իրերի հետ, բայց այդ բոլորը մեծ ու փոքր մարդկանց հետախույզը աշխատանքները վոչ մի դավադրություն չգտան. Գլխավորապես Մելիք-Շահնազարյանն, վոր իր վաշտի յեվ գնդացիրների հետ ուղարկված եր այդ վայրը հրամանատարության կողմից այդ ապստամբությունը ճնշելու, ուղարկում ե իր մեծին զավեշտ զեկուցում. յեկա ուր հարկն ե, բայց վոչ թշնամի յեվ վոչ ապստամբություն չգտնելով, վերադառնում եմ: …

Ի հարկե, այդ զեկուցումը շատ զավեշտալի կլիներ, յեթե նա միեվնույն ժամանակ յեվ դառնալից չլիներ: Բայց մինչ այս յեվ մինչ այն, մինչ մեր մեծապատիվ հրամանատարությունը թմբկահարում եր այս ապստամբության մասին, իսկ մեր բազմաթիվ պաշտոնյաները յեռանդալից հետամուտ եյին լինում այդ մոգական թշնամուն, արկածախնդիրները, վորոնք ակնթարթ բաց չեյին թողնում ռումբեր ձգեցին այդ աhաբեկված Արպաշեն գյուղի վրա, սպանեցին յերեք քուրդ, փախցրին քրդերին ու թալանեցին գյուղը: Այդպես վերջացավ այդ մեծաղմուկ գործը:

Ինչպես hիշում եք, Ոլթին դատարկելը յես պատահար, այդ մի խուճապ, վոր բռնկվեց մի վայրում, ուր մարդիկ թալանում յեվ կեղեքում եյին, սպեկուլյացիայով զբաղվում: Թե ինչու դերանից հետո դատարկվեց Մերդենեկը, այդ իրոք կպարզի ապագան, բայց յես չեմ կարող անուշադիր անցնել այդ խայտառակ փախուստի մոտով, վոր տեղի ունեցավ Մերդենեկում: - Կոմենդանտը կոչ եր անում մարդկանց փախչել, յեվ նոքա թողնելով տուն, տեղ խելակորույս փախչում եյին յեվ փախչում… առանց պատճառի: Յեվ յեթե այդ խուճապը առաջ չգար քրդերի ու ոտարազգիների ներկայությամբ, մենք դեռ այնչափ յերկչոտ պոռոտախոսներին պատժելու համար, վորքան մեր որերի տրամադրությունն ուսումնասիրելու համար:

Ինչ-ինչ գեթ ինձ համար անթափանձելի միտումներով հրամանատարությունը փախցրեց Մերդենեկից հեռագրատունը, յեվ այդպիսով ընդմիշտ խզեց այդ որվանից կապը իմ յեվ գնդապետ Կադիմովի միջեվ: Թե ու՞մից եյին փախցնում զինվորականները Մերդենեկից այդ խղճուկ հեռագրական ապարատը- յես չգիտեմ, ի հարկե մի բան միայն ակներեվ եր վոր ինձ զրկեցին ի վիճակի լինելու կարեւորագույն գավառի անցուդարձին:

Բայց Ոլթիի պատահարը ունեցավ իր մեծ նվաճումը: Զինվորականությունը ի դեմս հրամանատարության հասավ իր նպատակին, կառավարությունը զինվորական դրություն հայտարարեց Կարսի նահանգում յեվ քաղաքացիական իշխանությունն ել հանձնվեց զորավարներից մեկին: Բայց բռնությունը սիրում եր համեմել ամեն մի դրություն զավեշտ գծերով յեվ այդորինակ միջնադեպ պատահեց այդ որերում: Պատվելի զարավարնեից մեկը, վոր վաղուց յերազում եր գեներալ-նահանգապետության մասին յեվ վորի համար նա այնչափ յեռանդ ու կրիք սպառեց, ի դերեվ տեսնելով իր իղձերը, փոխեց իր ֆրոնտը իր զինակցի հանդեպ, ամենուրեք տրտնջալով, վոր աշխատում ե ինքը, իսկ դափնիքը վայելում ե ուրիշը… Բայց այդ միջնադեպի մասին միակն այլոց:

Յերբ մենք ճեպընթաց թողնում եյինք վոչ միայն Ոլթի, այլյեվ Մերդենեկ, Կարակուրտ, Սարիղամիշ յեվ մյուս վայրերը, ուր այնքան շինարար աշխատանք եր թափված, յերբ հասարակական տրամա-

դրությունը, ամբողջովին ճղայնություն դարձած, իր միակ հույսը հա-ռել եր դեպի զինվորականությունը, գեներալները իրենց անվճռաբեկ գերիշխանությունը զգալով, պահանջ դրեցին գնդապետ Կադիմովի Արդահանից հեռացնելու յեվ բերելու Կարս, վորպես վտանգ կամ գուցե վորպես բանտարկյալ: Յես հարկավոր չհամարեցի առարկել. Առաջինն այն պատճառով, վոր կրքերի ու անձնական միտումների առանցքում բանականությունն յեվ ճշմարտությունը տեղ չունի, յերկրորդը՝ կառավարությունն իր սեպտեմբերի 19-ի ակտով յերկրի միահեծան կառավարությանը բախտը վստահել եր ավելի կարող մարդու, քան նահանգապետը յեվ, հետեվապես, յես ձայն չունեյի կառավարական գործում, յեվ ինձ նմում եր համակերպվել մարդկանց քմահաճույքների հետ յեվ, ըստ ժողովրդական ասվածի, իմ այդ որվանից կրավորական աշխատանքում «մի կերպ փալաստ ջրից հանել»... Բայց իմ փոխարեն առարկեցի քաջարի գեներալներին պարլամենտի անդամները յեվ տեղիս դաշնակցական կոմիտեն: Բայց, ի հարկե յերկրի միահեծան վարիչները, հազիվ անկոնտրոլ գրավելով հրապարակը, լռել չուզեյին այդ մասին յեվ պահանջեցին Կադիմովին, վերին հետամուտ եյին լինում ավելի քան մի տարվա ընթացքում: Լռեցին պարլամենտի անդամները, նույնպես յեվ դաշնակցական կոմիտեն, վորովհետեվ գեներալները անհուսալի ներկայացնելով մեր դրությունը, ահաբեկում եյին մեզ բոլորիս:

Շատ պարզ եր ի հարկե, վոր այդ մոմենտում ձերբակալել Արդահանում այնպիսի մի մեծ հեղինակություն. Վորպես Կադիմովը, կնշանակեր անիշխանության մատնել այդ գավառը, յեվ մեր թիկունքում, այդ թրքության յեվ քրդության մեծ վորջում առաջ բերել բաց ապստամբություն: Յերկար մտածելուց հետո, թե ինչ ձեվ տալ Կադիմովին Կարս բերելուն, յես գրեցի նրան, վոր վերցնի իր հետ յերեք հոգի իմ մատնանշված մարդկանցից, վորոնք լավ տեղյակ են յերկրի անցուդարձին յեվ գա ինձ մոտ խորհրդակցություն: Մինչեվ այդ, 25 որվա ընթացքում, զինվորականները խզել եյին Արդահանի յեվ Կարսի միջեվ հեռագրական կապը յեվ պահպանել եյին միայն հեռախոսը, զրկելով ինձ հնարավորությունից փոխանակելու Կադիմովի հետ մոմենտի կարեվորագույն անցքերի մասին:

Բայց այս անգամ մեծապատիվ գեներալները զիջեցին յեվ թույլ տվին, վոր Կադիմովին բանտարկելու յեվ Կարս կանչելու իմ հեռագիրս իրանց հեռախոսով գրվի:

Ինչպես յեվ պետք եր սպասել, վորչափ յեվ քողարկված լիներ հեռագիրս, Կադիմովը չեր կարող չհասկանալ նորա իմաստը յեվ նա, ի հարկե չեկավ: Բայց յեվ այնպես, ինչպես գիտեք Արդահանի գավառը միանգամայն հանգիստ մնաց, փախան միայն մի քանի տասնյակ քրդական գյուղեր, յեվ այնտեղ ել թալանից յեվ բռնություններից ահաբեկված: Թողնելով տուն տեղ, անհամար

հարստություն, դեռ չծեծված հացը իսկ տեղ-տեղ եւ չհնձված, ազգաբնակությունը փախչում եր խելակորուցս: Իսկ Կարսում այդ միջոցին ստացվում եյին այնպիսի զեկուցումներ-կռվով գրավեցի այս ինչ գյուղը, թշնամին փախավ: …

Այս քաջարի արշավը դեպի խաղաղ ու հպատակ ազգաբնակությունը վերջանում եր չտեսնված թալանով, վոր ծայրը, ի դեմս տավարի յեվ վոչխարների մեծաքանակ հոտերի անցնում եր Ալեքսանդրապոլ…

Իզուր եյի յես բողոքում բերանացի, բազմաթիվ գրություններով յեվ հեռագրներով, մենք շարունակում ենք մեր կռիվները դեռ մեր թիկունքում: … Յեվ սարսափահար քրդությունը փախչում եր այնտեղ, ուր գտնվում ե մեր իսկական թշնամին, յեվ բնականաբար բազմապատկում նրա ուժերը: Այդպես յեվ մեր քաղաքականությունը յեվ մեր վերաբերմունքը դեպի յերկրի բնիկները:

Մեր հրամանատարությունն այսոր վոչ մի տեղեկություն չունի թշնամու քանակի նպատակների մասին, հետեվապես տարուբերվում ե իր անելիքների մեջ:

Հայ ազգի մեծահամբավ Լազարեվ, իշխան Բեհբուդով յեվ Կոմս Լորիս-Մելիքով ռազմաբեմ եյին գալիս շրջապատվախ տեղացի անվանիներին շքախմբով յեվ այդ բեգերից ու աղալարներից նոքա ստանում եյին բոլոր տեղեկությունները: Բայց մեր այստեղի գեներալները, պայքարելով նահանգապետի հետ, ամեն միջոց գործադրեցին բռնանալու ոտարազգիների վրա, փախցրեցին, ցիր ու ցան արեցին նոցա, յեվ այսոր վոչ միայն մենակ մնացին, այլեվ այդ թուրքերով ու քուրդերով ուժեղացրին թշնամու բանակը:

Զինվորական իշխանությունը, փոխանակ զբաղվելու իր գործով, կրթելու զինվորականներին յեվ կոփելու նոցա շարքերը, գերադասեցին պարապել վարչական ու քաղաքական խնդիրներով: Քաղաքացիական իշխանությունը տապալելու համար նա սիստեմատիկ արշավանք կազմակերպեց նորա դեմ, նպաստեց բռնկություններին ու կամայականություններին յեվ ամեն բան արեց յերերելու յերկրի իրավակարգը:

Տաճկաց արշավը մեծաչափ ոգտվեց ստեղծված մթնոլորդից: Թալանի յեվ բռնությունների առանցքում կարող եր առաջ գալ միայն անբարոյականություն յեվ ազգերի այդ բացասական դեպի մեզ վերաբերմունքի վրա հենվեց տաճկաց արշավը:

Թուրք քրդական վայրերը հարստության մի անհուն տարածություն եր մեզ համար, բայց մենք չկարողացանք ոգտագործել այդ անձը, մենք կեղեքեցինք, թալանեցինք այդ վայրը, հարստացնելով արկածախնդիրներին յեվ կյանքը վտանգողներին: Ավելի քան մեկ տարվա ընթացքում, թուրք քրդական վայրերը մատակարարում եյին վոչ միայ Կարսի նահանգում, այլ յեվ դեպի Արարատյան

դաշտը՝ տավար, ձի, մթերքներ: Բայց մենք կարողություն չունեցանք տնտեսելու այդ մեծ հարստությունը յեվ միանգամից ավերեցինք այդ աղբյուրը:

Իմ բոլոր բազմաթիվ դիմումները այդ առթով, իմ բոլոր բողոքները, վոր զինվորական իշխանությունը, արշավ կազմակերպոլեվ քաղաքացիական իշխանության դեմ, յերերում ե յերկրի իրավակարգը, մնում եյին վոչ միայն անհետեվանք, այլ յեվ անպատասխան: Իշխելու յեվ բռնանալու այդ անսանձ տենչը շարունակվում եր ավելի քան մի տարվա ընթացքում, կրքերի յեվ վոտնահարությունների այդ խառնուրդում ընկնում եր կառվարության համարումը, յեվ յերկիրը չեր տեսնում այդ հեղինակությունը, վոր կարող լիներ վերջ տալ այդ խեղկատակությանը:

Գալիս յեվ գնում եյին պարլամենտի անդամները յեվ այլ հասարակական գործիչներ, բոլորը միակարծիք եյին, վոր զենքի շառաչյունով յերկիրը կառավարել չի կարելի, ամենքը ասում եյին, վոր յերկիր կառավարելու գործը զինվորականի կոչում չե, բայց յեվ բոլորը միայն ասում եյին եվ միայն ցավակցություն ահյտնում:

Յեվ այսոր յերկիրը բացոթյա, մերկ ու սոված վայելում ե արկածների այդ հետեվանքը:- Մենք հնձում ենք այն, ինչ վոր ցանել ենք:

Յերբ դուք, պ. Արարատյան ստանձնեցիք Ն. Գ. Մինիստրի պաշտոնը, յես գրեցի այս տեսությունը Ձեզ ծանոթացնելու համար այդ բոլորի հետ, վորի մասին տարուց ավել յես այնպես անհուսալի բախել եմ բազմաթիվ դռներ: Ձեզ հետ մոտ ծանոթ չեյի, բայց լսում յեվ դիտում եյի, վոր դուք տրամադրի չեք քաշ տալու հոսանքի հետեվից յեվ Ձեր կորովը ունենալու, կփորձենք կրավորական Ներք. Գործ Մինիստրությունը դարձնել պետական առաջին դեմք ունեցող գործոն: Յեվ յես կարծեմ չեյի սխալվում: Ինչպես տեսար իմ տեսությունից, յերբ յես գրում եյի այս տողերը յես դեռ հույս ունեյի վերականգնել դրությունը, հենվելով Ձեր հեղինակության յեվ Ձեր վճռականության վրա: Յեվ յես չեյի կարծում, վոր մեր որերը հաշված են, վոր մենք այն չափ մոտ ենք կատաստրոֆային:

Բայց մի յերկու խոսք ել Կարսի նահանգի մասին. Նրա վերջին յերկու ամսվա ընթացքում, սեպտեմբերի 28-ին սկսվեց մեր հռչակավոր նահանջը: Թե ինչ ուժերի ճնշման տակ եյինք նահանջում- այդ զինվորական իշխանության արտոնյալ գաղտնիքն եր, յեվ մենք, մահկանացուներս, իրավունք չունեյինք անցնելու դեպի այդ թանձրությունը: Յերբ մի քանի որից հետո, նահանգապետը, հենված տվյալների վրա, փորձեց բնորոշել մթնոլորդը յեվ հեռագրով լուսաբանել դրությունը, ասաց, վոր տեղիս հրամանատարությունը ապագա դափնիների ախորժ հեռանկարներով տարված, ուռցնում ե դրությունը, զորքերի հրամանատարը արգելեց նահանգապետին վորեվե տեղեկություն հաղորդել Ներք. Գործ. Մինիստրության: Մեծապատիվ

զորավարը գտնում եր, վոր նահանգապետը իր սխալ հաղորդագրություններով մոլորեցնում ե բարձր կառավարչական շրջանները, նսեմացնելով այն ահռելի ուժը, վորի դեմ այնչափ անձնուրաց կռվում են մեր գեներալները: Ույժը-իրավունք ե, ճշմարտությունների մասին խոսելը ժամանակ չեր, նահանգապետը ստիպված եր, ի հարկե, լռել, թողնելով ասպարեզը արկածներին յեվ տափակություններին:

Մեր զորքը մահկանացուներիս անհասկանալի միտումներով, հմուտ գեներալների ղեկավարությամբ շարունակում եր նահանջել անտեսանելի թշնամու առջեվից, իսկ թիկունքի մեր հերոսները ուժեղ յեռանդով շարունակում եյին իրենց անվիճելի նվաճումը- թալանում յեվ կեղեքում եյին: Յեվ պապանձության մատնված նահանգապետը փորձեց խախտել հրամանատարի կարգադրությունը յեվ ծածկագիր հեռագրով հաղորդելով իր մինիստրին ստեղծած քաոսի յեվ անիշխանության մասին, ավելացրեց,- վերջ տվեցեք այդ հեգեմոնիային, դորանից կըպայթի պետականությունը:

Շարունակ նահանջելով, ծգելով մեր համարումը, կոտորելով յերկրի մեջքը, կազմալուծելով զորքը, յեվ ընկճելով նրա տրամադրությունը, գեներալները անզուգական եյին մի խնդրում միայն: Որվա քուրմեր լինելով, վորոնց համար եր ամեն բան յեվ բոլորը, նրանք ոգտվեցին առիթից, վերջին հաշիվը տեսնելու իրավաբանական նահանգապետի հետ:

Որվա քուրմեր լինելով, վորոնց համար եր ամեն բան յեվ բոլորը, նրանք ոգտվեցին առիթից վերջին հաշիվը տեսնելու իրավական նահանգապետի հետ:

Զինվորական գործողությունները յերկրորդական նշանակություն ունեցող հանգամանք համարելով, նոքա թմբկահարում եյին մի ուղղությամբ: Նոքա վայնասուն եյին բարձրացնում թուրք ազգաբնակության յեվ գնդապետ Կադիմովի մասին, շարունակ կարծում յեվ հաղորդում Յերեվան, վոր թուրքերը Կադիմովի գլխավորությամբ ապստամբել են իրենց թիկունքում:

Կարսի անկումից մի 10 որ առաջ, բերդի դիմադրությունը կանոնավորելով, զինվորական իշխանությունը թնդանոթների փորձնական կրակ ուզեց բանալ, իսկ դրա հետ միաժամանակ բերդի հրետանիի հրամանատար գնդապետ Բաբաջանովը մի բազմամարդ ժողովում զեկուցեց, վոր ամրությունները (ֆորտերը) պետք ե կապել իրար հետ հեռախոսով: Այդչափ եյինք պարտավոր մենք պատմական դիմադրության:

Բայց այդ դրությունը վոչ միայն չապստամբվեց, նա վոչ միայն կողմնակից չեղավ թուրքերին, այլ մինչեվ վերջ լուռ մնաց: Յեվ յերբ Կարսի անկումից հետո Արդահանի յեվ Կարսի գավառի պաշտոնյաները հեռանում եյին գյուղերից, այդ ըմբոստ թուրքերը յեվ քրդերը թախանձանք խնդրում եյին այդ պրիստավներին մնալ իրենց մոտ ու

շարունակել պաշտոնավորել յեվ հենց տաճկաց որով: Այդչափ յերկ-յուղալի եյին Փիրումով-Ոսեպով ընկերության համար այդ թուրքերը:

Յերբ Կարսի անկումից մեկ շաբաթ առաջ, յերկու մինիստրների ներկայությամբ յես հարցրի հրամանատարից-հնարավո՞ր ե արդյոք Կարսի պաշարումը, նա հեգնեց ծիծաղեց ու ասաց, մենք անձեռնմխելի ենք յերեք ամսվա ընթացքում: … Բայց զորաբանակը նահանջում եր. Հրամանատարությունը, վոր մինչեվ այժմ զբաղված եր միայն ադմինիստրացիայի դեմ ինտրիգներում, սկսեց պառակտել իր մեջ: Պատերազմի վախճանը յուր հետ նսեմացրել եր յեվ նորությունների հրապարակում շրջանառում եյին միայն կուրյոզները գեներալների յեվ գնդապետների մասին յեվ յերգիծարան նյութ ամբարում ապագա պատմության համար: Յեվ յերկիրը գտնվում եր տրադիկոմեդիայի մի առանձնակի մթնոլորդում- ծիծաղն ու արտասունքը միախառնվում եյին: Մարդիկ կորցրել եյին իրենց ամբողջ հավատը դեպի մեր ռազմական կորովը յեվ սպասում եյին միայն յեվ միայն դրսի միջամտության:

Զենքի շառաչման յեվ գիշատիչ տրամադրության այդ առանցքում յերկիրը չեր տեսնում զորական պետք հեղինակություն յեվ մեր ընդիմադրական թափը վոչ միայն չեր աճում այլ յեվ որեց որ ընկնում եր: Մարդիկ յեռանդալից կարգավորում եյին իրենց անձնական գործերը, իսկ տարի ու կես շարունակ միահեծան իշխելու տենչով տոգորվածները նախորոք տեղափոխեցին Կարսից իրենց բոլոր ունեցածը մինչեվ վերջին աթոռը: Ռոմանտիկ դուրս յեկավ միայն նահանգապետը, վոր սկզբունքը պաշտպանելով, հնարավոր չհամարեց մտածելու իր ունեցածի մասին յեվ (թողեց) դուրս յեկավ Կարսից մի վերարկույով, թողնելով այնտեղ այն բոլորը, ինչ վոր ձեռք եր բերել ավելի քան 40 տարվա ընթացքում: Ծիծաղում ե, իհարկե, նա, ով վերջինն ե ծիծաղում յեվ ինձ մնում ե միայն ցավել, վոր յես այդ վերջինների թվումը չեմ: Բայց յեվ այնպես այսոր մի շապիկով մնալով հանդերձ, յես ինձ բավարարված եմ համարում: Տարի ու կես կառավարելով Կարսի խայտաճամուկ նահանգը, յես տեսնում եմ իմ առաջ բազմաթիվ ազգություններով յեվ լեզուներով բնակեցրած մի տարածություն, ուր յես կոչված եյի պատվաստել պետականությունը յեվ կոփել իրավակարգը: Մեր բարդ գիտություն յեվ փորձ պահանջող աշխատանքը հանգիստ չեր տալիս դափնիք յերազողներին, յեվ յերեկվա կապիտանները բարձի թողի անելով իրենց հոգածողության հանձնված զորական շարքերը, ուզեցին զբաղվել յեվ քաղաքականությամբ յեվ վարչական գործերով:

Իզուր եր նահանգապետը իր բազմաթիվ հեռագրներում ծանրա-նում իրավասության սահմանների վրա, իզուր եր նա բացատրում, վոր որինականությունը արդարադատության հիմունք ե: Այդ իրավասությունն ու որինականությունը չեր պարփակում մարդկանց

անձնական միտումների շրջափակում. նոցա պետք եր շփոթ, պղտոր ջուր, պետք եր յերերել յերկրի իրավակարգը յեվ, տպալելով նոցա դեմ այդ առանցքում մարտնչող նահանգապետին, վայելել կյանքը հենց այդ իրավունքների ու ճշմարտության փլատակների վրա:

Բայց հետագա բոլոր պատմությունը ցույց տվեց, վոր այդ մարդիկ վոչ միայն չեն պարապում իրենց գործերով, այլեվ անընդունակ եյին այդ աշխատանքին: Նրանք միանգամայն վարկաբեկեցին մեզ ոտարների առաջ յեվ յերկրի բախդը, իրենց միտումներում գործիք դարձնելով, խորտակեցրին բոլորին յեվ ամեն բան:

Բայց համաշխարհային պատմությունը համաշխարհային դատն ե:

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 2, գ. 636, թ. 1-34, պատճեն, մեքենագիր*

## No 75
## ՀԱՏՎԱԾՆԵՐ ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ ՍՏԵՓԱՆ ՂՈՐՂԱՆՅԱՆԻ ՀՈՒՇԵՐԻՑ

*Հեղափոխության նախօրյակին հասարակարգում կատարված փոփոխությունների, վարչական մարմինների թույլ տված սխալների, հայկական դյուրահավատության և սոցիալիզմի ու ռուսական կողմնորոշման վերաբերյալ հեղինակի անձնական վերաբերմունքի մասին*
*(1922թ.)*

Այդպէս է մարդկանց վերաբերմունքը դէպի իշխանութիւնը և իրաւունքը:

Գալով նոր կառավարութեան վերաբերմունքին դէպի այն մարդիքը, որոնց քմահաճ ձեռքումն էր երկրի իշխանութիւնը, Շարուր-Նախիջևանի հայկական նահանգապետը չը կամեցաւ օգտագործել վարչական մի փորձված մեթոդ: Հրապարակի մեծ պոռոտախօսներից մի քանիսին, գլխաւոր «սօցեալիստներին», «էսէր»ներին և միուներին նա պետք է որևէ զբաղմունք տար, որևէ պաշտօն: Մի քանի ազդեցիք աղմկողներին, շողոքորթելով նոցա «յեղափոխական» փառասիրութիւնը, նա պէտք է մոտեցներ իրեն, շրջապատվեր նորանով: Հայկական նահանգապետը պետք է ներշնչեր այդ մարդկանց իր շքախմբում լինելու մեծ պատիւը և այստեղ անխուսափելիորեն առաջ կը գար մարդկանց մրցութիւնը:

Թուրքերը շատ նախանձալից են և շատ փառասեր: Շահերի այդ առանցքում առաջ կը գար մրցութիւն և իշխանաւորի առաջ կը բացվէին երկրի բոլոր գաղտնիքները և բոլոր անցքերը... Որչա՞փ և նենգ է բաժանելու ու տիրելու թեօրեան, այնուամենայնիւ նա անխուսափելի է մինչ գոյութիւն ունեն մարդիք և նոցա ուղեկցող կրքերը:

Զուգընթաց այդ բոլորի հետ իշխանաւորը պէտք է ի ցոյց դնէր և իր իրաւունքները: Եւ փաղաքշելով ու շոյելով մի խումբ մարդկանց, նա պէտք է յօնքերը կիտեր և դէպի ձախ սաստելով և ի կատար ածելով իր այդ նախազգուշացումը ի տես երկրի և դարան մտած խռովարարների: Այդպէս է, գէթ առայժմ Ատրպատականի այն վայրը, որ վիճակ էր ընկել հայական նահանգ լինելու:

Եթէ հայկական նահանգապետը կարծում էր, որ իշխանութիւնը «սոցիալիստական» յայտարարելով իրան, նա դադարեց մեր ձորերում ազգայնական լինել:

Այստեղ թուլացան նրա հմայքը և այդտեղ պարտվեց հռչակաւոր կուսակցութիւնը:

Եւ եթէ Թիֆլիզի տաղանդաւոր «յառաջը» Ահարոնեանից կայծակված, ապա և «Հօրիզօնը», շատ բարձր տրամադրութեամբ առաջնորդում էին մեր ազգային վերապրումները, նրա յաջորդ «Աշխատաւորը» արդեն մեկուսացած էր և խորթալից...:

Երկրի անվանական տարազը արդեն ցոյց էր տալիս հրապարակում տիրող նմանվելու տրամադրութիւնը և «Աշխատաւորը» հոլովելով «աշխատաւորութիւն» հասկացողութիւնը, զբաղվեց աւելի ակադեմիկ խնդիրներով և ոչ գաւառով ու նրա կեանքով: Այսպէս անվանված «ձախ դաշնակցութիւնը» իր ժամանակի հիւանդութիւնն էր: Եւ եթէ ընդունելու լինենք, որ բոլոր քաղաքական խմորումները բորբոքվում ու հունցվում են կրքերով և փառասեր ձգտումներով, գուցէ շատ հասկանալի լինի «ձախ դաշնակցականների» երկունքը:

Մեծավաստակ դաշնակցականների դափնիքը հանգստութիւն չէին տալիս նոցա յաջորդներին և վերջինները, սոցեալիստի ծիրանին հագած, իրանց «ձախ» յայտարարեցին, ձգտելով դէպի փառք ու իշխանութիւն, դէպի համերգի առաջի ջութակը...:

Այստեղ, ըստ իմաստի, հիւծվեց ու դաշնակցութիւնը:

Եւ կուսակցութիւնը, որպէս կառավարութիւն, արդեն ցաւագար էր և արդեն հարվածալից: Հայկական կաբինետը, պարլամենտը, դաշնակցութեան բիւրօն պառակտված էին արդեն ժամանակի աւերիչ հողմերով: Մեր այդ բոլոր հաստատութիւնները, որոնց վիճակ էր ընկել ընդգրկելու մեր իջնող երազները, այլևս ոչ ցայտուն յազգայնական էին և ոչ հարազատ դաշնակցական...:

Եւ եթէ իւր ժամանակին, մեծ սիրով դէպի ժողովուրդը, դաշնակցութիւնը, հմայված ու տարված իր գաղափարներով, շարունակ դեգերում էր երկրի ծալքերում և ուշիմ դիտում երկրի անցուդարձը, այսօր, պատասխանատու իշխանութիւն դարձած, նա կարծես հովացել էր և կարծես այլասերվել:

Մեր վարիչ շրջանները հակում չունէին, կարծես, դէպի ցած իջնելու: Պետական և կառավարչական խնդիրները շօշափվում և

լուծվում էին սրաթռիչ ու վայրի վերոյ և երկիրը չէր ակոսվում մտածված, յիմնովին ու հոգալից:

Դատարանը մի ֆիկցիա էր, վարչական, ադմինիստրատիւ մեքենան մի ծաղր իրաւակարգի: Իսկ երկրի միուս հաստատութիւններում բռնակալել էին միայն հաշվելից մարդիք, որոնք տենդոտ տանում էին միայն և շատ շտապ կրում...: Զեմստվօն, ոստիկանութիւնը և միուները զբաղված էին միայն թալանով և միայն վայելքով: Այդ մութ և արկածալից բազմութիւնը կարծում էր, որ երկիրը նոցա համար է և այդ մթնոլորտում ժողովուրդը չէր կարող կառավարութեան թիկունքում լինել: Եւ մինչ ոստիկանութիւնը միայն սրբում էր և միայն կեղեքում, Աղէքսանդրապօլում հակապետական դաւ էր խմորվում: Մի ինչ որ Աւիս, որ յետոյ ռուս մինիստր դարձավ Երևանում, թագնվում էր Աղէքսանդրապօլ բուն հայկական գաւառում և ռուսների ու հրեաների հետ ռումբ պատրաստում հայկական իշխանութիւնը պայթեցնելու համար:

Իսկ ոստիկանութիւնը, զեմստվօն, մենք բոլորս, այդ չըգիտէինք, մենք չըգիտէինք նոյնպէս, որ մեր երկրի բոլոր անկիւններում, Երևանից սկսած, վխտում են ռուս վարձկանները և ջանալից հրդեհում երկրի անբաւական տրամադրութիւնը: Շատ ուշագրաւ է, որ մայիսեան օրերից դեռ շատ առաջ, շատ խօսում էին, որ ռուսները Մօսկվայից մեծ գումարներ են ուղարկել Հայեաստան և շատերը կաշառված են, բայց մենք այդ ոչ լսում էինք և ոչ հաւատում: Մենք նիրհում էինք մեր իշխանալից բարձունքներում, պարլամենտում, լրագրութեան մէջ զբաղվում «աշխատաւոր մասսաներ»-ի շուրջը ծամծված թեօրիտիկ բառախաղութեամբ և կարծում էինք, որ դորանումն է երկիր կառավարելու իմաստը և մեր պարտաւորութիւնները: Բայց մեր միամտութիւնը անցնում էր բոլոր չափերը և բոլոր սահմանները: Երբ ռուս ջարդարար ձգտումները, կարմիր սաղաւարտով դիմակաւորված միայն յիմարացնում էին Կովկասը իրանց ինտերնացիօնալ յայտարարութիւններով և այդ աղմուկի տակ առաջ մղում իրանց բռունցքը և իրանց նվաճալից ձգտումները, մենք տակաւին հաւատում էինք այդ յայտարարութիւններին և նոցա հակադրում միայն ճառեր և միայն դատարկաբանութիւն: Եւ երբ բոլորս զբաղվում էինք միայն ճառերով և միայն ակադեմիկ վէճերով, գաւառները խարխափում էին անիշխան կամայեական մթնոլորտում: Այդ պայմաններում երկիրը չէր կարող մեզ հետ լինել և նա օրեցօր ցնցվում էր:

*[մեկ թերթ (թ. 9) այստեղ ներկայացված չէ]*

...իր բռունցքը փաթաթեց միայն կարմիր ցնցոտիով, մենք այդ բոլոր գունալից պատկերները հալած իւղի տեղ էինք ընդունում: Ռուս նվաճողական ձգտումներին դիմադրելու մենք գալիս էինք ոչ մեր կազմակերպութեամբ, ոչ մեր պետականութեամբ, այլ միայն «աշխատաւորութեան» անունից յայտարարութիւններով, զաւէշտ

«բանաձևերով» և անվերջ ու տաղտկալի խօսքերով: Իսկ ռուսները, մի կողմից յիմարացնելով մեզ, միւս կողմից կաշառելով մարդկանց, աղմկում էին հրապարակը կարմիր, բանվորութիւն, աշխատանք բացականչութիւններով և աստիճանաբար ներս սողում Կովկաս և նորից գրաւում իրանց շահաւետ և բուրալից անկիւնները...:

Այդպէս էր այն մեծ կատակերգութիւնը, ուր մենք այնչափ յաջող տարանք մեր դերը...: Եւ պէտք է, արդեօք, այդ բոլորից յետոյ ասել, որ դաշնակցութիւնը մեծ և կարող էր, երբ գնում էր իր երկրի հետ միասին, երբ նա ցայտուն ազգային կուսակցութիւն էր, երբ անդրադառնում էր մեր իղձերը և տրամադրութիւնները: Բայց այն օրվանից, երբ հոչակաւոր կուսակցութիւնը դադարեց սպասաւորելու իր հին սրբերին, երբ նա յառեց դէպի սոցեալիզմ, նա անջատվեց մեզանից, նա խորթ էր երկրին և նա կորով ու թռիչք չունեցաւ իր յետևից տանելու հայ աշխարհը: Սոցեալիզմը օրվայ տարազն էր, իհարկէ, և գուցէ յանխուսափելի մի չարիք: Բայց համենայն դէպս մեր դաշտերում ու ձորերում մենք դեռ շատ հեռու ենք այդ հասկացողութիւններից և գուցէ դորանով պէտք է բացատրել, թէ ինչու մեր օրերում այնչափ բռնալից իջան երկրի բոլոր հաւատալիքները:

Սրբապղծվեցին բոլոր նվիրական բարձունքները և երկրի այդ անողոք և կեղտոտ բովում, ի փառս ռուս բռունցքի և ռուս իշխանութեան, այլասերվեց և ամօթալից մեր ազգային պատվախնդրութեան համար, ընկաւ մեր հայ երիտասարդութիւնը:

Այդպէս էր մեծահամբաւ դաշնակցութիւնը իր անցեալում և այդչափ սայթաքուն ու մահալից էր այն ուղին, որով գնաց այդ կուսակցութիւնը, որպէս կառավարութիւն:

*ՀԱԱ, Ֆ. 477, ց. 1, գ. 19, թթ. 1-8, 10-12, բնագիր, ձեռագիր*

## No 76

### ՀԱՏՎԱԾՆԵՐ ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ ՍՏԵՓԱՆ ՂՈՐՂԱՆՅԱՆԻ ՀՈՒՇԵՐԻՑ

*Կարսի կառավարչական մարմինների անփարբերության և այնտեղ փիրող անիշխանության մասին*

.... Հայութեան բանիմաց և դրական տարրը բաւականանում էր միայն պլատոնիկ վերաբերմունքով դէպի Կարսի նահանգը: Նա շատ հետաքրքրվում էր Կարսի նահանգով, ուշադիր կարդում էր լրագիր-ներում այդ վայրի մասին պատահական թղթակցութիւնները, շոյում էր իր ապագայ միտումները և անելիքները այդ նահանգում, բայց առ այժմ այդքան և սպասում... Իսկ նահանգը անցուդարձ անելու և աղմկելու գալիս էին գլխաւորապէս, դէպի գործ առհասարակ շատ

թեթև վերաբերմունք ունեցողները, այն անհոգ և թեթևընթաց բազմութիւնը, որի համար ամէն տեղ հարսանիք է և ամէն տեղ թամաշայ: Եւ մենք պէտք է նկատենք այստեղ, որ նահանգը անդադար այցելողների խոշորագոյն մասը կազմում էր այն բազմութիւնը, որ իրան իրաւացի, թէ անիրաւունք «դաշնակցական» էր անվանում:

Եթէ այդ կուսակցական, գաղափարական մասը տիրել էր երկրի իշխանութիւնը, դաշնակցութեան զրահի տակ տեղաւորված գիշատիչ և թալանչի մեծ բազմութիւնն էլ այսօր գալիս հպարտալից ասելու մենք ևս հերկել ենք... Այդ անկիրթ և կիսագրագէտ «ընկերները» խօսում էին միշտ շատ հեղինակալից և իշխանալից ու հաւակնութիւն ունէին երկրի իշխանութիւնից յայտնի ուշադրութիւն և մեծաշնորհ տեղ պահանջելու:

Շատ ծիծաղելի էին, ի հարկէ, այդ բազմաթիվ վարժապետները, տիրացուները և գործակատարները, բայց այսօր նոքա բոլորն էլ «ընկերներ էին», իշխող կուսակցութեան «համահաւասար անդամներ» և բոլորովին չէին ուզում հասկանալ, որ «դաշնակցական» անպատասխանատու եարլիկը նոցա իրաւունք չի տալիս դեռ միջամտելու հրապարակի բոլոր գործերին, թելադրելու և պահանջներ անելու: Պէտք է ասել այստեղ, որ նահանգը գաստրոլների և թամաշի եկող «ընկերների» այդ բազմաթիվ միտումները ձգտում էին միայն իշխող կառավարութեան համարումը և պատիւը երկրի առաջ և երերում նահանգում իրաւակարգի մատաղ ծիլերը:

Որչափ իրաւասու որ չը լինէր այդ պարոնների ախորժակը հրապարակում ձևանալու և մի բան անելու, այնուամենայնիւ տեղական իշխանութիւնը որոշ չափով ընկճվում էր այդ մթնոլորտում և ակամայից յարմարվում և զիջում...

Նահանգի պաշտօնեաներից շատերը շատ լաւ հասկանում էին, իհարկէ, որ «դաշնակցական» տիտղոսը դեռ իրաւունք չէ տալիս տեղից վերկենողին թելադրելու և հրամայելու: Բայց այնուամենայնիւ պաշտօնէութիւնը չէր կարող չը տեսնել, որ այդ ամէն մի տեղից վերկենողը յետևում կանգնած է «պատասխանատու մի ընկեր» և կտրուկ լեզուն իր կողմից կարող է անախորժ բարդութիւններ առաջ բերել... Իսկ կառավարութեան գլուխ անցած մարդիք, բարձիթողի անելով կուսակցական երբեմն դիսցիպլինար սանձերը, միանգամայն անուշադիր էին, թէ ի՞նչ մեծ խառնիճաղանչ թանձրութիւն է թագնվում դաշնակցութեան դրօշակի տակ և թէ ի՞նչ է անում այդ գաղափարազուրկ և դռնկիխոտ տարրը գաւառներում: Այդ պարազիտները շարունակ գալիս էին Կարսի նահանգը և գնում, շարունակ ինչ որ հարցուփորձ անում, շարունակ ինչ որ «շտապ ուսումնասիրում», իրանց յուշատետրում նշանակում և շարունակ «կուսակցական» խորհրդածութեան հրաւիրում իրանց «տեղական ընկերներին»:

Եւ այդ բոլորը կատարվում էր, իհարկէ, անջատ նահանգի իշխանութիւնից: Նահանգի այդ այցելուները միշտ իրանց անցուդարձին տալիս էին «զուտ կուսակցական» բնոյթ, բայց և ամէն մի քայլափոխում շեշտում էին, որ տեղական իշխանութիւնը իրանց նայում էին վերևից ներքև, որպէս ենթակայի և կուսակցութեան միտումները ի կատար ածողների:

Շատ բնական է, իհարկէ, որ դաշնակցութիւնը, կառավարութեան գլուխ անցնելով, պէտք է տածեր իր պետական վարկագիծը, բայց այդ դեռ չէր նշանակում, որ ամէն մի դաշնակցական, որ իր անցեալում տիրացու կամ սափրիչ էր, իրաւունք ունի խառնվելու պետական գործերի ընթացքին և տոն տալու նորան: Մենք պարտաւոր էինք, իհարկէ, կատարելու դաշնակցական կառավարութեան ցուցմունքները և պահանջները, բայց մենք չէինք կարող բաւարարել ամէն մի դաշնակցականի կապրիզը և քմահաճ պահանջը: Եւ այստեղ խախտվում է երկրի հաւատը դէպի պետական իմաստը, այստեղ առջ է գալիս իշխանութեան գաղափարի քայքայումը: Եւ պէտք է ասեմ, որ այդ «կուսակցականների» և «անկուսակցականների» աննպատակ, շարունակ անցուդարձը շատ ժամանակ էր խլում ինձանից և, բացի այդ, շնորհիւ բարձր կառավարութեան թոյլութեան, շփոթում էր կառավարչական կուրսը: Այդ բազմաթիվ անկոչ հիւրեր, ոչ այնքան դիլիկատ իմաստով, որչափ «հասարակական և կուսակցական կոնտրոլի» իրաւունքը ընդգծելու համար, միշտ այցելում էին նահանգապետին: Մի կողմից ես շատ ուրախ էի բազմաթիւ մարդկանց հետ շփվելու, ծանօթանալու: Այդ պէտք էր ինձ թէ իմ իրազէկ լինելու մասին - ի՞նչ են խօսում և ի՞նչ մտածում դրսում և թէ այցելուներիս ծանօթացնելու նահանգի անցուդարձի ու պահանջների հետ:

Բայց, կրկնում եմ, այդ խառնիճաղանչ բազմութեան մեծագոյն մասը ոչ լուրջ, դրական լինելով, աւելի ծանրացնում էր ինձ և միայն ժամանակ խլում ինձանից:

Չընդունել ես չէի կարող, իհարկէ, իսկ վարժապետներն ու տիրացուները չէին ուզում հասկանալ տարրական քաղաքաւարութիւնը և երբեմն ժամերով նստում նահանգապետի առանձնասենեակում: Շատ հետաքրքիր է, որ և Երևանի կառավարուիթւնը, պարլամենտի անդամները և կենտրոնի բոլոր հասարակական գործիչները պահանջ էին զգում ժամերով լսելու այդ «տեղերից վերադարձած իրազէկ ընկերների զեկուցումը» - ասեկոսները և զբաղվելու երբեմն այն ծաղրալից և պիկանտ առաջարկութիւններով, որ անում էին այդ բազմագոյն և բազմաճաշակ «ճանապարհորդները»:

Եւ այստեղ ևս մենք անդիպում էինք դարձեալ մի ապացոյցի, որ մեր բարձր կառավարութիւնը, իր բոլոր անկեղծ ցանկութիւններով հանդերձ, օրգանապէս անկազմակերպ էր: Նա ոչ մի կանոնաւոր

ինֆորմացիա չունէր երկրի դրութեան մասին, մեր Մինիստրութիւնները, առանձին-առանձին վերցրած և բոլորը միասին, որպէս կառավարութիւն, առանձին ինֆորմացիոն բյուրո չունէին: «Տեղեկութիւնները» և «փաստերը» բոլորը աւելի քան պատահական էին և աւելի քան քմահաճ, կասկածելի, միտումնաւոր ու վայրիվերոյ: Բոլորը «տեղեկութիւններ» էին հաղորդում, բոլորը «կարծիքներ» և «պահանջներ» յայտնում, բոլորը պարլամենտի բազմաթիւ անդամները հասարակական գործիչները, «վստահելի տղերքը» և միւսները պաշարում էին Մինիստրների առանձնասենեակը ու նոցա հետ միասին վերլուծում իշխանութեան անելիքները...

Տեղերից այդ բոլոր շփոթալից և շատ անգամ կրքալից և ճիշդ տեղեկութիւնները միանգամայն շփոթում էին կառավարչական մթնոլորտը և երերուն ու անյետևող պետական ընթացք ստեղծում: Պէտք է ասել, մի՛թէ, որ կառավարչական մթնոլորտի այդ բաբելոնեան շփոթը խախտում էր երկրում կառավարութեան համարումը և աստիճանաբար ձգելով ժողովրդի աչքում իշխանութեան նշանակութիւնը, քայքայում էր սուվերեն և անկախ գաղափարը: Այդ անվերջ բանբասալից ու միտումնաւոր «տեղեկութիւնների» յետևանքով կառավարութեան գրեթէ ամէն մի քայլը հակասում էր մէկը միւսին և աստիճանաբար կորցնում էր իր իշխանալից և անվճռաբեկ իմաստը: Չը կար կառավարչական մի որոշում, որին բեկանել անկարելի լինէր:

Կառավարչական բոլոր կարգադրութիւնները բռնութիւնների ու քմահաճ պահանջների ու կարիքների մթնոլորտում էին կատարվում: Ազդեցիկ կուսակցականները, իսկ երբեմն և «վստահելի տղերքը» կարողանում էին բեկանել կառավարչական այս և այն որոշումը և այդ պայմաններում ոչ ոք երաշխաւոր չէր, թէ ի՞նչ է սպասում նորան՝ վաղը: Ամէն մի կուսակցական աւելի իրազէկ էր կառավարութեան անելիքներին, քան թէ, օրինակ, նահանգապետը: Եւ այդ նահանգապետը հաւաստել էր այսօր, որ նորա ամենաօրինական կարգադրութիւններն անգամ չեն բեկանվի վաղը, տեղի տալով արկածախնդիր «կուսակցականի» խորհուրդներին ու քմահաճ ցանկութիւններին:

Եւ ճշմարտութիւնը պահանջում է ուղղակի ասել, որ այդ «ընկերվար» գործելակերպը ջերմ էր դարձրել այդ անցորդ տափակութիւնների ձեռքում մեր ամբողջ կառավարութիւնը, իր բոլոր թէ ընդունակ և թէ անգոյն Մինիստրներով:

Իսկ Մինիստրների դիւանների խառնիճաղանչ կազմը գալիս էր միայն լրացնելու այն ընկերական համերգը, որի խլացուցիչ հնչիւնների ներդաշնակութեամբ լուծվում և քայքայվում էր մեր պետականութիւնը: Դիւանների այդ մեծ և փոքր պաշտօնեաներն ալ, կիսագրագէտ ու անկիրթ, իրանց հերթին էին «անկախ» ու «կտրուկ» քաղաքականութիւն վարում և դրանով լրացնում երկրի ընդհանուր շփոթը և

ընդհանուր անհիշխանութիւնը: Շատ բնորոշ է, որ կառավարչական այդ վայնասուն մթնոլորտում հրապարակում աղմկողների նշանաբանն էր «ազգային» հասկացողութիւնը:

Բայց այդ «ազգայինը» չափազանց սուղ էր և չափազանց տափակ ու շովինիստ: Մենք կարծում էինք պարտաւոր ենք անել ամէն տեսակի անհեթեթ բան և հաւակնութիւն ունէինք այդ իմաստով ոչ միայն կառավարել երկիրը, այլև մեր «կուլտուր» ազդեցութեանը ենթարկել երկրի օտարազգիներին: Եւ մեր «ազգայնացումը» նոյնպէս թեթևամիտ էր, անցողական ու զաւեշտ:

Շատ անգամ, եթէ չասենք միշտ, «ի տեղի մինիստրի» ստորագրութեամբ ես ստանում էի ինձ միանգամայն անյայտ մարդկանց հեռագրները հետևեալ զաւեշտ հասցէով.- «Կարս, Վանանդի նահանգապետին»: Այդ խղճուկ մարդկանց աշխարհայեացքը բնորոշելու համար դժվար էր, կարծեմ, աւելի ցայթուն օրինակ բերել:

«Ի տեղի Մինիստրի» հեռագիրը ստորագրող պարոնը աչքաթող էր անում, անշուշտ, որ Կարսում մի նահանգապետ կար և հետևապէս «Վանանդի» բառը ոչ միայն աւելորդ էր, այլ և ծաղրալից: Նա գալիս էր միայն ասելու, որ հասարակ հեռագիր գրելու անգամ շնորք չունէին այդ մարդիք: «Վանանդ» բառը, не кь селу, не кь городу, կցելով հեռագրին, այդ ազգասէրները ուզում էին ընգծել իրանց «ազգային» տրամադրութիւնը և այդ թեթևալից վերաբերմունքով էին ուզում արտայայտել երկրի օտարազգիների առաջ իրանց սուվերեն...

*[մեկ թերթ (թ. 13) այստեղ ներկայացված չէ]*

Այդ զեկուցումների յետևանքով, իհարկէ, կառավարութիւնը պարտաւոր էր յատուկ, մասնագէտ յանձնաժողովներում մանրամաս մշակել մեր բոլոր անելիքների ծրագիրը և մենք պէտք է Օլթի մտնէինք զինված ոչ միայն սվիներով ու ռումբերով, այլ և երկրի կազմակերպչական բոլոր միջոցներով:

Օլթիի շրջանում բնակակալել էին Բակվի գործակալները և այն բոլոր թուրք պրովակատորները, որոնք փախան Կարսից, երբ մենք մտնում էինք այնտեղ: Այդ ագիտատորները բոլորը Երևանի Գանձակի և Բակվի զանազան գաւառներից էին և լաւ տեղեակ մեր անցուդարձին:

Նոքա պղտորում էին այդ տարածութեան մտքերը, բորբոքում առաջ բերում Կարսի նահանգում, նոքա գործում էին Բագվի հրահանգներով, կապ ունէին Ադրբեյջանի Երևանի դիւանագիտական ներկայացուցչի հետ, Թիֆլիզի և Էրզրումի հետ և վերջում մեծ աշխատանք թափեցին 20 թվին քեամալիստների հետ հայկական իշխանութիւնը տապալելու գործում: Իր ժամանակին Կարսի նահանգապետը այդ բոլոր տեղեկութիւնները հաղորդել էր կառավարութեանը և ամէն անգամ հրաւիրել նորա ուշադրութիւնը քաղաքական

այդ բարդալից դրութեքան վերայ: Այդ բոլոր պատճառներով մեզ համար վերին աստիճանի նշանակալից էր Օլթին գրաւելու խնդիրը, բայց այդ գրաւումը պէտք է կատարված լինէր ոչ թէ հայդուկային սիստեմով, այն լուրջ աշխատանքների առանցքում, ուր մենք կարող կը լինէինք հեղինակալից մեր յետնից տանելու այդ երկրի բազմատեսակ ազգութիւնները, ենթարկելով նրանց մեր օրինականութեանը, մեր խաղաղ և աշխատալից տրամադրութեանը, ընդառաջ բերելով այդ լեռներում կուլտուր և դրական հեռանկարներ:

Բայց մենք ոչնչից ոչինչ արեցինք այդ ուղղութեամբ: Ռուս կայսերական «օրիենտացիա» ունեցող մեր հրամանատարութիւնը ջղայնալից լուսացնում էր Օլթիի հարստութեան բուրմունքը զգալով, իսկ մեր մինիստրութեան դիւաններում պետական խնդիրները այն մարդկանց ձեռքում էր, որոնք մի հեռագիր գրելու շնորհք (կա պակասող թերթ) բոլորը«հետաքրքրվում էին» ածխահանքով, ապագայ երկաթուղագծով, երկրի մեծառատ մրգերով և ծորերի գեղատեսիլ պատկերներով, բայց այդ բոլորը դիլետանտ, բոլորը թեթևալից և բոլորը անցողական: Պէտք էր զարմանալ միայն, որ կառավարութիւնը Օլթիի վերաբերեալ խնդիրները հնարաւոր չըհամարեց ուսումնասիրելու յատուկ յանձնաժողովներում, փակելով բաց դռները «մեր ընկերների» և «վստահելի տղերքի» առաջ: Պետական միտումները ու կառավարութեան ապագայ անելիքները Օլթիի երկնակամարում չէին զգացվում: Այնտեղ գալիս էին և գնում, խօսում, քննադատում, կարծիքներ յայտնում, միջամտում երկրի ինտրիկներին ու հեռանում առանց հետքերի, առանց որևէ բան կատարած լինելու և առանց, իհարկէ, որևէ պատասխանատվութեան, եթէ ոչ երկրի, գէտ իրանց խղճի առաջ:

Հաղորդակցութեան Մինիստրի օգնական Յովհանջանեան, որին «ձախ դաշնակցական» էին անվանում, զբաղված էր, ասում էին, թէ Օլթիի ածուխով և թէ դէպի Օլթի երկաթուղի տանելու նախագծով:

Նրա վագոնը շարունակ կանգնած էր այդ ամիսներում Կարսի վագզալում և նա շարունակ ինչ որ խորհրդակցում էր «ձախ դաշնակցականների» հետ: Շատ զարմանալի է, որ Մինիստրի օգնականը երկրի համար այդչափ մեծ խնդիրները արծարծում էր առանց ուսումնասիրելու այդ հարցերը մասնագէտների միջոցով և առանց կառավարչական որոշ ցուցմունքների և առանց որևէ ծրագրի: Ինչպէս ընդունված էր մեր ժամանակներում, Երևանում այդ Յովհանջանեանին ասել էին, թէ լաւ է, էլի, Աւետիսը գնում է Կարս որոշ մի բան անի թէ ածխի և թէ երկաթուղու մասին...

Բայց տիրող հասկացողութիւնները բնորոշելու համար ես պէտք է յիշեմ այստեղ մի միջադէպ, որ իր բոլոր մասնակի բնոյթով հանդերձ, գալիս է գծագրելու մեր օրերի հրապարակի տրամադրութիւնը:

Մինիստրի օգնականը, գալով Կարս այն խնդիրների համար, որոնց մասին Կարսի նահանգապետը ամիսների ընթացքում տասնեակ թերթերից զեկուցումներ էր ուղարկել Երևան, հարկաւոր չըհամարեց ոչ միայն խօսել նահանգապետի հետ այդ խնդիրների մասին, այլ և աւելորդ համարեց, երևի, նոյնիսկ այցելել նորան:

*[մեկ թերթ (թ. 18) այստեղ ներկայացված չէ]*

... Այդ միջոցներում Կարս էր եկել և մի այլ սանովնիկ, ֆինանսների Մինիստրի օգնական, կամ նորա խորհրդի անդամ, լաւ չը գիտեմ, Համբարձում Մելիքեան: Նորա հետ ես ծանօթ չէի: Լսել էի միայն, որ նա Բագվի նաֆթահորերի քմահաճներիցն է և այժմ, որպէս «ֆինանսիստ», կոչված էր բարձր պաշտօնի: Ասում էին, որ նա դաշնակցական է և որպէս, երևի, այդպիսին, Կարս ժամանելով, նա հարկաւոր համարեց տեսնվելու միայն «ձախերի» հետ և նահանգապետին, իհարկէ, պատիւ չարեց իր այցելութեամբ: Թէ ինչու համար էր եկել այդ հեղինակաւոր ֆինանսիստը Կարսի նահանգը և թէ ինչ եզրակացութիւնների էին հանգել նորա ծրագրային որոշումները, ես չըգիտեմ, իհարկէ: Ինձ միայն զարմացնում էր, որ այդ «ֆինանսիստը», որ Կարս էր գալիս, անշուշտ, այն բազմաթիւ խնդիրների առիթով, որոնց մասին Կարսի նահանգապետը բազմաթիւ ուսումնասիրութիւններ և զեկուցումներ է ուղարկել կառավարութեանը, գէտ այդ խնդիրներով այդչափ զբաղված մարդու հետ նա հարկաւոր չը համարեց եթէ ոչ խօսելու, գէտ տեսնվելու և ծանօթանալու:

Բայց Մելիքեան այդ օրերում ոչ միայն մին դրամատէր էր, այլ և Հայաստանի սանովնիկ և նա կարծում էր, երևի, նահանգապետը պարտաւոր է խոնարհվել այդ երկու մեծ գերբնական ոյժերի դաշնակցութեան առաջ և դիմաւորելու նորան վազգալում...

Բայց Մինիստրի հարուստ օգնականը չըգիտէր, անշուշտ, որ նորա նահանգապետի պաշտօնները միանգամայն համահաւասար են իրար և որ ծիծաղելի կը լինէր տեսնելու նահանգապետին նորան ենթակայի դերում...

Այդ բոլոր պատկերները, գուցէ, մասնաւոր բնոյթ ունեն, բայց նոքա այնչափ գունալից են և այնչափ բնորոշ մեր հասկացողութիւնների և մեր պաշտօնական անցուդարձի իմաստով, որ մեր յիշողութիւնները մեր վերապրած օրերի մասին թերի կը լինէին առանց այդ կոմիկ և զաւէշտ գծերի:

Այդպէս էր այն «Պետական-հասարակական» անցուդարձը, երբ մարդիկ գնում և գալիս էին, հրապարակում տարազ, մեծ իրարանցում ստեղծում, բայց միայն աղմկում ու շփոթում:

Պէ՛տք է, միթէ, ասել, որ երկիրը տեսնում էր այդ բոլորը, բայց չէր տեսնում իրան պէտք պետական լրջութիւնը:

ժողովրդի գործնական բնազդը անզուգական է, ժողովուրդը շատ նուրբ հոտառութիւն ունի դէպի երկրի կարդինալ խնդիրները և ժողովրդական դիտողութիւնը շատ շուտ ըմբռնում է հրապարակի անցուդարձը և շատ շուտ իր ճիշդ որոշումը կայացնում:

Եւ այդ մթնոլորտում չէր կարող զարգանալ ու ամրանալ կառավարական հմայքը ու համարումը, այդ պրեստիժը օրէց օր ընկնում, թուլանում էր և իր յետևից տանում իրաւակարգը, որի բլումը և ակներև էր և անխուսափելի:

Այդպէս էր հայկական երազների խորտակման նախօրեակը:

*ՀԱԱ, Ֆ. 477, ց. 1, գ. 2, թթ. 1-12, 14-17, 19-21, բնագիր, ձեռագիր*

## No 77
## ԱՐՇԱԿ ՋԱՄԱԼՅԱՆԻ ԽՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՂԻՂ ԿԱՊՈՎ
*Թուրքական կողմի հետ բանակցությունների մասին*
*(8 նոյեմբերի, 1920թ.)*

Ջամալյանի խոսակցությունը Միրաքյանի հետ 8 XI 1920, 12 ժամ

Ջամալյան- Ինչ ունեք ավելացնելու հեռագրին

Միրաքյան: Տաճիկների զինվորականները խոստանում են, …որե կոնկրետ խնդիրների մասին խոսելու մի շարք հարցեր, վոր դուք շեշտել եք ձեր հեռագրի մեջ Շիրմազանյանի- կաշխատենք դնել խորհրդակցության մեջ, սակայն Լեվոն Սարգսյանը մի տեսակ թույլ վերաբերմունք ունի յեվ խուսափում ե հարցեր յեվ խնդիրներ շոշափել տաճիկների հետ, նա սպասում ե մշտական վոր իրենք տաճիկները իրենց կողմից հարցեր առաջարկեն յեվ իրենք վորոշում տան յեվ մշտական կրկնում ե դրանք շատ մեծ դիպլոմատներ են, մենք ինչ կարող ենք անել: Զգում եմ այդ ձեվով աշխատել չեմ կարող հրահանգեցեք, վոր հեռագրում շոշափած խնդիրները հեթե այստեղ նրանք շտապեն, բոլորն ասացի խնդրեմ տեղեկություններ տալ:

Ջամալյան: Դրությունը լրջանում ե կետ Շարուրից մեր զորքերը թշնամու ճնշման տակ նահանջել են մինչեվ գայլի- դրունքը, կարող ե գործողությունները բարդանալ մեզ համար ավելի յեվս աննպաստ ձեվով կետ

Այս հանգամանքներում անհրաժեշտ ե ըստ ամենայնի աշխատել, վոր ձեր յեվ հրամանատարության մեջ, վորքան կարելի ե քիչ շփումներ, անախորժություններ լինեն կետ Լեվոն Սարգսյանի հետ ինչ ուզում ե լինի պետք ե գործակցության մի Modus գտնեյի վորպեսզի ձեր գործունեյությունը նոր ներկա դժվարությունների չհանդիպի կետ մի առ ժամանակ համակերպեցեք նրա հնարավորության մինչյեվ տեսնենք, ի՞նչ կլինի: Ղարսի Հրամանատարության խնդիրների յեթե

հնար կլինի կարգադրել Ալ-պոլի հրամանատարության կետ ինկատի ունենալով վոր զինադադարի պայմանները խիստ ընդհանուր բնավորություն են Կազմեցեք մի կոմիսիա վոր գեներալ Շահնազարյանի հետ միասին … այն խնդիրները, վորոնք բխում են զինադադարի փաստից կետ Ինքընստինքյան հասկանալի ե, վոր յեթե այդ խնդիրները լուրջ բնավորություն են կրում գեներալ Շահնազարյանի կոմիսսիան պետք ե հրահանգ խնդրի մեր բարձր հրամանատարությունից կետ

Ինչ կլիներ յեթե, այս կարգի խնդիրների համար կազմվեր մի խառն մարմին տաճիկներից յեվ հայերից կետ դուք յեվս տաճիկներին վստահություն ներշնչեցեք, վոր մենք անկեղծորեն ցանկանում ենք հաշտվել տաճիկների հետ յեվ չենք տարակուսում, վոր նրանք իրենց հաջողությունը չեն ոգտագործի ստեղծելու մեր դրության համար այնպիսի անել կացություն, վորի մեջ հայ ժողովուրդը ստիպված կլինի դրսի պրովոկացյանների գործիք դառնալ. Այժմ ուրիշ անելիք չունեմ:

<u>Միրաքյան</u>: Կոմիսիայի մասին հատուկ հրահանգ կառավարության կողմից տվեք, ինչ վերաբերվում ե մեր հավաստիացումներին, վոր պիտի տանք տաճիկներին, պիտի ասեմ, վոր այդ ամենը արված ե վոչ պակաս անկեղծ կերպով, քան արել են տաճիկները Լեվոն Սարգսյանի հետ հաշտ աշխատելու անհրաժեշտությունը գիտակցում եմ: Ուրիշ վոչինչ:

Ալեքսանդրապոլ կառավարության ներկայացուցիչ Լեվոն Սարգսյանին կառավարության անունից հրահանգում եմ ձեզ կազմել գեներալ Շահնազարյանի նախագահությամբ մի կոմիսիա զինվորական գործերը հասկացող մարդկանցից տաճիկների հետ միյասին կարգադրելու այդ կոնկրետ խնդիրները, վորոնք նախատեսված են զինադադարի պայմանների մեջ, բայց բխում են նրանցից կետ Լուրջ դեպքերում այդ կոմիսիան պետք ե հրահանգ ստանա մեր բարձր հրամանատարությունից յեվ ըստ ….

Նո 1017

ՆԱԽԱՐԱՐ ՋԱՄԱԼՅԱՆ

<u>Ջամալյան</u>: ցտեսություն

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 2, գ. 632, թթ. 8,9, պատճեն, մեքենագիր*

**No 78**

ՍԻՄՈՆ ՎՐԱՑՅԱՆԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ ՆՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ-ՀՌՉԱԿԱԳԻՐԸ

*Պատերազմի պատճառով հայտնված իրավիճակից երկիրը դուրս բերելու հեռանկարների մասին*

(24 նոյեմբերի, 1920թ.)

## ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԴԵԿԼԱՐԱՑԻԱ

Տարապայման դժվարին ժամանակներում և կյանքի կոչվում ներկա կառավարությունը տաճիկ զինված ուժերը գրավել են մեր յերկրի խոշոր մասը: Ազգաբնակությունը գրաված վայրերից տեղահան է յեղած յեվ գաղթական վիճակի մեջ անխնա կոտորվում է ցրտից յեվ սովից: Պետության ներսը կյանքի բնականոն ընթացքը խանգարված է: Վարչական մեքենան թուլացած է մեծապես, ֆինանսական յեվ հաղորդակցության միջոցները քայքայված, արդարադատությունը անհնարին վիջակում, պարենի մուտքը դրսից կանգ է առել, իսկ ներսի աղբյուրները ցամաքում են արագությամբ: Կայուն չէ յեվ ժողովրդի հոգեկան դրությունը, վոր իրեն սպառնացող ահավոր վտանգի դիմաց անկարող յեղավ բավարար կամք յեվ վճռականություն ցույց տալ: Յեվ այսպես յերկիրը ապրում է ներքին ծանր տագնապ, վոր ավելի յեվս սաստկանում է արտաքին դժվարությունների պատճառով:

Ինչի՞ պետք է ձգտի այսպիսի հանգամանքներում նոր կառավարությունը:

Վերջին տարիների ընթացքում անդրկովկասյան ժողովրդներին հասած բոլոր աղետների յեվ դժբախտությունների պատճառը աշխարհի հզորների վարած իմպերիալիստական քաղաքականությունն է, վորի հետեվանքով անվերջ յեվ արյունահեղ կռիվների յեվ ավերվածությունների թադերաբեմ է դարձել նայեվ Հայաստանը: Այդ քաղաքականությունը սպառել է Հայաստանի դեմոկրատիայի շինարարական յեռանդը: Այդպիսի քաղաքականության հետեվանքներից մեկն է նայեվ վերջին պատերազմը իր բոլոր արհավիրքներով: Ներկա կառավարության առաջին յեվ գլխավոր նպատակն է լինելու հանել մեր յերկիրը քաղաքական այլ շրջապտույտից յեվ ազատել նրան ոտար ուժերի քայքայիչ ազդեցությունից: Հայաստանի Պետական կառուցվածքը խարսխելու յեվ բոլորանվիրելու է յելնելով վոչ թե ոտարների սին յեվ վտանգավոր ներշնչումներից, այլ Հայաստանի դեմոկրատիայի իրական կարողությունից յեվ հարեվան ժողովրդների հետ խանդաղ համակցություն ստեղծելու ցանկությունից: Հայաստանի կառավարությունը ամուր վոտ դնելով այս ուղղի վրա հույս ունի, վոր վերջին որերի մեր քաղաքական կյանքը վրդովող այս պատերազմը կը վերջանա հաշտությամբ յեվ մեր հարեվան տաճիկ ժողովրդի արդարացի իրավունքների նույնքան արդարացի բաշխումով: Մեր գործունեյության նշանաբանն է լինելու անկեղծ հաշտություն Տաճկաստանի հետ յեվ համերաշխություն ու խաղաղ համակցություն բոլոր հարեվան ժողովրդների հետ:

Այսու հանդերձ մենք գիտակցում ենք, վոր հասարակական ներկա կարգերում, տարաբախտաբար իշխողը դեռ վոչ թե արդարությունն ե, այլ ուժը, յեվ Պետական ամեն մի կազմավորում իր գոյությունը յեվ արդար իրավունքներն ապահովելու համար ստիպված ե ունենալ կազմակերպված յեվ ամուր ուժ: Ուստի յեվ կառավարության գլխավոր հոգսերից մեկը պետք ե լինի յերկրի ուժերի հավաքումը յեվ ժողովրդական կուռ բանակի կազմակերպումը: Այդ նպատակով մենք աշխատելու յենք զորքի շարքեր յեվ ուժեղացնել Պետական գիտակցությունն ու անձնազոհության զգացումը բանակի մեջ: Նույն նպատակով մենք մտածում ենք ազատել բանակը անվարժ յեվ հոգնած տարրերից զորացրում կատարելով բարձրահասակի զինվորներին, վորով ավելի բնականոն ընթացքի մեջ կըխ... մանի թիկունքի կյանքը յեվ զարկ կը տրվի յերկրի տնտեսական զարգացմանը:

Դավանելով «ամբողջ իշխանությունը աշխատավոր ժողովրդին» սկզբունքը ներքին կյանքում կառավարությունը ուժգնորեն պայքարելու յե պետության հիմքերը փորող բոլոր ուժերի յեվ յերեվույթների դեմ: Նա պետք ե աշխատի հաստատել յերկրի ներսում ապրող բոլոր ցեղերի իրական հավասարություն, Հայաստանը նրա սահմաններում ապրող բոլոր ժողովուրդների սեփականությունն ե կազմում:

Կառավարությունը պիտի ձգտե առողջացնել վարչական յեվ դատաստանական խանգարված մեքենան. բարեկարգել հաղորդակցության միջոցները, կռվել ֆինանսական սուր տագնապի դեմ կրճատելով պետական ծախսերը յեվ նպաստելով յերկրի արտադրական ուժերն զարգացման, ուժեղացնել տեղական ինքնավարությունները յեվ վերացնել ամեն տեսակի արտակարգ դրությունը յեվ յերկիրը կառավարելու արտակարգ ձեվերը: Որենքի գիտակցությունը, վոր այնպես թուլացրել ե մեզ մոտ, պետք ե ուժեղացվի, յեվ հանցավորներըն պետք ե պատժվեն անխնա: Պատերազմի արհավիրքների արդյունքը բազմահազար գաղթականության վիճակը թեթեվացնելու յեվ պարենավորման սուր ճկնաժամը մեղմացնելու խնդիրը կառավարության լուրջ հոգսերից մեկը պետք ե լինի:

Լայն ընկերային խնդիրների մասին մենք չենք խոսում այստեղ, վորովհետեվ մեր նպատակն ե ընդգծել մոմենտի հարցերը: Ինչ ասել կուզի, վոր առաջին իսկ հնարավոր դեպքում կառավարությունը կզբաղվի սոցիալական լուրջ բարենորոգումներով, յեվ այստեղ կարիք չկա բացատրելու բնույթը այդ բարենորոգումների, վորովհետեվ նրանք բաշխելու յեն սոցիալիստներից կազմված կառավարության աշխարհայացքից:

Ապավինելով Հայաստանի աշխատավոր ժողովրդի ռեալ ուժերին յեվ հենվելով պարլամենտի վստահության յեվ աջակցության վրա՝ կառավարությունը կը լարե իր բովանդակ ուժը, վորպեսզի հեռու պահե յերկիրը արտաքին փոթորիկներից յեվ տա ժողովրդին խաղաղություն յեվ անարգել զարգացման հնարավորություններ: Մեր բուռն փափաքն ե դարձնել ազատ յեվ անկախ Հայաստանը ապահով յեվ բարգավաճ:

Ս. ՎՐԱՑՅԱՆ

1920թ. Նոյեմբերի 24 ՅԵՐԵՎԱՆ

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 2, գ. 632, թթ. 13, 14, պատճեն, մեքենագիր*

## No 79

## ՀԱՏՎԱԾՆԵՐ ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ ՍՏԵՓԱՆ ՂՈՐՂԱՆՅԱՆԻ ՀՈՒՇԵՐԻՑ

*Դաշնակցական կառավարության պարտության պատճառների, կառավարության անդամների և զորահրամանատարների տակտիկական թերությունների, դաշնակցականների կողմից ստեղծված «փրկության կոմիտեի», բոլշևիզմի տարածման և ռուսական հեղաշրջման մասին*

...ինձ վերայ, բայց նորան ոչինչ չէր մնում անելու այլևս, զօրքի լքումը տարերային բնոյթ էր ստացել ու նա քայքայվում էր ժամէժամ:

Պատերազմական օրէնքների համաձայն կառավարութիւնը պէտք է տեղափոխեր Երևան առաջի հերթին պետական արժեքաւոր գոյքը և երկաթուղին դորանով պէտք է զբաղված լիներ: Կարսի նախկին նահանգապետը հազիւհազ կարողացաւ տեղաւորվել մի կեղտօտ ապրանքատար վագօնում, ուր ոչ կանգնելու և ոչ նստելու տեղ չըկար: Ինձ ասացին, որ այդ վագօնում տեղափոխվում է պետական գոյքը, բայց դուրս եկաւ որ այդ վագոնը ծայրէ ի ծայր լցվում էր մի երկու սպաի սեփական իրերով ուր տեղաւորվել էին նոցա ընտանիքները:

Ինչպէս յետոյ իմացայ, այդ սպաները համբարակային, ինտենդանտ, տաք պաշտօններ… *[տեքստի խզում]*

…բեռները»: Երկուսն էլ ռուսախոսներ էին: Թէ իրանք, պատերազմի ընթացքում «գլխապետ» դարձած այդ նախկին տիրացուները ու սափրիչները, և թէ նոցա կանայք, ամբողջ ժամանակ ռուսերեն էին կոտրատում և ինձ համար մեծ տանջանք էր մի քանի ժամ այդ անկիրթ ու ամբարտաւան մարդկանց շրջանում գտնվել: Այդ մարդկանց տիպը բնորոշելու համար բաւական կը լինի ասել, որ այդ նախկին հայ գործակատարներից մէկը հարկաւոր էր համարել իր որդուն

(*ԼչՏՐՖ-?*) բուն ռուսական անուն տալ: Եւ շատ բնական էր, որ այդ մարդիք խորշում էին իրանց մայրենի լեզվից և այդ նախկին սափրիչներն ու նոցա խաթուն կանայք բացառապես միայն ռուսերեն էին կոտրատում: Եւ այդ սպաները, որ միայն լցնում էին իրանց գրպանները ու ծաղրում այն կառավարութիւնը, որ այնչափ աջակցում էր նոցա հարստանալու, պէտք է պաշտպանէին հայրենիքի պատիւը...:

Շատ հետաքրքիր է որ մինչ մինիստրները և պարլամենտի անդամները եկել էին Աղէքսանդրապօլ «թամաշի» յատուկ գնացքներով և յատուկ վագոններով, Կարսի նահանգապետի համար մի կուպէ անգամ չըգտնվեց: Նոյեմբերի 4 ես հասայ Երևան և միւս օրը տեսնվեցի կառավարութեան անդամների հետ ներքին գործերի մինիստր Սարգ. Արարատեան խնդրեց ինձ ժամանակաւորապէս ստանձնել իր օգնականի պաշտօնը և փոխարինել նորան: Ես երկար տարիների ընթացքում ընտելացել եմ դրսի ազատ աշխատանքի և կաբինետ զբաղմունքը իմ բնոյթով չէր: Մինիստրի օգնականի առանձնասենեակը ոչ մի հրապուրիչ բան չէր ներկայեացնում իրանով: Կասեմ աւելի, մեր առանձնակի իրականութեան մէջ, մինիստրի պաշտօնն էլ ...*[տեքստի խզում]*

և նշանակութիւնը..:

Եւ երբ ներքին գործոց մինիստրը այդչափ մեծ կարծիք ունէր Աղէքսանդրապօլի ադմինիստրացիայի մասին, այդ քաղաքում արդէն ուժգին խմորվում էին հակապետական դաւերը, բայց այդ դարան մտած մարդկանց չէր տեսնում այդ ոստիկանութիւնը և այդ «ինքնաւարութիւնը»: Մայիսի սկզբներում մի բուռն եկվորներ առաջ բերեցին Աղէքսանդրապօլում հակապետական բռնկում և դաշնակցական «սիրելի ընկերներ» մի քանի ժամից յետոյ ձեռքից թողեցին իշխանութիւնը...:

Երբ խռովարարները տիրեցին երկաթուղին և կտրեցին Կարսի հետ կապը, այդ խլրտումը, իհարկէ անդրադարձաւ և Կարսի նահանգը: Շատ բնորոշ է, որ Կարսի նահանգում այդ շարժումը առաջ միայն և միայն զօրամասերում և այն էլ այն գնդերում, ուր հրամանատարութիւնը ռուսախօս էր և օտար հայ զինվորին: Ժողովուրդը, հասարակութիւնը երտասարդութիւնը չը մասնակցեց այդ խլրտման և անցաւ կառավարութեան թիկունքը: Եւ պետք չը կայ ասելու, որ այդ շարժումը համաժողովրդական չէր, որ նա շատ հեռու էր բօլշեվիկ բնոյթից: Մի բան ակներև էր և նորանից մեածաչափ օգտվեցին հայրենիքի դաւաճանները կառավարութիւնը թոյլ էր, նա իր բարձրութեան վերայ չէր: Ոճիրը չէր դատվում, մեղաւոր չը կար, ապիկար պաշտօնեաները կաշառակեր, անպետք և անշնորք շարունակում էին պաշտօնաւարել և կեղեքել երկիրը և այդ մթնոլորտում պէտք է առաջ գար անբաւական տրամադրութիւն: Եւ երկրի այդ

անքաւականութիւնից օգտվեցին խռովարարները և մեր ներքին հաշիւների խնդիրը ձգեցին ընդհանուր հրապարակ, հրդէհի մատնելով երկրի անկախութիւնը և մեր պետականութիւնը:

Այդպէս էր այդ ժամանակամիջոցի հոգեբանութիւնը, որ Մայիսեան օրերի անուն ստացաւ:

Բայց այդ օրերը ճակատագրական էին Հայեաստանի համար:

Դժվար էր, իհարկէ, գուշակութիւններ անել, դժվար էր երևակայել ներքին և արտաքին հանգամանքների աւելի աննպաստ և դժոխային դասաւորում: Բայց աւելի դժվար էր ենթադրել, որ կառավարութեան նոր գործելակերպը գալիս է վերջին հարվածը տալու մեզ և միանգամայն կազմալուծելու իշխանութիւնը:

Հանգամանքների ճնշման տակ, ապրիլին, դաշնակցութեան բիւրօն վճռում է արձակել Խաթիսեանի կաբինետը և երկրի ղեկը միահեծան իր ձեռքը առնել: Ես երբէք չեմ կասկածում, իհարկէ, որ բիւրօի գաղափարական անդամները անկեղծ էին իրանց տրամադրութիւններում: Այսպէս թէ այնպէս, արդ անձնուրաց մեծ զանգվածը բերել, յանձնել էր ժամանակակից սերնդին մեր վաղեմի երազների իրագործումը և նա չէր կարող անվերաբեր մնալ այն վայրկեանում, երբ վտանգված էր նրա սրբութիւն սրբոցը, երբ անհասկանալի կամօքն պատմութեան մենք պաշարված էինք և ներսից և դրսից և երբ վերջի գրոհը կարող էր կամ ճեղքել, կամ ճեղքվել...: Դաշնակցութեան բիւրօի յանձնարարութեամբ, նրա արտօնված պարագլուխ Համօ Յովհանջանեան, ինքն էլ իրան լաւ չը զգալով, այցելում է մինիստր նախագահ Խաթիսեանին և առաջարկում է նորան հրաժարվել...: Եւ մի երկու ժամից յետոյ պարլամենտի ճնշված և երերուն մթնոլորտում, Ալ. Խաթիսեան ներկայեացնում է իր կաբինետի հրաժարականը...:

Իր բոլոր թէր և դէմ կողմերով հանդերձ, Ալ. Խաթիսեան մեր առաջադիմական ցայթուն դէմքերից մէկն էր: Օժտված մեծ ընդունակութիւններով, նա ունի անսպառ եռանդ և աշխատելու մեծ կորով: Դժվար է հաշվի բերել այն բոլորը, ի՞նչ է պահանջվում պետական գործչից, բայց և այդ բոլոր բարդ պայմաններում նա պէտք է ունենայ աշխարհիկ հմայք և վարչական իմաստ: Եւ ես կարծում եմ, որ այդ բոլորը ունեբ Ալ. Խաթիսեան թէ որտե՞ղ կը հանգէր Խաթիսեանի կաբինետը, այդ այլ խնդիր է, ի հակէ, բայց որ նրա յաջորդը ոչ միայն չը փրկեց դրութիւնը, այլ միայն ընդհանուր քաօս և անիշխանութիւն ստեղծեց երկրում, դորա մասին էլ այժմ, կարծեմ, երկու կարծիք չի կարող լինել: Բայց Համօ Յովհանջանեան, որպէս մինիստր նախագահ, մի ֆիկցեա էր միայն: Կառավարութեան միուս անդամները դերակատարներ էին այս և այն չափով և երկրի փաստացի

իշխանութիւնը անվճռաբեկ և միահեծան, անցել էր Ռուբէն Տէր-Մինասեանի ձեռքը:

Ինքնահաւան և վստահ, նա իրան մասնագէտ էր համարում ոչ միայն զինվորական գործում, այլև ադմինիստրատիւ բարդ ապարատը կառավարելու մէջ և այդ միտումներով նա համ զինվորական մինիստր էր, համ էլ ներքին գործոց: Բայց նա առանձնակի ոչ թէ զբաղվեց, այլ միայն հմայվեց զինվորական գործերով միանգամայն երեսի վերայ թողնելով երկրի ներքին գործերը: Նա կարծում էր, երևի, որ այդ մինիստրութիւնը, որպէս իր ներքին, տան գործերը, ոչ հետաքրքրում է երկիրը և ոչ նշանակութիւն ունի կառավարչական սիստեմում: Եւ այդ մեծ հրապարակը նա թողեց ինչ որ պատահական մարդկանց, որոնք փաշայի զրահի տակ վարչական կոմիկ անպատասխանատու փորձեր էին կատարում երկրի գլխին: Միակ մարդը այդ մինիստրութեան մէջ, այդ մինիստրի օգնական Սահակ Թորոսեանն էր: Ընդունակ և անպայման անկաշառ ու շիտակ, նա անկեղծ հայրենասէր էր և դաշնակցական այն սակաւաթիւ այժմ գաղափարականներից մէկը, որ դեռ հաւատում էր իդեալներին և այնտեղ սաւառնում: Բայց Ռուբէն փաշան և Թորոսեան չէին կարող պարփակվել մի կեղևի մէջ և նա ստիպված էր թողնել մինիստրութիւնը, որպէսզի չարգելէ Ռուբէն փաշային թագաւորելու, բայց ոչ, իհարկէ, կառավարելու...:

Կառավարութեան նոր կազմը նոր ընթացք չը տվեց երկրին, նա չը լուծեց երկրի բորբոքումը: Դաշնակցութիւնը անկարող հանդիսացաւ զըննելու երկրի հիւանդութեան պրօցէսը և պատշաճ սպեղանի գտնելու: Նոր կաբինետի կազմը ընդգծեց երկրի առաջ միայն նորա գունաւոր դէմքը, բայց նոր բան երկրին ևս չասաց: Նա լիազօրեց իր անդամներին անցնել գաւառ և «ուժեղ» իշխանութիւն ստեղծել և «արտակարգ» դատարաններ յիմնեց դրութիւնը փրկելու համար: Բայց այդ բոլորը աւելի քան պոզիատիւ էր և գալիս էր մի աւելորդ անգամ վկայելու, որ կառավարութիւնը պետական կուրս չունէր, որ խնդիրը բռնելու և ջարդելու մէջ չէ, այլ կառավարչական մտածված սիստեմի, ուր բարդ մեքենայի բոլոր մասնիկները մէկը միւսին լրացնելով, և մէկը առանց միւսի ոչինչ, կարող են միայն ստեղծել կառավարչական ապարատի ներդաշնակ ընթացքը: Բազմիշխանութիւնը մեր օրերի տագնապն էր և նա քանդեց մեր տունը: Կապեց արձակված, մենք բոլորս ձգտեցինք հրամատարել և իշխել, իսկ աշխատող և ի կատար ածող դերերի համար մենք մարդիք չունէինք, բազմատեսակ լիազօրները և ներկայեացուցիչները բուսնում էին սնկի պէս, նրանցից ամէն մէկը ձգտում էր իրաւունք, ինշխանութիւն բանեցնել, բայց ոչ աշխատել: Այդ ժամանակաւոր և քմահաճ տիտղոսները նսեմացնում էին պաշտօնի իմաստը, ձգում էին երկրում պաշտօնեաի

նշանակութիւնը և այդպիսով երերում իրաւակարգը: Եւ այդ լիազօրութիւնների սիստեմը համաճարակի բնոյթ ստացաւ Մայիսեան օրերում, նոր կառավարութեան ժամանակ: Մինիստրը և պարլամենտի անդամը գաւառներում իր վերա էր վերցնում պարտաւորութիւններ, որ միայն նսեմացնում էր երկրի առաջ նրա նշանակութիւնը և զբաղվելով այդ երրորդակի և չորրորդակի գործերով, նա կազմալուծում էր տեղական պաշտօնեութեան կորովը: Իշխանութիւնը պէտք է միշտ պահպանէ իր հմայքը և դորանումն է իշխանութեան գաղտնիքը:

Իջնելով դէպի ցած, դէպի այն ֆունկցիաները, որ ունի իր առանձին պաշտօնեաները, մինիստրը դադարում է այլևս կառավարութեան անդամ լինելուց և կորցնում է երկրում այն հմայքը, որ պէտք է պետական կուրսի անձեռնամխելութեան համար: Եւ գաւառները ցրվեցին ոչ միայն մինիստրները, այլև պարլամենտի անդամները: Վերջիններից շատերը իրանք էլ չըգիտէին, թէ ինչու համար են ուղարկված, նոցանից մի քանիսը 4-5 օր «իշխանաւորելուց» յետոյ, վերադառնում էին Երևան զեկուցում տալու, բայց այլևս չէին գալիս...:

Իրաւունքների և պարտաւորութիւնների այդ քաօսում խօսք չէր կարող լինել իհարկէ, իրաւակարգի և ուժեղ իշխանութեան մասին: Մենք ձեռք առանք բոլոր միջոցները, երերելու և խախտելու այդ իշխանութիւնը և այդ առանցքում լուծվեց մեր պետական բորբօքումը: Երբ մինիստրները և պարլամենտի անդամները շտապում էին գաւառները իրաւակարգը ամրացնելու, Երևանի մի կարևոր հաստատութեան մի աննշան ծառայող արձակուրդ է խնդրում Թիֆլիզ: Բայց այդ պաշտօնեան գնում էր ոչ թէ Թիֆլիս, այլ Մօսկվայ, ուր նա տեղեկութիւններ էր տանում իր թշվառ հայրենիքի մասին և մի քանի ամսից յետոյ վերադառնում է Երևան ռուս զօրքի հետ միասին, բայց այս անգամ առանց դիմակի...:

Ես այդ փաստը, մեկը հազարից, առաջ բերեցի միայն պարզելու, թէ որչա՜փ անտեղեակ էինք մենք մեր սեփական տան անցուդարձին և որչափ անփոյթ: Մենք ոչինչ չըգիտէինք, թէ ի՞նչ է կատարվում մեր շուրջը, մեր բոլոր հաստատութիւններում բնակակալել էին գողերի և դաւաճանների մի մեծ բազմութիւն: Առաջինների հետ մաքառելու մենք ոյժ չունէինք, երկրորդ տեսակի գործիչները դիմակաւորված էին և մենք նոցա չէինք տեսնում:

Ոստիկանութիւն մենք չունէինք և չէինք կարող իհարկէ ունենալ: Մենք անվերջ և անհաշիւ բազմացնում էինք միայն պաշտօնէութիւնը, պաշտօններ էինք ստեղծում մարդիք տեղաւորելու համար, բայց չէինք վարձատրում աշխատանքը: ...*[պեքսպի խզում]*

...դեգերեց մեր գաւառներում Դալի-քեշիշ (խելագար քահանայ) կեղծ անվան տակ: Նա պատկանում էր մեր այն սերունդին, որ անձնուրաց հմայվեց Րաֆֆու երազներում և գնաց աշակերտելու այն

մեծ գաղափարական հոսանքին, որ իննսուն թվականներում, ստացաւ դաշնակցութեան մեծ և հեղինակաւոր անունը:

Երբ հայ-թուրքական կռիւների ժամանակ ես Նոր Բայեազետի գաւառապետ էի, Ար. Տ. Մելքոնեան, մեր անձնուրաց հայդուկների գլուխը անցած, շրջում էր գաւառները և հայ ժողովրդի ինքնապաշտպանութիւնը կազմակերպում: Այդ կռիւների տագնապ օրերում նա իր շտաբը Նոր Բայեազետի գաւառում զետեղեց և այնտեղից ղեկաւարում էր թէ՛ դէպի Դարալագեազ, և թէ՛ դէպի Աբարան...:

Մենք անձամբ ծանօթ չէինք նորա հետ: Բայց Դալի-քեշիշ իրան ապահով էր զգում այն վայրում, ուր …*[պՆեքսփի խզում]*

…մեկնեց գաւառները:

Բայց դառնանք անցքերին Կարսի նահանգում:

Մայիսի սկզբներին Աղէքսանդրապոլի խռովութիւններից մի երկու օր առաջ, ես հեռագիր ստացա, որ առանձին լիազօրութիւններով Կարսի նահանգը մեկնեց նախկին մինիստր Նիկ. Աղբալեան, պարլամենտի մի քանի անդամների ուղեկցութեամբ: Աղբալեանի գալուց յետոյ, Աղէքսանդրապոլի խռովարարները, իրանց ձեռքը ձգելով իշխանութիւնը, փակեցին երկաթուղին և կտրեցին Կարսի հեռագրական կապը:

Մենք մնացինք մեկուսացած և այդ առաջ բերեց շատ հասկանալի ջղայնացում և խրախուսեց Կարսում զանազան դիմակների տակ թագնվածներին:

Ամենից առաջ ըմբոստացաւ և ապստամբվեց գեներալ Յովսէփեանի թիկնապահի վաշտը: Նա միացաւ այդ խռովութեան ռուս և հրեայ ղեկաւարներին, տարաւ իր հետ մի քանի գնդացիրներ և ամրանալով թէ իր զօրամասում և թէ գարաժում, սպառնալից դարձաւ իշխանութեան համար: Գեներալ Փիրումով և գեն. Յովսէփեան միանգամից չքացան հրապարակից: Կարսի միւս զօրամասերը տրամադրութիւն չունէին միանալու գեն. Յովսեփեանի թիկնապահներին:

Միւս օրը Աղբալեան թատրոնի դահլիճում, զինվորականների մեծ բազմութեան առաջ, օրվայ առիթով շատ զգացված մի ճառ արտասանեց և յուզեց աուդիտօրեան: Զինվորները և հասարակութիւնը ցրվեցին ազգային շատ բարձր տրամադրութեան տակ և ես կարծում էի, որ տագնապը լուծվելու վերայ է: Բայց խռովարարները կապ ունէին Աղէքսանդրապոլի հետ և այնտեղից եկող տեղեկութիւնները խրախուսում էին նոցա: Այդ պատճառով Աղբալեան իմ բնակարանում մայիսի 9 մի բազմամարդ ժողով գումարեց ստեղծված դրութեան առիթով: Այդ ժողովում զօրքերի հրամանատար գեներալ Փիրումով յայտարարեց, որ զօրքը ամբողջովին անցել է խռովարարների կողմը և հրամանատարութիւնը միանգամայն անզօր է ճնշելու ապստամբութիւնը: Այդ պայմաններում մնում էր ժողովուրդը, որին և

որոշեցին դիմել: Այդ խորհրդակցութիւնը տևեց մինչև ուշ գիշեր, բայց առաւոտը պարզվեց, որ գեներալները, ինչպէս և պէտք էր սպասել, տեղեկութիւն չունէին իրանց զօրամասերի անցուդարձի մասին, բացի հինգերորդ յետևակ գնդից, որի հրամանատարը մի ռուսախօս էր հայ. ազգանունով, գեն. Յովսեփեանի թիկնապահ վաշտից և Կարսի ամրութիւնների հրետանու, ուր հրամանատար կազմը դարձեալ և ռուսներ էին և ռուսախօս հայեր, մնացած զօրամասերը տոգորված էին ազգային ոգով: Բայց խռովարները ուժեղանում էին, նրանք իրանց ձեռքն էին ձգել Աղէքսանդր II բարձր և Կարսի վերայ իշխող ամրութիւնը և թնդանոթները ուղղելով Կարսի վերայ, սպառնալիք և ուլտիմատում էին ուղարկել ինձ: Իսկ մի երկու ժամից յետոյ, գարաժից, ուր ամրացել էին խռովարները, «Կարսի ռեվկոմից» ես ու գեն. Փիրումօվ «հրամաններ» ստացանք, որ մենք արձակված ենք մեր պաշտօններից…:

Նրանք գիտէին, իհարկէ, որ ազգային իշխանութիւնը, բոլոր կարգադրութիւնները, նահանգապետի բնակարանումն էին և այդ պատճառով մի երկու թնդանոթ արձակեցին այդ ուղղութեամբ: Եւ ես, բարեկամներիս պահանջով, մի երկու ժամով անցայ հարևան տունը…:

Իմ անունով արձակված ռեվկօմի հրամանում ասված էր, որ արձակելով ինձ պաշտօնից, նա Կարսի նահանգապետ է նշանակում Չալխուշեանին, այն մարդու որդուն, որ այսօր այնչափ մեծ հռչակ է ստացել Բուխարեստից մինչև Արաքսի ափերը…:

Բայց զուգընթաց այդ բոլոր նախորդ պայմանների հետ, ժողովրդի մէջ բարձրանում էր պատվախնդիր, ազգային տրամադրութիւնը և մեծ ծաւալ ընդունում: Խռովարարները, գեն. Յովսեփեանի թիկնապահ վաշտի և շօֆերների պաշտպանութեան տակ ամրանալով և շրջապատելով իրանց գնդացիրներով, պահանջեցին իրանց մօտ բանակցութիւնների համար գեներալ Փիրումօվին և գեն. Յովսեփեանին: Երբ գեներալները գնացին խռովարների մօտ, ժողովրդի մեծ բազմութիւն թափվեց այդ հրապարակը: Ունկնդրութիւնը տևեց երկու ժամ, իսկ ժողովրդի ջղայնացումը հասել էր ի ծայր: Եւ այդ էլեկտրականացած մթնոլորտում գեներալները ցանկացան հաշիւ տալ ժողովրդին իրանց վարած բանակցութիւնների մասին: Գեներալներից աւագը՝ Փիրումօվ ասաց՝ ռեվկօմի ասելով, հայկական իշխանութեան ժամերը հաշված են, արդէն ռուս զօրաբանակը կանգնուած է Ակստաֆա երկաթուղու կայեարանում և հրամանի է սպասում նվաճելու մեր երկիրը, բայց աւելացրեց թարգմանը, ռուսները բերում են մեզ հաց, շաքար, նավթ և այլն…: Sapienti sat… Միուները, ռուսները, հրեաները և մի քանի թուրքեր հայ դաւաճանների մասնակցութեամբ մեծ ցոյց կազմակերպեցին: Ռուս ազգային խորհրդի այն հրեայ նախագահը «էսէր», որին Սարգ. Մանասեան աքսորից

վերադարձրեց Կարս, երկար փայտի գլխին մի կարմիր ցնցոտի կապած՝ առաջնորդում էր այդ գիշատիչ և ջարդարար հրոսակախումբը փողոցներով, ռուսերեն բարձր գոչում. «Թո՛ղ կորչի հայ իշխանութիւնը, կեցցէ՛ ռուս խորհրդային կառավարութիւնը...»: Եւ շատ ուշագրաւ պէտք է համարել, որ այդ տագնապ գիշերը, երբ քաղաքի ամբողջ հայիւթիւնը տենդոտ և ջղային արթուն մնաց, հինգերորդ հետևակ գնդի ռուսախօս հրամանատարը հնարաւոր համարեց պսակվելու և ուրախանալու...: Երբ խռովարները կարմիր ցնցոտի դրօշակներով անցնում էին զօրանոցների մօտով, այդ նոր ամուսնացած գնդապետը, արտասուքը աչքերին, որպէս մի սրբութիւն հարկաւոր համարեց համբուրել իրանց այնչափ հարազատ այդ կարմիր ցնցոտին...: Եւ այդ այն գնդապետն էր, որ տեսնելով Կարսի պարիսպների տակ մօտեցող տաճկաց առաջաւոր մասերը, ամենաանամօթ կերպով ձգեց իր գնդի հետ զէնքը և փախաւ...: Իսկ այսօր, համազգային սուգի օրերում ամուսնանալով, նա իր թիկունքում զգում էր իր գնդի սվինները, որոնց նա թեքել էր տապալելու այն իշխանութիւնը, որ նրա պէսներին պահում, գնդապետի աստիճան տալիս և մեծարում էր բոլորին անյայտ արժանաւորութիւնների համար...:

Այդ չարաբախտ գիշերվայ առաւօտը Կարսի վակզալից բերեցին ինձ Աղէքսանդրապօլից իմ անունով ռուսերէն ուղարկված հետևեալ հեռագիրը. «Խնդրում եմ Ձեզ մնալ Ձեր պաշտօնում և միևնոյն ժամանակ ստանձնել խորհրդային իշխանութեան ներքին գործերի կօմիսարի պաշտօնը: Բժիշկ Արտաշէս Մելքոնեան»:

Բժիշկ Մելքոնեան մեր ռօմանտիկ դէմքերից մէկն էր: Տարված իր ժամանակի գաղափարներով, նա մեծ թափով նետվեց իր հայրենիքի ազատագրութեան կռվի ասպարեզը և տարիների ընթացքում … *[կրեքսփի խզում]*

… պաշտօնեան ամիսներով ռոճիկ չէր ստանում և համաձայնվեցէք, պէտք է մեծ իդեալիստ լինել, որ այդ մթնոլորտում չը խախտել ռօմանտիզմը...: Բայց լաւ ոստիկանութիւնը, բացի պաշտօնավարձը, ունի և այլ պէտքեր: Իրազեկ լինելու ցանկութիւնը կապված է և մեծ ծախքերի հետ, բայց ուզում էինք ձրի ստանալ այդ տեղեկութիւնները, կամ այնպիսի միկրօսկօպիկ չափերով էինք վարձատրում այդ աշխատանքը, որ առաջի տեղեկութեանը երկրորդը արդէն չէր յետևում...:

Այդ պայմաններում առանձին լիազօրութիւնները և բազմատեսակ պաշտօնները չէին կարող փրկել դրութիւնը: Եւ մենք արդէն տեսանք թէ ի՞նչ արեցին այդ «արտակարգ» միջոցները: Նրանք ի ծայր խճճեցին երկրի ներքին դրութիւնը և միայն արագացրեցին իրերի անխուսափելի այդ մթնոլորտում լուծումը:

Այդպէս էր դրութիւնը, երբ մի քանի մինիստրներ և պարլամենտի անդամների մի մեծ բազմութիւն …*[կրեքսփի խզում]*

...գավառապետը «Մշակի» աշխատակիցն էր և «Գաւառական նամակների» հեղինակը: Իսկ ես սիրում էի հովանաւորել և բարեկամութիւն անել այն բոլոր մարդկանց հետ, որոնք ժողովրդի միջից լինելով, գաւառի և ժողովրդի սիրահարներն էին...: Անցան տարիներ, վերջացան հայ թուրքական կռիւները, Դալի-քեշիշ ընդհարվեց դաշնակցութեան գործիչների հետ և թողնելով կուսակցութեան շարքերը, անցաւ արտասահման: Պատերազմը և յետագայ մեծ դէպքերը նորից հրապարակ նետեցին Արտ. Մելքոնեանին:

Ռուսաստանի պետական յեղաշրջումը լայն հեռանկարներ է բացում մարդկանց առաջ և Արտ. Մելքոնեան, որ իր հայրենիքի անկեղծ սիրահարներից մէկն էր, անշուշտ, և մէկն էր այն դէմքերից, որ ծանօթ է երկրին, հայ լեզվին և գրականութեանը, նորից հրապարակ է գալիս իր երազներով ու իր ռոմանտիկ տրամադրութիւններով:

Բայց դաշնակցութիւնը տիրող ու հմայիչ կուսակցութիւն էր և գործել անջատ նորանից կարելի էր միայն մի այլ կուսակցութեան անվան տակ և բժ. Ար. Մելքոնեան, իրան «էսէր» յայտարարեց...: Բայց Դալի-քէշիշ իր բնոյթում էսէր չէր, իհարկէ, նա մեծ հայրենասեր էր և իր հոգու բոլոր վերապրումներում մնաց մինչև ի վերջը ցայտուն դաշնակցական: Դաշնակցութիւնը բաժանեց նորան, նա կռիւ մղեց այդ կուսակցութեան ղեկաւար դէմքերի հետ, բայց օրգանապէս նա մինչև ի վերջը մնաց դաշնակցական և դեգերեց նորա զառանցանքներով, միայն այլ անվան տակ...:

Զեմստվօի խմորման պատիւը մեր երկրում նորան է պատկանում: 18 թվին, երբ բոլորը «ինքնորոշվում էին», նա անցաւ Դիլիջանի ձորը և այդ գեղածիծաղ կիրճում փորձեց սերմանելու համայնական գաղափարների իմաստը, Զեմստվօ կազմակերպեց: Երբ ժողովրդական առաջի այդ առիթով շատ բազմամարդ համագումարում, ուր մասնակցում էին ոչ միայն Ղազախի ազգաբնակութիւնը, այլև Նոր Բայեազետի գաւառի մի մասը, իրաւասուների առաջ դրվեց Զեմստվօի վարչական մարմնի կազմակերպութիւնը, ժողովը պահանջեց, որ վարչական մասը Զեմստվօի յանձնվի տողերիս գրողին: Այդ առիթով ինձ հեռագրեցին Թիֆլիզ, ուր ես այն ժամանակ ապրում էի, իսկ մի քանի օրից յետոյ եկաւ ինձ հրաւիրելու և ինքը՝ բժ. Մելքոնեան: Եւ այստեղ առաջի անգամ ես տեսայ այն Դալի- քեշիշին, որի մասին գիտէի վաղուց: Ես անցայ Դիլիջան, բայց մի երկու շաբաթից յետոյ պարզվեց, որ աշխատել այդ մթնոլորտում անկարելի է: Բժիշկը անկեղծ անկաշառ հայրենասէր էր, բայց տարված էր mania grandiosa հիւանդութեամբ և ես թողեցի Դիլիջանը: Բայց մենք բարեկամ մնացինք Արտ. Մելքոնեանի հետ: Եւ ես չէի կարող չը յարգել մի մարդու, որ նվիրաբերել էր իր լաւագոյն տարիները իր երկրին և ժողովրդին:

Այդպէս էր բժ. Արտ. Մելքոնեան, որին, անհասանելի կամօքն պատմութեան, վիճակվում էր այսօր նորից հրապարակ գալու և լուծելու մի հանգոյց, որի կապանքների շուրջը նա այնքան զառանցել էր և տարիներ աշխատել...:

Ի պատասխան իմ ստացած առաջարկութեան, մի երկու ժամից յետոյ ես ուղարկեցի Աղէքսանդրապօլ բժ. Ար. Մելքոնեանին, բայց հայերէն, հետևեալ հեռագիրը. Ջերմօրեն շնորհակալ եմ Ձեր բարեկամական ուշադրութեան համար: Ձեզ հետ միասին մենք միշտ սիրել ենք նիրհել մեր անկախութեան և ցայտուն ազգային երազների առանցքում և այսօր, երբ վտանգվել է հայրենիքը, մենք պէտք է լինենք ժողովրդի մօտ և նորա հետ միասին: Բայց սպառնալից վտանգի ալիքները անդրադարձել են արդէն դէպի Տաճկական Հայեաստան և թիւրք հրոսակախմբերը, թողնելով իրանց որջերը, շարժվել են արդէն դէպի մեր սահմանները: Կարսի ռուսները, երբէմն հզօր Ռուսաստանի այդ անարժան ժառանգները, միանալով թիւրքերի և թուրքերի հետ, ոտի են կանգնել մեր դէմ և այսօր մեծ ցոյց կազմակերպելով, հրապարակով գոռում էին՝ Կորչի հայկական իշխանութիւնը և կեցցէ Խորհրդային Ռուսաստանը...: Եւ այդ տագնապալից օրերում, երբ խորտակվում են մեր վաղեմի տենչանքները, որի ճանապարհներում մենք թափել ենք այնքան արիւն և այնքան արցունք, ես կոչ եմ անում դէպի Ձեր հռչակաւոր հայդուկային անցեալը: Չէ՞ որ այնտեղ է Ձեր հաւատամքը, Ձեր հոգու նվիրական զգացմունքը, չէ՞ որ այնտեղ են հունցվել Ձեր իդեալները և չէ՞ որ այդ գաղափարների իրագործման համար Դալի-քեշիշ այնքան դեգերել և այնչափ տանջվել է...:

Եւ ես ուզում եմ հաւատալ, որ այդ մի տեսիլ էր միայն, որ Դուք չէք կարող ապրել առանց ժողովրդի և հայրենիքից դուրս: Եւ այդ միտումներով ես դառնալից հրաժարվում եմ Ձեր առաջարկութիւնից և բարձր գոչում Ձեզ. «Ես մնում եմ իմ տեղում և հայրենի իդեալների հետ... Նահանգապետ Ղորղանեան»: Ես չեմ կարող չը հաւատալ, որ բժ. Արտ. Մելքոնեան իր հոգու խորքերում չը յուզվեր այդ հեռագրից յետոյ:

Նա բօլշեվիկ չէր, նա իրան չէր ներկայեացնում գալիք բարդութիւնները: Նա ուզում էր օգտվել ընդհանուր անբաւական մթնոլորտից և ստիպել դաշնակցութեանը նորից ճանաչել իրան...: Նա ձգտում էր դէպի փառք և իշխանութիւն: Բժ. Ար. Մելքոնեան իր երկրի մեծ սիրահարներից մէկն էր և մէկն էր այն դէմքերից, որոնք կրաւորական դերերի համար չեն ստեղծված: Եւ նա ընկաւ այդ թիւրիմաց կռվում, բայց ընկաւ որպէս Դալի-քեշիշ և մինչև վերջը մնաց անկեղծ և ցայտուն դաշնակցական իր հոգու վերապրումներով, իր անցեալով և ներկայով և իր ամբողջ էութեամբ:

Թէ՛ բժ. Մելքոնեանի հեռագիրը և թէ՛ իմ պատասխանը ես պատվիրեցի տպագրել և տարածել քաղաքում, ուր ազգային պատվախնդրութեան բորբոքումը աճում էր ժամէժամ:

Մայիսի 12, փողոցում, մի խումբ հայրենասէրների նախաձեռնութեամբ, կազմվում է «Փրկութեան կոմիտէ», որ և որոշում է հրապարակից չքացած գեներալներից անկախ, կոչ անել զինվորութեանը և ցրել դարան մտած խռովարարներին:

Բայց մի քանի խօսք էլ այդ իմպրօվիզ «Փրկութեան կոմիտէի» մասին:

Տպաւորվող և էքսպանսիւ բնաւորութիւնը միշտ խմորել է յուզալից մթնոլորտ և երբէմն անգիտակցօրէն այդ բորբոքումի առաջ ընկնելով, ստեղծել է ուժեղ հոսանք և բարձր տրամադրութիւն: Եւ հայկական երազները, անշուշտ, ունեն իրանց անիմանալի վիճակը և այդ վիճակը նոցա է վերապահել յազգային զգայիւն լարերի շոյիմը: Այդ մթնոլորտում առաջ եկաւ «Փրկութեան կոմիտէն»: Երբ պարլամենտի անդամները, նահանգապետը և ուրիշները խորհրդակցում էին ստեղծված դրութեան մասին, ալեկոծ և ջերմալից երիտասարդութիւնը տարուբերվում էր նահանգապետի տան շուրջը: Անհամբեր և կրակոտ նա ձգտում էր դէպքերը իր յետևում թողնելու և անվերաբեր թշնամու ոյժերին, նա նախօրօք ջարդում ու խորտակում էր...: Եւ այդ ալեկոծ և յուզալից տրամադրութիւնը արտայայտելու վիճակվեց երիտասարդ իրաւաբան Պարոյր Լևոնեան-Զիվանուն՝ «Զախորդ օրերի» հեղինակի որդուն: Հաշիւ չը տալով իրան և անգիտակից իր անելիքներում, Լևոնեան խնդրում է ոստիկանապետին օրկեստր երաժշտութիւն ուղարկել: Եւ երբ հնչում է ազգային հիմնը՝ «Մեր հայրենիք, թշվառ, անտեր, մեր թշնամուց ոտնակոխ...», Զիվանին, բարձրացնելով գլխարկը, արտասուքը աչքերին դառնում է իր շուրջը խմբված և ալեկոծ երիտասարդութեանը և ասում՝ Ընկերներ, ազգային պատիւը և մահը միշտ մարտնչել են իրար հետ և մեզ վիճակվում է պաշտպանել այդ պատիւը ժողովրդական ոյժերով...: Կազմակերպենք Փրկութեան կօմիտէ և ժողովուրդը կը տանէ մեզ դէպի դափնիք և յաղթութիւն...:

– Կեցցէ՛ Զիվանին, կեցցէ՛ Պարոյրը, – թնդում է էքսպանսիւ երիտասարդութիւնը:

Եւ Լևոնեան, այդ կոմիտէի այդ շատ բարձր տրամադրված մի խումբ երիտասարդութեան առաջը, երաժշտութեան հնչիւնների ուղեկցութեամբ շարժվում են դէպի քաղաքի կենտրոնը, հրդեհելով մթնոլորտը ազգային խանդով: «Մեր հայրենիքը» շոյող և տրամադրող հնչիւնների շուրջը մի քանի րոպէից յետոյ խմբվում է ժողովրդի ահագին բազմութիւն և այդ ժողովրդական մեծ ցոյցի հանդէպ գնդապետ Յարութիւնեան զօրահանդէս է ընդունում...: Լևոնեան և

կոմիտէի միւս անդամները նետվում են այստեղ և այնտեղ, ոտի է կանգնում քաղաքի ամբողջ ազգաբնակութիւնը և, գնդապետ Յարութիւնեան, Կարսի բոլոր զօրամասերի գլուխ անցնելով, ստիպում է դաւաճաններին անձնատուր լինել: Նոցա միացած զինվորութիւնը ոչ միայն խօստովանվում է իր մոլորութիւնը, այլև ազգային հոսանքի առաջն անցնելով յետապնդում է փախչողներին: Բայց այդ եկվոր խռովարներից շատերին յաջողվում է փախչել և ազատվել ժողովրդական զայրոյթից, որովհետև ճանապարհի վերայի մի ռուս հրեաների գիւղում նոքա ապաստան և պաշտպանութիւն են գտնում: Ձերբակալվեց, իհարկէ և այն հրեան, որ ռուս ազգային խորհրդի նախագահն էր: Խուզարկութեան ժամանակ նրա մօտ գտնվեցին փաստաթղթեր, որոնք մանրամասն լուսաբանում էին նորա դևային գործունէութիւնը: Պարզվեց, որ ռուս ազգային ժողովը, «էսէր»-ների դրօշակի տակ բոլշեվիկ կազմակերպութիւն էր, կապ ունէր Թիֆլիզի և Րօստովի հետ: Այս խռովարարները յարաբերութեան մէջ էին մտել բացի ռուսներից, թուրքերի, քրդերի և յոյների հետ, հայկական իշխանութեան տապալման ծրագիր մշակել: Ձերբակալվեցին, իհարկէ, թէ՛ թուրք և թէ՛ յոյն ազգ. խորհրդների նախագահները: Գործը անցաւ Արտակարգ դատարանին և դատարանի առաջ հրէան խօստովանվեց իր բոլոր արածը: Թուրք և յոյն նախագաները միայն խաղալիք էին այդ դև հրէայի ձեռքում և դատարանը այնպէս էլ իհարկէ վերաբերվեց այդ վերջիններին: Այդպէս էր այն «էսէր»-ը որին խեղճ Մանասեան վերադարձրեց Կարս: Բայց նա չէր կարող երևակայել, իհարկէ, որ այդ «էսէր»-ը ոչ միայն փորում է իր փայփայեած Հայեաստանի յիմը, այլ ամենից առաջ իր՝ Մանասի, համար է գերեզման պատրաստում...: Շատ բնորոշ է, որ և Սարիղամիշում ըմբոստացան այն զօրամասերը, ուր հրամանատարութիւնը ռուսախօս էր, բայց աւելի ուշագրաւ պէտք է համարել, որ այդ բոլոր գեներալները և սպաները նախամեծար դարձան ռուս զօրաբանակում, նոցա հայրենիքի կործանումից յետոյ: Այդ թշվառականները, որ այնպէս երկչոտ, «ռազմական միտումներով», փախչում էին Կարաբեկիր փաշայի հօրդաներից, շատ բարձր տրամադրութեամբ մի քանի ամսից յետոյ արշաւեցին իրանց հայրենիքի վերայ: Նրանք կրակ ու հուր թափեցին իր երկիրը և իր սուվերեն իրաւունքները պաշտպանող հայ ժողովրդի վերայ և հաղթողի գոռոզ դէմքով մտնելով աւեր և թշվառ Հայեաստան, օտարի ձեռքից դափնիք, շքանշան ստացան...:

Դժվար է երևակաել անգամ աւելի բարդ հոգեբանական տեսիլ: Աստիճանների և փառքի հասնելով իր հարազատ իշխանութեան օրով, այդ դաւաճանները թեքվեցին նորա հենց օրորման վայրկեանից: Եւ 21 թվի փետրվարին այդ նորից ոտի կանգնած հայկական

կառավարութիւնը ճնշելու և խորտակելու համար, այդ հրէշները, ռուս զօրքի գլուխ անցած, արշաւում էին Հայեաստանի վերայ…:

Հայկական իշխանութիւնը ջարդվեց, ցիր ու ցան եղան ազգային պատվախնդրութեան մեր վերջի բեկորները, իսկ հայ գեներալ Հովսեփեան և գնդապետ Միրիմանով, տօնելով այդ օրը Երևանում իրանց մեծ յաղթութիւնը, ոչ հարազատ ծափերի տակ ընդունում էին ռուս իշխանաւորի ձեռքից ռուս արիւնոտ շքանշանը…: Եւ աւելի ցայտուն դաւաճանութիւն և աւելի այլանդակ հոգեբանական տեսիլ չի կարող ստեղծել ամենավառ երևակայիւթիւնը անգամ:

Բայց չէ որ պատմութիւնը կրկնվում է և չէ որ հայ դաւաճանները միշտ ուղեկցել են հայրենի պատմութիւնը…:

Պարլամենտի անդամ Աղբալեան, որին կառավարութիւնը ենթարկել էր Կարսի նահանգի թէ՛ քաղացիական և թէ՛ զինվորական իշխանութիւնը, ծանօթանալով իրերի դրութեան հետ երկրում, եկաւ այն եզրակացութեանը, որ զօրքի հրամանատար կազմը, օտար և խորթ հայ զինվորութեանը, միանգամայն համատասխան չէր իր կոչմանը: Նա տեսաւ, որ այդ հրամանատարութիւնը անտեղեակ է զօրամասերի անցուդարձին, որ հրամանատարը և զինվորը խօսում են տարբեր լեզուներով, որ կառավարութիւնը տալիս է զինվորին իր ունեցածի 85 տօկոսը, բայց զինվորը դարձեալ մերկ, դարձեալ քաղցած է և դարձեալ անխնամ: Նա տեսաւ, որ հայ զինվորը օրգանապէս չի կարող հաշտվել բօլշեվիկ, ջարդարար և բացասական բնոյթի հետ, որ նա տիպիկ ազգային դէմք է, իր բոլոր գունաւոր մոլեռանդութեամբ, որ կապված է նրա մայրենի լեզվի, նորա հող ու ջրի, նրա նվիրական սովորութիւնների հետ: Եւ Աղբալեան, այդ մոլեռանդ գաղափարական դաշնակցականը, ազգային տիպարի և տրամադրութիւնների այդ երդվեալ պաշտպանը, չէր կարող միանգամից հենց արձագանք չըտալ հայ զինվորութեան շարքերում: Նրա առաջի կրակոտ ճառը Կարսի գարնիզօնի առաջ, միանգամայն հմայեց հայ զինվորութիւնը և նա չէր կարող այլևս բօլշեվիզմի յետնից: Հայ զինվորութիւնը դարձաւ դէպի տուն, դէպի իր ընտանի շարքերը և այդտեղ հենց պարտվեցին Կարսի խռովարները:

Երբ կարգը վերականգնած էր և գնդապետ Յարութիւնեան շրջապատված այն հայ սպաներով, որոնք հմայք տվեցին Փրկութեան կոմիտէի գաղափարին, մեծ զօրահանդէս կազմակերպեց Կարսի բոլոր զօրամասերից, ժողովրդի և զօրքի տրամադրութիւնը վերածվեց մեծ օվացիայի: Զօրքը անցաւ դէպի նահանգապետի տունը և, երբ շարքերը ուղղված էին, կառավարութեան լիազօր Աղբալեան, նահանգապետը և պարլամենտի անդամները, շրջապատված նահանգական պաշտօնեաներով դուրս եկան դիմաւորելու զօրահանդէսը: Գեներալները, իհարկէ, բացակա էին, նոքա անպաշտօն կերպով

հեռացված էին դէպքերի դասաւորմամբ հրամանատարութիւնից և Կարսի նահանգի զօրքերի հրամանատարութիւնը Փրկութեան կօմիտէն յանձնել էր գնդապետ Յարութիւնեանին:

Երբ մենք երևացինք հրապարակում, գնդ. Յարութիւնեան «հանդարտ» հրամանատարեց, օդում փարեց օրկեստրի «Մեր հայրենիքը» և հազարաւոր ամբոխը, համակված ազգային մեծ գաղափարի զգացմունքներով, գլուխ բացելով, զօրքի հետ միասին գոչեց հաղթական «Կեցցէ՛ մեր հարազատ կառավարութիւնը...»:

Յուզված և շնչասպառ, Աղբալեան դիմեց զօրքին և ժողովրդին մի այնպիսի ցնցող ճառով, որի ընդացքում մի քանի անգամ օդը թնդում էր «կեցցէ»-ներից և ժողովրդի յուզմունքից: Այնուհետև գնդ. Յարութիւնեան, յենված այդ բարոյական մեծ տրամադրութեան վերայ և հպարտ իր ազգային արժանապատվութեամբ, ամբողջ զօրքով, թնդանօթներով և գնդացիրներով անցաւ քաղաքի կենտրօնական մասով: Ամբողջ քաղաքը, մեծ և փոքր, որպէս նվիրական, ընտանի տօնի առիթով, հեղեղել էր փողոցները: Զինվորական բոլոր նվագախմբերը հերթով նվագում էին ու ժողովուրդը հրճվում էր: Երբ օրկեստրը սկսում էր քայլերգը ամբոխը հրամայեալից ազգային հիմն էր պահանջում և նորից ու նորից բացվում էր ժողովրդի գլուխը, նորից բռնկում ազգային տրամադրութիւնը և օդում փառում էր մեզ այնչափ մտերիմ հոլովը՝ Ամենայն տեղ մահը մի է, մարդ մի անգամ պիտ մեռնի, բայց երանի, որ իւր ազգի ազատութեան կը զոհվի...:

Այդպես էր այն բարձր տրամադրութիւնը, որ ճնշեց և տապալեց դաւաճանութիւնը:

Երբ խռովարարները խզել էին Կարսի և Երևանի միջև հեռագրական կապը, Աղբալեան և ես մի երկու անգամ օգտվեցինք րադիօից, որ նոր նոր էր կազմակերպվում: Բայց ռադիօն գեներալների ձեռքումն էր և յետոյ պարզվեց, որ նրանք ուշացնում էին մեր հեռագիրների առաքումը, առաջ քցելով իրանց միտումնաւոր հաղորդագրութիւնները...:

Այդ բոլոր տվեալները առաջ բերեցին սառնութիւն գեներալների և կառավարութեան լիազօրի միջև:

Գեներալները ամբաստանեցին Երևանի առաջ Աղբալեանին: Աղբալեան բողոքում էր դրութեան դէմ և տանելի չէր գտնում զօրաց այդ հրամանտար կազմը: Բայց կառավարութիւնը, մի ֆիկցիա միայն Ռուբէն փաշա և գեն. Ախվերդօվի ձեռքում, ուշադրութիւն չը դարձրեց և Աղբալեանի պահանջների վերայ և նա ստիպված է թողնելու Կարսը որպէս լիազօր առանց իրաւունքների...:

Այդպէս վերջացան Կարսի նահանգում այդ «առանձին լիազօրութիւնները»:

Պէտք չէ ասել այստեղ, որ բարձր կառավարութեան այդօրինակ երկդեմի և երերուն ընթացքը չէր կարող հիմայք ստեղծել իշխանութեան շուրջը: Այդ տարուբերվող և ինտրիգ իր բնոյթում գործելակերպը միայն խախտում էր երկրի հաւատը դէպի օրէնքի անաչառ և անկործան իմաստը և յիմքում երերում էր պետութեան իրաւակարգը:

Պարլամենտի մի մեծ խմբակցութիւն, որ եկել էր և Կարսի նահանգը, եկել էր առանց որոշ նպատակների, առանց որոշ ծրագրի, ցուցմունքների և գործելու դրական տվեալների: Պարլամենտի անդամները իրանք էլ չը գիտէին թէ ի՞նչ պէտք է անեն:

Նրանք միայն ընդհանուր շփոթ էին առաջ բերում իրաւունքների և պարտաւորութիւնների մթնոլորտում, անիմաստ զբաղեցնում էին տեղիս պաշտօնէութիւնը և այդ պաշտօնեաները չը գիտէին ո՞ւր է մեծը և ո՞ւր է փոքրը, որին պէտք է զեկուցել, որից հրաման և հրահանգ ստանալ և որին պէտք է լսել և ո՞ւմ հնազանդվել...: Պարլամենտի անդամը, այն էլ նոցանից խելօքը և դրականը, ուժեղ է այնտեղ, պիւպիտրի առաջ, պարլամենտի, դահլիճում: Իսկ այստեղ, գաւառում, ուր պետք է գիտենալ կեանքը, երկրի անցուդարձը և գէթ մի փոքր օրէնքներ, հասարակական այդ գործիչը դարնում է մի ողորմելի թիւրիմացութիւն: Նորա փափուկ դրութիւնը այդ առանցքում խախտում է իշխանութեան հմայքը երկրում և եթէ երէկ երկիրը ակնածում էր դէպի բարձր կառավարութիւնը, իր աչքով տեսնելով այդ անզօրութիւնը, նա այլևս ոչ սպասում է նորանից և ոչ ակնածում...:

Այդպէս է այդ դրութեան հոգեբանութիւնը: Անցնելով նոր կառավարութեան կուրսի միուս ծեռք առանց միջոցներին, մենք կանգ կառնենք արտակարգ դատարանների վերայ: Երբ թերի, վայրիվերոյ կարգադրութիւնը առաջ է գալիս վարչական ադմինիստրատիւ շրջանում, մենք սովոր ենք կամ անուշադիր, կամ ներողամիտ լինել: Բայց երբ թէժ, կամ գէթ ոչ յիմնաւորված դրութիւնը հրատարակում է դատաստանական իշխանութիւնը, այդ արդէն խախտում է երկրի արդարադատ սպասելիքները: Եւ այդպիսի մի ներածութիւն էր արտակարգ դատարանը:

Ես առհասարակ կողմնակից չեմ «արտակարգ» և աւելի աղմկող, քան թէ կերտող միջոցների: Ես երկար տարիների ընթացքում դեգերել եմ մեր գաւառներում, երկար պաշտօնաւորել, դիտել եմ կեանքը նրա բազմատեսիլ պատկերներում, ինքս ենթակայ և իշխող եղել և պէտք է ասեմ, որ արտակարգ միջոցները երբէք չեն տվել դրական յետևանքները: Մենք արդէն տեսանք, թէ ի՞նչ դրութեան մէջ էին մեր դատաստանական յիմնարկութիւնները: Այդ ատեանները միայն մի թիւրիմացութիւն էին մեր կառավարչական օղակների շրջանում և ոչ օրէնքի սրբատեղի: Եւ այդ շաբլօնով ու նոյն անհոգութեամբ թխվեցին և արտակարգ դատարանները: Ի՞նչ էր նրա իրա-

ւասութիւնը, որտե՞ղ էին այն օրէնքները, որոնցով պէտք է ղեկաւարվէր այդ դատարանը և թէ ինչպէ՞ս պէտք է կազմակերպվէր նա, այդ ոչ ոք չը գիտէր: Դատարանի կազմի համար մենք մարդիք չունէինք դատարանը միջոցնէր չունէր: Այս և այն պատահական մարդիք հրաժարվում էին պաշտօնաւարելուց, արդարադատութեան մինիստրութիւնը պարտաւորութիւն չէր համարում նոյնիսկ պատասխանելու այտակարգ դատարանի նախագահին, նրա նոյնիսկ հեռագրական հարցապնդումներին: Եւ դրութիւնը բնորոշելու համար բաւական է ասել, կարծեմ, որ արտակարգ դատարանի նախագահը փող էր մուրում նահանգապետից դատարանի ընթացիք ծախքերի համար...: «Արագ» և «խիստ» յիմունքների վերայ հղացած այդ դատարանը բեռնաւորվեց բոլոր տեսակի գործերով, դարձաւ գործերի պահարան, բայց ոչ կեանքի և ընթացող պահանջների բաւարարող հաստատութիւն: Նա ևս դարձաւ մեր միուս դատաստանական յիմնարկութիւնների պէս մեր պահանջների և դիմումների անկեալանոց և նա արմատում խախտեց արտակարգ դատարանի իմաստը:

Ես չեմ ուզում արդէն ծանրանալ, որ այդ դատարանի անձնական կազմը շատ և շատ անբաւարար էր: Չը կար ցայտուն, անյաղթող օրէնք, չը կար վճռական և անկախ դէմի և այդ առանցքում չէր կարող կոպվել արտակարգ վճիռը և այդ արտակարգ դատարանը չէր կարող սանձահարել ըմբոստ և ապստամբ տրամադրութիւն:

Կարսի արտակարգ դատարանի նախագահ Մդիվանեան, իրաւաբան, մի շատ ազնիւ, շիտակ, անաչառ և առաջադիմական դէմք, չէր կարող իհարկէ, մի ձեռքով ծափ տալ: Նա առանց հրահանգների էր, առանց աշխատակիցների, առանց նիւթական միջոցների և առանց, որ գլխաւորն է, հեղինակաւոր բեկանող ատեանի: Բաւական է ասել, որ պրօկուրօրի պաշտօնի համար մարդ չէր գտնվում և նախագահը ստիպված էր ընդունելու այդ մեծ և պատասխանատու դերի համար մի հայ երիտասարդի, որ ոչ միայն ոչ մի բառ հայերէն չը գիտեր, այլև ոչ մի գաղափար չունէր հայ կեանքի և հայ վերապրումների մասին:

Իսկ երկիրը, որ սկզբից այնպէս ակնածեց և այնչափ սպասեց այդ դատարանից, և այստեղ խաբվեց իր սպասելիքներում: Մեր դատաստանական միուս հաստատութիւնները, որոնք առանց այն էլ կիսակենդան էին, կորցրեցին արտակարգ դատարանից յետոյ իրանց բոլոր նշանակութիւնը: Եթէ իրաւասութեան սահմանը առհասարակ շատ ճկուն և առաձգական հասկացողութիւն է այդ խնդրի շուրջը կուտակվել է …*[տեքստի խզում]*

…իշխանութեան համարումը և փոխանակ ոյժ և կշիռ տալու եղած մարմիններին, մենք այդ հաւելվածներով երերում էինք մեր առանց այն էլ ոչ կայիւն դրութիւնը:

Չը կար պետական սիստեմ, չը կար պետական հատվածների ներդաշնակութիւն, մենք չէինք լրացնում իրարու, մենք բացառում էինք իրար: Մենք չունէինք յատուկ խուզարկու մարմիններ՝ ադմինիստրացիայի այդ առաջընթաց օրգանը, իսկ եղածներն էլ այնչափ անգոյն, այնչափ ողորմելի էին, առանց միջոցների և առանց խիստ և անսասան հրահանգների, որ ոչ նշանակութիւն չունէին պետական նպատակներում:

Մենք ոչ մի տեղեկութիւն չունէինք, թէ ի՞նչ է կատարվում երկրի ներսում, մենք միջոցներ խնայեցինք այդ մեծ և կարևորագոյն գործի կազմակերպութեան համար և չունեցանք տեղեակ և լուրջ ադմինիստրացիա: Իսկ երբ այդ երկրի ներսում, առանց ծխի, բռնկվեց հրդեհը, մենք արտակարգ դարանով ուզեցինք այդ բոցը հանգցնել: Եւ հազիւ թէ պետք է ասել, որ այդ դատարանը, առանց լրացուցիչ բազմաթիւ պայմանների, որ կառավարչական ապարատ է կոչվում, պէտք է սնանք լինէր իր կոչումում: Եւ այդ առանցքում արտակարգ միջոցների դիմելով մինիստրներ ուղարկելով գաւառ, պարլամենտի անդամներ և արտակարգ դատարաններ յիմնելով, մենք միայն աղմկեցինք հրապարակը, բայց ոչ լուծեցինք պետական երկունքը: Բազմաթիւ պաշտօնեաներ, լիազօրներ, ներկայացուցիչներ և նոցա յարմարվող սիրողներ միայն ի ծայր շփոթեցին դրութիւնը և անիշխանութեանը նոր ծաւալ տվեցին:

Եւ ես մէկն էի նոցանից, որոնք բողոքում էին այդ արտակարգ դատարանի դէմ և պահանջում վերացնել այդ թէժ օրէնսդրութիւնը:

Այդ հաստատութիւնը չը տվեց սպասած դրական հետևանք, նա խախտեց և երերեց և միւս դատաստանական հաստատութիւնների նշանակութիւնը: Իսկ այդ մթնոլորտը չէր կարող դաստիարակել երկրում արդարադատ զգացմունք և չէր կարող դարբնել պետական իրաւակարգը:

Այդ օրերերում ասում էին, որ Կարս պէտք է արդարադատութեան մինիստր Չիլինգարեան: Ես պատիւ չունէի ծանօթ լինելու նորա հետ, ես կարդացել էի նորա մի քանի շատ սահուն և գրական ճաշակով յօդվածները «Յառաջ» լրագրում և տրամադիր էի կարծելու, որ մենք կարող ենք նորա հետ համաձայնութեան գալ մեզ երկուսիս մեծ չափով հետաքրքրող խնդիրների մասին:

Բայց մինիստրը մի օրով, կարծեմ, եկել էր Կարս իմ քաղաքից բացակայ ժամանակ, ես այնուհետև հնարաւորութիւն չունեցայ տեսնվելու նորա հետ: Ես կարծում էի, Կարս վերադառնալով, որ գրասեղանիս վերայ կը գտնեմ մինիստրի այցետօմսը: Գէթ այդպէս է աշխարհիկ և քաղաքական անվիճելի էտիկէտը: Բայց հայկական մինիստրը անախրօնիզմ համարելով, երևի այդ ամենուրէք ընդունված քաղաքաւարութեան ակտը, աւելորդ էր պատվելու հայ նահանգապետին:

Եւ ես չեմ կարող չաւելացնել այստեղ, որ այդ այցետոմսների իմաստը, բացի քաղաքաւարութեան էտիկետից, ունի և պաշտօնական պրիստիժի նշանակութիւն: Մինիստրը, այն էլ օրէնքների պահապանը, պարտաւոր էր գիտենալ, որ կառավարութիւնը պէտք է ընդգծի իր վերաբերմունքը դէպի իշխանութեան ներկայացուցիչը նահանգում:

Այդ փոքրիկ և անմեղ գծերում պարփակվում է իշխանութեան մեծ գաղտնիքը և երկիրը, որ սիրում է դիտել աշխարհի անցուդարձը, չը վրիպեց, իհարկէ, նկատել այդ միջանկեալը...: Բայց արդարադատութեան մինիստրի այցը Կարսի նահանգը չը լուծեց ոչ արտակարգ դատարանի շատ փափուկ դրութիւնը և ոչ բազմաթիւ այլ դատաստանական և իրաւակարգային խնդիրներ, որոնք այնչափ կարօտ էին իրաւասու հեղինակութեան: Մինիստրը, երևի, ունէր աւելի քաղաքական միսիա: Որպէս դաշնակցական, նա կուսակցական տեսակցութիւն և խորհրդակցութիւն ունեցաւ Կարսի «ընկերների» հետ, թողնելով դատաստանական գործը երկրում աւելի պատեհ, երևի, օրերի... այդպէս էր «ուժեղ» իշխանութիւնը Մայիսեան օրերից յետոյ:

Մի քանի բնորոշումներ լրացնելու համար և ի նկատի ունենալով մեր օրերի առանձնակի հոգեբանութիւնը, մենք ստիպված էինք երբէմն խախտելու մեր յիշողութիւններում ժամանակագրութիւնը:

Այս և այնտեղ առաջ բերելով փաստեր, նկարագրութիւններ և այդ առանցքում մեր դիտողութիւնները, մենք գերադասում ենք տպաւորութիւնների ամբողջութիւնը: Այդ յիմունքներով մենք թոյլ ենք տալիս մեզ դասաւորելու մեր յիշօղութիւնները երբէմն ոչ այնքան ժամանակագրական ուղղութեամբ, որքան հոգեբանական և ընդհանուր հասկացողութիւնների իմաստով: Մայիսեան օրերը հետաքրքիր են ոչ միայն իրանց հռավառ բռնկումօվ և ապա ազգային շատ բարձր տրամադրութեամբ, այլև որպէս չարագուշակ ազդանշան, որ այդչափ ճակատագրական էր մեր երկրի համար: Ժամանակի իմաստով, երևի, պէտք է ուշագրաւ համարել, որ մեր կառավարութիւնը չկարողացաւ ճշտօրէն վերլուծել բախտի այդ փորձնական նախազգուշութիւնը: Նա հրապարակ ծգեց իր կանխիկ բոլոր ոյժերը, բայց նա չըգտաւ այն ուղին, որ տանում էր դէպի լոյս և ազատութիւն: Ռեպրեսիաները և հալածանքը բռնակալ իրանց բնոյթում, երբէք չեն եղել վստահելի միջոցների շարքում: Նրանք ահաբեկել են, երբէմն հիացմունք առաջ բերել, ստեղծել են տպաւորութիւն, բայց այդ բոլոր պատկերները, որպէս լոյսը էկրանի վերայ, մարել, անցել են, թողնելով հրապարակը լուրջ միջոցների համար, որ պարփակում է իր մէջ ոչ անցողակի տրամադրութիւն, այլ կեանքի անողոք պահանջները, իր բոլոր դրական և բացասական կողմերով: Մեր այդ առիթով անսիստեմ և անյետևողական գործելակերպում, մենք աչքաթող

արեցինք մեր բանակը: Իսկ այդ բանակը արդէն թունաւորված էր և գնում էր հակաազգային ճանապարհով: Հրամանատար կազմը, ռուս գեներալներն ու գնդապետները և նոցա *aetezeqo* ռուսախօս հայ սպաները մի առանձին աշխարհ էին, մեր երկրում: Նրանք անցողակի էին համարում «հայկական կառավարութիւնը» և մեզ վերայ վերևից ներքև նայելով, արհամարհում էին մեր սուվերեն իմաստը և մեր ազգային բնոյթը *morai ton* համարում...:

Իր հոգու խորքերում, այդ գեներալներից և գնդապետներից ամեն մէկը փայփայիմ էր վերստին ռուսերեն հրամանատարելու երազը և շնչասպառ յետևում էր Ռուսաստանի անցքերին: Թէ ո՞վ կը տապալվի այնտեղ և ո՞վ կը հաղթէ, այդ նորան հետաքրքրում էր, իհարկէ, այս և այն չափով, բայց և այնպէս նա տրամադիր էր նորից ընկնելու ռուս մեծ օվկիանոսը, ուր կարիք չէր լինի ոչ հայ լեզվի և ոչ հայ պատմութեան...: Այդպէս էր մեր հրամանատարութեան հոգեբանութիւնը Մայիսեան օրերում:

Երբ Աղէքսանդրապօլի զինվորական խլրտումները անդրադարձան Կարսի նահանգը, այդ հակազգային և հակապետական շարժման գլուխը կանգնեց գեներալ Յովսեփեանի թիկնապահ վաշտը: Կարգը վերականգնելուց յետոյ, պարզվեց, որ այդ խռովութիւններին մասնակից էր գեն. Յովսեփեանի ամենամօտ ադիւտանտներից մէկը, ռուս գլխապետ Կուտիրօվ: Կարսի արտակարգ դատարանը նորան պատասխանատվութեան կոչեց, գեներալ Յովսեփեան թափեց իր բոլոր հնարագիտութիւնը մի կերպ ազատելու իր մտերմին և արտակարգ դատարանը ստիպված էր մաքառելու այդ ոչ միայն ակնյայտնի, այլև ծպտեալ դաւաճանների դէմ...: Անտեսանելի ձեռքերը այդ դատում այնչափ շփոթել և խեղաթիւրել էին գլխապետ Կուտիրօվի դէմ, առաջ բերված մեղադրական տվեալները, որ արտակարգ դատարանը, հակառակ իր խորին համոզման, ստիպված էր միայն արձակելու այդ ռուս սպային պաշտօնից և աքսորել Հայեաստանի սահմաններից...: ...*[պեքսփի խզում]*

...Նորից անխուսափելի էին համարում և նորից հոլովում Ալ. Խաթիսեանի թեկնածութիւնը:

Թէ որչա՞փ անկեղծ էր դաշնակցութեան կամարիլիան դէպի նախկին պրեմիերը, չգիտեմ իհարկե, բայց մի բան ակներև էր գերիշխող շրջանները ոչ միայն հաշվի էին առնում Ալ. Խաթիսեանին, այլև բոլորում նորան իրանց կարևորագոյն խորհրդածութիւններում և հրատապ դէպքերում:

Այդ օրերում կառավարութիւնը, բիւրօն և Ալ. Խաթիսեան դռնափակ նիստ ունեցան և խորհրդածութիւնը յատուկ յանձնարարութեամբ շտապ ուղարկեց Ալ. Խաթիսեանին Թիֆլիզ: Նորա մեկնելուց յետոյ նորից հրապարակ եղաւ Քաջազնունու անունը, բայց յետոյ

ասում էին, որ նա վերջնականապէս հրաժարվում է կաբինետ կազմելու յանձնարարութիւնից և պրեմիերի աթոռը հրապարակում տարուբերվում էր Ալ. Խաթիսեանի և Վրացեանի անվան միջև:

Այդ դէպքերի առանցքում մեր և տաճկաց հրամանատարութիւնը 24 ժամվայ զինադադար էին կնքել, բայց որովհետև այդ կարճ ժամանակի ընթացքում հնարաւոր չեղաւ հաշտութեան բանակցութիւն կատարել մենք խնդրեցինք Կարաբեկիր փաշային երկարացնել այդ զինադադարը: Միջնորդութիւնը բաւարարվել էր և կառավարութիւնը յանձնարարեց ներքին գործոց մինիստր Սարգ. Արարատեանին անցնել Աղէքսանդրապօլ և տեսնվել տաճկաց հրամանատարի հետ Հաշտութեան կօնֆերանսի մասին նախնական բանակցութիւնների համար: Կառավարութեան, բիւրօի և պարլամենտի մի քանի անդամների մասնակցութեամբ կոնֆերանսը Աղեքսանդրապոլում խորհրդածութիւն կայեացաւ և որոշվեց այդ կօնֆերանսին մասնակցելու համար ուղարկել երեք հոգուց բաղկացած մի պատվիրակութիւն, ի դէմս նախագահ Ալ. Խաթիսեանի, պարլամենտի անդամ Շանթի և Կարսի նախկին նահանգապետ Ստ. Ղորղանեանի:

Այդ նիստից յետոյ ինձ մօտ անցաւ Ալ. Խաթիսեան և ասաց. Կառավարութիւնը, աչքի առաջ ունենալով Ձեր մօտ ծանօթութիւնը երկրի անցուդարձին, Արևելքի հոգեբանութեանը, Ձեր օրինական վերաբերմունքը դէպի թուրք ազգաբնակութիւնը և Ձեր հեղինակութիւնը, որոշեց առաջարկել Ձեզ մտնել այն պատգամաւորութեան կազմը, որին կը յանձնարարվի հաշտութիւն կնքել Թիւրքիայի հետ:

Կառավարութեան այդ թէ շատ բարձր և թէ շատ պատասխանատու ուշարդրութիւնը դէպի Կարսի նախկին նահանգապետի անձնաւորութիւնը թէ շատ պատվաբեր էր և թէ շատ ծանր ինձ համար: Եւ ես մեծաչափ և զգացված էի և ընկճված...:

Իմ առաջ նորից կանգնեց մեր տարի ու կէս անցուդարձը Կարսի նահանգում: Ես նորից տեսնում էի մեր թեր և դէմ պետական և կառավարչական գործունեութիւնը և ես չէի կարող բուռն կերպով չը համակվել այն իմաստով, որ անհասանելի են ճակատագրական որոշումները և պատմութեան անիւը դարձնում է իր պտոյտը, անվերաբեր դէպի մարդիք, նոցա իղձերը և տրամադրութիւնը...:

Ստացվեց թուրք հրամանատարութեան առաջարկը զինադադար կայացնելու Հաշտութեան կօնֆերանսի մասին:

Տաճկաց հրամանատարը կօնֆերենցիայի համար առաջարկում էր մեզ Երևանը կամ Աղէքսանդրապօլը: Հազիւ թէ պէտք է ասել, որ հայ ժողովուրդը տրամադիր չէր տեսնելու կօնֆերանսը իր մայրաքաղաքում, որոշվեց անցկացնել կօնֆերանսը Աղէքսանդրապօլում: Բախտի քմահաճոյքներից դափնիք հիւսողին և մենք համաձայնութիւն տվեցինք Աղէքսանդրապօլ գալու: Մինիստր

Սարգիս Արարատեան յատուկ գնացքով մեկնեց Աղէքսանդրապօլ, բայց վերջի կայեարանից մինչև Աղէքսանդրապօլ մինիստրը ստիպված էր ձիով անցնելու, որովհետև թիւրքերի ասելով, գիծը այդ տարածութեան վերայ փչացած էր: Բայց այդ իհարկէ թիւրքաց պատերազմական գաղտնիքն էր: Պ. Արարատեանին բերեցին ուղիղ Աղեքսանդրապօլի բերթը, ուր գտնվում էր թիւրքաց հրամանատարի շտաբը: Անկորաի զօրաւարը ընդունեց մեր մինիստրին երեկոյեան դէմ, իսկ ունկնդրութիւնը վերջացաւ լուսադէմ միայն:

Կարաբեկիր փաշան կշտամբեց մեր ներկայեացուցչին, որ հայկական կառավարութիւնը …*[տրեքստի խզում]*

…այդ յանձնարարութիւնը Վրաստանի նվաճման նախօրեակում: Իսկ մի քանի օրից, երբ ռուս զօրաբանակը նվաճեց և Վրաստանը, գեն. Յովսեփեան, ամօթ կորցրած, կարմիր ռուս սաղաւարթը գլխին մի քանի հայ զօրամաս բեկորների գլուխ անցած, յաղթական մտաւ Թիֆլիզ...:

Թիֆլիզում հայկական զօրամասի մուտքը օրվայ նորութիւնն էր: Վրաց հասարակութիւնը, շատ հասկանալի պատճառներով արհամարհորէն և վրէժալից երես էր դարձնում այդ անկոչ հիւրից, իսկ պարտված հայիւթիւնը, ամօթից խանձված, նոյնպէս խորշում էր այդ զօրամասերից...:

Իսկ թշվառ աբարանցին, անվերաբեր դէպի այդ փափուկ մթնոլորտը, երգում էր անհոգ Թիֆլիզի արվարձաններում.

«Աղչի, բախտաւոր
Երնեկ քու սերին,
Քո սարի սովոր
Սև-սև աչքերին...»:

Դժվար էր երևակայել աւելի մեծ հոգեբանական տանջանք: Ոտնահար հայրենիք, բռնաբարված կամք և իրաւունք, փշրված յոյսեր և նորից երազներ ու նորից թախիծ...:

Եւ զուգընթաց մեր բոլոր զգային ցաւերի, մեր մարած տրամադրութեան, մենք տեսնում էինք հայ զօրամասեր և այն էլ Թիֆլիզում, բայց չէինք լսում մեր հայրենիք...:

Չորս ամիս առաջ հայկական անվանի բանակը, որին հաշվի էր առնում ոչ միայն տաճկաստանը, այլև նորա դաշնակից ռուսները, հնարաւոր չը համարեց պաշտպանել իր հայրենիքի սահմանները: Նա մոռացաւ 18 թվի կոտորածը, սովը, պանդխտութիւնը, մոռացաւ իր դարաւոր դատը, իրականացած երազները և խաբված իր կարծեցեալ բարեկամներից, նա թողեց իր դիրքերը, չը կռվեց ու նահանջեց…:

Եւ այսօր, կորցրած ամէն բան, մուրացկան օտարի դռներում, առանց հայրենիքի և իշխանութեան, բայց ռուս կարմիր սաղաւար-

թը գլխին, այդ այլասեռ և ապականված հայը գալիս էր օտար հորիզոններում նախատինք և ամօթ վաստակելու...։

Առանձնակի ջղեր էր պէտք անվերաբեր դիտելու հրապարակը, ուր գաղափարը, սրբութիւնը և իդեալները կարծես իջել էին իրանց հմայիչ բարձրութիւնից, ուր մարդիք ծաղրում էին իրանց ամենանվիրական հաւատալիքները և ուր չը կար այլևս ամօթ, պատկառանք և ազգային այն մեծ կորովը, և տրամադրութիւնը որ կրթել է սերունդներ և պատմութիւն ստեղծել...։ Ես պատահմամբ անցնում էի փողոցով, երբ գալիս էր հայկական այդ գումարտակներից մէկը, ես լսեցի՝ «Աղջի բախտաւոր» ծանօթ և հմայիչ մեղեդին...։

Եւ ինձ տիրեց մի այնպիսի խռովութիւն, որի նմանը ես չեմ յիշում 50 տարվայ ընթացքում...։ Իմ առաջ նորից վերականգնեց մեր ամբողջ անցեալը, ես կարծես դարձեալ իմ հայրենիքումն էի։ Որպէս նահանգապետ, ես կարծես դարձեալ ներկայ էի մեր զօրահանդէսին, զինվորական պատիւ էի ընդունում և տալիս մեր զօրամասերին և իմ հոգու խորքերում նորից բռնկվեց սուվերեն և իշխանալից տրամադրութիւն...։

Փողոցում կուտակվում էր պատահական ամբոխը այդ նորեկ զօրամասը տեսնելու, իսկ ես ի ծայր ճնշված և յուզված, նետվեցի դէպի այլ փողոց, որպէսզի չը տեսնեմ և չը լսեմ, բայց թէ ճակատագրական և թէ հոգեբանական մեծ տեսիլ պէտք է համարել, որ երբ խեղճ հայ զինվորը, հալածված բախտից և անտարբեր դէպի քաղաքական դժոխը, հմայիչ երգում էր «Քո սարի սովոր», «Անուշ»-ի հռչակաւոր հեղինակը, ռուս զօրքի գլուխ անցած, գնում էր Երևան...։

Որպէս հեղինակաւոր և անվանի հայ, նա գնում էր համօզելու հայիւթեանը նորից խոնարհվել ռուսի առաջ և իր դայլալիքների հմայիչ առանցքում նա ուզում էր թմրեցնել իր հայրենիքի խիզախ ազատակիր ձկտումները...։

Ճակատագրական և ուշագրաւ էր, իհարկէ, որ հայկական լեռների այդ կախարդ աշուղը չայցելեց իր հայրենիքը նորա ազատակիր ու անկախ օրերում։ Մեր արձակ տրամադրութիւնների երգիչը պատիւ չարեց Հայկական հանրապետութեանը։ Նա երեսուն տարի շարունակ սիրասուն երգեց մեր երազների խորքերից, նա տրամադրեց և դաստիարակեց սերունդներ և երբ այդ տրամադրութիւնների երկունքը առաջ բերեց մեր անկախութիւնը, մեր վաստակաւոր բանաստեղծը զլացաւ իր ներկայիւթեամբ դիւթելու մեր սուվերեն և ինքնիշխան կորովը...։

Ոչ միայն զարմանալի, այլև անբացատրելի է, իհարկէ, որ մեր անվանի գրողը գէթ մի անգամ չայցելեց այդ միջոցում այն երկիրը, որի կատարներից նա այնպէս հմայիչ և այնպէս ընտանի շոյիւմ էր մեր իղձերը։

Եւ եթէ այն օրերում հայ աշխարհը օվսաննալից կընդունէր իր Մեծ քաղաքացուն, նորա ամբողջ ճանապարհով ազգային խունկ և հրճվանք ծխելով, այսօր նա գնում էր դէպի այն լացն ու կոծը, ուր նրա քնարը արդէն անզօր էր և ինքը անգոյն...:

Հայ երկիրը չը դիմաւորեց «Անուշ»-ի տաղանդաւոր կերտողին: Կեղեքված ու ահաբեկված, հայ գիւղացին, հայ ինտելիգենտը, երիտասարդութիւնը խելակորոյս փախչում էր անկոչ հիւրերից...: Յովհաննէս Թումանեանի հռչակը բլեց մեր քաղաքական անկախութեան հետ միասին և լեռների այդ մեծ ջութակահար հանդիպեց իր հայ հին աստվածները, երկրի համար մնաց մի մեծ հոգեբանական գաղտնիք:

Մի բան միայն ակներև էր հայ աշխարհի համար չը կար այլևս Յովհաննէս Թումանեանի մեծ հեղինակութիւնը: Մնում էր «Անուշ» և «Սաքօն», բայց անջատ նոցա տաղանդաւոր կերտողից և որպէս միայն նվիրական ժառանգութիւն հայ երկրի և հայ ժողովրդի...:

Եւ այդ մեծ, բարի հոգեբանական տեսիլով, պատմութիւնը փակեց այն մեծահռչակ շրջանը, ուր ապստամբված հայ աշխարհը ընկաւ ռուս սվինների ջախջախիչ հարվածների տակ...: Ժողովրդի սէրը դէպի իր հայրենիքը և նրա մեծ կորովը դէպի ազատակիր ապագան...: Այդչափ անողոք է բռնի ոյժը և այդպէս, դեռ չը ծաղկած, թառամեց մեր անկախութիւնը:

Հայոց հանրապետութիւնը ընկաւ, բայց կեցցէ հայ պետութիւնը...:

Միուս օրը, հայ ժողովրդի և հայ տրամադրութեան բացակայիւթեամբ, Երևանի ակումբում տօնվեց Հայեաստանի երկրորդ անկումը: Գեներալ Յովսէփեան և գնդապետ Միրիմանօվ, երկրին խորթ և թշնամալից ծափերի տակ, պարգևատրվեցին ռուս կարմիր շքանշաններով: Առաջինը՝ Լոռու գաւառում վրաց իշխանութեան դէմ ապստամբութեան սիմուլիցեաի համար և Վրաստանի նվաճման առիթով, միուսը, որ ռուս ջարդարար գլուխն անցած, որպէս կեսար, հաղթական Երևան մտաւ, Հայեաստանի պարտութեան առիթով...:

Ծաղր էր այդ, թէ բախտի քմահաճ պատկեր, գեներալը և գնդապետը ստացան այդ ռուս շքանշանները մի ինչ-որ վրացու ձեռքից...:

Այդպէս էր ռուս ինտերնացիօնալ ապօթեօզը:

*ՀԱԱ, Ֆ. 477, ց. 1, գ. 18, թթ. 1-50, 53-62, 72-86, բնագիր, ձեռագիր*

## II.2. Բանակային միջավայր

Առաջին հանրապետության բանակն սկսեց կազմավորվել փաստորեն հայկական անկախ պետականության հռչակումից ավելի շուտ՝ դեռևս 1917-ի վերջերին, երբ Ռուսաստանում տեղի ունեցած հոկտեմբերյան հեղաշրջումից հետո ռուսական զորքը թողեց կովկասյան ռազմաճակատը, և նրա մի զգալի հատված՝ մոտ 400կմ պետք է պահեր հայկական ազգային զորամիավորումը՝ հայկական կորպուսը: Հայկական զինուժը թեև թշնամու գերակշռող ուժերի ճնշման տակ Երզնկայից նահանջելով հասավ մինչև Երևան, բայց անկախ պետականության հռչակումը դիմավորեց, կարելի է ասել, «դրական հաշվեկշռով»: 1918-ի մայիսին հայկական բանակը ոչ միայն կասեցրեց թուրքերի առաջխաղացումը, այլև հակահարված տվեց թուրքական զինուժին: Հայկական բանակը 1919թ. նույնպես դիմավորեց ռազմական հաջողությամբ՝ պարտության մատնելով վրացական բանակը: Մուդրոսի զինադադարից հետո նրա կարևորագույն խնդիրն էր՝ ապահովել հայկական պետության կողմից տարածքների ձեռքբերումն ու նրանց հետագա պաշտպանությունը, իսկ Սան-Ռեմոյից ու Սևրից հետո՝ պարտադրել իր հարևաններին ճանաչել հայկական պետության միջազգայնորեն որոշված տարածքն ու սահմանները:

Հանրահայտ փաստ է, որ այդ օրերին իր հարևանների համեմատ հայկական բանակը մի շարք չափանիշներով գտնվում էր, ինչպես կասեին, բավականին լավ «մարզավիճակում»: Սակայն... ընդամենը 1920թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին այդ բանակը շատ արագ բարոյալքվեց ու կազմալուծվեց և ի վերջո դադարեց գոյություն ունենալուց որպես այդպիսին:

Բանակի պարագայում մենք նույնպես ձեռնպահ կմնանք այդ ամենի պատճառները մատնանշելուց ու վերլուծելուց, այլ կրկին կներկայացնենք փաստաթղթեր, որոնք, հուսով ենք, հնարավորություն կտան ընթերցողին որոշակի պատկերացում կազմել այդ օրերին հայկական բանակում ամբողջապես և Ալեքսանդրապոլ-Կարսի զորախմբում մասնավորապես ծավալվող գործընթացների և տիրող իրավիճակի մասին: Եվ տվյալ դեպքում էլ փաստաթղթերում փորձենք գտնել պատասխանը այն հարցի, թե արդյոք հայ քաղաքացին ու գյուղացին, հայ հրամանատարն ու հասարակ զինվորը այդ օրերին արեցի՞ն իրենցից կախված ամեն ինչը, որպեսզի տեղի չունենար այն աղետը, որի անունն է «ԿԱՐՍ»:

Թերևս այդ ամենի մեջ առանձնակի պետք է նշել Դրոյի գլխավորած Սուրմալուի զորաջոկատը, որը ոչ միայն չպարտվեց, այլև 1920թ. աշնան կատաստրոֆիկ այդ օրերին թուրքերից ամբողջապես մաքրեց և իր վերահսկողությունը հաստատեց Սուրմալուի ամբողջ գավառում: Բայց... Առաջին հանրապետության համար հիմնական ու բախտորոշ իրադարձություններն այդ օրերին ծավալվում էին Կարսի ստրատեգիական ուղղությամբ:

## No 80
## ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ԶԵԿՈՒՅՑԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ
*Անգլիական բանակի գնդապետ Ռոլենսոնի հետ ունեցած հանդիպման մասին*
*(12 հուլիսի, 1919թ.)*

12 іюля 1919 — Секретно

№2267 — ПРЕДСѢДАТЕЛЮ СОВѢТА МИНИСТРОВЪ.

Сегодня прибылъ изъ Эрзерума на трехъ автомобиляхъ Англійскій полковникъ Роленсонъ. Онъ видѣлся со мною и Генералами Пирумовымъ и Осепьянцемъ. Разоруженіе турецкихъ войскъ Эрзерумскаго района поручено комиссіи изъ трехъ: Генералу Бичу, ему и Кязимъ-пашѣ. Это вооруженіе и снаряженіе будетъ отправляться на Батумъ и дальше на Галиполи. Частъ груза уже въ вагонахъ, но путъ около Зивина въ предѣлахъ Турціи испорченъ и ремонтъ будетъ законченъ въ теченіи неділи. Полковникъ Роленсонъ, просилъ отпустить для турецкихъ паровозовъ три вагона дровъ изъ Сапыкамыша, что я и распорядился сдѣлать. Вмѣстѣ съ тѣмъ онъ просилъ, для быстроты вывоза вооруженія, чтобы поѣздъ съ грузомъ изъ Сарыкамыша шелъ въ Батумъ, а въ Санаинѣ по его распоряженію, грузинскія власти подадутъ намъ паровозъ съ такимъ же числомъ вагоновъ. Эти поѣзда, подъ англійскимъ флагомъ, будутъ сопровождатъ два турецкихъ офицера. Затѣмъ полковникъ Роленсонъ интересовался вопросомъ разоруженія нами населенія. Я пояснилъ, что массоваго разоруженія мы не производимъ, но отбираемъ оружіе въ каждомъ отдѣльномъ случаѣ, если кто не имѣетъ письменнаго на что разрѣшенія. Этотъ англійскій офицеръ выѣхалъ сегодня въ Кагызманъ, Каракуртъ, оттуда въ Сарыкамышъ и затѣмъ побываетъ въ Ардаганѣ, Мерденекѣ и, думаю, въ Ольтахъ. По отзыву полковника Роленсона, онъ хочетъ видѣть всѣ эти мѣста и народъ по порученію союзниковъ. Я и наше командованіе распорядились, чтобы ему была оказана торжественная встрѣча, вниманіе и почетъ.

По отзывамъ переводчика /еврея/, полковникъ Роленсонъ- туркофилъ.

ГУБЕРНАТОРЪ — *ստորագրություն*
За Правителя Канцеляріи — *ստորագրություն*
Дѣлопроизводитель — *ստորագրություն*

*ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 353, թ. 1 և շրջ., պատճեն, մեքենագիր*
*Գրված է Կարսի քաղաքացիական նահանգապետի՝ հայերեն և ֆրանսերեն լեզուներով դրոշմակնիքով պաշտոնաթերթի վրա:*

**No 81**

ԿԱՂԶՄԱՆԻ ԶՈՐԱՄԱՍԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ ԶԵԿՈՒՅՑԸ
ԿԱՐՍԻ ԶՈՐԱՋՈԿԱՏԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻՆ
*Անգլիական բանակի գնդապետ Ռոլենսոնի*
*հետ ունեցած զրույցի մասին*
*(հուլիս, 1919թ.)*

КАРСЪ НАЧАЛЬНИКЪ ОТРЯДА

Копія Карсскому Губернатору и Командиру 1-го .....
Роленсонъ частной бесѣдѣ говорилъ. Ольти даемъ Армянамъ. .... Тельность еще не рѣшена. Конференція кончится черезъ мѣсяца три и можетъ вынести много неожиданныхъ рѣшеній, но для чего Вамъ вилаеты, если у Васъ нѣтъ войскъ занять свою теперешнюю территорію. Мусульмане не пропустятъ Васъ добровольно, а силы у Васъ нѣтъ. Чтобы держатъ всю въ своихъ рукахъ нужно имѣтъ большія силы. Мы не жандармы чтобы для другихъ наводить порядокъ. Если Вы займете вилаеты, то черезъ мѣсяца три у Васъ будетъ сумбуръ, группы турокъ курдовъ и всѣ они не признающіе Вашей власти. Зачѣмъ пускаете молоканъ эту чуму разносящую большевизмъ, такъ не строятъ государство. Вѣроятно Батумъ будетъ интернаціональнимъ въ немъ Ваше спасеніе,проводите дорогу черезъ Ольты Чорохъ, а Трапезундъ Вамъ будетъ стоитъ большихъ денегъ, которыхъ у Васъ естъ ископаемыя богатства, разрабативайте ихъ сами, а отъ насъ помощи матеріальной не ждите у насъ много долгу и есть обязательства передъ семьями убитыхъ и раненыхъ. Мы слѣдимъ за точнымъ исполненіемъ Турціей условій перемирія и за Вашей жизнеспособностью. Знайте мира съ Австріей, Турціей и Болгаріей еще нѣтъ. Мы будемъ вывозитъ все вооруженіе изъ Турціи въ Галлиполи, гдѣ и будетъ все сложено. Скоро всѣ непокорные Вамъ мусульмане уйдутъ въ Турцію. Можетъ быть не дождутся даже рѣшеній конференціи. Если Россія возродится, конечно она вернется къ своимъ границамъ. Мы считаемъ турокъ пока еще врагами и не довѣряемъ имъ. А Вамъ лучше сосредоточитъ свое вниманіе на Карсской области и Эриванской губерніи. Вчера во время объѣзда города, изъ дома высыпала родня недавно неизвѣстно кѣмъ убитаго около Паслы Асланбекова и выбросивъ окровавленную одежду, просилы защиты отъ армянъ. Ролленсонъ страшно возмутился, что они не обращаются за помощью армянскому Правитесльству и буквально гонялся на лошади по площади за жалобщиками. Курдъ Гасанъ-бекъ Маммадиновъ Кетакѣ заявилъ, что армяне мусульманъ не обижаютъ но просилъ Діарбекирѣ Битлисѣ курдскую самостоятельность. Мѣстные мусульмане сѣтовали что берутъ для милиціи обывательскихъ лошадей. Ролленсономъ ѣздитъ Англійскій солдатъ переводчикъ Армянинъ страшный наглецъ и нахал приходилосъ его осаживать. Бесѣду вели Подполковникъ Шагубатовъ и Помощникъ Начальника участка Исаевъ по французски. По словамъ армянъ, мусульмане не вѣрятъ, что онъ отъ конференціи и говорятъ, что онъ армянскій наемникъ, такъ убѣждаетъ покоряться армянамъ.

Отношеніе къ армянскому народу съ высока, насмѣшливо къ чаяніямъ самостоятельной единой Арменіи. Вначалѣ держался нѣсколько чванно, но затѣмъ сдалъ позицію велъ милую бесѣду. Все говорилъ какъ частный человѣкъ и свои собственные взгляды. Впечатленіе воспитанный умный и веселый господинъ. Благодарилъ гостепріимство, сердечно прощался. Поѣхалъ Сарыкамышъ, но около Кагызманскаго моста свернулъ къ Сарибулаху. Наканунѣ ѣздилъ туда, никого не видѣл настойчивость заставила снова попытаться.-
Начальникъ Кагызманскаго Отряда Подполковникъ *ստորագրություն*
Вр. И. д. Начальника Кагызманскаго Округа Поручикъ *ստորագրություն*

*ՀԱԱ Ֆ. 200, ց. 1, գ. 353, թ. 8, պատճեն, մեքենագիր*

## No 81-82
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՄԻՆԻՍՏՐԻՆ ՀԱՍՑԵԱԳՐՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐ

*Կարսի կայազորի պետ գեներալ Փիրումյանը տեղեկացնում էր երկրի ղեկավարությանը, որ անգլիացիները Կարսում եղած զենքն ու զինամթերքը չեն տրամադրում հայկական զորամիավորումներին, այլ ուղարկում են դենիկինյան բանակին*
*(7-8 օգոստոսի, 1919թ.)*

Копія шифрованной телеграммы изъ Карса Генмаіора ПИРУМОВА от 7 августа No 0175 на имя Военмина: “Разговорѣ британский представитель далъ понять, что для вооруженія крѣпости пушки можно взять только с разрешенія англичанъ точка Прошу срочнаго указанія точка
0175 7 августа Генмаіор Пирумовъ
Вѣрно: За помощника Начальника Отдѣленія
Штабс-Капитанъ *ստորագրություն*

Въ Британскую Военную Миссію в Эривани спешно секретно
Прошу Вашего распоряженія Вашему Прѣдставителю въ Карсѣ о разрешеніи вооруженія крѣпости Карсъ орудіями, имѣющимся в Карсѣ.
Военный министръ Генералъ-Маіоръ Араратовъ

“8” авг. 1919, No 350 За и.д. Начальника штаба причисл. къ Генштабу
Гор. Эривань Полковник Атаевъ
Начальник Отделенія Штабс-Капитанъ Демурянъ
ВЕРНО: За помощника Начальника Отдѣленія
Штабс-Капитанъ *ստորագրություն*
МИНИСТРУ ПРЕДСЕДАТЕЛЮ спешно секретно
Прошу Вашего содействия по получению разрешения английской миссіи на вооруженіе крѣпости Карсъ орудіями, имеющимся в Карсѣ.
За Военнаго Министра Генералъ-лейт. Силиков *ստորագրություն*

“8” августа 1919, No 351 За и.д. Начальника штаба

Гор. Эривань Полковникъ *ստորագրություն*
Начальникъ Отдѣленія Штабс-Капитанъ *ստորագրություն*

*ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 353, թ. 14, պատճեն, մեքենագիր*

Копія шифрованной телеграммы изъ Карса Генмаіора ПИРУМОВА от 7 августа No 0173 на имя Военмина: "Пріѣхали отъ Деникина два русскихъ офицера и англійскій капитанъ Твитчилъ чтобы вывезти изъ Карса пушки патроны пулеметы запятая видимо большом количествѣ точка опасаюсь остаться ни съ чемъ точка прошу указаній точка
0173 7 августа Генмаіор Пирумовъ"
Вѣрно: За помощника Начальника Отдѣленія
Штабс-Капитанъ *ստորագրություն*

МИНИСТРУ ПРЕДСЕДАТЕЛЮ спешно секретно
Ходатайствую о прекращеніи вывоза вооруженія крѣпости тѣм болѣе большого количества ибо мы сами безъ оружія и боевыхъ припасовъ
За Военнаго Министра Генералъ-лейт. Силиков *ստորագրություն*

"8" августа 1919, No 352 За и.д. Начальника штаба
причисл. къ Генштабу
Гор. Эривань Полковникъ *ստորագրություն*

Начальникъ Отдѣленія Штабс-Капитанъ *ստորագրություն*

*ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 353, թ. 13, պատճեն, մեքենագիր*

## No 83
## ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ՀԵՌԱԳԻՐԸ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ

*Թուրքական զինուժի 4-րդ բանակային կորպուսի չզինաթափվելու և մարտունակ վիճակում գտնվելու մասին*
*(11 օգոստոսի, 1919թ.)*

Копія Секретно Министру Внутреннихъ Дѣлъ от Карсскаго Губернатора отъ 11 августа 1919 года за No 719
Агентурнымъ свѣдѣніямъ четвертый корпус Шефки-паши мобилизованъ и лишь номинально объявленъ Турціей внѣ закона точка Раіонѣ Кагызмана наблюдается спѣшная уборка курдами хлебовъ курды говорят что торопятся уйти ибо турки будутъ наступать 705 Губернаторъ Коргановъ
Вѣрно: расшифровалъ Помощникъ
Директора Канцминвнутрдѣлъ *ստորագրություն*

*ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 353,թ. 15, պատճեն, մեքենագիր*

## No 84
## ԳԵՆԵՐԱԼ ՓԻՐՈՒՄՅԱՆԻ ՀԵՌԱԳԻՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻՆ
*Կարսի մարզում մահմեդականների ապստամբության նախապատրաստվելու մասին*
*(11 օգոստոսի, 1919թ.)*

Копія телеграммы Генмаіора Пирумова
отъ 11-го Августа за №0196 на имя Командарма.
Копія

По свѣдѣніямъ Полковника РОЛИНСОНА шестого Августа г. ЭРЗРУМ .... Нелегальная конференція въ которой принимали участіе Представители АЗЕРБАЙДЖАНА, ДАГЕСТАНА, КУРДИСТАНА Цѣлъ конференціи поднять на ноги все.... если будетъ объявлена независимость шести вилаетовъ. Пока Турецкіе офицеры инструктора и ... въ ихъ границахъ 14 года организуютъ мѣстнія силы и подвозятъ боевые припасы въ большомъ количествѣ точка Карсской области мусульмане спѣшно кончаютъ полевые работы мѣстами теперь не уходятъ въ горы укрѣпляютъ позиціи. Здѣсъ затишье передъ бурей точка
0198 11-го Августа Генмаіоръ ПИРУМОВЪ
Расшифровалъ: ПОРУЧИКЪ *ստորագրություն*
ВъРНО: Врид. Начальника Оперативнаго Отділенія
Генеральнаго Штаба Войенаго Министерства
ШТАБСЪ-КАПИТАНЪ *ստորագրություն*

*ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 353, թ. 18, պատճեն, մեքենագիր*

## No 85
## ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ԶԵԿՈՒՅՑԸ ԵՐԿՐԻ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ
*Էրզրում ուղարկած հետախույզի բերած տեղեկությունների մասին*
*(19 օգոստոսի,1919թ.)*

19 օգոստոսի 1919 No 3309

Предсѣдателю Совѣта Министровъ.

Посланный за свѣдѣніями въ Эрзерумъ агентъ сообщаетъ, что въ Эрзерумѣ и его окрестностяхъ стоитъ 15 корпусъ, командиромъ котораго состоитъ Мустафа Кямилъ Паша. На границѣ въ Кетакѣ, Зияинѣ стоятъ гаубицы, кои, по отзывамъ турокъ, приготовлены "для нашихъ друзей армянъ". Вооруженіе, снаряженіе, обмундировка-великолѣпны, люди сыты. Но, въ странѣ нищета, голодъ, разложеніе, униніе и упадокъ силъ.

Въ Эрзерумѣ есть армяне, но они принижены. Всю эту готовность турецкихъ войскъ всязываютъ съ вопросомъ о шести вилаетахъ. Наступать турки, по свѣдѣніямъ и обстановкѣ, не думаютъ, приготовляются лишъ датъ намъ отпоръ, на случай продвиженія нашего къ занятію Эрзерума и дальше. Но, вмѣстѣ съ тѣмъ, говорятъ, что турецкіе аскеры, переодѣваясь

въ курдское платье, проходятъ къ намъ, чтобы вызвать безпорядки.-По моему глубокому убѣжденію, мѣстные татары и курды, если турецкія войска будутъ сидѣтъ на своихъ мѣстахъ, намъ не страшны. Большинство ихъ, во первыхъ, хочетъ мира и покоя, а съ остальными мы справимся сами. Властъ наша должна быть хладнокровна и спокойна, мы должны заниматься гражданской работой, какъ ни въ чемъ не бывало и тѣмъ самымъ охлаждать чуткіе нервы и вносить въ страну успокоеніе.

Когда на базарѣ появляются вздорные слухи, въ душѣ меня очень волнующіе и безпокоящіе, я усиленно будирую гражданскія потребности страны и энергично завставляю своихъ сослуживцевъ заниматься дѣломъ строительства, внутренними запросами. Это разряжаетъ воинственно-паническую атмосферу и слухи эти становится несостоятельными.-

Мы обязаны не мѣнятъ этой обстановки до послѣдняго момента и должны всемѣрно сохранитъ спокойствіе. Малѣйшая безтактностъ - мы потеряемъ всѣ.-

Болѣе подробно я говорилъ по сему съ Товарищемъ Министра Г.С. Ягджьяномъ и членомъ Парламента Г. Казарьянцемъ,-

| | |
|---|---|
| ГУБЕРНАТОРЪ | *ստորագրություն* |
| Правителъ Канцеляріи | *ստորագրություն* |
| Дѣлопроизводителъ | *ստորագրություն* |

*ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 353, թ. 27 և շրջ., պատճեն, մեքենագիր Գրված է Կարսի քաղաքացիական նահանգապետի՝ հայերեն և ֆրանսերեն լեզուներով դրոշմակնիքով պաշտոնաթերթի վրա:*

## No 86
## ԿԱՐՍԻ ԲԵՐԴԻ ՀԵՏ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻՑ ՈՒՂԻՂ ԿԱՊՈՎ ԽՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

*Մարզում մահմեդականների և մոլոկանների հակահայկական համաձայնության, Ադրբեջանից մարզի մահմեդաբնակ վայրեր զինհրահանգիչներ ժամանելու մասին*
*(17 դեկտեմբերի,1919թ.)*

Выписка изъ разговора по прямому проводу съ крѣпостью Карсъ.
17/XII-1919г. 18 часовъ. Генштабъ.
“Отовсюду поступаютъ донесенія о спѣшной организаціи татаръ для активнаго выступленія. Идетъ мобилизація въ Чалдырскомъ, Агбабинскомъ, Зарушадскомъ и сѣверной части Шурагельскаго участковъ. Призываются отъ 16 до 40 лѣтъ. Мусульмане и молокане послѣ переговоровъ вошли въ соглашеніе дѣйствовать противъ насъ совмѣстно. Въ названныхъ участкахъ появились Азербайджанскіе эмиссары. Изъ Азербайджана привезено много денегъ. Въ Зарушадѣ привезли 4 фургона обмундированія и раздается мобилизованнымъ. Призванные носятъ погоны съ полумѣсяцемъ. Американскій маіоръ ПАЙСТОНЪ, пріѣхавшій изъ Ахалкалаковъ въ Чалдыръ разсказываетъ:

Онъ видѣлъ въ с. КАНАРВЕЛЪ на западномъ берегу озера Хазапинъ болѣе 200 мусульманъ производяшихъ ученіе подъ командой Азербайджанскаго офицера Штабсъ-Капитана УСУПОВА, командированнаго Азербайджаномъ для организаціи возстанія въ Карсской области. На вопросъ маіора Пайотона какимъ образомъ татары территоріи Арменіи производятъ ученіе, УСУПОВЪ отвѣтилъ, что территорія принадлежитъ Азербайджану. Около КАНАРВЕЛЯ 3 Зарушадца угрожали нашимъ милиціонерамъ, что скоро Армянское Правительство будетъ изгнано. УСУПОВЪ выдалъ маіору ПАЙОТОНУ удостовѣреніе за №487 на имя Предсѣдателя мусульманскаго Совѣта с. СУХАРА объ оказаніи маіору ПАЙОТОНУ содѣйствія въ дѣлѣ покупки скота. ПАЙОТОНЪ не купилъ скота и вернулся въ Ахалкалаки. Названные участки имѣютъ пулеметы "ЛЪЮСИСА"-12, "МАКСИМА"-1 и 3 пушки. Пушки находятся двѣ въ КИЗИЛЪКИЛИСЪ, что западнѣе Гренадерскаго и одна въ КАРАКАЛЪ восточнѣе Гренадерскаго, кромѣ того имѣется много оружія и патроновъ."

Вѣрно: Помощникъ Н-ка Развѣдывательнаго Отдѣленія
Генеральнаго Штаба Военнаго Министерства
ПРАПОРЩИКЪ *ստորագրություն*

*ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 353, թ. 109, պատճեն, մեքենագիր*

## No 87
## ՆԵՐԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆ
*Զինակոչի իրականացման ժամանակ սոցիալական արդարության սկզբունքը պահպանելու անհրաժեշտության մասին*
*(26 հունվարի,1920թ.)*

Начальникъ Военнаго Штаба
РЕСПУБЛИКИ АРМЕНІИ
По Стр. и Мобилизац. От.
"20" января 1920 г. N 35 ш
Гор. Эривань

УПРАВЛЕНІЕ
Генералъ Контролера В.В.
Республики Арменіи
Получено "26" января 1920 г.
Вход N 44

Циркулярно Секретно
Контролеру Военнаго Вѣдомства

Изъ поступающих въ Штабъ донесеній усматривается, что въ строю частей войскъ почти совершенно нет солдатъ из горожанъ и интеллигенціи. Последніе всѣми способами устраиваются на службу по городамъ въ различныхъ учрежденияхъ. Въ виду того, что явленіе это вызываетъ справедливое нареканіе и неблагопріятно отражается на настроеніи другихъ солдатъ, происходящихъ изъ сельскихъ жителей, Военный Министръ приказалъ принять все зависящія мѣры къ устраненію указаннаго ненормальнаго явленія какъ со стороны Начальниковъ Управленій и Учрежденій, такъ

особенно со стороны Воинскихъ Начальниковъ, производящихъ распределеніе военнообязанныхъ, поступающихъ на сборные пункты.

ПОДПОЛКОВНИКЪ *ստորագրություն*

Начальникъ Мобилизационного Отдела

ПОЛКОВНИКЪ *ստորագրություն*

Помощникъ Начальника Отдела,

Шт.Капітанъ *ստորագրություն*

*ՀԱԱ, Ֆ. 280, ց. 2, գ. 9 և շրջ, բնօրինակ, մեքենագիր*

## No 88

## ՀԱՏՎԱԾ ՆԵՐԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

*Բանակից դասալքության դեմ պայքարելու նպատակով ստեղծված համապետական մարմնի լիազորությունների մասին*

*(5 մարտի, 1920թ.)*

...Кромѣ вышеуказанныхъ мѣръ противъ дезертирства Комиссия признала необходимымъ:

Борьбу с дезертирствомъ объеденить в рукахъ одного лица с чрезвычайными полномочіями, которому в отношении ловли дезертировъ и уклоняющихся подчинить всѣхъ чиновъ администрацій/уѣздной и городской/.

Означенные чины должны исполнять всѣ приказанія Чрезвычайного Комиссара в отношении поимки дезертировъ и оказывать ему всяческое содѣйствіе. Предоставить Чрезвычайному Комиссару единолично налагать взысканія в административном порядкѣ какъ на чиновъ администраціи такъ и на самих дезертировъ, родственниковъ и укрывателей послѣднихъ согласно положенія. Помимо содѣйствія администраци и милиціи сформировать и подчинить Чрезвычайному Комиссару Особый Отрядъ для ловли дезертировъ.

Вѣрно: Помошникъ начальника Мобилизаціонного Отдела

Капитанъ *ստորագրություն*

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 22-I, թ. 216, բնագիր, մեքենագիր*

## No 89

## ԳՐՈՒԹՅՈՒՆ

*Մարտական գործողություններ իրականացնող զորամասերում հեռախոսամալուխի և կապի այլ միջոցների խիստ անհրաժեշտության և այդ սարքավորումները վերավաճառողների շուկայում վաճառքի հանելու մասին*

*(22 մարտի, 1920թ.)*

Копія съ рапорта Начальника Инженернаго склада отъ 22 Марта 1920г. № 9- Начальнику Военно-техническаго Управленія.

Доношу, что на рынкѣ въ магазинахъ, тайно продаются телефонный кабель, аппараты и части къ нимъ, въ чемъ теперъ крайняя нужда, въ виду

послѣднихъ событій. Донося о вышеизложенномъ прошу Вашего распоряженія о выдачѣ мнѣ удостовѣренія /открытаго листа/ на право производства обыска и реквизиціи таковыхъ, владѣльцамъ коихъ будутъ выданы временныя квитанціи, а по определѣніи дѣйствительной с тоимости /отобраннаго товара/ комиссіей будетъ произведена расплата.
Подписалъ: Начальникъ Инженернаго Склада /Подпись/
Инженерн.Чин. /Подпись/
Дѣлопроизводитель /подпись/
Вѣрно: Врид. Начальника Отдѣленія В. Ч./Подпись/

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 22-I, թ. 275, մեքենագիր*

## No 90

## ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### *Մարտական գործողություններ իրականացնող զորամասերում հեռախոսամալուխի և կապի այլ միջոցների խիստ անհրաժեշտության և այդ սարքավորումները վերավաճառողների շուկայում վաճառքի հանելու մասին*

### *(23, 25 մարտի, 1920թ.)*

Копія с рапорта Начальника Военно-Техническаго Управленія
от 23 Марта 1920 г. No 1218 – Военному Министру.
Въ виду послѣднихъ военныхъ дѣйствій части настойчиво требуютъ кабель и телефонные аппараты, коихъ въ складахъ ввѣренного мне Управленія совершенно нѣтъ. Въ прилагаемомъ при семъ рапортѣ Начальникъ Эриванскаго Инженернаго склада проситъ о выдаче ему открытаго листа на производство обысковъ и отбираніе у спекулянтовъ телефоннаго имущества,которое по имѣющимся свѣдѣниям хранится у нихъ в довольно большом количестве. Ходатайствуя о выдачѣ ему Военнымъ Штабомъ означенного листа я прошу разрешені я реквизировать по нему не только телефоны, кабель, но и вообще все инженерное имущество казенного образца.
Приложение: Рапортъ No 9с.
Подписалъ: Врид. Начальника Военно-Техническаго
Управления Полковникъ Келлеръ

Г-ну Министру Внутреннихъ дѣлъ.

Военный Министръ проситъ Вашего распоряженія о выдачѣ открытаго листа Начальнику Эриванскаго Инженернаго склада на производство обисковъ и отобранія у спекулянтовъ телефоннаго имущества.
И.д. Начальника Главнаго Штаба ПОДПОЛКОВНИКЪ *ստորագրություն*

25 марта 1920г. No484 Эривань

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 22-I, թ. 274 և շրջ., պատճեն, մեքենագիր*

**No 91**
ԵՐԵՎԱՆԻ ԴԱՏԱԽԱԶԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԻԼԻՑԻԱՅԻՆ
*Հայերի կողմից թաթարներին (ադրբեջանցիներին) զենք վաճառելու փաստի առթիվ քրեական գործ հարուցելու անհրաժեշտության մասին*
*(27 ապրիլի, 1920թ.)*

… апреля 1920 г. 27 апреля 1920 г.
No 1886 No 5605

Прошу сообщить мнѣ, оформлено ли дѣло по обвиненію Марюса Марюсяна и Вираба Ахвердяна в продаже оружія татарамъ и какому следователю.

Прокуроръ суда *ստորագրություն*
Секретарь *ստորագրություն*

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 22-II, թ. 361, բնագիր, մեքենագիր*

**No 92**
ՀԱՄՈ ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻ ՁԵՎԱՎՈՐԱԾ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՉԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԱԿԻՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻՆ
*Ներկայացվում են պահի ռազմաքաղաքական արփահրավերները և, ըստ այդմ, նոր Կառավարության անելիքները*
*(8 մայիսի, 1920թ.)*

# ԿՈՉ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԿԻՆ ԵՒ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՕՆԵԱՆԵՐԻՆ

Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան անունից ներկայիս առանձնապէս ողջունում ենք հայ քաջարի բանակը՝ յանձինս իրա բոլոր սպաներին և զինուորներին, որ կանգ չառնելով ոչ մի զոհողութան առջև, մղելով անհաւասար կռիւ մեր բոլոր ներքին թէ արտաքին թշնամիների դէմ, ստեղծել է այսօր ազգային ազատութեան և անկախութեան շէնքը որը և շարունակում է պաշտպանել իր կեանքի գնով, հերոսաբար կուծք տալով ամէն տեսակի դժւարութիւնների:

Հայաստանի Հանրապետութիւնը շնորհիւ իր քաջարի զինուորներին մինչև այսօր յոջողել է պաշտպանելու իրա գոյութիւնը ընդդեմ տաճկական և թաթարական ամէն տեսակի դաւերի: Հայ

զինուորը պաշպանել է իրա հայրենիքը ամենադժւարին րոպէներում և այդպիսով դարձել աշխարհի բոլոր հաւերի հիացմունքի և գուրգուրանքի առարկան, միանգամայն ներշնչելով մեր բոլոր թշնամիներին այն համոզմունքը թէ, Հայաստանը չէ այն արհամարհելի ուժը հանդէպ որու կը կարողանան երբևիցէ իրագործել իրանց թշնամական նպատակները:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԻՆՈՒՈՐՆԵՐ:

Դուք մինչև այսօր փայլուն կերպով կատարել էք ձեր վրայ դրւած պարտականութիւնը և ստեղծել հերոսութեան և անձնւիրութեան այնպիսի դրւագներ՝ որոնք ոսկի տառերով են արձանագրւելու մեր ազատամարտի պատմութեան էջերում: Դուք այդ արել էք, բայց ձեր պարտականութիւնը դեռ ևս չի աւարտել. Հայաստանը դեռ ևս զերծ չէ վտանգէ. նրա ուխտեալ թշնամիները այսօր էլ շարունակում են դաւաադրել և թաթար փաշաներն ու խաները զանազան կեղծ դիմակներ անցուցած կուզեն ջնջել աշխարհի երեսից ոչ միայն Հայաստանը այլ և ամբողջ հայ ժողովուրդը. բայց ինչ կասկած որ երբեք չեն իրականալու նրանց դաւադրութիւնները քանի գոյութիւնը ունիք դուք, քանի գոյութիւն ունի հայ անվեհեր բանակը, Հայաստանի անձնուրաց և հաւատարիմ սպաներն ու զինուորները, առաւել քան երբեք տոկուն և կարգապահ: Այսու հաղորդում ենք ձեզ որ Հայաստանի թշնամին Ադրբէջանն է, որ ուզում է զանազան կեղծիքներով շահագործել և ռուս ժողովրդի ու կառավարութեան անունը: Հայաստանի կառավարութիւնը միշտ բարեկամ ռուս աշխատաւոր ժողովրդին ուղարկել է արդէն իրա պաշտօնական ներկայացուցիչներին բանակցելու Մոսկւայի խորհրդային իշխանութեան հետ և ձեռք բերելու Միացեալ Հայաստանի անկախութեան իրաւական ճանաչումը. ամենքին ծանօթ պէտք է լինի արդէն այն՝ որ խորհրդային Ռուսաստանը ամենից առաջ ճանաչել է Հայաստանի անկախութեան սկզբունքը և մտցրել իրա Սահմանադրութեան մէջ: Լաւ պէտք է գիտակցել որ Ռուսստանը ոչ մի կապ չունի այժմ թուրքերին և թաթարներին հետ, իսկ մեր միակ թշնամիները հէնց վերջիններս են: Մեր կառավարութիւնը միւս կողմից հակառակ անհամար դժւարութիւնների ջանք չպիտի խնայէ մեղմացնելու հայ զինուորի զրկանքները, անիկա իր բոլոր եռանդը ի գործ պիտի դնէ աշխատաւոր հայ ժողովուրդի երջանկութեան և հայրենիքի ապահովութեան ու բարօրութեան համար: Բայց այս բոլորի յաջողութեան տեսակէտից ինչպէս հայ զինուորը նմանապէս և հայ պաշտօնեան ամենամեծ պարտականութիւններ ունի կատարելիք,

մեր երկրի ճակատագիրը այդ երկուքի ձեռքին է գտնում, որքան լաւ աշխատեն նրանք, այնչափ յաջող կը գնայ մեր հաւաքական պայքարը թշնամիների դէմ: Ի հարկէ կառավարութիւնը գիտակցում է որ ծանր է և պետական պաշտօնեի տնտեսական վիճակը, պետական պաշտօնեաներին՝ որոնք հիմք են կազմում մեր պետութեան և որ այնքան աշխատել են ու աշխատում են նրա հիմնաւորման ու զարգացման համար, և որոնք հարիւրաւորներով զոհւել են իրանց պարտականութեան փշոտ ճանապարհի վրայ, ինչպէս իրանց ամենաընտիր ներկայացուցիչը, ներքին գործերի աննման նախարար Արամը՝ որը գնաց տիֆին: Բայց մենք հավատացել ենք որ շուտով կանցնեն այս օրերը և շնորհիւ ամենքի տոկուն աշխատանքին կուգան աւելի բաղդաւոր օրեր: Մինչև այդ վստահ է լինել որ կառավարութիւնը ամեն միջոց ձեռք կառնէ բարելաւելու պաշտօնէութեան դրութիւնը, որը իրականացնելու համար սակայն ամենից առաջ անհրաժէշտ է նոյնինքն պետական բոլոր տեսակի և աստիճանի պաշտօնեաների եռանդուն և անկեղծ գործակցութիւնը: Անհրաժէշտ է որ ամէն ոք նոր եռանդով փարի իր գործին եթէ ուզում է իրականացած տեսնել մեր բոլոր յոյսերն ու բաղձանքները, և պաշտպանել հայրենիքի անկախութիւնն ու ազատութիւնը: Յայտարարելով ներկայս կոչ կանենք Հ. Հանրապետութեան բոլոր զինւորներին ու պաշտօնեաներին՝ հրաւիրելով նրանց դէպի յամառ և ստեղծագործ աշխատանք:

Հայաստանի Հանրապետութեան վարչապետ՝
ՀԱՄ. ՕՀԱՆՋԱՆԵԱՆ

Զինւոր. Նախարար՝ ՌՈՒԲԷՆ ՏԷՐ-ՄԻՆԱՍԵԱՆ

Սպարապետ՝ ՆԱԶԱՐԲԵԿԵԱՆՑ

8 մայիսի 1920թ.

Երևան

Ներքին Գործոց Նախարարութեան Տպարան

*ՀԱԱ, Ֆ. 280, ց. 2, գ. 54, թ. 1, պատճեն, տպագիր օրինակ*

## No 93

ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆ

*Բանակի հրամանատարությունը տեղյակ չէ հօգուտ բանակի կազմակերպվող դրամահավաքից գոյացած միջոցների և դրանց օգտագործման մասին*

*(21 մայիսի, 1920թ.)*

21 мая, 1920г, No 8199

Господину Министру Внутреннихъ Дѣлъ.

Въ послѣднее время почти во всѣхъ городах Арменіи устраиваются вечера, гулянья и производятся кружечные сборы въ пользу “солдатъ”, “Арміи” и “Фронта”, между тѣмъ какъ Военное Вѣдомство по настоящее время не получаетъ свѣдѣній, какъ о количествѣ сбора и отчетѣ, такъ и о томъ куда поступаютъ собранныя деньги. Въ виду сего Военный Министръ приказалъ просить Васъ не отказать сдѣлать распоряженіе о представленіи въ Главный Штабъ отчетовъ или собранныхъ денегъ съ вышеназванныхъ вечеровъ сборовъ и гуляніи, а также о томъ, чтобы сборы въ пользу Арміи производились съ вѣдома Военнаго Министра.-

ПОЛКОВНИКЪ *ստորագրություն*

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 22-II. թ. 644, պատճեն, մեքենագիր*

*Տես նաև՝ ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 22-II, թ. 643, պատճեն, մեքենագիր*

## No 94

ԳՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՐՍԻ ԶՈՐԱԽՄԲԻ ՊԵՏ ԳԵՆԵՐԱԼ ՓԻՐՈՒՄՅԱՆԻՆ

*Կիսականոնավոր զինված խմբավորման իրականացրած թալանի մասին*

*(2 հունիսի, 1920թ.)*

ՂԱՐՍ

Գրուպպայի Պետ Գեներալ Փիրումեանին

Փիլոսի եւ Շովրադի ձիաւորները կողոպտել են Հաջիխալիլը ձեռք առէք խիստ միջոցներ ձերբակալելու եւ պատժելու մեղաւորներին հետեւանքի մասին հեռագրել ինձ ոչ ուշ քան յունիսի 5 ին:

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՑ ԵՒ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Ճիշտ է Գործավար *ստորագրություն*

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 22-II. թ. 698, պատճեն, մեքենագիր*

## No 95
## ՌԱԶՄԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆ
*Ինժեներական գումարտակում բացահայտված չարաշահումների մասին*
*(24 հունիսի, 1920թ.)*

НАЧАЛЬНИКЪ
ВОЕННАГО ШТАБА
РЕСПУБЛИКА АРМЕНіИ
ИНСПЕКТОРСКАГО
ОТДѢЛА ХОЗЯЙСТ.
ОТДѢЛЕНіЕ
24 Іюня 1920 г.
№1057
Гор. Эриванъ

Генералъ-Контролеру

По имѣющимся свѣдѣніямъ въ Инженерномъ баталіонѣ состоитъ 23 лошади, а фуражъ требуется на 55. Военный Министоръ приказалъ срочно провѣрить и донести.

И. д. Начальника Штаба
ПОЛКОВНИКЪ *ստորագրություն*
Начальникъ Отдѣленія
Подполковникъ *ստորագրություն*

*ՀԱԱ, Ֆ. 280, ց. 2, գ. 9,թ. 24, պատճեն, մեքենագիր*

## No 96
## ՌԱԶՄԱԿԱՆ ՄԻՆԻՍՏՐԻ ՀՐԱՄԱՆԸ
*Հայկական բանակի ազգայնացման մասին*
*(26 հունիսի, 1920թ.)*

ВОЕННЫЙ МИНИСТРЪ
РЕСПУБЛИКИ АРМЕНІИ
ПО ГЛАВНОМУ ШТАБУ
По Инспект. Отдѣлу
26 іюня 1920
Гор. Эриванъ

Копія

Циркулярно.

Согласно законовъ Парламента отъ “26” Декабря 1919 г.и. Совѣта Министровъ отъ “30” Мая 1920г. объявленыхъ въ приказѣ по В.В. 1920г. №26, приказываю теперь же приступить къ націонализаціи всѣхъ частей войскъ, управленій, учрежденій и заведеній Военнаго Вѣдомства, управленій, учрежденій и заведеній всѣхъ частей войскъ, управленій, учрежденій и заведеній Военнаго Вѣдомства, для чего

1/ Въ первую очередъ націонализировать Штабы и Управленія, въ коихъ не позже 1 Августа с/г. переписку съ подвѣдомственными частями и учрежденіями, а также приказы, вести на Государственномъ языкѣ.

2/ Офицерскіе и классные чины, а также вольнонаемные служащие не владѣющіе Государственнымъ языкомъ подлежатъ увольненію со службы, за исключеніемъ тѣхъ, кои по своимъ спеціальнымъ познаніямъ и подготовкѣ являются необходимыми въ частяхъ и учрежденіяхъ и замѣнеаихъ въ настоящее время не можетъ быть произведена безъ ущерба для дѣла.

3/ Командирамъ строевыхъ частей, при рѣшеніи вопросовъ о томъ, кто изъ чиновъ незнающихъ Государственнаго языка подлежить оставленію

на службѣ слѣдуетъ отдавать предпочтенiе кадровыхъ офицерамъ, окончившимъ военныя училище не позже Декабря мѣсяца 1914 года.

4/ Уволненiе врачей и прочихъ чиновъ медицинскаго персонала, а также чиновъ Артиллерiанскагo Вѣдомства не владѣющихъ Государственнымъ языкомъ представляется на усмотренiю Начальниковъ Военно-Санитарнаго и артиллерiйскаго Управленiи, имѣя въ виду, что по мѣрѣ возможности должны быть замѣнены всѣ незнающiе языка, лицами владѣющими таковымъ.

5/ Лица не владѣющие Государственнымъ языкомъ на службу по Военному Вѣдомству, впредѣ не должны бытъ принимаемы.

6/ Всѣхъ чиновниковъ не владѣющихъ Государственнымъ языкомъ представлятъ къ у вольненiю и только въ исключительнымъ случаямъ разрѣшается оставлять дулопроизводителей, казначеевъ и спецiалистовъ, замѣна коихъ въ настоящее время не можетъ бытъ произведена безъ явнаго ущерба для дѣла.

7/ Въ изъятiя изъ общихъ правилъ, указанныхъ въ п.2, всѣхъ армянъ, офицеровъ и классныхъ чиновъ не владѣющихъ Государственнымъ языкомъ, оставитъ на службѣ, предложивъ имъ теперъ же приступитъ къ изученiю родного языка. Въ случавѣ увольненiя кого либо изъ перечисленныхъ въ настоящемъ пунктѣ лицъ по нацiонализацiи послѣ 1 Мая 1921 года, они сохраняютъ запросы право на полученiе ликвидацiонныхъ денегъ на тѣхъ же основанiяхъ, какъ и увольняемые въ настовщемъ году. Увольняемые ранѣе этого срока по собственному желанiю или властью Начальства въ дисциплинарномъ и аттестацiонныхъ порядкахъ, а также рышенiе Суда лишаются права на полученiе ликвидацiонныхъ денегъ установленныхъ приказомъ по В.В. с/г. за №260

8/ Къ лицамъ занимающимъ должности не ниже Начальниковъ Штабовъ, отдѣлов и Командировъ отдѣльныхъ частей и не владѣющими Государственнымъ языкомъ но остающимися на службѣ, разрѣшается назначить сверхъ установленнаго штаба однаго офицера или чиновника въ качествѣ переводчника.

9/ Временно, до Января 1921 г., впередъ до изданiя соотвѣтствующихъ книгъ, Бланковъ и журналовъ, разрѣшается денежную и хозяйственую отчетностъ вести на русскомъ языкѣ, однако всѣ вновъ заводимыя книги и бланки хосяйственной и матерiальной отчетности должны обязательно печататься на армянскомъ языкѣ.

10/ Всѣ представленiя къ увольненiю должны быть сдiланы черезъ Командующаго войсками и не позже 20 Iюля с/г.

11/ всѣ увольненiя отъ службы согласно сего предписанiя должны бытъ законченыхъ 1 Сентябра с/г. и лица подлежащiе уволненiю къ тому же сроку должны бытъ удовлетворены положеннымъ имъ ликвидацiоннымъ деньгами, согласно приказе по В. В. с/г. №260.

ВОЕННЫЙ МИНИСТРЪ Рубенъ Теръ-Минасянъ

И. д. Начальника Штаба ПОЛКОВНИКъ Багдасаровъ

Врид. Начальника Отдѣла Штабсъ-Капитанъ *ստորագրություն*

*ՀԱԱ, Ֆ. 280, ց. 2, գ. 9, թ. 28, պատճեն, մեքենագիր*

## No 97

### ԵՐԿՐԻ ՄԻՆԻՍՏՐ-ՆԱԽԱԳԱՀԻՆ (ՎԱՐՉԱՊԵՏԻՆ) ԵՎ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ ՀԱՍՑԵԱԳՐՎԱԾ ԾԱԾԿԱԳԻՐ

*Կարսի նահանգապետը փեղեկացնում է երկրի բարձրագույն ղեկավարությանը Օլթիի շրջանում 1920թ. հունիսի կեսերին վրացական զորքերի փեղաշարժերի մասին*
*(հունիս, 1920թ.)*

Շիֆր Ղարսից                Շտապ Մինիստր նախագահին պատճենը
12.28.25

Մինիստր վնուտր. դել.

Երեկ եւ այսօր Շատեւանի եւ մեր հողով անցան դէպի Օլթի հարիւր վրաց զինուորներ չորս պիւլէմէօղ, իսկ վաղը ուղեւորւում է այնտեղ նոցա օբոզը Օլթիի գաւառը գրաւելու կէտ հաղորդել եմ Փիրումովին կէտ նորից եւ նորից պնդում եմ Արդահանը որպէս կայեան վրաց Զօրամասի թոյլատրելի չէ 1292 նահանգապետ Ղորղանեան:

Իսկականի հետ ճիշտ է ԳՈՐԾԱՎԱՐ՝ *ստորագրություն*

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 26, թ. 223, պատճեն, մեքենագիր*

## No 98

### ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ

*Մարզում դասալքության դեմ իրականացվող քայլերի մասին*
*(7 հուլիսի 1920թ.)*

7 հուլիսի 1920թ.                Մտ. 8804
№ 4455                7.07-20թ.

Ներքին Գործերի պ. Մինիստրին

Գեներալ Փիրումովի դասալիքների մասին հեռագրի առիթով պատիվ ունեմ հաղորդելու, որ մինչ այդ էլ շարունակ ամենախիստ միջոցների եմ դիմել այդ առիթով: Անգործութեան համար բանտարկել եմ գիւղական տանուտերներին, դասալիքների ազգականներին, առանձին պաշտօնեաներ եմ ուղարկել գաւառները դասալիքներին բռնելու և ամեն Կիւրակի պարտաւորեցրել եմ գաւառապետներին հաշիւ տալ ինձ հեռագրներով և գրաւոր, թե որքան դասալիք է բռնւել շաբաթւայ ընթացքում: Բայց ես թոյլ եմ տալի ինձ միևնոյն ժամանակ կարծելու, որ և բողոքող գեներալը ունի և իր պարտաւորությունը: Ես կարծում եմ, որ եթե ես պարտաւոր եմ բռնելու դասալիքներին, նորին գերազանցութիւնն էլ պարտաւոր է միջոցներ ձեռք առնել հսկելու դասալիքների փախուստի պատճառները վերացնելու:

Իդեպ ստացւում է մի շատ տարօրինակ դրութիւն-Ես պէտք է շարունակ հետևիմ դասալիքներին, բռնեմ նոցա, իսկ նոքա, ազատ մնալով հսկողությունից, շարունակ պետք է թողնեն իրանց զօրամասերը:

Եվ եթե մինչև այժմ չդիմեի խիստ միջոցների, զորամասերը, երևի, նոցա ստերը կմներ: Բայց մի՞թէ պարտավորությունները կատար ածելը միայն ինձ է վերապահված:

Նահանգապետ Ղորղանեան *ստորագրություն*
Դիվանապետի պաշտոնակատար *ստորագրություն*
Ի. տ. Գործավարի Գևորգեան *ստորագրություն*

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 50, թ. 3, ձեռագիր*
*Գրված է Կարսի քաղաքացիական նահանգապետի՝ հայերեն և ֆրանսերեն լեզուներով դրոշմակնիքով պաշտոնաթերթի վրա:*

## No 99
## ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ

*Գեներալ Հովսեփյանի կողմից հիշատակվող դասալիք զինվորներին հայտնաբերելու մասին*
*(9 հուլիսի, 1920թ.)*

9 յուլիսի 1920թ. Մտ.9099, 15 յուլիսի 1920թ.
N 4658 Երևան

Ներքին Գործերի պ.Նախարարին

Գեներալ Յովսեփեանի հեռագրում յիշված դասալիքներին բռնելու համար յատուկ պաշտօնեաներ էի ուղարկել, բայց քննութիւնից պարզվեց որ այդ բոլոր դասալիքները գտնվում են Օլթիի շրջանում: Գնացել են թալանի: Միջոցներ են ձեռք առնվում նոցա բռնելու վերադարձին:

Նահանգապետ *ստորագրություն*
Դիվանապետի պաշտոնակատար *ստորագրություն*
Գործավար *ստորագրություն*

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 309, թ. 73, ձեռագիր*
*Գրված է Կարսի քաղաքացիական նահանգապետի՝ հայերեն և ֆրանսերեն լեզուներով դրոշմակնիքով պաշտոնաթերթի վրա:*

## No 100
## ԱՐԴԱՀԱՆԻ ՕԿՐՈՒԳԻ ՎԱՐՉԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ ԳՆԴԱՊԵՏ ԿԱԴԻՄՈՎԻ ԶԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻՆ

*Օկրուգում հայ զինվորականների կատարած անօրինականությունների և տեղի բնակչության հակապետական և հակահայկական տրամադրությունների դրսևորման մասին*
*(11 հուլիսի, 1920թ.)*

Копія съ рапорта Начальника Ардаганскаго Округа отъ 11 іюля сего года. Его Превосходительству Губернатору Карсской Области

Мною было телеграфно о незаконныхъ дѣйствіяхъ военныхь властей въ предѣлахъ ввѣреннаго мнѣ округа. Какимь вымогательствомъ связаны вмѣшательства въ дѣла Администраціи до сего не положено. Будучи въ состояніи защищать населеніе оть разбойничихъ шаекъ, я безсиленъ бороться съ военными, отдѣльные представители которыхъ совершаютъ преступныя дѣйствія надъ жителями, ничѣмъ не оправдываемыя. Мною поручено Начальнику Милиціи произвести обстоятельное дознаніе о незаконныхъ дѣйствіяхъ военныхь властей. Дознаніе будетъ представлено Вашему Превосходительству. Прошу Вашего ходатайства о прекращеніи военными творимыхъ безчиствъ, а если это не возможно, прошу разрѣшить мнѣ подать въ отставку, такъ какъ мое пребываніе Начальникомъ Округа совершенно безполезно.
Подлинный подписалъ Полковникъ Кадымовъ. N.199
Вѣрно: Дѣлопроизводитель Канцеляріи
Карсскаго Губернатора *ստորագրություն*

Высокоуважаемый Рубенъ Григорьевичъ

Ввиду измѣнившагося положенія я спѣшно выѣзжаю съ Алексаномъ въ Ардаганъ. Прошу доложить Губернатору, что если Его Превосходительство до 15 сего мѣсяца спѣшно не прибудетъ вь Хаскей, то я за округъ не ручаюсь. Какь видно изъ настроенія населенія жители при этихъ обстоятельствахъ поголовно уйдутъ изъ предѣловъ Округа. Еще разъ повторяю, личный пріѣздъ Губернатора въ Хаскей крайне необходимъ, въ отрицательномъ случаѣ я теперь же отвѣтственность съ себя слагаю.

Подписалъ Преданный Вамъ Вашъ Ибрагимь-Бекъ Кадымовъ.
13 іюля 1920г. Сел. Чердахлы
Вѣрно: Дѣлопроизводитель Канцеляріи
Карсскаго Губернатора *ստորագրություն*

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 50, թ. 26, պատճեն, մեքենագիր*

## No 101

## ԳՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻՆ

*Մարզի գյուղերում զինվորականների կողմից թալան և բռնություններ իրականացնելու մասին*

*(13 հուլիսի, 1920թ.)*

Կարսից դեպի Մերդենեկ ուղևորվող խումբը 40-50 հոգի, ճանապարհին մտել է Պրոխլադնոյե գյուղը, պահանջել որ իրենց կերակրեն: Կերակրվելուց հետո զինվորները ընկել են տները, թալանել, թալանը բարձել 2 ֆուրգոնի վրա և հեռացել գյուղից:
13 հուլիսի 1920թ.

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 309, թ. 27, պատճեն, մեքենագիր*

**No 102**

ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԵՎ ՀԵՏԱԳԱՅՈՒՄ ԵՐԿՐԻ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ՎԵՐԱՀԱՍՑԵԱԳՐՎԱԾ ԶԵԿՈՒՑԱԳԻՐ

*Մարզում բանակի կողմից վերցված ռազմավարը որպես թալան անհատների միջև բաժանելու փորձը կանխելու մասին*

*(23 հուլիսի, 1920թ.)*

М. В. Д. Копия

НАЧАЛЬНИКЪ

ОЛЬТИНСКАГО Секретно

Округа № 2

23 июля 1920 года

ЕГО ПРЕВОСХОДИТЕЛЬСТВУ ГОСПОДИНУ

ГУБЕРНАТОРУ КАРССКОГО ОБЛАСТИ.

РАПОРТЪ

Возвращаясь 7-го числа июля мѣсяца изъ гор. Карса въ Ольтинскиій Округъ въ селеніе Мерденекъ я встрѣтился съ Начальникомъ Ардаганской Окружной милиціи поручикомъ Минасяномъ, который въ присутствіи завѣдывающаго государственымъ имуществомъ Карсской области Г-на Арутюняна, передалъ мнѣ, что онъ пріѣзжая изъ города Ардагана въ Мерденекъ по дѣламъ службы, на дорогѣ, встрѣтилъ неизвѣстнаго грека, гнавшаго баранту по направленію въ городъ Карсъ. На спросъ Минасяна кому принадлежитъ баранта, означенный грекъ предъявилъ ему удостовѣреніе Начальника тылового отряда Полковника Сырмакешева о принадлежности этой баранты первому пѣхотному полку. Разслѣдованіемъ Минасянъ установилъ, что сказанный грекъ часть этой баранты продалъ; нѣсколько штукъ изъ нихъ обмѣнялъ на лошадь и оставалось у грека только семъдесятъ двѣ штуки, вмѣсто указанныхъ въ удостовѣреніи 172. Минасянъ принимая во вниманіе, что всякое казенное добро сопровождается куда бы то ни было подъ конвоемъ войсковыхъ чиновъ, а не частными лицами и то обстаятельство, что грекъ напримѣръ, часть продалъ, а часть онмѣнялъ на лошадъ, а потому задержалъ остальную часть, будучи вполнѣ увѣреннымъ, что вся эта баранта этимъ грекомъ угнана самовольно изъ Ольтинскаго Округа. При этомъ Минасянцъ добавилъ, что Полковникъ Сермакешевъ узнавъ о задержаніи имъ, сказаннаго скота настаиваетъ о возвратѣ таковаго какъ предназначаннаго, вышеупомянутому полку, какъ военная добыча.

Донося о вышеизложенномъ Вашему Превосходительству, докладу что я упомянутому Минасянцу сказалъ: что на случай отобранія упомянутымъ Полковникомъ Сермакешевымъ скота составить протоколъ и представить Вамъ.-

Подписалъ Начальникъ Карсскаго Округа ТЕРЬ-АНТОНОВЬ

Вѣрно: дѣлопроиаводитель Канцеляріи

Карсскаго Губернатора *սփորագրություն*

Копія НАЧАЛЬНИКУ АЛЕКСАНДРОПОЛЬСКОЙ ГРУППЫ ВОЙСК
“ ” іюля 1920 года г. КАРСЪ №.....
Препровождая на распоряженіе прошу о послѣдующемъ не отказатъ мнѣ увѣдомленіемъ.-
Подписалъ Губернаторъ Карсской Области КОРГАНОВЪ *ստորագրություն*
Скрепилъ Ис. Об. Правит. Канц. ДОХИКОВЪ *ստորագրություն*
Вѣрно: Дѣлопроизводитель Канцеляріи
Карсскаго Губернатора *ստորագրություն*

Копія ГОСПОДИНУ МИНИСТРУ ВНУТРЕННИХ ДЕЛЪ.
Препровождается для свѣдѣнія.
“26” іюля 1920 года г. КАРСЪ № 5061
Подписалъ Губернаторъ Карсской Области КОРГАНОВЪ *ստորագրություն*
Скрепилъ Ис. Об. Правит. Канц. ДОХИКОВЪ *ստորագրություն*
Вѣрно: Дѣлопроизводитель Канцеляріи
Карсскаго Губернатора *ստորագրություն*

Копія ГОСПОДИНУ ВОЕННОМУ МИНИСТРУ.
Препровождается для свѣдѣнія.
“ ” іюля 1920 года г. КАРСЪ № 5062
Подписалъ Губернаторъ Карсской Области КОРГАНОВЪ *ստորագրություն*
Скрепилъ Ис. Об. Правит. Канц. ДОХИКОВЪ *ստորագրություն*
Вѣрно: Дѣлопроизводитель Канцеляріи
Карсскаго Губернатора *ստորագրություն*

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 36. թ. 26 և շրջ., պատճեն, մեքենագիր*

## No 103
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՕՐԵՆՔ
*Դասալքության դեմ վճռական պայքար ծավալելու մասին*
*(25 հուլիսի, 1920թ.)*

ՀԱՎԵԼՈՒՄ

«ԿԱՌԱՎ-ԼՐԱԲԵՐ»-ի Նո. 28-ի
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՈՐԵՆՔ
Զորքի դասալիքության դեմ կռվելու մասին.

1. Բոլոր պետական, հասարակական յեվ մասնավոր հիմնարկություններին ինչպես յեվ մասնավոր անձանց արգելվում ե ծառայության ընդունել նրանց, վորոնք զինվորական ծառայության ավարտման կամ ծառայությունից ազատման վկայական չեն ներկայացնի:
2. 1 կ. Չկատարող պաշտոնական յեվ մասնավոր անձինք ենթարկվում են բանտարկության 1-ից մինչեվ 6 ամիս ժամանակով կամ դրամական տուգանքի հազարից մինչեվ 10.000 ռուբլի:

3. Իր ժամանակին ծառայության չներկայացած զինվորացուն կամ ինքնակամ իր զորամասից փախածը համարվում է դասալիք յեվ յենթարկվում է ըստ Զինվորական պատժագրքի (XXII Գ.Զ.Ո.Հ. 1869թ. 4 հրատ) բանտարկության 2-ից մինչեվ 4 ամիս կամ կալանավորման 1-ից մինչեվ 3 ամիս:
Բացի այդ նրա ծառայության ժամանակը ավելացվում է ամեն մի ամիս բացակայության համար- 6 ամսով հաշվելով պակաս ամիսը վորպես լրիվ ամիս:
ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Ոգոստոսի 1-ից ուշ իրենց զորամասերը ներկայացող դասալիքները ազատ են պատասխանատվությունից:
ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. 2. Իր անբասիր ծառայության յեվ այդ մասին Զինվորական պետի միջնորդության դեպքում սույն հոդվածում մատնանշված ծառայության ժամանակի ավելացումը կարող է կրճատել Զինվորական Մինիստրը:
4. Գյուղական կոմիսարները, ընտրյալներն ու միլիցիայի բոլոր ծառայողները պարտավոր են ձերբակալել իրենց շրջանում թագնվող դասալիքներին յեվ ներկայացնել այդպիսիներին համապատասխան զինվորական պետին, իսկ յեթե անհնար է նրանց ձերբակալել, պետք է այդ մասին հայտնել նույն զինվորական պետին- հակառակ դեպքում նրանք՝ կոմիսարներն ու միլիցայի ծառայողներն, վորոնց շրջանում կը գտնվի դասալիքներ, կենթարկվեն ադմինստրատիվ պատժի կամ դրամական տուգանքի մինչեվ 3000 ռուբլի: Իսկ յեթե ապացուցվի, վոր նրանք տեղյակ են յեղել իրենց շրջանի դասալիքների մասին, ապա կը պատժվեն ըստ պատիժների որենսգրքի 528 յեվ 341 հոդվածների:
Պատիժների որենսգրքի 528 հոդվածն ասում է՝
«Զինվորական ծառայության մեջ գտնվող փախստականներից (զինվոր կամ նավաստի) ինչպես յեվ բանակի կամ նավատորմի պահեստի զինակոչից կամ զինավարժությունից խուսափողներին թագցնողները յենթարկվում են բանտարկության 2-ից մինչեվ 4 ամիս կամ կալանավորվում 8 շաբատից մինչեվ 3 ամիս:
Պատիժների որենսգրքի 341 հոդվածն ասում է՝
«Իր իշխանության սահմաններից դուրս գալու կամ իշխանության պորրինի անգործության դեպքում հանցավորը նայած գործի լրջության հանգամանքներին յենթարկվում է կամ պաշտոնազանցության կամ ծառայությունից արձակման յեվ կամ բերդարկության 8 ամսից մինչեվ մի տարի 4 ամիս կամ հատուկ կարեվոր դեպքում նայեվ անձնական յեվ հատուկ բոլոր իրավունքների զրկման յեվ հանձնվում է վարքաուղղիչ կալանավորման բաժանմունքին սույն որենսգրքի 31 յօ 4 յեվ կամ ըստ դատարանի հայացողության բերդարկության սույն

որենսգրքի 34 հոդվածում մատնանշված ժամանակով յեվ մի քանի հատուկ յեվ անձնական իրավաց զրկման»:
5. Դասալիքների հետ ապրողներն ու նրանց ակնհայտի թագցնողները յենթարկվում են բանտարկության 1-ից մինչեվ 6 ամիս կամ դրամական տուգանքի մինչեվ 10 հազար ռօ… յեվ զրկվում են պետական վորյեվե նպաստից:
6. Դասալիքի հափշտակած պետական հագուստեղենն ու զենքը ակնհայտի իրենց մոտ թագցնող բոլոր մասնավոր անձինք յենթարկվում են պատասխանատվության շուկայի գնի յեռապատիկ վճառումով:
7. Սույն որենքով նախատեսնված գործերը վերաբերվում են հաշտարար դատավորների իրավասությանը, բացի այն դեպքերից, վորոնց պատիժը վորոշված ե պատիժների որենսգրքի 528 յեվ 341 հոդ. հոդ.: Այդ գործերը վերաբերվում են շրջանային դատարաններին իրավասությանը:
8. Զինվորական դրության հայտարարած վայրերում վերոհիշյալ պատիժների գործադրությունը վերապահված ե Ներքին Գործերի Մինիստրության:
9. ա. Մեկից ավելի անգամ դասալքության մեջ բռնվողները հանձնվում են զինվորական դատի:
բ. Սույն որենքը ամենուրեք ուժ ե ստանում լույս տեսնելուց 24 ժամ հետո:
ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ՝
(Գ. ԽՈՋԱՄԻՐՅԱՆ)

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 2, գ. 626, թթ. 8-9, պատճեն, մեքենագիր*

**No 104**

ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄԻՑ ԲԽՈՂ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆՆ ԻՐԱԶԵԿՈՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

*Դասալքության դեմ անողոք պայքար մղելու անհրաժեշտության մասին*
*(1920թ. հուլիսի 25-ից հետո)*

<u>ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ</u>

Զորքի դասալքության դեմ կռվելու մասին սույն թվի Հուլիս 25-ին մինիստրական խորհրդի կողմից հաստատված ժամանակավոր որենքի յեվ Ներքին Գործոց Մինիստրի կողմից ինձ տրված իրավունքների հիման վրա, զինվորական դրության հայտարարած վայրերում, զորակոչից խուսափողներ յեվ նրանց հովանավորություն ցույց տրվածների վրա իմ կողմից կկգործադրեմ հետեվյալ պատիժները:

Պար. 1. Պետ. յեվ հասարակական այն հիմնարկությունները յեվ մասնավոր անձանցը, վորոնք ծառայության են ընդունվում զինվորական ծառայություններից ազատման կամ ժամանակավոր հետաձգման մասին համապատասխան փաստաթղթեր չունեցող զինվորացուներին; յենթարկվում են բանտարկության 1-6 ամիս կամ դրամական տուգանքի, 1000-ից մինչյեվ 10.000 ռուբ.:

Պար. 2. Յուր ժամանակին ծառայություն չներկայացնող զինվորցուները կամ զորամասերի ինքնակամ բացակայողները համարվում են դասալիքներ յեվ յենթարկվում են բանտարկության 2-4 ամիս կամ կալանավորման 1-3 ամիս, բացի այդ, յուրաքանչյուր բանտարկած լրիվ կամ պակաս ամիսների փոխարեն, պարտավեր են ծառայել 6 ամիս:

Պար. 3. Գյուղական կոմիսարներ, ընտրեալները յեվ գավառական ու քաղաքային ... բոլոր ծառայողները, հորոնց շրջաններում կգտնվեն դասալիքներ, յենթարկվում են ադմինիստրատիվ պատժի կամ դրամական տուգանքի մինչյեվ 3.000 ռ., իսկ այն դեպքերում, յերբ ապացուցվի թե նրանք դրտմամբ հովանավորում են դասալիքներ ենթարկվում են բանտարկության 2-4 ամիս, կամ կալանավորման 2-6 ամիս, ինչպես նայեվ իրենց իշխանության սահմաններում ապորինի անգործության կամ չափահասություն ցույց տրվողները յենթարկվում են պաշտոնազանցության կամ պաշտոնազրկման յեվ կամ բիրդարգելության 8-12 ամիս հատկապես լուրջ հանգամանքներում յենթարկվում են մասնավոր կամ բոլոր իրավունքներից յեվ կարողությունից զրկման հանձնվում են վարք ուղղիչ բաժանմունքին:

Պար. 4. Դասալիքների հետ ապրողները յեվ ակնհայտնի իրենց հովանավորողները յենթարկվում են բանտարկության 1-6 ամիս կամ դրամական տուգանքի մինչյեվ 10.000ռ. նայեվ զրկվում են պետական նպաստից:

Պար. 5. Այն անձինք, վորոնք ակնհայտնի պահում են դասալիքների հափշտակած ... հագուստը յեվ զենքը, յենթարկվում են պատժի, այդ գույքերի շուկայի գնի յեռապատիկ վճարումով:

Պար. 6. Յերկրորդ յեվ ավելի անգամ դասալիք դարձողները հանձնվում են զինվորների դասարանին յեվ յենթարկվում են ՄԱՀՎԱՆ ՊԱՏԺԻ, վորի մասին յեվ կարդում եմ ի գիտություն ընդհանրության:

Զորահավաքի յեվ Դասալքության դեմ կռվելու Հատուկ
Կոմիսար Կապիտան ՄՈՒՐԱԴՅԱՆ.

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 2, գ. 626, թ. 20, պատճեն, մեքենագիր*

## No 105
## ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՇԻՐԱԿԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՐՈՒԹՅՈՒՆ

*Պատասխանատու անձանց կողմից բանակի համար նախատեսված առողջ ձիերին ծառայության համար ոչ պիտանի ձիերով փոխելու և զինված ուժերին դրանք ներկայացնելու մասին*
*(28 հուլիսի,1920թ.)*

КОМАНДИРъ Копія.
3-го Отдельнаго Армянскаго
Артиллерійскаго ДИВИЗІОНА
"28" іюля, 1920г. Г-ну Губернатору ШИРАКА.
No 1009
Крѣпость
На No 1296

Мною сношеніемъ отъ 25-го іюля с/г. за № 990 ... сообщено, что черезъ комиссію прошло 77 лошадей изъ которыхъ 16 было забраковано окончательно, 2 лошади были признаны годными для службы въ артилерiи и 38 лошадей вслѣдствіе своего возраста и пороковъ не могли быть назначены ни въ артиллерію ни въ кавалерію и чтобы ихъ не отправлять обратно АГБАБУ-были выдѣлены согласно Вашего распоряженія въ Земство, а послѣдднее въ свою очередь 9 лошадей уступило Караульному батаільону. Сообщеніе мое основано на самыхъ точныхъ данныхъ и не довѣрять ему нѢтъ никакого основанія и этимъ недовѣріемъ бросается тѣнь на весъ составъ комиссіи. Для свѣдѣнія сообщаю, что 22-го іюля при бумагѣ отъ уѣзднаго комиссара за № 240/копію съ которой прилагаю/ было представлено на осмотръ комиссіи вмѣсто 100 лошадей-только 97, причемъ нѣкоторые татары жаловались на то, что по дорогѣ милиціонеры отбирали у нихъ хорошихъ лошадей, а давали своихъ плохихъ. Комиссiей жалобы эти сразу не были разобраны, а сказано было, чтобы при осмотрѣ каждой лошади отдѣльно, потерпѣвѣвшие должны были заявить объ этомъ для составленія протокола. Такъ какъ между лошадьми были и хорошія, а большинство плохихъ лошадей, то комиссія рѣшила лучшихъ лошадей отдѣлить въ одну сторону, а худшихъ въ другую. Когда лошади были раздѣлены на двѣ партіи, то въ это время пріѣхалъ представитель отъ милиціи.......... и заявилъ, что лошади по приказанію Губернатора должны быть возвращены въ губернскій комиссаріатъ для регистраціи и что уѣздный комиссаръ не имѣль права сразу представить комиссіи этихъ лошадей, не проведя ихъ черезъ губернскую регистрацію. Комиссия заявила, что это не ея дѣло и разъ лошади представлены для осмотра, рѣшила продолжать свое дѣло. Представитель милиціи......... послалъ за Начальникомъ губернской милиціи Г-номъ ПАПИКЯНОМъ, который вскорѣ пріѣхалъ и показалъ бумагу, подписанную ХОЕЦЯНОМЪ, въ которой говорилось, чтобы лошадей непремѣнно взять обратно не представляя на осмотръ, а

на другой день привести. Я лично не соглашался на эту комбинацію, думал что здѣсь вѣроятно кроется что то другое. Когда же комиссія высказала, что если тогда смогли подмѣнить лошадей, то можетъ это происойти и теперь, то г-нъ ПАПИКЯНЪ началъ увѣрять, что онъ, какъ лицо не заинтересованное, примѣтъ всѣ мѣры къ отысканію и отбиранію подмѣненныхъ лошадей, что комиссія можетъ объ этомъ не беспокоиться и что завтра же лошади, в 9 часовъ утра будутъ всѣ представлены имъ самимъ.. Комиссія рѣшила выждать и собраться на другой день.
Дѣйствительно, 23-го утромъ лошади были приведены, только съ опозданіемъ. Комиссія распорядила чтобы лошадей поставили такъ, какъ онѣ стояли въ первый разъ, что и было исполнено. Г-нъ ПАПИКЯНЪ все время присуствовалъ при этомъ. Когда комиссія начала производить осмотръ лошадей, то при этомъ присуствовалъ Начальникъ Гарнизона. Во время осмотра прибѣгаетъ вдругъ татаринъ и говоритъ, что милиціонеръ у него отбираетъ лошадь, хочетъ перемѣнить на другую. Я лично сейчасъ же прогналъ милиціонера и приказал записать его фамилію, а также фамилію татарина для пріобщенія этого инциндента къ дѣлу. Потомъ комиссія опять начала осмотръ. Лошади были плохого качества-большинство малолетки отъ 2-хъ до 3-хъ лѣтъ съ разными пороками, а кромѣ того были сапныя лошади, калѣки и запальныя /16 штукъ/ которыхъ комиссія выдѣляла совершенно въ сторону. Принятыя въ артилерію и кавалерію выдѣлялись къ воротамъ а малолѣтки и прочія, послѣ полученія согласія представителя земства на их пріемъ, ставились лѣвѣе въ одну группу. Подъ конецъ комиссіи, ко мнѣ подошелъ членъ комиссіи Прапорщикъ ЕВРЕИНОВЪ и доложилъ, что милиціонеры отдѣляютъ все же лошадей и не хотятъ дать на осмотръ. Я тогда подошелъ къ группѣ милиціонеровъ, среди которыхъ стоялъ Г-нъ ПАПИКЯНЪ и спросилъ въ чемъ дѣло. Тогда мнѣ заявили, что такъ какъ комиссія въ милицію лошадей не назначаетъ, то г-нъ ПАПИКЯНЪ рѣшилъ выдѣлить малолѣток и другихъ лошадей, подходящихъ для милиціи отдѣльно, чтобы по сговору и добовольному соглашенію съ татарами можно было бы у нихъ купитъ гораздо дешевле той цѣны, какую назначаетъ комиссія и что если они не представятъ на осмотръ, то комиссія выдастъ расписку объ осмотрѣ лошадей только на тѣхъ, какія значатся въ описи плюсъ забракаванныя, что и было сдѣлано. Во время осмотра лошадей ко мнѣ подходили представители отъ разныхъ частей, напримѣръ артсклада, коменданта города, отдѣльные офицеры и просили разрѣшенія получить лашадей, на что я отвѣчалъ отказомъ, такъ какъ не имѣю на то право и просилъ обратиться къ Генералу ГАМАЗОВУ, отъ котораго исходятъ всѣ распоряженія. Тогда просили разрѣшенія купить бракованныхъ лошадей, на что я тоже не давалъ согласія опять таки потому, что не имѣлъ права и отказывал на этомъ основаніи, что всѣхъ не принятыхъ въ артиллерію и кавалерію лошадей я долженъ возвратить Губернатору. Такимъ образомъ 2-ой вопросъ сношенія Вашего является ни на чемъ не основаннымъ и совершенно отподаетъ, такъ какъ

я не имѣю права разрѣшить продавать и покупать лошадей. До меня дошли слухи съ обвиненіемъ, что будто члены комиссіи продавали лошадей. Считая это оскорбительным отъ лица всей комиссіи заявляю протестъ по этому поводу и требую производства строжайшаго разследованія и наказанія виновныхъ за распространеніе такихъ ложныхъ слуховъ. За недоводъ на осмотръ комиссіи 20 лошадей, которыя куда то пропали, комиссія не отвѣчаетъ, потому что счетомъ лошадей не принимала, а лошади представлялись ответственнымъ представителемъ губернской милиціи въ лицѣ Г-на ПАПИКЯНА, который и долженъ был слѣдить, чтобы лошади не подменивалисъ и не продавалисъ, если послѣднее обстоятельство имѣетъ мѣсто. Въ то же время мною была послана шифрованная телеграмма Генералу ГАМАЗОВУ, что милиція злоупотребляетъ, лучшихъ лошадей беретъ себѣ и просилось содѣйствіе. Сегодня получилъ отвѣтъ на эту телеграмму, копію съ которой прилагаю. Послѣднее мое заключеніе такое, что комиссія дѣйствовала добросовѣстно и честно и что кто имѣетъ что либо заявить противъ этого, пусть съ открытымъ лицомъ заявитъ. Причинъ же недобросовѣстнаго отношенія къ дѣлу слѣдуетъ искать не въ комиссіи, а в другомъ мѣстѣ. Правильность всего вышеизложеннаго, если Вы сомнѣвайтесь, могутъ подтвердить всѣ члены комиссіи. О послѣдующемъ прошу не отказать меня увѣдомить. Копія съ этого сношенія мною представлена Начальнику Главнаго Артиллерійскаго Управленія при рапортѣ. Подлинный подписалъ. Подполковникъ ХОДАКОВСКІЙ. Адютантъ 3-го Отдѣльнаго Артиллерійскаго дивизіона Прапорщикъ /подпись/.

Съ подлиннымъ вѣрно: Помощникъ Начальника Хоз. Отдѣленія, Главнаго Артиллерійскаго Управленія, Прапорщикъ /подпись/.

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 98, թ. 87 և շրջ., պատճեն, մեքենագիր*

## No 106
## ԲԱՆԱԿԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԶԵԿՈՒՅՑ
### *Բեյուք-Վեդիի դեպքերից հետո բանակում դասալքության աճի մասին (29 հուլիսի, 1920թ.)*

КОМАНДУЮШЕМУ АРМІЕЙ
РАПОРТЪ

За послѣднее время въ сязи съ наступленіемъ воискъ на Беюкъ-Веди и Нахичевань вновь участились случаи дезертирства, при чемъ дезертируютъ не единичные солдаты, а цѣлыя партіи. Дезертируютъ Шарурцы и Нахичеванцы. Дезертирство было и раньше и несмотря на мои сношенія съ комиссарами и Министерствомъ Внутреннихъ Дѣлъ, ни одинъ дезертиръ не былъ возврашенъ въ бригаду.

По имѣюшимся у солдатъ свѣдѣніямъ ихъ товарищи дезертиры спокоино проживаютъ по домамъ, не тревожимые мѣстными властями. Оставались тѣ солдаты, села которыхъ были въ рукахъ татръ; теперь же съ очищеніемъ ихъ деревень отъ татръ, они не удержимо стремятся домои при чемъ бѣгутъ дежурные и дневальные, сговорившись съ остальными дезертирами, и такимъ образомъ не остается виновныхъ въ недосмотръ за отлучившимися изъ помѣшеніи солдатами. Досмотры поѣздовъ/ товарныхъ и пассажирскихъ/ ни къ чему не приводятъ, такъ какъ задолго до прибытія на станцію дзертиры спрыгиваютъ съ поѣздовъ обходятъ станціи, гдѣ производится осмотръ поѣздовъ и бѣгутъ дальше.

Пресѣчь подобное явленіе въ силахъ только мѣстные комиссары.

ПОЛКОВНИКЪ КОРОЛЬКОВЪ
Бригадный Адъютантъ Корнетъ КУРДОВЪ
РЕЗОЛЮЦІЯ КОМАНДУЮЩАГО воисками на этомъ рапортѣ:
"-Направить администраціи и просить о высылкѣ дезертировъ въ свою часть.
Генералъ НАЗАРБЕКОВЪ-"
С подлиннымъ вѣрно: Адъютантъ Пограничнаго отд.
КАПИТАНЪ *ստորագրություն*

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 98, թ. 81, պատճեն, մեքենագիր*

## No 107
## ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ
*Հայկական զորքերի կողմից Օլթիի գավառում 13 գյուղեր գրավելու մասին*
*(30 հուլիսի, 1920թ.)*

30 յուլիս 1920թ.
г.Карсъ Ներքին գործերի պ. Մինիստրին
Հաղորդում եմ, որ Օլթիի մեր զօրքը յառաջ գնալով, գրաւեց 13 գիւղ Թաուսկերտի գաւառակից: Բնակչութիւնը փախավ:
Նահանգապետ *ստորագրություն*
Դիվանապետի պաշտոնակատար *ստորագրություն*
Գործավար *ստորագրություն*

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 309, թ. 132, ձեռագիր*
*Գրված է Կարսի քաղաքացիական նահանգապետի՝ հայերեն և ֆրանսերեն լեզուներով դրոշմակնիքով պաշտոնաթերթի վրա:*

## No 108

ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐ ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻՆ

*Մարզի զորամասերում մեծ չափերի հասնող դասալքության մասին*
*(5 օգոստոսի, 1920թ.)*

5.VIII.1920 Կարս Նահանգապետին

Գաղտնի շտապ

Զորավար Յովսէփեանը հեռագրում է որ դասալիքութիւնը ուժեղանում է կէտ տասը օրւայ մէջ փախել են 140 մարդ կէտ դասալիքութեան պատճառով զինւորամասերը փոքրանում են կէտ Զինւորական իշխանութեան դիմումները ադմինիստրացիային մնում են անհետեւանք կէտ Ձեռք առէք կտրուկ միջոցներ:
Դեպտեսուչ

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 26, թ. 239, պատճեն, մեքենագիր*

## No 109

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ

*Բնակչությունից բանակի կարիքների համար բռնագրավված պիտանի ձիերը պաշտոնյաների կողմից զանգվածաբար առգրավվելու և փոխարենը բանակին ոչ պիտանի ձիեր մատակարարվելու մասին*
*(7 օգոստոսի, 1920թ.)*

N 839 16 օգոստոսի 1920թ.
7 августа 1920 г. Մտ. 10070

Министру Внутреннихъ делъ

Рапортъ

Представляя при семъ копію съ рапорта Командира 3-го отдѣльнаго Артллерійскаго дивзіона за N 1009, доношу, что подобный же обмѣнъ имѣлъ мѣсто в Эчмиадзинском уѣздѣ, а потому реквизиція не даетъ тѣхъ результатовъ которыхъ можно было бы ожидать по состоянію лошадей в Арменіи. Прошу зависящихъ распоряженій, чтобы со стороны должностныхъ лицъ были приняты меры к доставленію техъ лошадей, которых имѣетъ население, а не обмѣннѣнныхъ на негодных къ службѣ въ войскахъ.

Генералъ-Лейтенантъ *ստորագրություն*
На...никъ Отделения полковникъ *ստորագրություն*

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 98, թ. 86, բնագիր, մեքենագիր*

## No 110
## ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ
*Եզդիների շրջանում զորակոչի ձախողման կապակցությամբ գեներալ Փիրումյանի հղած գանգատի և այդ հարցին առնչվող առկա խնդիրների մասին*
*(7 օգոստոսի, 1920թ.)*

N 5285, 7 օգոստոսի 1920թ. N10067, 16 օգոստոսի, 1920թ.
г.Карсъ Ներքին Գործերի պ. Մինիստրին

Գեներալ Փիրումովի հերթական գանգատի առիթով, որ հաղորդուած է ինձ Ձեր N7450 հեռագրով պատիւ ունիմ հաղորդելու, որ ես չէի կարող 500 զինուորացու եզիդ ներկայացնելու պարտաւորուել գեներալին: Դուք գիտէք, յոյս ունեմ, որ Կարսի շրջանը ադմինիստրատիւ առանձնակի պայմանների մէջ է: Հայերը գաղթել են իւր ժամանակին և խորտակուել է այն իրաւական կազմը, որ այսպէս թե այնպէս կար: Գիւղերի շինական և գաւառական Կառավարություններում վարած ընտանեկան ցուցակներ չ'կան, ինչպէս չ'կան և եկեղեցական մատեանները, որոնց հիման վերա, կազմւում են տարից տարի զինակոչի ենթակաների ցուցակները: Միւս կողմից պէտք է ի նկատի առած, որ գաղթողներից ոչ բոլորն էլ վերադարձել և այդպիսով ստեղծուել են այնպիսի պայմաններ, ուր այնքան էլ հեշտ չէ, ինչպէս կողմնակի մարդիկ կարծում են, արագ և ճիշտ զինակոչը:

Այդ խնդրի ընդհանուր իմաստն է:

Դառնալով եզդիներին, պէտք է ասեմ, նոցա երիտասարդությունը բռնակրութեամբ է պարապում Թիֆլիզում և հետևապէս բացակայ է: Միւս կողմից զանազան Ջահանգիր աղաների ձեռնարկութիւնները, որոնք լիազորում են ինչ որ կամւորական խմբեր կազմել առանց նահանգապետի գիտութեան, շփոթ են ստեղծում, եթէ չ'ասենք քաօս, խնդրի մթնոլորտում:

Անցնելով խնդրի գործնական կողմին, մինչև այսօր յանձնուել է զորամասերը 77 եզիդ, որոնցից աւելի քան 30 փախել են զորամասերից: Եթէ ադմինիստրացիան պարտաւոր է բռնելու զինուորականներին, ես կարծում եմ զինուորական իշխանութիւնը ազատ չի կարող լինել նոցա վերահսկելու պարտաւորութիւնից:

Գալով Պարլամենտի անդամ Իոսիֆ Բէգի զեկուցմանը այդ առիթով, հարկաւոր եմ համարում ասել, որ դեռ նորա Կարս գալուց առաջ ես քննութիւն նշանակեցի Նախիջևան գաւառապետի գործունէութիւնը քննելու և այդ պաշտօնեային, մասամբ եզիդիների զինակոչի վերաբերմամբ զեղծումների համար, բանտարկեցի նորան և գործը յանձնեցի դատաստանեական քննիչին:

Բացի այդ, ես Իոսիֆ Բէկին այստեղ եղած ժամանակ դեռ, զինակոչի գործում զանցառութեան համար, բանտարկեցի եզիդների գլաւա Ագիթ աղային, բայց պարլամենտի անդամ Իոսիֆ Բէկին միջնորդութեան համաձայն արձակեցի բանտից, մինչև յուլիսի 20 ժամանակ տալով նորան հաւաքել և ներկայացնել բոլոր զինւորացուներին:

Եվ որովհետև նա չ'կատարեց հրամանը, ես նորան մի քանի օր առաջ նորից բանտարկեցի: Բայց այդ նոյն զանցառութեան համար բանտարկեալ եմ տւել 25 գիւղական պաշտօնեաներ և այն տանտէրերին, որոնք պէտք է տան զինւորացուներ:

Միևնոյն ժամանակ առանձին պաշտօնեա եմ ուղարկել Նախիջանի գավառակը յատուկ այդ գործերի համար:

Ես կարծում եմ, որ այդ բոլորը յայտնի չափով փարատում է խնդիրը, որ առաջ է եկել գեն. Փիրումովի հերթական գանգատից:

Գանգատավորի դէրը և հեշտ է և անպատասխանատու:

| | |
|---|---|
| Նահանգապետ Ղորղանյան | *ստորագրություն* |
| Դիվանապետի պաշտօնակատար | *ստորագրություն* |
| Գործավար | *ստորագրություն* |

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 50, թթ. 40-41 և շրջ., ձեռագիր*
*Գրված է Կարսի քաղաքացիական նահանգապետի՝ հայերեն և ֆրանսերեն լեզուներով դրոշմակնիքով պաշտոնաթերթի վրա:*

## No 111
## ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ

*Հայկական զորքերի կողմից Օլթին գրավելուց հետո այնտեղ իրականացրած թալանի անասելի չափերի,[355] գեներալ Հովսեփյանի կողմից Օլթիի և Արդահանի շրջաններում իբր հակապետական դավադրության և ապստամբության վերաբերյալ հնարովի տեղեկությունների և այդ մտացածին պատճառներով մարզի քաղաքացիական իշխանությանը վարկաբեկելու և փոխարենը Կարսի մարզում զինվորական գեներալ-նահանգապետություն հիմնելու անհրաժեշտության նրա առաջարկի մասին*
*(7 օգոստոսի, 1920թ.)*

N 5286, 7 օգոստոսի 1920թ. N10071 16 օգոստոսի, 1920թ.
г.Карсъ Ներքին գործերի պ. Մինիստրին

Յուլիսի 18 N 1658 ես հեռագրեցի Ձեզ, որ Գեն. Օսեփովը, սպառելով իմ դէմ ամիսների ընթացքում վարած իր ինտրիգները, պետական դաւադրոթիւն է գտել այժմ Արդահանի շրջանում և տքնում է կապել նորա հետ և Գնդապետ Կադիմովի անունը: Երբ

[355] Տե՛ս նաև՝ Գ.Յազըճեան, Կարսի 1920թ….:

Օլթիի գրաւումից մի քանի օր յետոյ ամենուրէք երերեւցին այն դափնիքը, որով այդ Գեներալը պսակեց իր արշաւը, իսկ այդ վայրում կատարւած կողոպուտը առասպելների հասաւ, Գեներալը փորձեց վերականգնել իր դրութիւնը: Երկու Գեներալներ, Օսեփովի, իհարկէ, նախաձեռնութիամբ հրաւիրեցին ինձ իբր խորհրդակցութեան, ուր Օսեփովը խորհրդաւոր յայտնեց, որ Օլթիի շրջանում, այսինքն այն 36 գիւղերում, որ նա տիրել է, իր թիկունքում, դաւադրութիւն է պատրաստւում և նա ճակատում ունենալով Տաճկաց բանակը, իսկ թիկունքում դաւադիր տարածութիւն, թակարդի մէջ է ընկել:

Այս հիմունքներով Գեն. Օսեփովը պահանջ դրեց հեռացնելու դէպի Կարս Օլթիի ամբողջ ազգաբնակութիւնը: Իմ N4617 զեկուցումից Դուք գիտէք, որ ես առարկեցի այդ անպատասխանատու ֆանտազիայի դէմ և Գեներալները չէին կարող, ի հարկէ, չ'համաձայնել այդ ակներև բացատրութութիւնների հետ:

Անցաւ, ինչպէս տեսնում էք, մի ամիս, Գեներալը ողջ և առողջ է, այդ ժամանակամիջոցում միւս գիւղերն էլ տրամադրութիւն ցոյց տւին ենթարկւելու մեզ և մեր տերիտորիային աւելացան գիւղերի նոր շարքեր: Իսկ մինչ այդ, ինչպէս գիտէք իմ գրութիւններից, Գեն. Օսեփովի կազմակերպած կամաւորական վաշտերը շարունակում էին իրանց նվաճումները, անխնայ թալանում էին իրանց ազգաբնակութիւնը: Այդչափ սպառնալից էր Գեներալի դրութիւնը: Երբ այդ հերթական համարն էլ չանցաւ, գեներալը գտաւ մի նոր դաւադրութիւն իր դէմ, այժմ աւելի հեռու իրանից, Արդահանի գաւառում: Եվ այդ դաւադրութիւնը աւելի սենսացիօն էր այն պատճառով, որ նորա հեղինակը Հ.Հ. պաշտօնեան, մեր գաւառապետ Կադիմօւն էր, որին մեր Կառավարութիւնը Գնդապետի բարձր աստիճան շնորհեց և որի դէմ գեներալը մարտնչում է ամիսների ընթացքում պէս-պէս միջոցներով: Գեներալից գտնւած դաւադրութեան ֆաբուլան շատ պարզ էր: Արդահանի գաւառի մի գործունեա քուրդ գլաւա, տանուտէր, որ շատ հարուստ, շատ ազդեցիք և գաւառապետից յարգւած մի մարդ է, ամբաստանւում է Օլթիի չետնիկների հետ բանակցությունների մէջ: Պէտք է ասել, որ այդ վայրի կենտրոնումն են պատմական ինտրիգաների հռչակ վայելող յոյները, այն յոյները, որոնք մեծ և հին հաշիւներ ունէին քրդերի հետ և որոնց աչքից չէր կարող, ի հարկէ, վրիպել Գեն. Օսեփովի անյաշտ տրամադրութիւնը այս կամ այն ձևով ամբաստանել ադմինիստրացեան և այդ ճանապարհով հաշիւ տեսնել նահանգապետի հետ:

Այդ առանցքում յղացաւ գեներալին սպառնացող դաւադրութիւնը: Գեներալը մի վաշտ է ուղարկում ձեռբակալելու այդ գլաւային, բայց գլաւան բացակայ լինելով, զօրամասին ընկերացած յոյները և զանազան արկածախնդիրներ թալանում են քուրդ գիւղը, քրդերը փախչում են լեռները, իսկ յոյները, առիթից օգտվելով, լուծում են իրենց վրէժը

և ռումբեր են նետում ահաբեկւած և փախչող քրդերի վերայ: Եվ այդ ֆանտաստիկ իրարանցման մէջ սպանւում է 3 քիւրդ: Բայց Գեներա- լին մեծ աղմուկ մթնոլորդ էր պէտք: Արդահանի գառնիզօնի պետը հեռագիր է ստանում, որ մեր թիկունքում ապստամբութիւն է, պէտք է ընկճել և նա իր զօրամասով գալիս է ապստամբութեան վայրը, որ- տեղից ուղարկում է իր մեծին հետևեալ զաւեշտ զեկուցումը՝. .. «եկայ դաւադրութեան տեղը, ոչ ապստամբութիւն եմ տեսնում և ոչ թշնամի, վերադառնում եմ»…. Իսկ մինչ այդ, Գեներալը, բավականութիւնից ձեռքերը տրորելով, հեռախօսով Կարսից յայտնում է Սարիղամիշ Պարլամենտի նախագահին, որ Արդահանում ապստամբութիւն է բռնկւել և այդ ապստամբութեան գլուխ անցել է ադմինիստրացիան: Գեներալը պատրաստականութիւն է յայտնում մանրամասն զեկուցե- լու իրերի դրութիան հետ նահանգում և միւս օրը, երբ վերադարձաւ պարլ. Նախագահը, նորա վագոնում, ի զարմանս իմ, ժողովի եմ հրաւիրւում և ես: Իսկ ես տեղեկութիւն չունէի այժմ իմ թիկունքում կազմակերպւող դաւադրութեան մասին: Առաջի խօսքը տրւում է ժողովի նախաձեռնողին – Օսեփովին, որ և սկսում է իր մեղադրա- կան ճառը իմ հասցէով, որ տևում է երեք ժամ: Վարչագետի հեղինա- կաւոր ապլոմբով և հայրենիքի մասին հոգացողի տօնով, նա ծանրա- նում է քրէական գործերի վերայ յետոյ անցնում է նախկին վարչա- պետ Խաթիսովը, Կարսում կատարած ճանապարհորդութեան մէկ- նութիւններ անելով, թէ որտեղ և ինչու նա ճաշել է մի տեղ և ընթրել մի այլ տեղ: Վերջացնելով այդ առակը, գեներալը շատ բարձր տրա- մադրութեամբ նկարագրում է Արդահանում Կադիմովի բարձրացրած ապստամբութիւնը և աւելացնում է, որ իմ օգնականի պաշտօնակա- տար Չալխուշեանը, որ ուղարկւած էր այդ առիթով Արդահան, ասել է նրան, որ նա համոզւեց Կադիմովի դաւաճանութեան մէջ: Իր ֆիլիպի- կան Օսեփովը ձևակերպեց հետևեալ մեծախմաստ յայտարարութիւ- նով _«Այդ հիմունքներով ես հարկաւոր եմ համարում գեներալ նա- հանգապետութիւն, զինւորական դիկտատուրա հիմնել Կարսի նա- հանգում և մեկնութիւնների տեղիք չ'տալու համար այժմեանից հրա- ժարւում եմ գեներալ նահանգապետի պաշտօնից….» Հեռատեսու- թիւն պէտք չ'կար, ի հարկէ, այդ ֆարսը հասկանալու համար:

Երբ պարլամենտի նախագահը խօսք տւեց ինձ, մեղադրեալին, ես ասացի. - ամենից առաջ ես չեմ ըմբռնում այս ժողովի իմաստը և չեմ հասկանում, ի՞նչ լիազօրութիւններով գեն. Օսեփովը հանդէս է գալիս պրօկուրօրի դերում, իսկ ինձ համարում են դատի ենթակայ: Անցնե- լով մեղադրական ճառին, ես իմ զարմանքս յայտնեցի, որ գեներալը հնարաւոր է համարում շոշափել քրէական գործերի խնդիրը, որ իր իրաւասութիւնից դուրս է և աւելացրի, որ ես հարկաւոր չեմ համարում բացատրւելու այդ ուղղութեամբ, որովհետև ես հաշիւ եմ տալիս իմ կառավարութեանը, որը բաւական իրազէկ է այդ խնդրում:

Դառնալով նախկին վարչապետ Խատիսէանի հասցէին շպրտած առակներին, ես ասացի, որ ես տրամադրութիւն չունեմ զբաղուելու այդ ասէկոսեներով և անվայել եմ համարում շոշափել մի անուն, որ թէև անցեալում, կանգնած էր կառավարութեան գլխում: Արդահանի էպօպէաի մասին ասացի ես չեմ լսել, իսկ բաւարարելու Օսեփովի վաղեմի երազները գեներալ նահանգապետութեան մասին, վերջացրի խօսքս, ես ի վիճակի չեմ, որովհետև այդ խնդիրների իրաւասութիւնը պատկանում է օրէնսդիր մարմիններին:

Այդպէս վերջացաւ այդ էքսպրոմտ տրիբունալը, ուր ունկնդիրները, կարծեմ, այնքան էլ լաւ չէին զգում իրանց.....

Դաւադրութեան-ապստամբութեան գործով ես ուղարկել էի Արդահանի գաւառը Չալխուշեանին, որի զեկուցումը ներկայացնում եմ: Ներկայացնում եմ նորա և մի այլ զեկուցումը, ուր նա հերքում է գեներալ Օսեփովի իր հասցէով ամբաստանութիւնը:

Կցում եմ սորան Միլիցիապետ Մինասիանին. զեկուցումը մեզ զբաղեցնող խնդրի մասին և աւելացնում եմ, որ այդ բոլոր գրութիւնները ուղարկւած են դատաստանական քննիչին: Ես խնդրել էի պարլամենտի անդամ պ. Մաքսապետեանին անցնել այդ շրջանը, յոյս ունիմ, որ նա իրազէկ արած կ՚լինի Ձեզ: Բացի այդ, ինչպէս ես հեռագրել էի Ձեզ, ես օգտւեցի դատաստանական պալատի անդամ Աբգարեանի այստեղ ներկայիւթիւնից, խնդրեցի նորան էլ անցնել Արդահան և ծանոթանալ իմ պահանջով ծագած քրէական գործի հետ: Բայց իմ բոլոր հետախոյզ միջոցները ոչ մի տեղ չ՚գտան այդ դաւադիր-ապստամբութեան հետքերը և ես ստիպւած էի միջոցներ ձեռք առնել այդ ռումբերից և թալանից ահաբեկւած քրդութիւնը լեռներից, իրանց տները բերելու համար:

Իսկ լեգենդար Բահրի, քուրդ գլաւան, որին բռնելու համար գեն. Օսեփովը վաշտեր, ռումբ և գնդացիր էր ուղարկել, փախաւ Վրաստան և ապաստանեց այնտեղ: Եվ ո՞վ է մեղաւոր, որ եթէ վաղը, այդ քուրդ Բահրին, մի հրոսակի գլուխ անցնելով, լուծի Օսեփովի վրէժը խաղաղ ազգաբնակութեան պարանոցի վիրայ, ասպատակելով երկիրը: Չէ՞ որ մեր լեռների բոլոր հռչակաւոր աւազակապետները- Թեարամ, Նաբի այդ օրինակ պայմաններում տգէտ և անձեռնհաս ռուս ոստիկաններից հալածւելով ստիպւած էին աւազակ դառնալու և հայրական օջախից դուրս դեգերելու:

| | |
|---|---|
| Նահանգապետ Ղորղանյան | *ստորագրություն* |
| Դիւանապետի Պաշտօնակատար Դոխիկյան | *ստորագրություն* |
| Ի.տ. Գործավարի Ս. Գէորգիան | *ստորագրություն* |

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 50, թթ. 19-21 և շրջ., ձեռագիր*
*Գրված է Կարսի քաղաքացիական նահանգապետի՝ հայերեն և ֆրանսերեն լեզուներով դրոշմակնիքով պաշտոնաթերթի վրա:*

## No 112
## ՕԼԹԻԻ ՇՐՋԱՆԻ ՊԵՏԻ ԶԵԿՈՒՅՑԸ ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻՆ
*Օլթիի գյուղերում զինվորականների կատարած անասնագողության մասին*
*(8 օգոստոսի, 1920թ.)*

КОПІЯ СЪ РАПОРТА НАЧАЛЬНИКА ОЛЬТИНСКАГО ОКРУГА ЕГО ПРЕВОСХОДИТЕЛЬСТВУ ГОСПОДИНУ ГУБЕРНАТОРУ КАРССКОЙ ОБЛАСТИ ОТЪ 8 АВГУСТА 1920 ГОДА №299

Экстренно О происшествіи.

Комиссаръ сел. Либи, ввѣреннаго мнѣ округа, Мато-Ибрагимъ оглы совмѣстно съ жителями того же селенія съ Гамидомъ Гусейнъ оглы, съ Сулейманомъ Кая оглы и Мустафой ата оглы явясь “5” числа сего мѣсяца ко мнѣ заявили, что вчерашняго числа прибыли въ означенное селеніе 4 солдата, изъ коихъ одинъ именую себя Комендантомъ сел. Панакь силою отняли у нихъ три барашки и 2 козлика и не уплативъ денегъ ушли, по направленію сел. Пананкъ. Ночью же сего числа тѣ же солдаты взявъ съ собою еще одного, явились въ означенное селеніе и украли 20 барановъ. Одинъ изъ нихъ именовал себя солдатомъ 5 роты 5-го пѣхотнаго полка Бабкенъ Григорянцемъ.

Донося Вашему Превосходительству о вышеизложенномъ докладываю, что мною было предложено и.о. помощника моего шт.рот. Ениголопову выѣхать на мѣсто происшествія для розыска какъ злоумышленниковъ, такь же угнанной баранты и производствѣ дознанія, который въ свою очереды рапортомъ отъ сего числа доноситъ, что изъ похищенныхъ у жителя сел. Либи разновременно 25 головъ мелкаго рогатаго скота, ему удалось найти 6 овецъ, остальныхъ не представилось возможности отыскать, вслѣдствіи посдно полученныхъ свѣдѣній отъ жителей, когда всѣ слѣды были потерены. Розыски продолжаются, дознаніе одновременно съ симъ предпровождено г. Слѣдователю Ардаганско-Ольтинскаго участка.-

Подписалъ Начальникъ Округа Поручикъ БОСТАНБЕКОВЪ
Вѣрно: Дѣлопроизводителя Канцеляріи
Карсскаго Губернатора *ստորագրություն.*

НАЧАЛЬНИКУ АЛЕКСАНДРОПОЛЬСКОЙ ГРУППЫ ВОИСКЪ КОПІЯ
Препорвождая на Ваше распоряженіе, прошу о послѣдующемъ меня увѣдомить.-
“16” августа 1920 года г. КАРСЪ
ГУБЕРНАТОРЪ КАРССКОЙ ОБЛАСТИ КОРГАНОВЪ *ստորագրություն*
Скрепилъ Ис. Об. Правителя Канцеляріи ДОХИКОВЪ *ստորագրություն*
Вѣрно: Дѣлопроизводителя *ստորագրություն*

ГОСПОДИНУ ВОЕННОМУ МИНИСТРУ КОПІЯ
Для свѣдѣнія.

“16” августа 1920 года г. КАРСЪ № 5433
Подписалъ Губернаторъ Карсской Области КОРГАНОВЪ
Скрепилъ Ис. Об. Правителя Канцеляріи ДОХИКОВЪ
Вѣрно: Дѣлопроизводителя: *ստորագրություն*

ГОСПОДИНУ МИНИСТРУ ВНУТРЕННИХЪ ДѢЛЪ.-
Для свѣдѣнія.-
“16” августа 1920 года г. КАРС Ъ № 5433
ГУБЕРНАТОРЪ КАРССКОЙ ОБЛАСТИ КОРГАНОВЪ
Ис. Об. Правителя Канцеляріи ДОХИКОВЪ
Дѣлопроизводителя *ստորագրություն*

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 48, թ. 208 և շրջ., պատճեն, մեքենագիր*

**No 113**
ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ
*Արևմտյան Հայաստան ուղարկված հետախույզի միջոցով*
*ստացված տեղեկությունների մասին*
*(10 օգոստոսի, 1920թ.)*

10 օգոստոսի 1920թ. Գախտնի
No178 ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ Պ.ՄԻՆԻՍՏՐԻՆ

Ես յատուկ յանձնարարութեամբ մարդիք էի ուղարկել Տաճկաստան երկրի դրութեան հետ ծանոթանալու համար: Հաղորդում եմ ստացված տեղեկոթիւնները:

1. Կարինում և Հասան-Ղալայում գրեթե զորք չի մնացել, զորքերը ուղարկված են դեպի Յունաց ճակատը:
2. Կարինի 4 զօրաբանակից 5 վաշտ ծանրութիւններով և արտիլերիայով ուղարկված են Խորասան գյուղը:
3. Մի զորամաս էլ Կարինից ուղարկված է Իսլամզօր գյուղը, այդ զօրամասի ծանրությունն ու զինամթերքը տեղափոխելու համար նշանակված էր 200 սայլ:
4. Քուրդ Դջամալ բեյը, որի հրոսակըբաղկացած է 500 քրդերից և մասամբ կանոնավոր զօրքից կանգնած է Ալիբջայրամ:
5. Կարաքիլիսայում կայ միայն 30 համիտեա:
6. Կարինից մինչև Խորասան բոլոր զենքի ընդունակները զօրահավաքի են ենթարկւած և ուղարկված ենյուների դեմ և մասամբ դեպի Օլթի:
7. Զօրքի մեջ մասսայական դասալքութիւն է, փախչում են և նոր կոչված զինւորները:
8. Կանոնավոր զօրքը շատ վատ է հագնված և ստանում են հացի տեղ ½ ֆունտ ձավար:

9. Մեր այն քրդերը, որ փախել են Տաճկաստան, շատ ընկճված են: Ազգայնական շարժման պարագլուխները ի ծայր ճնշում և կեղեքում են նոցա և քրդերը միայնության մեջ են, տրամադիր են վերադառնալու:
10. Տաճկած կանոնավոր զորքը, հոգնած, պատերազմի դեմ է: Անցեալ օրը վերադառնալով Կաղզմանի գաւառից, ես հաղորդեցի Ձեզ, որ Տաճկաստան անցել են Ատրբեյջանի զինուորները: Մեր տեղեկութիւնը ճշտուել է այսօր և մի այլ աղբյուրից: Ատրբեյջանի ինչ որ զօրամաս, սպաներով, Պարսկաստանով, անցել է Ալաշկերտի հովիտը, մի մասը Կոմասօր, Կարինի գավառ:
Թուրքերի գալուց յետոյ, տաճկայ ասկեարները, որպես, իբր թե բոլշևիկներ, սկսել են ինց փափախների վրայ կրել ինչ որ կարմիր ցնցոտիներ:

| | | |
|---|---|---|
| Նահանգապետ Ղորղանեան | *ստորագրություն* | Կ.պ. |
| Դիվանապետի | *ստորագրություն* | |
| Գործավար | *ստորագրություն* | |

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 50, թ. 39, ձեռագիր*
*Գրված է Կարսի քաղաքացիական նահանգապետի՝ հայերեն և ֆրանսերեն լեզուներով դրոշմակնիքով պաշտոնաթերթի վրա:*

## No 114
## ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆ

*Բնակչությունից բանակի կարիքների համար բռնագրաված պիտանի ձիերը պետական պաշտոնյաների կողմից զանգվածաբար առգրավելու և փոխարենը բանակին ոչ պիտանի ձիեր մատակարարելու մասին*
*(16 օգոստոսի, 1920թ.)*

Ն.Գ.Ն. Շ ր ջ ա բ ե ր ա կ ա ն
ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ, Նօ 7733
“16” օգոստոսի 1920թ. Բոլոր Նահանգապետերին և
Երևան գավառային Կոմիսարներին

Ստացւած տեղեկութիւնների համաձայն Զինուորական կարիքների համար ձիեր բռնագրաւելու ժամանակ գւղացիներից վերցրած ձիերը ներկայացնելուս փոխում են վերցնելով լաւերը եւ ներկայացնելով վատերը եւ այդպիսով ստեղծում են այնպիսի դրութիւն, որի հետեւանքով բռնագրաւումը անարդիւնավէտ է դառնում: Առաջարկւում է ձեռք առնել ամենակտրուկ միջոցներ որ պաշտօնեաների կողմից նման կեղծիքները չը կրկնվին:

| | |
|---|---|
| Ի. Տ. Դեպարտամենտի Տեսուչ | *ստորագրություն* |
| Ի.Տ. Դիվանապետ | *ստորագրություն* |
| Գործավար | *ստորագրություն* |

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 98, թ.85, բնագիր, մեքենագիր*

## No 115
## ԳՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻՆ ԵՐԿՐԻ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ
*Մարզում դասալքության դեպքերի մասին*
*(31 օգոստոսի, 1920թ.)*

31/VIII 20թ. ԿԱՐՍ

Վանանդի Նախանգապետին

Ամենակտրուկ միջոցներ ձեռք առեք և կարճ ժամանակում հավաքեք դեզերտիրներին որ այնքան շատ են Ձեր նախանգում:

Ներքգործմինօգն *ստորագրություն*

Ճիշտ է Գործավար *ստորագրություն*

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 309, թ. 23, պատճեն, մեքենագիր*

## No 116
## ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻ ԱՆՈՒՆՈՎ ՎԿԱՅԱԿԱՆ
*Կարսի կայազորում և մարզի զորամասերում ստուգումներ իրականացնելու և մեղավորներին բացահայտելու լիազորություններով օժտելու մասին*
*(1920թ., ամառ)*

Копія.

УДОСТОВЪРЕНІЕ № 691 Сов.секретно

Предъявитель сего Членъ Военной Парламентской Комиссіи Г. ОГАНДЖАНЯНЪ уполномоченъ въ г. Карсѣ и Карсской области произвести повѣрку интендантскихъ, инженерныхъ, артиллерійскихъ и другихъ мастерскихъ и складовъ Военнаго Вѣдомства Арменіи и сдѣлать необходимыя указанія по приведенію ихъ въ порядокъ, а также разслѣдовать дѣятельность личнаго состава этихъ учрежденій. О всѣхъ замѣченныхъ упущеніяхъ по службѣ или .......... г. Оганджанянъ сносится по телеграф у съ Военнымъ Министромъ на предметъ отстраненія отъ должности или преданія Суду должностныхъ лицъ вышеупомянутыхъ учрежденій. На него же возлагается принятіе мѣръ по ускоренію сосредоточенія имущества Карсскихъ складовъ.

Вмѣстѣ съ г. Оганджаняномъ командируется представитель Военнаго Контроля и Военно-Прокурорскаго надзора, что подписью и приложеніемъ казенной печати удоствѣряется.

Подписалъ Военный Министръ Рубенъ Теръ-Минасянъ.
И. Д. Начальника Главнаго Штаба Полковникъ Багдасаровъ
Врид. Начальника Отдѣла В. Ч. Асріянцъ.
Вѣрно: Врид. Начальника Отдѣленія В. Ч. /...../

*ՀԱԱ, Ֆ. 280, ց.2, գ.9,թ.18 և շրջ., պատճեն, մեքենագիր*

## No 117

ՀԵՌԱԳԻՐ

*Քեմալականների հարձակման հետևանքով Կարսի մարզում ընթացող ծանր մարտերի և գործող բանակի շարքերը շտապ համալրելու անհրաժեշտության մասին*
*(28 սեպտեմբեր, 1920թ)*

Շտապ հերթից դուրս

Տաճիկները մեծ ույժեր կենտրոնացնելով Օլթիի եւ Բարդուզի շրջաններում ամբողջ ֆրոնտի վրայ յարձակման են դիմել այժմ տեղի են ունենում օրհասական ծանր կռիւներ որոնց ելքից կախուած է Կարսի նահանգի եւ ամբողջ Հայաստանի բախտը կէտ Լրացնելու եւ զօրացնելու համար մեր զօրամասերը օգնական նոր ույժեր կազմակերպելու համար անհրաժեշտ է ուժեղ եւ ընդհանուր զօրահաւաք մինչեւ 32 տարեկան բոլոր զինապարտների կէտ

Նահանգապետները քաղաքային եւ տեղավարական բոլոր ինքնավարութիւնները գաւառային շրջանային համայնական գիւղական կոմիսարներն ու միլիցիապետներն զինւորական ատեաններն եւ հասարակական բոլոր հաստատութիւնները պարտաւոր են ժողովրդին լայն կերպով ծանօթացնել ստեղծուող դրութիւնն եւ զօրահաւաքի ձեռնարկել ուժեղ թափով կէտ Այդ նպատակով հաւաքել բոլոր դասալիքներին եւ զանազան պատրւակներով ծածկւած զինապարտներին եւ ուղարկել զինւորական ատեաններին որոնք միշտ պէտք է պատրաստ լինեն ընդունելու անոնք զօրապետներին ուղարկելու:

Ներգործմին ՝ ստորագրություն

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 48, թ. 276, պատճեն, մեքենագիր*
*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 98, թ. 103, պատճեն, մեքենագիր*

## No 118

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՌԱԶՄԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՊԱՐԱԿԱԾ ԱԶԴԸ

*Սկսված թուրքական արշավանքի պայմաններում դասալիքների նկատմամբ շատ խիստ պատժամիջոցներ կիրառելու մասին*
*(Սեպտեմբեր, 1920թ.)*

### ԱԶԴ

Հայրենիքի փորձութեան այս ծանր ժամին, երբ Հայաստանի բոլոր հաւատարիմ և հարազատ զաւակների հուժկու բազկի հարւածների տակ պիտի փշրւեն թշնամու ույժերը և ընդ միշտ խորտակւեն նրա լարած որոգայթները, յայտարարում ենք ի լուր ամենի, որ զէնքի տակ

կոչւող տղամարդկանցից ով համարձակւի ԽՈՒՍԱՓԵԼ շարքերը մտնելուց կամ ԴԱՍԱԼԻՔ լինի՝ նա խստօրէն կպատժւի ռազմական ժամանակի վերաբերեալ օրէնքների համաձայն:
Մենք պիտի յաղթենք անարգ թշնամուն, այլպէս չկայ փրկութիւն մեզ համար. և ով փոքրոգութեամբ կլքի մեր սեղմ շարքերը կամ կդաւաճանի հայրենիքին, այդպիսին մահւան պատժի կենթարկւի կախաղանի միջոցով, այն էլ հրապարակով:
Անխուսափելի մահ բոլոր դասալիքներին և մահ բոլոր դաւաճաններին:
Ռազմական Նախարար՝ ՌՈՒԲԷՆ ՏԷՐ-ՄԻՆԱՍԵԱՆ
Գլխավոր Շտաբի Տպարան

*ՀԱԱ, Ֆ. 280, ց. 2, գ. 48, թ. 1, տպագիր օրինակ*

## No 119

## «ՌԱԶՄԻԿ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՉԸ ՀԱՅ ԶԻՆՎՈՐՆԵՐԻՆ

*Քեմալական զորքերի սկսված արշավանքի կապակցությամբ*
*(30 սեպտեմբերի, 1920թ.)*

**ԿՈՉ**

ՀԱՅ ԶԻՆԻՈՐՆԵՐ!

Հայրենիքը նորից վտանգի մէջ է: Թիւրքական զօրքերը դահիճ փաշաների ղեկավարութեամբ մտել են մեր երկրի ներսը և սպառնում են Հայաստանի Հանրապետութեան: Այն ազատութիւնը, որ ձեռք ենք բերել ձեր անձնազոհութեամբ ու հերոսութեամբ, այսօր մեր դարաւոր թշնամին ուզում է նորից ոտնահարել:

Հայ մարտիկներ, բոլէն լուրջ է և ամենից առաջ դուք էք, որ պիտի գիտակցէք թիւրքական ահաւոր վտանգը, որովհետև առաջինը դուք էք տեսել այն դաժանութիւնները, որ գործել են թիւրք զինւորները հայ ժաղավրդի նկատմամբ:

Այս անգամ ձեր թշնամին ուզում է վճռական հարւած հասցնել հայ ժողովրդին, նա գազազած Արևմտեան ճակատում յոյն զօրքերի տարած յաղթութիւններից՝ Արևելեան ճակատում իր վրէժն է ուզում լուծել հայերից:

Արիացէք հայ զինւորներ, սեղմ ու կուռ շղթաներով դիմեցէք դէպի ռազմաճակատ: Դուք, որ այս երեք տարւայ ընթացքում շատև շատ դժւարութիւններից էք հանել մեր սիրուն հայրենիքը, այսօր էլ կը հանէք վերահաս վտանգից:

Հոգևարքի մէջ ապրող մեր թշնամին՝ իր վերջին ոյժերն է գործադրում հարւածելու Միացեալ և Անկախ Հայաստանի գաղափարին: Նա գիտէ, որ Պարիզի դաշնագրով արդէն Հայաստանին են կցւած

հայկական վիրայեթները և որ վաղը փաստօրէն հայը տէր է դառնալու իր ամբողջական հայրենիքին: Միթէ այդ բանին կարող է հանդուրժել թուրքը: Միթէ թաթարը կարող է տանել երեկւայ ստրուկ հային ազատ ու ինքնօրէն իր կողքին: Երբէք: Եւ ահա վերջին անգամ լարել է իր ուժերը փշրելու մեր ազատութիւնը:

Հայ զինուոր, ժողովիր ոյժերդ և կուրծք տուր փշրելու թաթարի ստրկացնող լուծը: Այդ լուծը դարեր շարունակ անիծւած ու մահաշունչ է եղած հայի համար, այսօր մեր բոլոր ոյժերով պիտի յետ վանենք մեզանից:

Հայ ժողովրդի կամքն ու սիրտը քեզ հետ է հայ զինուոր: Քեզ է փայփայում ու գուրգուրում նաև Հայաստանի Հանրապետական կառավարութիւնը. զօրացիր հայ զինուոր և Սասունցի Դաւթի զօրութեամբ խորտակիր մեր թշնամուն:

Տաճիկը պարտւած է. մեր ազատութիւնը պահանջում է, որ այս անգամ էլ նա պարտւի հայ զինուորից:

Այդ է պահանջում մեր հայրենիքի պատիւը, հայ ժողովրդի պատիւը:

Հա՛յ զինուոր, եղիր քաջ ու յաղթող:

Քեզ հետ ենք ամենքս:

Դէպի կռիւ, դէպի յաղթանակ:

*«ՌԱԶՄԻԿ»-ի խմբագրութիւն* *1920թ. սեպտեմբերի 30*

*ՀԱԱ, Ֆ. 280, ց. 2, գ. 37, թ. 1, տպագիր օրինակ*

## No 120

## ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԸ

*Թուրքական ներխուժման պայմաններում մինչև 35 տարեկանների զորահավաք սկսելու մասին*
*(30 սեպտեմբերի, 1920թ.)*

Շրջաբերական Հերթից դուրս

Ի լրացումն 8926 հեռագրի եւ յետեւումն Կարսի նահանգում զարգացող դէպքերի առաջարկումն եմ ամենավճռական միջոցներ ձեռք առնել անյապաղ դասալիքներին հաւաքելու զանազան պատրւակներով ծածկւածներին յերեւան բերելու եւ նոր զօրահաւաք սկսելու մինչեւ 35 տարեկանները: Այսօր եւ եթ կուղարկւի Ձեզ հրատարակւած օրէնքը այդ մասին կէտ Այդ նպատակով յատուկ լիազօրութիւն ներով մեկնում են Կարս նախարարներ Վրացեան եւ Բաբալեան Ալէքսանդրապօլ Ղարաքիլիսա Չեզօք Ջոնա նախարարներ Ջամալեան եւ Ղազարեան Դիլիջան նախարար Գիւլխանդանեան Բայազէտ Ջանգեզուրի նախկին նահանգապետ Մելիք Եօլչեան

Ներքին Գործերի Նախարար

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 98, թ. 106, պատճեն,մեքենագիր*

## No 121
«ՅԱՌԱՋ» ԹԵՐԹՈՒՄ ՏՊԱԳՐՎԱԾ ԿՈՉ

*Հայաստանի վրա քեմալական զորքերի հարձակման կապակցությամբ*

*(30 սեպտեմբերի, 1920թ.)*

ԴԷՊԻ ՖՐՕՆՏ

Մեր դարավոր թշնամին նորից ոտքի է կանգնել, նա ծեծում է մեր դռները կարմիր դրոշակներով, նրա նպատակն է Հայաստանը ոտքի տակ տալ և միանալ բոլշևիկներին: Ներքին դավաճաններն էլ սպասում են նրանց գալստյան:
Պատրաստ, հայ ժողովուրդ, թրքական վտանգն է գալիս:
Դեպի ֆրոնտ, դեպի թշնամին: Ով մեզ հետ չէ,… մեր թշնամին է: Ով փախչում է,… նա դավաճան է:
Մահ ներքին դավաճաններին, մահ թշնամուն[356]:

*«ՅԱՌԱՋ», No 212, հինգշաբթի, 30 սեպտեմբերի, 1920թ.*

## No 122
ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Ռազմաճակատի Կարսի հատվածում ծավալված գործողությունների մասին*

*(30 սեպտեմբերի-14 հոկտեմբերի 1920թ.)*

ԱՆՆԷՔՍ N1
ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՂԱՐՍԻ ՃԱԿԱՏԻ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հաղորդագրութիւն 30 Սեպտեմբերի.- Նոր Սելիմի շրջանում կռիւները շարունակւում են.

1 Հոկտեմբերի.- Նոյն շրջանում կռիւները շարունակւում են: Սեպտեմբերի 30-ի ժամը 12-ին թշնամին, հրետանու կրակի աջակցութեամբ, յարձակման անցաւ Օլուխլու գիւղի մեր դիրքերի վրայ, սակայն յետ մղւեց:

2 Հոկտեմբերի.- Թշնամու փորձերը Հարամ-Վարդան գիւղը շրջապատելու համար, մեր հակահարւածով վերջ գտան:

3 Հոկտեմբերի.- Սարիղամիշի ուղղութեամբ հանգիստ է:

Մերդենեկի ուղղութեամբ Լալ-Վարդանի գիւղի մօտի բարձունք-ներում կուտակւող քրդերի խումբը ցրւած է մեր հրետանու կրակով:

---

356 Այս կոչը կրկնվում է թերթի հետագա բոլոր համարներում՝ մինչև 1920թ. հոկտեմբերի 21-ը:

Սուրմալուի քրդերն ու թաթարները Արիաջ գիւղի կողմից յարձակում գործեցին Սուլթանաբատ և Խաչֆալու գիւղերի վրայ:
4 Հոկտեմբերի.- Սարիղամիշի ուղղութեամբ, մեր զրահապատ գնացքի և ձիաւոր խմբի հետախուզական յաջող գործողութիւններ: Մեր սաւառնակները ռումբեր նետեցին Եւ-Քեչմազ գիւղի վրայ: Սուրմալուում յակայարձակումով մենք դուրս քշեցինք քրդերին նաձ Խաչֆալու գիւղից, ապա Արիաջի և Գարաքոյի բարձունքներից: Գործողութեանց մասնակցող քրդերի թիւն էր մօտ 500 ձիաւոր և հետևակ, 6 գնդացիրներով: Ամսոյս 4-ին նորէն յարձակման անցան Սօղութլու գիւղի վրայով Քիլլիկ ր Պիրլու գիւղերի վրայ: Մեր սաւառնակները ռումբեր նետեցին Սարիղամիշ քաղաքում գտնուած տաճկական պահեստների վրայ: Կողբի մօտ, ամբողջ օրը կռիւ էր, զգալի ոյժերով արշաւող քրդերի և տաճիկների դէմ, որոնք ունէին թնդանօթներ:
7 Հոկտեմբերի.- Սարիղամիշի և Մերդենեկի ուղղութեամբ մեր հետախոյզների յաջող գործողութիւններ.
8 Հոկտեմբերի.- Մեր սաւառնակները ռումբեր նետեցին Սոլուտաշ կայանի մօտ գտնուած տաճկական դիրքերի վրայ: Դեմուր Ղափուի շրջանում մեր զօրքերը գրաւեցին Տիկոռ, Մուչուչ, Կարա-Թաուզ, Խարաբա-Ալթուն-Բուլաղ, Ղօնդուզսու, Ալթուն-Բուլաղ և Գիւլիստան գիւղերը: Կաինի սարի մօտ յարձակման անցան մեր զօրամասերը հանդիպեցան տաճկական զօրքի ուժեղ դիմադրութեան:
Սուրմալուի շրջանում, մօտ 300 հետևակ և ձիաւոր քրդեր մօտեցան մեր Սուլթանաբատ գիւղի մօտ գտնուած դիրքերին, բայց կարճատև հրացանաձգութիւնից յետոյ թշնամին հեռացաւ կորուստներով:
9 Հոկտեմբերի.- Սարիղամիշի ուղղութեամբ փոքրաթիւ խուզարկու խմբերի գործողութիւններ:
10 Հոկտեմբերի.- Տաճիկները յարձակման անցան Սարիղամիշի ուղղութեամբ Եալտուզ և Խանդօլ գիւղերի կողմից: Կռիւը շարունակւում է:
Մերդենեկի ուղղութեամբ կռիւները շարունակւում են: Չարուշատում մեր զօրքերը հասան մինչև Պիրաշէն գիւղը: Մահմետական ազգաբնակութիւնը ընդդիմութիւն ցոյց չի տալիս:
13 Հոկտեմբերի.- Թուրքերը մեր դիրքերի աջ թևում յարձակում գործեցին Գեարմաչի գիւղի վրայ: Կռիւը շարունակւում է: Կարսի շրջանում մեր զօրքերը մաքրեցին Նախիջևան, Չրչի և Ծպնի գիւղերը քրդական հրոսակախմբերից:
14 Հոկտեմբերի.- Մերդենեկի ուղղութեամբ Դէմիր-Ղափու գիւղի շրջանում մեր հետևակը գիշերով մօտեցաւ թշնամու պահակատեղին և յանկարծակի յարձակմամբ փախուստի մատնեց թշնամուն: Կռիւը շարունակւում է, թշնամու կողմից գործում են թնդանօթները:
Սարիղամիշի ուղղութեամբ, տաճիկները ճեղքելով մեր աջ թևը գրաւեցին Գեարմալի գիւղը և Ղարախաչ սարը, սակայն չդիմանալով

մեր հասնող պահեստի գրոհին փախուստի մատնեց: Գրաւեցինք Գեարմաշի գիւղը, Կարախաչը և սուրբ Եղիա բարձունքը: Տաճիկների կոմից կուին մասնակցում էին երեք բատալիօնի չափ զօրք երկու թնդանօթով և ձիաւոր գումարտակ:

Կաղզւանի շրջանում մեր սաւառնակները ռումբեր նետեցին Դօլբանտ գիւղի վրայ ուր նկատւեցին թշնամու սայլերի կուտակում:

Կաղզւանի քրդերը յարձակւեցին Հաճի-Ջալիշ գիւղի վրայ, տեղական ազգաբնակութեան օգնութիւն հասցնելու համար ուղարկւեց զօրամաս:

*ՀԱԱ, Ֆ. 280, ց. 1, գ. 38,թ. 1-2, պատճեն, մեքենագիր*

## No 123

## ԳԵՆԵՐԱԼ ՍԻԼԻԿՅԱՆԻ ՀԵՌԱԳԻՐԸ

*Հորդորում է Կարսի նահանգապետին՝ ստացված հետախուզական տվյալները ուղարկել միայն իր զորամիավորման շտաբ*

*(1 հոկտեմբերի, 1920թ.)*

Копія телеграммы на имя Карсскаго Губернатора, копія Командарму и Министру Внутреннихъ Дѣлъ.

Благоволите срочно телеграфировать изъ какого источника черпаете Вы свѣдѣнія о противникѣ оперирующемъ противъ частей Карсскаго отряда, дабы сопоставить ихъ данными добытыми боями и агентурной развѣдкой Штаба Александропольской Группы. Впредь предлагаю Вамъ всѣ всѣдѣнія о противникѣ, собранныя Вами сообщать телеграфно мнѣ для соотвѣтствующей обработки въ Штабъ Командующаго Войсками Александропольскаго и Карсскаго раіоновъ. Никакихъ свѣдѣніи развѣдывательнаго характера помимо моего Штаба въ Министерство Внутреннихъ Дѣлъ посылать не разрѣшаю, дабы не создавать въ правительственныхъ сферахъ недоумѣнія и кривотолковъ о дѣйствительномъ положеніи вещей на фронтѣ.

Александрополь I октября № 14. Генлейтъ СИЛИКОВЪ.

ВѢРНО: Подпоручикъ...

Министерство Внутреннихъ Дѣлъ Для свѣдѣнія.

Врид Н-ка Развѣдывательнаго Отдѣленія Штаба Командующаго Войсками, ПОРУЧИКЪ по Адм. ...

“1” октября 1920г. № 888 Г. Эривань.

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 48, թ. 269 և շրջ., պատճեն, մեքենագիր*

## No 124

## ՀԱՏՎԱԾ «ՅԱՌԱՋ» ԹԵՐԹՈՒՄ ՏՊԱԳՐՎԱԾ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

*Հայկական զորքերի կողմից Սարիղամիշն ու Կաղզվանը թողնելու մասին*

*(1 հոկտեմբերի, 1920թ.)*

«…Անակնկալներից և զոհերից խուսափելու և ավելի հարմար դիրքեր գրավելու նպատակով մեր հրամանատարությունը սեպտեմբերի 29-ի գիշերը դատարկել է Սարիղամիշն ու Կաղզվանը: Մեր զորքերի ոգին բարձր է: Թշնամին հանդիպում է ամենաբուռն դիմադրութեան…»:

*«ՅԱՌԱՋ», No 213, ուրբաթ, 1 հոկտեմբերի, 1920թ.:*

## No 125
## ՀԵՌԱԳԻՐ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՄԱՏԱԿԱՐԱՐ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ ՂՈՐՂԱՆՅԱՆԻՆ
*Սկսված հայ-թուրքական պատերազմի օրերին Կարսի զորախմբի զինվորներին հազարավոր զույգ ոչ պիտանի՝ փոքր ոտնահամարի կոշիկներ մատակարարելու մասին*
*(3 հոկտեմբերի, 1920թ.)*

Районному Интенданту Генерал-Майору Корганову, копия Завед. “Зинкошик”
1920 г 3 октября 10 час.30 мин No 51 гор. Александрополь
Командующий войсками Карсского и Александропольского районов приказал Вам немедленно выслать в Карс в распоряжение Генлейта Пирумова приготовленные в “Зинкошике” 1000 пар ботинок крупного размера взамен чего получите столь же пар ботинок малого размера.
Об исполнении прошу донести комвойсками Начальник Штаба Генштаба Полковник Векилов

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 2, գ. 35, թ. 52, պատճեն, մեքենագիր*

## No 126
## ԳՐՈՒԹՅՈՒՆ ԳԵՆԵՐԱԼ ՓԻՐՈՒՄՅԱՆԻՆ
*Սկսված հայ-թուրքական պատերազմի օրերին Կարսի զորախմբի զինվորներին հազարավոր զույգ ոչ պիտանի՝ փոքր ոտնահամարի կոշիկներ մատակարարելու մասին*
*(3 հոկտեմբերի, 1920թ.)*

Карс, Генералу Пирумову
Комвойсками сделано распоряжение районному интенданту немедленно выслать Ваше распоряжение 1000 пар ботинок крупного размера взамен чего Вы должны вернуть ему столько же пар малого размера.
3 октября No 52 Полковник Векилов.

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 2, գ. 35, թ. 53, պատճեն, մեքենագիր*

## No 127
## ԿԱՐՍԻ ԵՎ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԶՈՐԱԽՄԲԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ ԳԵՆԵՐԱԼ ՍԻԼԻԿՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆԱԿԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՏԱԿԱՐԱՐԻՆ
*Սկսված հայ-թուրքական պատերազմի օրերին Կարսի զորախմբի զինվորներին հազարավոր զույգ ոչ պիտանի՝ փոքր ոտնահամարի կոշիկներ մատակարարելու մասին*
*(3 հոկտեմբերի, 1920թ.)*

Эривань Главинту

Почти все войсковые части возвращают обратно ботинки вследствие малого размера их. Не найдете ли возможным заменитхь их Минфине на ботинки крупного размера.

3 октября No 53 Силиков

*ՀԱԱ, Ֆ. 201, ց.2, գ.35,թ. 54, պատճեն, մեքենագիր*

## No 128
## ԿԱՐՍԻ ԵՎ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԶՈՐԱԽՄԲԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ ԳԵՆԵՐԱԼ ՍԻԼԻԿՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆԱԿԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՏԱԿԱՐԱՐԻՆ
*Զինվորական համազգեստի և այլ իրերի հափշտակումն ու վաճառքը կանխելու անհրաժեշտության մասին*
*(5 հոկտեմբերի, 1920թ.)*

Эривань Главинту

Для устранения злоупотреблений вещевом довольствии прошу сделать распоряжение чтобы при передвижении войсковых частей из одного района другой районные интенданты сообщали друг другу чем каждая часть удовлетворена.

5 октября No 68 Силиков

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 2, գ. 35, թ. 67, պատճեն, մեքենագիր*

## No 129
## ԳՐՈՒԹՅՈՒՆ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՄԱՏԱԿԱՐԱՐ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ ՂՈՐՂԱՆՅԱՆԻՆ
*Հայ-թուրքական պատերազմի օրերին Կարսի զորախմբի զինվորներին հազարավոր զույգ ոչ պիտանի, փոքր ոտնահամարի կոշիկներ մատակարարելու մասին*
*(8 հոկտեմբերի, 1920թ.)*

Районному Интенданту Генерал-Майору Корганову

1920 г 8 октября No 130 гор. Алек-поль
Комвойсками приказал Вам дальнейшую выдачу маломерных ботинок в части прекратить и одновременно сделать телеграфное распоряжение всем частям возвратить маломерные ботинки обратно Интендантство. За продажу казенных обмундирований привлекать виновных полевому суду о чем объявить по войскам.
Начальник Штаба Комвойсками Генштаба Полковник Векилов
И.Д.Штаб-офицера для поручений Агаронян

*ՀԱԱ, Ֆ. 280, ց. 2, գ. 35, թ. 113, պատճեն, մեքենագիր*

**No 130**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄԻՑ ԲԽՈՂ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ (ՄԻՆԻՍՏՐԻ) ՈՐՈՇՈՒՄ

*Դասալքության դեմ պայքարի մասին*

*(4 հոկտեմբեր, 1920թ.)*

ՊԱՐՏԱԴԻՐ ՎՈՐՈՇՈՒՄ

Համաձայն նախարարների Խորհրդի 1920թ. հոկտեմբերի 2-ի հաստատված որենքի յեվ ի լրացումն Մինիստրությանս սույն թվի սեպտեմբերի 30-ի պարտադիր վորոշման հայտարարում եմ:

1. Դասալիքները 1919թ. հուլիսի 24-ի Նախարարների Խորհրդի հաստատված որենքի համաձայն յենթարկվում են մահվան պատժի զինվորական դաշտային դատարանի միջոցով յեվ նրանց ամբողջ շարժական յեվ անշարժ գույքը գրավվում ե հոգուտ պետական գանձարանի:

2. Դասալիքների հետ ապրողները ու նրանց ակնհայտնի թագցնողները յենթարկվում են 1-6 ամիս բանտարկության յեվ նրանց շարժական յեվ անշարժ գույքը գրավվում ե հոգուտ Պետական գանձարանի:

3. Բոլոր պետական հասարակական յեվ մասնավոր հիմնարկություններին ինչպես յեվ մասնավոր անձանց արգելվում ե ծառայության ընդունել նրանց, վորոնք զինվորական ծառայությունից ազատման վկայական չեն ներկայացնի:

4. Սույն կետը չկատարող պաշտոնական անձինք յենթարկվում են ծառայությունից արձակման յեվ բանտարկության 1-6 ամիս ժամանակով, իսկ մասնավոր անձինք բանտարկության 6 ամիս կամ տուգանքի մինչեվ 200.000 ռուբլի:

5. Գյուղական կոմիսարները յեվ միլիցիայի բոլոր ծառայողները, վորոնց շրջանում կգտնվին դասալիքներ կյենթարկվին

ծառայությունից արձակման յեվ 1-6 ամիս բանտարկության, սիկ յեթե ապացուցվի, վոր նրանք տեղյակ են յեղել իրենց շրջանի դասալիքների մասին կյենթարկվեն զինվորական դաշտային դատի:
6. Դասալիքի հափշտակած Պետական հագուստեղենն ու զենքը ակնիհայտնի իրենց մոտ թագցնողները յենթարկվում են պատասխանատվության այդ իրերի շուկայի գնի վեցապատիկ վճարումով յեվ 1-6 ամիս բանտարկության:
7. Սույն պարտադիր վորոշման գործադրություն հանձնարարում եմ մայրաքաղաքում պարետ փոխ-գնդապետ Պ. Շախաթունուն, Արարատյան, Շիրակի յեվ Վանանդի Նահանգապետներին հիշյալ նահանգում, իսկ Դիլիջանի գավառում գավառական միլիցիապետին:
8. Սույն պարտադիր վորոշումը հայտարարվում ե ամեն որենք յեվ ուժ ե ստանում լույս տեսնելուց 24 ժամ հետո, պահպանելով իր ուժը մինչեվ զինվորական դրության վերացումը:

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐ՝ Ս. ԱՐԱՐԱՏՅԱՆ
ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՏՆՈՐԵՆ՝ Կ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

4 հոկտեմբեր 1920թ. Յերեվան
Պետ. Կենտ. Արխիվ: Նե. Գործ. Մին. Գործ. 1835 Եջ՝ 258

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 2, գ. 626, թ. 14-15, պատճեն, մեքենագիր*

## No 131

ՍԻԼԻԿՅԱՆԸ՝ ՓԻՐՈՒՄՅԱՆԻՆ

*Տեղեկացման կարգով*

*(4 հոկտեմբեր, 1920թ.)*

Карс Генлейту Пирумову

Сообщаю для сведения что на станцию Ани направлены 2 роты Алекпольского караульного батальона которые соединившись отрядом капитана Джамгарова должны очистить от противника район Нахичевани Зырчи и Ташняка. Кроме того 160 конных сасунцев завтра выступят для сообщения района указанных селений.

9 октября 33 часа № 155 СИЛИКОВ

*ՀԱԱ, Ֆ. 280, ց. 2, գ. 35, թ. 131, պատճեն, մեքենագիր*

## No 132

ՀԵՌԱԳԻՐ-ՀՐԱՀԱՆԳ

*Խաղաղ բնակչությանը զինվորականների թալանից պաշտպանելու անհրաժեշտության մասին*

*(9 հոկտեմբեր, 1920թ.)*

Делижан Караклис Комполка седьмого 180. Обозу следовать полком.
9 октября № 144 Полковник Векилов Карс Генлейту Пирумову Зарушад Сену Родионовка Полковнику Корганову Военмин приказал принять все меры для охранения мирного населения Наблюдение возлагаю на Вас. Всех виновных грабежах предавать полевому суду.

9 октября № 145 Полковник Векилов

*ՀԱԱ, Ֆ. 280, ց. 2, գ. 35, թ. 123, պատճեն, մեքենագիր*

## No 133
## ԿԱՐՍԻ ԵՎ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԶՈՐԱԽՄԲԵՐԻ ՇՏԱԲԻ ՕՊԵՐԱՏԻՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ
*(13 հոկտեմբեր, 1920թ.)*

Эриванъ Командарму

Оперативная сводка Штаба Комвойсками Карсского и Александропольского 13 часам 13 октября. Карта 2 версты. Карсский отряд: в ночь на 13 октября турки прорвали фронт правого боевого участка и заняли гору Карахач. Высланный из резерва и от батальона первого полка под командой комбатальона капитана Агаяна бросился в атаку на турецкие части которые не выдержав стремительного и неожиданного натиска в панике отступили. Наши на плечах турок заняли гору Карахач и возстановили совершенно положение. В сражении турок отличился капитан Агаян проявивший инициативу атаки. Тяжело ранен капитан Кананов.
Гора святого Ильи занята нами. В наступлении участвовало три батальона турок двумя орудиями и эскадроном Сувари. Сегодня наш аэроплан бросил бомбы в селение Долбанд где занималось большое скопление подвод и до 300 человек. Маневренный резерв сегодня 8 часов выступил из Самавата Гогерчин. Мерденском отряде спокойно. Зарушадского и Нахичеванского отрядов сведений не поступало. По только что полученным всведениям Кагызманские курды напали на селение Хаджи-Халил, бой продолжается, на помощь населению из Агбабы выслана одна рота. Сегодня 9 часов автомобиль Генлейта Пирумова столкнулся грузовиком вследствие чего генерал Пирумов получил перелом кости на левой хоге выше ступни.

13 октября 15 часов № 035 Силиков

*ՀԱԱ, Ֆ. 280, ց. 2, գ. 35, թ. 34, պատճեն, մեքենագիր*

## No 134
## ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՏՈՒԿ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՄԻՍԱՐԻ ՈՒՂԻՂ ԽՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՓՈԽՏԵՍՈՒՉ ՀԱԶԱՐԱՊԵՏՅԱՆԻ ՀԵՏ

*1920թ. հոկտեմբերին Արդահանի օկրուգում վրացական զինված ստորաբաժանումների հայտնվելու, օկրուգում խուճապային տրամադրություններ ստեղծելուն միտված նրանց գործողությունների և հայկական զինվորական հրամանատարության կողմից նրանց Վրաստան արտաքսելու մասին*

*(հոկտեմբեր, 1920թ.)*

Պատճէն.

Ղարսի Նահանգապետի յանձնարարութեամբ յատուկ յանձնաժողովի Կոմիսարի ուղիղ խոսակցութիւնը Ներքին Գործոց նախարարութեան դեպարտամենտի փոխ տեսուչ՝ Հազարապետեանի հետ:

Երեւան Ներքին Գործոց Նախարարին.

Չըլդրում գտնուող վրաց պաշտօնեան հրաժարւեց հեռանալուն առանց իր իշխանութեան հրամանով եւ մեր զօրապետի կարգադրութեամբ ձերբակալւեց եւ իր միլիցիոներներով ուղարկւեց Վրաստան: Նրա մոտ գտնուել է իր գաւառապետի հետեւեալ հրամանը. որովհետեւ հայերը դատարկեցին Արդահանի շրջանը եւ որովհետեւ այդ գաւառը Վրաստանի անբաժան մասն է հրահանգում եմ Ձեզ անցնել Չըլդր եւ պաշտօնավարել կէտ Չըլդրում ինչպէս Արդահան եւ նրա շուրջը հանգիստ է եւ կեանքը սովորական կէտ Արդահանի խուճապը առաջացել է նրանից, որ Արդահանի մեր զօրամասը հրաման ստանալով անցել է Վրաստան, իսկ վրացիք որպէսզի խուճապային մթնոլորտ ստեղծեն եւ գրաւեն Արդահանը իրենք մի երկու ռումբ են նետում, ասելով, որ այդ տաճիկներն են մօտենում. Ջելաուսի եւ Արդահանի միջեւ ..ու..ութիւնը մեր բռնութիւնների տակ թողնելով ամեն ինչ փախել է եւ ոչ մի ապստամբութեան մասին խօսք չի կարող լինել միջոցներ եմ ձեռք առել քրդերին իրենց տեղը վերադարձնելու:

Նահանգապետ Ղորղանեան. Իսկականի հետ ճիշտ է Գործավար՝

Ներկայ ուղիղ հեռագրա-խօսակցութեան պատճէնը ուղարկւում է Զօրական Նախարարութեան եւ Նախարարների Խորհրդին ի տնօրինութիւն:

“ ” Հոկտեմբերի 1920թ.

Վարչ. Դեպարտամենտի Տնօրէն՝

Գործավար՝

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 48, թ. 292 և շրջ., պատճեն, մեքենագիր*

## No 135

ԳՆԴԱՊԵՏ ԿԱԴԻՄՈՎԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԶՈՐԱԿԱՆ ՄԻՆՍՏՐԻՆ

*Արդահանից հայ զինվորների և ամբողջ հայ բնակչության խուճապահար փախուստի և իր՝ փաստացի իշխանազուրկ լինելու մասին*

*(20-21 հոկտեմբեր, 1920թ.)*

Копія телеграммы изъ Ардагана Кадымова № 58
от ….бря на имя Военнаго Министра.

Тревожное письменное сообщеніе Полковника МАЗМАНОВА Капитану Шахназарову вызвало паническое бѣгство солдатъ и всего армянскаго населенія Ардагана точка Уговоры мои по безопасности остались безрезультатны точка Всѣ солдаты мѣстнаго-армяне направлены мною Грузію безъ одной жертвы точка Охрану личной и имущественной безопасности мусульманъ приняли грузины которые настоящее время управляютъ всѣмъ Ардаганскимь округомъ точка Считая себя не у власти прошу освободить меня отъ занимаемой должности вовсе отъ службы точка Благоволите сообщить объ этомъ Министру Внутреннихъ дѣль и Карсскому Губернатору

1975 Полковникъ КАДЫМОВЪ.

Вѣрно: ……

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 1, գ. 48, թ. 284 և շրջ., պատճեն, մեքենագիր*

## No 136

ՀՈԴՎԱԾ «ՅԱՌԱՋ» ԹԵՐԹՈՒՄ

*Դասալքության դեմ վճռական և խիստ պայքար տանելու անհրաժեշտության մասին*

*(27 հոկտեմբերի,1920թ.)*

ԹԻԿՈՒՆՔԸ…

Ներկա մոմենտում մեր մեղքերից ամենախոշորը, ամենամեծը, ամենավտանգավորը-

Դասալքությունն է:

Նրա դեմ պետք է կռվել խստիվ, նրան պետք է հարվածել ամողորմ յեվ վռչնչացնել արմատից, այնպես, վոր ապագայում յեվ անհնար լինի այդպիսի մի տխուր, խայտառակ, ամոթալի յերեվույթ մեր նոր պետության մեջ:

Ասում են, վոր ազգը հոգնել է, հանգստություն է ուզում:

Ով է գլխավորապես այդ ասողը:

Դասալիքը: Դասալիքը:

Յես հիշում եմ 1914, 1915, 1916, 1917 յեվ 1918 թվականները յերբ մենք Ռոստովից ահագին ծախսեր արած ուղարկում եյինք մեր յերկրի պաշտպանության համար կամավորներ յեվ զինվորներ:

Շարան, շարան- գնում եյին նրանք: Հասնում եյին Վլադիկավկազ, Բաքու, Թիֆլիս յեվ հալվում ճանապարհին: Շատ քչերը գալիս եյին Հայաստան:

Յես հիշում եմ, ինչպես Նոր Նախիջեվանի յեվ Ռաստովի հայ զինվորները ղեկավարությամբ մի սպայի 1918-ին մեծամասնական-ների իշխանության օրերին միտինգ եյին կազմում յեվ հանում բանա-ձեվներ, վոր տեղական հայկական Կոմիտեն շովեն ե յեվ վոր նրանք-

Կարմիր բանակին են պատկանում:

Վորպեսզի ազատ մնան ծառայությունից յեվ վոչ վոքի չծառայեն

Յեվ ինչ կնշանակե ազգը հոգնել ե՝ հանգստություն ե ցանկանում:

Հոգնելու իրավունքը ունենք արդյոք մենք:

Հանգստության ժամ ե այսոր,

Այն խեղճը յեվ հիմարը, վոր ներկա մոմենտում հանուն իր հոգնության պահանջում ե հանգստություն, պիտի քաջ գիտենա վոր նրան սպասում ե,

Գերեզմանի հանգստություն:

Կգա քուրդը՝ կգա թուրքը յեվ ամենքին կոչնչացնի, բոլորին մորթոտե:

Վոչ մենք իրավունք չունենք դեռ հաստատության /ըստ յերեվույ-թին պիտի լինի հանգստության.- խմբ./:

Մեր կիրակի դեռ հեռու յե: Բայց նա կգա անշուշտ պայծառ, գեղեցիկ, ապահով, յերբ մենք-

Հոկենք, արթուն կենանք, մեր դիրքերում այսոր:

Յեվ ով չի հասկանում այդ տարրական ճշմարտությունը,

Նրան պետք ե հասկացնել:

Վորքան ել մահվան պատիժը ծանր լիներ, վորքան ել նա լիներ, հակառակ մեր համոզմունքներին, բայց դասալիքը, վոր ֆրոնտը լքեց արժանի յե միայն կախարանի:

Կառավարությունը ըմբռնեց այդ ճշմարտությունը: Մինչեվ այդ նա աշխատում եր խրատել, հասկացնել, դիմում եր մեր սրտին, մեր խղճին, մեր խելքին: Ապարդյուն…

Այսոր նա բարձրացել ե կախաղանը:

Յես կարդացի Արամ Վտարանդիի գեղեցիկ յեվ զգացված տողերը յեվ գնացի նայելու կախաղանին…

Յես տեսա ինչպես ճնճղուկները յեվ ագռավները նստում են նրա վրա յեվ լսեցի մանուկների բերնից:

«Չենը կախի, վոչ վոքին չեն կախի…

Յեվ մենք տեսնում ենք կախաղան յեվ չենք տեսնում կախվածներին յեվ մենք կարծում ենք, վոր դա սխալ ե:

Հարկ չկա ընտելացնել ժողովուրդը կախաղանի տեսքին:
Դա անբարոյական յեվ ապականիչ ազդեցություն կարող ե ունենալ
Նա պատրաստվում ե խփվելու յեվ չե խփում, նա կխփվի:
Այսոր պատրաստեցեք ձեր կախաղանը, առավոտու կախեցեք դավաճանին յեվ … հրապարակից ձեր կախաղանը վերցրեք:
Թող դա լինի կայծակի արագությամբ:
Վորպեսզի ազդե բոլոր ուղեղների վրա:
Վորպեսզի ազգը իմանա, վոր հանցավորը չի ազատվի ծանր պատժից:
Վորպեսզի բոլոր խավերի մեջ արմատանու համոզում, վոր այսուհետեվ բոլոր դավաճաններին սպասում են կախաղանի անարգ սյուները:
Յեվ յեթե նոր դավաճաններ հանդես գան, նորից սարքեցեք նոր կախաղաններ…-
Վոր իմանանք, թե կառավարությունը անողոք ե այդ կողմից, հսկում ե յեվ պատժում ե արագ:-
Կայծակի նման, ինչպես վայել ե պատերազմի ժամանակ:
Այդպիսով մենք վերջ կդնենք դասալքության:
Այդպիսով մենք կմաքրենք մեր ազգը մեր ավանդական դարձած ամենախոշոր, ամենամեծ, ամենավտանգավոր ախտից…

Գր. ՉԱԼԽՈՒՇՅԱՆ

*«ՅԱՌԱՋ» 1920թ. 27 հոկտեմբերի, նո. 234*

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 2, գ. 626, թթ. 16-18, պատճեն, մեքենագիր*

## No 137

## ՇԻՐԱԿԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ ԿԱՐՈ ՍԱՍՈՒՆՈՒ ՀՐԱՄԱՆԸ

*Դասալքության դեմ չափազանց խիստ պատժամիջոցներ իրականացնելու մասին*
*(27 հոկտեմբերի, 1920թ.)*

### ՀՐԱՄԱՆ

Կարգադրում եմ բոլոր գյուղական կոմիսարներին ՉՈՐՍ ՈՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ գրավոր և իրենց ստորագրությամբ կազմել գյուղի բոլոր դասալիքների ցուցակը, հիշատակելով, թե այժմ ուր են գտնվում և ներկայացնել ինձ ԱՆՁԱՄԲ: Այն բոլոր կոմիսսարները, վորոնք չեն կատարի իմ այս կարգադրությունը կամ կտան անճիշտ տեղեկություններ կյենթարկվեն համաձայն Հայաստանի որենքների ամենախիստ պատժի մինչև ՄԱՀՎԱՆ ՊԱՏԻԺԸ:

Յեթե վորյեվե գյուղի կոմիսարի պատասխանը չստացվի նույնպես պիտի նկատվի ծանր հանցանք և պիտի յենթարկվի պատժի:
ՇԻՐԱԿԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ՝ /ԿԱՐՈ ՍԱՍՈՒՆԻ/
1920թ. 27-ին հոկտեմբերի ՇԻՐԱԿ
Պետ. Կենտ. Արխիվ: Ներք.Գոչծ. Մին.: Գործ. 1851, Եջ, 87

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 2, գ. 626, թ. 19, պատճեն,մեքենագիր*
Տես նաև՝ *ՀԱԱ, Ֆ. 201, ց. 2, գ. 49, թ. 84, փպագիր օրինակ*

**No 138**
ԱՆՀԱՅՏ ՀԵՂԻՆԱԿԻ ՀՈԴՎԱԾ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ
*Դասալքության մասին*
*(սեպտեմբեր-նոյեմբեր, 1920թ.)*

ԴԱՍԱԼՔՈՒԹՅԱՆ ԴԵՄ
Այն պահուն, յերբ Հայաստանի սահմանները կընդլայնվին հետզհետե, յեվ մեր առջեվ կբացվին Միացյալ յեվ Անկախ Հայաստանի իրագործման դուռները, մեր մայրաքաղաքը կը հանդիսանա դասալիքներու ապաստանարան մը առանձնաշնորհյալ յեվ անձեռնմխելի դիրքի մը մեջ: Հայկական բանակը, վորու կազմակերպման յեվ հզորացման այնքան յեռանդուն կերպով ձեռնարկեր ե զինվորական նախարարությունը, յեվ կոր կը կազմե մեր հույսերու իրագործման միակ իրական գործոն, առարկա ամենքիս գուրգուրանքին, այսոր կազմվեր ե ու կը տանե իր ծանր յեվ հայրենանվեր պարտականությունը միայն յեվ գրեթե միմիայն հենած հայ չաքաշ գյուղացիության վրա: Հայ աշխատավեր գյուղացինն ե, վոր թողած իր աղքատիկ խրճիթը, թողած իր ընտանիքը, թերեվս քաղցի ու սովի ճիրաններուն մեջ, յեկեր լեցվեր ե մեր բանակի շարքերը իր արյան պարտքը կատարելու հանդեպ հայ հայերնիքին յեվ հանդեպ այնքան զոհելու, վորոնք ինկան հայ ժողովուրդի ազատության համար յեվ Ակախ Հայաստանի ստեղծման ի խնդիր:
Պարտքի յեվ զոհաբերության ինչ գեղեցիկ ցուցադրություն քան այն զոր կատարել ե հայ աշխատավոր գյուղացիությունն, թե սահմաննեն անգին ի թուրքահայաստան յեվ թե անդին ի Կավկաս:
Բայց ահա անոր հակադիր հայ քաղքենիությունը, յեվ ինչու չասենք նայեվ մտավորականությունը, վորոնք ձեռք ձեռքի կըխուսափին, այսոր ալ, իրենց պարտքին ու պարտականութեննեն հանդեպ այն Հայրենիքին, վորու անունեն այնքան շատ կը սիրեն խոսիլ: Յերեվան, վոր մայրաքաղաքի անունը կը վայելե այսոր, հայ ժողովրդի ամբողջ աղետներու ընթացքին, նույնիսկ այն պահուն, յերբ թուրքական արյունակզակ ջոյիրները բանակած եյին իր

դուռներուն առջեվ թույլ տվավ վոր իր բնակիչները դառնան դասալիք յեվ տուներնեն չի հեռանան դեպի արյան պարտքը: Այժմ միյեվնույն յերեվույթը յեվ միյեվնույն ընթացքը կը շարունակե անիկա, ավելի հանդուգն յեվ ավելի անպատիժ կերպով:

Դասալքության բույնը Յերեվանն ե, իր քաղքենի յեվ մտավորական դասով: Կառավարությունը պարտավոր ե ամենակարճ ժամանակվա մեջ յեվ ամենակտրուկ միջոցներով քշել դեպի զինվորական շարքերը, բոլոր զինվորցուները, առանց վորեվե խտրության:

<u>ՈՐԵՆՔ ԴԱՍԱԼՔՈՒԹՅԱՆ ԴԵՄ</u>

1. Դասալիքները 1919թ. Հուլիսի 24-ին նախարարների խորհուրդի հաստատած որենքի համաձայն յենթարկվում են մահվան զինվորական դաշտային դասարանի միջոցով, նրանց ամբողջ շարժական յեվ անշարժ գույքը գրավվում ե հոգուտ պետական գանձարանի:

2. Դասալիքների հետ ապրողները ու նրանց ակնհայտնի թագցնողները յենթարկվում են 1-6 ամիս բանտարկության յեվ նրանց շարժական յեվ անշարժ գույքը գրավվում ե հոգուտ պետական գանձարանի:

3. Բոլոր պետական հասարակական յեվ մասնավոր հիմնարկություններին, ինչպես մասնավոր անձանց արգելվում ե ծառայության ընդունել նրանց, վորոնք զինվորական ծառայությունից ազատման վկայական չեն ներկայացնի:

4. Սույն կետը չկատարող պաշտոնական անձիք յենթարկվում են ծառայությունից արձակման յեվ բանտարկության 1-6 ամիս ժամանակ, իսկ մասնավոր մարդիկ բանտարկության 1-6 ամիս, կամ տուգանքի՝ մինչեվ 200.000 ռուբլի:

5. Գյուղական կոմիսարները յեվ միլիցիայի բոլոր ծառայողները, վորոնց շրջանում կգտնվի դասալիքներ կյենթարկվեն ծառայությունից արձակման յեվ 1-6 ամիս բանտարկության, իսկ յեթե ապացուցվի, վոր նրանք տեղյակ են յեղել իրենց շրջանի դասալիքների մասին յեվ միջոցներ ձեռք չեն առել նրանց դեմ, կյենթարկվեն զինվորական դաշտային դատի:

6. Դասալիքի հափշտակած պետական հագուստեղենները ու զենքը ակնհայտնի իրենց մոտ թագցնողները յենթարկվում են պատասխանատվության, այդ իրերի շուկայի գնի վեցապատիկի վճարումով յեվ 1-6 ամիս բանտարկության:

7. Սույն պարտադիր վորոշման գործադրությունը հանձնարարվում եմ մայրաքաղաքում պարետ (Կեդրոնի հրամանատար) փոխ գնդապետ Պ. Շախաթունուն, Արարատյան, Շիրակի յեվ Վանադի նահանգապետներին հիշյալ նահանգներում ու Դիլիջանի գավառում գավառի միլիցապետին:

8. Սույն պարտադիր վորոշումը հայտարարում է ամենուրեք հեռագրով յեվ ուժ է ստանում լույս տեսնելուց 24 ժամ հետո, պահելով իր ուժը մինչեվ զինվորական դրության վերացումը:
Ներքին Գործոց նախարար Ս. ԱՐԱՐԱՏՅԱՆ
Զինվորական դեպարտամենտի Տնորեն- Կ. ԱՌԱՔԵԼՅԱՆ Եջ՝ 49-50 (Հակոբ) ՏԵՐ-ՀԱԿՈԲՅԱՆ.-
<u>«Հայաստանի Վերջին Աղետը»</u>
Անտիպ փաստաթղթեր Դիվանագիտական գրքեր յեվ բազմաթիվ պատկերներ Կ. ՊՈԼԻՍ 1921թ.

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 2, գ. 609, թթ. 1,2, պատճեն, մեքենագիր*

**No 139**

ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

*Կարսի հնարավոր անկման մասին*
*(30 հոկտեմբերի, 1920թ.)*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ

Կարսի մի քանի ամրությունները չեն դիմացել տաճիկների գրոհին: Յեվ այժմ Կարսի յեվ շուրջը ճակատագրական կռիվներ են տեղի ունենում: Կարսը կարող է ընկնել, բայց հայ ժողովուրդը պետք է նորանոր դիրքեր ստեղծե իր համար պաշտպանելու իր հայրենիքը, իր պատիվը, իր ազատությունը:

Ամեն մի հայ քաղաքացի պարտավոր է կռվել մինչեվ արյան վերջին կաթիլը թույլ չտալու համար, վոր անորեն թշնամին բնաջինջ անի մեր ժողովուրդը յեվ խորտակի Հայաստանի անկախությունը:

Հայաստանը կենաց յեվ մահու կռիվ է մղում այսոր: Ամեն հայ պիտի գիտակցե, վոր պարտությունը մահ է մեզ բոլորիս համար:

Քաղաքացիներ, Հայաստանի Հանրապետական Կառավարությունը գործ է դնում բոլոր զինվորական միջոցները պաշտպանելու համար մեր յերկիրը յեվ ժողովուրդը:

Յեթե ամեն մի հայ քաղաքացի այս ճակատագրական որերին անձնվիրությամբ կատարե իր պարտքը հանդեպ հայրենիքի՝ մենք վստահ ենք, վոր վերջ ի վերջո հայ ժողովուրդը հաղթող պիտի դուրս գա այս որհասական կռվից:

Քաղաքացիներ, ձեր բոլոր ուժերով աջակցեցեք կառավարության յեվ զորահրամանատարության:

Ամեն վոք դեպի ռազմաճակատ:
Ամեն ինչ ռազմաճակատի համար:
Հայաստանի Հանրապետության Կառավարություն
30 Հոկտեմբերի 1920թ.
Յերեվան

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 2, գ. 632, թ. 1, պատճեն, մեքենագիր*

## No 140

ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

*Կարսի անկման մասին*

*(1 նոյեմբերի, 1920թ.)*

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ

Կարսը ընկել է: Մեր զորքերը անկարող են դիմանալու թշնամու գրոհին կռվից հետո մեծ մասով նահանջել են դեպի Դարկետ: Կարսում մնացած փոքրաթիվ զորամասերն անձնատուր են յեղել: Քաղաքը յեվ ամրությունները անցել են տաճիկների ձեռքը:

Այս ահավոր իրողության առաջ կառավարությունը հարց է տալիս ձեզ, քաղաքացիներ, ուզում եք դուք կռվել արշավող թշնամու դեմ, կամենում եք պաշտպանել ձեր հայրենիքի անկախությունը ժողովրդի կյանքը, ձեր նամուսը: Ինչ եք մտածում դուք:

Կառավարության համար այս հարցին յերկու պատասխան չկա. Նա վճռել է կռվել մինչեվ վերջին հնարավորությունը մինչեվ մահ: Լավ է մեռնել պատվով, քան վոչխարի պես կոտորվել տաճիկի ձեռքից: Լավ է մահ գտնել դիրքերում, քան թե տեսնել հայրենիքի խորտակումը:

Քաղաքացիներ, փորձության այս սարսափելի ժամին մոռացեք ամեն անձնական գործ յեվ ամբողջ եությամբ նվիրվեցեք յերկրի պաշտպանությանը: Պատերազմը պետք է լինի համաժողովրդական: Ամեն հայ զենքը ձեռքին պետք է պաշտպան կանգնի Հայաստանի ազատության: Մահ կամ ազատություն այս է որվա նշանակությունը:

Հայաստանի Հանրապետության Կառավարություն:

1 Նոյեմբերի 1920թ. Յերեվան.

*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 2, գ. 632, թ. 3, պատճեն, մեքենագիր*
*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 2, գ. 632, թ. 2, պատճեն,մեքենագիր, խմբագրի կողմից ավելացվածը՝ ձեռագիր*

**No 141**
ՀԱՅ ԶՈՐԱՀՐԱՄԱՆԱՏԱՐՆԵՐԻ ԽՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ՈՒՂԻՂ ԿԱՊՈՎ
*Թուրքական գերությունից նախարար Բաբալյանի ուղարկած նամակի մասին*
*(5 նոյեմբերի, 1920թ.)*

ԽՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՂԻՂ ԳԾՈՎ 5/11 1920Թ. 13ժ. 20ր.
ԳԵՆԵՐԱԼ ՀԱԽՎԵՐԴՈՎ- Ալեքսանդրապոլ
ԳԵՆԵՐԱԼ ՊՐԻՏՈՄԱՆՈՎ- Յերեվան

ԳԵՆԵՐԱԼ ՀԱԽՎԵՐԴՈՎ.- Գեներալ ՍԻԼԻԿՈՎԻՆ հասցեագրված հեռագիրը ստացա յեվ վորովհետեվ Գեներալ ՍԻԼԻԿՈՎԸ ժամանակավորապես բացակայում եր՝ գաղտնագիրը բացի: Հաղորդում եմ բանակի հրամանատարին յեվ Մինիստր Նախագահին զեկուցելու համար, վոր ծրարը յերեկոյան արդեն պատրաստ եր, սակայն ամբողջ որը շարունակվող կռիվը հնարավորություն չտվեց հանձնել այն ըստ հասցեյի: Բացի այդ՝ նախապես այդ նպատակով նշանակված յեվ առաջ գնացած սպան հրաժարվեց կատարել հանձնարարությունը յեվ վերցրեց այն իր վերա Խան-Կոտուրսկին Նոր զեկուցեցին ինձ հեռախոսով, վոր Կոտուրսկին մեկնել ե ժ. 11-ն ձիյով յեվ ներկայիս արդեն վերադարձել ե, հանձնելով ծրարն ըստ պատկանելույն: Անեմ ինչ կատարվել ե այնպես, ինչպես դա ասված եր այսոր ստացված հիշյալ ծածկագիր հեռագրում: Բացի այդ՝ այսոր առավոտյան 4-րդ գնդի ճակատում թշնամու կողմից հայտնվեց մի հայուհի՝ տաճկերան անցաթղթով: Այս կինը հանձնեց մինիստր ԲԱԲԱԼՅԱՆԻ նամակը Կարսից՝ Կառավարության անունով:
Հաղորդում եմ հեռագրական ռուսերեն թարգմանությունը այդ, ըստ յերեվույթին, վոչ փակած նամակի՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ
Ի նկատի ունենալով վերջին որերի դեպքերը յեվ բոլոր հանգամանքները, յես այն համոզնունքին եմ, վոր որ առաջ պետք ե վերջ տալ պատերազմական գործողություններին յեվ շտապ կերպով սկսել հաշտության բանակցությունները յեվ համաձայնության գալ Տաճիկ Անատոլիայի կառավարության հետ յեվ գտնել մի ընդհանուր լեզու հաշտ ապրելու միմյանց հետ: Յես կարծում եմ, վոր այս ե մեր պետության յեվ ժողովրդի անմիձական շահը:
Տարիներ տեվող արյունահեղությանը պետք ե վերջապես դադար տալ, վոր քայքայում ե մեր ժողովուրդը:
Այս առաջարկի հետ համաձայն են գեներալներ՝ Դ. Փիրումյանը, Արարատյանը, Ղազարյանը յեվ գնդապետ Վեքիլովը:
Ա. ԲԱԲԱԼՅԱՆ
Խնամատարության նախարար՝ Նոյեմբերի 1-ին 1920թ., Ղարս

Նամակը բերած կնոջ հարց ու փորձ անելուց պարզվեց, վոր տաճիկները նրան վերցրել են Շայնալար գյուղում յեվ տվել են նամակն ու անցաթուղթը, հրամայել են հանձնել նամակը մեր տրամադրության:
ԳՆԴԱՊԵՏ ՊՐԻՏՈՄԱՆՈՎ՝ հայտնի ե Մինիստր Բաբայանի նամակի թիվը.
ԳԵՆԵՐԱԼ ՀԱԽՎԵՐԴՈՎ՝ ՆԱՄԱԿԸ Նոյեմբերի 1-ի թվարկությամբ եր:
Ուղիղ ե՝ ԳՆԴԱՊԵՏ ԲԱԳԴԱՍԱՐՈՎ

*ՀԱԱ, Ֆ. 280, ց. 2, գ. 40, թ. 1-2, պատճեն,մեքենագիր*
*ՀԱԱ, Ֆ. 201, ց. 2, գ. 632, թ. 2, պատճեն, մեքենագիր*

## No 142

ՀԱՏՎԱԾՆԵՐ ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ
ՍՏԵՓԱՆ ՂՈՐՂԱՆՅԱՆԻ ՀՈՒՇԵՐԻՑ

*Կարսում պատերազմական իրադարձությունների, ռուսների ձեռքով արվող անկարգ զորահավաքի, զինադադարի առթիվ Կարաբեքիր փաշայի ուղարկած վերջնագրի, հայկական զորքերի ցրման և զանգեզուրցիների մղած դիմադրական պայքարի մասին*
*(1922թ.)*

Դատարանը, ուսումնարանական գործը և այլ հաստատութիւնները դարձել էին ակադեմիկ հասկացողութիւններ միայն: Հրապարակում մնացել էին օրէցօր հաշվող և ի ծայր կազմալոյծ բանակի մնացորդները միայն և ապիկար ու անպէտք ադմինիստրացիան:

Ամենակարեւոր կարգադրութիւնները մնում էին թղթի վերայ, հրամանը կրկնվում էր մի քանի անգամ, բայց ոչ թէ կատարում, այլ և պատասխան չէր ստացվում: Իսկ հրապարակը տենդոտ և ջղայնալից աղմկվում էր: Բոլորը զէնքի էին կոչվում, բոլորը կարծէս թէ վազում էին ռազմաբէմ, զինվում և պատրաստվում կրակ նետվելու, բայց գումարտակների շարքերը հաշվում էին ժամէ ժամ և ծերունի Նազարբէկով նորից և նորից դիմում էր ներքին գործոց Մինստրին և յուսահատ կոչում – հայրենիքը վտանգված է, դասալիքութիւնը ահռելի, իսկ զինակոչը դեկորատիւ աղմուկ միայն և համենայն դէպս ոչ ցանկալի իրականութիւն...

Այդպէս էր մեր օրերի պատերազմական տրամադրութիւնը:

Բայց Երևանը, ինչպէս որ երկրի և միւս կենտորնները, նման էին ալեկոծ վայրերի, ուր զինվորական ուժգին և սպառնալից պատրաստութիւններ էին տեսնվում: Զէնքի էր կոչվում երկրի ամբողջ ազգաբնակութիւնը և վաղ առաւօտվանից Երևանի արուարձաններում դուք կը տեսնէիք այդ խայտաճամուկ զինվորացուների անվերջ շարանները: Առաւօտվանից պարլամենտի

դիմաց շարվում էին հայրենիքի այդ ապագայ պաշտպանները և գլուխ առնելով պարլամենտի նախագահ Սիրական Տիգրանեանին, «Մեր հայրենիքի» շոյիչ հնչիւնների տակ անցնում էին մարշութեան:

Պէտք է ասել այստեղ, որ այդ շարքերը, պարլամենտի նախագահի առաջնորդութեամբ, իմպոզանտ էին և բարձր տրամադրութիւն էին ստեղծում, կարծես: Բայց այդ մի դիւթիչ տեսիլ էր միայն, մի անցնող սինեմատոգրաֆիկ պատկեր, բայց ոչ լուրջ միջոց հօգևարկ հայրենիքը փրկելու համար: Այդ շառաչող և աղմկող շարքերը սրտոտ և քաջարի էին միայն քաղաքի փողոցներում, իսկ դրսում խուճապալից և պատրաստ փախչելու առաջի թրըխկեցից...

Այդչափ ահաբեկիչ էր մեր թշնամիների համար երկրի զորահաւաքը: Բայց ես պէտք է ասեմ, ոև զորահաւաքը և մոբիլիզացիան զինվորական գործի ամբողջ իմաստը և բանակի յաղթալից դափնիքը անմիջապէս կապված են նորա հետ: Բայց դուք գիտէք արդէն, որ մոբիլիզացիոն գործը հայկական գլխաւոր շտաբում գտնվում էր դարձեալ ռուս գնդապետի ձեռքում, իսկ գաւառներում այդ մեծ և պատասխանատու գործը վարում էին դարձեալ ռուս սպաներ; գալով այդ գործի կազմակերպութեանը երկրում, դուք գիտէք, նոյնպէս, որ նա գտնվում էր անշնորհք և ապիկար ադմինիստրացիայի ձեռքում: Այդպիսով այդ մեծ պետական գործը վարվում էր վայրի վերոյ, առանց մշակված սիստեմի, առանց խիստ հսկողութեան և փարբակելով իր մէջ երերուն և պատահական անցուդարձ, հաւատ չէր ստեղծում իր շուրջը երկրի ազգաբնակչութեան մէջ:

Եւ պէտք է ինձ ասել արդեօք, որ գնալով այդպէս, այդ գործը չէր կարող օրինականութիւն ստեղծել: Նա օրեցօր թուլանում և հիւծվում էր և երկրի օրհասալից օրերում մենք ականատես եղանք մեր զորակոչի մեր զորահաւաքի ամոթալի սնանկութեան:

Երբ Կարաբէկիր կանգ առաւ Արփաչայի վերայ և ուղարկեց մեզ իր վերջնագիրը զինադադարի առիթով, մեր կառավարչական շրջանները վերապրում էին ի ծայր յուզված և ի ծայր ջղայնալից րոպէներ: Մինիստր նախագահի առանձնասենեակում առաւօտվանից մինչև ուշ գիշեր անդադար նիստ ունէին կառավարութիւնը և պարլամենտի նշանաւոր անդամները:

Սարգիս Արարատեան, այն ժամանակվայ ներքին գործոց մինիստրը, յանձնարարութիւն ստացաւ տեսնվելու թիւրքաց հրամանատարի հետ և շտապ մեկնեց Աղէքսանդրապոլ: Այդ ջղայնալից մթնոլորտում հնարաւորութիւն չունենալով անմիջապէս միջամտելու մինիստրութեան աշխատանքներին, նա յանձնարարել էր ներք. գործ. մինիստրի պարտաւորութիւնները ինձ:

Բայց ես մինիստրական առանձնասենեակում նման էի զորաւարի, որ ռազմաբէմ է կոչված զորաբանակի կատարեալ պարտութիւնից յետոյ:

Այդ զորքը ֆիկցիա էր միայն, զորաշարքերը լքել էին ու ցիրուցան եղել, բոլորը փախչում էին, բոլորը զբաղված էին ձևական հոգսերով և ինձ մնում էր միայն յուսահատ փողահարել և սպառնալից, բայց անյետևանք, կարգի կոչել մարդկանց...

Աղէքսանդրապոլի, Շիրակի նահանգապետ Կարօ Սասունու ուր լինելը յայտնի չէր: Ասում էին, որ թողնելով Աղէքսանդրապոլը, նա անցել է դէպի Արագած և այնտեղ թառած քաջարի Սասունցիներից վաշտեր է կազմակերպում: Սասունի մեր լուրջ դէմքերից մէկն էր, նա հեղինակաւոր էր հայրենակիցների շրջանում, իսկ սասունցիք Հայաստանի ռուս կազակներ էին և մենք շատ բան էինք սպասում այդ եզակի կրակոտ և սրտոտ լեռնեցիերից:

Կարևորագոյն վարչական խնդիրների մասին ես մի քանի հեռագիր ուղարկեցի նահանգապետ Սասունուն, այդ հեռագիրները գնում էին Աղէքսանդրապոլի գծով, բայց ես հնարաւորութիւն անգամ չունէի ստուգելու տեղ էին հասնում այդ հեռագիրները. թէ ոչ: Այդչափ շփոթ և անել խառն էր մթնոլորտը:

Ալէքսանդրապոլի փոխնահանգապետ Խոյեցեան, համակրելի երիտասարդ, իրաւաբան, տեղափոխվել էր Ղարաքիլիսայ: Ես նորան էլ դիմեցի մի շարք հեռագրական պահանջներով: Բայց Խոյեցեան աւելի թագաւորում էր, քան կառավարում: Եւ Ղարաքիլիսան, ճանապարհների այդ մեծ հանգոյցը և ուր բորբոքվում էին այն ժամանակվայ հայ քաղաքական վերապրումները, կորցրել էր արդէն հրամանների ի կատար ածելու կարողութիւնը:

Պաշտօնեանրը, ցիր ու ցական, նման էին մարդկանց այն բազմութեան, որ նաւի աւարիայի ժամանակ միայն աղմկում էին և ոչ օգնում նաւապետին:

Ի նկատի առնելով, որ Կարսի անկման րոպէին ինձ հետ մեկնած մի խումբ վարչական պաշտօնեաներ գտնվում էին Աղէքսանդրապոլում և Ղարաքիլիսայում, ես հեռագրեցի, որ նրանք մնան Շիրակի նահանգապետի տրամադրութեան տակ: Բայց Աղէքսանդրապոլը իր շրջակայքով արդէն դժոխք էր դարձել և այդ անիշխան մթնոլորտում ամէն բան տակն ու վերայ էր եղել: Շատ ուշագրաւ է, որ և այդ յուսահատ և օրհասալից րոպէում կառավարութիւնը, ի դէմս դաշնակցութեան, ապաւինում էր կուսակցական կորովի վերայ: Նա նորից, շփոթ և վայրի-վերոյ միջանցքում «մոբիլիզացիաի» ենթարկեց կուսակցական ջանքերը և պարլամենտի անդամները և «վստահելի ընկերները» անցան երկրի բորբոքման վայրեը, «իշխանութիւնը կազմակերպելու համար»....

Խոսք չի կարող լինել, իհարկէ, «բիւրո-կառավարութեան» անկեղծութեան մասին, բայց այդ ռոմանտիզմը չէր շաղկապվում այլևս կեանքի հրամանալից պահանջների հետ: Դաշնակցութիւնը պարտվել էր վերջնականապէս և հրապարակում չկար այլևս նորա վաղեմի

իմայքը և սարսափը: Նորա ողորմելի, տափակ ներկայացուցիչները, գաւառները անցնելով, միայն դեմօրալիզացիաի էին ենթարկում իշ-խանութեան թշվառ մնացորդները և գալիս էին մի անգամ ևս ասե-լու, որ հայդուկային սիստեմը տեղ չունի կառավարչական սաղմում: Այդ պարլամենտի անդամները և «վստահելի ընկերները» - անշնորք, անտեղեակ դրութեան և դատարկաբան, միայն շփոթում էին առանց այն էլ ջղայնալից մթնոլորդը և միայն քայքայում իշխանութեան ի-մաստը: Բոլորը հրահանգում էին, բոլորը աղմկում և այդ առանցքում ծգում երկրի առաջ կառավարչական լրջութիւնը: Ախըրը զարաֆաթ դուրս եկաւ – վերջը կատակ դարձաւ, ասում էր ապշած երկիրը, տես-նելով այդ անգոյն և ողորմելի մարդկանց, որոնք գալիս էին փրկելու դրութիւնը եզակի արտակարգ և եզակի օրհասալից ակնթարթում:

Կարսի նահանգապետի վարչական պաշտօնեաներից մի քանիսին ես տրամադրեցի և Երևանի նահանգի վարչական մարմիններին, բայց զմստվոն ու նահանգապետը վիճում էին իրաւունքների մասին: Այդ զաւէշտ սիմֆոնիան լրացնելու համար գալիս էին պարլամենտի անդամները և «վստահելի ընկերները» և այդ վարչական համերգի աղմուկի տակ քանդվում և լուծվում էր հայկական իշխանութիւնը: Կարսի նահանգապետի պաշտօնեաները չը գիտէին, թէ ո՞ւմ լսել և ում ենթարկվել, նոքա էլ շտապում էին դէպի նավահանգիստ, իրանց չորս կողմը տեսնելով համատարած աւէր, համատարած անիշխանութիւն և անյոյս մթնոլորդ...

Այդպէս էր մեր պետական ճգնաժամը, որի փրկութեան համար «մոբիլիզացիաի էին ենթարկված պարլամենտի անդամները», «վստահելի և պատասխանատու ընկերները»... Զանգեզուրը ամբողջովին մի քաղցր երազ էր և եզանից ամեն մէկս տոկորված էր Դաւիթ-Բէկի պատմուածքներով: Հռչակաւոր Ջրաբերդը, Մազի կամուրջը և այդ չքնաղ երկրի ձորերի դևերը կանգնած էին մեր առաջ որպէս մեր իղձերի նվիրական և դեռ կենդանի ուրու...

Եւ այդ ֆանտաստիկ տեսիլը և աւելի ռոմանտիկ պատկեր, շոյող և շատ բարձր տրամադրող, մոռացնել էր տալիս երկրի արհաւիրքը:

Մի րոպէ մենք մոռանում էինք երկրի խռովալից դրութիւնը, մի րոպէ մենք պատվալից էինք համարում կռվելու Տաճկաստանի հետ և մեր առաջ ծաւալւում էր մեր ազատակիր պատմութիւնը լի էր խիզախ հայդուկներով, արկածալից տեսիլներով և այն հմայիչ իմաստով, ուր հայ սերունդները ճաշակել են հայրենիքի սէրը և ազգային մեծ իդեալ-ների բարձր նշանակութիւնը: Այդպէս էր մեր ժամանակակիցների հասկացողութիւններում անառիկ և սրբազան Տաթևը և այդ նոյնիսկ մեր անկախութեան և գոյութեան տագնապ շրջանում: Հայոց կառա-վարութեան կապը Զանգեզուրի հետ Դարալագեազի վերայով էր: Պէտք էր սաւառնալ չքնաղ Գեօքչու յստակ երկինքը, պէտք էր իջնել Վայոց Ձորի ահռելի խորխորատները և Քեշիշքեանդ մեծ հայկական

գիւղի վերայով ոտք դնել այն կուսական աշխարհը, որ մեր պատմութեան ընթացքում արտօնված էր նազելից փայփայելու և իր գերբնական անդունդներում պատսպարելու մեր ազգային երազները...:

Ճանապարհների բացակայութիւնը, հեռուն, կանօնաւոր հաղորդակցութեան պակասը, հեռագրական գծի անընդհատ խանգարվելը և մեր հասարակութեան բանիմաց ուժերի խորշումը այդ վայրից, ստեղծում էր Զանգեզուրում մի առանձնակի դրութիւն: Զանգեզուրն էլ այդ օրերում պաշարված էր թուրքական յորդաներով և այդ հեռաւոր գաւառին օգնելու խնդիրը մի առանձին մտատանջութիւն էր ստեղծում կառավարութեան համար: Այդ երկրումն էլ արտակարգ անցուդարձը պահանջում էր արտակարգ նիւթական միջոցներ, որ մենք չունէինք, գանձարանում յատուկ վարկը սպառվել էր, մինդեռ Զանգեզուրի լիազօրները մի ամիս ճանապարհ գալուց յետոյ, նոյեմբերի կէսին ... *[տեքստի խզում]*

Շատ հետաքրքիր էին այդ օրերում զանգեզուրցիների հետ ժողովները մինիստրի ընդունարանում: Երբ Աղէքսանդրապօլից և Դիլիջանից տեղում էին թիւրքերի սպառնալից հաղորդագրութիւնները և Հայոց Հանրապետութեան իղձերը սեղմված էին այդ երկաթէ օղակով, մենք ակամայ ելք էինք որոնում այն լեռներում, որ տակաւին հայկական էին և տակաւին յուսալից: «Մենք կը տանք և Երևանը», ասում էին մի քանի տաքագլուխ և անպատասխանատու դեմագոգները, բայց Նոր Բայեզետի բարձունքներից՝ «Վէրք Հայաստանի» կերտողի հայրենիքից, սկսած մինչև Մաշտօցները, Սևանի գագաթները, կը փակենք տաճկական հեղեղի առաջը և այդպիսով կամրանանք Նոր Բայեզետ՝ Դարալագեազ-Զանգեզուրի լեռներում...: Իհարկէ, այդ մի ֆանտաստիկ ցնորք էր, մի անցնող սփոփանք միայն մեր դառնալից փորձանքների առանցքում, բայց այնուամենայնիւ այդ մթնոլորտը և՛ վարակիչ էր և՛ համենայն դէպս ոչ ընկճող, այլ միայն յուզող...: Գանձարանում յատուկ վարկերի սպառման պատճառով, մենք ստիպված էինք բաւարարել զանգեզուրցիների պահանջը ի հաշիւ այլ վարկերի և ես ստորագրեցի գանձարանին մի պահանջագիր զանգեզուրցիներին բաւարարելու համար և չքնաղ աշխարհում: Մենք ձեռնհաս չենք կանգ առնելու այդ աւելի քան հետաքրքիր անցեալի վերայ, բայց կարծում ենք, որ հայ ինտելիգենցիան և հայ կառավարութիւնը մեծաչափ մեղաւոր են Զանգեզուրի առաջ: Մենք եկանք կառավարելու այդ ժայռալից և քմահաճ երկիրը առնաց սիստեմի, առանց նախնական տվեալների և առանց պետական ծրագրի:

Կառավարութիւնը չը խնայեց այդ հեռաւոր գաւառին իր միջոցները, բայց նա հրամանալից կորով չունեցաւ իշխելու այդ երկրում: Դաւիթ Բէգի սրբազան ստվէրը յուզում էր, իհարկէ, Զանգեզուրի

իշխանաւորներին և նոքա իրանց անառատ ձկտումներում կերտել և հոչակվել, մրցում էին և կրքալից հունցում պետական մերանը:
Անյաջող փորձերի և կրքերի այդ առանցքում, երկիրը չը կարողացաւ ունենալ կայիւն և կենտրոնալից իշխանութիւն:
Դէպի այդ լեռները գալիս և գնում էին բազմաթիւ մարդիկ և բոլորն էլ հռչակ և փառք էին որոնում...: Խամսայի մէլիքութիւնների այդ կախարդ ջրերի աշխարհը, ուր լեռներից ցատկող սելերը գնում էին դէպի Արաքս, դէպի նշանաւոր Դերիք և այնտեղ լճանում հայ երազների հետ միասին, տակաւին նշանաւոր էր իր ինքնակալ և ինքնիշխան դիրքով: Բայց մենք չը կարողացանք օգտագործել մեր սուվերեն իրաւունքների համար այդ անձեռնմխելի բնական ամրութիւնները:
Պատկառելի օրինականութիւն ստեղծելու փոխարեն, մենք այդ լեռները դարձրինք կռվածաղիկ կրքերի և փառքալից միտումների: Կառավարութիւնը, շրջապատված մէկը միւսին յաջորդող ձախալից փորձանքներով, հնարաւորութիւն չունեցաւ իր առանձնակի ուշադրութեամբ գուրգուրելու Զանգեզուրը և մեր առաջ նորից բացվում է հեռաւոր մի տեսիլ՝ կախարդալից Ջրաբերդը միայն Դաւիթ Բէկերի համար...:
Լեռները միշտ պահպանողական են եղել և բոլորից քիչ են ենթարկվել ազդեցութիւնների և հպատակ պահանջների: Մեր լեռներում մենք եղել ենք միշտ ինքնորոյն և միշտ ազատասէր: Եւ գուցէ այդ է պատճառը, որ լեռնոտ Զանգեզուրը բոլորից շատ դիմադրեց թուրք ջարդարար հոսանքին:
Անտարակոյս, իհարկէ, որ Խամսայի մէլիքութիւնների շոյեալից իդեալը սաւառնում էր և այդ օրերում Զանգեզուրի կիրճերում: Հազիւ թէ պէտք է վիճել, որ այդ քարքարոտ կատարներում թառել էր մի բուռն հայութիւն, որ աւելի քան ով և իցէ տրամադիր էր պաշտպանվելու և ինքնորոյն լինելու: Եւ Հայոց Հանրապետութեան երկու տարվայ փոթորկալից գոյիւթեան ընթացքում, Զանգեզուրը ցայտուն ըմբոստ էր այդ իմաստով և յուսատու մեր պետական ու սուվերեն ձգտումներում: Մեր արտակարգ օրերում դժվար էր, իհարկէ, միջնադարեան գուշակութիւններ անել: Ժամանակակից քաղաքականութիւնը, աշխարհակալ սնափառ միտումները և պատմական այն մեծ լափիները, որ ստեղծում են համաշխարհային ...*[կտեքստի խզում]*
Այդպէս էր մեր վարչական անցուդարձը Հանրապետութեան վերջի օրերում:
Ռուբէն փաշան՝ զօրաց, բայց երբէմն և ներքին գործոց մինիստր, Կարսի անկումից յետոյ հանկարծակի իջել էր հասարակական հետաքրքրութիւնների ասպարեզից: Հրապարակապէս և եզակի պարտված էր իր քմահաճ ընթացքում, նա իր ռուս և ռուսախօս գեներալների և սպաների հետ միասին նման էր մոլորված և թշվաւ մի մարդու: Նա շփոթված և աննպատակ տարուբերվում էր դեռ

պաշտոնական մթնոլորտում: Ինչ որ ուզում էր ասել, բացատրել, բացատրվել, ինչ որ ուզում էր անել և ուղղել, բայց այդ բոլոր ջղայնալից անցուդարձը աւելի խղճալից էր, քան թէ լուրջ պաշտօնական ու գործնական: Նա և մենիստր էր և ոչ...

Ասում էին, որ նա հրաժարվում է Զեմսկի անպատասխանատու փորձերի գլխաւոր վայրը և համայնական զրահի տակ բոլորը փորձում էին, բոլորը տանում և քաղաքական մեծ աղմուկի առանցքում անյայտացնում այդ «տենդոտ» աշխատանքի յետքերը...:

Երևանի նահանգապետ Մէլիք Եօլչեան, եռանդոտ և բարեմոտ երիտասարդը, նման էր այդ նահանգում դարձեալ մի Կարապետի, որից զեմստվօն բռնագրաւել էր նորա բոլոր իրաւունքները:

Երկրի այն օրհասական օրերում, երբ կառավարութեանը պէտք էր ռեալ իշխանութիւն և ոչ պոռոտախօսութիւն, զեմստվօն և նահանգապետը մրցում էին իրաւունքների համար:

«Համայնացնելով» նահանգի նիւթական միջոցները, այդ «կօալիցիօն կուսակցութիւնները» սեփականացրել էին նահանգի և օրէնսդրավարչական իրաւունքները:

Երկիրը հառաչում էր այդ անիշխան մթնոլորտում, կառավարութիւնը չէր կարողանում ի կատար ածված տեսնելու իր խստագոյն պահանջները: Նահանգապետը յուսահատ տարուբերվում էր այդ մեծ դիմակահանդեսում, ուր նա օժտվում էր պատասխանատու կոչումով, իսկ զեմստվոն, իրան ենթարկելով նահանգի գործադիր մարմինները, հնձում էր ի փառս «աշխատաւոր մասսաների»...

Այդ տեսիլը այն պատկերալից հոգևարքներ, ուր մարում և հանգչում էր հայկական աշխանութիւնը: Այդ ի՞նչ սարսափելի քաօս է, հարցրեցի ես ջղայնացած Սարգ. Արարատեանին:

-Այդ քաօսըես չեմ ստեղծել և թող այդ քաղցրութիւնը վայելեն այսօր պարլամենտի այն բարձրաձայն անդամները, որոնց ծափեր էր հարկաւոր միայն և ոչ պետական լրջութիւն...

Զեմստվոն ոչ նահանգապետ էր ճանաչում և ոչ մինիստր: Որպէս անսխալական, նա անում էր այն, ինչ որ ցանկանում էր և կառավարչական բոլոր պահանջները, միախառնվելով մի անիշխան առանցքում, անցնում էին անհետևանք և ապարդիւն: Զեմստվոն իր գործադիր մարմիններով, պետական մեծ աւարիայի նախօրեակում, լիովի օգտագործում էր իր օգտին իր «անկախ» դրութիւնը, բոլորը թալանում էին, բոլորը տանում: Իսկ պետական աշտարակը անյետաձգելի պահանջների աւերով: Բազմաթիւ կեղեքված գիւղացիներ և քաղաքացիներ պաշարում էին մինիստրի դուռը և արդարադատութիւն սպասում բռնալից և կամայեական զիմսկի հաստատութիւնների դէմ: Մինիստրը հրաման էր արձակում նահանգապետին, բայց վերջինին լսող չը կար: Զեմստվոն անում էր, որ ադմինիստրացիոն, ոստիկանութիւնը իրան է ենթարկվում և իր

«էշն էր քշում» իր «համայնական հաշիւներում»... Այդ մթնոլորտում կարելի էր խելագարվել և ոչ օրինականութիւն պահպանել:
Այդպէս էին հայկական զեմստվոի վերջին գունալից տեսիլները:
Այդ զաւէշտ պատկերները գալիս էին մի աւելորդ անգամ ասելու, որ չի կարելի անպատասխանատու փորձեր անել երկրի համբերատար գլխի վերայ և նա մանաւանդ չի կարելի այդ փորձերը յանձնել սիրողներին ու անցորդներին: Մեր պետական լուրջ աշխատանքներին մենք կցեցինք և զաւէշտ հաւելված:
Զեմստվոյի տնտեսական և կրթական ֆունկցիաները վերացվեցին պետական և կառավարչական մեծ ախորժակի և զեմսկի հաստատութիւններում տեղաւորվեցին թերուսները և զանազան վարչական հաստատութիւններից արձակված մութ մարդիք, որոնք պետութեան մէջ ուզեցին թագաւորութիւն անել:
Արմատում երերելով երկրի իրաւակարգը, զեմստվոն ինքն էլ, իհարկէ, մնաց այդ մեծ փլատակների տակ: Զեմսկի գործիչները փախան մեծ բեռներով, իսկ երկրին թողեցին ասելու, որ չի կարելի շփոթել լուրջը զաւէշտի հետ, ինչպէս որ չի կարելի խաղալ երկրի և ժողովրդի բախտի հետ:
....Որպէս պահպանողական և դիսցիպլինար գեներալ, Նազարբեկով նստած էր գրասեղանի առաջ սուրկը կողքին, այսինքն ամեն րոպէ պատրաստ ի կատար ածելու բարձրագոյն հրամանը...
Նա պատկառալից սպասում էր Մինիստրների խորհրդի նիստի վախճանին և իրաւունք չէր համարում այդ նիստը փակվելուց առաջ թողնելու իր գլխաւոր շտաբը: Նա հասարակ և հաւատարիմ զինուոր էր և 60 տարի շարունակ սիրել է հրամայել և ի կատար ածել...
Բայց սպարապետի առանձնասենեակում ես շատ անգամ տեսնում էի նոր հրամանատար Դրոին: Որպէս կոնտրաստ Նազարբէկովի խորհրդալից տեսքի և տրամադրութեան, Դրո խայտաճամուկ էր և կարծես անհոգ: Մոխրագոյն հասարակ վերարկու, ...
... պաշտօնից, բայց իրօք նորանով այլևս ոչ ոք չէր հետաքրքրվում: Զինվորական մինիստրութիւնն էլ, այդ շփոթ օրերում նոյն զեմստվոն էր, նոյն անիշխանութիւնը:
...Ռուբէն փաշան, թեքվեց, վերջապէս, Յովսէփեանններից և Մերիմանօվներից: Եւ մեր զինվորական զիրուցաքան հրապարակի վերայ, վերջին անգամ, որպէս մի հրավառ տեսիլ, բռնկվեցին և մարեցին դարձեալ Դրո և դարձեալ Սեպուհ:
Հայ երազների սկզբնական պատմվածքը շաղկապված է եղել հայդուկ անուններով և պատմութեանը հաճոյ էր, երևի, փակելու մեր անցուդարձի այդ անցող և հմայիչ գլուխը դարձեալ հայդուկներով և դարձեալ ռոմանտիկներով: Հայկական պարտված և լքված բանակը երկու մասերի էր հետ բաժանվել – Երևանի թևը, պատասխանատու և զգային ճակատ, հրամանատարում էր Դրո, միւս տարածութիւնը՝

Ղարաքիլիսայ – յանձնված էր Սեպուհին: Ինչպէս որ այդ ընդունված էր ռազմական եզակի դէպքերում, երբ հայրենիքը վտանգված է, ....

... Ռուբէն փաշան զիջել էր իր օգնական գեներալ Ախվերդովին և վերջինս Դրօի շտաբի պետն էր: Բայց այդ տեօրետիկ և ակադեմիկ գործելակերպը, ճիշդ սկզբունքում, արդէն ուշացել էր և մեզ մնում էր միայն հաշվել մեր օրերը:

Դրո, այդ խիզախ և բախտաւոր հայդուկը, պատրաստ էր, իհարկէ, կրակ նետվելու:

Այսօր նա դարձեալ թիկունք էր և ենթակայ գեներալ Յովսէփեանի: Սեպուհի հրամանատարութեան տակ կար մօտ 4000 հոգի, բայց նա դարձեալ պապանձ էր, դարձեալ մատնված անգործութեան: Գեն. Յովսէփեանին ենթարկվում էր և խմբապետ Սմբատ, որի հրամանատարութեան տակ կար մօտ 2000 հոգի:

Կարսի դաշտային միւս զորամասերից մի քանիսը մնացել էին Կարսում, անամօթ կերպով փախել, ձգելով զենքը, միւս մասերը կենտրոնացել էին Բաշկադեկլարի շուրջը, երկաթուղղու և խճուղու տարածութեամբ և գտնվում էին գեն. Յովսէփեանի հրամանատա-րութեան տակ: Այստեղ էր և 4 հետևակ գունդը, գեն. Միրիմանովի գլխաւորութեամբ:

Զորավար սեպուհի և գեն. Յովսէփեանի զորակայեանները գտնվում էին ռուս գիւղերում և մէկը միւսից երկու վերստի վերայ: Այդ երկու զորաւարները յայտնի էին որպէս երկու տրամագծօրէն տարբեր սրբերի երկրպագու: Սեպուհ դաշնակցութեան հայդուկն էր, ծխի և արկածների մէջ կոփված, Յովսէփեան ռուսերէն խօսող և ռուսերէն մտածող կայսերական իդեալների երկրպագու էր և մի զաւէշտ թիւրիմացութիւն հայ ազգային բանակում: Մեր քաղցրախոս Ահարոնեանի հռչակված անգութ ֆալակը, բախտը, շատ սիրում է քմահաճ առանցքը և այդ անձայր և անվերջ սահմաններում սփռելով իր գունալից կապրիսները, վիճակը խաղում է մարդկանց հետ և ծաղրում նոցա: Անցուդարձը: Հովանաւորելով գեներալ Յովսէփեանին, այդ ֆալակը, նորա երկու ամիս անփառունակ նահանջից յետոյ, բերում, պատսպարում է այդ գեներալին թիկունքում: Բայց այս ստվերում նա կապանքում է և խռովալից Սեպուհին, կարծես հակադրելով իրարու այն մարդկանց, որոնք իրանց ամբողջ էութեամբ բացասում էին մէկը միւսին:

Դժվար էր գտնել կոնտրաստի աւելի ցայթուն զուգադիպութիւն և այդ կոնտրաստը ֆալագը կարծես թէ ի հանդես էր դրել ի պարծանք և ի նախատինք ազգային գաղափարի: Եւ կրակոտ ու անձնվեր ազգասերը, նախանձալից և սև ազգուրացի դէմ, լրացնում էին մէկը միւսին և գալիս էին մի աւելորդ անգամ ասելու հասնող սերնդին, որ ամենայն տեղ մահը մի է, մարդ մի անգամ պիտ մեռնի, բայց երանի որ իւր ազգի ազատութեան կը զոհվի...

Այդպէս էին մեր վերապրումները, երբ ես իջայ ձիանից Սեպուհի կայեանի առաջ:
Սեպուհ տեղեկութիւն չունէր, թէ ի՞նչ էր կատարվել այդ 3-4 ժամվայ ընթացքում Կարսում: Նա միայն հրաման էր ստացել գեն. Յովսէփեանից իր զորամասերով նահանջելու դէպի Արփաչայ և այնտեղ, երկաթուղու կայեարանում հրահանգների սպասելու:
Խմբապետ Սմբատի զորամասը գտնվում էր Զարուշադի ձորում: Նորա հեռախոսը այնչափ փչացած էր, որ հազիւ հազ կարելի եղաւ հաղորդելու նորան նահանջի մասին անակնկալ ստացված տեղեկութիւնը և Սմբատ, լեռներով, թիւրքերի մի շարք գիւղերով, շտապեց Ախուրեան:
Մեր ընթերցողը յիշում է, անշուշտ, թէ ինչպէս մեր ռուսական գեներալները, մարտնչելով Կարսի նահանգապետի վարած քաղաքականութեան դէմ, երկրի այս և այն թուրք անկիւնում շարունակ դաւադրութիւն և ապստամբութիւն էին գտնում: Կարսի «պատասխանատու» դաշնակցականների աշխատակցութեամբ, նրանք շատ ջանալից այդ ուղղութեամբ պղտորում էին մտքերը Երևանում և այդ առանցքում յոյս ...
...ճանապարհորդական կոշիկներ, հայկական հայդուկի վաղեմի զգեստը կազմում էին Դրօի սովորական հագուստը: կարծես անհոգ և կարծես անփոյթ, նա նստած էր Նազարբեկովի դիմաց և երկուսը միասին, լուռ, ինչ որ սպասում էին և ինչ որ երազում: Ես առանձին հետաքրքրութեամբ դիտում էի այդ ուշագրաւ պատկերը հայկական վերջի պետական տեսիլում և իմ առաջ ծաւալվում էր պապիկ և թոռնիկ հեռաւոր պատմվածքը: Նազարբեկով – պահպանողական, սովոր ենթակայ լինելու իր բոլոր անցած աստիճաններում, պատրաստ կատարելու հրամանը և 60 տարի չափած ծերունին, իր համազգեստով, թրով և շքանշաններով տիպիկ պատկառանք էր ժամեր շարունակվող մինիստրական նիստի դիմաց: Իսկ այդ հանդիսաւոր գեներալի դիմաց, արձակ և անպաճոյճ, նստած էր Դրո, հրամանատար հայկական զորքերի, երազող և հրճվող: Նազարբէկով յենվում էր իր աստիճանների, իր շքանշանների և իր սպարապետ իրաւունքների վերայ: Նա կարծում էր, որ նորա յետևում դեռ կանգնած է հայկական բանակը: Եւ նա հաւատալից սպասում էր կառավարութեան հրամաններին, նորից հրամանալից փողահարելու և նորից դէպի գրոհ և ճակատամարտ կոչելու հայկական բանակը...
Այդպէս էր այդ հանդիսաւոր օրերում հայ սպարապետի պատկառալից տեսքը և նորա առանձնակի հոգեբանութիւնը:
Եւ եթէ Նազարբէկով օրինականութիւնը ինքն էր և ինքը հնութիւնը, նորա դիմաց նստած Դրօն ինքը մեր օրերն էին, իրանց արձակ և անպատասխանատու կորովով: Դժվար է համաձայնեցնել այդ հինը այդ նորի հետ, բայց մի բան ակներև էր – Դրո լրացնում էր Նազար-

բէկովի պակասը: Եւ այդ երկու անունները, որոնք համենայն դէպս կապված կը մնան մեր օրերի պատմութեան հետ, բևեռում էին իրանց շուրջը երկրի վերջի, անցող ուշադրութիւնը: Այդ մեծ և փոքր սխալների առանցքում համենայն դէպս դեռ կենսունակ և կեանքալից հին հայկական երազները: Եւ եթէ այսօր ծերունի Նազարբէկով և երիտասարդ Դրո փակում էին հայ զինվորական վերին աստիճանի անյաջող մի շրջան, երկիրը տրամադիր էր հաւատալու, որ ինքը դեռ նոր տեսիլների և նոր պետական վերապրումների նախորեակումն է: Այդօրինակ մտքեր և զգացմունքներ էին առաջ բերում այդ օրերում մէկը միւսին յաջորդող գունալից և յուզիչ պատկերները:

... այնպէս անտեսանլի ձեռքերը նրան չեզօքացած էին պահում մեծ թռիչքներից և փաստօրէն նա իր հրամանատարութեան տակ չունէր խոշոր ոյժեր...չարալեզուները ասում էին, որ աստղերի պալատը անհանգիստ էր սեպուհի և կարսի նահանգապետի բարեկամութեան առիթով և երկիւղ էր կրում Սեպուհի ձեռքը զօրաց մեծ ոյժ տալուց, կարծելով, որ նա կարող էձերբակալել մի քանի աչքի ընկնող գործիչներ և տապալել կաբինետը...

Այսպէս թէ այնպէս, երկրում զգացվում էր երկու իշխանութիւն՝ իրականը, այդ զինվորականն էր, իսկ տեսականը՝ կառավարութիւնը...

Կողմերի մրցութիւնը հանգում էր անձնաւորութիւնների պայքարում և երբ ընկաւ Խաթիսեանի կառավարութիւնը ու իշխանութիւնը ձևակերպվեց հայրենիքը փրկութեան դրօշակի տակ, պարզվեց և այդ երկդիմի իշխանութիւնը: Համօ Յովհանջանեանի կաբինետը այն պատասխանատու ֆիրման էր, որի զրահի տակ սկսեց իր անպատասխանատու արկածները դիկտատոր Ռուբէն Տէր Մինասեան: Շրջապատելով իրան ռուս և ռուսախօս գեներալներով և սպաներով, առանց յետև առաջ նայելու, նա ինքնահաւան և անվճռաբեկ նետվեց դէպի փառք և իշխանութիւն և հայ ժողովրդի ստրկութեան գնով փակեց իր վեցամսեայ թագաւորութիւնը Կարսի պարիսպների տակ...

Տարված երկու մեծ մինիստրական պորտֆիլներով, նա մոռացաւ այն քարանձաւները, ուր մայիսին երերվեց կառավարչական խորհուրդը: Եւ երբ Տէր Մինասեան, քմահաճ և ինքնահաւան, կառավարչական և օրէնսդիր փորձեր էր կատարում ի հաշիւ իր թշվառ հայրենիքի, օտարամոլ թոյնը քայքայում էր հայ զօրաց շարքերը: Գեներալները գիտէին արդէն, որ թագաւորութիւնը – այդ իրանք են և այդ օրվանից սխրագործելու ասպարեզը մնացել էր բացառապէս այդ հերոսներին:
*[այստեղ ներկայացված չեն թ.թ. 39-43]*

*ՀԱԱ, Ֆ. 477, ց. 1, գ. 10, թթ. 1-38, բնագիր, ձեռագիր*

## No 143
## ՀԱՏՎԱԾՆԵՐ ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ ՍՏԵՓԱՆ ՂՈՐՂԱՆՅԱՆԻ ՀՈՒՇԵՐԻՑ

*Կարսում պատերազմական իրավիճակի, մարտից փախչող հայ գեներալների և թուրք զորաց հրամանատար Կարաբեքիր փաշայի կողմից Կարսի գրավման մասին*

*(1922թ.)*

Զինադադար էք կնքում... Գոռում էր կատաղած Սեպուհ...

Իհարկէ, այդ թոյլատրելի չէր, իհարկէ, շնորհալի գլխապետ Մելիքեան համենայնդէպս մասնակից չէր կառավարչական այդ մեծ ակտին, բայց հայդուկի բռնկումը մեր առաջ, ծաւալում էր միայն մեր օրերի հոգեբանութիւնը և դարձեալ մի ապացոյց բերում ասելու, թէ որչափ խառը և շփոթ էին հայկական գործերը, ուր չկար օրէնք և կարգ, ուր իշխում էին զգացմունքը և մարդկանց անձնական վերապրումները: Շարունակելով մեր արձանագրութիւնները, ճշմարտութիւնը պահանջում է վկայել այստեղ, որ հայկական գլխաւոր շտաբը նախնական դիզլոկացիան, նախագիծը կազմված էր շատ իմաստալից և մեծ ռազմական արժէք ունէր: Երբ գեն. Փիրումով և գեն.Յովսէփեան խուճապալից նահանջելով թիւրքաց սահմաններից դէպի Կարս, իրանց վրայ էին նետում Կարաբեկիր փաշայի գումարտակները, Դրօ, Արաքսի հովտից, և գնդապետ Հասան-Փաշայեան, Արփաչայի հոսանքներից պէտք է շրջապատէին Կարաբեկիրին թիկունքից: Խիստ և մետոդիկ ի կատար ածելով այդդ իզլոկացիան, հայկական հրամանատարութիւնը դաժան թակարդ էրլ արում թիւրք զօրաբանակի համար: Եւ եթէ հայ սպայութիւնը համակված լինէր իր պարտաւորութիւններին սրբութեամբ, Կարաբեկիր իր ամբողջ բանակով և շտաբով մեր պատվաւոր գերին կլինէր: Եւ այնուհետև, իրոք, հաշտութեան կոնֆերենցիան ոչ թէ Աղէքսանդրապոլ, այլ դարձեալ հայկական Կարսում կըլինէր և մենք այնտեղ կըկնքէինք թիւրքերի հետ այն համաձայնութիւնը, որ կըլինէր Սևրի գէտ մասնակի ճշտումը...

Բայց հայ զորաւորները, ընդունակ և քաջ ընդհանուր առմամբ, այլասեռվել էին մեր օրերում: Նրանք չէին ենթարկվում իրանց իշխանութեանը և նոցանից ամէն մէկը իրան մի Նապոլիօն երազելով, ինքն էր ուզում հրամանատարել և ինքն էր ուզում բոլորին թելադրել:

Հռչակաւոր Բագրան, այնտեղ ուր Ախուրեան սրնթաց փախչում է դէպիԱրաքս, ինչպէս և 77 թվին, թիւրք զօրաբանակի ամենացաւոտ թիկունքն էր:

Հայկական գլխաւոր շտաբը, իր նշանաւոր դիզլոկացիան կազմելով, հաշվի էր առել ռազմաբէմի այդ խոցոտալից անկիւնը և այնտեղ ուղարկվեց իր ժամանակին փոխգնդապետ Կոնդախչեան: Այդ ըստ

երևոյթին քաջ փոխգնդապետը իր հրամանատարութեան տակ ունէր հազար սվին, հարիւրից աւել հեծելազօր, ութը թնդանօթ և գնդացիրներ: Բագրատունեաց ամառանոցի չքնաղ կիրճում այդ մեծ բռունցքն էլ բաւական էր զինվորական մեծ ցոյց թշնամու թիկունքում անելու համար: Բայց սուրբ Գէորգի սպայական խաչով զարդարված երիտասարդ հայ փոխգնդապետը երերվեց իւր անմատչելի դիրքում մի 2-3 հարիւր քուրդ ձիաւորներ տեսնելով, թողնում է իր տեղում իր թնդանօթները, ամբողջռազմապաշարը, իր զօրաբանակի բոլոր ծանրութիւնները և ամենաանամօթ կերպով իր գումարտակներով փախչում...

Այդ միջոցում վրա է հասնում այդ գաւառակում պատահմամբ եղած Կաղզմանի գաւառապետի օգնականՉիլինգարեան, որ ինքս ուղարկել էի դասալիքզինվորներին բռնելու: Նա իր մի 50 հեծեալ ոստիկաններով և գաւառակի մի բուռն կտրիճ հայերով հալածում է քուրդ հրոսակախումբը և այդպիսով ցրում Կարաբեկիր փաշայի առաջամասը, որից գնդապետ Կոնդախչեան, իր հազար սվիներով, փախաւ որպէս խելակորոյս:

Մեր կանոնաւոր զորամասի այդ խայտառակ փախուստը, օդում փառող երերուն դրութիւնը խախտում էի հարկէ և այդ գաւառակի… (Նախիջևան…փաստաթուղթը վնասված է) հայ և եզիտ քրդերի հանգիստը: Եւ գաւառակի ազգաբնակութիւնը, որ մինչ այդ յոյսով էր ապրում, ոչ մի օգնութիւն այլևս չըսպասելով հայկական զօրաբանակից, թողնում է տուն և տեղ և գաղթի ճանապարհը բռնում: Գաւառապետի օգնական Չիլինգարեան, ժողովրդի օգնութեամբ, ժողովում է գնդապետ Կոնդախչեանի թնդանօթները, ռազմամթերքը և այլ պաշարով զորաց սայլերը և բերում, հասցնում է Աղէքսանդրապոլ: Բայց այստեղ մի բնորոշ պատկեր էլ:

Զորերով դէպի ցած փախչելով, գնդ.Կոնդախչեանի գումարտակը հանդիպում է քրդերի ոչխարի մի հօտի և թալանում քրդերին, քշում նոցա ոչխարը…

Դասալիքութիւնը այդ օրերում հասել էր ահռելի չափի և մեր գումարտակները հալվում էին ժամէժամ: Ռուբէն փաշայի Մինիստրութիւնը հեղեղում էր ինձ այդառիթով հեռագիրներով և ես ստիպված էի նահանգի ոստիկանութեան ամբողջ կազմը ցրել գաւառները դասալիքներն բռնելու: Այդպիսի մի յանձնարարութիւն էլկատարում էր Դեգօրի գաւառամասում Կաղզմանի գաւառապետի օգնական Չիլինգարեան, որին վիճակ է ընկնում յաջորդել փախչող գնդ. Կոնդախչեանին և ցրել քրդերի այն հրօսախումբը, որ փախուստի էր հարկադրել հայկական մի մեծ կանոնաւոր զորամաս....

Պէտք է, արդեօք, դեռ բացատրել, որ այնտեղ, ուր զօրքը այդչափ լքել և կորցրել էր իր դեմքը, ուր բոլորը բռնված էին միայն թալանի տենդով, ուր հազարանոց զօրամասը թողնում է իր հրետանին և

խելակորույս փախչում հեռվում երևացած քուրդ հրոսակախմբի առջևից, խոսք չէր կարող լինել յաղթութեան մասին: Կոնդախչեանները կոչված չէին ի կատար ածելու տաղանդաւոր դիզլօկացիան, իսկ այդ դիզլօկացիան նպատակ ունէր ծուղակի մէջ ձգելու թիւրք զօրաբանակը և թիկունքից հարվածելով Կարաբեկիր փաշային, յարձակվել նրա գումարտակների վերայ մեր թևերից: Իսկ այդ միջոցում Կարսի ամրութիւնները պէտք է հուր թափէին տաճկաց հրամանատարի վերայ և այդպիսով դժոխք ստեղծելով այդ միջանցքում, ստիպէին թշնամուն վայր դնել զէնքը և սպիտակ դրօշակ պարզել...

Այդպէս էին հայկական գլխաւոր շտաբի գաղտնալից փայփայումները... Բայց,...Գեներալ Սիլիկով, զօրքերի ընդհանուր հրամանատարը, կարծեմ բանտարկեց այդ երկչոտ փոխգնդապետին, դատի տալու համար: Բայց հայկական դատարանը, սկզբից ևեթ միայն մի ֆիկցիայ, կորով չունեցաւ արդարադատութիւն կերտելու:

Փոխգնդապետի տեղը 24 ժամվայ ընթացքում իկատար ածված կախաղանն էր, բայց հայ աշխարհի աչքը կարօտ հնուց գէտ մի դէպքի, երբ հայկական արդարադատութիւնը անդրադառնար, վերջապէս, երկրի սպասելիքը:

Կարաբեկիր, խրախուսված այդ մեծ յաղթանակով և իր առաջ տեսնելով խուճապալից փախչող հայ գեներալներին ու գնդապետներին, կրկնակի եռանդով այնուհետև սկսեց առաջանալ դէպի Կարս: Բայց հայկական գլխաւոր շտաբը, հետևողական այս անգամ, նորից յառնում է իր գաղտնի միտումները դէպի Բագարան:

Եւ երբ Կարաբեկիր երևաց հռչակաւոր Վազինքեյի լեռնագոտում և սկսեց իջնել դէպի Կարսիտափարակը, Սպարապետ Նազարբէկով նպատակի է բռնում Կարաբեկիրի թոյլ թիկունքը: Այս անգամ նա ուղղում է դէպի պատմականԱլուջա մի լուրջզօրամաս, գնդ. Հասան Փաշայեանի հրամանատարութեամբ:

Ինչ-ինչ յիմունքներով, գնդ.Հասան-Փաշայեանը լաւ ու քաջ զինուորականի համարում ունէր: Այդ դիվերսիայի լուրը Կարսում առնելով, մենք շատ բարձր տրամադրվեցինք: Ծանօթ երկրի տեղեկագրութեանը, մենք տեսնում էինք, թէ ինչպէս գնդապետ Հասան Փաշայեան պէտք է խփեր դէպի Կարս իջնողԿարաբեկիրի թիկունքից և ինչպէս մեր միւս զօրամասերը, որ մեր բանակի թևերն էին, պէտք է փակէին այն ծուղակը, որտեղից փախչելու այլևս հնար չըպէտք է ունենար թիւրք հրամանատարը: Բայց մինչ մենք սրտատրօփ սպասում էինք Կարսում այդ հրավառ տեսիլին, մինչ գեներալ Կազարով, որ այդ օրը փոխարինեց գեն. Յովսէփեանին, շնչասպառ դիտում էր, թէ երբ Վազենքիյի բարձրունքներում կըտարածվի գնդ. Հասան Փաշայեանի հերտանու ծխալիցմ շուշը, գնդ. Հասան Փաշայեան հարկաւոր համարեց ոտը կարճ ձգել, դանդաղել իր մարշը, թողնելով դէպքերը իրանց բախտին ու իրանց ընթացքին...

Գնդ. Հասան Փաշայեան չերևաց Արփաչայի այդ խառնվածքում, Կարաբէկիրի թիկունքը միանգամայն (փաստաթուղթը վնասված է) ... իջնում էր դէպի Կարս յաղթալից և թևաւորված: Նրա հեռաւոր թիկունքում եղած հայ զօրամասերը չէին յետապնդում նրան, իսկ առջևի հայ զինվորութիւնը ծգում էր զէնքը և փախչում:

Այդպէս էր այն եզակի անբախտ հայ զինվորական մթնոլորտը, ուր Կարաբեկիր այնչափ ուղեկից և այնչափ հեշտ դափնիք ձեռք բերեց:

Մեր հրամանատարութիւնը, համակվածք մահաճ օրինազանցութեամբ, չէր ենթարկվում իր իշխանութեանը: Մեր ամէն մի գլխապետ և փոխգնդապետ անսխալական համարելով իրեն, անում էր միայն իր ցանկացածը: Պէտք է դեռ ասել, արդեօք, որ այդ պայմաններում ամենատաղանդաւոր դիզլօկացիան, ամենակատարեալ զինվորական նախագիծը չէր կարող փրկել դրութիւնը: Այդտեսակ հրամանատարութիւնը պէտք է միայն պարտվէր և նա ի կատար ածեց իր քմահաճոյքը հայժողովրդի գոյութեան գնով միայն: Մենք չէինք ուզում հասկանալ, որ ռազմաբեմում, ինչպէս և երկրի վարչական ասպարէզում, դերակատարները պէտք է համակված լինեն հրամանի ի կատար ածելու անվճռաբէկ պարտաւորութեամբ և ճշտութեամբ միայն: Բայց մեր յեղափոխական օրերում ամեն մի նախկին տիրացու, խանութպան այսօր գնդապետ դարձած, սիրում էր միայն ճառել և միայն ընդիմախօսել: Նա հակված չէր ենթարկվելու իր իշխանութեանը, այդ գլխապետ-գնդապետներից ամեն մէկը ուզում էր ինքը փայլել հրապարակում, նա միայն խօսումէր, քննադատում ուրիշներին և բոլորի վերայ վերևից ներքև նայելով, նա միայն իրան էր տեսնում ու իր անհաւանում:

Թիւրքաց հրամանատարը չնվաճեց Կարսի նահանգը, նա միայն օգտագործեց երկրում տիրող անիշխանութիւնը և խուժեց մեր սահմանները անարգել և անարիւն իր համար: Կարսի նահանգի մեր հրամանատարկազմը ոչ մի այն ներդաշնակութիւն չէր զինվորական աշխարհում, նա ամեն քայլափոխում խառնվում էր նահանգի և քաղաքացիական անցուդարձին: Իր գործը երկրի վրայ թողած, այդ «գնդապետ-գեներալները» իրանց և վարչապետ էին համարում: Նրանք շարունակ և անդադար ինտրիկներ էին լարում նահանգի քաղաքացիական իշխանութեան դէմ և օգտվելով Երևանի թոյլութիւնից, օգտագործելով դաշնակցական կապերը, շարունակ պառակտում էին նահանգը և շարունակ բորբոքում առաջբերում կառավարչական անցուդարձում: Եւ ինչպէս յետոյ պարզվեց, Աղէքսանդրապոլի կոնֆերանսի ժամանակ պատմեցին մեզ թիւրք սպաները, Կարաբէկ մանրալից իրազէկ էր մեր այդ խռովութիւններին և թիւրքաց հրամանատարը մշակեց իր մարզի դիզլոկացիան դէպի Հայաստան մեր աշխարհում տիրող զարհուրելի շփոթի տվեալների յիմանվերայ:

Ո՛չ Սեպուհ, իհարկէ, չպէտք է այնչափ օրինազանց լինէր իր բռնկալից ազգասէր տրամադրութիւններում, և ո՛չ էլ Կոնդախչեան-ներն ու Հասան-Փաշայեանները չըպէտք է այնչափ երկչոտ և ապի-կար լինէին իրանց պարտաւորութիւններում: Այդ երկու տրամագծօ-րէն տարբեր պայմաններում երևում ու լուծվում էր հայկական իշխա-նութիւնը և այդ մթնոլորտում ամենատաղանդաւոր դիզլոկացիան չէր կարող փրկել երկիրը անօրինակ պարտութիւնից:

Այդպէս էին այն գունալից պատկերները, ուր անդրադառնում էր երկրի կեանքը, իր բոլոր թեր և դէմ կողմերով:

*ՀԱԱ, Ֆ. 477, ց. 1, գ. 8, թթ. 1-15, բնագիր, ձեռագիր*

## No 144

## ՀԱՏՎԱԾՆԵՐ ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ ՍՏԵՓԱՆ ՂՈՐՂԱՆՅԱՆԻ ՀՈՒՇԵՐԻՑ

*Կարսի անկման, զինադադարի, հայ զորավարների խիզախ անցյալի, դաշնակցական կառավարության անդամների, հայկական լեռնաշխարհի քարտեզի սպեղծման, թուրք ժողովրդի ազգային բնավորության յուրահատկությունների և նման հարցերի մասին (1922թ.)*

…*[տեքստի խզում]*

…որ մենք երկու ամիս շարունակ պահանջեցինք ի զուր և անպատիւ: Օգտվում եմ դէպքից արձանագրելու այստեղ մի միջնադէպ ևս, որ գուցէ ոչ պատմական, այլ միայն կենցաղագրական նշանակութիւն կարող է ունենալ: Զաւէշտ իր բովանդակութեամբ, այդ պատմվածքը բնորոշում է այնուամենայնիւ մեր օրերը և այն ժամանակներում տիրող կարգերը:

Կարսի անկումը միայն շշմեցրել էր բոլորին, բայց մարդիք, կար-ծես, դեռ վերապրում էին յուսալից րոպէներ: Եւ եթէ այդ վերապրում-ները համատարած չէին, նրանք ցայթուն էին գէտ ի դէմս այն մարդ-կանց, որոնց համար մահացու էր բաժանվել հայկական երազներից: Եւ այդ զգային դէմքերի թվում էր, ի հարկէ և հրամանատար Սե-պուհ: Բոի իր բնոյթով, նա չէր կարողանում համակվել քաղաքակա-նութեամբ: Հայկական դատը նա հախ էր համարում և հինաւուրց խնդրի լուծումը, ինչպէս և միշտ, նա տեսնում էր ..... միայն:

Հայկական բանակը, 3-4 թիւրք զորաբանակից մեծ, հալվում և լքում էր նրա աչքերի առաջ: Նա իր չորս կողմը տեսնում էր միայն անիշխանութիւն և միայն քայքայում: Ոչ մի տեղեկութիւն չունենալով սպարապետից, նա այդ ջղայնալից մթնոլորտում կորցնում է հաւասարակշռութիւնը և սեպարատ յարձակում գործում Զաջուրի լեռներում իր հանդէպ կանգնած թիւրք գումարտակների վերայ:

Այդ միջոցում սպարապետից հեռագրական հաղորդագրութիւն է ստացվում թիւրք հրամանատարութեան հետ կնքված զինադադարի մասին:

Պատերազմալից շառաչող Սեպուհի զորակայեանի տրամադրութիւնը հանկարծակի փոխվում է և գլխապետ Սուրէն Մելիքեան, մի շնորհալի երիտասարդ, մէկը հայ սակաւաթիւ հայաշատ սպաներից, սկսում է պատրաստել թիւրքերին ուղարկելու համար այդ հեռագրի ֆրանսերէն թարգմանութիւնը:

Երկրաց պարտութիւնը, մի կողմից, և կնքված զինադադարը, միւս, ի ծայր ջղայնացնում են հրամանատար Սեպուհին և նա տեսնելով ֆրանսերէն հեռագիրը, իր հոգու լճացած ամբողջ մաղձը թափում է գլխապետ Մելիքեանի վերայ և մեծ աղմուկով նրան սենեակից հանում... Միջամտում է գեներալ Արեշիվ, մեր թիկունքի հրամանատարը և պարզելով թիւրիմացութիւնը, հանգստացնում է ջղայնացած և հաւասարակշռութիւնը կորցրած Սեպուհին...

-Ես արիւն եմ թափում, ընդհանուր անտարբեր մթնոլորտում ես կրակ եմ նետվում լինել կամ չլինելու կոչով, իսկ դուք ....

.... Հայկական կառավարութիւնը, առանց զօրքի և նիւթական միջոցների, շրջապատված թշնամիներով, կորցրել էր երկրում իր հմայքը և համարումը:

Եւ ես դժվարանում եմ ասել նոյնիսկ, թէ ում պատվիրակներն էին մենք այդ վայրկեանում...

Ես զարմանում եմ նոյնիսկ, որ Կեազում Կարաբէկիրկանգ առաւ Աղէքսանդրապօլ: Ոչինչ չէր արգելում նորան անցնել և Երևան և տիրել ամբողջ երկիրը: Եւ այդ նա կարող էր անել աւելի քան մեծ յաջողութեամբ:

Կրքերի և քաղաքական բարդ ինտրիկների այդ մեծ խառնուրդում մենք տարբերվում էինք որպէս մի թիւրիմացութիւն և մենք ստիպված էինք ...

...չունէին անկում: Նոքա կարծում էին, որ նահանգապետին ուղարկված հեռագիրն անպատճառ պէտք է աւելացնել «Վանանդ» բառը, նրանք կարծում էին, որ առանց այդ մասնիկի նսեմանում էր նոցա «հայկական» սուվերէն իմաստը: Ինչևիցէ, բայց մենք Օլթի մտանք ոչ միայն ի ծայր անկազմակերպ, այլև ի ծայր թալանալից ախորժակով: Շատ բնորոշ է մեր օրերի համար, որ Օլթին գրաւելուց յետոյ անմիջապէս այնտեղ թափվեցին, բացի թալանչներից և մեր բոլոր թամաշաչիները և դատարկաբանները: Օր չէր անցնում, որ գնացքը Կարս չբերէր բազմատեսակ պաշտօնեաներ և անպաշտօն մարդիք, որոնք «հետաքրքրվում էին» Օլթիի գաւառով և գալիս էին տեսնելու այդ աւետեաց երկիրը: Եկան ինժիներներ, գիւղատնտեսներ, ուսուցիչներ, իհարկէ, եկան բոլոր սիրողները, բայց այդ բոլոր անցուդարձը պետական լրջութիւն չունէր: Եթէ չհաշվենք մեր բազ-

մաշխատ հանքային ինժիներ Կարապետեանին, այդ բազմութիւնը միայն թամաշիչիներ էին, առանց պարտաւորութիւնների և առանց իհարկէ, պատասխանատվութեան:

Ժամանակակից .... հասարակական գործիչները, տիրելով հրապարակը, հաւակնութիւն ունէին կառավարութեանը թողնելու միայն վարկեր բանալու պարտաւորութիւնը, իրանց վերապահելով բոլոր մնացած ակտին և նշանակալից իրաւունքները...

Այդպէս էին կազմակերպվում այն հաստատութիւնները, ուր գաղափարը և ժողովուրդը միայն դեկորատիւ հասկացողութիւններ էին, ուր մարդիք համակված էին միայն իշխելու և հարստանալու ծարաւով և ուր յանուն այդ ժողովրդի և այդ գաղափարի կատարվում էր ամէն բան, բացի երկրի և կառավարութեան պահանջներից:

Եւ երբ այդպիսով իշխանութիւնը փաստացի դուրս էր գալիս ներքին գործոց Մինիստրի ձեռքից, նա ուզեց զրահաւորել իրան գալիք պէտքերի համար: Մայրաքաղաքում նա իր համար ինչ որ պահեստային միլիցիա կազմակերպեց գնդացիրներով հանդերձ և այդ զորամասը ենթարկեց իր անձնական հրամանատարութեանը:

Իրանց բոլոր տրամաբանական անհեթեթութեամբ, այնուամենայ-նիւ ստեղծում էին մեր շուրջը մի թիւրիմաց շրջապատ, եթէ չասենք ռոմանտիկ մթնոլորտ: Եւ մենք, որպէս վերջի սերունդ անցող ժամանակի, գերի էինք մեր ռոմանտիկ հակումների և մեր ակներև խորտակվող յոյսերի:

Դժվար էր երևակայել անգամ աւելի ծանր բարոյական կացութիւն: Երեք ժամից յետոյ լրանում էր թիւրքաց ուլտիմատիլ պահանջը և մենք կանգնած էինք հայկական այն խռովալից ռուբիկոնի առաջ, որի կարկաչուն ալիքներում յուսահատ տարուբերվում էր դեռ հայկական խնդիրը...

Մենք անընդհատ խորհրդակցում էինք, ի ծայր ճնշվում մեր անե-լիքներում և ամեն մէկս ջղայնալից ժամացոյցին նայելով, վճռեցին վերջին անգամ խօսել հայկական վերջի իշխանութեան վերջի լիազօրի հետ:

Ժամի հինգին դիկտատոր Դրօին մենք հեռագրե...

որպէս նահանգապետ, ես կատարել էի պարտքս և սկզբունքը պաշտպանելով, կորցրել էի ամեն բան: բայց ես կարծում էի, որ իմ կառավարութիւնը կը վարձատրի իր նահանգապետին, որ մեծաչափ տուժեց իր երկրի ձախորդ օրերում: Բայց կառավարութիւնը ինքը հանդիպեց իր սեփական ջրերում ստորերկրեայ ժայռերի և անդունդ գնաց իր իղձերով և իմաստով...

Հրամանատարի ճաշկերոյթից յետոյ, երեկոյեան ժամի 9, մենք պէտք է մեկնէինք Երևան:

Գալով Երևան, ինչպէս և պէտք էր այդ, ամենից առաջ ես այցելեցի Մինստր նախագահին:

Համո Յովհանջանեանի հետ ես ծանօթ չէի, մենք գրաւեցինք Կարսը այն ժամանակ, երբ նա Եւրոպա էր և այժմ նոր վերադառնալով Երևան, նա յաջորդեց Ալ. Խաթիսեանին:

Պէտք է ասեմ, որ ուղղելով քայլերս դէպի Հայկական պրիմիերի առանձնասենեակը, որի մուտքում, որպէս արքայեական հմայք, կանգնած էր մի զոյգ զինվորական պահակ, ես թէ յուզված էի և թէ շատ բարձր տրամադրված: Ես առիթ եմ ունեցել ներկայանալու փոխարքաներին և շատ բարձրաստիճան մարդկանց, ես անցե եմ նոցա մօտ զգեստաւորված և բոլոր շքանշաններովս հանդերձ, բայց իմ բոլոր այդ պաշտօնական հանդիպումներս համակված էին միշտ ոչ ցնծալից զգացմունքով, ես միշտ ընկճված էի և միշտ երկիւղալից...

Բայց առանձնակի էին իմ այս անգամվայ այցի վերապրումներս:

Հայկական պրիմիերի զոյգ պահակները զինվորական պատիւ տվեցին հայկական ...

... դէպքերի համեմատութիւնը, գուցէ իրաւացի կը լինէր ասելու այսպէս ընկաւ պաշարված Տրօեան: Եւ պաշարված այդ բոլոր մտքերով և վերապրումներով, ես նոյեմբերի մէկին մտայ Աղեքսանդրապօլ:

Իշխանութիւնը որոշ չափով դաշնակցական լինելով, գործում է բարձր կառավարութեան ցուցմունքներով և հրահանգներով և յետևապէս տեղից վեր կենող դաշնակցականը իրաւունք չունի ... և հրամանատար լինելու:

Եւ այդ տարրական հասկացողութիւնների բացակայութիւնը մահալից էր հէնց դաշնակցութեան համար: Դառնալով մեր բանակին և նորա հրամանատար կազմին, Կարսի նահանգապետի հեռագիրները և զեկուցումները պարունակում են աւելի քան սպառնալից այդ բովանդակութեամբ նիւթ: Մենք շատ լաւ գիտէինք մեր բանակի դրութիւնը, մենք շատ լաւ ճանաչում էինք մեր հրամանատար կազմը: Բայց և այնպէս մենք հնարաւոր չէինք համարում Կարսի հանկարծակի անկումը և Կարսի նահանգապետը մէկն էր այն մարդկանցից, որոնք իրանց բոլորի ծայր բացասական վերաբերմունքով դէպի մեր հրամանատար կազմը, կուրօրէն հաւատում էր, որ Կարսի պարիսպների տակ կը խորտակվի թշնամու բանակը:

Վերլուծելով այսօր մեր վերաբերմունքը, մենք հակված էինք կարծելու, որ մենք գտնվում էինք հոգեբանական անխուսափելի վերապրումների շղթաներում:

Պատմութիւնից մենք գիտէինք, որ Կարսի ամրութիւնները տեսել են եզակի ճակատամարտ և Կարսի պաշարումը անվերաբեր նոցա հետևանքներին, տևել է գէտ ամիսներ: Միւս կողմից, դասալիքութեան բոլոր աիռելի չափերով հանդերձ, մենք լսում էինք շատ բարձր տրամադրութեան հաւաստիացում դրսում, Արփաչայի

այն կողմը: Դրսի մեր ինտիլիգենցիան, հայ գաղութները, կարծես թէ քաջազնօրէն շառաչում էին և կարծես թէ մահացու սպառնում...

Կարսի նահանգում գտնված մեր զօրաբանակը, իր բոլոր անկազմակերպ և թերի կողմերով հանդերձ, համենայն դէպս մի 4 անգամ մեծ էր թշնամու բանակից...., ճանաչված Եւրոպայից, «Դաշնակից» մեծ դաշնակիցների, մենք կարծում էինք, որ այսպէս թէ այնպէս, մենք գտնվում ենք համաեւրոպական հովանու տակ: Եւ այդ բոլոր պայմանները ստիպում էին մեզ կարծելու, որ այդ պայթող ռումբերը, ջղայնալից անցուդարձը, խուճապը և զէնքի ամենուրեք շառաչիւնը մի քաղցր երազ է միայն: Այդ սպառնալից և տենդոտ մթնոլորտը տրամադրում էին մարդկանց նորից հմայվելու հայրենի իդեալներով և մենք բոլորս շատ բարձր տրամադրութեամբ դէպի իրաւունքը և ճշմարտութթիւնը, գնում էինք այդ հոսանքի յետևից, որ այնչափ ...դարալից էր և այնչափ անխնայ:

Երբ Կարսի անկման առաւօտը Խնուսցի խմբապետ Փիլոս, շնչասպառ, քշում է ձին դէպի գեներալ Փիրումովի շտաբը և տեղեկութիւն է բերում, որ տաճկաց առաջաւոր մասերը արդէն տիրել են հռչակաւոր Կանլին, գեներալ Լազարեվի քաջութեան ..., որ Կարսից մի 2-3 վերստի վրայ է միայն, գեներալ Փիրումով և նորա «շտաբը» դեռ անուշ նիրհում էին անկողնում:

Կանլի, արիւնոտ ամրութիւնները Կարսի բանալին է: Երբ 77 թվին կոմս Լօրիս, ռմբակոծելով Կարսը, հրաման արձակեց յարձակում գործելու Կարսի վերայ, հայ ազգի խիզախ գեներալ Լազարեվ քաջութեան հրաշքներ ցոյց տվեց այդ ահռելի և հսկայ ամրութիւնների տակ:

Պայթող ռումբերի հետ միասին փայլատակում է Խամսաի Մէլիքութիւնների ներկայացուցչի վիթխարի սուրը: Որպէս կատաղած վագր, պատմում էին ականատեսները, առաջ է նետվում իմպոզանտ գեներալը և իր յետևից տանելով իր բանակը, նա դղրդալից տապալում է թշնամուն: Ամբողջ Կանլին, ասում է պատմաբանը, մի ակնթարթում ծածկվում է ռուսների և տաճիկների դիակներով: Իսկ մի ժամից յետոյ, ծխացող և արիւնաշաղախ Կանլու բարձունքներում, վիթխարի փափախը ձեռքին, կանգնած էր արդեն հայ ազգի գեներալ Լազարեվ: Յարգանք տալով ընկած քաջերին, նա յարգանալից լսում էր երաժշտութեան օրհներկը և կեցցէ գոչում ի փառս ահարկու Կովկասեան զորաբանակի...

Կանլու ճակատամարտը լուծեց Կարսի բախտը և Աղէքսանդր II հրամայեց այդ խիզախ Կանլին ընդմիշտ անվանել գեն. Լազարեվի ֆորտ, որպէս երախտիք պատմութեան այդ մեծ զօրաւարի առաջ:

Այդպէս էր արիւնոտ Կանլին իր արիւնոտ անցեալում:

Տաճկաց բանակը բազմիցս պարտվել էր այդ վայրում և թիւրքաց հրամանատար Կարաբեկիր շատ լաւ գիտէր, ի հարկէ, թէ որտե՞ղ է Կարսի բանալին:

Այդ օրը, դեռ լուսաբացին, նա դիմացի բարձրութիւնների վերա էր և ուղղելով դէպի հռչակաւոր Կանլի իր գումարտակները, նա քարտեզը առաջին, հեռադիտակը և տելեֆոնի խողովակը ձեռքին, դիտում էր իր յարձակվող կոլոնուի մարշը և հարկաւոր կարգադրութիւններ անում ըստ այնմ: Այդչափ խորհրդաւոր և վճռալից էր րոպէն, երբ խմբապետ Փիլոս իրան ձգում է գեներալ Փիրումովի շտաբը:

Փիլոսի բերած տեղեկութիւնները լուսաբանելու համար պէտք էր, իհարկէ, քարտէզ, բայց աւելի քան կէս ժամ էր պէտք քարտէզ գտնելու համար:

Այդչափ պատրաստալից էր գեն. Փիրումովի «շտաբը» և նորա պետը: Դեռ երէկ դպիր եկեղեցու, նա յոյս ունէր, երևի, իր քաղցրալից մրմունջներով գթալից դարձնելու հայոց սրբերին և քարտեզն ու ռազմական այլ ... նա միանգամայն աւելորդ էր գտնում: Այդ միջոցում, այլայլված, ձիուց ցատկեց իմ բնակարանի առաջ: Ինձ թվում էր, որ Ալ. Խաթիսեան մեծաչափ ճնշվում էր մեծ պատասխանատվութեամբ և զգում էր, որ ինքը անզօր է...

Պարլամենտի անդամ Զարիֆեան, մոլեռանդ, բայց պարզ դաշնակցական, առանց պահանջների և առանց յետին մտքերի, շատ լաւ հասկանում էր դրութեան փափուկ իմաստը և հաշտվում մեզ ընկած վիճակի հետ:

Պարլամենտի անդամ Մինախորեան, այդ օրը արդէն Մինիստր, անդամ «կոալիցիոն» կառավարութեան, հաւասարակշռված մարդու տպաւորութիւն էր թողնում: Նա չէր յուզվում և մատեմատիկ սառնասրտութեամբ դրվատում էր տվեալները: Ասում էին, որ նա «էսէր» է: Ես առհասարակ չեմ հասկանում այդ կուսակցութեան իմաստը և գէտ մեզանում, գոնէ, չը գիտեմ, թէ որտե՞ղ է այդ կուսակցութիւնը...

Հատուկենտ անհատներ, անջատված դաշնակցութիւնից ու մեր կադետներից, «Մշակականներից»,...*[տեքստի խզում]*

...Կաղզմանի գաւառապետ Տիգրան Ժամհարեան: Նա զեկուցեց, որ տաճկաց բանակի հրոսակները խուժեցին արդէն դէպի երկաթուղին, որ նա այդ մասին տեղեկացրեց գեն. Փիրումօվի շտաբը, բայց այնտեղ ոչ մի տեղեկութիւն չունէին դրութեան մասին...:

Խուճապը և իրարանցումը հրդեհել էին արդէն քաղաքը և մարդկանց ջղայնալից ալիքները ծփում էին խելակորոյս Կարսի մի ծայրից միուսը: Բոլոր փողոցները բռնված էին մեր ցիր ու ցան եղած զինվորներով ու սպաներով, բայց այդ արդեն զօրք չէր, այդ մի յորդա էր առանց կարգի, առանց հրամանատարութեան և առանց որևէ պարտաւորութիւնների ու խղճի...: Եւ այդ լքած և կազմալոյծ զօրամասերը նոյն չափ սպառնալից էին երկրի ազգաբնակութեան

համար, որչափ և այն թիւրք յորդաները, որոնք առանց կռվի և առանց արիւնի, այնպէս ամօթալից մեզ համար քշում էին մեր փախչող զօրամասերը...: Հայ սպաները գրեթէ չէին երևում զինվորների այդ անկազմ և ծփող ալիքներում, նրանք կամ փախել էին վաղօրօք, կամ զբաղված էին իրանց իրերով ու բարխանով...:

Մեր «Շտաբ»-ից եկող մէկը միուսից յուսահատ տեղեկութիւնները, ստիպեցին ինձ պատվիրել Կաղզմանի գաւառապետ Ժամհարեանին իր մի վաշտ հեծեալ միլիցիոներների հետ անցնել վագզալ և իր հրամանատարութեան տակ առնելով մեր փախչող զինվորութիւնը, փակել թշնամու առաջը: Ես դեռ յոյս ունէի, որ մեր հրամանա-տարութիւնը կանէ վերջապէս մի բան:

Կաղզմանի գաւառապետ, գլխապետ Տիգրան Ժամհարեան տեխնոլոգ ուսանող էր: Վերջի մեծ պատերազմի ընթացքում նա հասել էր գլխապետի աստիճանի, վիրաւորվել էր, ստացել էր մի շարք շքանշաններ քաջութեան համար և վերջում գերի էր ընկել թիւրքերին Միջագետքում և այնտեղից փախել: Նա շատ սրտոտ էր և շատ քաջ և ստիպված էին, երևի մի ձև ընդունելու և վերջում ստացվեց ոչ այս և ոչ այն, այլ ծնունդ մի նոր ազգի...

Դառնալով պ. Մինախորեանին, որ համենայն դէպս լաւ տպաւորութիւն էր թողնում, ես կարծում եմ, որ նա և դաշնակցական էր և կադետ, բայց ոչ մի կերպ ինչ-որ էսէր... նա ազգային դէմք ունէր, վճռալից էր, որպէս դաշնակցական և կորեկտ, որպէս կադետ: Մեր խորհրդական Տիգր. Յոհաննիսեան շատ շնորհալի քարտուղար դուրս եկաւ: Գերազանցորեն տիրապետելով հայոց լեզուն, նա թէ որպէս իրաւաբան և թէ որպէս մեր շնորհալի թարգմանիչ, առանձնակի ճշտութեամբ տանում էր օրագրութիւնները և ես զարմանում էի, թէ ի՞նչ լաւ յիշողութիւն ունէր մեր սենատօրը և թէ ինչպէ՞ս նա ակադեմիկ ճշտութեամբ արձանագրում էր մեր բոլոր նիստերը: Գալով նորա վերաբերմունքին դէպի Սեվրի խնդիրը, նա պաղարիւն էր, որպէս դատաւոր և որպէս իրաւաբան կարծում էր, երևի, որ անխուսափելի են ճակատագրի որոշումները և մեզ մնում է միայն խոնարհվել պատմութեան առաջ...:

Ծածկագիր հեռագրով մենք տեղեկացրինք կառավարութեանը մեր ստացած ուլտիմատիւ պահանջի մասին Սեվրի դաշնագրից հրաժարվելու վերաբերմամբ և այդ պատճառով յայտնի չափով մեզ ազատ էինք զգում մեր անելիքներում:

Գիշերից բաւական անցել էր, երբ Ալ. Խատիսեան, ընդհատելով արդեն թուլացած վիճաբանութիւնը այսպէս ձևակերպեց ընդհանուր տրամադրութիւնը՝ մենք ոչ բարոյական և ոչ իրաւական իրաւունք ունենք հրաժարվելու մի ակտից, որ ունի պատմական և միջազգային նշանակութիւն: Խնդրի այդ ակադեմիկ և ձևական կողմից դառնալով դէպի նորա գործնականը, մենք պէտք է ընդգծենք, որ հրաժարվելով

Սեվրի դաշնագրից մենք չենք շօշափում նորա իմաստը այլ միայն նորա մօտով ենք անցնում...:

Տաճկական բռնութիւնը թոյլ և երերուն ...*[պրեքսփի խզում]*

Նորից գրաւեցին Կովկասը, այդ «էսեր»-ը իրան «կոմունիստ» հռչակեց և նշանակվեց Հին Նախիջևանի «Հանրապետութեան նախագահ»:

Երբ ես գրում էի այս յիշողութիւններս, այդ «կօմունիստը», իր յատուկ վակօնով, «ժամանեց» Թիֆլիզ և հարկ համարեց այցելել ինձ:

Նա շատ պատկառալից շարունակում էր ինձ «աղա» ասել և ամեն անգամ, երբ պատասխանում էր իմ հարցերին, արևելյան ընդունված սովորութեամբ, փորձ էր անում ոտի կանգնել և այնպէս պատասխանել մեծի հարցին...:

Երբ ես կատակով, հարցրեցի այդ թուրքին, թէ ինչպէս համաձայնացնել նորա անցեալը նրա ներկայի հետ, «Հանրապետութեան նախագահը» աչքերը ամօթխած գետին ձգելով ասաց.

– Էհ, աղա՛, ի՞նչ արած, հացի և իշխանութեան խնդիր է, – բայց այնուամենայնիւ վերջացրեց կեղծալից ինձ այցելողը,– Ձեր հովանին մեր գլխի վերայից պետք է անպակաս լինի, ես էլի քո նոքարն եմ, քո խոնարհ ծառան...:

Այդպէս է թուրքը իր բոլոր դիմակների տակ:

Մեր երկրի ոչ մի վայրում հողային խնդիրը այնչափ սուր կերպարանք չէ ունեցել, որպէս Հին Նախիջևան և Շարուր: Անշարժ սեփականութեան բազմատեսակ իրաւունքները յենվում էին, սկզբում, ֆերմանների, պարսից շահերի անվճռաբեկ հաճոյքի վերայ: Ռուս իրաւակարգը առհասարակ և նրա հռչակաւոր դատաստանական ռեֆօրմը, մասնաւորապէս, կասկածի ենթարկելով այդ իրաւունքների իմաստը, յեղափոխեց երկրի տրամադրութիւնը: Իսկ ութսուն թվականների մեծ աղմուկ հողաչափութիւնը, ի յայտ շփոթելով և խըճըճելով Կովկասի հնադարեան հողային հանգոյցը, հրաւառեց Հին Նախիջևանի դաշտերում արևելեան կրքերը: Նիւթական ակնկալութիւնները խառնվեցին տոհմական, դասակարգային և ասպետական միտումների հետ: Մարդկանց իշխանալից և փառասէր միտումները, տիրելու և հպատակեցնելու ծարաւը, վրէժխնդիր դաւերը, թուրք հարեմը և նրա ապահարզանը և այլ բազմաթիւ պայմանները գալիս էին հունցելու այն մեծահռչակ հասարակական խմորը, եւ հարիւր տարվայ ընթացքում զինալից և կրքոտ հունցվելով այդ իմաստում, այդ խմորը սպառեց երկրի բոլոր կենսունակ ջրերը:

Քաջազնական, ասպետ հակումները, դեռ տակաւին կարող և տակաւին հեղինակալից նա ձեռք է բերել յայտնի քաղաքացիական իրաւունքներ: Քաղաքական բազմատեսակ հոսանքներ սիստեմատիկ ցիրուցան արեցին հայ ժողովուրդը նորա բնակատեղերից և այսօր, այդ մեծ պատերազմեց յետոյ, Հայեաստանը դատարկվել է

հայ ազգաբնակութիւնից: Տարիների ընթացքում մաքառելով մեր ինքնորոյն ազգային իրաւունքների համար, մենք այսօր պահանջ ենք անում տալ մեզ այն տարածութիւնը, ուր կարող կը լինի պարփակվել հայ ժողովուրդը: Եւ համոզված լինելով, որ թիւրքաց մեծ աղգային ժողովը տրամադիր է կնքելու մեզ հետ ոչ թէ ձևական, այլ անկեղծ ու մնայիւն հաշտութիւն, մենք ցանկութիւն ենք յայտնում բանակցելու այդ առիթով նորա հետ, առանց միջնորդի: Այդ միտումներով և հաւատալով, որ խնդրի այդօրինակ լուծումը կը բաւարարէ կողմերը, Հայոց Հանրապետութեան Աղեքսանդրապօլի պատգամաւորութիւնը հրաժարվում է Սեվրի դաշնագրից: Միուս օրը թիւրքաց հրամանատարը *…[տեքստի խզում]*

...որպէս ծաղր պատմութեան, հայկական գերիշխանութեան գաղափարը, այդ բացառիկ իսլամ աշխարհում, վերապահված էր պաշտպանելու մի թուրքի, որի եսը ընդհատվեց թիւրքասէր և հայեա-տեաց մի ոչ օրդինատ դէմքերի հետ: Եւ այդ երկու մեծ հակադիր ույժերի առանցքում տարուբերվեց հայակակն իշխանութիւնը տարիուկէս ժամանակի ընթացքում:

Շատ հետաքրքիր է, որ հայ գեներալները և նոցա արբանեակնե-րը կրքից կուրացած ձայնակցում էին այն մարդուն, որ դարան մտած սպասում է պատեհ օրերի նորից փայլատակելու Արդահանի լեռներում հակահայկական դաշոյնը: Եւ զուգընթաց այդ բոլորի հետ, մեր հայրենիքի այդ «նախանձախնդիր» ասպետները տարիուկէս որսում էին այն մարդուն, որ պաշտպանելով իր գոյութիւնը յամառ կռիւ մղեց այդ թիւրքաց Ջամալի դէմ և մինչև ի վերջո պատվով տարաւ հայկական իշխանութեան հիմայքը այդ ձորերում:

Եւ մենք կարծում էինք, որ մեր պահանջները աւելի քան չափաւոր լինելով, կարող են բաւարարվել: Մեր ենթադրութիւնների մէջ մենք հակված էինք հաւատալու, որ Թուրքիան կօգտվի դէպքից բաւարա-րելով հայկական պահանջները, վերջնականապէս լուծելու հայկա-կան խնդիրը, որ այդքան տարի բորբոքման ընթացքում *…[տեքստի խզում]*

և նշանակում է: Արդեն գոյիւթիւն ունէր և դաշնակցութեան ի՞նչ հեռաւոր միտումներ էր պարփակում Դրօի այդ յանկարծակի դիկտատուրան, մենք մեկնում էինք այս և այն ուղղութեամբ, որևէ տվեալներ չունենալով Երևանի վերջի վերապրումների մասին: Համենայն դէպս, մենք շատ հեռու էինք կարծելուց, որ ամեն բան վերջացած է*…[տեքստի խզում]*

...բռնում էին այդ մեծ իրարանցման մէջ կենդրօնական տեղը:

Արիւնը, դաշոյնը, կինը, վրէժը և հռչակի տենչը առանձնակի համեմում էին երկրի այդ հասարակական բորբոքումը և այստեղ քաղաքացիական դատը միախառնվում է քրեական պրոցեսի հետ: Դժվար էր որոշակի ասել, որտե՞ղ էին սկսվում երկրի քաղաքացիա-

կան հողային ու ջրային պահանջները և որտե՞ղ էր վերջանում երկրի օրեցօր բռնկվող և մարող քրեական հանգոյցը: Մի բան ակներև էր՝ այդ աղմկալից իրաւունքների շփոթում կանգնած էր Կովկասի հռչակաւոր աւազակութիւն-ղաչաղութիւնը: Երկրի բոլոր նշանաւոր քաղաքացիական պրոցեսները համեմված էին արիւնով և դաշոյնով և ռուս դատարանը և ռուս ադմինիստրացիան, տասնեակ տարիների ընթացքում քննելով ու դատելով, չը կարողացան լուծել մեր վէճը և բուժիչ սպեղանի գտնել մեր այդ մեծաչարչար և զգայուն վերքերի համար: Ռուս պաշտօնեաները աղմկում էին միայն և այդ մեծ աղմուկ առանցքում կեանք էին վայելում: Եթէ ռուս քաղաքականութիւնը մի կողմից, փշալից կապանքներումն էր պահում մեզ, միւս կողմից նա ի ծայր անբարոյեականացրեց թուրք ազնվականութեան վավաշոտ, լպիրշ և արկածախնդիր բնազդը: Եւ երբ 17 թվին ընկաւ այդ իրաւակարգը և երկրում յայտարարվեց «ազատութիւն» այդ բոլոր բէգերը, բոլոր թուրքերը, որոնք այնպես վարպետօրեն կաշառում և իրանց ձեռքում խաղացնում էին ռուս աստիճանաւորներին, բոլորը հրապարակ նետվեցին նոր դիմակի և նոր կերպասի տակ: Այդ վավաշոտ և անգրագէտ թուրքերը բոլորը իրանց սօցիալիստ, էսէր, մէնէր հռչակեցին հրապարակից հեռացած ռուս պաշտօնեաների տեղը գրաւելով, …*[տեքստի խզում]*

...պաշտօնապէս տեղեկացրեց մեր դելեգացիայի նախագահին, որ կոնֆերանսի հերթական նիստը նշանակվում է նոյեմբերի 29-ին առաւօտվայ ժամի 10:

Այստեղ հարկաւոր եմ համարում նկատել, որ Կեազում Կարաբեքիր պ. Խատիսեանի հետ մասնաւոր խօսակցութեան ժամանակ ասել էր, որ նորա համար անհասկանալի է ռուս մեծամասնական Մդիվանու Աղեքսանդրապօլ գալու բուն պատճառը և նա միանգամայն կարիք չի համարում նորա մասնակցութիւնը Կօնֆերանսին և նորա որևէ միջնորդութիւնը հայ-թիւրքական բանակցութիւններում... Խորհրդակցելով այդ մասին և ապագայիմ հաւանական թիւրիմացութիւնների և բարդութիւնների տեղիք չը տալու համար, պ. Խատիսեանը պաշտօնապէս գրաւոր տեղեկացրեց Կօնֆերանսի նախագահին ռուս ներկայացուցչի այստեղ գալու մասին այն միտումներով, որ գուցէ նա հարկաւոր համարէ նորան կոնֆերանսի նիստերին հրաւիրելու: Մեր այդ գրութեանը տաճկաց հրամանատարը պատասխանեց, որ հաշտութիւնը վերաբերվում է թիւրք հայ ազութիւններին և ռուսաց ներկայեացուցչի մանակցութիւնը կօնֆերանսին նա գտնում է միանգամայն աւելորդ: Դորանով փակվեց այդ խնդիրը:

Միւս օրը կայեացաւ մեր երկրորդ նիստը: Թիւրքերը բաւարարված այս անգամ կարծես, աւելի սիրալիր էին:

Բանալով նիստը, տաճկաց հրամանատարը, դիմեց կօնֆերանսին մի ճառով, ուրախութիւն յայտնելով նահանգ անվանել և Շարուր-

Նախիջևանի նահանգապետ նշանակվեց մի անյայտ մարդ Վարշամեան ազգանունով:

Նրա մասին, իհարկէ, ոչ ոք երկրում ոչ մի տեղեկութիւն չունէր: Յայտնի դարձաւ այդ օրերում, որ նա պատիւ ունի դաշնակցութեան շարքերում լինելու և նրան յանդնարարվեց կալվածատիրական և ապետ Հին Նախիջևանի հայկական նահանգապետ լինելու: Այդ չափ հին երկրի տեղեկութիւնները նոր կառավարչի մասին: Գուցէ անկեղծ կուսակցական Վարշամեան, այնուամենայնիւ միանգամայն պատրաստված չէր այդչափ փափկալից և այդչափ պատասխանատու պաշտոնի համար: Նա ոչ մի հասկացողութիւն չունէր այն երկրի մասին, որի բախտը և գերագոյն իշխանութիւնը իրան էր յանձնվում:

Նա կարծում էր, երևի, որ գալիս է մի աշխարհ, ուր մարդիք գնում են …*[պեբսփի խզում]*

...որ երկու դարաւոր հարևաններ բանակցում են այսօր իրանց ներքին կացութեան մասին առանց միջնորդների: Նա շեշտեց թիւրքաց մեծ ազգային ժողովի տրամադրութիւնը կապել հայերի հետ անկեղծ և մնայուն հաշտութիւն և այդ առիթով իր բարեմաղթութիւնները անելով, նախընտրեց հայկական պատգամաւորութեան ներկայեացնել իր պահանջները: Ալ. Խաթիսեան պատասխանեց նորան շատ զգացված և շատ պատկերաւոր ազդու ճառով: Պ. Խաթիսեան խոսում էր շատ բարձր տրամադրութեամբ և միանգամայն տիրել էր թիւրք պատվիրակութեան ուշադրութիւնը: Ամբողջովին լսողութիւն դարձած Կարաբեկիր և միուսները լարված ուշադրութեամբ լսում էին հայկական պրեմիրերի հրաբուխային ճառը, իսկ տաճկաց հրամանատարը անջատ իր քարտուղարներից, շատ արագ թղթի էր անցնում այդ ճառը … *[պեբսփի խզում]*

...նրանք փորձալից և սանձարձակ սկսեցին կեղեքել ու թալանել երկիրը և «ազատութեան» ու «յեղափոխութեան» վայնասունի տակ չը տեսնված անիշխանութիւն ստեղծեցին գաւառում: Այդպէս էր Հին Նախիջևանի անցեալը հայկական իշխանութեան նախօրեակում: Եթէ, մի կողմից, մենք գուցէ շատ հեռացանք մեր ասելիքներից միուս կողմից ես շատ անցողակի և շատ հարևանցօրէն շօշափեցի երկրի ներքին դրութիւնը: Բայց աւելի ես չէի կարող անել, որովհետև այդ խնդիրները հատորներ կը պահանջէին: Այնուամենայնիւ, հայկական իշխանութեան կարճատև օրերի մասին խօսելուց առաջ, ես հարկաւոր համարեցի այդ ընդարձակ նախաբանը անելու: Աշխարհագրական իմաստով բնորոշելով այն վայրը, ուր պէտք է ստեղծված լինէր հայ իշխանութիւնը մենք յառաջ բերեցինք և այն տվեալները որոնք գուցէ մօտաւոր հասկացողութիւն տան ընթերցողին այդ երկրի իրաւակարգային և տնտեսական անցուդարձի մասին: Եթէ Արաքս, Մեծ Գեօլից մինչև Զանգեզուր հռչակաւոր Տաթև, դարերի ընթացքում «դարիւ դարիւ խփելով» սփռել և հերկել է հայկական մրմունջները,

մեր աշխատանքը, մեր ձգտումները և մեր սրբազան երազները, մենք գալիս էինք այստեղ ոչ անկոչ և ոչ առանց իրաւունքի: Բայց հայկական կառավարութեանը վիճակված չէին սուվերեն իդեալները և նորա առաքեալները չը կարողացան բարձրանալ դէպի սրբազան Գողգոթա:

III

Զզվելով ռուս պաշտօնեայից, որի թիկունքում խանը և բէկը անում էր ինչ կամենում էր, երկիրը նոր օրերումն էր դարձեալ օր չըտեսաւ:

Յեղափոխութիւնից յետոյ, խլացած ...*[կրեքսփի խզում]*

...համոզմունքների և հրապարակը աղմկող տրամադրութիւնների յետևից: Ընկերվար որպէս կուսակցական, Շարուր-Նախիջևանի հայկական նահանգապետը ակադեմիկ մեկնութիւններ էր տալիս իր կոչումին և տարված հրապարակի էժանագին լօզունկներով, նա ուզեց իւրայնի համեստ ընկեր լինել կապեց արձակված այդ աւազակ և ֆանատիկ երկրում: Վարշամեան աչքաթող առաւ, երևի, որ Ատրպատականը արևելեան շուքի, փառքի և իշխանութեան հնագոյն խանձարուրն է եւ փոխանակ ոտք դնելու այդ աշխարհը շրջապատված փայլով և իմպօզանտ լրջութեամբ, հայկական նահանգապետը առաջի օրից իջաւ իր հրամանատար բարձրութիւնից: Փոխանակ ի ցոյց դնելու իշխանութեան կիտաց յօնքերը և անվճռաբեկ տրամադրութիւնը, փոխանակ իր իրաւաութիւնների բարձր ...*[կրեքսփի խզում]*

Հայկական ներկայեացուցչութիւնը շատ ուրախ է, ասաց Ալ. Խաթիսեան, լսելու Ձերդ գերազանցութեան հաւաստիացումը թիւրքաց մեծ ազգային ժողովի բարեկամական տրամադրութեան մասին դէպի հայ ժողովուրդը, որ դարեր շարունակ թիւրք ժողովրդի հետ միասին հիւսել է իր պատմութիւնը: Դարաւոր պահանջներից և խօստումներից յետոյ, հայ ժողովուրդը ուզում է օգտվել ինքնորոշման իր սուվերեն իրաւունքներից: Կապել իր կեանքը համաձայն իր պահանջների և ներդաշնակ իր դրացիների շահերի հետ: Ոչ մի տրամադրութիւն չունենալով ճնշելու ուրիշի իրաւունքները և ուրիշի ազատութիւնը հայ ժողովուրդը կը ցանկանար ստանալու այն տարածութիւնը, ուր կարող է նա պարփակվել և ուր հնարաւոր կը լինի նորա տնտեսական և քաղաքակրթական զարգացումը: Եւ այդ բազմաթիւ իշխանաւորները, պարլամենտի անդամները, ցրվելով գաւառները, ստեղծում էին եզակի շփոթ միայն և հրդեհում երկրի անիշխանութիւնը: Բոլորը կարծիքներ էին յայտնում, վիճում, աղմկում, ճառեր արտասանում, իսկ հրապարակում, նոցա ոչ լսող կար և ոչ այդ առաջարկութիւնները ի կատար ածող: Եւ այդ առանձնակի կառավարչական շփոթը պետք է վերջանար միայն ընդհանուր պայթումով: Շատ ուշագրաւ է, որ եթէ իւր անցեալում դաշնակցութիւնը կազմակերպչական բուռն կարողութիւն արտայայտեց և նրա այդ խիստ սիստեմը կապեց նրա փայլը և

անունը, իր յետագայիմ այդ կուսակցութիւնը թուլացաւ իր այդ տրամադրութիւններում: Նա յուսեց հրապարակի քաղաքական հոսանքներին և ինչ որ աստիճաններից շնորհելու երկրին, ի դիմաց կառավարութեան, իշխանալից ուշադրութիւն արդարադատ կամք և անկողմնապահ վերաբերմունք, հայկական նահանգապետը ձևացած «ընկեր» և ոչ թելադրող և տիրող: Եւ իշխանութեան գործելակերպի այդ մեծաչափ սխալ առանցքում պարտվեց հայկական կառավարութեան համարումը պարսկաստանի սահմաններում: Երկիրը այդ օրերում վերապրում էր ծանձրալի մի շրջան:

Հին իրաւակարգը ընկել էր, իրաւունքի նոր գաղափարը դեռ չէր ծուլվել և հրապարակը տիրել էր անիշխանութիւնը, ուր ճարպիկ մարդիք, յանուն յեղափոխութեան և ազատութեան հնձում էին անվրէպ և անպատասխանատու... Շարուր-Նախիջևանի թուրքութիւնը, դեռ ռուս իշխանութեան օրով, գիտէր հայերին որպէս լուրջ և բանիմաց մարդիք:

Երբ տասնեակ տարիների ընթացքում հարստահարված թուրք ... *[տեքստի խզում]*

...և շըշմած անվերջ ճառերից և փքուն ու դատարկ խօսքերից, երկիրը կարօտ էր կարգի և հանգստի:

Դեռ տակաւին նահապետական և տակաւին կուսական, նա չէր կարող հաշտվել ընկերվար գործելակերպի հետ: Երկիրը փափագում էր խիստ իրաւակարգի և մեծ յոյսերով սպասում էր հայկական իշխանութեանը: Հայերը միշտ խելօք, լուրջ և դրական մարդկանց համբաւ ունէին Արևելքում: Եւ Հին Նախիջևանի թուրքութիւնը, պառակտված ընկերվար կեղեքիչ մթնոլորտում, ծարաւի էր խիստ սանձերի և արդարադատ օրէնքների. այդպէս էր Շարուր-Նախիջևանի տրամադրութիւնը հայկական իշխանութեան նախօրեակում: Վարչական և քաղաքական միտումներով հարկաւոր համարվեց այդ տարածութիւնը առանձին ... *[տեքստի խզում]*

...պետք է հանգի հայկական սվիների շարքերում, նա չարաչար սխալվում էր: Նա պատերազմ չէր գնում և սվիները ոչ թէ պէտք է հարթէին նորա մուտքը դէպի Գողթան, այլ միայն պէտք է շուք և փայլ տային այն իշխանութեանը, որ գալիս էր տիրելու յանուն իրաւունքի և յանուն պատմական հիագոյն պայմանների:

Նա կարող էր հանդիսալից խնկարկել հայրենի զինվորութեանը և դորանով մեծ յարգանք և մեծ պատկառանք ստեղծել հայկական զօրաբանակի շուրջը այդ հեռաւոր վայրում, բայց նա ոչ մի կերպ չըպէտք է մասնակից դարձներ այդ սվիները երկրի կառաւարչական խորիմաստ գործում: Եւ այդպէս ձևակերպելով իր մուտքը Նախիջևանի Արաքսի հովիտը, հայկական նահանգապետը լուծած կը լինէր խոշորագոյն պետական մի խնդիր: Բայց Վարշամեան, հաւատարիմ ...*[տեքստի խզում]*

...ամբոխը մարտնչում և դատվում էր բազմաթիւ կալվածատէրերի հետ, հայ առաջաւոր մարդիքը նորա այն կարապետներն էին, որոնք առաջնորդում էին նորան դէպի դատարան և իրաւունք: Դեռ այն ժամանակ, այդ անպաշտօն հայերը, փաստաբանելով իրանց հարևան թուրքերի համար, շատ հեռու էին ընկերվար հակումներից: Թուրքերը ներքևից վերև էին նայում հայերին և դորանով բնորոշվում էր նոցա փոխ յարաբերութիւնները: Կալվածատերը ընկաւ, բայց երկրի հանգիստը ի ծայր վտանգված էր և հրապարակում վխտում էին բազմաթիւ գիշատիչներ, որոնք ազատութեան կոչումի տակ կեղեքում էին երկիրը:

Պետք չէ ասել, որ իրերի այդ մթնոլորտում երկիրը ծարաւի էր հանգստի և իրաւակարգի և նա բուռն կերպով հաւատում էր, որ ...

*[պէքսփի խզում]*

...զանազան վիճակագրական թվեր, ծանրացանք քարտեզի վերայ և մինչև ուշ գիշեր խորհում էին դրութիւնը:

Էքսպանսիւ Գիլխանդանեան դարձեալ բողոքում էր մեր չափաւոր քաղաքականութեան դէմ: Նա պահանջում էր Հայեաստանը այն սահմաններում, որ պէտք է գծէր նախագահ Վիլսօն, խոստում էր Կիլիկիայի, Միջերկրական ծովի մասին... Երբ խորհրդակցութեան անդամներից մէկը նկատեց, որ ոչ միայն Միջերկրական ծով, այլև Մուշ մենք ստիպված ենք չը պահանջել, Գիլխանդանեան միանգամայն յուզվեց և մօտենալով քարտեզին՝ ինքնամոռաց սկսեց խօսել Մշոյ դաշտի մասին, տալիս էր «Արծիւ Վասպուրականի» անունը, կոչ էր անում Մշոյ սուլթան սուրբ Կարապետին...:

Ալ. Խաթիսեան ձևակերպելով բոլոր կարծիքները, ասաց, որ ներկայ առանձնակի պայմաններում մենք չենք կարող իհարկէ թելադրել մեր ցանկութիւնները, ...*[պէքսփի խզում]*

...իհարկէ, «դեմօկրատիկ» սկզբունքների և որպես երդվեալ, երևի «սօցիալիստ», անյարմար համարեց երկիր կառավարելու այդ գործելակերպը: Նա Հին Նախիջևան եկաւ ընկերվար լօզունգներով և կարծելով, որ կեանքը մի իդեալ է, իսկ Ագուլեաց ձորերը՝ սոցիալիստ իդեալիստների մի աշխարհ, հայկական նահանգապետը անձնատուր եղաւ ատենաբանութեան և վայելքների...:

Բայց թուրքերը շատ խորամանկ էին և ընդունակ շատ շուտ ըմբռնելու մթնոլորտի հոգեբանութիւնը:

Առաջի օրից նրանք հասկացան, որ գործ ունեն ոչ լուրջ և ոչ կամքատար իշխանութեան հետ: Եւ այստեղ մեծ թափով բռնկվեցին արկածալից միտումները: Շատ բնական էր, իհարկէ, որ թուրք բազմաթիւ «սօցիալիստները», որ մինչ այդ տիրում էին...*[պէքսփի խզում]*

...բայց և այնպէս, ըստ բնոյթի, այդ հաշտութիւնը պէտք է ժամանակաւոր համարել: Միջազգային շահերի առանձնակի դասաւորումը, ձգեց մեզ երկու ջարդարար ոյժերի առանցքը, ի դէմս ռուսների և

թիւրքերի և այդ մթնոլորտում ուր բռնաբարվում է իրաւունքի սկզբունքը, չի կարելի լուրջ խօսել որևէ իրաւական ակտի մասին: Այդ միտումներով, ստորագրելով մեզ համար շատ ծանր և մահացու նշանակութիւն ունեցող մի դաշնագիր, մենք կատարում ենք միայն թշմանու ուլտիմատիւ պահանջը, բայց ոչ արտայայտում երկրի կամքը և նրա տրամադրութիւնը: Այդ բոլորը շատ լաւ կը հասկանայ քաղաքակիրթ աշխարը և այդ ակամայից ստորագրված դաշնագիրը կը գնահատվի ըստ արժանոյս: Դառնալով խնդրի էութեանը Ալ. Խատիսեան ասաց, որ մենք պէտք է իհարկէ, չափաւորենք մեր պահանջը, թէ որպէս նորա … *[կրճքափի խզում]*

...այդ օրէնքը կարող է ի կատար ածել խելօք և լուրջ հայը: Եւ այդպիսով, եթէ հայկական իշխանութիւնը իր առաջ և ունէր Շարուր-Նախիջևանի մի բուռն արկածախնդիր, որոնց հանդուրժելի չէր նոր իշխանութիւնը, բայց նա իր թիկունքում ունէր և մի ամբողջ երկիր, որ ի ծայր զզվել և յօգնել էր այդ «յեղափոխական» թալանից...:

Արևելքը ունի իր առանձին հոգեբանութիւնը և այդ օրէնքները ունեն իրանց իմաստը ու նշանակութիւնը: Ժպիտը և կատակը թեթևսօլիկ հասկացողութիւններ են համարվում այնտեղ, ուր մարդիք խօսում են իշխանութեան և օրենքի անունից: Երբեմն շատ ծանր է լինում իշխանաւորի առաջնձնացած դրութիւնը, բայց և այնպէս նա որոշ չափով պէտք է տանէ այդ կուրսը, որովհետև այդպէս է պահանջում երկիրը և հրապարակը և մեծ ախօրժակով վայելում յեղափոխական սեղանը «յեղափոխական նվաճումները» ոչ մի տրամադրութիւն չունէին յանձնելու հայերին իրանց ձեռքը ընկած երկրի իշխանութիւնը: Իսկ երկիրը, տեսնելով, թէ ինչպէ՞ս երերվեց, այդ մի բուռն յանդուգն աւազակների գրոհի առաջ հայկական իշխանութիւնը չը գնաց, իհարկէ, նորա յետևից: Հայկական սվիները, որոնց վերայ յենվում էր Նախիջևանի նահանգապետը, անկարող եղան, իհարկէ, հեղինակութիւն և կորով ստեղծելու հայկական նահանգապետի համար: Եւ «ընկեր Վարշամեան», որ միայն դեմօկրատիկ և միայն ընկերվար լօզունգներով էր ուզում կառավարել Ատրպատականի այդ հին որջանոցը, ստիպված էր այրելու իր հաւատարմութիւնները և ընդմիշտ թողնելու համար, որ գէթ մի որևէ բաւարարութիւն ստանա և թէ նորա համար, որ մեզ ծիծաղելի դրութեան մէջ չըդնենք...:

Այդ բոլոր յիմունքներով և միտումներով, մենք գծեցինք մեր պահանջած Հայեաստանի հետևեալ քարտեզը՝ Երևանի և Կարսի նահանգները, Վանի վիլաեթը, Ալաշկերտ և ելք դէպի Սև ծով Րիզաի և Բաթումի միջև: Այդ քարտեզին մենք կցեցինք և մեր գրաւոր այդ առիթով յուշագիրը և հարկաւոր վիճակագրական տվեալներ: Այդ յուշագրի մէջ մենք նորից ընդգծեցինք, որ մենք էֆիմիր պահանջներից շատ հեռու ենք, մենք կը ցանկանաիքն ունենալ այնպիսի մի տերիտօրիա, ուր կարող կը լիներ պարփակվել այսօր

ցիրուցան եղած հայ ժողովուրդը և ուր նա հնարաւորութիւն կունենար զարգացնելու իր տնտեսական և քաղաքակրթական պահանջները: Եւ այդ միտումներով, ասված էր մեր յուշագրի վերջում, մենք պահանջում ենք և ելք դէպի ծով:
*[այստեղ ներկայացված չեն թ.թ. 49-85]*

*ՀԱԱ, Ֆ. 477, ց. 1, գ. 12, թթ. 1-48, բնագիր, ձեռագիր*

**No 145**
ՀԱՏՎԱԾՆԵՐ ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ
ՍՏԵՓԱՆ ՂՈՐՂԱՆՅԱՆԻ ՀՈՒՇԵՐԻՑ
*Կարսի անկման, հայ սպաների փախուստի,*
*Սեպուհի շտաբի պետ Չիլինգարյանի անձնասպանության,*
*Սևրի դաշնագրի և թուրքերի ազգային հափկությունների մասին*
*(1922թ.)*

Կարսի անկումը

Շատ ուշագրաւ պէտք է համարել հոգեբանական իմաստով, որ Կարսի նահանգապետը, որ գուցէ աւելի քան ով և իցէ տեղեակ էր երկրի անցուդարձին, մինչև վերջը չէր հաւատում, որ Կարսը կարող է ընկնել: Սկզբից և մինչև վերջը, ես անվրէպ տանում էին միևնոյն քաղաքական պետական գիծը: Ես անդադար զանգահարում և պահանջում էի զբաղվել քաղաքացիական աշխատանքով: Ես բազմիցս կառավարութեան ուշադրութիւնն էի դարձնում մեր բանակի հրամանատար կազմի վերայ: Պահանջում էի, որ մեր նորաթուխ գնդապետներին և գեներալներին արգելվի միջամտելու երկրի քաղաքական, վարչական գործերին: Եւ, ձևակերպելով իմ բազմաթիւ դիմումներս և միջնորդութիւններս, ես ամէն անգամ հանգում էի պետական և կառավարչական թեմական իմաստում՝ երկրի իշխանութիւնը իր բնոյթում պէտք է ինտերնացիոնալ լինի և միայն այդ առանցքում երկիրը կը գնայ մեր յետևից և մենք ի կատար կածենք մեր սուվերեն կոչումը:

Գալով կուսակցական խնդրին, ես միշտ այն միտքն էի յայտնում, որ եթէ դաշնակցութեան վիճակ էր ընկել կառավարելու երկիրը, այդ դեռ չէր նշանակում, որ ամէն մի դաշնակցական իրաւունք ունէր միջամտելու պետական գործերին և խանգարելու նորա ընթացքը: Եւ պէտք չըկայ այստեղ ասելու, որ դրութիւնը միշտ խախտվում էր և ամէն մի դաշնակցական, ամէն մի տափակութիւն, զրահաւորված կուսակցական կոչումով, առանց քաշվելու և առանց ամաչելու միշտ թելադրողի և պահանջ իշխանալից դերումն էր: Կուսակցական գերագոյն մարմինը չը կարողացաւ պետական դաստիարակութիւն

մտցնել իր մեծ կուսակցութեան շարքերը, նա չը կարողացաւ խիստ և անվճռավեկ դիսցիպլին ստեղծել:

Շարքային դաշնակցականը չէր ուզում հասկանալ, որ երկրի առաջ պաշտպանելով մեր իրաւունքները, մենք հաշվի բերեցինք մեր թափած արիւնը, գաղթականութեան երկար շարաններ, կոտորած, աւեր, մոմուռ և արցունք: Եւ արժեքի վերածելով այդ բոլորը, որ նվիրաբերվում էր սերունդների երկար շարքերից ազգային գաղափարի կրակարանի առաջ, մենք հատուցում էինք, ստանում ի դէմս մեր հայրենիքի, մեր անկախութեան և մեր ազատութեան: Սևրը հայոց նորագոյն պատմութեան այն փարոսն էր, որի շուրջը խնկարկել են մեր մտքի, գրականութեան և մեր արուեստի բոլոր մեծ կերթողները և նորա շուրջը կուտակվել են ոչ միայն բողոքը, ճիչը և հառաչանքը, այլ և մեր ընդունակութիւնները, կենսունակութիւնը և մեր քաղաքակրթական կոչումը:

Սևրը այն նվիրական սրբարանն էր, ուր ուխտագնացութիւն է կատարել համայն հայութիւնը,կուսակցութիւնները, նորա երկար ճանապարհում խորտակվել և ծնվել են մտքեր: Եւ այնտեղ, վերջապէս, դարերի խմորումից յետոյ, ձևակերպվել է մեր դատը և հայկական հարցը միջազգային ճանաչվել: Եւ մենք իրաւունք չունէինք հրաժարվելու Սևրից:

Այդ բոլորը մենք ոչ միայն շատ լաւ հասկանում էինք, բայց և ցաւալից վերապրում: Բայց միևնոյն ժամանակ մենք հասկանում էինք և այն, որ հրաժարվելով Սևրի դաշնագրից, մենք չենք կատարում իրաւագիտական ակտ, որովհետև ոչ միայն մենք, այլ և հայկական կառավարութիւնը իրաւասու չէր լուծելու այդ խնդիրը:

Բայց մեր առաջ դրվում էր մի անլուծելի դիլլիմայ, կամ ստորագրել հրաժարումը, կամ ոտնատակ տալ և Արարատեան դաշտը...

Եւ ինչպէս դաշոյնի տակ ստորագրված մուրհակը կորցնում է իրաւական փաստաթղթի իմաստը, նոյնպէս և մեր հրաժարվելը Սևրի դաշնագրից չէր կարող փոխել հայկական հարցի միջազգային դրութիւնը: Այդ ակտը մի եղեռնական էջ էր միայն մեր պատմութեան մէջ, բայց նա չէր կարող խախտել իրաւունքը, որ բացառում է բռնութիւնը:

Ծայրահեղ ջղայնացում արտայայտեց այդ խորհրդածութեան տասննիհինգ ժամվայ ընթացքում պատվիրակութեան անդամ Աբր. Գիւլխանդանեան: Նա անընդհատ ծխում էր ջղայնալից, անդադար շրջում սենեակում: Նա ոչ միայն դիմում էր մեզ, իր բացատրութիւն-ները տալիս, նա խօսում էր ինքը իր հետ և երբեմն զառանցում...

Եռանդուն քայլելով սենեակում, նա կանգ էր առնում մեր պատմութեան զանազան շերտաւորումներում և դառնալով Սևրին, Գիւլխանդանեան բռունցքալից բողոքում էր և հառաչում...

Ես մեծ ուշադրութեամբ դիտում էի դաշնակցութեան այդ ցայթուն ներկայացուցչին և շատ լաւ հասկանում էք, թէ ինչո՞ւ այդ վաստակաւոր հայրենասէրը այդչափ կրքոտ և այդչափ ջերմ անդրադառնում է իր մէջ այս պատմական մօմենտը: Եւ իմ առաջ կանգնում էր մեր ամբողջ ազատագրութիւնը: Իսրաէլ Օրի, Խամսայի Մէլիքութիւնները, Դաւիթ Բէկ, Ներսէս V, Հայոց Հայրիկը, Գր. Արծրունի և վերջապէս մրրկայոյզ դաշնակցութիւն մեր ազատագրութեան այն մեծ օղակներն են, որ բերել, հասցրել են մեր դատը մինչև այսօր: Իսկ դաշնակցութիւնը, վերջի 30 տարվայ ընթացքում տիրելով կռվի հրապարակը, արտօնված էր պաշտպանելու մեր ազգային գաղափարը: Բոլոր հաշիւները մի կողմը թողած, մենք պէտք է խոստովանվենք, որ դաշնակցութեանը վիճակ էր ընկել դէմք ու կերպարանք տալու հայկական խնդրին և դաշնակցութեան ձեռքիցն էինք մենք ստանում այն ժառանգութիւնը, որ այսօր հայոց հանրապետութեան անունն էր կրում:

Եւ Աբ. Գիւլխանդանեան, որ դաշնակցութեան շարքերում մէկն էր նորա անկեղծ մոլեռանդներից, չէր կարող, ի հարկէ, երես դարձնել Սևրից, որի ճանապարհում դաշնակցութիւնը այնքան մարտնչել ու այնչափ արիւն է թափել:

Ճշմարտութիւնը պահանջում է ասել, որ թուրքը խելօք է, շատ խորամանկ: Ռուս տիրապետութեան ընթացքում, թուրքը իր անձնական միտումներում իր ձեռքումն էր խաղացնում երկրի ամբողջ ռուս պաշտօնէութիւնը:

Նա կաշառում էր այդ ռուսներին, շարունակ արբեցնում նոցա, զբօսանք և ձիարշաւ էր կազմակերպում նոցա համար և այդ աղնկալից վայելքների մթնոլորտում, ռուսների աչքը հանելով, ինչպէս թուրքի է ասել միշտ, նա սիրային արկածներ է կազմակերպել ռուսների կանանց հետ... Թուրքը թուղթ էր խաղում ռուսների հետ, դիտմամբ միշտ տարվում էր, ուտեցնում և խմեցնում էր նոցա, նոցա կանանցից «եւրոպական» պար էր սովորում, թողնելով ռուսներին կարծելու, որչա՜փ միամիտ և որչա՜փ պարզ է այդ հիւրասէր և հացառատ թուրքը... Բայց այդ խորամանկ դիմակի տակ թուրքը անվրէպ տանում էր իր հաշիւները - նա այդ միջոցներով պահպանում և աճեցնում էր իր հարստութիւնը, ծածկում իր աւազակութիւնը և անպատասխանատու ոճիրներ գործում: Այդպէս էր թուրքը Կայսերական Ռուսաստանում:

Յեղափոխութիւնը չը կերպարանափոխեց թուրքին: Նա ձգեց իր վերայից այն դիմակը, որի տակ նա երկրպագում էր ռուս Կայսերական քուրմերին և մեծ թափով իրան «սոցիալիստ» յայտարարելով, նա նոր ծխի առանցքում սկսեց դարձեալ կեղեքել և դարձեալ վայելել կեանքի հրապոյրը: Ես ճանաչում եմ համալսարանական թուրքեր, «ինտիլիգենտ» անվանվողներ, որոնք

իբր «սոցիալ» զանազան «հոսանքների» ներկայացուցիչներ և բարձր կոմիսարներ այսօր, իրանց ոտների մատները և մինչև այսօր ներկում, խնա են դնում...

Իւր ժամանակին նրանք ներկում էին խնայով և իրանց ձեռքերի մատները, բայց այսօր այդ արդէն ամօթ է և չի կապվում «սոցիալիզմի» հետ: Բայց այդ «սոցիալիստ» կօմիսարը իր հոգու խորքերում թուրք է և նրան պէտք է կրօնալից լինել իւրայինների շրջանում: Եւ գաղթագողի գիշերները, կանանց և ծառաների միջոցով ներկել տալով իր ոտների մատերը, այսօրվայ սոցիալիստ կոմիսարը համ սոցիալիստ է, համ էլ ուղղափառ մահմեդական... Դրսում, ռուսների համար, նա սոցիալիստ է, ներսում, իր թուրքերի շրջանում նա խնա դնող և մեծ նախանձախնդիր համիսլամ սրբութիւնների...

...Տեսնելով, որ մեր «Շտաբը» արդէն միանգամայն կորցրել է իրան, ես տվեցի գլխապետ Ժամհարեանին այդ յանձնարարութիւնը:

Ընդհանուր շփոթի և իրարանցման մթնոլորտում նետվելով յառաջ, գաւառապետ Ժամհարեան կռվի է բռնվում թիւրքերի հետ: Ես այլևս չը տեսայ այդ համակրելի երիտասարդին: Նորան վիճակված էր պատվալից ընկնելու այնտեղ, ուր հայ սպաները, լքելով հայ զինվորութեան շարքերը, փախչում էին անպատիւ և անամօթ:

Այդ վայրկեանում Աղէքսանդրեան մեծ փողոցում երևաց չորս լաւ ձի լծած մի կառք, որի գլուխը խորհրդալից ծածկվում էր: Կառքը անցնում էր կատաղի սրնթաց, հրելով և վայր ձգելով իր ընթացքում ալիքանման շարժվող բազմահազար գաղթականութիւն և իր ճեպընթացութեամբ առաջ բերելով մեծ յուզմունք և մեծ խուճապ: Կառքի ծպտեալ տեսքը և անպարտաւան փախուստը, որ ոտի տակ էր տալիս խուճապով բռնված ժողովուրդը, առաջ բերեց մեծ զայրոյթ: Բռնեցէք այդ լրբերին, լսվեց այստեղ ու այնտեղ, բայց մինչ այն, կատաղի ձիանքը թռցրեցին կառքը և նորա յետքը կորաւ...

Պարզվեց, որ այդ կառքում տեղաւորվել էին չորս սպաներ, որոնք թողել էին իրանց զօրամասերը ցիր ու ցան թշնամու հանդէպ, իսկ իրանք ժամ առաջ ուզում էին փրկել իրանց թանգագին կեանքը: Եւ նրանք ծածկել էին կառքի գլուխը, որպէսզի ժողովուրդը, ճանապարհի բազմութիւնը չը ճանաչէ նոցա...

Սեպուհի շտաբի պետ, գլխապետ Չիլինգարեան, մի համակրելի երիտասարդ, որ այդ րոպէին Կարսումն էր, տեսնելով այդ սպաների խայտառակ փախուստը և ճնշվելով, որպէս սպայ, ժողովրդի առաջ, կորցնում է հոգու «հաւասարակշռութիւնը» և անձնասպանութիւն գործում...

Գլխապետ Չիլինկարեան, մէկը հայ ազնիւ և սակաւաթիւ սպաներից, չը կարողացաւ տանել իր զինակից «գնդապետ» - «գլխապետ»-ների այդ հրապարակաւ ամօթալից փախուստը և ի ծայր ջղայնա-

նալով, իր կեանքի գնով ուզեց ամօքել հայ սպայութեան անօրինակ խայտառակութիւնը:

Այդչափ դրամատիկ էին այն րոպէները, երբ Կարսը ընկնում էր: Խելակորույս և սարսափահար, բոլորը փախչում էին դէպի «Շտաբ», դէպի գեներալ Փիրումովի կայեանը: Թշվառ ժողովուրդը կարծում էր դեռ, ոչ ամէն բան է կորած: Նա դեռ չէր կորցրել իր հաւատը դէպի իշխանութիւնը, նա կարծում էր, որ այդ հրամանատարը կայ և նա ապաւինում էր նորան...

Բայց շպաբը արդէն գոյութիւն չունէր: Եթէ մինչև այսօր նա միայն մի ֆիկցիա էր, մի խաբուսիկ հմայք, այսօր երկրի առաջ նա կանգնում էր սնանկ և խեղճ: Եւ միայն այսօր էր հայ ժողովուրդը տեսնում, թէ ո՞ւմ էր յանձնված երկրի բախտը և ո՞վ էր առաջնորդում մեր ազգային և «հանրապետական» բանակը: Ձի նստած, իմ մի քանի պաշտօնեաների ուղղեկցութեամբ, ես հազիւ շարժվում էի փողոցներով, որ հեղեղել էր ժողովուրդը: Շտաբի չորս կողմը ասեղ ձգելու տեղ չը կար՝ այնտեղ էին բոլորը՝ քաղաքացիք, գիւղերի ազգաբնակութիւնը, պաշտօնեաներ, սպաներ, զինվորներ: Շտաբի մեծ դահլիճում, այլայլված ու լուռ, կանգնած էր գեներալ Փիրումով, գեներալ Ղազարեան, գեներալ Արարատով, Գարեգին եպիսկոպոս, Մինիստր Բաբալեան և մի քնաի գնդապետներ: Եւ բոլորը ոչ միայն յուսահատ, այլև պապանձված մարդկանց տպաւորութիւն էին թողնում:

Գեն. Ղազարեան Երևանից Կարս էր ժամանել միայն երկու օր առաջ: Միայն երկու օր առաջ մեր բարձր հրամանատարութիւնը ստիպված էր թիկունք ուղարկելու երկու ամիս շարունակ նահանջող գեներալ Յովսէփեանին և նորա տեղ, առաջաւոր զօրքերի հրամանատարութիւնը գեներալ Ղազարեանին յանձնելու:

Տեսնելով ինձ, գեն. Ղազարեան, շատ հասկանալի հոգեբանական վերապրումներում, ուզեց բացատրվել: Նա ուզում էր ասել, որ ինքը հրաշքներ գործել չէր կարող, որ նրան ռազմաբէմ էին կոչել, երբ ամէն բան վերջացել էր և գեներալը, մօտենալով ինձ, ասաց.- Մենք բանակ չունենք այլևս, ամէն բան վերջացած է...

Ես մի երկու հարցով դիմեցի միւսներին, բայց բոլորը տարված էին իրանց մտքերով և ոչ ոք պատասխանելու կարողութիւն չունէր, կարծես: Այդ մեծ դահլիճը, որ տեսել էր այնչափ պարտութիւն և վկայ էր այնչափ յաղթութիւնների, կորցրել էր, կարծես, բանականութիւնը:

Կարսի ամրութիւնների հրամանատարի այդ նշանաւոր սրահում խմբված աստիճանաւորները կորցրել էին արդէն հաւասարակշռութիւնը:

Նոցանից մի մասը, քարացած, կանգնած էր դահլիճի մեջտեղում, կարծես անվերաբեր դէպի պատմական արհաւիրքը, իսկ միւսը, աննպատակ և ջղայնալից, նետվում էր դէպի այս և այն դուռը և կարծես թէ մի բան էր սպասում և մի բան անում...

Իսկ հազարաւոր ամբոխը, որ պաշարել էր հայկական զօրքերի հրամանատարի ապարանքը և որի ջղայնացումը խելագարութեան էր հասնում, դեռ ապասում էր և նորից իրան յոյսերով օրորում...

Եւ այդ օրհասալից րոպէում նա կարծում էր, որ կորած չէ ամէն բան, նա կարծում էր, որ բարձր հրամանատարութիւնը ինչ որ մտածում է, ինչ որ չափում և ձևում է: Դրսում դեռ տարված էին յաղթութեան յոյսով...

Այդ արտակարգ դրամատիկ մթնոլորտում, դահլիճի մի անկիւնից միւսը նետվելով, դարձեալ աղմկում էր քաղաքագլուխ Նոհրատեան.
- Պարոններ, խորհրդակցենք, ժողով գումարենք, բա ի՞նչ անենք, ժողով, ժողով...

Խեղճ Նոհրատեան կարծում էր, երևի, որ ինքը դարձեալ դաշնակցական է, նորա Կարսի լիդերը, նա կարծում էր, որ և այսօր նա պէտք է տնօրինէ երկրի բախտը և այդ րոպէում նա խօսում էր «ժողովի» մասին, դարձեալ երազում...

Բայց նորան լսող չը կար այլևս: Հրացանների ու ռումբերի տրաք տրաքոցը և աւելանում և մօտեցնում էր:

-Ձերդ Գերազանցութիւն, մօտեցաւ ինձ իմ Միլիցիայի տեսուչը, մի երկու րոպէ ևս և մենք այլևս հնարաւորութիւն չենք ունենայ անցնելու...

Ուղղելով քայլերս դէպի ելք, ես մի երկու դիմում էլ արեցի դահլիճում խմբվածներին և ի ծայր վտանգալից տեսնելով դանդաղումը, ես նստեցի ձին և իմ ուղեկիցներիս հետ թողեցի Կարսի հռչակաւոր Կարադաղը: Իսկ մի 10 րոպէ անց այդ Կարադաղը արդէն թիւրքերի ձեռքումն էր և հայկական դրօշակին նորից վիճակված էր գլխակոռ իջնելու...

Այստեղ և այնտեղ պայթում էին ռումբերը, լացը և հեկեկանքը, որպէս ոգալից զանգ, ծփում էր օդում, բոլորը խելակորոյս փախչում էին և բոլորը թախծալից թողնում հայրական օջախը...

Իսկ այդ վայրկեանում, դարձեալ կանգուն և դարձեալ խորհրդա-լից էր միայն Սուրբ Առաքելոց հռչակաւոր եկեղեցին:Կարս չայը նո-րից կատաղի և դարձեալ փրփրալից, քերում էր մեր դարաւոր սրբութեան պատվանդանը, իսկ նա դարձեալ անսասան և դարձեալ անխռով, կանգնած էր նոյն Կարադաղի տակ: Բագրատունեաց հարստութիւնից յետոյ, պահպանելով հայկական սուվերէն ժառանգութիւնը, մեր հինաւուրց տաճարը վկայ է եղել բազմաթիւ տիրապետութիւնների: Տասը դար շարունակ յունաց, պարսից, հրովմայեցոց, թիւրքաց և ռուս դրօշակները յաջորդել են մէկը միւսին և դարձեալ մի ապացոյց բերել Վանանդին, որ ոչինչ մշտենջանաւոր չէ երկնակամարի տակ...

Եւ այսօր նորից թախծալից դիտելով հայ ժողովրդի գաղթը հայրենի երկրից, Ս. Առաքելոց Տաճարը մնում էր դարձեալ իր տեղում, մնում էր պահպանելու նվիրական ժառանգութիւնը...

Բայց անիմանալի են Արազի ուղիները և մենք ակամայ դարձանք դէպի մեր դարաւոր սրբութիւնը և վերջին անգամ թողնելով Բագրատունեաց հռչակաւոր մայրաքաղաքը, մենք լուռ և պատկառալից բացեցինք մեր գլուխը այդ մամրացած սրբարանի առջևով անցնելիս...

Ժողովրդի հեղեղալից ....ը, մի րոպէ կարծես քարացաւ, կանգնեց, բոլորը բացեցին գլխները, բոլորը յուսալից հառաչեցին: Եւ մենք, ժողովրդի հետ միասին, մեծահաւատ տրամադրութեամբ և շատ բարձր կորովով դէպի ժողովրդական բնազդը, վերջին անգամ խաչ հանելով, խոնարհալից անցանք այդ տաճարի մօտով:

Մենք թողնում էինք, այնտեղ մեր հաւատը և մեր յոյսը, բայց այդ բոլորը, թվում էր մեզ, ցը նոր ծիածան և մինչ նոր երազներ ու խանդաւառ օրեր...

Եւ զարմանալի ջերմալից և սփոփող է հաւատը: Այդ հինաւուրց և մայրական խաչից և ապաւենից յետոյ, մենք կարծէս թէ և թափվել և կազդուրվել էինք: Եւ մենք շարունակեցինք մեր ճանապարհը նոր յոյսերի և նոր վերապրումների բաբախումով...

Այդպէս էին այն վերջի րոպէները, երբ մենք թողնում էինք Կարսը:

Բնորոշելով դրութիւնը և հրամանատարութեան վերաբերմունքը դէպի պատերազմի բաբախումը, հետաքրքիր կը լիներ առաջ բերել այստեղ և հետևեալ փաստը:

Կարսի անկման օրը 4 բրիգադայի հրամանատար Սեպուհ Կարս էր: նախընթաց օրը, պաշտօնական գործով բարձր հրամանատարութեան միտումները իր անելիքների մասին պարզելու համար, նա եկել էր Կարս:

Ըստ երևոյթին, պատերազմական երկնակամարը, Կարսի մեր «Շտաբի» հեռադիտակով, ոչինչ առանձին բան չէր գուշակում և զօրաւոր Սեպուհ, առաւօտվայ ժամի եօթին, Կարսի անկման օրը, նստում է աֆտոմոբիլ և մեկնում իր կայանը: Զորքերի հրամանատարի Կարսի Շտաբը ոչ մի ծայրահեղ հրահանգ չէ տալիս Սեպուհին: Շտաբը կարծում էր, որ թնդանոթների բաբախումը մի անցնող, ժամանակաւոր զբաղեցուցիչ տեսել է և ոչ մի տեղեկութիւն չունենալով տակաւին մօտեցած թշնամու մասին, նա չէր շտապում գէտ այդ օրը մի որևէ միջոցի դիմելու:

Սեպուհ, որ թիկունք էր ուղարկված, չէր կարող, իհարկէ, իրազէկ լինել ճակատի անցուդարձին: Նա մեկն էր այն մարդկանցից, որ գիտեր այդ «Շտաբի» իսկական արժէքը, բայց և այնպէս նա էլ չէր կարող երևակայել անգամ, թէ զօրաց բարձր հրամանատարութիւնը կարող է այդչափ անհոգ, եթէ չասենք այդչափ ապիկար լինել այդ օրհասալից օրը: Առաւօտվայ ժամի վեցին, մեկնելով իր կայանը,

Սպուհ այցելեց Կարսի նահանգապետին: Մենք ջղայնալից, բայց շատ բարձր տրամադրութեամբ փոխանակվեցինք մեր տեղեկութիւններով և կարծիքներով օրվայ խնդրի մասին և Սեպուհ, մի ժամից յետոյ աֆտոմոբիլ նստելով, ինձ հետ միասին չէր կարող երազել անգամ, որ չորս ժամից յետոյ Կարսը ընկած կը լինի և մենք նորա հետ տարագիր...

Կապի զօրականների հետ, առանց սուրհանդակների, լրտեսների, տեղեկութիւնների, հերթապահ տելեֆոնիստների, հերթապահ աֆտոմոբիլների, առանձին յանձնարարութիւնների սպաների և առանց օկուրան տեղեկատու մարմնի, նման էր աւելի մի անկեալանոցի և ոչ երբէք ինքնակալ հրամանատարի կայանի:

Թողնելով Կարսը և դիմելով Սեպուհի կայանը, ճանապարհին մենք հանդիպեցինք հրետանու սպայ Բէկնազարեանին և մի քանի այլ սպաների, որոնք նոյնպէս զանազան ամրութիւնների վերայ ղեկաւարում էին թնդանօթները:

-Դուք էլ այստեղ էք,- դարձայ ես սպայ Բէկզադեանին և միւս օֆիցերներին:

-Մենք ոչ մի հրահանգ, ոչ մի հրաման չէինք ստանում գեն. Փիրումովի Շտաբից, ասում էին ընկճված սպանորը: Երեկվանից մեզ նոյնիսկ չէին պատասխանում մեր հեռախոսին: Մենք տեսնում էինք, թէ ինչպէ՞ս, մէկը միւսի յետևից, դադարում էին գործելուց ամրութիւնները և նոցա վերայի թնդանօթները, հերթով, մէկը միւսին լսելով, լռում: Մենք դիտում էինք, թէ ինչպէ՞ս բոլոր ամրացած կայաններից, զօրամասերը, որպէս անհովիւ ոչխար, փախչում, գնում էին և մենք մեր ներկայութիւնը այդ պայմաններում մեր դիրքերում միանգամայն աւելորդ համարելով, վճռեցինք նոյնպէս թողնել և ժամ առաջ հեռանալ...

Դիմել «Շտաբ», ասացին սպաները, մենք դարձեալ հնարաւորութիւն չունէինք, մեր տրամադրութեան տակ չըկար ոչ թէ աֆտոմոբիլ, այլ նոյն իսկ ձի: Բացի այդ բոլորից, մենք արդէն տեսնում էինք, որ բանակը փաստորէն հրամանատար չունի, որ անիշխանութիւնը զօրաբանակում ակներև էր: Դիմել դէպի Կարս, ուր լքված և փախչող զօրքը ստեղծել էր միայն դժոխք նոյն իսկ վտանգալից էր և մենք վճռեցինք ոտով հեռանալ լեռները և ապա Աղէքսանդրապոլ...

Այդպէս էր Կարսի «Շտաբը» - հայկական գործող բանակի այդ սիրտը և ուղեղը:

Եւ շարքային հայ զինվորը, անվանի և կարող իր անցեալում և բնոյթում, պէտք է ցաքան ու ցրիւ գար, անջատ իր ցանկութիւններից և քաջազնալից կորովից:

Արևը թեքվելու վերայ էր, երբ ես իմ ուղղեկիցներով հասայ Մէլիքքեօյ գիւղը, որ Կարսից մի 15 վերստի վերայ էր, Կարս-Աղէքսանդրապօլ խճուղում:

Գիւղը վերացվել էր մի մեծ պատերազմական կայանի: Նրա շուրջը սփռված էր ճանապարհի ընթացքում հանգիստ առնող բազմահազար գաղթականութիւնը, ճանապարհի երկարութեամբ ձգվում էին շարժվող անթիւ սայլեր, բեռներ, ձիաւոր և ոտաւոր և նոցա հետ միասին, շփոթալից և անհոգ, զինւորների և սպաների բազմաթիվ խմբեր, ... տարազով, բարխանով:

Որպէս բնութեան գաղտնիք, իրոք, հարստութեան շուրջը միշտ բորբոքվել են իշխանալից և տիրող տրամադրութիւնները և գուցէ դորանով պէքտ է բացատրել, որ այդ հարուստ գաւառակներում փառքի և իշխանութեան ծարաւը միշտ շատ բարձր է եղել և միշտ անհագ:

Ազդեցութեան և առաջաւոր անուն հանելու համար, այդ թէ կալվածատէր ազնվականները և թէ հարուստ գիւղացիները, միշտ մրցել են իրար հետ և միշտ ուտեցրել, կաշառել են ռուս պաշտօնեաներին և իրանք այդ առանցքում իրար հետ հաշիւ տեսել:

Պէտք չըկայ ասելու, որ այդ մթնոլորտում կառավարել դժվար չէր: Պրիստավները, գաւառապետները և միւսները, բաժանում էին և այնպէս տիրում ու կառավարում: Ռուս պաշտօնեաները թողնում էին այդ ազնվականներին և հարուստներին մրցել և կռվել իրար հետ, վերապահելով նոցա իրանց հիւրասիրելու և շահելու արտօնութիւնը, այդ պաշտօնեաները մի անվիճելի ծառայութիւն էին մատուցում իրանց կառավարութեանը:

Վիճող և մրցող կողմերից ոչ ոք չէր երազում պաշտօնական գերիշխանութեան մասին: Այդ իրաւունքը, անվճռաբէկ, պատկանում էր ռուսին և այդ ուղղութեամբ ոչ մի խօսք չը կար: Պետական յեղաշրջումը տակնուվրայ արեց բոլոր հասկացողութիւնները: Բոլորը ձգտեցին դէպի ինքնորոշում, բայց աւելի նախանձախնդիր և աւելի եռանդոտ էին այդ իմաստով այն ազնվականները, որոնք ժառանգութեան օրէնքներով տիրացան ռուս պաշտօնեաների իրաւունքները և այսօր իրանք, որպէս «յեղափոխական» և ազատալից կոմօսարներ, եկան վայելելու վաղեմի առատ և համով սեղանը...

Բայց ազնվական և կալվածատէր հայ կոմիսարը, որպէս իշխանաւոր այսօր, չունէր ռուս պրիստաւի և ռուս գաւառապետի անվճռաբէկ համարումը: Վէճալից հրապարակը նրան մրցող հակառակորդ էր համարում և այդ առանցքում խախտվում և գունատվում էին կոմիսարի իշխանական իրաւունքները:

Այդ տրամադրութիւնից օգտվեցին դրսի խռովարարները, Բակվի համիսլամականութիւնը և գրգռեցին թուրք ֆանատիկոսութիւնը:

Կովկասի սկզբնական ռուս կառավարութիւնը, օզակոմը, կարողութիւն չունեցաւ ըմբռնելու երկրի այդ վերապրումները: Այդ օզակոմը, տարված և ինքնագոհ, գնում էր իր օրերի հոսանքի յետևից և ջերմագին ծափահարում միայն հրապարակի բոլոր գունալից տեսնիլներին: Այդ մթնոլորտում երկրի իշխանութեան համարումը ընկաւ

իսպառ և ճարպիկ ու լարախաղ մարդիք, «ազատութիւն» և «յեղափոխութիւն» գոռալով, հրապարակում տալիս ենք միայն էժանագին ծաղրածու ներկայեացումներ... Վեդիի, Զանգիբասարի և Արազդայեանի բոլոր թուրք և քուրդ երիտասարդ աւազակները բոլորը յանկարծակի «սօցիալիստ» և «յեղափոխական» դարձան: Նրանք անցան Վեդիի լեռները և Արազդարայի Ղամիշով ծածկված ճահիճները և այդ տարածութեան վերայ ինքնորոշվելով, այդ գաւառակները յայտարարեցին ազատ և անկախ հանրապետութիւն...

Այդպէս էր դրութիւնը Երևանի գաւառի այդ անկիւնում հայկական իշխանութեան նախօրեակում: Մեր կառավարութիւնը, դիլիկատ, կամ, գուցէ, «դեմօկրատիկ» միտումներով, հարկ չը համարեց հէնց սկզբից համակվելու իր սուվերէն իրաւունքներով: Նա սրտոտութիւն չունեցաւ ասելու - յեղափոխութիւնը վերջացաւ և երկրի նոր իշխանութիւնը գալիս է կերտելու նոր օրէնքներ և նոր կենցաղ:

Եւ անվճռաբէկ իր իշխանալից ձեռքը առնելով երկրի ղեկը, կառավարութիւնը պէտք է գար անսասան կառավարելու և ոչ խորհրդակցելու ու վիճելու մարդկանց հետ:

«Պարլամենտի» մեր «պատգամաւորները» և այնտեղ կարծում էին, որ Զանգիբասարում «քաղաքական հոսանքներ» կան և հարկ էին համարում, հաշվի առնելով այդ «հոսանքները», նոցա հետ «կոնտակտ» կայացնելու: Եւ այստեղ նորից պարտվեց մեր պետականութիւնը:

Զանգիբասարում կային հին և նոր աւազակներ, կային փառքի և իշխանութեան համար մարտնչողներ, այդտեղ էին եկել Բակվից թուրք քաղաքական շարլատանները և նկատելով հայկական կառավարութեան երերուն և ոչ իշխանալից տրամադրութիւնը, այդ բոլոր «հոսանքները»«բլոկ» կազմելով, մեծ թափով գրոհ գործեցին հայկական իշխանութեան վերայ: Այդ օրերում Երևան եկան և թուրքերի, Բակվի «դիւանագիտական» ներկայացուցիչը: Բայց այդ «հիւպատոսարանը» մի դարան էր միայն, ուր ձևակերպվում և ուղղութիւն էր ստանում Զանգիբասարի հակահայկական խմորը: Այդ «հիւպատոսարանը» զբաղված էր բացառապէս խռովալից մեր դէմ ինտրիգներով և նրա միջոցովն էր անցնում այդ վայրը «թիւրք օրիենտացիան», թիւրքաց ռազմագիտութիւնը, Բակվի ագիտացիոն ոսկին և Տաճկաստանի ապագայ միտումները: *[տեքստի խզում]*

...իւր ժամանակին իր հայրը, իշխելու ու փայլելու, նա յեղափոխական կօմիսար դարձաւ, Երևանի նահանգի համար: Նա կարմիր ժապաւենով միայն քողարկել էր իր թուրք անհամբեր և մոլեռանդ դէմքը և հայերը շատ շուտ տեսան, որ այդ «յեղափոխականը» նախկին պրիստաւի եղբօր կալվածատերի որդին է: Հայկական իշխանութեան օրով նա չքացաւ ծափերի ասպարեզից, բայց ես ուզեցի օգտագործել այդ ընդունակ, խորամանկ, ճարպիկ և կապեր ունեցող թուրք երի-

տասարդին: Նա չէր նստում իմ ներկայութեամբ, իսկ ես, իմ վարչական միտումներում, տրամադրված չէի խախտելու այդ ամօթխածութիւնը: Ես պատվիրեցի Երևանի իմ թուրք բարեկամներից մէկին ուղարկել երիտասարդին ինձ մօտ: Յիշեցնելով նորան իմ հին բարեկամութիւնը նորա հօր և ազգականների հետ: Ասացի, որ պարտաւորութիւն եմ զգում հովանաւորելու նորան կեանքի ձախորդ ալիքներից պահպանելու համար և Կարսի գաւառապետի օգնական նշանակեցի: Հազիւ թե պետք է ասել, որ այդ անուն ունեցող թուրքի միջոցով ես կը տանէի թուրք վայրերում իմ գիծը: Բայց ես պետք է կատարէի մինիստրի խնդիրը և ուղարկեցի երիտասարդին Երևան: Նա նշանակվեց Երևանի գաւառապետի օգնական և նրան յանձնարարվեց Զանգիբասար կառավարել: Ինչպես յետոյ պարզվեց, այդ ընդունակ և պէտք երիտասարդին նորա մոտ իշխանաւորը չը կարողացաւ սանձերի մեջ պահել: Երիտասարդը շատ շուտ զգաց, որ ինքը ինքնագլուխ է, նա իր շուրջը հեղինակութիւն չը տեսաւ, որի առաջ նա կարող էր խոնարհվել և նրա մէջ մեծ չափով առաջ եկաւ արկածալից թուրքը...: Նա երկծայրանի սուր դարձաւ Երևանի վարչութեան համար և աւելի խըճըճելով առանց այն էլ անիշխան դրութիւնը Զանգիբասարում, Սուլթանով փախաւ Բագու, չարիքի փոքրագոյնը ընտրելով իր համար այդ անյոյս դրութեան մէջ...:

II

Այդ օրերում Զանգիբասարի բորբոքումը հասնելու վերայ էր: Իւր ժամանակին փափուկ համարելով դեմօկրատիկ կառավարութեան համար կուրսը դէպի աջ այդ աւազակ և արկածալից վայրում, հայկական կառավարութիւնը այժմ հարկաւոր գտաւ ուղղելու իր վրիպումը զրահակիր բռունցքով: Եւ մի երկու արտակարգ անյաջող գրոհից յետոյ դեպի այդ չարաբախտ Զանգիբասար, այդ վայրում հռչակվելու վիճակը ընկնում է Ռուբէն փաշային:

Այդ օրերում փաշան յամենակարող մարդն էր մեր աշխարհում, նա և զօրաց և ներքին գործոց մինիստր էր, նա ձևակերպել էր իր ձեռքում օրերի իմաստը ու դաշնակցութեան վիճակային ատեանը, բիւրօն կառավարութիւն դարձնելով: Փաշան դիկտատորի անպատասխանատու պատվանդան կապեց իր համար:

Զանգիբասարը Ռուբէն փաշայի օրվայ լօզունգն էր և թմբակահարելով այդ ուղղութեամբ, նա պատերազմական տրամադրութիւն ստեղծեց երկրի մթնոլորտում: Բայց նրա զօրաբանակին կըցվեցին շրջանի բոլոր թալանչիները և երբ դիկտատորը փողահարում էր դէպի գրոհ, օդում արձագանք էր տալիս գիշատիչի դէպի թալան մեծ ախորժակը:

Երևանի բարձունքներից սկսված մինչև Արազդայեան և Շարուր՝ փաշան անցաւ սրով և հրով մաքրելով երկիրը դարան մտած արկածախնդիր թուրքերից: Ամեն տեղից լսվեց թուրքերի մեղան, բայց այդ

արդէն ուշ էր՝ դադարեցնել երկրի տարրերային և վրէժալից հոսանքը դեպի թուրք վայրերը անհնարին էր: Ճշմարտութիւնը պահանջում է ասել, որ թուրք ըմբոստ վայրերի այդ անխնայ և կայծակահար մաքրումը սկզբում շատ բարձր տրամադրութիւն առաջ բերեց երկրում: Որոշ չափով բաւարարված էր հայ ժողովրդի մեջ պետական պատվախնդրութիւնը և կառավարութեան համարումը, կարծես թե, վերականգնում էր: Բայց այդ մի հետաքրքիր տեսիլ էր միայն, անցնող և դառնալից իր հետևանքներով: Այդ հրավառ պատկերը աւելի զգայնալից էր քան բանիմաց և մտածված: Քաղաքական և պետական միտումները մեր զօրաբանակի և նրան ուղեկցող խառնիճաղանճ ամբոխի մեջ շատ շուտ վերածվեցին հարստահար թալանի: Մի ակնթարթում կարծես մարեց պատվախնդիր բարձր տրամադրութիւնը և մենք մոռացանք մեր սուվերեն, պետական կոչումը: Վրէժը պարունակում է ճշմարտութեան գաղափարը: Ժողովրդի բարոյեական հասկացողութիւնների սաղմում նա ունի իր պատվաւոր ասպետ տեղը: Այդպես էր համակված երկիրը Զանգիբասարի արշաւի նախօրեակում: Բայց այդ տրամադրութիւնը շատ շուտ վերածվեց թալանի և այնուհետև դժվար էր ասել, ի՞նչ հոսանք է անցնում Արաքսի աւազանով: Կառավարութեան զօրաբանակը, որ կոչված է կարգ և իշխանութիւն վերականգնելու, թե մի մեծ խառնիճաղանճ յորդայ, որ գալիս է թալանելու և լափելու երկրի մեծ հարստութիւնը...: Որպես դէպի մի առատ հունձ, ռազմաբէմ թափվեցին սայլերով, բեռնակիր անասուններով մեծ ջվալ-մեշօկներով և թնդանօթներից տարածվող ծխի հետ միասին այդ վայրից հոսում էր երկրի անհուն հարստութիւնը անթիւ գորգեր, տաւար, ոչխար, բրինձ, մետաքս, անօթներ և ամեն տեսակի արժեքաւոր: Բայց արդեն Շարուրի դարբասների տակ, լիացած և կշտացած բանակը և ամբոխը տրամադրութիւն չունեին արդեն առաջ շարժվելու և այստեղ պարտվեց Ռուբեն փաշայի դափնալից ընթացքը դեպի Հին Նախիջևան:

Անկարելի էր այլևս գաղափարական տրամադրութիւն ստեղծել բանակում: Մթնոլորտը տոգորված էր թալանի իմաստով և խախտելով կառավարութեան կորովը և համարումը, տանում էր մեզ դեպի անդունդ:

Շատ շուտ պարզվեց Ռուբէն փաշաի խաբուսիկ քաղաքականութեան բնոյթը, նա չէր հանգում պետական մտածված և մշակված խորալից սիստեմում: Զանգիբասարի վերջի պատմվածքը աւելի հայդուկ արկած էր, քան կառավարչական լուրջ ակտ:

Գեներալ Նազարբեկով, հայկական բանակի այդ բեմուրազ և անբախտ սպարապետը, պատմում էր տողերիս գրողին, որ Զանգիբասարի արշաւը կատարվել է առանց իր անմիջական միջամտութեան: Ռուբէն փաշան տարված իր ծփալից լիազօրութիւններով, հարկաւոր չէր համարում հաշվի առնելու զօրքերի հրամանատար գեներալ

Նազարբեկովին և ռազմական կարգադրությունները Զանգիբասարի աւանտիւրայիւմ, ինքն էր անում: Ինձ զեկուցում էին, ասում էր ծերուն֊նի սպարապետը, փաշայի կարգադրությունների մասին կատարված փաստից յետոյ, իսկ դրսում կարծում էին, որ այդ անյաջող զինվորական արկածների հեղինակը զօրքերի հրամանատարն է: Զանգիբասարը մաքրելուց յետոյ ասում էր գեներալ Նազարբեկով, ինձ համար շատ պարզ էր բանակի դրութիւնը և շատ հասկանալի մթնոլորտի հոգեբանութիւնը: Ես ոչ մի կերպ չէի կարող համաձայնվել, որ մենք շարունակեինք մեր մարշը: Ես բացատրեցի, ասում էր գեներալ Նազարբեկով, զորաց մինիստր Ռուբէն փաշային, որ լիացած և մեծ բեռներով Զանգիբասարից դարձող մարդիկ ոչ մի տրամադրութիւն չունեն այս րոպեին յառաջ գնալու և այդ մարշը արկած իր բնոյթում, կազմալուծեց միայն մեր բանակը և շատ փափուկ դրութիւն ստեղծեց կառավարութեան համար: Բայց մինիստրը տրամադրութիւն չուներ կարծիքներ լսելու և հմայվաց իր արդեն գունատվող դափնիներով, նա առանց իմ գրութեան հրաման է արձակում մեր առաջաւոր մասերին յառաջ շարժվելու: Եւ այդ արկածալից հրամանի մասին զորքերի հրամանատար Նազարբեկով իմանում է միայն միուս օրը և իրան շատ անյարմար զգում իհարկէ, իր շտաբին առաջ: Պէտք է ասել, արդեօք, որ իրերի այդ դրութեան առանցքում զինվորական և առհասարակ պետական դիսցիպլինան խախտվում և երերվում էր, խանգարվում էր հրամանատարութեան աստիճանալից իմաստը և ենթական զգում էր, որ իր անմիջական իշխանաւորը, այս դեպքում սպարապետը, միայն մի ֆիկցիա է և ոչ հրամանատար: Եւ գեներալ Շելկովնիկօվ, մեր առաջաւոր մասերի առաջնորդը, համենայն դէպս սպայեական աստիճանների երկար շարք անցած զինվորականը և սովոր պատշաճ իշխանութիւնից դիզլօկացիայ ստանալ, ստիպված էր շարժվել դէպի Շարուր: Բայց այդ մարշը արդեն երերուն էր: Դասալքութիւնը աճում էր օրեցօր և աւելի քան պարզ էր, որ այդ տրամադրութիւնը պարունակում է իր մէջ մեր մօտալից պարտութեան բոլոր տվեալները: Երբ այդ օրերում, պատմում էր գեներալ Նազարբեգով, Զօրաց մինիստր Ռուբեն փաշան պճնալից տոնում էր իր յաղթութիւնները և փառքը, նա հարկաւոր համարեց այդ առիթով արքայեական ակտ կատարել: Եւ թիւս այլ «հերոսների» մինիստրը արդարացի գտաւ իր բարձր ուշադրութիւնը ուղղել և դէպի Կարսի պարետ, կօմենդանտ գեներալ Փիրումով:

Նա հեռագրով աւետեց գեներալին, որ այն ջանալից և իմաստաւոր…

*[այստեղ ներկայացված չեն թ.թ.46-52]*

*ՀԱԱ, Ֆ. 477, ց. 1, գ. 14, թթ. 1-45, բնագիր, ձեռագիր*

**No 146**
ՀԱՏՎԱԾՆԵՐ ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ
ՍՏԵՓԱՆ ՂՈՐՂԱՆՅԱՆԻ ՀՈՒՇԵՐԻՑ
*Կարսի անկումից հետո թուրք զորահրամանատար Կարաբեքիր փաշայի հետ հայ պատգամավորության ունեցած հանդիպման, Մոսկվայից Բ.Լեգրանի անունով ուղարկած գաղտնի գրության, Ալեքսանդրապոլում և Կարսի մարզում ստեղծված ծանր իրավիճակի մասին*
*(1922թ.)*

... այդչափ անգոյն և այդչափ ողորմելի էին այն միջոցները, որոնցով հայկական կառավարութիւնը զրահաւորել էր իր պատվիրակութիւնը:

Շատ հետաքրքիր է, որ թիւրք դելեգացիայի կազմի մէջ էլ կար, օրինակ, նահանգապետ, այդ Էրզրումի նահանգապետն էր և պարլամենտի մի անդամ, բայց Անկարայի դելեգացիան ունէր իր ոչ միայն իսկական «մասնագէտները», այն նոյն իսկ մամուլի յատուկ ... (փաստաթուղթը վնասված է): Այսպէս թէ այնպէս, մեր դելեգացիան ուղեկցող «մասնագէտները» աւելի թամաշաչիներ էին:

Եւ այսօր, երբ մենք հնարավորութիւն ունինք դիտելու անցած պատկերները իրանց իսկական իմաստում, մեզ մնում է միայն վկայել, թէ որչա՞փ ողորմելի էին այն միջոցները, որ տրամադրել էր ներկայացուցչութեանը հայկական կառավարութիւնը:

Բայց մի ծաղրալից պատկեր ևս: Պատգամաւորութեան տնտեսական պէտքերը հոգալու համար, որպէս մետր դոթել, մեզ հետ ուղարկել էին մի տաճկաստանցի հայ, որ ամենաշատը մի էժանագին սրճարանում կարող էր սպասաւոր լինել: Իսկ դելեգացիայի պէտքերի համար տրված էր հայկական դրամանիշներով մի քանի միլիոն րուբլի, որոնք ոսկով գուցէ մի 200 րուբլի. այնչափ մեծ խնամքով էր շրջապատված հայկական դելեգացիան:

Բայց անցնենք մեր պատմութեանը: Դրսում մենք գործ ունէինք տաճկաց բանակի հետ, որ նվաճելով մեր երկրի գրեթէ կէսը, բախում էր մեր մայրաքաղաքի դռները: Իսկ երկրի ներսում, որպէս մի գերբնական անտեսանելի հրէշ, կանգնում էր դաւաճան և այլասեռված հայրը, որ յենվելով իր թիկունքում դարան մտած ռուս սվիների և թուրք խուժանի վերայ, սպառնում էր ոչ միայն մեր քաղաքական սահմաններին, այլ և մեր լինել կամ չըլինելուն...

Այդ օրերում Երևանի ռուս «դեսպանութիւնը» մի առանձին աշխոյժ կեանք էր ստացել: Այդ դարանը մտած հայ մատնիչները վխտում էին այդ դեսպանութեան շուրջը մի առանձին բերկրանքով, իսկ դեսպանութեան ռուս և հայ անդամները, կարեկցալից (մի

ջնջված բառ) հայկական կառավարութիւնը, իրանց միջնորդութիւնն էին առաջարկում թիւրք արշաւի առաջն առնելու գործում:

Եւ հէնց այդ օրերում հայկական կառավարութեան ձեռքը ընկավ Մոսկվայի հետևեալ գաղտնի գրութեան պատճէն Երևանի ռուս «դեսպան» Լեգրանի անունով՝ ուղարկելով Ձեզ 35 հազար րուբլի ոսկով Հայաստանում պրոպոգանտա անելու համար, յայտնում ենք ի գիտութիւն, որ Հայաստանի դէմ բռնի միջոցներ առայժմ առնելու պէտք չկայ, որ մենք ունենք այնտեղ 138 գաղտնի գործակալներ և որ երկիրը ինքը կընկնի մեր գիրկը...

Բայց աւելի հետաքրքիր էր, որ տողերիս գրողը այդ գաղտնի գրութիւնը պատահմամբ գտաւ Մինիստրի սեղանի վերայ, ուր բոլորը անցնում էին ու բոլորը ընկերավար կարդում... այդչափ գաղտնալից էր հայկական կառավարութիւնը և այդչափ կազմակերպ էր նրա դիւանը...

Բայց ինքը, Լեգրան, բացակայ էր, նա Բագու էր գնացել և նրան սպասում էին օրէն օր, թէ իր «դեսպանատանը» և թէ հայկական կառավարութիւնը...

Թիւրք հրամանատարութիւնը փակել էր Երևան-Թիֆլիզի միջև երկաթուղու երթևեկութիւնը և մարդիկ մեծ դժվարութիւններով գնում և գալիս էին Թիֆլիզ Դիլիջանի վերայով: Դեսպան Լեգրան վերադարձա Երևան նոյեմբերի 20, կարծեմ: Նրան դիմաւորելու Դիլիջան էր ուղարկված մեր կառավարութեան կողմից Երևանի պարետ փոխգնդապետ Շախաթունին, որ մեծապէս օժտված է անդիսաւոր ընդունելութիւնների և սալօն ծեսերի համար:

Շախաթունը մեր շնորհալի դերասանն է: Ասում են, ճանապարհին, Լեգրան ասել էր պ. Շահխաթունուն - թողէք այդ «Երևանը», անցէք Մօսկվայի գեղարուեստական թատրոնը... Լեգրան, երևի, ուզում էր ասել, որ «Հայաստանը» այդ մի զառանցանք է, իսկ իրականութիւնը՝ Ռուսաստանն է...

Իր Երևան գալու միւս օրը, դեսպան Լեգրան, ուղեկցութեամբ վրացի յայտնի մեծամասնական Բուդու Մդիվանու, այցելեց Մինիստր նախագահին և կառավարչական կուլուարներում արդէն խօսում էին, որ Հայաստանի միակ փրկութիւնն է ստեղծված դրութիւնից դուրս գալու համար այդ «թեթև սօվետիզացիան է», խորհրդային իշխանութեան հետ ձևական տեսք ընդունելն:

Պէտք էր կարծել, ինչպէս և պարզվեց յետոյ, այդ ռուսական օրենտացիայի կողմակիցների համար էլ պարզ չէր մեր օրերի այդ քաղաքական նոր ֆորմուլան, շատերը կարծում էին, որ առ երես «կարմրելով մի փոքր», նրանք բաւարարած կը լինեն հիւսիսում դարան մտած հրեաներին և նրանց այդպիսով, կը խաբեն...

Բայց այսօր մի բան միայն ակներև է - մեզանից ոչ ոք ոչ մի գաղափար չունէր բօլշևիզմի մասին և ոչ մի հասկացողութիւն

չուներ, թէ ի՞նչ դժոխային ցանցերով էր պատած մեր «միացեալ և անկախ Հայաստանը»...

Եւ եթէ այն օրերում մենք չէինք կարողանում հասկանալ, թէ ի՞նչ զուգադիպութեամբ Կարսի անկման օրերում դեսպան Լեգրան մեկնում է Բագու և այնտեղից վերադառնում է ինչ որ Բուդու Մտիվանու հետ, գէտ այժմ, իհարկէ, շատ պարզ է, թէ ի՞նչ բարի խաղ էր կատարվում մեր շուրջը և (ըստ երևույթին կա պակասող էջ)արտակարգ գնացքը, որ պատրաստվում էր մեզ համար, փայլում էր էլեկտրական լույսով: Զուգադիպութիւնը երբեմն ոչ թէ պատահականութիւն է, այլ գուցէ պատմական դիպուածների դասաւորում, ու մարդիկ, որպէս բնածին սնոտիապաշտներ, տրամադիր են տեսնել այս և այն մեկնութիւն: Եւ այդ անհասանելի ճակատագրի բերմունքով էր, երևի, որ Խատիսեան գնում էր այն սալոն վակոնով, որ ուղիղ մի տարի առաջ բերեց նրան դէպի Կարսի Արփաչայ: Ուղիղ մի տարի առաջ, շրջապատված գեներալներով, հասարակական գործիչներով ու փայլուն շքախմբով, Մինիստր նախագահ Խատիսեան Արփաչայի վերայ ընդունում էր Կարսի նահանգապետի պատվաւոր զեկուցումը նահանգի դրութեան մասին և շատ բարձր տրամադրութեամբ լսում այդ միջոցում ազգային հիմնը:

Բայց այսօր Կարսի նախկին նահանգապետը ուղեկցում էր պրեմիերին դարձեալ դէպի Արփաչայ, որի պղտորված ջրերի հորձանքում վերջինս ստիպված է լինելու ստորագրելու այն Կարսի անջատումը, որ դեռ մի տարի առաջ արքայական ընդունելութիւն ցոյց տվեց հայկական պրիմիերին...

Երբ դելեկացիայի նախագահը մտաւ սալոն վակոն, մենք բոլորս յուզված և ճնշված էինք:

Կան մոմենտներ, երբ մարդկանց տրամադրութիւնը անդրադառնում է դէպի շրջապատը անկախ խոսքերից և հառաչանքներից և այդ զգաիւն ու վիրաւոր տրամադրութիւնը խմորվել էր դելեկացիայի անդամների և նոցա ուղեկցողների շարքերում, անկախ խօսքերից և որևէ մեկնութիւններից...

Բայց ելքը ուղեկցում է ամէն միդրութեան և մենք լուծեցինք մեզ ճնշող մթնոլորտը և շտապելով առանձնանալու մեր կուպեներում... Եւ մեր այդ առանձնակի հոգեբանական վերապրումներով, խորին լրութեան և գիշերվայ թանձր խավարի մէջ, մեր գնացքը շարժվեց դէպի Աղէքսանդրապոլ...

Բնութիւնը ունի իր մեծ գաղտնիքները և այդ հանելուկների շուրջը մարդկութիւնը շարունակում է դեռ մաքառել ու հաւատալ: Մեր ծախորդ օրերը ստացել էին արդէն այդ ընթացքը և մռայլ ու ճնշող տեսիլները կարծես թէ յետևում էին իրարու: Մի ամսից աւել Հայաստանը մազութ չէր ստանում Բագվից և հայկական

երկաթուղիների գնացքները բանում էին փայտով: Պետական ապարատը խանգարվել էր արդէն միանգամայն և պաշտօնեաները իրանց վերջին ժամերն էին հաշվում... Այդ մթնոլորտում խօսք չէր կարող լինել պարտաւորութիւնների, պարտաճանաչութեան և մանաւանդ պատասխանատվութեան մասին և ամէն ինչ կախված էր պաշտօնեայի քմահաճ տրամադրութիւնից...*[պեքսփի խզում]*

...սպասում էր կայեաններում փայտի և Աղէքսանդրապօլ մենք հասանք ոչ թէ 5 ժամից յետոյ, ինչպէս առաջ, այլ միայն 40 ժամից յետոյ... Բայց այստեղ գուցէ իւր տեղում կըլինէր ասելու, որ Հայեաստանի երկաթուղիները զինվորական դրութեան վերայ էին և ենթարկվում էին զինվորական հաղորդակցութիւնների պետին, որ դարձեալ մի ռուս գնդապետ էր, այն էլ արբեցող՝ Միխայլօվսկի ազգանունով: Եւ այլ վերաբերմունք այդ ռուս գնդապետից դէպի հայկական կառավարութեան արտակարգ պատվիրակութիւնը, որ նշանակված ժամին պետք է Աղէքսանդրապօլ լինէր, չէր էլ կարելի իհարկէ սպասել: Իսկ մեր յետևից, նոյնպէս շատ դանդաղ գալիս էր մի աւելի մռայլ գնացք: Այդ մեծ զինվորական գնացքը ակամայից կարծես շարժվելով մերթ կանգնում, մտածմունքի մէջ ընկնում ապա նորից, շատ ծանր հառաչելով, շարժվում և լալկան սուլում...: Այդ վշտահար գնացքը տանում էր Աղէքսանդրապօլ, թիւրք հրամանատարի ուլտիմատիւ պահանջով, մեր թնդանօթները, գնդացիրները, ջորիները և այլ պատերազմական աւարը:

Ես մոռացայ իր տեղում յիշել, որ երբ այդ ռազմամթերքը բարձում էին վագոնները Երևանի վակզալում, այդ զինվորական գնացքի պետ սպայ Վարդանեանն այնչափ յուզված և ջղայնացած էր, որ չկարողացաւ զսպել իրան ու շատ բարձր հեկեկաց, յուզելով զինվորներին և վակզալի յամբողջ բազմութեանը...: Տիրեց մի աննկարագրելի թախիծ և մարդիկ մռայլ ու պապանձված կարծես շարժվում էին որպէս ուրուականներ այդ դաժան մթնոլորտում...:

Կայարաններում, երբ մեր գնացքները հանդիպում էին, մենք խուսափում էինք դուրս գալու վագոններից, թէ մի աւելորդ անկում չը յուզվելու համար և թէ այն պատճառով, որ մեր երևալը աւելի ճնշում և նորոգում էր այդ գնացքի ուղեկցողների ծանր վերապրումները...: Իսկ նրանք գնացքի այդ խեղճ պարետը և զինվորները, լուռ կանգնած էին այդ սգաւոր վագոնների շուրջը, կարծես վերջի անգամ բոլորելով այն նշխարները, որ այնչափ սիրելի ու այնքան մտերիմ էին այսօր:

Մեր գնացքը դանդաղ շարժվեց և այդ զինվորներից մէկը թախծալից դառնալով դէպի այդ անցնող գնացքը, սկսեց երգել - ինձ մի խնդրիր, ես չեմ արգիլ, շատ տխուր է իմ երգը, նորա ձայնը կը խորտակի սրտիդ քնքույշ բերկրանքը...

Նոյեմբերի 24, լուսաբացին, մենք հասանք Աղէքսանդրապոլ: Դեռ Բաեանդուր, վերջին կայարանում, որ թիւրքերի ձեռքումն էր, մեր գնացքը անցաւ մի թիւրք սպայ, որին պատվիրված էր ուղեկցել մոզ Աղէքսանդրապոլ: Երբ գնացքը մի երկու րոպէ կանգնած էր Բաեանդուր, վակոններին մոտեցան մի խումբ հետաքրքրվող թիւրք ասկերներ, որոնցից մէկը հարցրեց մեր պաշտօնեաների մէկին Կարսի վալին էլ (նահանգապետը) այստեղ է...

Նա լսել էր, երևի, որ պատվիրակութեան կազմումն է և Կարսի հայկական նահանգապետը և այդ պատճառով, իրոք, նրան այդ հետաքրքրում էր...

Մի կէս ժամից յետոյ մենք արդէն Աղէքսանդրապոլ էինք: Վագզալի թիւրք պարետը, մի փոխգնդապետ, ի դիմաց տաճկաց զօրաբանակի հրամանատարի ներկայացաւ մեր դելեգացիայի նախագահին և ողջունեց մեր գալուստը: Նա խօսում էր ֆրանսերէն և, ինչպէս պարզվեց, շատ մօտ ծանօթ էր Կարսի նահանգի մեր բոլոր անցուդարձին: Նա մի քանի խօսքով կանգ առաւ իմ վարած քաղաքականութեան վերայ, ընդգծեց գեներալ Փիրումովի և գեն. Յովսէփեանի վերաբերմունքը դէպի երկրի իսլամ ազգաբնակութիւնը և այլն: Եւ մեզ մնում էր միայն զարմանալ, թէ երկրի ի՞նչ մանրամասն ուսումնասիրութեամբ էր գալիս Կարսի նահանգը թիւրքաց զօրաբանակի հրամանատարը: Աղէքսանդրապոլի վագզալը ես չէի կարողանում ճանաչել արդէն, այնչափ փոխվել էր այդ քսան օրվայ ընթացքում: Արդէն չկային դռներ, լուսամուտի ապակիները, սեղաններ ու աթոռներ, ամէն բան թալանված և կողոպտված էր: Իզուր էի ես որոնում վակզալում ծանօթ դէմքեր, այնտեղ վխտում էին տաճկաց զինվորները և մի երկու հայ մուրացկան... Մի ժամից յետոյ եկան թիւրքաց շտաբից մեզ համար ուղարկված երկու ավտոմոբիլ և երկու կառք: Ավտոմոբիլներից մէկը այն ավտոմոբիլն էր, որով Կարսի հայկական նահանգապետը շրջագայում էր նահանգը: Դեռ երեկ, այդ ավտոմոբիլի շուրջը խմբվում էին նորա բազմաթիւ ուղեկցողները և դիմաւորողները, խնդրատու, գանգատաւոր, այդ ավտոմոբիլը տեսել է հայկական իշխանութեան մեծ հանդեսներ և վկայ էր երբեմն մեծ ցոյցերի և մեծ հրաւառութեան...

Իսկ կառքերից մէկը, երկու սև նժոյգներով, ժամերով կանգ է առել Կարսի նահանգապետի տան առաջ, այդտեղ էլ Կարսի բերդի նախկին պարետ գեներալ Փիրումովի կառքն էր...

Այդպէս փոփոխակի է աշխարհի բախտը և որպէս այդպէս ունայն են իրաւունքը, փայլը և քաղաքական խաբուսիկ խմորումները: Եւ կեանքի այդ մօզաիկ հատվածները, կեանքի հետ միասին, անցնում, գնում են, թողնելով սերունդներին պատմութեան բեկորները, ուր

հասարակական կեանքի ուսումնասիրողը կը գտնէ այնքան դրական և բացասական տվեալներ...

Մենք անցնում էինք Աղէքսանդրապոլի գրեթէ դատարկ փողոցներով: Թէև արդէն առաւօտվայ ժամի ինն էր, բայց փողոցներում մարդ չկար: Խանութները փակ էին, լուսամուտները վարագուրուած և այս ու այն դռան կիսաբաց անցքից երևում էին մարդկանց սիլուետները...

Այդպէս էր դեռ երէկ եռուն և բազմամարդ հայկական քաղաքի տեսքը:

Թիւրքաց շտաբը տեղաւորվել էր ամրոցում: Այդ հռչակաւոր ապարանքը երևի շատ բան էր յիշեցնում թիւրք հրամանատարութեանը: Նա կառուցվել է մեծանուն իշխան Բեհբութեանի օրով և կրում է այն ահարկու անունը, որ անցեալ դարի 54 թվին Աղէքսանդրապոլի դիմաց, Բաշկադիկլարի սարահարթում, ջարդեց թիւրքաց մեծ զօրաբանակը և ստիպեց յամառ և գոռոզ Կարսը խոնարհվել հայ հրամանատարի առաջ...

Եւ երբ մեր կառքերը կանգ առան մեզ համար այդ ապարանքում պատրաստված բնակարանի առաջ, մենք ոչ միայն ճնշված էինք, այլև յուզված- մենք անցնում էինք այն կամարներով, ուր երբեմն իշխել և ահաբեկել է հայ հռչակաւոր հրամանատարը...

Մեզ դիմաւորեցին թիւրք սպաները և մենք անցանք մեզ հատկացված սենեակները:

Հայկական դելեգացիայի նախագահը յանձնարարեց իր ադիւտանտ Ղորղանեանին անցնել թիւրքաց շտաբը իմանալու, թէ ե՞րբ տաճկաց հրամանատարը կարող է ընդունել հայկական պատվիրակութեանը: Եւ մի ժամից յետոյ, թիւրքաց սպաների առաջնորդութեամբ, պ.պ. Խատիսեան, Գիւլխանդարեան և ես անցանք թիւրքաց շտաբը, ուր բնակվում էր և ինքը՝ հրամանատարը:

Մեծ դահլիճում մեզ դիմաւորեցին բազմաթիվ սպաներ զանազան աստիճանների և նոցանից աւագը առաջնորդեց մեզ դէպի հրամանատարի առանձնասենեակը: Աւագ զօրաւար Կեազում Կարաբեկիր փաշայ, գլխաւոր հրամանատար արևելեան ճակատի, 40-45 տարեկան յաղթանդամ մի զօրաւար է, Նապոլեօնի տարազով հագնված: Նա լուրջ է, խելոք և իր գինը իմացող մարդու տպաւորութիւն էր թողնում: Նոր ընդարձակ սենեակը և ննջարան էր և առանձնասենեակ: Մեծ գրասեղանի վերայ փռված էր ռազմական մեծ քարտեզը, երկար մատիտ, հեռախօս և ուրիշ ոչինչ... Մեզ յետոյ պատմում էին, որ թիւրքաց հրամանատարը երկու բան է շատ սիրում - քարտեզ և հեռադիտակ... Քարտեզի առաջ նա նստում է ժամերով, ուսումնասիրում և իր ռազմական դասաւորումները անում, իսկ

որչափ ժամանակ նա ձեռքից վայր չէ թողնում հեռադիտակը... Ճիշտ այնպէս, ինչպէս որ մեր Կարսի գեներալները...

Կեազում Կարաբեկիր ստացել է բարձր զինվորական ուսում, ունի գրվածներ: Նա խօսում է ֆրանսերէն և գերմաներէն: Ալ. Խատիսեան, փոխանակվելով հրամանատարի հետ ողջոյններով, ապա ներկայացրեց նորան մեզ: Հրամանատարը սիրալիր վերաբերվեց դէպի իր հիւրերը, անմիջապէս բերեցին տաճկաց տրադիցիոն սուրճը փոքրիկ ֆինջաներով և մենք, բոլորելով քարտեզով ծածկված սեղանը, անցանք զրոյցի:

Կարաբեկիր փաշան շատ զգոյշ և կորեկտ, կրկնեց այն բոլորը, ինչ որ ասել էր մինիստր Արարատեանին և աւելացրեց, դարնալով պ. Խատիսեանին. Բայց և այնպէս, երբ ես լսեցի, որ դուք, Ձեր կառավորութեան յատուկ յանձնարարութեամբ գնում էք Եւրոպայ, ես Էրզերումից յատկապէս եկայ Տրապիզօն: Ես յայս ունէի, տեսնելու Ձեզ հետ և հաւատում էի, որ մենք կարող ենք գալ մեր դարաւոր վէճի մասին մի որոշ համաձայնութեան: Բայց դուք, ժպտալով ասաց թիւրքաց զօրաւարը, խորշեցիք Անատօլիայի գեղածիծաղ ափերից և ես ստիպված էի արշաւելու դէպի Ձեր սահմանները...

Բայց Թիւրքիայի ազգային մեծ ժողովը ոչ մի նվաճողական միտումներ չունէր և սպառելով դիւանագիտական միջոցները, նա վճռեց զինվորական ցոյց կատարել Ձեր սահմաններում, յոյս ունենալով գէտ դորանով ստիպելու Ձեզ, Սևրից անջատ, մեզ հետ բանակցելու: Բայց, շեշտեց և երկարացրեց հրամանատարը, ուղղահայեաց դիմելով մեր երեքիս,- երբ իմ բանակի առաջաւոր մասերը, մի քանի հարիւր հոգուց բաղկացած, երևացին Ձեր սահմանների բարձրավանդակներում, դուք դատարկեցիք Օլթիից մինչև Կաղզման և Սարիղամիշ:

Մեզ ոչինչ չէր մնում անելու, կարժես ներողութիւն խնդրելով վրայ բերեց հրամանատարը, մենք հանգիստ գալիս էինք Ձեր յետևից և ճակատագրին հաճոյ էր, երևի, որ մենք կանգ առնէինք միայն այնտեղ, Արփաչայի ափերում... Բայց և այնպէս, վերջապէս Կեազում Կարաբեկիր, դարնալով դէպի պ. Խատիսեան, ես շատ ուրախ եմ Ձեզ հետ գէտ այստեղ ծանօթանալու, որովհետև շատ անգամ լսել եմ Ձեր մասին...

Պ. Խատիսեան, որպէս ճկուն հռետօր, կարիք չունէր ... դարձվածներ որոնելու, նա նոյնպէս քաղցրալից պատասխանեց Տաճկաց հրամանատարին:

Երբ երեկոյեան, ժամի 9, մենք թողեցինք մեր բնակարանը ու անցանք դէպի պատրաստված ավտօմօբիլները, երևաց թիւրքաց հրամանատարը շրջապատված իր շքախմբով: Կարաբեկիր փաշան տրամադրել էր այս անգամ մեզ իր ավտօմոբիլը և եկել էր մեզ

ճանապարհ ծգելու՝ շնորհակալութիւն ասելով զօրաւարին նորա հիւրասիրութեան և ուշադրութեան համար, մենք թողեցինք իշխան Բեհբութեանի հռչակաւոր ամրութիւնները:

Բայց ես կուզէի մի քանի խօսք էլ ասել թիւրք հրամանատարի մասին: Կեազում Կարաբեկիր փաշան անպայման ընդունակ և լուրջ զօրաւոր է և պատիւ կարող է բերել իր զօրաբանակին: Բայց նա անուն և հռչակ ստացաւ Կարսի անկումից յետոյ և կործանվող Հայեաստանի աւերակների առանցքում հիւսվեցին նորա դափնիքը:

Բախտը սիրում է տարուբերվել միշտ քմահաճ շրջափակում և նա շատ անգամ ժպտում է մարդկանց անվերաբեր դոցա արժանաւորութիւններին և վաստակներին:

Թիւրքաց հրամանատարին վիճակվեց քշել հայկական բանակը առանց կռվի և նա մտաւ Կարս ոչ որպէս յաղթող: Կարսի ամրութիւն-ների հարիւրաւոր ծանր թնդանոթները, որոնք պատմութեան ընթացքում խորտակել են թշնամու մեծ բանակներ և ամիսներով Կարսը անձեռնմխելի դարձրել, բախտի քմահաճ բերմունքով լռել էին Կեազում Կարաբեկիր փաշայի առաջ...: Եւ նա մտաւ Կարս մի քանի հարիւր քուրդ հրոսակների առաջնորդութեամբ, որոնց առաջ գլխակոր կանգնած էին թէ այդ ահռելի թնդանօթները և թէ Կարսում մնացած մեր գեներալները, սպաները և զինվորները...:

Կարսը ընկաւ, բայց ոչ նվաճվեց, ինչպէս չը յաղթվեց և հայակակն բանակը, որին մի գերբնական ոյժ հեռացնում էր առաջացող թշնա-մուց: Հայկական բանակը, ինքնաբերաբար, հեգեբանակն մեծ վե-րապրումների առանցքում, թողեց պատերազմի դաշտը և հեռացաւ: Նա չարտայայտեց իր պատերազմական կորովը և թողեց թշնամուն տարուբերվելու իր այդ առիթով ենթադրութիւններում: Եւ հայկական բանակը հեռանում էր հայրենի սահմաններից ոչ պարտված և ոչ ջարդված: Նա բռնված էր իր ժամանակի տենդով և ցրվելով գաւառ-ները, նա տանում էր իր հետ իր վաղեմի կորովը, որ քնած, թմրած դրութեան մէջ, կը սպասէ նոր օրերի և նոր տրամադրութեան...:

Եւ այստեղ մեր վերջի հրաժեշտը տալով Աղէքսանդրապօլի կօնֆերանսի նախագահ թիւրքաց բանակի հրամանատար Կեազում Կարաբեկիր փաշային, մենք ընդգծում ենք մեր երեկվայ հակառակորդի բոլոր արժանաւորութիւնները: Բայց և վերջին անգամ դասելով թիւրքաց հրամանատարին ոչ օրդինար զօրաւարների շարքը, մենք չենք կապում նորա քմահաճ հռչակը Կարսի և հայ զօրաբանակի հետ: Այդ երկու հակառակ մէկը միւսին բացառող ոյժերը բնորոշելով մեր օրերը, մնացին...

*[այստեղ ներկայացված չեն թ.թ. 25,26]*

*ՀԱԱ, Ֆ. 477, ց. 1, գ. 17, թթ. 1-24, բնագիր, ձեռագիր*

## No 147
## ՀԱՏՎԱԾՆԵՐ ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ ՍՏԵՓԱՆ ՂՈՐՂԱՆՅԱՆԻ ՀՈՒՇԵՐԻՑ
*Զինադադարի, Սևրի պայմանագրի և հաշտության պայմանագրի մասին*
*(1922թ.)*

…զինադադարի պայմանի, մեզ տրամադրեցին հեռագրական գիծը, բայց հեռագրային ապարատը գտնվում էր նոյն շինութեան մէջ, ուր և Տաճկաց հեռագրակայեանն էր և տելեֆօնի կենտրոնական բաժինը: Ընդհանրապէս թիւրքերը առանց բարդութիւնների կատարում էին մեր խնդիրները:

Այդ միջոցում մենք հեռագիր ստացանք, որ Համօ Հովհանջանեանի կաբինետը հրաժարվել է և կառավարութեան կազմակերպութիւնը պարլամենտը յանձնել է պ. Վրացեանին: Այդ առիթով ստացված շատ անփոյթ կերպով խմբագրված հեռագրից մենք կարողացանք հասկանալ միայն, որ երկրագործութեան Մինիստր նշանակվում է պարլամենտի անդամ Մինախորեան, զինվորական – Դրօ, Ներքին գործերի իրաւաբան Տէրտէրեան: Իսկ թէ առհասարակ ի՞նչ էր կատարվում Երևանում և մոտակայ ի՛նչ միտումներ ունէին մեր վարիչ շրջանները՝ մենք ոչ մի տեղեկութիւն չունէինք և վերապրում էինք ջղայնալից րոպեներ:

Կոնֆերանսը բացվեց նոյեմբերի 26, ժամի 4, մեր բնակարանի դահլիճում: Թիւրքաց պատվիրակութիւնը կազմում էին դելեգացիայի նախագահ Կեազըմ Կարաբէկիր, Արզրումի նահանգապետ Համիդ Բէյ, Թիւրքիայի Մեծ ազգային ժողովի մի անդամ: Երբ կօնֆերանսի անդամները բռնեցին իրանց տեղերը՝ Թիւրքաց հրամանատարը և Ալ. Խատիսեան նստում էին դէմ առ դէմ, իրանց աջ և ձախ կողմերում ունենալով իր պատգամաւորութեան անդամներին, Անգորայի ներկայացուցիչը, ֆրանսերէն ողջունեց հայկական դելեգացիան և կոնֆերանսին յաջողութիւն մաղթելով, խնդրեց նախագահ ընտրել: Նորան պատասխանեց, նոյնպէս ֆրանսերէն, Ա.Խաթիսեան: Ի դիմաց հայ կառավարութեան շնորհակալութիւն անելով Թիւրքաց հրամանատարին, մեզ ցոյց տված պատվի և ուշադրութեան համար և յիշելով 78 թվի Բերլինի կոնգրեսը, հռչակաւոր իշխան Բիսմարկին և մեծանուն … *[այստեղ ներկայացված չէ թ. 3]*

…և Շօպենի գուրգուրալից վալսի ալիքները հմայեցին մթնոլորտը… Ապա, բնորոշ, ի հարկէ, և սիմպտօմալից, օրկեստրը կատարեց ինտերնացիոնալը և երաժշտապետը հանդարտ հրամատարելով օրկեստրին, զինուորական պատիւ տվեց առ կոնֆերանսի դահլիճը և հեռացաւ:

Խորհրդակցութիւնը այդ օրը զբաղվեց միայն հաւատարմաթղթերի ստուգութեամբ և նախագահը փակելով նիստը, խնդրեց միւս օրը, ժամի 10, վերսկսել կոնֆերանսի զբաղմունքները:

Մենք անբաւական էինք, իհարկէ, որ աշխատանքները ձգձգվում են, բայց և այնպէս, իհարկէ, պէտք էր համբերել և սպասել:

Միւս օրը նիստը բացվեց նշանակված ժամին: Նախագահը, լուրջ և վճռական տոնով, ասաց.- Համաձայն մեր ստացած ազգային մեծ ժողովից հրահանգի, մենք պայմանաւորում ենք կոնֆերանսի յետագայ աշխատանքները հետևեալ պահանջով. հայկական պատւիրակութիւնը պարտաւոր է վաղը, մինչև ժամի 12, գրաւոր յայտարարութիւն ներկայացնել կոնֆերանսին, որ նա, ի դիմաց հայկական կառավարութեան, հրաժարվում էր Սեվրի դաշնագրից, բանակցելով Թիւրքիայի հետ հայկական խնդրի մասին անջատ Անտանտայից և նրա որոշումը արտայայտող Սեվրի դաշնագրից: Բաւարարելով մեր այդ պահանջը միայն, աւելացրեց նախագահ Կարաբեկիր, մենք կարող ենք խօսել հաշտութեան մասին, ի դեպ, վերջացրեց տաճկաց հրամանատարը, ես ստիպված կը լինեմ խախտել զինադադարը...

Տիրեց մի երկու րոպէ շատ հասկանալի ներքին խռովութիւն և բոլորը ջղայնալից լուռ էին: Ապա Ալ. Խատիսեան մի ընդարձակ ճառով առարկեց, որ Հայկական կառավարութիւնը, իր պատվիրակութիւնը ուղարկելով Թիւրքիայի ազգային Մեծ ժողովի հաւատարմատարութեան հետ բանակցելու և հաշտութիւն կնքելու համար, ինքնըստինքեան անտես էր առնում Սեվրի դաշնագիրը և մենք զինդադադարից յետոյ բարեկամական հաշտութիւն կնքելով Թիւրքիայի հետ, բնականաբար չէինք կարող հաշվի առնել Սեվրի դաշնագիրը և միայն անջատ նորանից կարող էինք հանգել բարեկամական համաձայնութեան...

Թիւրքաց հրամանատարը պատասխանեց, որ թիւրքերը միանգամայն հաւատում էին մեր անկեղծ ցանկութեանը հաշտվել առանց միջնորդի, Սեվրից անջատ, բայց և այնպէս Անգորաի ներկայացուցչութիւնը պարտաւոր է կատարել նորան տված հրահանգը և Կեազում Կարաբէկիր շատ ցաւում է, որ իր այդ նախնական պահանջը, իրանից անկախ միտումներով, կրում է վերջնագրի, ուլտիմատիւ բնոյթ...

Այդ յայտարարութիւնից յետոյ նախագահը փակեց ժողովը և աւելացրեց, որ նա կսպասէ հայկական դելեգացիաի գրաւոր այդ առիթով յայտարարութեանը մինչև վաղվայ ժամի 12 և յետոյ միայն կը որոշէ հետևեալ նիստի ժամանակամիջոցը:

*ՀԱԱ, Ֆ. 477, ց. 1, գ. 13, թթ. 1-2, 4-6, բնագիր, ձեռագիր*

*        *        *

... Թերևս շարադրանքն ավարտենք այն ընդհանրական փաստի արձանագրումով, որ արդեն մեր ժամանակներում Կարսի հողը մեր ազգին տվել է Հայաստանի Ազգային հերոս Թաթուլ Կրպեյանին, Արցախի Ազգային հերոս Արկադի Տեր-Թադևոսյանին, աշխարհահռչակ ֆիզիկոսներ Աբրահամ և Արտեմ Ալիխանյաններին, իրենց կախարդող արվեստով աշխարհը գերած գեղագիտության արևելյան նրբին քրմուհիներ Երանուհի և Մարիամ Ասլամազյաններին: Եվ, վերջապես Կարսում է ծնվել, *«արևելյան փոշոտ ու դեղին»* այդ քաղաքի *«անկյանք փողոցներով»* է շրջել ու ոգեշնչվել, իսկ Առաջին հանրապետության օրոք էլ Կարսի մարզի գյուղական դպրոցում ուսուցչություն է արել գորգավաճառ Աբգարի որդի Եղիշե Սողոմոնյանը՝ նույն ինքը՝ Չարենցը մեր հրաբխահանճար...

*Վլադիմիր Հարությունյան*

ՀԱՎԵԼՎԱԾ 1. *Մահմեդական «Հարավ-Արևմտյան Կովկասի Հանրապետության» տարածքների քարտեզը ըստ նրա հեղինակների:*[357]




[357] Е.В.Клюкин, նշվ. աշխ., էջ 246:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. *Խորհրդային Ռուսաստանից քեմալական շարժմանը ցուցաբերած օգնությունը*

## *Հ.2.1. Խորհրդային աղբյուրներ*

*"... Идя навстречу просьбам правительства Великого национального собрания Турции, Советское правительство, несмотря на ограниченные возможности, решило незамедлительно оказать Турции военную и финансовую помощь. Летом 1920 г. в распоряжение Г. К. Орджоникидзе, члена Революционного военного совета Кавказского фронта, для последующей передачи представителям правительства ВНСТ было направлено 6 тыс. винтовок, свыше 5 млн. винтовочных патронов, 17.600 снарядов. В сентябре 1920 г. в Эрзеруме было передано представителям турецкого правительства и военного командования 200,6кг золота в слитках. В ноябре 1920 г., в связи с вторжением турецких войск в Армению и враждебной политикой анкарского правительства в отношении правительства Советской Армении правительство РСФСР временно приостановило выдачу оружия и золота. В декабре 1920 г. помощь оружием и деньгами была возобновлена. В январе—феврале 1921г. представителю турецкой миссии в Туапсе было передано 1000 бомб, 1000 взрывателей, 1000 зарядов, 1000 вытяжных коленчатых трубок, 4000 гранатных и 4000 шрапнельных патронов.*

*При заключении в Москве 16 марта 1921 г. советско-турецкого договора было достигнуто соглашение об оказании Турции безвозмездной финансовой помощи в размере 10 млн. рублей золотом, а также помощи оружием. В соответствии с этим Советское правительство в течение 1921 г. направило в распоряжение турецкого правительства 33 275 винтовок, 57 986 000 патронов, 327 пулеметов, 54 артиллерийских орудия, 129479 снарядов, 1500 сабель, 20 000 противогазов и большое количество другого военного снаряжения.3 октября 1921 г. турецкому военному командованию в Трапезунде были переданы два морских истребителя — «Живой» и «Жуткий».*

*Советское правительство передало в 1921 г. правительству ВНСТ 6,5 млн. рублей золотом: в апреле — 4 млн., в мае и июне—1,4 млн., в ноябре—1,1 млн. В мае 1922 г. турецкому правительству было передано еще 3,5 млн. рублей золотом.*

*В 1922 г. Советское правительство продолжало поставлять в Турцию оружие и военные материалы"*[358].

[358] ДВП СССР, т.3, 1959, с. 675.

**Телеграмма Народного Комиссара Иностранных Дел РСФСР Члену Революционного Военного Совета Кавказского фронта Г. К. Орджоникидзе**[359]

*18 января 1921 г.*

Пусть тов. Мдивани особенно налегает на необходимость вывести Армению из катастрофического положения. Турки не только не оказывают содействия Советской братской Республике, но блокируют ее, грабят, осуждают на голод. Дело всякой Советской Республики есть наше дело и мы были бы неверны себе, если бы равнодушно смотрели на гибель братской Советской Республики. Пусть тов. Мдивани успокоит турок и насчет переговоров с Англией; он знает, в чем дело. Если бы заговорили о Батуме, пусть он не забывает, что мы не можем согласиться на взятие турками Батума, но все территориальные вопросы мы разрешим в Москве. Аккуратность дальнейшей выдачи оружия находится в Ваших руках, но пусть Мдивани наладит технику.

*Чичерин*

**Телеграмма Народного Комиссара Иностранных Дел РСФСР Полномочному Представителю РСФСР в Грузии А. Л. Шейману**[360]

*10 декабря 1920г.*

... В частности, переход Батума в руки турок неприемлем. Мы не должны покидать нашу линию дружественной политики относительно кемалистов, удерживая их в то же время от нежелательных для нас действий. Слишком много причин продолжают еще толкать их к дружбе с нами, но надо проявлять твердость. О возобновлении выдачи оружия и золота инструкции даны Серго. В частности, поскольку у Вас золото, выдавайте его постепенно, руководствуясь указаниями Серго!

*Чичерин*

**Телеграмма Народного Комиссара Иностранных Дел РСФСР Члену Революционного Военного Совета Кавказского фронта Г. К. Орджоникидзе**[361]

*11 декабря 1920 г.*

Выдачу оружия надо возобновить немедленно, но прибавить, что мы требуем очищения Александропольского уезда и отступления в Карсскую область. Мы не ждем с выдачей оружия пока они это сделают, но мы, начиная выдачу, рассчитываем на исполнение ими нашего требования. Мдивани подчеркнет туркам, что это знак доверия и стремления к дружбе.

*Чичерин*

---

[359] Նույն տեղում, էջ 479:
[360] Նույն տեղում, էջ 474:
[361] Նույն տեղում, էջ 480:

### Հ.2.2. Թուրքական աղբյուրներ

*«...Բայց ամենակարևորը՝ Թուրքիան բոլշևիկներից 5 միլիոն ռուբլի ոսկով նյութական օգնություն էր խնդրում Անատոլիայում իմպերիալիստների դեմ պայքարելու համար: Դա լինելու էր օգնության միայն առաջին մասը:»*[362]

*«...1920թ. մայիսի 16-ին Խալիլ-փաշան և Ֆուատ Սաբիտը հանդիպել են Լ.Կամենևին, ով խոստացել էր Անկարային օգնություն տրամադրել 1 մլն թուրքական լիրա ոսկով, 60 հազ. հրացան, 180 մլն փամփուշտ, 108 փոքր և 12 խոշոր տրամաչափի թնդանոթներ: Կողմերը պայմանավորվել էին, որ այդ ամենը պետք է մնա գաղտնի:»*[363]

*«...Խորհրդային կառավարությունը Խալիլ-փաշային հանձնեց 500կգ ոսկի: 1920թ. հուլիսի 19-ին Մ.Քեմալի ներկայացուցիչը Յա.Ուփմալի հետ ուղևորվեց դեպի Թուրքիա: Նրանց ուղեկցում էր հեծյալ գունդը՝ Վ.Տարխովի հրամանատարությամբ: Խալիլ-փաշան սեպտեմբերի 8-ին հասավ Էրզրում: 200կգ ոսկին թողնվեց այստեղ՝ Արևելյան բանակի կարիքների համար, իսկ մնացած 300կգ-ը տարվեց Անկարա, որի միջոցով վճարվեցին պետական ծառայողների և սպաների աշխատավարձերը:»*[364]

*«... 1920թ. սեպտեմբերին Նովոռոսիյսկի և Տուապսեի նավահանգիստներից Խորհրդային Ռուսաստանը Թուրքիային ուղարկել է 200 հազ. հրացան, 5 մլն փամփուշտ, 400 թնդանոթ, 100 բեռնատար, 100 հազ. զինվորական հանդերձանք, և ամեն ամիս՝ 600տ բենզին: Բացի դրանից՝ սեպտեմբերի սկզբներին Յուսուֆ Քեմալը Անկարա բերեց բոլշևիկների տրամադրած 1 մլն ռուբլի ոսկով: Այդ գումարով Թուրքիան Գերմանիայից գնեց ինքնաթիռներ և Նովորոսիյսկի վրայով ՝ Սև ծովով, հասցրեց Անատոլիայի տարածք:»*[365]

*«...Ընդհանուր հաշվարկով Խորհրդային Ռուսաստանը Անկարայի կառավարությանը անհատույց տրամադրել է 11 մլն ռուբլի՝ ոսկով և 100.000 օսմանյան լիրա՝ ոսկով: Որից՝ 1920թ. ամռանը Խալիլ-փաշայի միջոցով 100.000 օսմանյան լիրա՝ ձուլածո ոսկու տեսքով, նույն թվի սեպտեմբերին՝ 1 մլն ռուբլի ոսկով՝ Յուսուֆ Քեմալի միջո-*

---

362 М.Озтюрк, նշվ. աշխ., էջ 68
363 Նույն տեղում, էջ 71:
364 Նույն տեղում, էջ 75:
365 Նույն տեղում, էջ 76:

*ցով, 1921թ. մարտի 16-ն խորհրդա-թուրքական բարեկամության և եղբայրության պայմանագիրը ստորագրելուց հետո ևս 10 մլն ռուբլի ոսկով… Թուրքական արտարժույթով վերահաշվարկելիս ստացվում է, որ Մոսկվան Անկարային է հատկացրել մոտ 80 մլն լիրա: Համեմատության համար նշենք, որ Մեջլիսի 1920թ. բյուջեն կազմում էր 63.018.354 թուրքական լիրա, իսկ 1921թ.՝ 79.160.058 լիրա: Անկարայի կառավարության պաշտպանության մինիստրության ծախսերը 1920թ. կազմել են 27.576.039 թուրքական լիրա, իսկ 1921թ.՝ 54.160.058 լիրա:*

*Ինչպես տեսնում ենք, բոլշևիկների կողմից քեմալականներին տրամադրված գումարը հավասար էր Անկարայի կառավարության պաշտպանության մինիստրության երկու տարվա համատեղ բյուջեին և գերազանցում էր Թուրքիայի Ազգային մեծ ժողովի մեկ տարվա Բյուջեի գումարին: Ինչ վերաբերում է զենքին, ապա քեմալականների օգտագործած ամեն չորրորդ հրացանը, ամեն չորրորդ հրանոթը, և ամեն երրորդ հրետանային արկը, ստացված էին Խորհրդային Ռուսաստանից: Հունական բանակի դեմ մղված Սաքարյայի ճակատամարտում (23 օգոստոսի – 13 սեպտեմբերի 1921թ.) թուրքերի օգտագործած 54.572 հրացաններից 30.083 ստացվել էր բոլշևիկյան Ռուսաստանից: Քեմալականների վարած պատերազմներում թուրք զինվորների արձակած փամփուշտների կեսից ավելին ուղարկված էր Ռուսաստանից:»*[366]

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են մանրամասն տվյալներ 1920թ. սեպտեմբերից մինչև 1923թ. բոլշևիկյան Ռուսաստանի կողմից քեմալականներին տրամադրած ռազմական օգնության վերաբերյալ: Տվյալները վերցված են *«Թուրքական անկախության պատերազմը, վարչական գործողություններ, 15 մայիսի 1919թ. – 2 նոյեմբերի 1923թ., Անկարա, 1975, հատոր VII; Turk Istiklal Harbi Idari Faaliyetler. (15 Mayis 1919-2 Kasim 1923). Ankara, 1975. Cilt VII.»* թուրքական պաշտոնական ժողովածուից:[367]

Աղյուսակը ներկայացնում ենք մեզ հասած ռուսերեն տարբերակով՝ առանց թարգմանության: Վերը բերված թուրքակական սկզբնաղբյուրի հաշվետու ժամանակահատվածից՝*15 մայիսի 1919թ. – 2 նոյեմբերի 1923թ.,* աղյուսակում ընդգրկված է միայն 1920թ. սեպտեմբերից մինչև 1922 թ ապրիլն ընկած ժամանակահատվածը:

---

[366] Նույն տեղում, էջ 154-156; М.Озтюрк, Рассмотрение советской помощи Анкаре в 1920-1922 гг. на основе турецких исторических источников, Журнал “Научные проблемы гуманитарных исследований”, Выпуск № 5 / 2010.

[367] М.Озтюрк, Советско-турецкие отношения на Кавказе в 1918-1923 гг., …, էջ 189:

ԱՂՅՈՒՍԱԿ Հ.2.1

## Объем советской военной помощи национально-освободительному движению Турции (сентябрь 1920 – апрель 1922 гг.)

| Год | Дата | Поставленные вооружения и материалы | Страна производства | Количество |
|---|---|---|---|---|
| 1920 | 21.09-15.10/1920 | Винтовки | Англия | 2815 шт. |
| 1920 | 15.09-4.11/1920 | Винтовки | Англия | 625 шт. |
| 1920 | 16.12/1920 | Винтовки | Англия | 345 шт. |
| 1920 | 16.12/1920 | Винтовки | Австрия | 93 шт. |
| 1921 | Январь/1921 | Винтовки | Англия | 198 шт. |
| 1921 | 7-25.06/1921 | Винтовки | Англия | 4013 шт. |
| 1921 | 25.07-5.10/1920 | Винтовки | Англия | 3562 шт. |
| 1921 | 26.10/20-14.06/22 | Винтовки | Англия | 472 шт. |
| 1921 | 20.06-24.07/1921 | Винтовки | Австрия | 9049 шт. |
| 1921 | 26.10/21-14.06/22 | Винтовки | Австрия | 2710 шт. |
| 1921 | 22.-30.05/1921 | Винтовки | Россия | 11920 шт. |
| 1921 | 07.06/1921 | Винтовки | Германия | 902 шт. |
| 1921 | 25.07./1921 | Винтовки | Германия | 471 шт. |
| 1921 | 26.10/21-14.06/22 | Винтовки | Германия | 4022 шт. |
| 1921 | 26.10/21-14.06/22 | Винтовки | Франция | 529 шт. |
| 1921 | 26.10/21-14.06/22 | Винтовки | Япония | 279 шт. |
| 1921 | 26.10/21-14.06/22 | Винтовки | Турция | 1702 шт. |
| 1921 | 26.10/21-14.06/22 | Винтовки | Бельгия | 293 шт. |
| 1921 | 25.07-5.10/1921 | Винтовки | Разные страны | 892 шт. |
| 1922 | 05.01/1922 | Винтовки | Разные страны | 288 шт. |
| | **И Т О Г О:** | **ВИНТОВОК** | | **45 181 шт.** |
| 1921 | 22-30.05/1921 | Штыки | Россия | 9520 шт. |
| 1920 | 21.09-15.10/1920 | Боеприпасы пехоты | Англия | 1885 ящ. |
| 1920 | 16.10-4.11/1920 | Боеприпасы пехоты | Англия | 1576 ящ. |
| 1920 | 16.12./1920 | Боеприпасы пехоты | Англия | 410 ящ. |
| 1921 | Весна, 1921 | Боеприпасы пехоты | Англия | 43 ящ. |
| 1921 | 25.07.-5.10/1921 | Боеприпасы пехоты | Англия | 5803 ящ. |

| Год | Дата | Поставленные вооружения и материалы | Страна производства | Количество |
|---|---|---|---|---|
| 1921 | 22-26.05/1921 | Боеприпасы пехоты | Россия | 9062 ящ. |
| 1921 | 19.08-4.10/1921 | Боеприпасы пехоты | Россия | 4497 ящ. |
| 1921 | 19.10/21-12.05/22 | Боеприпасы пехоты | Россия | 283 ящ. |
| 1920 | 16.10-4.11/1920 | Боеприпасы пехоты | Германия | 59 ящ. |
| 1921 | 04.04./1921 | Боеприпасы пехоты | Германия | 1392 ящ. |
| 1921 | 02.04/1921 | Боеприпасы пехоты | Германия | Не указано |
| 1921 | 19.08-4.10/1921 | Боеприпасы пехоты | Германия | 371 ящ. |
| 1921 | 26.05-16.07./1921 | Боеприпасы пехоты | Германия | 842 ящ. |
| 1921 | 19.08-4.10/1921 | Боеприпасы пехоты | Австрия | 1691 ящ. |
| 1921 | Не указано | Боеприпасы пехоты | Австрия | 2500 ящ. |
| 1921 | 19.10/21-12.05/22 | Боеприпасы пехоты | Австрия | 2951 ящ. |
| 1921 | 22.05-6.07/1921 | Боеприпасы пехоты | Австрия | Не указано |
| 1922 | 05.01/1922 | Боеприпасы пехоты | Австрия | 479 ящ. |
| 1922 | 02.04./1922 | Боеприпасы пехоты | Австрия | 325 ящ. |
| 1921 | Не указано | Боеприпасы пехоты | Франция | 6564 ящ. |
| 1921 | 19.08-4.10/1921 | Боеприпасы пехоты | Франция | Не указано |
| 1921 | Не указано | Боеприпасы пехоты | Бельгия | 401 ящ. |
| 1922 | 02.04./1922 | Боеприпасы пехоты | Бельгия | 20 ящ. |
| 1921 | 19.10/21-12.05/22 | Боеприпасы пехоты | Турция | 2185 ящ. |
| 1921 | 19.10/21-12.05/22 | Боеприпасы пехоты | Турция | 8383 ящ. |
| 1921 | 19.10/21-12.05/22 | Патроны | Турция | 717 ящ. |
| 1921 | 01.12/1921 | Гильзы | Россия | 48 ящ. |
| 1921 | 01.12/1921 | Капсулы | Россия | 8 ящ. |
| 1921 | 01.12/1921 | Пули | Россия | 104 ящ. |
| | **И Т О Г О:** | **БОЕПРИП. ДЛЯ ПЕХОТЫ** | | **52 599 ящ.** |
| 1920 | 04.11/1920 | Ручные пулеметы | Не указано | 20 шт. |
| 1921 | 19-20.08/1921 | Ручные пулеметы | Не указано | 28 шт. |
| 1921 | 7-24.06/1921 | Ручные пулеметы | Не указано | 93 шт. |
| 1921 | 19-20.08/1921 | Ручные пулеметы | Не указано | 60 шт. |
| 1921 | 19-20.08/1921 | Ручные пулеметы | Австрия | 1 шт. |
| 1921 | 23.10/1921 | Ручные пулеметы | Австрия | 9 шт. |
| 1921 | 11.05-7.06/1921 | Тяжелые пулеметы | Австрия | 99 шт. |
| 1921 | 26.05-16.07/1921 | Боеприп. к пулеметам | Не указано | 1123 ящ. |

| Год | Дата | Поставленные вооружения и материалы | Страна производства | Количество |
|---|---|---|---|---|
| | И Т О Г О: | ПУЛЕМЕТОВ<br>БОЕПРИП. К ПУЛЕМЕТАМ | | 310 штук<br>1123 ящ. |
| 1921 | Весна 1921 | 120 мм. пушки | Франция | 2 шт. |
| 1921 | 08.08./1921 | Буксируемые орудия | Англия | 2 шт. |
| 1921 | 3-17.08/1921 | Буксируемые орудия | Англия | 36 шт. |
| 1921 | 04.04/1921 | 88 мм пушечн. ядра | Англия | 4 шт. |
| 1921 | 28-38.06/1921 | Пушки | Англия | 18 шт. |
| 1922 | 5.01-25.04/1922 | Пушки | Англия | 32 шт. |
| 1921 | 3-17.08/1921 | Береговые орудия | Россия | 2 шт. |
| | И Т О Г О: | ОРУДИЙ | | 96 штук |
| 1921 | Январь 1921 | 120 мм пушечн. ядра | Не указано | 902 ящ. |
| 1921 | Январь 1921 | 120 мм пушечн. ядра | Франция | 99 ящ. |
| 1921 | 8.02/1921 | Ядра буксир. орудий | Англия | 1296 ящ. |
| 1921 | 5.04/1921 | Пушечные ядра | Россия | 2544 ящ. |
| 1921 | 2.06-17.07/1921 | 75мм пушечн. ядра | Не указано | 20481 ящ. |
| 1921 | 16-19.07/1921 | 75 мм пушечн. ядра | Россия | 18020 ящ. |
| 1921 | 26.06-22.07/1921 | 88 мм пушечн. ядра | Англия | 9794 ящ. |
| 1921 | 2.08-10.09/1921 | 88 мм пушечн. ядра | Англия | 36146 ящ. |
| 1921 | 30.05-11.07/1921 | 105мм снаряды | Не указано | 9175 ящ. |
| 1921 | 2.08-10.09/1921 | 120 мм пушечн. ядра | Франция | 1946 ящ. |
| 1921 | 2.08-10.09/1921 | Ядра буксир. орудий | Россия | 24103 ящ. |
| 1921 | 2.08-10.09/1921 | 75 мм пушечн. ядра | Австрия | 248 ящ. |
| 1922 | 5.01/1922 | Снаряды берег. орудий | Россия | 500 ящ. |
| 1922 | 5.01/1922 | Снаряды 105 мм оруд. | Россия | 1960 ящ. |
| 1922 | 5.01/1922 | Пушечные ядра | Австрия | 235 ящ. |
| 1922 | 5.01/1922 | Пушечные ядра | Франция | 6402 ящ. |
| 1921 | 15.10/21-23.05/22 | 75мм пушечн. ядра | Франция | 7242 ящ. |
| 1921 | 15.10/21-23.05/22 | Снаряды 105 мм оруд. | Франция | 7083 ящ. |
| 1921 | 15.10/21-23.05/22 | 120 мм пушечн. ядра | Франция | 1131 ящ. |
| 1921 | 15.10/21-23.05/22 | Снаряды горн. пушек | Не указано | 8686 ящ. |
| 1921 | 15.10/21-23.05/22 | Снаряды горн. пушек | Не указано | 8706 ящ. |
| 1921 | 15.10/21-23.05/22 | Ядра буксир. орудий | Турция | 211 ящ. |

| Год | Дата | Поставленные вооружения и материалы | Страна производства | Количество |
|---|---|---|---|---|
| | **И Т О Г О:** | **БОЕПРИП. К АРТИЛЛЕРИИ** | | **166 910 ящ.** |
| 1922 | 5.01/1922 | Снаряды 105 мм оруд. | Россия | 1143 шт. |
| 1922 | 5.01/1922 | Метательн. заряды | Австрия | 55 шт. |
| 1922 | 5.01/1922 | Пушечн. прицелы | Австрия | 11 шт. |
| 1922 | 2.04/1922 | Пушечн. прицелы | Япония | 11 штук |
| 1922 | 19.02/1922 | Метательн. заряды | Франция | 5410 шт. |
| 1922 | 1.01-14.03/1922 | Метательн. заряды | Франция | 9103 шт. |
| 1922 | 04.04/1922 | Капсулы для ядер | Япония | 150 шт. |
| 1922 | Январь 1922 | Бомбы | Россия | 200 ящ. |
| 1921 | 25.07/1921 | Бомбы | Россия | 123 ящ. |
| 1922 | 05.01/1922 | Мины | Россия | 200 ящ. |
| 1922 | 25.04/1922 | Мины | Россия | 150 ящ. |
| 1921 | 08.02/1921 | Колючая проволока | Россия | 500 мотков |
| 1921 | 5.04./1921 | Траспортные телеги | Россия | 2 шт. |
| 1921 | 5.04/1921 | Моторы самолетов | Россия | 3 шт. |
| 1921 | 16.07/1921 | Кавалерийс. шашки | Россия | 60 шт. |
| 1921 | 24.09/1921 | Моторные лодки | Россия | 1 шт. |
| 1921 | 10.09/1921 | Противохим. маски | Россия | 19 359 шт. |
| 1921 | 12.02/1921 | Оборуд.производ. пуль | Россия | 18 ящ. |
| 1921 | 1.12/1921 | Бездымный порох | Россия | 10 ящ. |
| 1921 | 1.12/1921 | Хлопок | Россия | 20 мешков |
| 1921 | 22.02/1921 | Телеграфн. аппараты | Россия | 2 шт. |
| 1922 | 5.01./1922 | Бинокли | Россия | 4 шт. |
| 1922 | 4.04/1922 | Сигнальн. пистолеты | Россия | 22 шт. |
| 1922 | 4.04./1922 | Сигнальн. патроны | Россия | 351 шт. |
| 1921 | Январь 1921 | Медикаменты | Россия | 10 ящ. |
| 1921 | Январь 1921 | Постельн белье | Россия | 3692 шт. |
| 1921 | Январь 1921 | Наволочки | Россия | 3761 шт. |
| 1921 | Январь 1921 | Трусы | Россия | 3440 шт |
| 1921 | Январь 1921 | Рубашки | Россия | 3496 шт. |

# ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ



## ՎԼԱԴԻՄԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Վլադիմիր Հարությունյանը ծնվել է Լենինականում (այժմ՝ Գյումրի), 1949թ.-ին, մանկավարժների ընտանիքում: Ավարտել է տեղի թիվ 2 միջնակարգ դպրոցը: Մասնագիտությամբ ֆիզիկոս է, ավարտել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետը: 1985թ.-ին պաշտպանել է թեկնածուական, իսկ 1999թ.-ին՝ դոկտորական թեզեր: Հեղինակ է ութսունից ավելի գիտական հոդվածների և մեկ մենագրության:

Հիմնական մասնագիտական գործունեությանը զուգահեռ մշտապես հետաքրքրվել է նաև մեր պատմության տարբեր հարցերով:

Իր կազմակերպած արշավախումբը 1983-1987թթ. Մարտակերտի, Շահումյանի, Հադրութի և Քելբաջարի (այժմ՝ Քարվաճառ) շրջաններում իրականացրել է Արցախի մի շարք պատմաճարտարապետական հուշարձանների ուսումնասիրություն, որոնց արդյունքները տպագրվել են գիտական հրապարակումներում և գրքերում:

Արցախյան ազատամարտի ամբողջ ընթացքում գործուն մասնակցություն է ցուցաբերել մարտնչող երկրամասի պաշտպանության կազմակերպմանն օժանդակելու համար: Արցախյան ազատամարտին ցուցաբերած մասնակցության համար պարգևատրվել է ԼՂՀ «ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» և ՀՀ ՊՆ «ԱՆԴՐԱՆԻԿ ՕԶԱՆՅԱՆ» մեդալներով:

2007-2009թթ. լույս են տեսել արցախյան պատերազմի մասին հուշերի հիման վրա գրված նրա պատմվածքների երկու ժողովածուներ:

Վերջին տարիներին հետաքրքրության առարկան Հայաստանի առաջին Հանրապետությունն է: 2014թ.-ին լույս են տեսել «ՀԱՅ ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ ՀԱԿԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1919-1920թթ.» և «1918թ. ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ» նյութե-րի և փաստաթղթերի երկու ժողովածուները, իսկ այժմ ընթերցողին է ներկայացվում հեղինակի այս գործը: